ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ



ԱՐՄԵՆ ԱՍԱՏՐՅԱՆ

# ՄՈՂՆՈՒ ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵՎ ՍՈՒՐԲ ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

(ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ)

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ - 2016

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

# ՄՈՂՆՈՒ ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ
# ԵՎ
# ՍՈՒՐԲ ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

(ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ)



ՀՐԱՄԱՆԱՒ
ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՒՆ
**Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ Բ**
ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

5622

# ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՈՂՆՈՒ ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵՎ ՍՈՒՐԲ ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

**(ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ)**

Աշխատասիրությամբ

**ԱՐՄԵՆ ԱՍԱՏՐՅԱՆԻ**

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ - 2016

ՀՏԴ 27:94(479.25)
ԳՄԴ 86.37+63.3(5Հ)
Ա 732

*Տպագրվում է երաշխավորությամբ*
*Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի*
*Հրատարակչական խորհրդի*

*Խմբագրությամբ՝* ԳԷՈՐԳ ՏԷՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆԻ

**ԱՐՄԵՆ ԱՍԱՏՐՅԱՆ**

Ա 732 ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՈՂՆՈՒ ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵՎ ՍՈՒՐԲ ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ (ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ) / Արմեն Ասատրյան; Խմբ.՝ Գևորգ Տեր-Վարդանյան. - Ս. Էջմիածին: Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչություն, 2016.- 328+40 ներդիր էջ:

ՀՏԴ 27:94(479.25)
ԳՄԴ 86.37+63.3(5Հ)

*Տպագրվում է մեկենասությամբ*

ՍԱՐԳԻՍ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻ

ISBN978-9939-59-165-0

© Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2016

# ԱՌԱՋԱԲԱՆ

Ներկայիս Վրաստանի հանրապետության տարածքում հայերն ապրում են սկսած անհիշելի ժամանակներից. առաջին հիշատակումներն առկա են տակավին վաղ միջնադարում, քրիստոնեության սկզբնավորման ու տարածման շրջանում:

Մինչև 7-րդ դարի սկիզբը, երբ քաղաքական ճնշումների հետևանքով Վրաց եկեղեցին վերջնականապես բաժանվեց Հայոց եկեղեցուց և ընդունեց քաղկեդոնական դավանանքը, Վրաց կաթողիկոսները ձեռնադրվել են Հայոց կաթողիկոսների կողմից: Երկու հարևան ժողովուրդների եկեղեցիների իրավական բաժանումը կատարվել է հայոց Աբրահամ Ա. Աղբաթանեցի կաթողիկոսի (607-615 թթ.) շրջաբերական վավերագրով:

Հայ հոգևորականությունը թեև Վրաստանում գործել է դեռևս վաղ միջնադարում, սակայն ըստ պատմական տեղեկությունների Հայաստանյայց Առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմը կազմավորվել (գուցե վերակազմավորվել) է միայն 12-րդ դարում: Վիրահայոց թեմի առաջնորդ է հիշատակվում Բարսեղ (Բասիլիոս) արքեպիսկոպոսը, որը 1178 թ. մասնակցել է Հռոմկլայի եկեղեցական ժողովին: 13-րդ դարում թեմի առաջնորդանիստը Տփխիս (Թիֆլիս) քաղաքի Կաթողիկե Սուրբ Գևորգ եկեղեցին էր՝ կառուցված 1251 թ. հայազգի իշխան Ումեկի կողմից: Թիֆլիսի հին հայկական եկեղեցիներից հայտնի են Հրեշտակապետացը (կառուցված 754 թ.), Հարանց վանքը (կառուցված 931 թ.), Բեթղեհեմի Սուրբ Աստվածածինը (կառուցված 13-րդ դարում) և շատ ուրիշներ, որոնք ոչ միայն հայ համայնքի հավաքատեղիներ են եղել, այլև մշակույթի, դպրության ու գրչության խոշոր կենտրոններ:

Վրաստանում դեռևս վաղ միջնադարում գործել են հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, որոնք կառուցել են ոչ միայն հայկական, այլև վրացական եկեղեցիներ: Նրանք ներդնելով իրենց փորձն ու հմտությունը՝ ստեղծել են ճարտարապետական հիասքանչ կոթողներ: Այսպես, 7-րդ դարում հիշատակվում են հայ ճարտարապետ Թոդոսակը և ուրիշներ: Հայերի շինարարական գործունեությունը նկատելի է

եղել հատկապես մայրաքաղաք Թիֆլիսում: Բավական է նշել, որ այստեղ նրանք ուշ միջնադարում կառուցել են շուրջ երկու տասնյակից ավելի հայկական եկեղեցիներ:

Ըստ արխիվային վավերագրերի վկայության՝ 1817 թ. Թիֆլիսում հայ համայնքն ունեցել է 25 հայկական եկեղեցի: Այս թիվը անփոփոխ է մնացել մինչև Վրաստանի խորհրդայնացումը: Այսպես, 1904 թ. դրությամբ ևս Թիֆլիսում գործել են 25 Հայ Առաքելական եկեղեցիներ, որոնք բաժանված են եղել երկու գործակալությունների միջև: Հայկական եկեղեցիները գործել են հին Թիֆլիսի բոլոր թաղամասերում (Քարափի, Հավլաբար, Կուկիա, Չուղուրեթ, Խարփուխ և այլն): Ըստ 19-րդ դարում կազմած՝ Թիֆլիսի հատակագծի, նկատելի է, որ հայկական եկեղեցիների գերակշիռ մասը եղել է քաղաքի կենտրոնական մասում: Ներկայումս նրանցից պահպանվել է 14-ը, իսկ մնացածները քանդվել են 1930-ական թվականներին:

Հարկ է նշել, որ 1837 թ. Վրաստանում գործել է 200-ից ավելի հայկական եկեղեցի:

Հայ բնակչության առաջին նշանակալից գաղթը դեպի Վրաստան տեղի է ունեցել 8-րդ դարում՝ արաբների տիրապետության ժամանակ բռնկված ապստամբությունների հետևանքով: 853 թ. Տփխիսի հայ բնակիչները վրացիների հետ համատեղ քաղաքը պաշտպանել են արաբական Բուղա զորավարի ասպատակությունից: Սակայն հայերի զանգվածային գաղթը Վրաստան հիմնականում կատարվել է Բագրատունյաց հայկական թագավորության վերացումից և Անիի անկումից հետո: Հարևան երկիրը հենարան ու պատվար է դարձել հայրենի հողն ազատագրելու համար մղվող պայքարում:

Հետագայում, վրաց Թամար թագուհու օրոք (1184-1213 թթ.) հայերը Վրաստանում ունեցել են բավականին ազդեցիկ դիրք և կարևոր դեր են կատարել երկրի քաղաքական ու տնտեսական կյանքում: Վրացական զորքերի գլխավոր հրամանատարը՝ ամիրսպասալարը, եղել է հայազգի իշխան Զաքարե Երկայնաբազուկը, իսկ նրա եղբայրը՝ Իվանեն ղեկավարել է երկրի քաղաքացիական իշխանությունը (աթաբեկությունը):

Արդեն, 18-րդ դարում Թիֆլիսի 20 հազար բնակչից 14 հազարը եղել են հայեր, 500-ը կաթոլիկ հայեր, 2000-ը՝ վրացի և այլն: 19-րդ դարի սկզբում քաղաքի 2000 բնակելի տներից մոտ 1800-ը պատկանել են հայերին: Միանգամայն իրավացիորեն 1916 թ. «Հորիզոնը» գրել է. «Վրաստանում հայ ժողովուրդը հիմնելով առանձին աւաններ, գիւղեր կամ քաղաքներ, ձեռնամուխ է եղել սեփական վաստակով իր ապրուստը հայթայթելու գործին: Գիւղերում հայ գիւղացին, իր հարևան վրաց գիւղացու կողքին՝ գութանի մաճը ձեռին, քաղցր հորովելով պատռել է Վրաստանի բարբեր, արգաւանդ հողը և իր ժրաջանութեամբ օրինակ հանդիսացել հարևաններին. քաղաքներում՝ պարապել է արհեստներով և վաճառականութեամբ, որի շնորհիւ մասամբ հայ տարրը հանդիսացել է իբրև միջնորդ, կամուրջ, արտաքին աշխարհը Վրաստանի հետ շաղկապելու»[1]:



Վրաստանի մայրաքաղաքի ամենահայտնի և պատմական տարեգրությամբ հարուստ հայկական եկեղեցիներից են Մողնու Սուրբ Գևորգն ու Սուրբ Նշանը: Առաջինը կառուցվել է 1356 թ. և անընդմեջ գործել մինչև 1930-ական թվականներն ու փակվել Ստալինյան հակակրոնական քաղաքականության հետևանքով: Շինությունը մինչև 1989 թ. ծառայել է որպես Ժողովրդական Արվեստի թանգարան: 1990-ական թվականներից Վրաց իշխանությունները և եկեղեցու պահպանության ու վերականգնմանը կոչված համապատասխան կազմակերպություններն այն լրիվ մատնել են անուշադրության, և եկեղեցին, աստիճանաբար ստանալով վտանգավոր ճաքեր, սկսել է փլուզվել: Եկեղեցու դրությամբ մտահոգված հայ հասարակության և Վիրահայոց թեմի բազմաթիվ ահազանգերը մնացել են անպատասխան: Կիսաքանդ եկեղեցին վերջնականապես փլուզվել է 2009 թ. նոյեմբերի 19-ին:

Սուրբ Նշան հայկական եկեղեցին կառուցվել է 17-րդ դարի կեսերին (հիմնովին վերակառուցվել 1703-1720 թթ.) և գործել է նույնպես մինչև 1930-ական թվականները. փակվել է 1931 թ.: Հայրենական պատերազմի տարիներին եկեղեցին ծառայել է որպես սննդամթերքի պահեստ, իսկ ավելի ուշ՝ վերածվել է Ազգային գրադարանի գրապահոցի: Վրաստանի անկախացումից հետո եկեղեցին հայտնվել է բարձիթողի վիճակում, կից կառուցվել են անօրինական բնակելի շինություններ: 2002 թ. հոկտեմբերի 20-ի գիշերը եկեղեցու ներսում հրդեհ է բռնկվել, որի հետևանքով թափվել են եկեղեցու ներսի ծեփի շերտերը, որոնք մեծ մասամբ եղել են որմնանկարազարդ: Այդ աշխատանքները հայ որմնանկարչության ուշագրավ օրինակներ էին: Սուրբ Նշան եկեղեցին 2012 թ. հունվարի 3-ին և 7-ին, անհայտ հանգամանքներում, ենթարկվել է իրար հաջորդող երկու նոր հրդեհումների, որի պատճառով փլուզումներ են առաջացել:

2011 թ. Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդը խիստ մտահոգվելով Վիրահայոց թեմի խնդիրներով, հովվապետական այց

---

1 «Հորիզոն», 1916, 30 ապրիլի, Հմր 94:

է կատարել Վրաստան: Ի դեպ, վերջին անգամ Հայոց կաթողիկոսը Վրաստան էր այցելել շուրջ 100 տարի առաջ: Երկարատև ընդմիջումից հետո, Հայ Առաքելական եկեղեցու առաջնորդի այցը միտված էր ոչ միայն միջեկեղեցական հարաբերությունների ու կապերի ամրապնդմանը, այլև վիրահայ համայնքի հոգևոր պահանջմունքների բավարարմանը:

2014 թ. հունվարին Վրաստանում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Հովհաննես Մանուկյանը, անդրադառնալով Թիֆլիսի Մողնու Սուրբ Գևորգ և Սուրբ Նշան եկեղեցիների ճակատագրին, նշել է որ նրանց վերականգնման աշխատանքները ձգձգվում են: Առանձնակի դժվարություններ է ստեղծում այն հանգամանքը, որ երկու եկեղեցիները շրջապատված են խիտ բնակեցված տներով: Մողնու եկեղեցու բակում բնակվում են մասնավոր անձինք, իսկ Սուրբ Նշան եկեղեցու պատին հարում է մի բնակելի տան պատ: «Սակայն հիմնական խնդիրը հասարակության մի զգալի հատվածի և վրաց եկեղեցու դիրքորոշումն է, ինչը թերևս, հարցի լուծման ճանապարհին հիմնական, առաջնային խոչընդոտն է: Վրացական նոր իշխանությունների քայլերն ապացուցում են, որ նրանք ըմբռնումով են մոտենում մեր այդ իղձերին... Շատ ավելի բծախնդիր մոտեցում է դրսևորում Վրաստանի պատրիարքարանը»,- նշել է դեսպանը:

Դեսպանը առաջարկում է ըստ արժանավույն գնահատել նաև Վրաստանի կառավարության ջանքերը՝ հայկական եկեղեցիները Վիրահայոց թեմին վերադարձնելու ուղղությամբ: Նրա խոսքերով՝ Վրաստանի նորանշանակ վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու ստորագրած փաստաթղթերը ցույց են տալիս, որ երկրի կառավարությունը միտված է լրջորեն զբաղվելու պաշտոնապես գրանցված կրոնական համայնքների հարցերով:

Իրակլի Ղարիբաշվիլու կարգադրությամբ ներմուծվել են փոփոխություններ նախկին վարչապետ Բիձինա Իվանիշվիլու «Մողնու», «Սուրբ Նշան» և «Սուրբ Մինասս» եկեղեցիներին կից մասնավոր սեփականության մեջ գտնվող անշարժ գույքի հետ կապված հարցերի ուսումնասիրության «միջգերատեսչական հանձնաժողովի ստեղծման մասին» կարգադրության մեջ: Այդ հանձնաժողովը օժտվել է նաև միջգերատեսչական աշխատանքային խումբ ստեղծելու և այլ լիազորություններով, որոնք թույլ կտան գործնական որոշումներ կայացնել:

Թիֆլիսի Մողնու Սուրբ Գևորգ և Սուրբ Նշան եկեղեցիներին տարբեր ժամանակներում անդրադարձել են մի շարք ուսումնասիրողներ: Ուշագրավ են բազմավաստակ գիտնական Պարույր Մուրադյանի աշխատությունները, որոնցում նա ներկայացրել է այդ եկեղեցիների հիմնադրմանը, կառուցմանը և նորոգումներին վերաբերվող տեղեկություններ, ի մի է բերել վիմագիր արձանագրությունները և հակիրճ նկարագրել է դրանց պատմական տարեգրությունը:



Արժեքավոր են Սարգիս արք. Ջալալյանցի, պատմաբան Ալեքսանդր Երիցյանի, Գյուտ քհյ. Աղանյանցի, Գրիգոր ավ. քհյ. Մանդալյանու և այլոց գրվածքները՝ այդ եկեղեցիների մասին: Սուրբ Նշան եկեղեցու տարեգրությանը անդրադարձել է Ս. Կարապետյանը: Մողնու Սուրբ Գևորգ եկեղեցու վավերագրությունը հակիրճ ներկայացրել է տողերիս հեղինակը[1]: Իսկ այդ եկեղեցիների ճարտարապետությունն ուսումնասիրել է Մ. Հասրաթյանը:

Սույն գիրքը մի ամփոփ աշխատություն է՝ նվիրված Թիֆլիսի երկու հայտնի եկեղեցիների պատմությանն ու տարեգրությանը: Առաջին անգամ, ի տարբերություն նախորդ ուսումնասիրողների, մանրամասն ներկայացվում է այդ եկեղեցիների պատմությունը՝ հիմնադրումից մինչև մեր օրերը: Արխիվային վավերագրերի հիման վրա տրվել են միաբանների և երեցփոխանների գործունեությանը վերաբերվող փաստեր, ներկայացվել են նրանց ծառայական ցուցակները և տեղեկություններ ընտանեկան դրությունից: Առաջին անգամ տպագրվում է նաև այդ եկեղեցիների 1841 թ. ծխականների ցուցակը:

Աշխատության գլխավոր նպատակն է ևս մեկ անգամ ապացուցել, որ, ինչպես Մողնու, այնպես էլ Սուրբ Նշան եկեղեցիները զուտ հայկական մշակութային հուշարձաններ են՝ նրանցում գործունեություն ծավալած հայ հոգևորականներով: Այդ եկեղեցիները երբեք չեն պատկանել Վրաց եկեղեցուն: Նրանք անդադար գործել են Հայ Առաքելական եկեղեցու իրավասության տակ և հանդիսացել են Թիֆլիսում գործող շուրջ 25 հայկական եկեղեցիներից ամենանշանավորները: Այս աշխատությամբ նպատակադրվել ենք առավել ընդգծել դրանց ճանաչողականությունը, նորոգման անհրաժեշտությունը և Հայ Առաքելական եկեղեցուն վերադարձնելու արդարացի պահանջը: Մողնու և Սուրբ Նշան եկեղեցիների վերաբացումը կնպաստի հայ և վրաց ժողովուրդների դարավոր բարեկամության ամրապնդմանը:

Այդ եկեղեցիները ժամանակին հարուստ են եղել միջնադարյան ձեռագրերով, բազմաթիվ թանկարժեք զարդերով և իրեղեններով, որոնք տարբեր ժամանակներում եկեղեցին ստացել էր որպես նվիրատվու-

[1] **Ա. Ասատրյան**, Մողնու Սուրբ Գևորգ եկեղեցին.- «Հուշարձան» տարեգիրք, Ը., 2013, էջ 87-96 և շարունակությունը՝ «Հուշարձան» տարեգիրք, Թ., 2014, էջ 139-154:

թյուն իր հարուստ ծխականներից: Առաջին անգամ ներկայացվում է երկու եկեղեցիների զարդերի և իրեղենների 1837 թ. ամբողջական ցուցակը[1]: Գրքում տեղ են գտել նաև տեղեկություններ եկեղեցապատկան կալվածքների, տների և կրպակների մասին: Իսկ եկեղեցական ծխական դպրոցների գործունեությանը անդրադարձել ենք բավականին մանրամասնորեն:

Գիրքը հարուստ է ինչպես Մատենադարանի, այնպես էլ Հայաստանի Ազգային արխիվում պահպանված բազմաթիվ չհրատարակված վավերագրերով, նախախորհրդային մամուլի նյութերով, որոնց մեծ մասը հրատարակվել են Թիֆլիսում, նախորդ ուսումնասիրողների գրքերից ու հոդվածներից քաղվածքներով, հին լուսանկարներով և այլն:

[1] Ս. Կարապետյանը ներկայացրել է Սուրբ Նշան եկեղեցու զարդերի ոչ ամբողջական ցուցակը (տես նրա «Թբլիսիի Սբ. Նշան Սբ. Նիկողայոսի եկեղեցի», Երևան, 2012, էջ 32-35):

# ՄՈՂՆՈՒ ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻՆ

*«Մողնու եկեղեցին բարձրագլուխ փայլում էր Թիֆլիսի բոլոր եկեղեցիների մեջ»*
*Մուշեղ քհյ. Տեր-Ղևոնդյանց*

Մողնու Սուրբ Գևորգ եկեղեցին համարվել է Թիֆլիսի ամենանշանավոր եկեղեցիներից մեկը, որը գտնվել է Սոլոլակի թաղամասում: Այն հին Թիֆլիսի նշանավոր քաղաքացիների ու ազնվատոհմ տների հաճախած եկեղեցին էր, որի տոնը նշվել է սեպտեմբերի 18-ին:

Մողնու եկեղեցին պատկանում է գմբեթավոր բազիլիկների տիպին: Գմբեթը շինության ընդհանուր ծավալի մեջտեղում է, չորս խոշոր, գլանաձև մույթերի վրա: Ավագ խորանի երկու կողմում փոքրիկ աբսիդներով ավանդատներն են:

Մողնի (Մուղնի, Մաւղնի) կոչվող երկու եկեղեցուց մեկն անվանել են «Կամակատար Սուրբ Աստվածածին», իսկ մյուսը՝ Սուրբ Գևորգ: Առաջինը կոչել են նաև մեծ, իսկ երկրորդը՝ փոքր եկեղեցի: Հավանաբար, հենց առաջին անվանումն էլ հիմք է ծառայել Թիֆլիսի այդ թաղամասը Մողնի կոչելու:

1897 թ. Ալեքսանդր Երիցյանը գրել է. «Թիֆլիզեցիներից շատերն են, երևի, յիշում, որ քանի մի տասնեակ տարի առաջ այժմեան Մողնու պարսպում մէկի տեղ՝ երկու եկեղեցի կար: Մէկը՝ փոքր, անշուք և կիսաքայքայուած, «Մողնի» կամ «Ս. Գէորգ», յանուն Արագածի ստորոտում եղած Աբարանի «Մուղնի» հռչակաւոր ուխտատեղւոյն, որ Աշտարակ գիւղի մօտ է, իսկ միւսը՝ Կամակատար Ս. Աստուածածին անունով»[1]:

Մողնու եկեղեցիներն անվանվել են նաև հին և նոր, ինչպես գրել է Սարգիս արք. Ջալալյանցը. «Հին և նոր Մողնի յանուն սուրբ Աստուածածնին և սրբոյն Գէորգայ զորավարին»[2]:

Նրանց հիմնարկության մասին պատմական ստույգ աղբյուրներ հայտնի չեն: Ներսես Աշտարակեցու այն հարցումին, թե երբ են հիմնադրվել եկեղեցիները, պատասխանող Մկրտում Մունթյան, Բեժան Բաստամյան և Գրիգոր Բաշինջաղյան երախտավորները նշել են. «Հնագոյն շինութիւն ինչ Մողնոյ եկեղեցւոյն ոչ ինչ երևի»,

---

[1] **Ա. Երիցեանց,** Հարիւր տարուայ համախօսական վճիռ Թիֆլիզի Մողնու եկեղեցւոյ.- «Արձագանք», 29 հունվարի, 1897 թ., Հմր 11:

[2] **Ս. Ջալալեանց,** Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ., Տփխիս, 1868, էջ 61:

սակայն առաջնորդին ներկայացված նյութերի մեջ միաժամանակ առկա է «վաղ ուրեմն կառուցեալ յայսմիկ տեղի՝ յամի Տեառն 1356» հիշատակությունը, որն էլ հիմք ընդունելով՝ թվագրել են 1356 թ.[1]:

19-րդ դարի վերջում, Գ. Մատինյանը իր «Թիֆլիսի հին եկեղեցիների հիմնադրման վերաբերյալ» գրվածքում անդրադառնալով Մողնու հին եկեղեցուն, գրել է, որ այն հիմնադրվել է 1400 թ., և նշել, որ եկեղեցու միայն հարավային պատն է մնացել՝ խաչարձաններով և արձանագրություններով[2]:

Մողնու ծեր միաբան Տեր Գրիգորը վկայել է, որ «առաջին փոքր եկեղեցումն ես դպրութիւն եմ արարեալ, ունէր երեք սեղան փոքրիկ՝ քիրաջով (հանգած կրով) շինեալ»: Պ. Մուրադյանը գրում է, որ այդ տեղեկությունը Կամակատար Աստվածածնի եկեղեցուն է վերաբերում, թե՞ «բժիշկ ցաւոց Ս. Գէորգին»՝ դժվարանում ենք ասել: Համենայն դեպս, 18-րդ դարի կեսերին նրանցից մեկի կառուցման արձանագրությունը պահպանվելիս է եղել, որտեղից և նկարագրողները տեղեկացել են 1356 թ. շինարարության մասին[3]: Ցավոք, այժմ անհայտ է այդ հնագույն արձանագրությունը:

Թիֆլիսի Մողնու Սուրբ Գևորգը Արագածոտնի հռչակավոր եկեղեցու անվանակիցն է: 17-րդ դ. պատմագիր Զաքարիա Քանաքեռցին, որը գործել է Հովհաննավանքում, վերապատմելով Առաքել Դավրիժեցուց լսածը, իր պատմությունում մի ամբողջ գլուխ է նվիրել Սուրբ Գևորգի մասունքների՝ Թիֆլիսում հայտնվելուն[4]:

Ի դեպ, ենթադրվում է, որ «Մուղնի» անունը փոխառվել է արաբերենից և նշանակել է «երգել, սաղմոսել»: Փաստորեն, կրկնվել է «Սաղմոսավանքի» անվանումը, որը հեռու չէ Մուղնիից:

Ըստ Զաքարիա Քանաքեռցու՝ Արագածոտնի Մուղնին հիմնադրել է Հովհաննավանքի միաբանությունը: Հավանաբար, դա եղել է 13-րդ դարի կեսերին, և այստեղից էլ Սուրբ Գևորգի մասունքների մի մասը տարվել է Թիֆլիս՝ Վրաց արքայազնի բուժման նպատակով: Այդ մասունքները պահպանելու համար հետագայում կառուցվել է Թիֆլիսի Մողնու Սուրբ Գևորգ եկեղեցին: Պատմագիրը գրել է. «...զքազում ժամանակս, յորում նուաստացաւ իշխանութիւնն ի Հայոց ազգէ, և անկաւ ի ձեռս այլոց ազգաց. սակայն երկիրն Շիրա-

---

[1] Հիշատակությունը տես՝ **Պ. Մուրադյան**, Հին Թիֆլիսի հայոց եկեղեցիները, Սուրբ Էջմիածին, 2009, էջ 139:

[2] Հայաստանի Ազգային արխիվ, ֆ. 332, ց. 1, գ. 679, թ. 1 (այսուհետ՝ ՀԱԱ):

[3] **Պ. Մուրադյան**, նույնը, էջ 53:

[4] **Զաքարիա Քանաքեռցի**, Պատմագրութիւն, հ. Գ., Վաղարշապատ, 1870, էջ 38:



կայ և գաւառն Կարբու էր ընդ ձեռամբ թագաւորացն Վրաց: Յորում ժամանակի կալաւ ցաւ չարաչար գոթութեան որդի արքային Վրաց, և ոչ գտաւ բժշկութիւն: Ապա պատմեցին նմա, թէ է վանք մի ի ներքոյ իշխանութեան քում, որ կոչի Յօհաննավանք, ի գաւառն Կարբի, և է անդ մարմին սրբոյն Գէորգայ, և ժողովեալ են անդ ամենայն ուրուկք և գոթիք, և գտանին բուժումն ի սրբոյն Գէորգայ... Թագաւորն խորհեցաւ առաքել և բերել զոսկերս սրբոյն Գէորգայ... Եւ յորժամ հասին ի Տփխիս քաղաք, լուան զմահ որդւոյ թագաւորին, որոյ անունն էր Բէժօ, և անուն թագաւորին Դաթօ: Եւ կամեցան անդրէն դարձուցանել զուրբն: Իսկ սոպո ազգն Վրաց ոչ կամեցան թողուլ՝ մինչև ազդ արասցեն թագաւորին. վասնզի էր նա ի Կածարէթ, և ինքեանք շինեցին եկեղեցի, և եդին անդ զոսկերս սրբոյն... Եւ այնպէս մնաց նա յաշխարհին Վրաց»:

Սուրբ Գևորգ զորավարի մասունքների մի մասը, որ մնացել էր Հովհաննավանքում, հետագայում տեղափոխում են Մուղնի գյուղը և ամփոփում այնտեղ՝ ճանապարհի մոտ, ու կառուցում մի փոքրիկ մատուռ, որի վրա էլ 17-րդ դարի երկրորդ կեսին հիմնովին վերաշինվում է ներկայիս եկեղեցին:

Ինչպես Ա. Երիցյանն է գրել, հիմնադրումից շատ չանցած՝ 1388 թ., երբ Լանկ Թամուրը ասպատակում է Թիֆլիսը, «Մողնին էլ ավերակաց կույտ դարձաւ»[1]: Այդ ժամանակներից էլ թաղամասը, որտեղ գտնվել է Մողնու եկեղեցին, անվանվել է Կալոս-ուբանի (Կալի թաղ, որտեղ ասպատակող հեծելազորը հավաքել էր կաթնակեր երեխաներին և «կալ կասել»):

Այն հավանաբար վնասվել է նաև 1440 թ.՝ Ջհանշահի արշավանքի ընթացքում, երբ, հայտնի փաստ է, Թիֆլիսում քանդվել են եկեղեցիներ:

Մողնու եկեղեցում գրվել ու ընդօրինակվել են բազմաթիվ ձեռագրեր, որոնք հայկական մշակույթի պատմության մեջ չափազանց մեծ ու կարևոր նշանակություն ունեն: Ընդօրինակված ձեռագրերի հիշատակարանները Թիֆլիսի հայ համայնքի պատմության ու գործունեության նշանակալի աղբյուր են:

1822-1922 թթ. Մողնու եկեղեցում (այստեղից էլ անունը) պահվել է հանրահայտ «Մողնու Աւետարան» կոչվող պատկերազարդ, երկաթագիր, ձեռագիր մատյանը[2]: Ձեռագրի գրիչն ու ծաղկողը Հով-

---

[1] «Արձագանք», 1897, 29 հունվարի, Հմր 11:

[2] Ձեռագրի մասին տես՝ **Ա. Մաթևոսյան**, Գրիչ Հովհաննես Սանդղկավանցի («Մողնու Աւետարանը»).- «Բանբեր Մատենադարանի», Հմր 10, 1971, էջ 379-399,

հաննես Սանդղկավանեցին էր: Ձեռագրի ընդօրինակման վայրի ու ժամանակի մասին որևէ տեղեկություն չի պահպանվել, սակայն ելնելով 1053 թ. «Աւետարանի» (Մատենադարան, ձեռ. Հ^{մր} 3593) մի քանի մանրանկարների հետ «Մողնու Աւետարան»-ում եղածների անառարկելի նմանությունից՝ համարվում է, որ այն նկարազարդվել է 11-րդ դ. կեսերին, Սանդղկավանքում: Ուշ միջնադարում ձեռագիրը գտնվել է Հաղբատի վանքում, ապա՝ հարյուր տարի Մողնու եկեղեցում: Այժմ ձեռագիրը պահվում է Մատենադարանում (ձեռ. Հ^{մր} 7736):

Հավանաբար «Մողնու Ավետարանն» էլ նկատի է ունեցել Մեսրոպ արք. Սմբատյանցը, գրելով, որ եկեղեցում պահվում է Բագրատունյաց շրջանում գրված ձեռագիր, որը անթվական է ու հիշատակարան չունի[1]:

Շնորհաշատ գրիչ և մանրանկարիչ Հովհաննեսը ստեղծագործել է 11-րդ դարի կեսերին Արշարունիք գավառի Սանդղկավանքում: Նրա գրվածքներից պահպանվել են Մողնու և Սանդղկավանքի Ավետարանները, ինչպես նաև պատառիկներ, այսպես կոչված՝ «Բեգյունց Աւետարանից» (Մատենադարան, ձեռ. Հ^{մր} 10099):

Շքեղազարդ «Մողնու Աւետարանը» հայկական ձեռագրական մշակույթի ամենանշանավոր հուշարձաններից է: Ձեռագրում պահպանվել են խորանները, ավետարանիչների պատկերները համապատասխան անվանաթերթերով, տերունական մանրանկարները և այլն: Սակայն, չի պահպանվել գլխավոր հիշատակարանը: Առկա են փոքր հիշատակագրություններ, որտեղ նշված են Հովհաննեսի և Դավթի անունները:

Մողնու եկեղեցում գրված և ընդօրինաված ձեռագրերը գալիս են 15-րդ դարի կեսերից: 1447 թ. Հովհաննես գրիչը «ի մայրաքաղաքս Տփղիս, ընդ հովանեաւ Կամակատար Սուրբ Աստուածածնին» ընդօրինակել է ձեռագիր «Աւետարան»: Հիշատակարանում գրիչը գովեստի խոսքեր է ուղղել ձեռագիրը ստացող «աստուածասէր և բարեպաշտ» Ներսեսին, նրա հորը՝ Կարապետ քահանային, եղբորը՝ Հովսեփ քահանային, հորեղբորը՝ Տեր Հովհաննեսին, նրա

Տ. Իզմայլովա, Հովհաննես Սանդղկավանեցի, Երևան, 1986, **Պ. Մուրադյան,** Հին Թիֆլիսի հայոց եկեղեցիները, էջ 53, «Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան», Երևան, 2002, էջ 757, **Свирин,** Миниатюра древней Армении, М-Л, 1939, **Л. Дурново,** Осерно изобразительного искусства средневековой Армении, М. 1979:

[1] **Մ. Սմբատեանց,** Նկարագիր սուրբ Կարապետի վանից Երնջակայ և շրջակայից նորա, Տփխիս, 1904, էջ 176:



որդուն՝ Տեր Մխիթարին, և պապին՝ Տեր Մատթևոս քահանային: Հովհաննեսը հիշատակարանում գրել է. «Շառաւիղն աւրհնութեան և սեռն բարենշան, աստուածասէր և բարեպաշտ և երկիւղածն յԱստուծոյ Ներսէս ցանկացող եղեալ այսմ կենսունակ և մեղսաքաւիչ տառիս և աստուածախաւս մատենիս: Զի յետ ստանալոյ բազում զգեստուց և սպասուց եկեղեցւոյ՝ յաւել և զսա ի գանձս աստուածայինս, ի մտի ունելով զբան մարգարէին, որ ասէ՝ Երանի որ ունիցի զաւակ ի Սիոն և յընդանի յԵրուսաղէմ, ստացաւ զսուրբ Աւետարանս՝ յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնաւղաց իւրոց, և ամենայն արեան մերձաւորաց իւրոց»[1]:

Հավանաբար Տեր Մատթևոս, Տեր Կարապետ, Տեր Հովսեփ, Տեր Հովհաննես և Տեր Մխիթար քահանաները ծառայել են Մողնու եկեղեցում: Այն հոգևորականների մի մեծ ընտանիք է եղել:

Հինգ տարի անց՝ 1452 թ. «ի լաւ և ընտիր աւրինակէ՝ Սըսցի», մեկ այլ «Աւետարան» է գրչագրել Հովհաննեսը (ըստ Պ. Մուրադյանի՝ եղել է մեկ ուրիշ ընդօրինակող). «ի մայրաքաղաքս Տփղիս, ընդ հովհանեաւ կամակատար Սուրբ Աստուածածնիս և Գէորգեա Զօրավարիս»[2]: Հովհաննեսը հիշատակարանում գրել է. «Աղաչեմ զամենեսեան, որք կարդայք և լուսաւորիք յաստուածային բանիցս, յիշեսջիք սրտի մտաւք առաջի Քրիստոսի զնախասասցեալ բարեպաշտուհի կինն Ջհան, և զ’ի Քրիստոս փոխեցեալ զայր զԱջիպ, և զորդիսն իւր զՎարդան և զՄուրատ և զՄըսըր, և զդուստր իւր զԵղիսաբէթ, և զհանգուցեալ որդին իւր զՍարգիս, և զամենայն արեան մերձաւորսն իւր՝ զկենդանիսն և զհանգուցեալսն, և որք յիշէք բարի յիշմամբ և աներկբայ հաւատով՝ յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն: Եւ զսուրբ Աւետարանիս յիշատակարանն կարդան ի տաւնի Զատկին, և Յայտնութեանն, և հանգստեան շաբականն և Քրիստոս Որդի Աստուծոյ ասեն: Եւ Աւետարանս լաւ դաստառակով պահեն»[3]: Ձեռագիրը նկարազարդել է նկարիչ Մանուելը:

Հովհաննես գրչի անվանը երրորդ անգամ հանդիպում ենք մեկ այլ ձեռագրում՝ նույն 1452 թ. Գրիգոր Տաթևացու «Քարոզգրքի» հիշատակարանում, որի պատվիրատուն էր «...երիցս երանեալ երջա-

[1] ԺԵ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա., կազմ. Լ. Խաչիկյան, Երևան, 1955, էջ 606-607:

[2] ԺԵ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Բ., կազմ. Լ. Խաչիկյան, Երևան, 1958, էջ 16:

[3] Նույն տեղում, էջ 16-17:



5622

նիկ և սրբասնեալ և գերիմաստ, գիտութեամբ ճոխացեալ և շքեղացեալ քաջ րաբունիս Ստեփաննոս»[1]: Ձեռագիրն ընդօրինակվել է Մողնու եկեղեցում՝ «ի դրան կամակատար Սուրբ Աստուածածնիս և Գէորգայ զօրավարիս»:

Հովհաննեսը հիշատակարանում գրել է. «Արդ, յերես անկեալ աղաչեմ և հայցեմ ի ճաշակողացդ ի հոգևոր սեղանոյս և աղաչանաս բազումս մատուցանեմ սիրողացդ իմաստութեան, որք լուսաւորիք գիտութեամբ ի սմանէ և մասին սակս հանդիպիք զաղափարելով կամ կարդալով, կամ տեսանելով, յիշեսջիք զվերոյգրեալ զստացօղ սորա՝ զանյաղթ փիլիսոփայ և զսրբասնեալ րաբունապետս զՍտեփաննոս, և զհայր սորին զՎարդան, զմայրն զԴէղախաթուն, և զեղբարսն, և զամենայն արեան մերձաւորսն՝ զկենդանիսն և զհանգուցեալսն ի Քրիստոս: Այլ և զըստ հոգւոյ հարազատն՝ զսնընդակից եղբայր սորա զՅովաննես ճգնազգեաց կրօնաւոր, որ առիթ եղև սմա և օգնական ի յուսմունս իմաստութեան և բազում աշխատութեամբ ծառայեաց, զոր Տէր հատուցէ զվարձս վաստակոց սորա ընդ միոյն բիւրապատիկ ի հանդերձեալ կեանս»: Հովհաննես քահանան գովեստի բազում խոսքեր է ուղղել նաև «զգերապատիւ և զնրբահայեաց և զարդարեալն իմաստութեամբ» իր ուսուցիչ և հոգևոր հայր Կարապետ րաբունապետին, որը նրան սովորեցրել էր վարդապետական և երաժշտական գիտությունը, նրան բնութագրել է որպես կաթողիկե եկեղեցու պարծանք:

Ինչպես կարելի է եզրակացնել Ստեփաննոս և Կարապետ րաբունապետերին բնութագրող բառերից, Մողնին այդ ժամանակ արդեն նշանավոր եկեղեցի ու գրչօջախ է եղել:

1455 թ. նույն Հովհաննես քահանան ընդօրինակել է մեկ այլ ձեռագիր «Աւետարան». «ի մայրաքաղաքս Տփխիս, ի դրան կամակատար Սուրբ Աստուածածնիս և Գէորգեայ Զաւրավարիս»[2]: Նա հիշատակարանում գրել է. «...Աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք այսմ աստուածաշունչ և կենսունակ Սուրբ Աւետարանիս՝ կարդալով կամ աւրինակելով, կամ տեսանելով, յիշեսջիք առաջի Քրիստոսի զնախասացեալ ստացաւղ սորա զՄարիամ և զմայրն իմ Ենիբէկ, և զծնողսն իւր՝ զհայրն Մխիթար և զմայրն Ղամաթ, այլ և զծնողսն Ենիբէկին՝ զՇրվան և զՀրատ, և զեղբայր Մարիամին զՍողովմոն, և զպապն զԱբրահամ, այլ և զՅովանէս, և զՍտեփանոս, և զամենայն

[1] Նույն տեղում, էջ 17:

[2] ԺԵ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Գ., կազմ. Լ. Խաչիկյան, Երևան, 1967, էջ 425:



արեան մերձաւորս նոցին՝ զկենդանիսն և զննջեցեալսն: Եւ որք յիշէք բարի յիշմամբ և աներկբայ հաւատով, յիշեցեալ լիջիք յանմոռաց յիշատակութիւնն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն»: Ձեռագիրը նկարազարդել է «հանճարեղ և ձեռնահմուտ» Մանուել քահանան:

1463 թ. եկեղեցում Մկրտիչ քահանան «Աւետարան» է ընդօրինակել՝ «ի մայրաքաղաքս Տփխիս, ընդ հովանեաւ կամակատար Սուրբ Աստուածածնի և Գէորգեայ Զաւրավարիս»[1]: Ձեռագիրը գրվել է «Աստուածասէր, բարեպաշտ և երկիւղած» Ամիրի պատվերով: Հիշատակարանում նշված են նրա ընտանիքի անդամների անունները: Այս ձեռագիրը նույնպես նկարազարդել է Մանուել քահանան (Նաղաշը):

1468 թ. Մողնու եկեղեցում Մկրտիչ քահանան ընդօրինակել է մեկ ուրիշ «Աւետարան»՝ «Ի դրան կամակատար սուրբ Աստուածածնիս և Գէորգեայ զաւրավարիս»[2]: Ձեռագրի պատվիրատուն եղել է «Աստուածասէր և երկիւղած» Թուման: Ձեռագրում հիշատակվում են Թումայի որդին՝ Առաքել սարկավագը, նրա երկու եղբայրները՝ Ստեփաննոս վարդապետն ու Կիրակետուրը, և ուրիշներ:

Մկրտիչ քահանան հիշատակարանում գրել է. «Արդ, աղաչեմք զամենեսեան՝ որք հանդիպիք յայսմ լուսաւոր և կեանսունակ սուրբ Աւետարանիս կարդալով կամ աւրինակելով, յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զստացող սորա զՍտեփաննոս րաբունապետն. և զամենայն արեան մերձաւոր իւր՝ զկենդանիս և զհանգուցեալսն: Եւ զիս՝ մեղապարտ գրիչս սուտանուն քահանայ Մկրտիչս յիշեցէ՛ք ի սուրբ յաղաւթս ձեր, և Աստուած զձեզ յիշէ. ամեն»:

Հիշատակարանում նշված Ստեփաննոս վարդապետը 1476 թ. Մողնու եկեղեցում ընդօրինակված ձեռագրում հիշատակվում է որպես եպիսկոպոս: Նա նույն Ստեփաննոս րաբունապետ Առինջեցին է, որը հիշվում է Մողնու եկեղեցում դեռևս 1452 թ. գրված հիշատակարանում: Թուման և նրա որդի Առաքելն Ավետարանը նվիրել են Սումբեցի Սուրբ Աստվածածին եկեղեցուն՝ տեղի ոմն վարդապետի գերեզմանին հիշատակ: Ձեռագրի հաջորդ հիշատակարանում նշված է, որ Հովսեփ եպիսկոպոսը «Աւետարանը» կազմել է 1471 թ.: Այն, հավանաբար, խիստ քայքայվել և վնասվել էր: Հետագայում՝ 1503 թ., այդ նույն ձեռագիրը գնել է ոմն Բեկլար և նվիրել Սամծերու գիւղի եկեղեցուն. այդ թվականի հիշատակարանը գրել է Շմավոն

[1] Նույն տեղում, էջ 195:

[2] «Մշակ», 1883, 14 հունիսի, Հմր 89:

քահանան: Ձեռագիրը 1883 թ. նկատել և կախեթցի մի հայից գնել է Գրիգոր քհյ. Մանդակունին, որն էլ հրատարակել էր երեք հիշատակարաններն ու նշել. «Պարտք եմ համարում հրատարակել, իցէ թէ հնախոյզների հետաքրքրութեանը մի թեթև օգուտ մատակարարէ»: Այս ձեռագիր Ավետարանի հետագա ճատակագիրն անհայտ է:

1470-ական թթ. Հասան Փադիշահը Թիֆլիսում մեծ կոտորածներ և ավերածություններ է կատարել, որի առիթով Աստվածատուր գրիչը ողբալով գրել է. «Ո՛հ և եղուկ և վա՛յ է մեր լսելեաց, և վա՛յ է մեր տեսանել աչաց. որ վասն մեղաց մերոց բարկացաւ անբարկանալին Աստուած ի վերայ Տփխիս քաղաքիս. և էր խիստ մեծ մահ, որ ոչ կարեմք պատմել գրովք... երբ լուսանէր՝ ճիչ և լալ քաղաք ընկնէր...»[1]: Հավանաբար, այդ ասպատակությունից նույնպես վնասվել էր Մողնու եկեղեցին:

1476 թ. Մկրտիչ քահանան ընդօրինակել է մեկ ուրիշ ձեռագիր «Շարակնոց», որի հիշատակարանում գրել է. «Ընդ հովանեաւ սուրբ Կաթողիկէի և բժիշկ ցաւոց Մողնոյ սուրբ Գէորգեայ, ի խնդրոյ Տիրատուր քահանայի, որդւոյ Թադէոսի և Աւրտու-Մելիքայ, և ի դառն ի չար ժամանակի, որով նեղիմք ի բռնութենէ անօրինաց, ի ղանութիւն Հասան-բէկին, որ և գերեաց զՎրաց տուն և աւերեաց զքաղաքն Փայտակարան»[2]: Մկրտիչ երեցը մեկ ուրիշ «Շարակնոց» էլ ընդօրինակել է 1485 թ.՝ «Գրեցաւ եղանակաւոր տառս որ կոչի Շարակնոց ձեռամբ յոգնամեղ և անարժան գրչի Մկրտիչ յիրիցի... սուրբ երգարանս ի քաղաքս Տըփխիս, ընդ հովանեաւ Սուրբ Կաթողիկէիս և բժիշկ ցաւոց Մաւղնոյ սուրբ Գէորգիս»[3]. պատվիրատու Տիրատուր քահանան երկու տարի անց ձեռագիրը հանձնել է նկարազարդման «ձեռամբ Ստեփանոս եպիսկոպոսի յԱռընջեցոյ»: Բացառված չէ, որ նկարիչ Ստեփանոսը եկեղեցու՝ երեք տասնամյակ առաջ հիշվող նույն րաբունին էր, իսկ Տիրատուրը, հավանաբար, Մողնու եկեղեցու առաջնորդն ու ավագ քահանան, որը ձեռագիրը պատվիրել էր իր ծնողների հիշատակին:

1488 թ. Մկրտիչ գրիչը հերթական անգամ «Աւետարան» է ընդօրինակել «ի մայրաքաղաքս Տփխիս, ընդ հովանեաւ կամակատար Սուրբ Աստուածածնիս և Գէորգայ զաւրավարիս, ի դառն և շփոթ ժամանակիս»[4]: Ձեռագրի ստացողը եղել է «աստուածասէր, սրբասնեալ, հեզահոգի» Ղազար քահանան. այն նկարազարդել ու կազմել է քաջ վարդապետ Աբրահամը, որին էլ օգնել են Տեր Վարդանը, Տեր Հովհաննեսը, ավագերեց Տեր Եսային և Բարսեղը, որոնք Մողնու եկեղեցու միաբաններն էին:

1656 թ. եկեղեցում գրիչ Աղամալ Ջուղայեցին «Գանձարան» է ընդօրինակել «ի մայրաքաղաքն Տըփխիս, ի դուռն Մօղնոյ Ս. Գէորգեայ զօրաւարին և Կամակատար Ս. Աստուածածնին»[1]: Ձեռագիրը գրվել էր պարոն Ջուրաբի պատվերով, որն էլ նա նվիրաբերել էր նորակառույց Սուրբ Նշան եկեղեցուն: Վերջինս այստեղ հիշատակվում է առաջին անգամ և, հավանաբար, սկզբնապես գործել է Մողնու եկեղեցու հովանու ներքո:

Այդ տարի Աղամալ Ջուղայեցին ընդօրինակել է նաև մեկ ուրիշ ձեռագիր «Աւետարան»՝ խոջա Գուլի և խոջա Շահպարոնի պատվերով: Ջուղայեցուն օգնել է Միրինի Տփխիսեցին[2]:

1661 թ. Աղամալ Ջուղայեցին մեկ ուրիշ ձեռագիր «Աւետարան» է գրչագրել Փաշի վանքում (Վանքի եկեղեցի), որի մայր օրինակը վերցված էր «ի դրանէ Կամակատար Աստուածածնէ և Մօղնոյ Սրբոյն Գէորգայ զօրաւարէ եկեղեցւոյ»[3]: Հարկ է նշել, որ Աղամալ Ջուղայեցին մեկ ուրիշ ձեռագիր «Աւետարան» Թիֆլիսում ընդօրինակել է 1665 թ., որի սկիզբը գրել էր դեռևս Ագուլիսի Սուրբ Թովմայի վանքում[4]:

Այն ևս մեկ անգամ ապացուցում է, որ Մողնու եկեղեցին եղել է նշանավոր գրչության կենտրոն, որտեղ պահվել են ձեռագրերի բազմաթիվ լավագույն օրինակներ:

17-րդ դարի վերջում (1668 թ. հետո) Մողնու եկեղեցում ձեռագիր «Ժողովածու» է բազմացրել տեղի քահանա Տեր Շմավոնը[5]: Նա շարունակել է Տեր Զաքարեի հիշատակարանը: Հետագայում՝ 1711 թ., հիշատակարան է գրել Աթանաս քահանան և ձեռագիրը նվիրել է Մարտիրոս վարդապետ Նորագեղցուն: Հիշատակարանում նշված են Թիֆլիսի Փաշի վանքի ավագերեց Տեր Մովսեսը, «այլ վանքի» Տեր Բարսեղը և ուրիշներ: Տեր Շմավոնը հիշատակվում է նաև

[1] ԺԵ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Բ., էջ 361-362:

[2] Նույն տեղում, էջ 396:

[3] ԺԵ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Գ., էջ 466:

[4] Նույն տեղում, էջ 120:



[1] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ. դար, հ. Գ., կազմ. Վ. Հակոբյան, Երևան, 1984, էջ 720:

[2] Նույն տեղում, էջ 721:

[3] **Պ. Մուրադյան,** Հին Թիֆլիսի հայոց եկեղեցիները, էջ 361:

[4] **Մ. Սմբատեանց,** նկարագիր սուրբ Կարապետի վանից Երնջակայ և շրջակայից նորա, Տփխիս, 1904, էջ 185:

[5] Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ա, էջ 364:

1712 թ. գրված մեկ այլ ձեռագրի հիշատակարանում. «Զայս գիրքս Մողնու տէր Շմաւոնին է, ով օք կարթայք՝ մէկ բերան ողորմի ասացէք»[1]: Ի դեպ, 1726 թ. հուլիսի 1-ին Տեր Շմավոն քահանան «պատճառ եղաւ» որ Ղորղանենց մահտեսի Փարիմուզը, Լամազոն և Բեժանը և իրենց ծնողներ Էստատին և Թինաթին ձեռագիր Ավետարան նվիրեն Մողնու եկեղեցուն[2]:

1671 թ. այցելելով Թիֆլիս՝ ֆրանսիացի ճանապարհորդ Ժան Շարդենը քաղաքը նկարագրելիս ներառել է նաև Մողնու եկեղեցին: Ժոզեֆ-Պիտոոն Տուրնեֆոր ճանապարհորդի՝ 1701 թ. նոթերում ևս հիշատակված է Մողնին:

Մողնին իր երկու եկեղեցիներով ընդգրկված էր նաև Վրաց արքայազն Վախուշտ պատմաբանի 1735 թ. կազմած քարտեզի մեջ:

1745 թ. Մողնու եկեղեցում Գրիգոր քահանան կրկնօրինակել է Ամիրդովլաթ Ամասիացու «Անգիտաց Անպէտ» գործը, որի պատվիրատուն է եղել հաքիմ Մկրտումը[3]: Վերջինս Մոնթոյենց Մկրտումն է, որը մի խանութ է նվիրել Մայր Աթոռին՝ ի հիշատակ Թիֆլիս քաղաքի: Հետագայում ձեռագիրը պատկանել է Մկրտումի որդի Ստեփաննոսին:

Գրիգոր քահանան հիշատակարանի վերջում ավելացրել է.

«Ո՛ գիր, որ մնաս,
Ո՛ ձեռն, որ հող դառնաս,
Ո՛վ եղբայր, որ կարդաս,
Մեղաւորիս ողորմի տաս»:

1745 թ. Մողնու եկեղեցին հիշատակվում է նաև խոջա Բեհբուդի թոռնորդի Մելիք Աղայի և նրա եղբայր Ստեփաննոսի արտոնագրում, որով նրանք թույլատրել են պատարագիչ քահանաներին շաբաթ և կիրակի օրերին խոջայի բաղնիքում անվարձ լողանալ և բաղանիքի դրամարկղից 100 դիան ստանալ, սակայն պայմանով, որ եկեղեցիներում պատարագների ժամանակ բարեխոսեն իրենց ու իրենց ննջեցյալներին համար[4]:

Ա. Երիցյանը գրել է. «Այդպէս ահա՝ 1671, 1701 և 1735 թուականներին Մողնու եկեղեցիները դեռ կանգուն են եղած: Սակայն, երբ

---

[1] Մայր Ցուցակ Ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. 7, կազմեց Նորայր արքեպս. Պողարեան, Երուսաղէմ, 1974, էջ 451:

[2] **Մ. Սմբատեանց**, նկարագիր Սուրբ Կարապետի վանից Երնջակայ և շրջակայից նորա, Տփխիս, 1904, էջ 294:

[3] Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Բ, Երևան, 2004, էջ 391:

[4] **Պ. Մուրադյան**, Հին Թիֆլիսի Հայոց եկեղեցիները, էջ 192:



յետագայ 1736-ին քաղաքիս տիրեց Նադիր-շահը, երևի թէ միւս եկեղեցիների հետ միասին մի դժբաղդ հարուածի ենթարկուեցաւ նաև Մողնին, որովհետև շուտով հարկ եղաւ նոր ի նորոյ հիմքից շինել եթէ ոչ Ս. Գէորգ խախտուած եկեղեցին, գոնէ «Կամակատար Ս. Աստուածածինը»[1]:

Այնուհետև Ա. Երիցյանը շարունակում է. «Մեզ հասած տեղեկութիւններից երևում է, որ XVI դարու վերջերում և XVII-ի սկզբներում Մողնին ունեցել է մի համբաւաւոր Տէր-Շմաւոն անունով աւագ քահանայ, որի բարի անունը որդէց որդի մինչև հիմա էլ յիշվում է: Այդ Տէր-Շմաւոնի նախնիքը, որպէս և ինքն ու իր սերունդը, մի կերպ սրտացաւ տէր և խնամակալ են եղած յիշեալ եկեղեցւոյն, որի հովանւոյ տակ հանգստացած են ինքեանք... Տէր-Շմաւոն աւագ քահանան, որ դեռևս յիշվում է 1721 թուի մի արձանագրութեան մէջ, Նադիր-շահի արշաւանքից յետոյ երևի թէ այլևս կենդանի չէր, որպէս զի սրտացաւութեամբ հոգ տանէր այդ քանդուած եկեղեցիները վերանորոգելու: Բայց հանգուցեալ Տէր-Շմաւոնի տեղը շուտով բռնում է Աբամելիքեանց իշխանական տոհմի զաւակ և երկու անգամ Երուսաղէմ գնացած եկած՝ յիշատակաց արժանի մահտեսի Տէր-Աբրահամ աւագ քահանան: Օգտուելով այն անդորրութիւնից, որի մէջ էր գտնվում Թիֆլիզը Նադիր-շահի մահուանից յետոյ, վրաց Թէյմուրազ II և սորա որդի Հերակլ II արքաների ժամանակ, Տէր-Աբրահամը յորդորեց իր համաքաղաքացոց վերստին կառուցանել Մողնու Ս. Աստուածածին աւագ եկեղեցին, որ և յաջողուեցաւ նրան 1752 թ. դրամական օժանդակութեամբ այն ժամանակուայ Թիֆլիզի նշանաւոր «օճախի» որդւոց՝ Մոնթոյենց Մկրտումի, Բաստամեաց Մելքոյի և Բաշինջաղեանց Պօղոսի: Այս իրողութիւնն արձանագրուեցաւ Մողնւոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ արևմտեան դռան ճակատին»[2]:

Ա. Երիցյանը ամբողջությամբ մեջբերել է արձանագրությունը, որը, ցավոք, չի պահպանվել. «Կամաւ և կարողութեամբն Աստուծոյ ի հիմանէ շինեցաւ սուրբ եկեղեցիս, որոյ անունն կոչի Կամակատար Աստուածածին, ի հայրապետութեան Տեառն Ղազարու երջանիկ կաթուղիկոսին և ի թագաւորութեան աշխարհիս մերում Վրաց Թէմուրազ քրիստոսապսակին և որդւոյ նորին Հերակլ՝ տերութեամբ զօրացելոյն, եղև շինեալ արդեամբ Թիֆլիզեցի Մոնթօյենց Մամաջանի որդի Մկրտումին և Բաստամենց Ստեփանի որդի մահտեսի Մելքօյին, և Բաշինջաղեանցի Ղուլիճանի որդի Պօղոսին և սորա

---

[1] «Արձագանք», 1897, 29 հունվարի, Հփ 11:

[2] Նույն տեղում:

առ Աստուած հանգուցեալ աներ Մկրտչին. եղև ի աւագ քահանայութեանն մահտեսի Տէր Աբրահամին: Ով կարդաք՝ ողորմի ասէք, Աստուած ձեզ ողորմի: Թիւն ամսեան մարտի Ժ. (10), սկիզբն է ՃՄԱ (1752)»[1]. ի դեպ, Պ. Մուրադյանը նշել է՝ թվին ՌՄ. (1751) [2]:

1751 թ. արձանագրությունն առաջինն ուղեկցողի օգնությամբ վերծանելու փորձ է կատարել Գյուլդենշտեդտը, որը աղավաղել է թե՛ թվականը, թե՛ կառուցողի անունը: Այդ արձանագրությունը հրապարակել են նաև Մ. Բրոսեն, Ս. Ջալալյանցը, ինչպես նկատեցինք՝ Ա. Երիցյանը և ուրիշներ: Ա. Երիցյանի տեղեկացմամբ՝ Սուրբ Գևորգ ավերված եկեղեցու արձանագիր քարը տեղափոխվել ու ագուցվել էր գավթի հյուսիսային պատին, որը վաղուց այլևս գոյություն չունի:

Ավարտելով Սուրբ Աստվածածին եկեղեցու շինությունը՝ Տեր Աբրահամը հոգ է տարել վերականգնելու նաև Մողնու Սուրբ Գևորգ քայքայված եկեղեցին: Շինարարությանն օգնել են Տեր Շմավոնի որդիներն ու թոռները՝ Օհանը, Զուրաբը, Սողոմոնը, «բէմուրատ Յովսէփը և Դաւիթն, որք դարիպ երկիր վախճան առին, թաղեալ յօտար գերեզմանին»[3]:

Տեր-Աբրահամի կողքին է եղել նաև Փիթոյենց աղա Ստեփանը, որի մասին հիշատակագրում ասված է. «ևս պարոն Ստեփանին, որ ջանաց շինութեան սորին, կեանս սմա երկար լիցին... Հուսկ և յետոյ ինձ նուաստին՝ մահտեսի Տէր-Աբրահամին, եղէ պատճառ շինութենին, սակս սիրոյ սուրբ Գէորգին...»[4]:

Այդ առթիվ Ա. Երիցյանը գրել է. «Այս վերանորոգութիւնը եղած է 1760 թ., բայց որովհետև յիշյալ Ս. Գևորգ եկեղեցին այժմ չկայ և մի քանի տասնեակ տարի առաջ իւր խարխուլ դրութեան պատճառով բոլորովին վերացուեցաւ տեղից, վասն որոյ իւր հարաւային դռան ճակատին եղած մարմարիոնէ քարի վրայ փորագրեալ արձանագրութիւնը, մասամբ եղծուած, զետեղուած է այսօր Մողնու գաւթի հիւսիսային պատի մէջ»[5]:

Ի դեպ, եկեղեցու նորոգման իրողությանն արձագանքել է Սայաթ-Նովան իր հայտնի երգերից մեկում.

*Հիմքըւր վերըւրին նուրեցին, չաղ արին, Մողնու Սուրփ Գեւուրք.*
*Քար ու կիրըւր ոխչարի կաթ շաղ արին, Մողնու Սուրփ Գեւուրք.*

[1] Նույն տեղում:

[2] **Պ. Մուրադյան**, Հին Թիֆլիսի հայոց եկեղեցիներ, էջ 139:

[3] «Արձագանք», 1897, 29 հունվարի, Հմ 11:

[4] Նույն տեղում:

[5] Նույն տեղում:



*Աչ ու ձախ կախեցին՝ բրոլե ճաղ արին, Մողնու Սուրփ Գեւուրք.*
*Յիրգնուց լուսըն վըրեւր կամար-թաղ արին, Մողնու Սուրփ Գեւուրք:*

*Պափիրըւր կարմիր ագուրով, սընիրըւր փաշ մարմար քարով,*
*Հընդու միչեւմեն դուս էկած վարաքուրըւր՝ ղալամքարով,*
*Թագիրըւր անգին ակնիրով, ըզգիւրըւր զարքարով, զարով.*
*Բիմըւր ու խաչկալըւր դրախտի բաղ արին, Մողնու Սուրփ Գեւուրք:*

*Վիրնատունւր սանդալե փախփակ, ռանգըն է փորոնի նըման.*
*Հոքով ու մարմնով կու ըրփվի, ով քիզ գուքա մոնի նըման.*
*Տապանակ ոխտի կըփակյավ խորանւր Ահարոնի նըման.*
*Միաբանքըւր քաղցր ձայնով փաղ արին, Մողնու Սուրփ Գեւուրք:*

*Ամեն բորուրըն կու ափվի, քիզի գուքա ով փափակով...*[1]:

Հավանական է, որ մեծ բանաստեղծը ներկա է եղել նորոգված եկեղեցու օծման արարողությանը և հենց այդ առթիվ էլ հորինել է այս խաղը:

Թիֆլիսի մյուս եկեղեցիների պես Մողնին ևս 1795 թ. սեպտեմբերին ենթարկվել է պարսիկ Աղա-Մահմեդ խանի հրոսակների թալանին ու ավերածությանը:

Մողնու եկեղեցում հնուց ի վեր երկու պահարան է եղել, որոնցում վտանգավոր ժամանակներում գաղտնի պահել են եկեղեցու թանկարժեք իրեղենները: Մեկի գոյության մասին սովորաբար իմացել են միաբան քահանաներն ու լուսարարը, իսկ մյուսը բոլորովին ծածուկ էր ամենքի համար, և դրա տեղը հայտնի էր միայն ավագերեցին: Ինչպես նշվել է՝ 1795 թ., թշնամու Թիֆլիս մտնելուց առաջ, Տեր Գրիգոր քահանան եկեղեցու գույքն անձամբ թաքցնում է այդ պահարաններում: Սակայն պարսիկները, Մողնու միաբաններին սաստիկ տանջանքների ենթարկելով, պահանջում են ցույց տալ պահուստի տեղը: Քահանաներից մեկը սպանվում է, մի դպիր գերի է տարվում, մյուս միաբանները հրաժարվում են թաքստոցը ցույց տալ: Վերջապես քահանաներից մեկը, որն արդեն թրատված էր, այլևս չի դիմանում մարմնին դրված տաք երկաթին և բա-

[1] **Սայաթ-Նովա**, հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն խաղերի ժողովածու, կազմեց, խմբագրեց և ծանոթագրեց Մ. Հասրաթյանը, Երևան, 1963, էջ 82:

ցում է ավագ պահարանը, որտեղ գտնվել են զգեստներ, սրբազան անոթներ, բազմաթիվ հին գրչագրեր, այդ թվում՝ «քոթուկ» կոչված հիշատակարանը, որում արձանագրված էր Մողնու եկեղեցիների ժամանակագրական պատմությունը, ստացված նվերները և այլն: Պարսիկները կողոպտելով այդ բոլորը՝ Տեր Գրիգոր քահանայից պահանջում են նաև գանձերը: Եկեղեցու հավատարիմ քահանան, չնայած սոսկալի տանջանքներին, չի հայտնում ծածուկ պահարանի տեղը, որը միայն ինքը գիտեր: Այսպիսով Մողնու եկեղեցու գույքի մի մասը փրկվում է:

Տեր Գրիգոր քահանան եկեղեցու դռան մոտ մեկ օր ու գիշեր մնում է ուշաթափ ընկած: Կարծելով, որ նա մահացել է, պարսիկները թողնում ու հեռանում են: Երեցի տնից պարսիկները տանում են երկու աղջիկ և 13 տարեկան տղայի, իսկ նրա եղբայրը սպանվում է:

Այդ առթիվ Գ. Շերմազանյանը գրել է. «Պարսիկները Թիֆլիս աւերելիս՝ գերի են տանում 9 կամ 10 տարեկան մէկ երեխայ Գրիգոր անունով, որ ծնած է լինում Մօղնւոյ (Սուրբ Գէորգ) եկեղեցւոյ միաբան Տէր Գրիգորեանց սերունդից: Ըստ աւանդութեան այս գերդաստանի անհատների, իբր թէ իրանց տոհմից մի զկնի միոյ ութն քահանաներ են եղած յիշեալ եկեղեցում, որի գաւթումն էլ ցոյց էին տալիս նրանց գերեզմանները»[1]: Հետագայում, այս Գրիգորը Թավրիզում ընկնում է Մոլլա Մուհամմեդ-Հուսեյն-Փիշնամազի ձեռքը, որը նրան թլպատել է տալիս և անվանում Քեարիմ, ու իր միակ որդու հետ արաբերեն ու պարսկերեն լեզուներ սովորեցնում տանը: Այնուհետև նա դառնում է մոլլա և գրում բազմաթիվ հոդվածներ: 1835 թ. նա արդեն զբաղեցնում է Ատրպատականի գլխավոր մոլլայության պաշտոնը: «Այդ ժամանակները,- գրում է Գ. Շերմազանյանը,- պատահմամբ ես ծանօթացայ Մօլլայ-Քեարիմի հետ: Նա յայտնեց ինձ Թիֆլիսեցի լինելը, և թէ շատ էր սիրում իր այնտեղի ազգականների մասին մէկ համբաւ կամ որ և իցէ տեղեկութիւն ստանալու թէ՝ արդեօք նրանք Թիֆլիս ինչ կանեն, ով է նոցանից այժմ կենդանի և ինչ վիճակի մէջ են... Նա չէր մոռացել իրանց տունը Թիֆլիսում որտեղ է, որ փողոցում, իւր եղբօր Նիկողոս անունը, նաև նրա արհեստը: Բայց մոռացել էր իւրեանց դրացի եկեղեցւոյ անունը, ուր նրա պապերն ու նախահայրերը քահանայութիւն էին արած: Վերջապէս մեր երկարօրէն խօսակցութիւնից դուրս եկաւ, որ Թիֆլիս նրանց տունը մեր դրացիութեան Մօղնու եկեղեցւոյ հրապարակի վերայ էր,

[1] **Գ. Շերմազանեան**, Երևելի հայկազունք ի Պարսկաստան, Ռոստով (Դօնի վերայ), 1890, էջ 209:



և երբ ես սկսեցի նրա ազգականների անունները ասել և նրանց վիճակը պատմել, այնուհետև նա աւելի ևս սիրով էր վարվում հետս, երբ գնում էի նրա մօտ, և մէկ օր խնդրեց որ՝ գրեմ Թիֆլիս»:

Ինչպես Ս. Ջալալյանցն է գրել՝ եկեղեցու թաքստոցներից մեկի պահպանման շնորհիվ փրկվել են արձանագիր որոշ առարկաներ[1]: Մեկն արծաթապատկեր նշխարների պահարան էր՝ հետևյալ հիշատակարանով. «Յիշատակ է Յովսէփին և ծնողացն Գօրգուն, Խանփերվանին, և կողակցոյն Եագունդին և որդւոց ամենեցուն ի դուռն Մօղնւոյ Սուրբ Գէորգայ, ի քահանայութեան մերոյ Տէր Շմաւոնին: Թվին ՌՃԿԹ. (1720)[2]»:

Մյուս՝ արծաթե պահարանում, պահվել են Սուրբ Հակոբի, Սուրբ Ղունկիանոսի և Սուրբ Թեոդորոսի մասունքները. «Մահտեսի տէր Աբրահամ Աբիմելիքեանց ընծայեցի զայս արծաթեայ պատկերս եռախաչ սուրբ մասամբք զիս յիշատակ ի դուռն Մողնի եկեղեցին Թիֆլիզոյ՝ վասն իմ հոգւոյ և մարմնոյ ցօր վախճանի իմոյ»:

Պ. Մուրադյանը գրել է. «Հետաքրքիր կլիներ ճշտել՝ արդյոք պահպանվե՞լ են արվեստագիտության համար հետաքրքրություն ներկայացնող այս մասունքները բովանդակող առարկաները: Նրանց հիշատակարաններում ներկայացող անձինք հայտնի են վիմագիր ու պատմողական այլ աղբյուրներում նույնպես»[3]:

Հարկ է նշել, որ Տեր Գրիգորն Աբրամելիքենց Տեր Շմավոնի որդին էր, որի նախնիներն ութ սերունդ շարունակ քահանայություն էին արել եկեղեցում և թաղվել նրա գավթում:

1789 թ. մայիսի 4-ին Մողնու եկեղեցու քահանաները գրություն են տալիս Տեր Աբրահամ ավագ քահանային, առ այն, որ նա եկեղեցու շինության համար նվիրել է իր տունը և խանութները, իրենք ամեն կիրակի պատարագին պարտավորվում են հիշել նրան[4]:

Նշենք նաև, որ պահպանվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Վրաց Հերակլ II արքային ուղղված երկու վավերագիր՝ գրված 1791 թ. հունիսին՝ կապված Տեր Գրիգոր քահանայի ավագերեցության հետ: Ստորև ներկայացվում են Գյուտ Աղանյանցի կողմից պատճենագրված օրինակները[5].

[1] **Ս. Ջալալեանց**, նույն տեղում, մասն Բ., էջ 70:

[2] Ա. Երիցյանը նշել է 1721 թվականը:

[3] **Պ. Մուրադյան**, նույն տեղում, էջ 56:

[4] Մաշտոցյան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 6, վավ. 12 (այսուհետ՝ ՄՄ, Կ/Դ):

[5] ՀԱԱ, ֆ. 332, ց. 1, գ. 634, թ. 1-5:

*Կոնդակ ի Թիֆլիզ, ի վերայ Մողնւոյ եկեղեցւոյն, վասն հաստատութեան Աւագ երիցութեան Տէր Գրիգորին, զոր յառաջ քան զայս իսկ կարգեալ էաք, և այժմ՝ ի գալն ի սուրբ Աթոռս, զայս ետուք նմա:*

«Յորմէ ժամանեսցէ թուղթ սիրոյ, ողջունի և օրհնութեան, և նամակ պահպանութեան, շնորհք առաքելական, և աստուածային բազմապատիկ օրհնութիւնն և նախախնամական գթութիւնն, ի վերայ սիրելի և հոգևոր որդւոցդ մերոց՝ հարազատ ու հաւատարիմ զաւակացդ սրբոյ Աթոռոյս՝ տեառնախնամ քաղաքիդ Թիֆլիզու Մողնւոյ հրաշակերտ սուրբ եկեղեցւոյ յանուն սրբոյն Աստուածածնի կառուցելոյ խոհեմազարդ քահանայիցդ, սրբապաշտօն սարկաւագացդ և ուսումնասէր դպրացդ, և համօրէն իսկ եկեղեցականաց, բարեպաշտօն իշխանացդ, հանճարապերճ վաճառականացդ, ձեռնահմուտ արուեստաւորացդ, երկիւղազարդ տանտիկնացդ, և այլ ամենայն ժողովրդականացդ խմբից՝ մեծաց ու փոքունց, արանց և կանանց առ հասարակ, ի Տէր խնդալ:

(Ճնորք).

Եւ ընդ շնորհազեղուն օրհնութեան ողջունամատոյց նամակիս՝ ծանուցումն լիցի սիրելի և հոգևոր որդւոցդ մերոց և լուսածնունդ զաւակացդ մօրս հաւատոյ՝ մեծի Աթոռոյս սրբոյ Էջմիածնի: Քանզի հազարապետն աստուածային խորհրդոց, և հոգեշնորհ ուսուցիչն և դաստիարակն քրիստոսականի եկեղեցւոյ՝ երանելի առաքեալն Պօղոս գրէ թէ՝ Որք բարւոք վերակացու լինին երիցանք, կրկին պատուոյ արժանի եղիցին: Եւ այս իրաւամբ և արտադրութեամբ իսկ՝ ըստ հետևեալ օրինակացս: Զի ի դասս զինուորաց պատերազմողաց՝ որ ըստ օրէնի մարտիցի, պսակի, և որ զգերազանց քաջութիւն ցուցանիցէ, ի խոնարհ աստիճանէն վերանայ ի բարձր աստիճան: Նաև ի պաշտօնատարութիւնս և ի գործավարութիւնս, որ ոք հաւատարմաբար և բարւոքապէս կատարեցէ զմասնաւոր կամ զհասարակ պաշտօնն իւր և զգործն, այնու կշռեցեալ յաւելեալ կացուցանի ի մեծագոյն պաշտօն և գործ: Ըստ որում և Քրիստոս փրկիչն մեր ի վայելչաղէպ առակաբանութեան սրբոյ Աւետարանին զեկուցանէ զասելն Տեառն առ յիւրաքանչիւրսն ի քանքարաշահ ծառայիցն թէ՝ Ծառա՛յ բարի և հաւատարիմ, որովհետև ի սակաւուս հաւատարիմ ես, ի վերայ բազմաց կացուցից զքեզ. և այլն: Ապաքէն մանաւանդապէս ի դասակարգութիւնս եկեղեցականաց, որ ոք զհոգևոր գործն և զպաշտօն իւր կատարեալ ունի և փառաւոր առնէ, ըստ առաքելոյն, որով զարժանին Տեառն, այսինքն՝ զշնորհին Հոգւոյն Սրբոյ զոր ընկալաւ, շահէ և յարգէ ի սեղանաւոր հաւատացեալս, այնպիսին յի-



րաւի արժանի է վերանալոյ ի փառազարդ ճոխութիւն պատուոյ: Որպէս ահա այժմ սիրելի և հոգևոր որդին մեր Տէր Գրիգոր համեստակենցաղ քահանայն արժանապատուաբար ի բազմաց ընտրեցեալ և զվայելեալ և ի մէնջ կարգեցեալ է Աւագերեց ի սուրբ եկեղեցւոջդ ձերում՝ յաջորդ հանգուցեալ հօրեղբօրն իւրում տէր Աբրահամ Աւագ քահանային: Քանզի ի վաղուց իսկ հետէ ի բազմաց բերանոց լուեալ մեր զնմանէ զհամբաւս ախորժալուրս, թէ յամենայնի արի է ի հոգևոր գործս պաշտաման իւրոյ՝ ի տնտեսութիւն տանդ Աստուծոյ՝ սրբոյ եկեղեցւոյդ ձերոյ, և բարւոք վերակացութեամբ և ժրաջան տքնութեամբ հովուէ զժողովուրդ Տեառն զբանաւոր հօտդ Քրիստոսի. և թէ՝ հարազատ որդի և անձնադիր ծառայ է սրբոյ Աթոռոյս և մեզ, ապա յետ առ Տէր փոխեցման հօրեղբօրն նորա Տէր Աբրահամ Աւագ քահանային, մինչ ականաւոր անձինքն մերազնէից քաղաքիդ գրեալ էին մեզ և խնդրեալ, կարգել զնա ի տեղի լուսահոգի հօրեղբօրն Աւագերեց, զվայելով բարեկաութեանցն և զամենայնի արժանաւորութենէն, և մեք այնորքիք ջատագովութեամբք առաւել ևս ստուգեալ զամենայն վայելչալուր համբաւսն, որ զնմանէ՝ հաճեցաք ընդ պատկանաւոր խնդիր նոցա, և գրեալ զկոնդակ օրհնութեան, յղեցաք ի վերայ ձեր, կարգելով զնա ձեզ Աւագ քահանայ: Իսկ այժմ Տէր Գրիգոր շնորհապերճ քահանայն եկն ի սուրբ Աթոռս և առ մեզ՝ ունելով զթուղթս ի Քրիստոսազօր բարձրապատիւ օրհնեալ Արքայէն, և ի բազմաց երևելի անձանց, որք կրկին խնդրեալ էին հաստատել զինքն ի պատիւ և ի գործն Աւագերեցութեան: Նոր և մեք ի հայրական սէր և ի խնամս վերընկալաք, և արդարև՝ որպէս լուեալ էաք, նոյնպէս և տեսաք անպակաս ի բարեհամբաւութեանցն նախաժամանելոց ի յանձս մեր: Վասնորոյ՝ ըստ սրբազան առաքելոյն բանի՝ արժանի վարձեալ կրկին պատուոյ, զսիրելի և զհոգևոր որդին մեր և զհաւատարիմ զաւակն սրբոյ Աթոռոյս զտէր Գրիգոր խոհեմազարդ քահանայն, որպէս յառաջ քան զայն կարգեալ էաք, այժմ ևս վերստին հաստատեցաք ի պատիւ և յիշխանութիւն Աւագերեցութեան սրբոյ եկեղեցւոյդ ձերոյ: Որոյ սակս և շնորհեցաք նմա զայս օրհնագիր նամակս մեր, և աւանդեցաք զպատուէրս հարկաւորս և օգտակարս յամենայնի, և այսպէս սիրով և օրհնութեամբ և փառաւոր խելացիւ վերադարձուցաք առ սիրելի և հոգևոր որդիսդ մեր: Որ ամենայնիւ վստահութեամբ և քաջաջան արիութեամբ հովուեսցէ և կառավարեսցէ զձեզ զամենեսին՝ զքահանայսդ զժողովուրդսդ ըստ աստուածային հաճոյիցն և պատուիրանացն, և ըստ ուղիղ աւանդութեանց և սահմանադրութեանց սրբոյ եկեղեցւոյս

Հայաստանեայց: Եւ բարւոք տնտեսութեամբ և վերակացութեամբ հոգասցէ զամենայն հոգս սրբոյ եկեղեցւոյդ ձերոյ, յարամնալով և ի հարազատ սրբութեանն և ի անձնադիր ծառայութեանն լուսատու ծնողիս ձերոյ սրբոյ Աթոռոյս և հոգևոր հայրութեան մերոյ, և զձեզ ևս ի նոյնս յորդորելով: Եւ դուք ուրեմն համայն սրբասնուէր քահանայքդ և քրիստոսասէր օրհնեալ ժողովուրդքդ պարտիք ամենայնիւ յօժարութեամբ և աննախանձաբար լսօղք և կատարօղք լինել ամենից անմեղսածին հրամանաց դորին, և լինել դմա յամենայնի հնազանդք, և պատուել զդա ըստ օրինի և ըստ իւրոյ արժանւոյն՝ որպէս զհոգևոր վերակացու և կառավարիչ ձեզ, և Աւագ քահանայ: Եւ կատարօղքդ հրամանաց մերոց եղիջիք օրհնեալք յԱստուծոյ և ի մէնջ, և շնորհք սրբոյ Իջման տեղւոյս Քրիստոսի ընդ ձեզ լիցի միշտ: Ամէն: Գրեցաւ ի թուականին մերում ՌՄԽ. (1791) և ի յունիսի ի բարձրախոհ և ի շնորհածաւալ Աթոռս սուրբ Էջմիածին»:

*Թուղթ առ Արքայն վրաց Հերակլ ի պատասխանի թղթոյն ընդ Տէր Գրիգորին նորոգ Աւագ քահանայացելոյն Մողնւոյ եկեղեցւոյն:*

«Յորմէ ժամանեցէ թուղթ ճշմարիտ սիրոյ և կարօտոյ, քրիստոսապարգև սուրբ ողջունի և հոգևոր օրհնութեան, հանդերձ անհատավտակ շնորհիւ Սրբոյ Իջման տեղւոյս նորին, և պահպանողական զօրութեամբք սքանչելափառ սրբութեանց՝ և մասանցն սրբոց, որք աստ կան, ի վերայ իսկապէս սիրելւոյդ և յատակ ցանկալւոյդ հոգւոյս և աստուածակերտ Սրբոյ Աթոռոյս խնամատար բարեկամիդ՝ վսեմախոհութեամբ կատարելոյ և իմաստութեամբ փայլեցելոյ՝ քաջութեամբ հռչակեցելոյ և հանճարով գերազանցելոյ՝ քրիստոսազօր և խաչապսակ ամենապատիւ մեծի արքայիդ Հերակլայ: Որում և գիտութիւն լիցի, զի սիրանշան թուղթ բարեպաշտութեան քո՝ ձեռամբ տէր Գրիգոր համեստաբարոյ քահանայիս նորոգ Աւագերեցուն Մողնւոյ եկեղեցւոյն է հաս առ մեզ, զոր մեծաւ սիրով ընկալեալ ընթերցաք և ծանքուք զգրեալսդ: Եւ նախ զհասարակաշահ ողջութիւնէ և զառողջութիւնէ ամենապատուական անձինդ տեղեկացեալ, ուրախացաք յոյժ, որք և խնդրեմք յԱստուծոյ ընդ երկայն աւուրս պահել և պահպանել զպարծանքդ մեր և զուրախութիւնդ սրտից մերոց յաջողութեամբ և բարիգուարճ կենօք: Եւ ապա իմացաք զիրաւասիրաբար ջատագովութիւնդ վասն տէր Գրիգորին, զի որպէս ըստ խնդրոյ նշանաւոր արանց քաղաքիդ մերազնեայցն կարգաւորաց և աշխարհականաց՝ յառաջ քան զայս կարգեալ էաք զնա Աւագերեց Մողնւոյ եկեղեցւոյն ի տեղի հօրեղբօրն իւրոյ հանգուցեալ Տէր Աբրահամ Աւագ քահանային, նոյնպէս և այժմ հաստատեցեմք: Ուստի՝ և մեք ի հայրական սեր և ի խնամս վերնկալլաք զհոգևոր որդին մեր զտէր Գրիգոր շնորհունակ քահանայն, և կրկին նամակ ետուք վասն հաստատութեան Աւագ երիցութեան նորին, և օրհնութեամբ վերադարձուցաք փառաւորապէս: Ընդ նմին և հարկաւորեալ զայս թուղթ մատուցաք առ բարձրութիւն ձեր, ի գիցել զորպիսին իրին: Իսկ զայլ որպիսութիւնս սրբոյ Աթոռոյս և մեր՝ հրաժարեալ յերկարութիւնէ ի չտալ զձանձրոյթ, թողուք ի գրաբերէն իմանալ, եթէ կամեցին: Ո՛ղջ լեր ի Տէր. բոլորեալ բնաւ բարեպաշտութեամբ ի յերկրանս. բարեխնդիր աղօթողացս վասն մեծութեան ձերոյ. ամէն: Գրեցաւ յամի փրկչին 1791 և ի Յունիսի ամսոյ, ի լուսակերտ Աթոռս ամենայն Հայոց՝ ի սուրբ Էջմիածին»:

Պարսիկների ասպատակությունից հետո, Թիֆլիսի բնակչությունը հայտնվել էր սովի, չքավորության ու անտանելի տառապանքների մեջ: Չնայած դրան, տեղի հայերը, ձգտել են նորոգել ավերված եկեղեցիները:

1796 թ. վերջին ռուսական բանակի հետ Թիֆլիս է գալիս այստեղ սնված ու մեծացած, 20 տարի Ռուսաստանում առաջնորդական պաշտոն վարած, ծնունդով Սանահինից Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը: Նա իջևանում է Մողնու թաղում՝ իր եղբոր որդի մինբաշի, իշխան Սողոմոն Արղությանի տանը, որը ավերակել էին պարսիկները, սակայն Սողոմոնը հնարավորինս վերանորոգել էր այն: Հովսեփ արքեպիսկոպոսի հետ էր Աքքերմանցի Գրիգոր վարդապետը, ում նա նպատակ է ունեցել եպիսկոպոս ձեռնադրել և իր փոխարեն ռուսահայոց առաջնորդ կարգել:

Սողոմոն Արղությանի տանը մի կողմից հարևան էր քաղաքի մելիք Բեհբուդյան իշխան Դարչինի ապարանքը, մյուս կողմից՝ Աբամելիքյանց Տեր Գրիգորի տունը, որոնք էլ մոտ էին Մողնու եկեղեցուն:

Ա. Երիցյանը գրել է. «Յովսէփ արքեպիսկոպոսը ցաւ զգաց տեսնելով, թէ ինչ խղճալի դրութեան մէջ են այժմ իւրեանց Մողնու թաղը և թաղիս եկեղեցիքը, որոց պայծառ և ճոխ դիրքն ու բազմաթիւ փարթամ ծխականները երբեմն իւրեան քաջ ծանօթ էին: Այժմ ամեն ինչ անցել գնացել էր, բայց մնացորդ վտասուած ժողովրդի մէջ դեռ կենդանի էր հաւատը և բարեպաշտ ջերմեռանդութիւնը»[1]:

Մողնու եկեղեցու վիճակն այնքան անմխիթար ու խափանիչ էր, որ 1797 թ. հունվարին դրա գավթում, Հովսեփ արք. Արղությանի նախաձեռնությամբ, ծխականների ժողով է հրավիրվում, և եկեղեցու

[1] «Արձագանք», 1897, 29 հունվարի, Հմր 11:

գործունեությունը վերականգնելու «համախոսական վճիռ» է կայացվում՝ հոգաբարձու, կառավար և երեցփոխան կարգելով ընդհանուր վստահություն վայելող պարոն Եսայի Փիթոյանին:

Նախ նշված է. «Մողնի մականունեալ Սուրբ Աստուածածին մեծ եկեղեցւոյ և առ նովաւ Սուրբ Գէորգ փոքր եկեղեցւոյ էրիցփոխանութիւնն յետ աւերութեան քաղաքի յամի ՌՄԽԵ. (1796) հայոց, որ է ամ տեառն 1796, յամսեանն մարտի, նոյն եկեղեցւոյ գովութեան արժանաւոր աւագ երէց քահանայ տէր Գրիգորն Տէր-Շմաւոնեան կնեազ Աբամելիքեանց, համակամութեամբ Հախբատայ առաջնորդ Դաւիթ արքեպիսկոպոսին և կնեազ Մելիք Դարչի Բէհբուդեանին և այլոց բազմաց կնեազեաց և ազնուականաց, և սրբոյ Էջմիածնի և Հախբատայ վանաց գործակալ աւագ երիցանց և այլ եկեղեցեաց աւագ քահանայից էր յանձնարարեալ պարոն Եսայեայ Ստեփանեան Փիթոյեանց», ապա կազմվել է դաշնագրություն[1]:

Համախոսականում (դաշնագրություն) գրված է. «Ըստ ընթացից հոլովման շրջանին ժամանակաց պատահեալ մեր (իմա՝ Յովսէփ արքեպ. Արղութեանցի - Ա. Ա.) ի կողմն ձախողակի և ի յարդար իրաւանցն Աստուծոյ դատեալ՝ խրատապատժեցաք ըստ յանցանաց մերոց, որ ի ՌՄԽԴ. (1795) թուոջս և ի Սեպտեմբեր ամսոյ ԺԳ. (13) Պարսից իշխող չէզոք Աղայ-Մահմատ-խանն եկն և տիրեաց զվայելուչ քաղաքիս մեր Թիֆլիզոյ, որում և հասոյց զմեծ վնաս և զաղէտ տագնապի, անխնայաբար կոտորելով զբնակիչս, զորս և զբազումս գերի առնելով, հանդերձ այրեցմամբ շինուածոց և յափշտակմամբ յոլով գանձուց և փարթամութեանց, մինչ զի հասաք մեք ի յետին չքաւորութիւն, և առհասարակ փարթամք և անինչք ի կողմն մեծագոյն թշուառութեան և աղքատութեան միտեցեաք, սմին սարասի և եկեղեցիք մեր, զրկեալք ի կահուց և ի կարասեաց՝ անկան ի պայծառազարդութենէ և աղաւաղեալք անշքացան, որ ի վայելչականէն զրկեալք՝ գէթ հարկաւորին անգամ ոչ ձեռնհաս լինէին: Սակս որոյ համակամ հաւանութեամբ քաղաքիս մերոյ իշխանաց, եկեղեցականաց և աշխարհականաց և յատկապէս Մողնի եկեղեցւոյս քահանայականաց դասուց և ժողովրդոց, ի շինութիւն և ի պայծառազարդութիւն սրբոյ եկեղեցւոյս մերոյ, այսպէս ըմբռն և պատշաճ վարկեալ, զի որովհետև չունիմք մեք զառաջինն մեր կարողութիւն՝ որպէս երկն և եռանդն՝ հոգատարութեամբ լնուլ զհարկաւոր պիտոյսն սրբոյ եկեղեցւոյս, վասն որոյ կարգեցաք սրբոյ եկեղեցւոյս զմասն բաժնի յամէ ելիցն և մտիցն իբրև զմի ընիկ քահանայ՝ հանելով բա-

[1] **Պ. Մուրադյան,** նույն տեղում, էջ 164:



ժին ի ժամէ՝ եթէ ի տէրունական աւուրց և եթէ ի հասարակաց, զի զոր ինչ զեկեղեցւոյն բաժին անկցի, զայնս համայն քահանայք եկեղեցւոյս պարտին կարգաւ առնել զժամն ի հասարակէ յերից մասանց՝ զմի մասն առնելով ինքեանց վարձ ըստ ընիկ սովորութեան եկեղեցւոյս, և ի տէրունականէ ի հինգերորդ մասնէ զմի մասն, և զմնացեալն տալով եկեղեցւոյն, որոյ հոգաբարձու և կառավար և երէցփոխան կարգեցաք զպարոն Եսային Ֆիթոյեան, և զամենայն հասսն սրբոյ եկեղեցւոյս՝ թէ՛ ժամուցս այս, թէ՛ գանձանակ, թէ՛ պսակի և կնքոյ լուսադրամ, թէ՛ ձիթադրամ և մոմադրամ, որ հավաքի ի Զատկի և ի Ջրօրհնեայս և թէ՛ ամենայն ինչ՝ և թէ՛ խանութի քիրայք, և թէ գերեզմանահախք, և որ ինչ յանուն եկեղեցւոյ արդիւնք՝ զամենայն համանգամայն պարտին յանձնել ի վեր յիշեալ պարոն Եսայուն՝ առանց ումեք ներհակելոյ և ձեռնամուխ լինելոյ: Որ և նոյն պարոն Եսային զայնս ամենայն ինքեան յանձնեցեալ զարդիւնսն պարտի հաւատարիմ պահպանութեամբ պահել և ի հարկաւոր պակասութիւնս եկեղեցւոյ ծախել կարգաւոր հաշուագրութեամբ ելիցն և մտիցն:

Այսպէս և այսու օրինիւ և կանոնաւորութեամբ պարտի մնալ եկեղեցիս այս զժամանակ ինչ, մինչև այց առնել Տեառն մերոյ և համայնից նախախնամողին, որ ի կարողանալ ժողովրդոց և ի լնուլ հարկաւոր պակասութեանցն սրբոյ եկեղեցւոյս, յայնժամ ըստ վայելման ժամանակին լինելոց է կարգ և սահման:

Արդ, և ոչ արժան իսկ էր զանց առնել զայսու, որ ի գալ և ի տիրել նոյն անիծեալ Աղա-Մահմադ-խանին զքաղաքս զայս, թէ զիարդ և որքան անտանելի տանջանս կրեաց Տէր-Շմաւոնեան տէր Գրիգոր մաքրասուն և մեծաշխատ աւագ քահանայ սրբոյ եկեղեցւոյս՝ արքմամբ սաստիկ գանից և խարմամբ բոլոր անդամոց՝ յաղագս անօթից եկեղեցւոյն, բայց նա զօրացեալ ի շնորհացն Աստուծոյ, ամենևին ոչ զանգիտեցեալ ի յայնքան դառն տանջանաց, այլ ի սպառ տոկալով ի նեղութեանն այնմիկ, որ գրեթէ հասեալ մինչև ի դուռն մահու, բայց ոչ ցուցեալ ի պահեստ եղեալն զանօթ, զի թէ և ոմանք գիտելով զմասն ինչ ի պահեստի եղելոցն՝ անհամբեր եղեալ ցուցեալ էին անօրինացն և բոլորովին տարեալ նոցա, բայց զայնս զոր ումեք ոչ գիտացեալ բայց յինքենէ, զայն մասն ամբողջ զերծուցեալ, զորս ամենայն ի հաշուագրի նշանաւորեալ յականէ և յանուանէ, և ի ստորև ձեռագրեալ և կնքեալ՝ զյուշուագիրն ընդ թղթոյս յանձնեցաք պարոն երիցփոխ Եսայուն, և զանօթսն անդրէն ի տէր Գրիգոր աւագ քահանայն յաւանդեցաք՝ ըստ պատշաճի եկեղեցւոյն ի գործ

ածցէ և ըստ իւրում ժամանակի վայելեսցեն ի պաշտօնս և ի հանդէսս եկեղեցւոյն:

Գրեցաւ և եդաւ այս թուղթ ի ՌՄԽԵ. (1796) թուոջս, ի Մարտի ամսոյ ԻԵ. (25): Վերջ:

Կարգադրութիւնս այս հաճոյ է ինձ. վասն որոյ և իմով ձեռամբ հաստատեմ՝ Յովսէփ արքեպիսկոպոս Ռուսաց երկրի Հայոց և այցելու աշխարհին Վրաց:

Հաղպատայ սրբոյ վանից առաջնորդ Դաւիթ արքեպիսկոպոս վերահաստ գոլով, վասն որոյ կնքեցի:

Վկայ եմ՝ դիւան Սօլօմօն (Արղութեան)

Վկայ եմ Դարչի՝ մելիքի որդի (Բէհբութեան)

Վկայ եմ Թաղուայշվիլի Իսայի

Վկայ եմ դիւան Աւետիք:

Վկայ եմ համաձայն՝ տէր Գրիգոր, կնիք չունէի, բայց այս իմ ձեռքն է, հաստատ»[1]:

Լեոն, անդրադառնալով համախոսականը ստորագրողներից Դարչի Բեհբությանին և նրանց տոհմի գործունեությանը, գրել է, որ «այս տոհմը 18-րդ դարի սկզբում այնքան արդեն կարևոր դիրք էր գրավում Վրաստանի ազնվականության մեջ, որ ժառանգություն էր ստանում Թիֆլիսի մելիքությունը: Իսկ թե ինչ դեր էր տոհմը խաղում քաղաքի հայ համայնքի ազգային գործերի մեջ, այդ ցույց է տալիս իշխան Դարչի Բեհբությանը, որ վերջին մելիքն էր և այնքան խոշոր դեր կատարեց Վրաստանը Ռուսաստանին կցելու գործի մեջ: Նա միշտ մեծարվում էր որպես քաղաքիս մեջ ամենից մեծ ազդեցություն ունեցող անձը: Նրա այդ ազդեցությունը տարածվում էր նաև Վրաստանի հայոց հոգևոր վարչության վրա, և Էջմիածնի կուսակալների առաջն էլ հարգելի էր նրա ձայնը: Նա տեր էր համարվում իր պապերի շինած քաղաքին Կուսանաց վանքի, Նորաշենի, Մողնի և քանի մի ուրիշ եկեղեցյաց թե՛ Թիֆլիսում և թե՛ շրջակա գյուղերում: Նրանից էր կախված այդ եկեղեցիներում քահանա նշանակելը կամ ավագ քահանայություն տալը»[2]:

Երեցփոխան Եսայի Փիթոյանը ժամանակին նշանավոր անձ էր: Ըստ ավանդության՝ նրանց տոհմը Անի մայրաքաղաքի բնիկներից էր, որտեղ կոչվել են Եագուլեան: Հնուց ի վեր՝ Փիթոյանները Մողնու ծուխ են եղել և բազմաթիվ ծառայություններ մատուցել եկեղեցուն, Վրաստանում, այնուհետև ռուսաց տերությունում ազնվական կարգ ունեցել:

[1] ՄՄ, Կ/Դ, թղթ. 6, վավ. 69, տես նաև՝ Հայկական աղբյուրները Աղա Մուհամմադ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին, աշխատ. **Ռ. Տիտանյանի**, Երևան, 1981, էջ 70-72, **Պ. Մուրադյան**, նույնը, էջ 204-206:

[2] **Լեո**, Երկերի ժողովածու, h. 4, Երևան, 1984, էջ 78:



Ինչպես նշվել է, Աբամելիքյանց Տեր Աբրահամին օգնական էր Փիթոյենց Ստեփանը (18-րդ դ. սկիզբ): Իսկ աղա Եսային շատ սրտացավ է գտնվել Սուրբ Էջմիածնի Մայր տաճարի նկատմամբ, որի մասին իր հիշատակարանում գրել է Հովսեփ արք. Արղությանը:

Սակայն հանգամանքներն այնպես են դասավորվում, որ Եսայի Փիթոյանը չի կարողանում եկեղեցուն օգտակար լինել: Նախ՝ առևտրական գործերով նա հաճախ բացակայում է քաղաքից, և ապա՝ տեղի է ունենում ամենաասարսափելին, նրա երեցփոխության հենց առաջին տարում (1797 թ.), սովին հետևում է ժանտախտը, որը մոտ մեկ ու կես տարի շարունակ ամայացնում է ամբողջ Թիֆլիսը: Մահտարաժամը քաղաքում կրկնվում է 1803, 1804, 1811, 1812, 1813 թթ., և եկեղեցիները մնում են կիսավեր:

Ռուսաց ցարի կողմից հայոց կաթողիկոս հաստատված Հովսեփ արք. Արղությանը 1801 թ. փետրվարի 10-ին հանդիսավորությամբ մտնում է Թիֆլիս՝ Սուրբ Էջմիածին գնալու ճանապարհին: Այս անգամ էլ նա իջևանում է հայրական տանը՝ իր եղբոր որդու՝ իշխան Սողոմոն Արղությանի մոտ: Այդ ժամանակ Մողնու եկեղեցին դեռևս վերանորոգված չէր, երեցփոխան Եսայի Փիթոյանը բացակայում էր քաղաքից, իսկ ծեր ավագ քահանա Տեր Գրիգորը երկարատև հիվանդ էր:

Հովսեփ արքեպիսկոպոսը Մողնու եկեղեցում կրկին ժողով է գումարում և առաջարկում սկսել եկեղեցիների վերանորոգումը՝ խոստանալով Սուրբ Էջմիածին հասնելուն պես օգնություն ուղարկել: Ժողովում խնդիր հարուցվեց, թե ովքեր են փոքր՝ Սուրբ Գևորգ և մեծ՝ Սուրբ Աստվածածին եկեղեցու շինողները, որոնց սերունդները, ըստ հին սովորության, տեր էին հանդիսանում և պարտավոր էին սրտացավությամբ պահպանել իրենց նախնիների շինությունները: Գրավոր հարցմունք եղավ ալևոր Տեր Գրիգորին: Վերջինս պատասխանում է. «Ես Մողնու միաբան ծերունի տէր Գրիգորս, առաջի Աստուծոյ, որպէս ականատես, այսպէս վկայեմ, որ առաջին փոքր եկեղեցումն (Մողնի - Ս. Գէորգ) ես դպրութիւն եմ արել, և ունէր երեք սեղան, փոքրիկ, առաստաղն ցածր՝ նման Սահակաշինու: Ի ժամանակս աւագ քահանայութեան հանգուցեալ մահտեսի տէր Աբրահամին մեծ եկեղեցւոյ (Ս. Աստուածածին) չորս անկիւնի տեղիքն առան ի պատճառս լայնացուցանելոյ և Մնթօյենց Մկրտումն, Բաստամենց

Մելքօն և Բաշինջաղենց Պօղոսն արդեամբ իւրեանց եղեն պատճառք վերստին նորոգման և լայնատարած մեծացուցանելոյ մինչև ի վերին կամարներն: Իսկ մեծ կաթողիկէն և ներսի բոլոր պայծառութիւնն աշխատութեամբ հանգուցեալ մահտեսի տէր Աբրահամն է շինեալ՝ որն հանգուցեալ Ստեփան Փիթոյանցի արդեամբ, և որն՝ սոյն եկեղեցւոյ արդեամբ: Բայց հին փոքր եկեղեցին (Ս. Գէորգ) նախ Տէր-Շմաւոնեանցն է շինեալ, և զկնի քայքայելոյն՝ Մանդինեանք նորոգեալ էին: Այս է իմ գիտեցածս, առաջի Աստուծոյ»[1]:

Սակայն այդ բոլոր բարի մտադրություններն այս անգամ էլ չի հաջողվում իրականացնել: 1801 թ. մարտի 9-ին անսպասելիորեն վախճանվում է Հովսեփ կաթողիկոսը: Նրա մարմինը տեղափոխում են Մողնու եկեղեցի, որտեղ մնում է 42 օր՝ մինչ Սուրբ Էջմիածին տեղափոխելը: Այդ առթիվ Գ. Աղանյանցը գրել է. «Ապա Աղքերմանցի Գրիգոր վարդապետ պաշտօնեայ հանգուցելոյն պատեալ զմարմինն կտաւօք, ամփոփէ յարկեղ և դնէ պահեստ ի Մողնու եկեղեցին»[2]:

1814 թ., երբ Ներսես արք. Աշտարակեցին նշանակվել է Հայոց եկեղեցու Վրաստանի թեմի առաջնորդ (առաջնորդել է մինչև 1828 թ.) և տեղափոխվել Թիֆլիս, Մողնու փոքր՝ Սուրբ Գևորգ եկեղեցում ժամասացություն չի կատարվել, սակայն ուխտավորներն անպակաս են եղել, որոնք դրսից պատերն են համբուրել ու մոմեր վառել: Աստվածապաշտությունն ու ծիսական արարողությունները կատարվել է միայն մեծ եկեղեցում, որը դեռ զուրկ էր բավարար պայծառությունից:

1815 թ. Մողնու եկեղեցում հիշատակվում է Գրիգոր քահանան, որը հովվել է նաև Թիֆլիսի Սուրբ Կարապետ եկեղեցում: Այդ տարվա օգոստոսի 6-ին Ներսես Աշտարակեցին դիմել է նրան և պահանջել գրավոր պատասխանել հետևյալ հարցերին. 1. Թե՞ Չուղուրեթի և Հավլաբարի միջև գտնվող Սուրբ Կարապետ եկեղեցին ո՞վ է կառուցել, 2. Ո՞վ է իրեն հանձնել և ինչ պայմանով կամ իրավունքով, 3. Ի՞նչ ներքին և արտաքին կայք ու ստացվածք ունի այդ եկեղեցին[3]:

1816 թ. հիշատակվում է եկեղեցու գանձապետ Բարսեղը, որը Ներսես Աշտարակեցուն ներկայացրել է 1814-1816 թթ. գանձանակադրամների հաշիվը և առաջնորդից ստացել անդորրագիր[4]:

---

[1] «Արձագանք», 1897, 29 հունվարի, Հմր 11:
[2] **Գ. Աղանեանց,** Դիւան հայոց պատմութեան, գիրք Ա-Բ., Թիֆլիս, 1893, էջ 82:
[3] ՄՄ, Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 164, վավ. 733:
[4] ՄՄ, Կ/Դ, թղթ. 32, վավ. 202:



1816 թ. հունվարի 23-ին, ի պատասխան Ներսես Աշտարակեցու հարցման, թե երբ է կառուցվել Մողնու եկեղեցին, Մկրտում Մնթոյանը, Բեժան Բաստամյանը և Գրիգոր Բաշինջաղյանը, արքեպիսկոպոսին ուղղված հայտարարությունում գրել են. «Սրբազնութիւն ձեր զոր հրամայեալ է յաղագս ի Թիֆլիզ կառուցեալ Մողնոյ եկեղեցւոյ շինութեան որպիսութեանն ցուցակ տալոյն, և ոմանք անձինք այլ իմն եղանակաւ զյայտարարութիւնս են մատուցեալ, իբր թէ ինքեանք իմացին պանծալիք և երևելիք, բայց ոչ ամենևին այնպէս, «Քանզի քաղաք, որ ի վերայ լերին կայցէ, զիա՞րդ կարէ թագչիլ» [Մատթ. Ե. 14], վասն զի հնագոյն շինութիւն ինչ Մողնոյ եկեղեցւոյն ոչ ինչ երևի՝ որով ոք ի կածիս ինչ մտցէ, այլ ի հիմանէ մինչև ցկատարն ի հաւուց մերոց տէր ի Մունթօյեան Մկրտումէ, ի Բաստամեան մահտեսի Մելքօյէ և ի Բաշինջաղեան Պօղոսէ է շինեցեալ, զոր Թիֆլիզու հասարակութիւնն լաւապէս գիտէ, և ի յիշատակութեան յօր ի սուրբ պատարագւոջ ևս յայտնի երևի: Եւ յետ այնորիկ՝ եթէ հարկաւորութիւն և կամ պակասութիւն ինչ պատահեալ է սրբոյ եկեղեցւոյն, իւր եկեղեցական արդեամբք ստացեալ է ամենայն կերպիւ զբաւականութիւն, և ոչ ոք է, որ ի քահանայից և կամ ի յաշխարհականաց ոք ի յարդեանց իւրոց զծախս ինչ արարեալ իցէ ի պէտս սրբոյն եկեղեցւոյն, վասն այն, զի ի մէջ ամենայն եկեղեցեաց սոյն եկեղեցւոյ արդիւնքն կրկնապատիկ և եռապատիկ առաւել է, քան զայլոցն, և մինչև ցայսօր ամենայն հարկաւորութիւնք և պայծառութիւնք ի նոյն արդեանցն եկեղեցւոյ է եղեալ, և ո՛չ ումեքէ, և է մինչև ցարդ, և յապագայն ևս, և զայս, զորս մեք յայտնի արարաք՝ եթէ ոչ իցէ սմա ճշմարտութիւն, և կամ քահանայից և ի յաշխարհականաց ոք իցէ, որ կարող գտանիցի ներհակօղ լինիլ բանից մերոց և ունիցի զիրաւունս խօսելոյ, թող ի ներկայութեան բարձր սրբազնութեան ձեր, առաջի երևելի իշխանաց և հանդիպմամբ աւագ քահանայից խօսիցի ընդ մեզ, և մեք օրինօք և հաստատութեամբ բանից տալոց եմք զպատասխանիս, իսկ եթէ ոչ՝ ճշմարիտ յայտարարութիւն մեր այս է՝ առաջի սրբազնութեան ձեր, զի այնոքիկ, որ գաղտաբար այլ և այլ կերպիւ յայտ են արարեալ առաջի սրբազնութեան ձերոյ՝ յուսամք ոչ ընկալնուլ զայն ի տեղի ճշմարիտ յայտարարութեան և տալ մեզ ըստ խնդրանաց մերոց զբաւականութիւնս»[1]:

Լեոն գրել է, որ Մունթոյենց Մկրտումը և Բաստամենց Բեժանը Թիֆլիսի մոքալաքների (պատվավոր քաղաքացիներ) առաջնակարգներից էին, որոնք մի քանի ազնվականների ու ճանաչված

---

[1] **Պ. Մուրադյան,** Հին Թիֆլիսի հայոց եկեղեցիները, էջ 140-141:

ավագ քահանաների հետ կազմել էին մի խումբ և իրենց ձեռքն առել Թիֆլիսի հայության ազգային գործերը[1]:

Հետագայում՝ 1817 թ. Ներսես արքեպիսկոպոսը խումբ է ստեղծում հայկական եկեղեցիների վիճակին ծանոթանալու համար: Մողնու եկեղեցու վերաբերյալ եղած քննությունից պարզվել է, որ 1795 թ. համախոսական վճիռը չէր գործել դաշնագրող շառերի և ավագ քահանա Տեր Գրիգորի մահվան պատճառով:

Փոքր եկեղեցու ամբողջ արդյունքը 1808-18 թթ.՝ տասնմէկ տարվա ընթացքում, եղել էր 31 ռ., ծախսը՝ 21 ռ.: Մեծ եկեղեցու մուտքը 20 տարում՝ 778 ռ.:

Այդ ժամանակ Բազասխանայում Մողնու եկեղեցին ունեցել է չորս դուքան և մի սենյակ (օթախ), որը գրավ դնելով Շաղինենց Կոնիին և Բաբելին, նրանցից պարտք էր վերցրել 120 ռ., ամիսը «երկու շահի շահօք»: Սակայն եկեղեցու ամբողջական պարտքը չէր մարվել: 1818 թ. այն հասել էր 600 մանեթի: Ճիշտ է, քսան տարվա ընթացքում եկեղեցու պարիսպը փոքր-ինչ ընդարձակվել էր ի հաշիվ հարևան Օքրոյանի և Աբամելիքյանի հողատարածքի, մեծ եկեղեցին 1815 թ. ներսից բարեզարդվել էր նկարներով, կտուրը ծածկվել, նոր զգեստներ գնվել, այդուհանդերձ, անմխիթար ու ավերակ վիճակը պահպանվում էր: Ի դեպ, պահպանվել է Թիֆլիսի շրջանային դատարանի 1820թ. դեկտեմբերի 22-ի գրությունը Մողնու եկեղեցուն պատկանյալ, բայց վեճի տակ ընկած տան գործի մասին[2]:

Ա. Երիցյանը նշել է, որ Ներսեսի Աշտարակեցու առաջնորդության ժամանակ Մողնու եկեղեցու առաջնորդն էր Տեր Միքայել քահանան, իսկ 1831 թ.՝ Տեր Աբրահամ Աբամելիքյանը[3]:

1816 թ. փետրվարի 6-ին Մողնու եկեղեցում Ներսես արքեպիսկոպոսը վայելչական հանդեսով, կառավարչապետի, ռուսաց, վրաց ու հայոց մեծամեծների ներկայությամբ պատարագ է մատուցել և կատարել իշխան Սողոմոն Արղությանի թաղման ծեսը:

Նույն թվականի մարտի 16-ին Ներսես Աշտարակեցին աղա Հովսեփ Թումանիշին ուղղված գրությամբ հաղորդում է, որ հանգուցյալ Թովմա Օհանյան Դավթյանի կտակը ստացել է և այդ գումարից ուղարկել է նաև Մողնու եկեղեցուն[4]:

[1] **Լեո**, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1984, էջ 79:
[2] ՄՄ, Կ/Դ, թղթ. 36, վավ. 299:
[3] **Ա. Երիցեանց,** Ամենայն հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի հայքը, մասն Ա., Թիֆլիզ, 1894, էջ 82, 637:
[4] ՄՄ, Կ/Դ, թղթ. 258, վավ. 102:



1818 թ. Ներսես Աշտարակեցին կազմել է Մողնու եկեղեցու 1796-1818 թթ. եկամուտների և ծախսերի հանրագումարը[1]: Պահպանվել է նաև եկեղեցու 1817-1819 թթ. հաշիվները[2], ինչպես նաև 1821թ. տարեկան հասույթի հաշիվը[3]:

1819 թ. Ներսես Աշտարակեցու պահանջով սկսվել է Մողնու եկեղեցու մասնակի վերանորոգությունը: Առաջնորդը նոյեմբերի 4-ին հրահանգել է եկեղեցու երեցփոխ Խութիսավար Պապիսյանին՝ արդեն սկսված վերանորոգությունը կատարել վայելուչ և ժամանակին հարիր[4]: Վերջինս 1819 թ. ներկայացրել է եկեղեցու մուտքի և ելքի հաշիվները[5]: Իսկ, 1820 թ. հունվարի 12-ին Ն. Աշտարակեցին երեցփոխից պահանջել է դրամական վճարումների մասին հաշվետվություն[6]:

1819 թ. նոյեմբերի 29-ին հիշատակվել են եկեղեցու հետևյալ միաբանները՝ Տեր Միքայել ավ. քհյ. Տեր-Դավթյան, Տեր Սիմոն Տեր-Հովսեփյան, Շմավոն քհյ. Մելիքյան, Ստեփան Տեր-Մովսիսյան, Տեր Խաչատուր Դավթյան, Տեր Եսայի Դանդուրյան, Տեր Դավիթ Տեր-Դավթյան և Տեր Ավետիք Տեր-Հարությունյան[7]:

Տեր Միքայել ավագ քահանան Մողնու եկեղեցում հիշատակվում է 1815 թ. և, ինչպես նշվեց, Ներսես Աշտարակեցու առաջնորդության օրոք եկեղեցու առաջնորդն էր: Այդ տարվա ապրիլի 17-ին, Ն. Աշտարակեցին դիմելով Տեր Միքայել քահանային, պատվիրել է եկեղեցու ծխական ընդհանուր արդյունքից բաժին հանել կարանտինում սպասարկող քահանային[8]: Միաբաններից Ստեփան (Ստեփաննոս) քահանան եկեղեցում նույնպես հիշատակվում է 1815 թ.[9]: Շմավոն քահանան մահացել է 1820 թ.: Նույն տարվա օգոստոսի 20-ին Ներսես Աշտարակեցին դիմել է եկեղեցու Եսայի քհյ. Դանդուրյանին և տեղեկացրել, որ հանձնում է նրան հանգուցյալ Շմավոն քհյ. Մելիքյան Սողոմոնյանի ծխերի հովվությունը, պայմանով, որ արդյունքի միայն մի քառորդը հանձնի հանգուցյալի այրուն[10]:

[1] ՄՄ, Կ/Դ, թղթ. 32, վավ. 239:
[2] ՄՄ, Կ/Դ, թղթ. 33, վավ. 250:
[3] ՄՄ, Կ/Դ, թղթ. 39, վավ. 340:
[4] ՄՄ, Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 165, վավ. 144:
[5] ՄՄ, Կ/Դ, թղթ. 34, վավ. 323:
[6] ՄՄ, Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 165, վավ. 176:
[7] ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 745, թ. 11:
[8] ՄՄ, Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 164, վավ. 695:
[9] ՄՄ, Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 164բ, վավ. 737:
[10] ՄՄ, Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 165, վավ. 375:

1825 թ. հունիսի 15-ին Ներսես Աշտարակեցին դիմել է Սպահանի թեմակալ Կարապետ արքեպիսկոպոսին և հիշեցրել, որ Կալկաթայում 11 տարի առաջ վախճանված թիֆլիսեցի Սողոմոն Պապեն Կալկաթայում իր ունեցած մի տան կեսը կտակել է Թիֆլիսի Մողնու եկեղեցուն, իսկ մյուս կեսը՝ Կալկաթայի հայոց Սուրբ Նազարեթ եկեղեցուն, որի հոգաբարձությանն է հանձնված եղել այդ տան պահպանությունը, վարձով տալը և այլն: Առաջնորդը նվիրակ է ուղարկել այնտեղ այդ հարցերը կարգավորելու համար[1]: Ի դեպ, տասնամյակներ անց՝ 1879 թ. հունիսին, Սուրբ Էջմիածնի սինոդը քննարկել է Սողոմոն Պապեի կտակը հօգուտ Մողնու եկեղեցու: Այդ կապակցությամբ դեռևս ապրիլի 23-ին Մակար արք. Թեղուտցին սինոդին ուղղված հայտարարությունում գրել է. «...վաճառեցի ի վերայ առևտրական դրամատան Տփխիս քաղաքի զերկուս փոխանակագիրս՝ յանձնեալս ինձ ի Նորին Վեհափառութիւնէ ի գումարի մի հազար չորս հարիւր եօթանասուն և ութ անգղիական ստեռլին ոսկւոյ, քսան և ինն շիլին և տասն և եօթն պէնս կտակի հանգուցեալ Սողովմոնի Պապէի յօգուտ Մողնւոյ Սուրբ Գէորգ եկեղեցւոյն հայոց Տփխիսայ, հաշուելով զմի ոսկին տասն րուբլի թղթադրամ ռուսաց, և ստացեալ տասն և չորս հազար եօթն հարիւր յիսուն և հինգ րուբլի քսան կօպ. թղթադրամս, ետու ի ժամանակաւորապէս ի բաժնին Արքունի դրամատան Տփխիսայ...»[2]:

1825 թ. մայիսի 16-ին Ներսես Աշտարակեցին դիմել է եկեղեցու երեցփոխ Խութիսավար Պապիսյանին և պատվիրել խանութների արդյունքից առավել չափով պակասացնել քահանաներին տրվող բաժինը, քանի որ նրանք դադարեցրել են վճարել ննջեցյալների քառասունքի պատարագի արդյունքից եկեղեցուն հասանելիքը[3]: Իսկ 1827 թ. հունվարի 19-ին Ներսես Աշտարակեցին նույն երեցփոխից բացատրություն է պահանջել, թե ինչու՞ չի կառուցվում եկեղեցապատկան կրպակը և նշել, որ ձգձգվելը վնաս է պատճառում նաև հարակից տարածքի տեր իշխան Թումանյանին[4]:

Խութիսավար Պապիսյանը Մողնու եկեղեցում երեցփոխի պաշտոնը վարել է մինչև 1828 թ. փետրվարի վերջը: Փետրվարի 25-ին Ն. Աշտարակեցին դիմելով Հարություն քհյ. Ալամդարյանին, հայտնել է, որ ստացել է Մողնու եկեղեցու երեցփոխանին վերաբերվող

[1] ՄՄ, Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 305:
[2] ՀԱԱ, ֆ. 56, ց. 5, թղթ. 107, վավ. 175, թ. 252, բնագիր, ձեռագիր:
[3] ՄՄ, Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 165, վավ. 283:
[4] ՄՄ, Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 568:



գրությունը և պատվիրել է ավարտել հաշվետվությունն ու փոխել երեցփոխանին[1]:

Իսկ օգոստոսի 17-ին Ն. Աշտարակեցին Եկատերինոդարից դիմել է Գևորգ Անտոնյան Քեղխուդյանին՝ հայտնելով նրան եկեղեցու երեցփոխ կարգելու մասին և հորդորել, որ վերջինս իր արդյունավետ գործունեությամբ օրինակ կհանդիսանա բոլոր երեցփոխներին[2]: Միևնույն ժամանակ Աշտարակեցին Սիմեոն արք. Բզնունուն պատվիրել է եկեղեցու երեցփոխանության պաշտոնը և կայքը հանձնել Գևորգ Քեղխուդյանին[3]: Վերջինս եկեղեցու ավագերեց Տեր Միքայելի և Տեր Ավետիք քահանայի աջակցությամբ ոչ միայն կարողանում է Մողնու եկեղեցու պարտքը վճարել և եկեղեցին բարեզարդել, այլև մի ամբողջ դրամագլուխ ստեղծել: Գ. Քեղխուդյանի մահից հետո երեցփոխան է ընտրվել Ղազո Մանդինյանը, որի օրոք՝ 1832 թ. սկզբին, Մողնու եկեղեցու մայր գումարը հասել է մինչև 11 հազար ռուբլու:

1827 թ. հունվարի 25-ին Ներսես Աշտարակեցին հրամայել է եկեղեցու քահանայական դասին, որ թեմակալի դեմ հանդուգն վարքի համար կարգալույծ է արված Դավիթ քհյ. Տեր-Դավթյանը և նրա ծխականների հովվությունը հանձնարարված է նորընծա Աբրահամ քհյ. Տեր-Սողոմոնյանին, որը ծիսակատարության արդյունքի 1/3-ը պարտավոր է հանձնել երեցփոխին ցնոր տնօրինության[4]: Նույն տարվա հունիսի 12-ին Ն. Աշտարակեցին գրություն է ուղղել Սիմեոն արք. Բզնունուն և Հարություն քհյ. Ալամդարյանին, որում մանրամասն նկարագրելով Դավիթ քհյ. Տեր-Դավթյանի զեղծարարությունը, հանդուգն վարմունքը և ժամանակավորապես քահանայագործությունից արգելված լինելը, պատվիրել է ըստ եկեղեցական կանոնի դատել նրան, մասնակցությամբ Հավլաբարի գործակալ Հովհան քահանայի, Ջգրաշենի Հովհաննես և Բեթղեհեմի Եսայի քահանաների և դատավճիռը հայտնել իրեն[5]:

Հետագայում՝ 1828 թ. փետրվարի 28-ին, Ներսես Աշտարակեցին դիմել է Վեհափառ Հայրապետին, ներկայացրել՝ քննել տված լինելով Մողնու եկեղեցու Դավիթ քհյ. Տեր-Դավթյանի գործերը, խնդրել է նրան արժանի պատիժ տալ[6]:

[1] ՄՄ, Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 1064:
[2] ՄՄ, Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 1201:
[3] ՄՄ, Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 1202:
[4] ՄՄ, Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 574:
[5] ՄՄ, Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 776:
[6] ՄՄ, Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 1076:

1827 թ. մարտի 2-ին թեմի առաջնորդը Մողնու Սուրբ Գևորգ և Սուրբ Աստվածածին եկեղեցիների քահանաներին հայտարարել է, որ Մովսես քհյ. Ապողավրիյանը (49 տարվա ստաժ) և Միքայել քահանան (45 տարվա ստաժ) հանգստյան են կանչվում, մինչև իրենց կյանքի վերջը պահպանելով իրենց նյութական իրավունքը, որ ունեին քահանայագործելիս[1]:

1830 թ., երբ Վիրահայոց թեմի առաջնորդն էր Հովհաննես արք. Կարբեցին (առաջնորդել է 1830-1831 թթ.), Թիֆլիսում նա ունեցել է իրեն մտերիմ մի քանի քահանաներ, որոնք մեծ հաջողությամբ քահանաների ձեռնադրության մեջ միջնորդի դեր են կատարել և «աջահամբույր» հավաքել առաջնորդի համար: Այդ քահանաներից է եղել Մողնու եկեղեցու Տեր Եսայի քհյ. Դանդուրյանը, որն իր բարեկամ Եգոր Արտեմի Ջավրյանի օգնությամբ մի քանի ամսվա մեջ մոտ 1500 թուման կամ 6000 ռ. աջահամբույր է ժողովել Կարբեցու համար: Հետագայում Տեր Եսայի քահանան իմանալով, որ նորընտիր կաթողիկոս Կարբեցին առաջադրվել է հաստատության, և շուտով կստացվի կայսերական հրովարտակը, մի քանի օրվա մեջ հավաքում և Վեհափառին է հանձնում 400 թուման աջահամբույր:

Երախտագետ Հովհաննես Կարբեցին 1831 թ. մայիսի 2-ի գրությամբ Տեր Եսայի քահանային Մողնու եկեղեցուց տեղափոխում է Ջգրաշենի Ավետյաց եկեղեցին՝ որպես կառավարիչ և ավագ քահանա: Խրախուսված այդ շնորհից՝ Տեր Եսային միջնորդում է մոտ 30 քահանայացուների համար և մատուցում կաթողիկոսին մոտ 900 թուման աջահամբույր: Վեհափառը դեկտեմբերի 18-ի կոնդակով Տեր Եսայի քահանային շնորհում է «զփիլոն մի կապոյտ շիշակլու» և խոստանում է՝ «և ի ժամանակի, ի հանդիսանայ առաւել ևս քահանայավայելուչ արժանաւորութեամբք, ակնկալցիս առաւելապատիկ պատույ և պարգևաց»: Այնուհետև 1834 թ. նույն տեսակ ծառայությունների համար, Տեր Եսային ստացել է լանջակիր ոսկեզօծ երկրորդ խաչը և 1836 թ. կամիլավկա կոչված գլխարկը:

Անդրադառնալով Տեր Եսայի քահանային՝ Ա. Երիցյանը նշել է, որ նա առաջ եղել է Ներսեսական (Ներսես Աշտարակեցու կողմնակից), իսկ հետագայում բարեկամացել է Կարբեցու հետ և քաղաքում մեծ ազդեցություն ունեցել[2]:

[1] ՄՄ, Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 706:

[2] **Ա. Երիցեանց**, Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը և Կովկասի հայք 19-րդ դարում, մասն Բ, Թիֆլիզ, 1895, էջ 102:



Ի դեպ, պահպանված վկայություններից մեկում, որ է. «...թէ ովքեր և քանի պաշտոնեաներ են եղել քաղաքում (Թիֆլիսում)», գրառում է կատարել նաև «Մողնիսի Տեր Իսային», որը Տեր Եսայի քհյ. Դանդուրյանն է[1]:

1832 թ. փետրվարի 13-ին եկեղեցու Տեր Աբրահամ ավ. քհյ. Աբամելիքյանը Վանքի, Բեթղեհեմի, Սուրբ Նշանի, Կաթողիկեի, Ավետյաց և Նորաշենի հայոց եկեղեցիների ավագ քահանաների հետ միասին հայտարարություն է ուղղել Թիֆլիսի Հայոց հոգևոր կառավարությանը՝ կապված որոշ քահանաների բողոքագրի հետ, որը առնչվել է ավագ քահանաների գործունեությանը[2]:

Աբրահամ ավ. քհյ. Սողոմոնյան Աբամելիքյանը ծնվել է 1791 թ.: Իշխանական ծագում ուներ: Սովորել է Տփխիսի հայոց հոգևոր ուսումնարանում, որտեղ ուսանել է հայոց լեզու, ընթերցանություն, տիրապետել է ռուսաց և վրաց լեզուներին: 1812 թ. Աստվածատուր արքեպիսկոպոսի կողմից ստացել է չորս աստիճան ուրարակրություն, 1825 թ.՝ Գրիգոր արք. Ծամշաղինցու կողմից ձեռնադրվել է սարկավագ, իսկ 1826 թ. մարտի 7-ին նույն արքեպիսկոպոսի կողմից ձեռնադրվել է քահանա: 1831 թ. մարտի 28-ին Եփրեմ կաթողիկոսի հրամանով կարգվել է ավագ քահանա: Մողնու եկեղեցում իր ծառայությունը ջերմեռանդությամբ կատարել է 1812-1839 թթ., երբ նշանակվել է Վրաստանի և Իմերեթի կոնսիստորիայի անդամ՝ Հովհաննես Պարոնբեկյանցի փոխարեն: 1830 թ. այն ժամանակվա կառավարիչ Սիմեոն արք. Բզնունուց ստացել է ծաղկյա փիլոն կրելու իրավունք՝ որպես վարձ Մողնու եկեղեցու վերանորոգության համար: 1831 թ. կաթողիկոսական ընտրությանը մասնակցելու համար Հովհաննես արք. Կարբեցու հետ Թիֆլիսից մեկնել է Սուրբ Էջմիածին՝ որպես Մողնու ավագ քահանա: 1832 թ. Հովհաննես կաթողիկոսից ստացել է ծաղկյա կապույտ փիլոն ոսկեզօծ խաչ՝ պարանոցին կրելու համար, որպես վարձ «յօգնական վաստակուց իւրոց»: 1833 թ. մինչև 1836 թ. նշանակվել է հոգևորականության կողմից հայոց անդամ «խղճմտանաց Վրաստանի դատարանի», որից էլ ստացել է գովաբանական վկայական: 1836 թ. Վեհափառի հրամանով ստացել է կամիլավկա կրելու իրավունք[3]: Ի դեպ, Հովհաննես կաթողիկոսը նրան պարգևատրման օրհնության գիր էր ուղարկել 1832 թ. մարտի 19-ին և, ինչպես նշվել է, շրջանում ծաղկի պատվաստ կա-

[1] **Պ. Մուրադյան**, Հին Թիֆլիսի հայոց եկեղեցիները, էջ 200:

[2] ՀԱԱ, ֆ. 332, ց. 1, գ. 1079, թ. 1:

[3] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 547, թ. 5:

տարելու, խոլերայի ժամանակ հիվանդներին հաղորդելու և մահացածներին օրինական ծեսով թաղելու համար[1]:

Աբրահամ ավ. քահանան ամուսնացել է 1823 թ. Ստեփան Օրբելյանցի դստեր՝ Տասիայի հետ և ունեցել 3 որդի՝ Սողոմոն, ծնվ. 1828 թ., Գևորգ՝ 1831 թ., Ալեքսանդր՝ 1835 թ., և 4 դուստր՝ Մարիամ՝ 1825 թ., Թամար՝ 1833 թ., Կատարինե՝ 1834 թ., Նունիա՝ 1838 թ.: Հարկ է նշել, որ 1849 թ. դեկտեմբերի 14-ին սինոդը քննարկել է Աբրահամ ավագ քահանայի այրի Տասիայի խնդրագիրը՝ իր որդիներ Սողոմոնին և Ալեքսանդրին հոգևոր կոչումից ազատելու և աշխարհիկ ծառայության անցնելու մասին: Ի դեպ, Սողոմոնն ավարտել է Լազարյան ճեմարանը: Սակայն սինոդը որոշում է հոգևոր կոչումից ազատել միայն Ալեքսանդրին[2]:

1837 թ. Մողնու եկեղեցու մասին գրել է վրաց Էգնատի Իոսելիանին. «Իշխան Բեհբութովների պալատին կից կա գմբեթավոր եկեղեցի հանուն Սուրբ Գեորգի՝ Մողնին կոչեցեալ, որ կանգուն է չորս սյան վրա: Բացի մեծ գմբեթից, այս եկեղեցու երեք կողմում անկյուններում դրսից շինված են երեք փոքր գմբեթներ... Սա կառուցված է քաղաքացիներ (մոքալաքներ) Մանդենովի, Բաստամովի և Բաշինջաղելովի ծախքով: Ներքուստ ավելի դուրեկան տեսք ունի, քան թե դրսից: Այստեղ են մի ավագ քահանա և չորս քահանա: Այս եկեղեցու գավթում, հինգ սաժեն հեռավորությամբ, կա մի այլ եկեղեցի՝ նույնպես Սուրբ Գեորգի, նույնպես Փոքր Մողնին կոչեցեալ, գմբեթավոր քարուկրով կառուցված հնուց Տեր-Շմավոնովների ծախքով, որոնք այժմ իշխան Արիմելիքով են կոչվում: Սա էլ մեծ Մողնիին է վերագրված»[3]:

1840 թ. փետրվարի 1-ին Վիրահայոց թեմի առաջնորդ Կարապետ արք. Բագրատունու (առաջնորդել է 1837-1856 թթ.) հրամանագրով եկեղեցու ավագ քահանա է ձեռնադրվել Ղազար քհյ. Դավթյանը[4]:

Ղազար ավ. քհյ. Տեր-Խաչատրյան Դավթյանը ծագումով ազնվական տոհմից էր և քահանայական ընտանիքից: Ծնվել է 1809 թ. մարտի 10-ին: Սովորել է Տփխիսի հայոց դպրոցում՝ քերականություն, ճարտասանություն, քրիստոնեական վարդապետության հրահանգ, եկեղեցական պատմություն, Հայաստանյայց սուրբ

[1] ՄՄ, Կ/Դ, թղթ. 77, վավ. 536:

[2] ՀԱԱ, ֆ. 56, ց. 5, թղթ. 32, վավ. 346, թ. 640, բնագիր, ձեռագիր:

[3] **Պ. Մուրադյան,** Հին Թիֆլիսի հայոց եկեղեցիները, էջ 55:

[4] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 955, թ. 7:



եկեղեցու ժամերգության արարողություն, ինչպես նաև տիրապետել է ռուսերեն և վրաց լեզուներին: 1823 թ. Սիմեոն արք. Բզնունու կողմից լավ առաջադիմության համար ստացել է չորս աստիճանի դպրության կոչում: Մանկուց ծառայել է Մողնու եկեղեցում: 1831 թ. կարգվել է սարկավագ, նույն տարվա նոյեմբերի 10-ից՝ ավագ սարկավագ, իսկ նոյեմբերի 29-ին՝ Մինաս արքեպիսկոպոսի ձեռամբ՝ քահանա նույն Մողնու եկեղեցում: Հինգ տարի ձրիաբար կատարել է ուսուցչի պաշտոն Տփխիսի հայոց ուսումնարանում: 1837 թ. սեպտեմբերի 3-ին թեմի առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոսի հրամանով կարգվել է Տփխիսի եկեղեցիների բարեկարգիչ:

1840 թ. հունիսին Մողնու եկեղեցու և իշխան Դմիտրի Օրբելյանովի միջև կայացել է առևտրական գործարք. եկեղեցու երեցփոխ Եգոր Մանդինյանը եկեղեցապատկան գումարից 3000 ռ. տվել է իշխանին՝ էքսպեդիցիայի համար, գրավ վերցնելով տասը տուն ճորտեր և Վաշլևան գյուղի 1/3 մասը: Հետագայում երեցփոխը Օրբելյանովից պահանջել է նաև 3540 ռ. գումար[1]:

Հուլիսի 11-ին Վրաստանի թեմի առաջնորդ Կարապետ արք. Բագրատունին և կոնսիստորիայի անդամներ Գևորգ վրդ. Տեր-Դավթյանը, Գևորգ ավ. քհյ. Մեհրաբյանը, Ստեփաննոս քհյ. Տեր-Հովհաննիսյանը և Ավետիս քհյ. Տեր-Ավետիսյան Պապովյանը խնդրագրով դիմել են սինոդին, որպեսզի Մողնու եկեղեցու չորս աստիճանավոր դպիր Զաքարիային ձեռնադրեն ավագ սարկավագ՝ «ի պէտս հարկաւորութեան եկեղեցւոյ Նորաշէնի և ի վարձ գովանի յառաջադիմութեան ուսման»[2]:

1841 թ. նշված են եկեղեցու հետևյալ քահանաները և նրանց որդիները[3]. Ղազար ավ. քհյ. Դավթյան, որդիները՝ Խաչատուր (ծն. 1834 թ.), Ղազար (ծն. 1837 թ.), Ավետիս քհյ. Պապովյան, որդիները՝ Նիկողայոս (ծն. 1836 թ.), Տիգրան (ծն. 1839 թ.), Սարգիս քհյ. Մամասախլիսյան, որդին՝ Հարություն (ծն. 1836 թ.), Հովհաննես ավ. սարկավագ Դեմուրյան, որդին՝ Ալեքսանդր (ծն. 1839 թ.), հանգուցյալ Աբրահամ ավ. քհյ. Աբամելիքյան, որդիները՝ Սողոմոն (ծն. 1828 թ.), Գևորգ (ծն. 1831 թ.), Ալեքսանդր (ծն. 1835 թ.):

1842 թ. մայիսի 14-ին Թիֆլիսի և Հավլաբարի բարեկարգիչ Դավիթ քահանան հայտարարությամբ դիմել է վիճակային կոնսիստորիային. «Ի կատարումն հրամանի վիճակայինդ Ատենի ի 25-ն ապ-

[1] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2604, թ. 2:

[2] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 779, թ. 2:

[3] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 48:

րիլի № 778 ըստ այսմ պատիւ ունիմ ներկայացուցանելոյ Ատենիդ զցուցակ եկեղեցական տեղաց, որ արտաքոյ պարսպի եկեղեցաց գտանին, նշանակելով զչափ տարածութիւն և զսահմանն », որտեղ ի թիվս այլ եկեղեցիների, նշված է նաև Մողնին՝ «յարևմտեան կողմ ըստ երկ. և լայն. - 30 2/4, ի հիւսիսային կողմ. ըստ երկ. և լայն. - 27 1/4, մերձ եկեղեցւոյն գերեզմանատեղի քառանկիւնի չափաձևութեամբ ըստ երկ. և լայն. - 2175 ¾ արշին»[1]:

1843 թ. հունիսին քաղաքի հայոց եկեղեցիների լուսարարների վրա դրվել է պարտավորություն՝ պահպանել ամեն տեսակ մաքրություն (պատկերների, մոմակալների, վարագույրների և այլ եկեղեցական անոթների), որի համար Մողնու եկեղեցուց ստորագրել է Հովհաննես ավ. սարկավագ Դեմուրյանը[2]: Ի դեպ, 1849 թ. Մուխրան գյուղի հասարակությունը խնդրագիր է ուղղել Վեհափառ կաթողիկոսին, Տեր Հովհաննես Դեմուրյանին իրենց գյուղի համար քահանա ձեռնադրելու համար[3]:

1850 թ. Բոգոսլավսկի գյուղից Սողոմոն Տեր-Ղուկասյանը հայտնել է կաթողիկոսին, որ Մողնու եկեղեցուն իր ունեցած 400 թուման արծաթ պարտքը ուղարկել է[4]:

Նույն թվականի հուլիսի 1-ին, կաթողիկոս Ներսես Աշտարակեցին Մողնու եկեղեցու համար Դավիթ Թամամշյանից ստացել է 4000 ռ. գումար, որի համար տվել է անդորրագիր: Պարզվում է, որ շատ տարիներ առաջ, Վրաց Դավիթ արքայորդու կենակից Էլինե Աղայանը 2000 ռ. էր նվիրել Մողնու եկեղեցուն: Այդ գումարը ստացել էր Դավիթ Տեր-Ղուկասյանը, որի եղբայրն էլ, նրա մահից հետո, արդեն տոկոսներով 4000 ռ. դարձած գումարը հանձնել էր Թամամշյանին[5]:

Հավանաբար այդ գումարից էլ Մողնու եկեղեցին սեպտեմբերի 23-ին 200 ռ. տրամադրել է Քամոյենց Սուրբ Գևորգ եկեղեցու վերանորոգության համար[6]:

1850 թ. նոյեմբերի 29-ին նշվել է, որ Թիֆլիսի եկեղեցիների բարեկարգիչ Ղազար ավ. քհյ. Դավթյանի միջոցով Վրաստանի կոնսիստորիան Մողնու եկեղեցուց ստացել է 1849 թ. գոյացած 7 ռ. 20

1 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2615, թ. 4:
2 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 66, թ. 50:
3 ՄՄ, Կ/Դ, թղթ. 144, վավ. 138:
4 ՄՄ, Կ/Դ, թղթ.152, վավ. 150:
5 ՄՄ, Ա. Երիցյանի արխիվ, թղթ. 154, վավ. 184:
6 ՄՄ, Կ/Դ, թղթ. 151, վավ. 22:



կ. արծաթադրամը՝ հանուն Հաղբատի վանքի, և 7 ռ. 95 կ. արծաթադրամ՝ հանուն Սուրբ Էջմիածնի: Գումարը հանձնել է Սարգիս քհյ. Տեր-Հարությունյանը[1]:

1851 թ. նույն Ղազար ավ. քհյ. Դավթյանը ներկայացրել է Մողնու և Կուսանաց եկեղեցիների քահանաների համառոտ ցուցակը[2].

1. Ղազար ավ. քհյ. Դավթյան - (Նորին Վեհափառության հրամանով կրում է ոսկյա ձուլածո խաչ), 2. Ավետիս քհյ. Տեր-Ավետիսյան, 3. Սարգիս քհյ. Տեր-Հարությունյան, 4. Զաքարիա քհյ. Տեր-Գրիգորյան, 5. Պետրոս քհյ. Տեր-Գրիգորյան:

Նշված է նաև, որ Մողնու եկեղեցուն պատկանել են 4 կրպակ և եռահարկ տուն եկեղեցու գավթում[3]:

1854 թ. հունվարի 26-ին կոնսիստորիայի անդամներ Թադևոս վրդ. Հակոբյանը, Իսահակ ավ. քհյ. Սահառունին, Սրապիոն ավ. քհյ. Տեր-Մովսիսյանը և Մկրտիչ քհյ. Տեր-Գրիգորյանը հայտարարությամբ դիմել են Վեհափառ Հայրապետին[4].

«Ի կոնսիստորիս լուեալ զյայտարարութիւն երիցփոխանին Մողնւոյ Ս[ուր]բ Գէորգ եկեղեցւոյն Թիֆլիզոյ ի 22 սեպտեմբերի № 2, յորում բացատրէ, թէ ծախք նորոգութեան Մողնւոյ եկեղեցւոյ ըստ մերձաւոր նկատման նորա և այլ հմուտ անձանց հասանի մինչ զչորս հազար հինգ հարիւր ռուբլի արծաթ, սուղ ինչ աւել կամ պակաս: Ի տեղեկութեանց գործոց երևի. «երեցփոխանն Մողնւոյ Ս[ուր]բ Գէորգ եկեղեցւոյ պարոն Գէորգն Մանդէնեանց յայտարարութեամբ մատուցեալ զվէքիլութեան՝ այնէ հաւատարմութեան բազմաստորագիր թուղթն շնորհեալն ինքեան յականաւորագունիցն ի ժողովրդականացն նոյն եկեղեցւոյ, բացատրեաց թէ, ծածկոյթ տանեաց Մողնւոյ եկեղեցւոյն առ կարի բազմամեայ հնութեան զոլով փտեալ և քայքայեալ՝ սկսեալ են ջուրք անձրևաց և ձեանց թափանցիլ ի ներքս, որովք ոչ միայն ծեփք և նկարք ի ներքուստ սկսեալ են եղծանիլ, այլև նոյն իսկ խոնաւութիւնքն թափանցանեն ընդ որմունսն ևս, որոց հետևանքն լինելոց են վնասակար յոյժ եկեղեցւոյն, վասնորոյ ըստ յառաջադրութեան ժողովրդականացն և նոյն հաւատարմութեան թղթոյն, շնորհեցելոյ ի նոցանէ ինքեան խնդրեաց զլուծումն առնելոյ զվերանորոգութիւն եկեղեցւոյն ի գումարաց նոյն իսկ եկեղեցւոյն: Նոյնպէս և զյիշեալ հաւատարմութեան թուղթն ըզկնի հարկաւորու-

1 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3467, թ. 42-43,:
2 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3821, թ. 197:
3 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3821, թ. 82:
4 ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 5, թ. 28, բնագիր, ձեռագիր:

թիւն սորին վերադարձուցանել նմա: Առաջի արարեալ հաւատարմութեան թուղթն, գրի՝ համաձայն բացատրելոցն ի յայտարարութեան յիշեալ երեցփոխան Մանդէնեանցին, յորում ստորագրեալ են բազում անձինք ի ժողովրդականաց նոյն եկեղեցւոյ: Վասնորոյ և կոնսիստօրս ի դիմաց տնտեսական մասին իւրոյ, գրեաց երեցփոխանին Մողնւոյ եկեղեցւոյ ի 20 օգոստոսի անցեալ ամի № 1417, հասուցանել կոնսիստօրիս զտեղեկութիւնս զորքանութիւնէ ծախուցն, որք ունին գնալ ի վերա նախամտադիր նորոգութեան նոյն եկեղեցւոյ: ***Կարգադրեցին***: Զվերոյգրելոցս ամենայնէ յարգոյաբար յայտնել Ձերումդ Վեհափառութեան խնդրեալ զլուծումն»:

Փետրվարի 25-ին եկեղեցիների բարեկարգիչ Ղազար ավ. քհյ. Դավթյանը ներկայացրել է, որ 1853 թ. եկեղեցու ծխամատյանում գրանցվել են 51 արական և 55 իգական սեռի ծնվածներ, 22 ամուսնություն և 26 արական և 39 իգական սեռի մահացածներ[1]: Իսկ, 1856 թ. նույն Ղազար ավ. քհյ. Դավթյանը ներկայացրել է, որ եկեղեցին ունի 4 կրպակ՝ մեծ և փոքր, և մի տուն՝ 5675 ռ. արժողությամբ, մայր գումարը կազմել է 27,717 ռ. 38 ½ կոպ. արծաթով[2]:

1858 թ. Մողնու եկեղեցին գտնվել է անշուք և խարխուլ վիճակում, անձրևաջրերը լցվել են եկեղեցու ներսը ու առաջացրել տարբեր ճեղքվածքներ: Ծխականները և երեցփոխ Գևորգ Մանդինյանը, խիստ մտահոգվելով եկեղեցու դրությամբ, վերանորոգության խնդրագրով դիմել էին եկեղեցու բարեկարգչին, որն էլ իր հերթին՝ կոնսիստորիային: Այդ առթիվ սինոդը մարտի 12-ին քննարկել և օրագրությունում գրել է. «Ըստ հրամանի Նորին Կայսերական Մեծութեան, ի Սինօդիս լուան զյայտարարութիւն Վիճակային կոնսիստորիայի Հայոց Վրաստանի և Իմերէթիոյ ի 28 փետրվարի այսր ամի №428, որով ի հետևումն յայտարարութեան բարեկարգի եկեղեցեաց Հայոց Թիֆլիզու Ղազար աւագ քահանայի Դաւթեանց հիմնեացելոյ ի վերայ յայտարարութեան երեցփոխանի Մողնւոյ Ս[ուր]բ Գէորգայ եկեղեցւոյ հայոց Գէորգայ Մանդինեանց յառաջ բերեալ զխախտեալ մասունս չորեքկուսի որմոց. եղծելոց և անշքացելոց ի կաթումց անձրևաց և ճեղքուածոց, զորս և նկատեալ է կառավարիչ թէմին Վրաստանի Սարգիս արքեպիսկոպոսն, խնդրէ զլուծումն Սինօդիս վասն վերանորոգութեան այնոցիկ խախտուածոց, վերակացութեամբ յիշեալ երեցփոխանի այնր եկեղեցւոյ Մանդինեանց, ըստ հաւատարմաթղթոց ժողովրդականաց և ընդ անընդմիջական դիտողութեամբ անդամոց կոնսիստորիայի, յարակցելով ընդ նմին՝ թէ եկեղեցին Ս[ուր]բ Գէորգայ առ 1-ն յունվարի 1857 ամի ունէր զպատրաստական դրամն՝ քսան ութ հազար երեք հարիւր քառասուն երկու ռուբլի, տասն և հինգ կօպէկս արծաթոյ, և թէ ծախք նորոգութեան Մողնւոյ եկեղեցւոյ հասանի զչորս հազար հինգ հարիւր ռուբլի արծաթոյ, սուղ ինչ աւելի կամ պակաս, զորմէ և կոնսիստորն ի 26-ն յունվարի 1854 ամի №65, խնդրեալ էր զլուծումն բարեյիշատակ Հայրապետի ամենայն հայոց Տեառն Ներսեսի, և չէ ընկալեալ զտնօրէնութիւն ինչ առ այն: *Հրամայեցին*. տալ կոնսիստորիային Տփխիսու, զլուծումն թոյլատրելոյ զնորոգութիւն խախտեալ մասանց Մողնւոյ Ս[ուր]բ Գէորգ եկեղեցւոյն ծախուք նորին ընդ անընդմիջական վերահայեցողութեամբ անդամոց կոնսիստորիային, որպէս վասն ամրութեան շինուածոցն, նոյնպէս և ճիշտ տնտեսավարութեան, ծախսարարութեան ի վերայ այնոցիկ և յետ կատարածին նորոգութեան՝ զհաշիւս բոլոր ծախուցն առաջարկեալ կոնսիստորիային և առ Սինօդիս»[1]:

Նույն տարում Ղազար ավ. քհյ. Դավթյանի կողմից կազմվել է եկեղեցու հոգևորականների համառոտ ցուցակը[2]. 1. Ղազար ավ. քհյ. Դավթյան, 2. Ավետիս ավ. քհյ. Պոպովյան, 3. Սարգիս քհյ. Տեր-Հարությունյան, 4. Զաքարիա քհյ. Տեր-Գրիգորյան:

Ի դեպ, 1862 թ. հոկտեմբերի 22-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսը Ղազար ավ. քհյ. Դավթյանին, անձնվեր պաշտոնակատարության համար, շնորհել է լանջական ականակուռ խաչ[3]: Ղազար ավ. քհյ. Դավթյանը մահացել է 1865 թ., իսկ Ավետիս ավ. քհյ. Պոպովյանը մահացել է 1869 թ. փետրվարի 25-ին:

1858 թ. եկեղեցում սպասավոր է նշանակվել քահանայորդի Հովհաննես Տեր- Սահակյանը: Այդ մասին հունիսի 6-ին սինոդի օրագրությունում գրվել է. « Ի 18 ապրիլի յամի Տեառն 1858 և ազգական ՌՅԷ, ըստ Հրամանի Նորին Կայսերական Մեծութեան, ի Սինօդիս սրբոյ Էջմիածնի լուան զխնդրագիր բնակչի Տփխիս քաղաքի Արտէմայ Տէր Սահակեանի յ9 ապրիլի, յորում գրէ, թէ՝ որովհետև հարազատ եղբայրն իւր Յովհաննէսն Տէր Սահակեան լրանան ահա ամք հինգ յորմէ հետէ շնորհիւ սրբոյ Աթոռոյ Էջմիածնի մտեալ է յուսումնարանն վասն ուսումնականութեան և ստացեալ է

1 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2743, թ. 140:
2 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3828, թ. 167:



1 ՀԱԱ, ֆ. 56, ց. 5, թղթ. 43, գ. 149, թ. 219 և շրջ., բնագիր, ձեռագիր:
2 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3823, թ. 67:
3 ՄՄ, Կ/Դ, թղթ. 196, վավ. 109., տես նաև՝ «Մեղու Հայաստանի», 1862, 24 նոյեմբերի, Հմր 47:

զուրարակրութիւն և ուսեալ է զբաւականին գիտութիւն՝ ուստի ցանկալով նորան արձակեալ տալ զյիշեալ Յովհաննէս եղբայրն իւր յԱթոռոյ Էջմիածնի զվերաբնակեցուցանել զնա ի Թիֆլիզ քաղաքն, որ առ եկեղեցին Մողնւոյ անդ շարունակեալ զսպասաւորութիւն իւր յարաժամ, վասնորոյ խնդրէ ի Լուսաւորչական Հայոց Սինօդէս սրբոյ Էջմիածնի զի բարեհաճ գտցի Սինօդս ընդ այս արձակել զեղբայրն իւր Յովհաննէսն Տէր Սահակեան վասն վերաբնակեցուցանելոյ ի քաղաքն Թիֆլիզ շարունակել զիւր պաշտօնն ի նոյն եկեղեցւոջ, որ ըստ ժամանակին յաջողութեամբ Տեառն արժանասցի աստիճանի քահանայութեան, որ և մնայ ակնկալեալ սպասու պարտու պատշաճ տնօրէնութեան սորին: *Հրամայեցին.* Ըստ այսմ խնդրագրոյ կազմեալ ի Սինօդիս զնոր գործ, իսկ զեղբայր խնդրագործին զքահանայորդի Յովհաննէսն Տէր Իսահակեան արձակեալ ի սեմիանրիայէ Աթոռոյս, հրամանագրել կոնսիստորիային Տփխիսու յետ ժամանելոյ նորա անդ կարգեալ զնա սպասաւոր եկեղեցւոջ Մողնւոյ տեղւոյն: Եւ զայսմ տնօրէնութիւնէ սորին յայտնել խնդրագործին ընդ ձեռն քաղաքական պօլիցիայի Տփխիսու, յանձնելով նմին ստացեալ ի նմանէ զմի ռուբլի քսան կոպ. արծաթոյ ի գին անդորրուագրաւոր թղթոց, գործադրելոյ ի սմին ընդ այսմ գրագրութեան առաքել ուղղակի ի տեղական արքունի գանձարանն, զորմէ ի Սինօդէս տալ ծանօթութիւն նմին և արքունի պալատանն յայսկոյս Կովկասու: Եւ այսու զգործն Սինօդիս համարել աւարտեալ վասն տալոյ յիւրում ժամանակի ի դիւանն ի պահեստ» [1]:

1860 թ. հունիսի 4-ին Վրաստանի հայոց թեմի կառավարիչ Սարգիս արք. Ջալալյանցը (առաջնորդել է 1857-1861 թթ.) առաջարկությամբ դիմել է վիճակային կոնսիստորիային. «Լուսաւորչական սինօդն Ս[ր]բ[ո]յ Էջմիածնի հրամանաւ յ7-ն ամսոյս № 899 տայ ինձ զլուծումն վասն թոյլատրելոյ հաւատարմացելոց ի կողմանէ հայազն ժողովրդականաց Մօղնի Ս[ուր]բ Գէորգ եկեղեցւոյ Տփխիսու, կնեազ Ղահրամանի Արղութեանց, աստիճանաւոր Եազօրայ Թամամշեանց և տոհմային քաղաքացի Նիկօլայի Միրիմանեանց ընկալնուլ փոխարինաբար յերեցփոխանէ նոյն եկեղեցւոյ զտասն հազար ռուբլիս արծաթեայ՝ ի շինութիւն պարսպի և ի գին շինուածոյ եղելոց զառաջեաւ պարսպի նորին, զորմէ խնդրեալ էի ես ի սինօդէն յայտարարութեամբ ի 17 մարտի ներկայ ամի № 89, մատուցմամբ պատճէնի հաւատարմական թղթոյ տուեցելոյ ի ժողովրդականաց վերոյիշեալ եկեղեցւոյ յիշեալ անձանց, ըստ խնդրագրոյ վերջնոյս մատուցելոյ ինձ

[1] ՀԱԱ, ֆ. 56, ց. 5, թղթ. 43, վավ. 240, թ. 402 և շրջ., բնագիր, ձեռագիր:



ի 27 փետր.: Ուստի համաձայն հրամանի Լուսաւորչական սինօդին, առաջադրեմ կոնսիստօրիայիդ տալ հրաման երեցփոխանի Մօղնի Ս[ուր]բ Գէորգ եկեղեցւոյ Տփխիսայ, զի տացէ փոխարինաբար վերոգրեալ երից անձանց զտասն հազար ռուբլիս արծաթեայ՝ առանց շահի, և ի նոցանէ ունեցի փութով ստանալ զայն գումար պարտուց ի կամաւոր նուիրանաց բարեպաշտ ժողովրդոց և յայլոց աղբերաց՝ համաձայն մտաց հաւատարմական թղթոյ ժողովրդոցն» [1]:

Նոյեմբերի 10-ին, լսելով թեմի առաջնորդի հունիսի 4-ի առաջարկությունը, Վրաստանի կոնսիստորիան հրամայել է. «Ի կատարումն առաջադրութեան Նորին Բարձր Սրբազնութեան, հրամանագրել երեցփոխանին Մօղնւոյ Ս[ուր]բ Գէորգայ եկեղեցւոյ՝ քաղաքիս Աստիճանաւոր Գէորգայ Մանդինեանց, զի յարդենեաց եկեղեցւոյ իւրոյ ի բաց հանեալ ի ծախս ի մատենին զտասն հազար ռուբլիս՝ տացէ փոխարինաբար առանց տոկոսեաց հաւատարմացելոցն ի կողմանէ ժողովրդոց կնեազ Ղահրամանի Արղութեանց, Աստիճանաւոր Եազօրայ Թամամշեանց ու տոհմանուն քաղաքացւոյ Նիկօլայի Միրիմանեանց, ստորագրութեամբ նոցա ի սմին եկեղեցական մատենի, ի պէտս շինութեան պարսպի և ի գին շինուածոց՝ ի տեղոց զառաջեաւ նոյն եկեղեցւոյ. ստանալով ի վերոյիշեալ անձանց զապահովագիր, վասն անկորուստ դարձուցանելոյ եկեղեցւոյն զգումարն. զորմէ տացէ ատենիս և տեղեկութիւն. և զայսմանէ ամենախոնարհաբար հաւուցանել ի գիտութիւն Լուսաւորչական Հայոց սինօդի Ս[ր]բ[ո]յ Էջմիածնի» [2]:

1861 թ. ապրիլի 8-ին Կովկասի փոխարքան, դիմելով Սարգիս արքեպիսկոպոսին, տվել է իր համաձայնությունը № 258 հրամանով, որպեսզի Մողնու եկեղեցու պարիսպը մեծացնելու նպատակով միաբանությունը կարողանա ձեռք բերել ազնվական Գափո Շահվերդովի (Շահվերդյան) տունը՝ երեք հազար ռուբլով: Այս գրությունը Սարգիս արքեպիսկոպոսը ապրիլի 10-ին ուղարկել է կոնսիստորիայի տնօրինությանը [3]: Հետագայում՝ 1863 թ. հունիսի 27-ին Թիֆլիսի պալատական քրեական և քաղաքական դատարանը, ի հետևումն կոնսիստորիայի 1861 թ. օգոստոսի 11-ի գրության, ծանուցել է, որ հաստատել է տվել կալվածագիրը 1862 թ. մայիսի 3-ին հրամանով № 123, վերաշինության համար ազնվական Գափո Շահվերդյա-

[1] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3323, թ. 1, բնագիր, ձեռագիր:

[2] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3323, թ. 2 և շրջ., բնագիր, ձեռագիր:

[3] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3323, թ. 11, բնագիր (ռուսերեն), ձեռագիր:

նի տունը, որը վաճառվել էր Մողնու եկեղեցուն[1]:

1861 թ. հոկտեմբերին հիշատակվում է եկեղեցու երեցփոխան պրապորչիկ Եգոր Մանդինյանը[2]:

1868 թ. հունվարի 30-ին Կաթողիկոսի կոնդակով Ստեփաննոս ավ. քհյ. Մանդինյանը նշանակվել է Մողնու Սուրբ Գևորգ եկեղեցում[3]: Իսկ 1874 թ. հոկտեմբերի 23-ին Վեհափառ Հայրապետը կոնդակով ավագ քահանա Ստեփաննոս Մանդինյանին նշանակել է հայերեն կրոնական գրքերի և հոդվածների քննիչ[4]:

1868 թ. ինչ – ինչ պատճառներով Թիֆլիսի Հայոց կոնսիստորիան ցանկացել է Մողնու եկեղեցուց հեռացնել Սիմեոն քհյ. Չմշկյանին: Այդ առթիվ վերջինս մարտի 18-ին գրություն է ուղղել Կաթողիկոսին և խնդրել՝ կարգադրել Թիֆլիսի կոնսիստորիային, որպեսզի փոխի իր որոշումը՝ իրեն եկեղեցուց հեռացնելու մասին[5]:

1869 թ. ապրիլի 10-ին Վրաստանի կոնսիստորիան հայտարարություն է ուղղել Սուրբ Էջմիածնի սինոդին. «Ի Կոնսիստօրիս լուան զյայտարարութիւն երիցփոխանի և չորից ընտրեալ անձանց վասն վերանորոգութեան Մողնոյ Սուրբ Գէորգ եկեղեցւոյ հայոց Թիֆլիզոյ ի 20-ն փետրվարի այսր ամի № 1, յորում գրի, թէ վասն վերանորոգութեան Մողնի Սուրբ Գէորգ եկեղեցւոյ ի ներքուստ և արտաքուստ, և պարսպի նորին, գրեցին զպատկեր ծախուց վերանորոգելի տեղեաց նորին նշանակելով ուրոյն ուրոյն, որոյ գումարն է տասներկու հազար յիսուն ռուբլի: Ընդ նմին յարակցեն, թէ վիճակային Ատեանս ի հետևումն յայտարարութեան նախորդին իւրոյ Հ. Գէորգայ Մանդինեանց ի 24 յուլիսի 1852 ամի № 1, հրամանաւ յ9-ն մայիսի 1858 ամի № 958, հրամանագրեաց նմա ծախել ի գումարաց եկեղեցւոյն զչորս հազար հինգ հարիւր մանէթս, յայնմ գումարէ ծախք եղեալ են ի ձեռն նոցա յանցելում ամի ի վերայ նորոգութեան կղմինդրեայ ծածկոցի տանեաց և չորից մանր կաթուղիկէից եկեղեցւոյն՝ հազար երկու հարիւր վաթսուն մանէթ. մնայ երեք հազար երկու հարիւր քառասուն մանէթ. և այնու գումարաւ չէ մարթ ածել ի կատար զառաջարկեալ վերանորոգութիւնս. վասն որոյ խոնարհաբար խնդրեն ի կոնսիստորիայէս տալ նոցա լուծումն՝ առնելոյ զպակասորդ ութն հազար ութն հարիւր տասն մանէթս ի գումարաց եկեղեցւոյն, և խնդրեն զփութա-

[1] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3323, թ. 14 և շրջ., բնագիր, ձեռագիր:
[2] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3323, թ. 9, բնագիր, ձեռագիր:
[3] ՄՄ, Կ/Դ, թղթ. 203, վավ. 668:
[4] «Մեղու Հայաստանի», 1874, 9 նոյեմբերի, Հմր 44:
[5] ՄՄ, Կ/Դ, թղթ. 203, վավ. 708:



ւորն տնօրէնութիւն, զի մի՛ անցցէ ժամանակն շինութեան, յարակցելով թէ եկեղեցին ունի այժմ ցքսան և հինգ հազար ռուբլի արծաթ ի պրիկազի և ի վերայ զանազան անձանց: Եւ զտեղեկութիւնս ի գործոց, յորոց երևի ի հետևումն հրամանի Սինօդիդ Սրբոյ Էջմիածնի ի 11-էն ապրիլի 1858 ամի, համարաւ 523, կոնսիստօրիայս հրամանաւ յ9-էն մայիսի նոյն ամի համարաւ 958, թոյլ ետ յայնժամեան երիցփոխանին ձեռնարկանել ի վերանորոգութիւն խախտեալ մասանցն եկեղեցւոյն Մողնոյ նախանշանակեալ 4500 ռուբլի ծախուքն ի գումարաց նոյն եկեղեցւոյ: ***Կարգադրեցին***. որովհետև եկեղեցին Մողնոյ արդարև կարօտութիւն ունի վերանորոգութեան ինչ ինչ կարևոր մասանցն գծագրելոց յառաջի արարեալ նախահաշուի (սմէտայ) ծախուց յօրինեալ ստօրագրեցելոյ ի ճարտարապետ Ջալիցմանէ ի պայծառութիւն տաճարի Տեառն. վասն որոյ մատուցմամբ նորին իսկ նախահաշւոյ ամենախոնարհաբար խնդրել զտնօրէնութիւն Սինօդիդ Սրբոյ Էջմիածնի վասն ծախելոյ յարդեանց այնր եկեղեցւոյ զութն հազար ութն հարիւր տասն ռուբլիս արծաթոյ ի վերայ վերանորոգութեան նորին, և զտնօրէնութիւնէն հաճեսցի օր առաջ տալ գիտել սմին, զի մի՛ ըստ բանին յիշեալ երիցփոխանին և վերատեսչացն անցցի բարեպատեհ միջոց շինութեանն»[1]:

1870 թ. Գևորգ Դ կաթողիկոսի Թիֆլիսում գտնվելու ընթացքում շատ երևելի ու պատվավոր անձինք գումարներ են նվիրաբերում Սուրբ Էջմիածնի Մայր տաճարի վերանորոգման համար, այդ թվում նաև Թիֆլիսի Կաթողիկե Սուրբ Աստվածածին և Մողնու Սուրբ Գևորգ եկեղեցիների արդյունքներով՝ «եօթն կանգուն բարձրութեամբ և տասն լայնութեամբ մի զոյգ կերպասեայ և ծաղկաւոր վարագոյր՝ նուիրուած է վասն Ս. Ստեփաննոսի և Ս. Յովհաննու Մկրտչի խորանաց Ս. Տաճարիս Էջմիածնի՝ ի ձեռն Գեր. Մակար Ս. Արքեպիսկոպոսի»[2]: Հիշատակվող Մակար արք. Թեղուտցին Վիրահայոց թեմը կառավարել է 1864-1876 թթ.:

1870 թ. սեպտեմբերի 25-ին Մողնու երեցփոխ Իսահակ Ծովիանյանը եկեղեցու կարիքների համար 2500 մանեթով գնում է Գևորգ Ամիրաղյանին պատկանող տունը, որի առթիվ պահպանված վավերագրում նշված է. «Ի 7 յուլիսի 1871 ամի ըստ հրամանի Նորին Կայսերական Մեծութեան ի Սինօդիս լուան զյայտարարութիւն վիճակային կոնսիստորիայի հայոց Վրաստանի ի 19 մարտի այսր ամի № 301, յորում գրի, թէ ի կոնսիստորիայէս լուան զյայտարարութիւն

[1] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 5346, թ. 1:
[2] «Արարատ», 1870, մայիս, էջ 34:

երեցփոխանի Մողնւոյ Սուրբ Գէորգ եկեղեցւոյ Իսահակայ Ծովհանեանց ի 25 սեպտեմբերի 1870 ամի, յորում գրի թէ՝ առ ի ընդարձակել զփողոցն առ եկեղեցեաւ Մողնւոյ գնեցաւ տունն Ամիրաղեանցի 2500 մանէթով, յաղագս որոյ և հետևեցաւ բարեհաճութեան մարմնաւոր իշխանութեան վասն հաստատելոյ զկալուածագիր յանուն եկեղեցւոյ, սակայն մինչ ցարդ չիք ստացեալ նոյնպիսին յԱմիրաղեանցէ և տունն հետզհետէ հակի ի խախտման, և պահանջէ աւելի քան զ1000 րուբլիս վասն վերանորոգութեան...»[1]:

Հոկտեմբերի 9-ին Հայոց վիճակային կոնսիստորիան հայտարարությամբ դիմել է սինոդին. «Ի կոնսիստօրիս լուեալ զյայտարարութիւն հոգաբարձուաց շինութեան և վերանորոգութեան Մողնւոյ Սուրբ Գէորգ եկեղեցւոյ Հայոց Թիֆլիզոյ ի 26-ն յունիսի այնր ամի, յորում գրի, թէ Վիճակային Ատեանս ի հետևումն առաջարկեալ ի նոցանէ ցուցակի ծախուց շինութեան և վերանորոգութեան Մողնւոյ եկեղեցւոյ վճռեալ էր ի գործ դնել զնշանակեալ 12050 ռուբլիս, այլ որովհետև փոխանակ տասն և մի փայտեայ լուսամտից շինեցան երկաթեայ լուսամուտք վասն յարատևութեան, զառաջեաւ չորից պատուհանաց մածան մարմարիոնեայ տախտակք, բեմք, և յատակն, ուր կանգնին արք, սակարկեալ եմք շինել մարմարիոնիւ, փոխանակ երից դրանց՝ վեց դուռն, առ իւրաքանչիւրն երկու երկու, յորոց մինն ապակեայ, յաղագս որոց հարկաւորի այլ ևս երեք հազար հինգ հարիւր ռուբլի, վասն որոյ խոնարհաբար խնդրեն յԱտենէս բարեհաճել շնորհել նոցա զփութանակի լուծումն հանելոյ զայն գումար ի ծախս, և աւարտել զշինութիւն մինչ ձեռնատու է ժամանակն: Եւ զտեղեկութիւնս ի գործոց կոնսիստօրիս, յորոց երևի, սինօդդ Սրբոյ Էջմիածնի ի հետևումն միջնորդութեան Ատենիս վասն վերանորոգութեան Մողնոյ Սուրբ Գէորգ եկեղեցւոյ քաղաքիս հրամանաւ յ30-ն մայիսի 1869 ամի համարաւ 1048, վերադարձուցմամբ առաջարկեալ նախահաշուոյ ետ սմին զլուծումն վասն ծախելոյ յարդեանց սրբոյն Գէորգայ Մողնոյ եկեղեցւոյ զութն հազար ութն հարիւր տասն ռուբլիս արծաթոյ ի պէտս վերանորոգութեան նորին: Զորմէ կոնսիստօրիայս հրամանաւ յ30-ն յունիսի նոյն ամի համարաւ 1210 ետ գիտել երիցփոխանին վասն տեղեկութեան և կատարման: ***Կարգադրեցին.*** Զնորոգ յառաջ եկեալ կարևորութիւնէ ինչ ինչ նորոգութեանց Մողնւոյ սուրբ Գէորգ եկեղեցւոյ, յայտնելով սինօդին Սրբոյ Էջմիածնի ամենախոնարհաբար խնդրել զլուծումն դորին վասն ծախելոյ յարդեանց այնր եկեղեցւոյ զհարկաւոր դատեալ երեք հազար հինգ

[1] ՀԱԱ, ֆ. 56, ց. 5, թղթ. 83, վավ. 196, թ. 280, բնագիր, ձեռագիր:



հարիւր ռուբլիս արծաթոյ, և զտնօրէնութիւնէ հաճեսցի տալ գիտել սմին»[1]:

Դեկտեմբերի 19-ին Սուրբ Էջմիածնի սինոդը, լսելով և քննարկելով եկեղեցու վերանորոգման խնդիրը, ***հրամայել է.*** «Տալ կոնսիստօրիային Թիֆլիզու զլուծումն վասն ծախելոյ յարդեանց Մողնւոյ Սուրբ Գէորգ եկեղեցւոյ զերեք հազար հինգ հարիւր րուբլիս արծաթոյ ի պէտս կարևոր շինութեան և նորոգութեան նորին»[2]:

1871 թ. հունվարի 22-ին վիճակային կոնսիստորիան դիմել է եկեղեցու երեցփոխ Իսահակ Ծովիանյանին և պահանջել է Մողնու եկեղեցապատկան գումարից 900 ռ. փոխարինաբար տալ Վանքի եկեղեցու ջրանցքի շինարարության համար: Երեցփոխը ի պատասխան, գրել է. «Պատիւ ունիմ պատասխանել, թէ՝ Մողնու եկեղեցին ինքն ունի մեծագումար ծախսք շինութեան և հարկաւորութեան դրամի և ներկայ ժամանակս եկեղեցւոյ գումարը կազմում է միայն բանկի բիլէթներից, որ ուղարկուած են այժմս Մոսկվայ, որովհետև եթէ այստեղ ծախէինք, մեծ վնաս էր ըստացւում, ըստ որում՝ գնողքը մեծագումար զեղչումով էին կամենում գնել զնա»[3]: Միաժամանակ երեցփոխը ավելացրել է, որ նույն Վանքի եկեղեցին դեռևս պարտք է Մողնու եկեղեցուն 1100 ռ. 1858 թ.-ից, և առայժմ չկա միջոց այն վերադարձնելու: Նա նշել է նաև, որ Մողնուն նմանապես պարտք են Կուկիո եկեղեցին՝ 2000 ռ., Կուսանաց եկեղեցին՝ 5000 ռ., Քամոյենց և Բեթղեհեմի եկեղեցիները: Եկեղեցուն պարտք է եղել նաև Նազար Նազարբեկյանը՝ 4000 ռ.: Ծովիանյանը գրել է, որ նույնիսկ ինքը իր սեփականությունից փոխարինաբար դրամ է տվել եկեղեցուն: Նշվել է, որ այդ ապառիկները հաշվի առնելով՝ թե՛ ծխականները և թե՛ եկեղեցու հաշվետես անձինք չեն համաձայնում որևէ եկեղեցու փոխարինաբար դրամ տրամադրել: Մերժման պատճառ է եղել նաև այն, որ դրամ է հարկավոր եղել եկեղեցու հարավային կողմում գտնվող՝ Նիկողայոս Տեր-Ծմավոնյանի հասարակ տունը գնելու համար:

1871 թ. հիշատակվում է Մողնու մյուս՝ փոքր եկեղեցին, որն այդ ժամանակ գտնվում էր քայքայված և կիսակործան վիճակում: Քանի որ այն խիստ ավերված էր և վտանգավոր էր դարձել անցորդների համար, սինոդը որոշում է կայացնում հիմնահատակ քանդել այն: Այդ մասին կազմված արձանագրությունում նշված է. «Ի 7 յուլիսի 1871 ամի ըստ հրամանի Նորին Կայսերական Մեծութեան, ի Սինո-

[1] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 5346, թ. 3:

[2] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 5346, թ. 4:

[3] ՀԱԱ, ֆ. 56, ց. 5, թղթ. 83, վավ. 158, թ. 228, բնագիր, ձեռագիր:

դիս լուան զյայտարարութիւն վիճակային կոնսիստորիային Հայոց Թիֆլիզու ի 10 մայիսի այսր ամի № 629, յորում գրի այսպէս. «Ի կոնսիստորիայս լուան զգրութիւն Պօլիցմեստրին առաջին բաժանման Թիֆլիզ քաղաքի յ8-ն այսր ամի № 4978, յորում բացատրէ, թէ Տէր Նահանգապետն Թիֆլիզու յ2 այնր ապրիլի- յ2-ն այսր ապրիլի № 3783, տալով նմա գիտել, թէ հին դադարեցուցեալ եկեղեցին հայոց, որ կից է ընդ նոր Մողնւոյ եկեղեցւոյն, իւրով քայքայեալ հնութեամբ սպառնայ զանակնունելի կործանումն, յանձնեալ է նմին հրաւիրել զճարտարապետ և զպատգամաւոր ի կողմանէ հոգևորական տեսչութեան և յետ կարևորն վերանկատողութեամբ քայքայեալ եկեղեցւոյն, կազմել զարձանագրութիւն, և եթէ ըստ այնմ երևցի, զի շինութիւն այն պարտի ենթարկել ընկղման, յայնժամ կատարել զայն պահանջ, ի խոյս վնասաբեր դիպուածոյ զանակնունելի անկմանէ նորին, ի վերազննելն յիշեալ եկեղեցւոյն երևեցաւ, զի նա ի պատճառս հնութեան իւրոյ պարտի անշուշտ ենթարկել քանդման մինչև հիմն, ուստի և խնդրէ Ատենէն առնել զկարևորն տնօրէնութիւն յաղագս անյապաղ քանդման նորին, որ ի ներկայ միջոցումն կարի յարմարաւոր է, ըստ որում առ նովաւ կատարին նոր շինութիւնքս»[1]:

Սինոդը, հաշվի առնելով, որ քայքայված եկեղեցին ամեն ժամ կարող է փլվել և ունենալ վնասաբեր հետևանքներ, որոշում է հրամանագրել եկեղեցու երեցփոխանին «անյապաղ քանդել տալ զհին, քայքայեալ և ի բազում ամաց հետէ դադարեցուցեալ եկեղեցին, որ կոչի Հին Մողնի և զգոյացեալ ի քանդմանէ նիւթեղէնն ի ներկայութեան քանի մի անձանց ի պատուաւոր ժողովրդականաց, վաճառել օգտաւէտագոյն գնով վասն այլոց աստուածահաճոյ շինուածոց՝ զգինս նոցին դարձուցանելով յօգուտ եկեղեցւոյն և զկատարմանէն յայտնել Ատենիս»:

1872 թ. մայիսին հիշատակվել է եկեղեցու քահանա Հ. Սուզանաճյանը, որը միաժամանակ Գայանյան ծխական ուսումնարանի կառավարիչն է եղել[2]:

1872 թ. մայիսի 12-ին եկեղեցու ավագ քահանա Ստեփաննոս Մանդինյանը խնդրագրով ծանուցել է սինոդին, որ 1863 թ. մայիսի 3-ին հանգուցյալ Մատթևոս կաթողիկոսի № 157 կոնդակով Կաթողիկե եկեղեցուց տեղափոխվել է Բեթղեհեմի եկեղեցի՝ ավագ քահանայի կոչումով, միաժամանակ հովվելով նաև նախկին ծուխը: Ապա 1868 թ. փետրվարին փոխադրվել է Մողնու եկեղեցին, հան-

[1] ՀԱԱ, ֆ. 56, ց. 5, թղթ. 83, վավ. 195, թ. 279, բնագիր, ձեռագիր:

[2] «Մեղու Հայաստանի», 1872, 6 մայիսի, Հմր 10:



գուցյալ Ղազար ավ. քհյ. Դավթյանի փոխարեն՝ դարձյալ իր ծխով: Երբ 1869 թ. փետրվարի 25-ին վախճանվում է եկեղեցու միաբան Ավետիս ավ. քհյ. Պոպովյանը, վիճակային կոնսիստորիան ապրիլի 14-ին հանգուցյալի ծուխը հանձնում է Մանդինյանին, իսկ հանգուցյալ Ղազար ավ. քահանայի ծուխը՝ Զաքարիա ավ. քհյ. Տեր Գրիգորյանին և Սարգիս քհյ. Չմշկյանին (հայրն է Սիմեոն քահանայի): Հրամայվել է նաև Մանդինյանի նախկին ծուխը վերադարձնել Թիֆլիսի Կաթողիկե եկեղեցի՝ Մարտիրոս քհյ. Ամիրխանյանին: Ի վերջո, Ստեփաննոս քահանան խնդիրք է ներկայացրել իր ծխերը ավելացնելու մասին, քանի որ նա ստացել էր իր հասանելիք ծխերի հազիվ կեսը: Կոնսիստորիան 1873 թ. սեպտեմբերի 28-ին որոշել է Ստեփաննոս ավ. քհյ. Մանդինյանի խնդրանքը բավարարել նորոգ ծխերի հաշվին, իսկ Սիմեոն և Սարգիս քահանաներին տալ խիստ նկատողություն և զրկել ավագ քահանայությունից[1]:

Հուլիսին եկեղեցու երեցփոխան պ. Բարսեղ Խոջայանը, համաձայն հոգևոր իշխանության կարգադրության և ժողովրդի ցանկության, 300 ռ. արծաթ է հատկացրել Գայանյան օրիորդաց ուսումնարանին[2]:

Սեպտեմբերին Ներսիսյան դպրոցի նոր հոգաբարձուներ ընտրելու համար Մողնու եկեղեցուց պատգամավորներ են ընտրվել «դեստվիտելնի ստատսկի սովետնիկ», բժշկապետ Հարություն Հովհաննիսյանը, «կոլեժսկի սովետնիկ» Հովհաննես Ամիրաղյանը և «նադվորնի սովետնիկ» Վասիլ Խոջայանը[3]:

1874 թ. հունվարի 23-ին եկեղեցում կատարվել է Եղիսաբեթ Հովհաննիսյանի հոգեհանգիստն ու հուղարկավորությունը, որին ներկա է եղել թեմի առաջնորդ Մակար արքեպիսկոպոսը: Հանգուցյալի ջանքերով Թիֆլիսում բացվել էին օրիորդաց ուսումնարաններ: Նա բժշկապետ Հարություն Հովհաննիսյանի ամուսինն էր[4]:

Մարտի 1-ին եկեղեցու ծխականները գրել են. «Մեք, ներքոյ ստորագրեալքս ժողովրդականք և ժամաւորք Մողնւոյ Ս[ուր]բ Գէորգ եկեղեցւոյ Հայոց Թիֆլիզոյ, տալիսիմք այս հաւատարմաթուղթը Ձեզ նոյն եկեղեցւոյ պարոն երեցփոխան Վասիլ Խօջայեանցին այն մասին. 1. որ եկեղեցւոյ գաւթի արևելեան կողմի տներն ժամկոչի կացած սենեակից մինչև պարսպի դուռը հակնուած է դէպ ի քանդուելը,

[1] ՀԱԱ, ֆ. 56, ց. 5, թղթ. 90, վավ. 29, թ. 36, բնագիր, ձեռագիր:

[2] «Մեղու Հայաստանի», 1872 , 8 հուլիսի, Հմր 19:

[3] «Մեղու Հայաստանի», 1872, 23 սեպտեմբերի, Հմր 30:

[4] «Մեղու Հայաստանի», 1874, 26 հունվարի, Հմր 4:

ինչպէս և քաղաքային արխիտեկտօրն ևս տնտղել է և տուել է վկայական ի 28 փետրուարի 1874 ամի, անպատճառ քանդել, որ յանկարծ մէկ վնաս չպատճառէ, մեք տալիսիմք Ձեզ կատարեալ իրաւունք քանդելու այն խախուտ շինութիւնը, և նորա տեղը շինել յարմար տուն ծխական ուսումնարանի համար, և 2. ի եկեղեցւոյ պարսպից դուրս արևելեան կողմի ճանապարհը ընդարձակել, ինչպէս որ նորա վերայ շինութեանց տերէրն ընծայում են բաւականաչափ տեղ ճանապարհի լայնութեան համար, և իհարկէ, նոցա կտրած տեղի վերայ պատի շինութիւնը պիտի լինի եկեղեցական գումարից, որ նոյնպէս տալիսինք Ձեզ իրաւունք այդ ծախսերը ևս անելու միայն ամենայն տնտեսութիւնով՝ մինչև ութն հազար րուբլի, գրելով մանրամասնաբար բոլոր ծախսերը, և շինուածքը աւարտելուց յետոյ տալ մեզ օրինաւոր հաշիւ»[1]: Սինոդը հունիսի 10-ին քննարկելով այդ հարցը, հրամայել է թույլատրել եկեղեցու գավթի տարածքում ծխական ուսումնարանի համար կառուցվելիք երկհարկանի տան շինությունը և հաստատել է շինության մակարդակը, ծախսելով եկեղեցական գումարներից 7906 ռ. 50 կոպ.:

1875 թ. հունիսին թեմի առաջնորդ Մակար արք. Թեղուտցին ժամանակավոր արգելել է Մուշեղ քհյ. Տեր-Ղևոնդյանի քահանայագործությունը: Այդ առթիվ «Մշակը» գրել է. ««Մեղուն» հրատարակել է, որ իբր թէ տէր հայրը դրդել է աշակերտներին, իսկ առաջնորդը կամեցել է կօնսիստօրիայի մէջ ենթարկել նրան քննութեանը: Տէր Մուշեղը հրաժարվել է քննութեանը ենթարկվելուց, որպէս Ներսիսեան դպրոցի հոգաբարձու: Իսկ սրբ. Մակարը այժմ նրան պատժելու համար զրկում է նրան քահանայի պաշտօնը վարելուց... Ինչ կապ կայ հոգաբարձուի և քահանայի գործունէութեան մէջ»[2]:

1874 – 1875 թթ. եկեղեցու երեցփոխանն է եղել Վասիլ Խոջայանը: Նրա մասին «Մշակում» գրվել է. «Նա շատ հարուստ, իր ծանօթների շրջանում շատ յարգված մի անձ է, շատ աստուածապաշտ է, միշտ եկեղեցի է ման գալիս, ամեն մեծ պասին պաս է պահում, տարին երկու անգամ հաղորդվում է, եղել է Ներսիսեան դպրոցի հոգաբարձու, շատ ազգասէր մարդ է, Եւրօպայում ճանապարհորդել է և Եւրօպայից վերադառնալով մի գիրք է հրատարակել «Վեզուվեան ճանապարհորդութիւն» անունով[3] և այդ գրքի վաճառման արդիւն-

[1] ՀԱԱ, ֆ. 56, ց. 5, թղթ. 92, վավ. 124, թ. 150-151, բնագիր, ձեռագիր:

[2] «Մշակ», 1875, 12 հունիսի, Հմր 23:

[3] Տես **Վասիլ Խօջայեան**, Ճանապարհորդութիւն Վեզուվեան հրաբուղխ սարի վերայ. այլև ի Պօմպէյի, Հերքուլանում, Հռոմ, Վենետիկ և այլ քաղաքներ Իտա-



քը նուիրել է յօգուտ Թիֆլիսի հայոց օրիորդական դպրոցների»[1]: Վասիլ Խոջայանը իր երեցփոխանության տարիներին կառուցել է երկու ծխական երկսեռ ուսումնարան և բարեկարգել է Մողնու եկեղեցու շրջակայքը[2]: Այդ աշխատանքները կատարել է թիֆլիսաբնակ դուրգար Սարգիս Պապովը[3]:

1876 թ. փետրվարին մահացել է եկեղեցու միաբան Ստեփաննոս ավ. քհյ. Մանդինյանը: Սուրբ Էջմիածնի սինոդի հրամանով Մողնու եկեղեցում հանգուցյալի փոխարեն նշանակվել է Տեր Մուշեղ քհյ. Տեր-Ղևոնդյանը: Բնութագրելով վերջինիս՝ «Մշակը» գրել է. «Այս այն երիտասարդ քահանան է, որ այսքան տանջվել է, հացի կարօտ էր մնացել, անդադար հալածվել էր, զրկվել էր քահանայագործութենից և Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեան անդամի պաշտօնից անգամ»[4]:

Հունիսի վերջին վախճանվել է եկեղեցու մեկ այլ միաբան և ժողովրդի կողմից հարգված ծերունի Սարգիս քհյ. Տեր-Հարությունյանը: Ժողովականների մեծ մասը, նկատի ունենալով եկեղեցում քահանայի պահանջը, հանգուցյալի փոխարեն ընտրում են տեղի ձայնագրության ուսուցիչ Եզնիկ քհյ. Երզնկյանին և մի խնդրագրով, ստորագրած երեցփոխանից և պատվավոր անձերից՝ դիմելով թեմի առաջնորդ Մակար արքեպիսկոպոսին, խնդրում են նրա միջնորդությունը Վեհափառի մոտ[5]:

1878 թ. փետրվարի 23-ին Վարդանանց տոնի առթիվ եկեղեցում հանդիսավոր պատարագ է մատուցել թեմի առաջնորդ Գաբրիել եպս. Այվազեանը (առաջնորդել է 1876 – 1880 թթ.), որից հետո կատարվել է հոգեհանգիստ ռուս-թուրքական պատերազմում զոհված քրիստոնյա զինվորների համար[6]: Իսկ մարտի 4-ին եկեղեցում կատարվել է գեներալ Հ. Գ. Լորիս-Մելիքովի հոգեհանգիստը:

Ապրիլի 9-ին եկեղեցում պատարագից հետո երեցփոխան, բժիշկ Խաչատուր Դավթյանի մեկ տարվա գործունեության և հաշիվների քննության համար հրավիրվել է ժողով: Ըստ հաշվետ-

լիայի, ի 1865 և 1866 ամի, Տփխիս, 1872 թ., էջ 125:

[1] «Մշակ», 1877, 7 մարտի, Հմր 16:

[2] «Մշակ», 1877, 21 մարտի, Հմր 20:

[3] Վճարվելիք գումարների առիթով Խոջայանի և Պապովի միջև վիճաբանություն է եղել. վերջինն էլ 1877 թ. մարտի 2-ին ատրճանակով կրակել և վիրավորել է Խոջայանին («Մշակ», 1877, 7 մարտի, Հմր 16):

[4] «Մշակ», 1876, 21 ապրիլի, Հմր 14:

[5] «Մշակ», 1876, 15 հուլիսի, Հմր 26:

[6] «Մշակ», 1878, 1 մարտի, Հմր 30:

վության, եկեղեցու տարեկան արդյունքը կազմել է 1700 ռ.: Նշվել է, որ 1877 թ. եկեղեցին ավագ պահարանից գնել է 10 պուդ սպիտակ մոմ[1]: Այդ ժողովի առիթով եկեղեցու ոմն ծխական «Մշակ» թերթի խմբագրին ուղղած նամակում գրել է. «...պատարագը վերջանալուց հետո քաղաքիս Մողնու եկեղեցու երեցփոխան պ. բժիշկ Դաւթեանցի մի տարվայ գործունեության և հաշիվների քննության համար ժողով կազմվեցավ, որի մասին հարկավոր եմ համարում տեղեկություն տալ ընթերցող հասարակությանը: Թողնենք այստեղ այն՝ որ այդ ժողովին չէին եկած այդ եկեղեցու շատ և շատ ծխականներ, որովհետև պատվելի երեցփոխանը արժան չէր տեսել հրավիրել միայն մի քանի ընտրյալներին առանձին տոմսակներով, կարծես թե, դոքա միայն կազմում են Մողնու ժողովուրդը... պ. երեցփոխանը առանց ժողովրդի իմաց տալու, առանց նրա կամքի և վճռի, ծախսել է մինչև անգամ մայր գումարից: Դժբախտաբար ձեռներիս չունենք հաշիվը, որ մանրամասնորեն խոսեինք, միայն ինչքան կարողացանք մտներումս պահել, այնքանով այժմս բավականանանք, հուսալով, որ հաշիվը հաշվետեսների արած հետաքրքիր նկատողություններով մանրամասն կը տպվի մեր պարբերական թերթերի մեջ: Հայտնի չէ ամենևին, թե ինչ անշարժ կալվածքներ և շարժական կայք ունի Մողնու եկեղեցին, չկա դրա համար մատյան: Հայտնի չէ, թե ինչ պայմաններով տրված են վարձով եկեղեցու կալվածքները: Չի երևում ճիշտ, թե ինչ կարգով և ինչպես հավաքված են լուսգինները, պսակադրամները և սրանց նման եկամուտները:

Սորա համար մենք, իբրև Մողնու ծխական, վերջապես իբրև հայ, պահանջում ենք առաջինը՝ որ 1877 թ. հաշիվը տպվի մեր լրագրության մեջ հասարակության գիտության համար: Երկրորդ պ. երեցփոխանը թող բարեհաճե բացատրություն տալ թե լրագրության միջոցով և թե Մողնու բոլոր ծխականների ժողովին վերն հիշված պակասությունների մասին: Պ. բժիշկ Դավթեանցի ազնվության համար ոչ մի անձն կարող չէ մի մազաչափ կասկած ունենալ և ահա այդ իսկ է հարգելի պատճառը, որ մեզ ստիպում է խնդրել նրանից այդ տեսակ թերությունների բացատրությունը: Քանի որ այդ բացատրությունը չենք ստացել մենք իրավունք ենք համարում ասել, որ եթե Մողնու նման եկեղեցին իր հարուստ, լուսավորյալ, արիստոկրատ ժողովրդով այդ դրության մեջ է, ինչ կլինի մյուս խեղճ եկեղեցիները, և այն որտեղ՝ Թիֆլիսում առաջնորդի և կոնսիստորիայի քթի առջև...»[2]:

[1] «Մշակ», 1878, 13 ապրիլի, Հմր 60:

[2] «Մշակ», 1878, 13 ապրիլի, Հմր 60:



Նույն թերթում տպագրվել է նաև Մողնու եկեղեցու ծխական Խաչատուր Խաչատրյանի՝ խմբագրին ուղղված նամակը. «Այսօր (11 ապր.) բոլորովին պատահմունքով իմացանք, որ կայացել է ժողով Մողնու եկեղեցու երեցփոխանի տարեկան հաշիվը քննելու և հաստատելու համար. միևնույն ժամանակ մենք տեղեկացանք, որ պ. երեցփոխանը սրա համար տոմսակներով հրավիրել է մի քանի իր հավանած անձանց: Մենք կարծում ենք, որ այս տեսակ ժողովները ապօրինի և անկանոն են, որովհետև եկեղեցու ծուխը կազմված է ոչ թե երեցփոխանի ընտրյալներից կամ բարեկամներից, այլ նույն եկեղեցու բոլոր ծխականներից: Ուրեմն երեցփոխանը պարտավոր էր հայտնել ժողովի նշանակված ժամանակը և առհասարակ ինչ որ ենթարկված է ծխի քննությանը կամ հաստատությանը, բոլոր ծխականներին, իսկ դրա համար կան շատ շատ միջոցներ. օրինակ առաջարկել քահանաներին, որ յուրաքանչյուրը հայտնի իր ծխին կամ ավելի հարմար՝ լրագրի միջոցով, ինչպես ընդունված է ամենայն մի քաղաքակրթված հասարակության մեջ և որը չէր կարող չլինել հայտնի համալսարանական երեցփոխանին: Եթե Թիֆլիսի առաջնակարգ եկեղեցին այդպես է վարվում, ինչ են անում մնացածները, կամ թե մենք հեռացածներս ինչ կարծիք պետք է ունենանք երեցփոխանի արարմունքի և նրա ներկայացրած հաշվի մասին: Իսկ հոգևոր իշխանությունը, որ պետք է օրենքը պաշտպանել, ինչու է թույլ տալիս այդպիսի անիրավություններ»[1]:

Հավանաբար այս բողոքները նկատի ունենալով է, որ եկեղեցու երեցփոխան Խաչատուր Դավթյանը նույն տարվա մայիսի 21-ին ծխականներին հրավիրում է ժողովի: Այս մասին տպագրված է «Մշակում». «Թիֆլիսի Մողնու Ս. Գէորգ եկեղեցու երէցփոխան պ. Խաչատուր Դաւթեանը խնդրել է մեզ տպել հետևեալը. «Մողնու Սուրբ Գևորգ եկեղեցու ժողովրդին խնդրում եմ շնորհ բերել առաջիկայ կիրակի օրը, ամսոյս 21-ին, 12 ժամին սուրբ Գայանեան ուսումնարանի դահլիճը, խորհուրդ անելու եկեղեցու գործերի վրայ: Ժողովին ներկայ կլինի սրբազան առաջնորդը»[2]:

1878 թ. դեկտեմբերի 1-ին Մողնու եկեղեցու միաբան Սիմեոն քհյ. Չմշկյանը խնդրել է Վեհափառ կաթողիկոսին իրեն ավագ քահանայի կոչում շնորհել[3]: Հարկ է նշել, որ դեռևս 1860 թ. Մաթևոս կաթողիկոսը կոնդակով Սիմեոն քահանային թույլատրել էր ազատ և

[1] «Մշակ», 1878, 13 ապրիլի, Հմր 60:

[2] «Մշակ», 1878, 18 մայիսի, Հմր 80:

[3] ՄՄ, Կ/Դ, թղթ. 202, վավ. 316:

անխափան քարոզել Քրիստոսի վարդապետությունը բոլոր եկեղեցիներում[1]:

Տարեվերջին եկեղեցում ինչ – ինչ պատճառներով լարված հարաբերություններ են եղել երեցփոխ Հարություն Հովհաննիսյանի և միաբանների միջև: Այդ առթիվ 1879 թ. հունվարի 1-ին «Մեղու Հայաստանին» գրել է, որ Մողնու նորընտիր երեցփոխան մեծարգո բժշկապետ Հարություն Հովհաննիսյան Հովհաննիսյանցը չի կամենում ընդունել իր նոր պաշտոնը, անհնար համարելով գործ ունենալ եկեղեցականների հետ[2]: Շուտով վիճաբանությունը հարթվել է և երեցփոխը անցել է իր պարտականությունների կատարմանը:

1879 թ. ապրիլին Մողնու միաբանությունը սկսել է ստորագրություն հավաքել հօգուտ «Արարատեան» ընկերության: Միաբանության անդամ Սիմեոն քհյ. Չմշկյանը ներկայացրել է նվիրատուների ցուցակը, որտեղ նշվել է, որ միաբանությունը այդ ընկերությանը ամեն տարի նվիրել է 10 ռուբլի[3]: Երեցփոխ Հարություն Հովհաննիսյանի և Սիմեոն Ալադաղյանի միջոցով կատարվել է նաև հանգանակություն հօգուտ Ռուբինյան երկրագործական ուսումնարանի, որին մասնակցել է 83 մարդ: Ընդհանուր գումարը կազմել է 190 ռ. 40 կ. [4]:

1880 թ. հունվարի 17-ին տեղի է ունեցել եկեղեցու ծխատեր Մուշեղ քհյ. Տեր-Ղևոնդյանի կնոջ հուղարկավորությունը: Պատարագից հետո թաղումը կատարվել է Խոջիվանքի գերեզմանատանը[5]: Իսկ մայիսի 23-ին եկեղեցում կատարվել է բարեգործ Ալեքսանդր Մանթաշյանի մոր՝ Թալալ Մանթաշյանի հոգեհանգիստը[6]:

Սեպտեմբերի 27-ին, Վեհափառ Հայրապետի անվանակոչության տոնի առիթով, նորին սրբազնություն Գրիգոր արք. Աղափիրյանը պատարագիչ է եղել Մողնու Սուրբ Գևորգ եկեղեցում: Տոնի և ճեմարանի հիմնադրության առթիվ նա ատենաբանել է: Սուրբ պատարագից հետո բոլոր եկեղեցական դասը, դուրս գալով եկեղեցու գավիթը, Ներսիսյան դպրոցի հոգաբարձության, ուսուցիչների և աշակերտների ներկայությամբ, կատարել է հոգեհանգիստ ուսումնարանի բարերար հանգուցյալ Գ. Օքրոյանի գերեզմանի վրա:

[1] ՄՄ, Կ/Դ, թղթ. 202, վավ. 317:
[2] «Մեղու Հայաստանի», 1879, 1 հունվարի, Հմր 1:
[3] «Մշակ», 1879, 11 ապրիլի, Հմր 49:
[4] «Փորձ», 1879 թ., Հմր 6, էջ 196-197:
[5] «Մշակ», 1880, 16 հունվարի, Հմր 2:
[6] «Մշակ», 1880, 25 մայիսի, Հմր 85:



Հոգաբարձության կարգադրությունն է եղել ամեն տարի այս հոգեհանգիստը կատարել[1]:

Նույն թվականի նոյեմբերին Ներսիսյան դպրոցի հոգաբարձուներ ընտրելու համար Մողնու եկեղեցուց պատգամավորներ են ընտրվել Հարություն Հարությունյան Խարազյանցը, Գրիգոր Գաբրիելյան Ղորղանյանցը և Եսայի Սողոմոնյան Խանդալամանյանցը[2]:

1881 թ. փետրվարին՝ Վարդանանց տոնի օրը, Գրիգոր արք. Աղափիրյանը եկեղեցում կատարել է պատարագ, որից հետո ժողովուրդը հավաքվել է Գայանյան օրիորդաց ուսումնարանի դահլիճ, որտեղ տոնի առթիվ բանախոսել է Ամբրոսիոս վրդ. Ռուբինյան Հայր սուրբը: Հանդեսը կնքվել է սրբազանի օրհնությամբ և աշակերտուհիների երգերով[3]:

Մարտի 2-ին՝ առավոտյան ժամը 11-ին, Ներսիսյան դպրանոցը՝ Թանդոյան եկեղեցում, և Գայանյան ուսումնարանը՝ Մողնու եկեղեցում, բոլոր աշակերտների, աշակերտուհիների, վարժուհիների և ուսուցիչների ներկայությամբ կատարել են հոգեհանգիստ «առ Տէրն փոխեալ Թագաւոր Կայսեր համար»[4]:

Ապրիլի 19-ին Վանքի ավագ եկեղեցում լուսահոգի հանգուցյալ Հովսեփ Էֆենդյանի հոգեհանգստի արարողությանը Մողնու եկեղեցուց ներկա են եղել Արիստակես ավ. քհյ. Բենքլյանը, Սիմեոն քհյ. Չմշկյանը, Մուշեղ քհյ. Տեր-Ղևոնդյանը և Հովհաննես քհյ. Տեր-Գրիգորյանը[5]:

Տարեվերջին, «Մշակը» նկարագրելով եկեղեցու քայքայված վիճակը, գրել է. «Մողնու եկեղեցին մտնելիս, մարդս իսկոյն երկիւղ է կրում՝ տեսնելով այն ճեղքը, որ գոյացել է առաստաղի վրայ մուտքի դռնից մինչև միւս դուռը: Թէև ճեղքը մասամբ կպցրած է թղթով, երևի դրա համար, որ նրա մեծանալը չերևայ, բայց այնուամենայնիւ հասարակութեան համար հետաքրքիր է իմանալ, արդեօք եկեղեցի յաճախողները չեն ենթարկվում որ և է վտանգի»[6]:

1882 թ. հունվարին Մուշեղ Տեր-Ղևոնդյանը Թիֆլիսի «Բարեգործական ընկերութեանը» նվիրել է 35 ռուբլի[7]: Այդ գումարը հա-

[1] «Մեղու Հայաստանի», 1880, 1 հոկտեմբերի, Հմր 75:
[2] «Մեղու Հայաստանի», 1880, 12 նոյեմբերի, Հմր 87:
[3] «Պսակ», 1881, 6 մարտի, Հմր 8:
[4] «Մեղու Հայաստանի», 1881, 3 մարտի, Հմր 29:
[5] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3475, թ. 28:
[6] «Մշակ», 1881, 23 դեկտեմբերի, Հմր 239:
[7] «Մշակ», 1882, 23 հունվարի, Հմր 11:

վաքվել էր Գ. Ղարիբյանի տանը տեղի ունեցած հացկերույթի ժամանակ: Հանգանակությանը նպաստել են նաև եկեղեցու ավագ քահանա Արիստակես Բենքլյանը և Հովհաննես քհյ. Տեր-Գրիգորյանը:

Օգոստոսի 19-ին եկեղեցում կատարվել է Նատալիա Միրզոյանի (օր. Տեր-Մարկոսյան) հոգեհանգստյան տխուր հանդես, որին ներկա են եղել Թիֆլիսի հայ հասարակության բազմաթիվ ներկայացուցիչներ: Նշվել է, որ դեռահաս տիկինը թեև կարճատև կյանք է ունեցել, բայց այն լի է եղել տոկուն աշխատասիրությամբ: Նա եղել է Գայանյան ուսումնարանի անդրանիկ սանուհիներից և մինչև իր մահը աշխատել է այնտեղ վարժուհի: Նրա բազմաթիվ գրքերը և թարգմանությունները զարդարել են մանուկների աղքատ գրադարանները[1]:

1883 թ. փետրվարի 21-ին Թիֆլիսի և Մցխեթի վիճակի եկեղեցիների բարեկարգիչ Կարապետ քհյ. Տեր-Սարգսյանը ներկայացրել է թեմի առաջնորդ Արիստակես եպս. Սեդրակյանին (առաջնորդել է 1881 – 1889 թթ.), Մողնու եկեղեցու հոգևորականության մասին հետևյալ տվյալները[2]. Արիստակես ավ. քհյ. Բենքլյան. ունի 114 տուն ժողովուրդ, Սիմեոն քհյ. Չմշկյան, 50 տուն ժողովուրդ, Մուշեղ քհյ. Տեր-Ղևոնդյան, 69 տուն ժողովուրդ, Հովհաննես քհյ. Տեր-Գրիգորյան, 103 տուն ժողովուրդ, սարկավագ Մատթևոս Վերդյան: Ստորին պաշտոնյաներ Գևորգ Թովրազյան և Հովհաննես Նավթիկյան, երկուսն էլ աշխարհական կոչման: Եկեղեցու երեցփոխանն է Նիկոլայ Բուդղանի Խոսրովյանը:

Մարտի 22-ին առաջնորդական հանձնարարությունների հանձնաժողովը վճռել է կազմել հաշվետես անդամներից կազմված մի մասնաժողով, որոնք պետք է քննեն եկեղեցիների հաշիվները: Հանձնաժողովի հաշվետես անդամը իրավունք էր ձեռք բերում ստուգել իրեն հանձնված եկեղեցու հաշվեմատյանները, երբ ինքը հարմար կգտներ ու կցանկանար: Եկեղեցու երեցփոխանները պարտավոր էին ներկայացնելու այդ մատյանները, հակառակ դեպքում թեմի առաջնորդը կարող էր դիմել հատուկ միջոցների: Այսպես, Մողնու եկեղեցու հաշվետես է նշանակվել Մուշեղ քհյ. Տեր-Ղևոնդյանը[3]:

Ապրիլի 24-ին Վանքի ավագ եկեղեցում, ինչպես ավանդաբար կատարվել է, հանգուցյալ Հովսեփ Էֆենդյանի գերեզմանի վրա հոգեհանգստյան արարողությանը Մողնու եկեղեցուց ներկա է եղել

[1] «Արձագանք», 1882 թ., Հմր 32, էջ 499:
[2] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2932, թ. 2 շրջ.:
[3] «Մշակ», 1883, 31 մարտի, Հմր 57:



Արիստակես ավ. քհյ. Բենքլյանը, որը այդ առթիվ ստացել է մեկ ռուբլի[1]:

Հունիսի 5-ին հոգևոր իշխանության կարգադրությամբ Մողնու եկեղեցում պատարագից հետո պետք է կատարվեր երեցփոխանի ընտրություն, որը սակայն հետաձգվում է և տեղի է ունենում նոյեմբերի 27-ին: Այդ կապակցությամբ Մուշեղ քհյ. Տեր-Ղևոնդյանը նոյեմբերի 28-ին նամակ է ուղղել «Մշակ» թերթի խմբագրին. «Վերջապէս ներկայ նոյեմբերի 27-ին վճռվեցաւ Մողնւոյ եկեղեցու երեցփոխանական հարցը: Քուէարկվեցան պ.պ. Ստեփան Մելիքեան, Գասպար Նահապետեան և Աղէքսանդր Խօսրովեան: Վերջինս ներկայ չէր: Ընտրողները 33 էին: Ընտրվեցաւ երեցփոխան պ. Գասպար Նահապետեանը 15 ձայնով, պ. Խօսրովեան 14 ձայնով, այն է մի ձայնով պակաս կանդիտատ մնաց: Ժողովը խաղաղ անցաւ աւելի քան առաջինը: Ընտրող հասարակութիւնը գոհ մնաց և Համախօսական թերթը ստորագրվեցաւ, որ առաջարկվի ի հաստատութիւն: Յոյս ունենք, որ պ. Նահապետեանը կարդարացնի ժողովրդի ջերմ համակրութիւնը և իւրովսանն կաշխատի միանգամայն նուիրվել եկեղեցու կարիքներին, որը կարօտ էր պարոնի նման հասուն և բազմափորձ երեցփոխանացուի գործունեայ հոգատարութեանը»[2]:

Հուլիսի 17-ին Թիֆլիսի երկրորդ կարգի վաճառական Հովհաննես Դավթյան Խուդաղյանը խնդրագրով դիմել է թեմի առաջնորդ Արիստակես եպս. Սեդրակյանին. «Խնդրագրով իմով դիմեալ ի Վիճակային Կոնսիստորիայն Հայոց Վրաստանի և Իմերէթի, խնդրեալ էի զտնօրէնութիւն Նորին, յաղագս վաճառելոյ և կամ փոխարինելոյ ընդ աւելի արդիւնաւոր կալուածոյ զտունն Մողնւոյ Ս[ուր]բ Գէորգ եկեղեցւոյ, գտանեցեալն կից տան իմոյ ի նեղ փողոցի Մողնւոյ թաղի, վասն առնելոյ զաւիթ տան իմոյ, բայց մինչ ցարդ չստացայ զբաւականութիւն ինչ:

Սրբազան Հայր, Հաշտարար Դատաւորն Ձերդ բաժանման Տփխիսայ ի 24 յունիսի տարւոյս հիմնեալ ի վերայ արձանագրութեան քաղաքական ճարտարապետի Տփխիսայ պրն. Շիշկեվիչի և պօլիցիական աստիճանաւոր Ստասինուկինի, վճռեալ է քակտել ի հիմանց զմի մասն յիշեալ շինութեան, ի պատճառս հնութեան, քայքայման և երկուղալի դրութեան նորին, այժմ եթէ եկեղեցին քակտեալ է ի հիմանց զայդ մասն և առցէ ի նորոյ զշինութիւն, ունի ծախեալ առ այդ զբաւականաչափ դրամս, որ վասն փոքրութեան և անյար-

[1] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3475, թ. 30 շրջ.:
[2] «Մշակ», 1883, 6 դեկտեմբերի, Հմր 190:

մարութեան տեղւոյն ստացեալ տարեկան արդիւնսն չունի անգամ ծածկել զտոկոսիս ծախեալ առ այդ շինութիւն դրամոց, իսկ եթէ չ'նորոգեսցի, դարձեալ չ'բերէ նշանաւոր արդիւնս ինչ որպէս այժմ իսկ, յորում ականատէս և իրազգաց եղև և Ձերդ Բարձր Սրբազնութեան ի գալն և ի նկատելն յանցելում աւուրս զայն շինութիւն:

Ողորմած Տէր, լսելի եղև ինձ որպէս թէ եկեղեցին ցանկայ և մտադրեալ է վերանորոգել զայն տուն, որ պէտս ունի նշանաւոր ծախուց և որ չունի բերել զօգուտ ինչ ի պատճառս փոքրկութեան և անյարմարութեան տեղւոյն և կարի հնութեան ամբողջ շինուածոյն, առաջի աչաց ունելով զայդ, ես իբրև անդամ ազգի և եկեղեցւոյ, երկրորդեմ զիմ խնդիր այժմ առ Բարձր Սրբազնութիւն Ձեր, այն է՝ կամ վաճառել ինձ զայդ տուն օգտաւէտագոյն գնով և կամ փոխարինել ընդ այլ աւելի նոր, գեղեցիկ և արդիւնաւոր կալուածոյ, որպիսին ձեռնտու համարեսջիք վասն եկեղեցւոյն, այն է՝ կամ տան և կամ կրպակի, որ բերեցէ կրկնապատիկ արդիւնս յօգուտ եկեղեցւոյն:

Վասնորոյ դիմեալ այսու խնդրագրով իմով առ Բարձր Սրբազնութիւն Ձեր, ամենախոնարհաբար խնդրիմ առնել զարժանին տնօրէնութիւն, յօգուտ եկեղեցւոյն, զի մի՛ ի տարապարտուց ծախեսցի եկեղեցական գումարն ի վերանորոգութիւն յիշեալ տան, որ չունի բերել անգամ զտոկոսիս արարեալ ծախուց: Ոչ աւելորդ համարիմ յարակցել և զայս, թէ զայդ տուն եկեղեցին գնեալ է սեպհական դրամովք իւրովք և չէ ընծայաբերութիւն և կամ կտակեալ որևիցէ անձէ»[1]:

Այդ տարի եկեղեցու երկու կրպակները 5000 ռ. արժողությամբ գնել է Թիֆլիսի քաղաքային աստիճանավոր Հովհաննես Եգորի Ամիրաղյանը[2]:

Արխիվային մի փաստաթղթում պահպանվել են տարբեր եկեղեցիներից մնացած ապառիկ գումարների չափը 1879 թ. մինչև 1883 թ. վերջը ընկած ժամանակահատվածում. այսպես. Մողնու եկեղեցին պարտք է մնացել օրիորդաց գիմնազիային 1881-1882 թթ.՝ 140 ռ., ձայնագրեալ շարականների գին՝ 120 ռ., 1882 թ. Հորդանանի կամրջի կառուցման համար պարտք է մնացել 50 ռ. և 1883 թ. եկեղեցական մատյանի գումարը, որը կազմել է 10 ռ.: Այսպիսով, պարտքի ընդհանուր գումարը կազմել է 320 ռ.[3]:

1884 թ. հունվարի 29-ին թեմի առաջնորդ Արիստակես եպս. Սեդրակյանի կարգադրությամբ Թիֆլիսի հայոց եկեղեցիներում տեղի է

[1] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2932, թ. 16:
[2] ՀԱԱ, ֆ. 56, ց. 5, թղթ. 118, վավ. 175, թ. 206, բնագիր, ձեռագիր:
[3] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2932, թ. 11:



ունեցել պատգամավորների ընտրություն: Յուրաքանչյուր եկեղեցի ընտրել է չորս պատգամավոր, որոնք մարտի 24-ին, գավառական քաղաքների պատգամավորների հետ, պետք է հավաքվեին առաջնորդարանում և ընտրեին մի ներկայացուցիչ, որը սրբազան առաջնորդի հետ կմասնակցեր կաթողիկոսական ընտրությանը: Մողնու եկեղեցուց պատգամավորներ են ընտրվել Աբգար Հովհաննիսյանը, բժիշկ Կարապետ Մելիք-Բեգլարյանը, Գասպար Նահապետյանը և Վարդան Կուսիկյանը[1]: Այդ ընտրությունը վերահսկել է բարեկարգության վերատեսուչ Մուշեղ քհյ. Տեր-Ղևոնդյանը: Նա գրել է, որ ընտրությունը «շատ կանոնաւոր էր, և քուէարկութեան ժողովը լուռ էր և խաղաղ, կրկին և կրկին անգամ համրեցինք քուէարկողները և տոմսակները»[2]:

Փետրվարի 16-ին Վարդանանց տոնի օրը եկեղեցում պատարագից հետո, թեմի առաջնորդ Արիստակես եպս. Սեդրակյանը, հոգևորականների, Գայանյան ուսումնարանի աշակերտուհիների, տեսուչի, ուսուցիչների և խուռն բազմության ներկայությամբ, հոգեհանգիստ է կատարել: Այնուհետև սրբազանը քահանաների և ծխականների հետ միասին բարձրացել է ուսումնարանի դահլիճ, որտեղ օրիորդաց երգեցիկ խումբը հանդեսը բացել է «Տէր, պահեա զԿայսր մեր» երգով: Այնուհետև ճառախոսել են պ.պ. Պալյանը, Գեղամյանը և Ստեփաննոս ավ. քհյ. Տեր-Ստեփաննոսյանը[3]:

Թեմական հանձնաժողովի ապրիլի 27-ին տեղի ունեցած նիստի ժամանակ կարդացվել է հանձնաժողովի անդամ Գևորգ քհյ. Գալստյանի հայտարարությունը, որում ներկայացվել է Մողնու եկեղեցու երեցփոխանից ստացած 25 ռ.՝ եկեղեցիների բարեկարգության վերատեսուչների 1884 թ. ծախսերի համար[4]:

Հոկտեմբերի 28-ին եկեղեցում ելույթ է ունեցել Սիմեոն ավ. քհյ. Չմշկյանը, որը անդրադարձել է եկեղեցուն կից Աբասաբադյան հրապարակում բացված գերեզմաններին և խոսել եկեղեցու դրության ու առկա խնդիրների մասին[5]:

1884 թ. եկեղեցուն պատկանել է վարձու տրված չորս տուն, մեկ ուսումնարան և ինն սենյակ՝ նախատեսված ուխտավորների համար[6]:

[1] «Արձագանք», 1884 , Հմր 5, էջ 68:
[2] «Նոր Դար», 1884 , 4 փետրվարի, Հմր 20:
[3] «Նոր Դար», 1884, 21 փետրվարի, Հմր 29:
[4] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 4078, թ. 11:
[5] «Նոր Դար», 1884, 8 նոյեմբերի, Հմր 181:
[6] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2941, թ. 135:

1885 թ. հունվարի 31-ին Գայանյան օրիորդաց դպրոցը, ըստ սովորության, տոնել է Վարդանանց տոնը: Սուրբ պատարագից հետո Մողնու բակում կատարվել է հոգեհանգիստ, և ապա թեմի առաջնորդ Արիստակես եպիսկոպոսը, եկեղեցական դասի հետ և խուռն բազմությամբ, տեղափոխվել են դպրոցի դահլիճ, որտեղ տեղի է ունեցել տոնական հանդես:

Նույն տարվա փետրվարին Գասպար Նահապետյանը ներկայացրել է եկեղեցու 1884 թ. երեցփոխանի հաշվետվությունը, ըստ որի՝ 1. Եկեղեցին ունի անշարժ կալվածք՝ ա) 2 տուն քայքայված, որոնցից մեկը վարձել էր ավ. քահանա Բենքլյանը, բ) 1 կրպակ վերնահարկով, բազազխանում, մանրավաճառ Սոլիկո Պեպինյանի ձեռքին, առանց կապալագրի, ով չէր վճարել կրպակի վարձը 1881 թ. հուլիսի 1-ից սկսած: Այս մասին գանգատ է հայտնվել դատարանին, 2. 1883 թ. եկեղեցին չի ունեցել մայր գումար և անվաճառ ամբողջ մոմ, 3. 1884 թ. ընթացքում մուտք է եղել. եկեղեցապատկան կալվածքներից վարձ՝ 480 ռ., ամբողջ մոմից՝ 1301 ռ. 75 կ., կիսաայրյալ մոմից՝ 110 ռ. 55 կ., նվեր չարչարանաց գիշերվա մոմերի՝ 17 ռ., հանուն եկեղեցու՝ գանձանակադրամ՝ 64 ռ. 50 կ., սուրբ մասունքների խաչահամբույրից՝ 22 ռ., 97 կ., մկրտության և պսակի լուսագին, ջահերի և թագերի վարձ՝ 205 ռ. 75 կ., դիազարդի և դագաղասեղանի վարձ՝ 38 կ., խաչահանեք և վարագուրաբացեք՝ 15 կ., ս. Գայանյան օրիորդաց ուսումնարանի վարչությունից փոխարինաբար ստացել է 150 ռ.: Ընդամենը 2411 ռ. 62 կ.:

1884 թ. ընթացքում եղել են հետևյալ ծախքերը. գնվեցավ ավագ պահարանից մոմավաճառության 17 փութ 7 ½ գրվանքա մոմ՝ 687 ռ. 20 կ., կիսայրյալ սպիտակ 5 փ. 21 գրվ. մոմի փոխարեն գնվեցավ սպիտակ ամբողջ մոմ 2 փ. 34 ½ գրվ. և հատուցվեց 110 ռ. 55 կ.: Վերոհիշյալ մոմերից գործադրվել է եկեղեցու մեջ ամբողջ սպիտակ մոմ 4 փ. 1 ½ գրվ., որի գինն է 161 ռ. 25 կ.: Մոմավաճառության ավագ պահարանից գնվեցավ 13 հատ դեղին մոմ չարչարանաց և թաղման օրերի համար և հատուցվեց 5 ռ. 60 կ.: Գնվեցավ կիսայրյալ մոմ եկեղեցում գործադրելու համար՝ 14 գրվ. և հատուցվեց 5 ռ. 60 կ.: Լուսարարին ռոճիկ՝ 120 ռ., երկու ժամկոչներին՝ 322 ռ., գիշերապահին՝ 71 ռ., դպիրների վարձ՝ 57 ռ. 60 կ., եկեղեցու ժամացույցի նորոգման համար՝ 6 ռ., 1884-85 թթ. Հորդանանի կամրջի շինության համար՝ 100 ռ., եկեղեցապատկան տան պլանի կազմելու համար՝ 6 ռ., օրիորդաց դպրոցի պարտքը՝ 150 ռ., 1885 թ. ժապավինյալ 5 մատյանների և 40 օրինակ շրջաբերականների համար՝ 12 ռ., եկեղեցապատկան



կրպակի հարկը՝ 19 ռ. 50 կ. վճարվեց քաղաքային վարչությանը, եկեղեցու 4 մեծ և 4 փոքր աշտանակների արծաթաջրելու համար՝ 25 ռ., մի զույգ հարսանյաց թագերի համար՝ 25 ռ., եկեղեցու մեկ ավետարանը մախմուրով կազմելու և ոսկեզօծ խաչով շինելու համար՝ 35 ռ., 24 սպիտակ ժամաշապիկներ կարելու համար՝ 44 ռ. 34 կ., եկեղեցական զգեստների վերանորոգության համար՝ 69 ռ. 84 կ., եկեղեցու նորոգության համար՝ 70 ռ. 70 կ., գործակատարների վարձատրություն՝ 31 ռ., իրավաբանական ծախսերի համար՝ 18 ռ., եկեղեցական կալվածքները հրդեհից ապահովագրելու համար՝ 184 ռ. 50 կ., մանր ծախսերի համար՝ 103 ռ. 75 կ.: Ընդամենը 2310 ռ. 22 կ.[1]:

1885 թ. փետրվարի 10-ին եկեղեցում թեմական պատգամավորներ են ընտրվել Արգար Հովհաննիսյանը, Վարդան Կուսիկյանը և բժիշկ Կարապետ Մելիք-Բեգլարյանը: Նրանք եկեղեցու կողմից հրավիրվել են մարտի 9-ին Վանքի ավագ եկեղեցում տեղի ունեցող պատարագին և ապա թեմի առաջնորդի ընտրությանը մասնակցելու համար[2]:

1886 թ. հունվարի 27-ին Արիստակես ավ. քհյ. Բենքլյանը և եկեղեցու երեցփոխը կոնսիստորիայի 1885 թ. Հ^{տր} 147 հրամանի համաձայն, ներկայացրել են եկեղեցու «Ցուցակ յաւելեալ և պակասեալ զարդուց և անօթոյ Տփխիսոյ Մողնւոյ Սուրբ Գէորգ եկեղեցւոյ վասն 1885 ամի»:

Հավելյալ.

1. Մեկ զույգ բազպան, զառ – 3 ռ. 60 կ.,
2. Հաղորդության պատվանդանի ծածկոց, մախուդից – 8 ռ. 70 կ.,
3. Գրքակալների շապիկներ, չթից, 3 հատ – 14 ռ. 60 կ.,
4. մեկ բրոնզյա մոմակալ՝ խորհրդանոցի համար – 2 ռ. 50 կ.,
5. մեկ զառ փարչայի սեղանի գոգնոց – 41 ռ. 50 կ.,
6. մեկ արծաթյա ծեսի խաչ – ընծա,
7. նրա համար աղլուխ, մետաքսից – 1 ռ.,
8. մեկ զառ շուրջառ, իր բուրվառով, ընծայված Ալեքսանդր Փրիդոնյանից,
9. մեկ սև մետաքսից բուրվառ՝ իր բազպաններով, ընծայված Միրիմանյանցից, Սիմոն Ալադարյանի ձեռքով,

Պակասյալ.

Ի ձեռն Մուշեղ ք. Տեր-Ղևոնդյանց տվեց Անապ գյուղի Տեր Կարապետ քահանային

---

1 «Մեղու Հայաստանի», 1885 , 3 մարտի, Հ^{տր} 17:

2 «Մեղու Հայաստանի», 1885 , 7 մարտի, Հ^{տր} 18:

1. մեկ շուրջառ՝ իր հասարակ չափռաստով,
2. 6 հատ կապույտ կիսամաշ շապիկներ,
3. 9 հատ չթե շապիկներ,
4. մեկ Ատյանի մաշված ժամագիրք,
5. մեկ բուրվառ,
6. երկու զույգ բազպաններ,

«Բաց յայսմանէ մեկ բուրվառ գործադրեցավ մեկ շուրջառ նորոգելու համար, ութն կապույտ զառ շապիկն նորոգեցան ի գոյացան վեց, ուրեմն երկուքն պակասեցան. քշոցի երկու աղլուխներն վասն հնութեան ոչնչացան»[1]:

1886 թ. նշվել է. «Մողնի Ս. Գէորգ եկեղեցու պատարագը սրբոց Վարդանանց տօնի պատճառաւ կէս օրին էր ձգած այն դիտաւորութեամբ, որ հայ հասարակութիւնը միջոց ունենայ եկեղեցի գալ և իր գոյութիւնը անձնուրացութեամբ պաշտպանող արժանաւորագոյն նախորդաց յիշատակը յարգել: Բայց եկեղեցում հասարակութիւն էլ չկար. կասես թէ սա մի սովորական հինգշաբթի օր լինէր»[2]:

1886 թ. մարտի 23-ին, 75 տարեկան հասակում, մահացել է Թիֆլիսի առաջին կարգի վաճառական Գևորգ Ծովիանյանը: Նա իր կենդանության օրոք առատաձեռն նվիրատվություններ է կատարել Մողնու եկեղեցու նորոգության համար, իսկ Գայանյան դպրոցին դեռևս 1882 թվականին նվիրել էր 1000 ռ.: Ուսումնարանին կտակած գումարը պետք է մնար անձեռնմխելի, որի տոկոսներով ձրիաբար ուսաներ մի աշակերտուհի[3]:

Ապրիլի 20-ին Վանքի ավագ եկեղեցում հանգուցյալ Հովսեփ Էֆենդյանի գերեզմանի վրա հոգեհանգիստ կատարելու համար Ներսիսյան դպրոցի հոգաբարձության կողմից անվանական ցուցակով տարբեր եկեղեցիներից հրավիրված են եղել 46 քահանաներ: Հոգաբարձությունը կոնսիստորիային է ուղարկել 46 ռ., որը պետք է բաժանվեր այդ քահանաներին իբրև ժամուցադրամ: Մողնու եկեղեցուց մասնակցել են Արիստակես ավ. քհյ. Բենքլյանը, Սիմեոն քհյ. Չմշկյանը, Մուշեղ քհյ. Տեր-Ղևոնդյանը և Հովհաննես քհյ. Տեր-Գրիգորյանը, որոնք ստացել են մեկական ռուբլի[4]:

1886 թ. մայիսի 26-ին սինոդի օրագրությունում գրվել է. «Ըստ հրամանի Նորին Կայսերական Մեծութեան Ինքնակալին Ամենայն

1 ՀԱԱ, ֆ. 332, ց. 1, գ. 994, թ. 4:
2 «Արձագանք», 1886 , Հմր 7, էջ 100:
3 «Նոր Դար», 1886 , 28 մարտի, Հմր 45:
4 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3475, թ. 33 շրջ.:



Ռուսաց ի Լուսաւորչական Հայոց Սինօդի Սրբոյ Էջմիածնի լուան զեկուցումն. Սինօդս համաձայն միջնորդութեան Վիճակային Կոնսիստորիայի Հայոց Տփխիսու յ31-էն մայիսի 1874 ամի № 776, օրագրութեամբ ի 10-ն յունիսի նոյն ամի կայացելով տուեալ էր նմին լուծումն վասն թոյլատրելոյ երեցփոխանի Մողնւոյ Ս[ուր]բ Գէորգ եկեղեցւոյ Հայոց Տփխիսու նադվօրնի սովետնիկ Վասլի Խօջայեանց առնիլ զշինութիւն երկյարկեայ միակողմանի տան ի գաւթի նոյն եկեղեցւոյ՝ ի պէտս ծխական ուսումնարանի, ըստ հաստատեալ մակարդակին, և ծախել առ այն ըստ նախահաշւոյն 7906 ռուբ. 50 կոպ. ի գումարաց եկեղեցւոյն: Յետ այնորիկ վիճակային Կոնսիստորիայն ի 19-ն յունիսի 1875 ամի № 1118, ի հետեւումն յայտարարութեան երեցփոխան Խօջայեանցի, յայտնեաց Սինօդիս, թէ Խօջայեանցն ըստ յարմարութեան տեղւոյն ընդարձակելով զմակարդակ շինութեան և յաւելլով զգումար ծախուց 2728 ռուբ. 75 կոպ., խնդրէ զլուծումն յաղագս դարձուցանելոյ յայն զ1,000 ռուբ. գոյացեալս ի վաճառմանէ պարագայից եկեղեցական հին շինութեանց զ1728 ռուբ. 75 կոպ. եկեղեցական գումարաց: Ի մատուցանելն զօրագիր Սինօդիս՝ կայացեալն ի 25-ն յուլիսի նոյն ամի, յաղագս տալոյ Կոնսիստորիային զխնդրեալ լուծումն հանգուցեալ Գէորգ Դ. կաթուղիկոսի, վերադարձուցանելով Սինօդիս առանց ստորագրութեան, հրամայել էր առաջադրել ընդ ձեռն Կոնսիստորիայի երեցփոխան Խօջայեանցի կատարել զխոստումն նախորդի իւրոյ, որ ի քակելն զԱթոռապատկան գտանեցեալն ի գաւթի նոյն եկեղեցւոյ վասն բանալոյ ընդ այն զառանձին անձն և մասամբ ընդարձակելոյ զշինութիւն ծխական դպրոցի խոստացեալ էր ի տեղի այնր շինել եկեղեցապատկան դրամօք զայլ նոր յաւէտ վայելուչ տուն յանուն Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, յայտնելով նմա, թէ՝ թոյլտուութիւն խնդրեալն շինութեան դադարեցուցեալ է ցկատարումն յիշատակեալ խոստման նախորդի իւրոյ յօգուտ Աթոռոյն: Յետ այսր առաջադրութեան, ի սինօդիս ստացաւ յայտարարութիւն Կոնսիստորիայի Տփխիսու ի 10-ն փետրվարի 1876 ամի № 107, յորմէ երևեցաւ, զի երեցփոխան Խօջայեանցն արդէն աւարտեալ է զշինութիւն ըստ նոր մակարդակի և ծախեալ է յեկեղեցական գումարաց զ1728 ռուբ. 75 կոպ. և զգինս վաճառեալ պարագայից եկեղեցական հին շինութեանց զհազար ռուբլիս. այն է՝ զ2728 ռուբ. 75 կոպ. աւելի քան զթոյլատրեալ ի սինօդէս 7906 ռուբ. և զ50 կոպ., զոր հաշուելով ի միասին, գումարք ծախուց ի պէտս ուսումնարանի եղեալք են 10635 ռուբ. 25 կոպ.: Վիճակային կոնսիստորիայն Տփխիսու, յորում առաջադրեալ էր ի սինօդիս յ31-էն դեկտեմբ. 1885 ամի № 4004 հա-

սուցանել զտեղեկութիւնս, թէ գնեալ են արդէօք գումարք յիշեալ երիցփոխանի և զինչ է տնօրինեալ վասն ինքնակամ ընդարձակելոյ նորա զմակարդակ եկեղեցական շինութեան և յաւելլոյ զգումար ծախուց յ3-ն փետրվարի տարւոյս № 512, յայտնէ, թէ գումարք երեցփոխան Խօջայեանցի չեն գնեալք ի պատճառս վաղուրեմն վախճանեալ գոլոյ նորա: *Հրամայեցին* . որովհետև շինութիւն ծխական դպրոցի արդէն աւարտեալ է, և երեցփոխան Խօջայեանցն վախճանեալ է, ուստի զկազմեալ ի սինօդիս զգործն համարել աւարտեալ՝ առ ի տալոյ ի դիւանն ի պահ, զորմէ և տալ գիտել կոնսիստորիային Տփխիսու վասն կարճելոյ զգրագրութիւն ըստ այսմ առարկայի»[1]:

Այնուհետև ներկայացվել է Թիֆլիսի կոնսիստորիայի 1874 - 1876 թթ. օրագրությունները, ինչպես նաև ուսումնարանի շինության ելքի և մուտքի մասյանը:

Հոկտեմբերի 11-ին եկեղեցում կատարվել է նույն եկեղեցու ավագ քահանա Տեր Արիստակես Բենքլյանի հոգեհանգիստը: Թաղումը կատարվել է հաջորդ օրը: Տեր Արիստակեսը ծնվել է Ախալցխայում: 1883 թ. Թիֆլիսի Սուրբ Մինաս եկեղեցուց տեղափոխվել է Մողնու եկեղեցի՝ որպես ավագ քահանա: Նա 1877 թ. միաժամանակ եղել է կոնսիստորիայի անդամ: Սուրբ Մինաս եկեղեցուց տեղափոխվելով՝ նա իր հետ տարել է եկեղեցուն պատկանող հին տպագրությամբ և իր գեղեցկությամբ հազվագյուտ արծաթապատ մի «Աւետարան» և գրքերով լի պահարան, որն էլ վիճաբանության առարկա է դարձել քահանայի և «Աւետարանը» նվիրաբերողի թոռան՝ Պողոս Քաթանյանի միջև[2]: Վերջինս մեղադրել է քահանային նաև Մողնու եկեղեցուց որոշ իրեղենների անհետանալու կապակցությամբ և նշել. 1. Ո՞վ է տարել Մողնու եկեղեցու գավիթում զետեղված՝ Գայանյան ուսումնարանի հին դռները և հատակի տախտակները, 2. ու՞մից է Մողնու ժողովուրդը պահանջում մոտ 50 կտոր ոսկեղեն և արծաթեղեն անոթներ և այլ իրեղեններ, 3. ո՞վ է եկեղեցու ամենաթանկագին դիազարդը տանը պահում և օգտին ծառայեցնելու համար վարձով տալիս:

1886 թ. Ներսիսյան դպրոցի հոգաբարձուների ընտրությանը եկեղեցուց մասնակցել են Աբգար Հովհաննիսյանը, բժ. Բագրատ Նավասարդյանը և Կոստանդին Բեհբուդյանը[3]:

[1] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2445, թ. 33, ձեռագիր, պատճեն:

[2] **Պ. Քաթանեանց,** Մողնւոյ եկեղեցւոյ աւագ քահանայ և Վրաստանի և Իմերեթի թեմի հայոց վիճակավոր կօնսիստորիայի անդամ Արիստակէս Բէնգլեանցին ի սրտէ նուէր, Թիֆլիս, 1883:

[3] «Արձագանք», 1886 , Հմր 10, էջ 149:



Եկեղեցու 1886 թ. հաշվեմատյանի մեջ գրանցվել են հետևյալ ծախսերը. լուսարարի ռոճիկ – 136 ռ., ժամակոչի ռոճիկ – 316 ռ., եկեղեցական սպասավորների (դպիրների) ռոճիկ – 159 ռ. 05 կ., գիշերապահի ռոճիկ – 72 ռ., մանր ծախսերի համար – 241 ռ. 39 կ., եկեղեցական նոր իրերի գնման համար – 103 ռ., եկեղեցու նորոգության և տանիքը կարկատելու համար – 146 ռ. 60 կ.: Նշվել է, որ եկեղեցին այդ տարի նվիրատվություն է ստացել 14 ռուբլի[1]: Իսկ եկեղեցու 1887 թ. հաշվեմատյանի մեջ գրանցվել են հետևյալ ծախսերը. լուսարարի ռոճիկ – 90 ռ., ժամակոչի ռոճիկ – 314 ռ., եկեղեցական սպասավորների (դպիրների) ռոճիկ – 103 ռ. 10 կ., գիշերապահի ռոճիկ – 74 ռ., մանր ծախսերի համար – 207 ռ. 22 կ., եկեղեցական նոր իրերի գնման համար – 305 ռ. 83 կ., եկեղեցու նորոգության համար – 628 ռ.: Նշվել է, որ հանուն եկեղեցու և միաբանության այդ տարի նվիրաբերել են 734 ռ.[2]:

1887 թ. փետրվարի 12-ին՝ Վարդանանց տոնի օրը, եկեղեցում կատարվել է Սուրբ Վարդանանց հիշատակին նվիրված հոգեհանգիստ: Քահանաներից մեկը քարոզով բացատրել է տոնի նշանակությունը: Ներկա են եղել Գայանյան դպրոցի աշակերտուհիները և վարժուհիները:

1888 թ. մայիսի 1-ին Վանքի ավագ եկեղեցում տեղի է ունեցել հանգուցյալ Հովսեփ Էֆենդյանի հոգեհանգստի արարողությունը: Մողնու եկեղեցուց ներկա է եղել Մուշեղ քհյ. Տեր-Ղևոնդյանը:

Հոկտեմբերի 17-ին վախճանվել է կոնսիստորիայի անդամ, եկեղեցու միաբան ծերունի Հարություն ավ. քհյ. Սուզանաճյանը: Հանգուցյալը մի շաբաթ առաջ կաթվածահար էր եղել: Նա Մողնու եկեղեցի էր տեղափոխվել Բեթղեհեմի եկեղեցուց[3]:

Հոկտեմբերի 20-ին եկեղեցում հանդիսավոր մաղթանք է կատարվել Նորին Մեծություն Կայսեր և Կայսերական ընտանիքի թանկագին կյանքը վտանգից հրաշքով ազատվելու համար[4]: Մաղթանքը կատարել է թեմի առաջնորդ Արիստակես եպիսկոպոսը՝ հայ հոգևորականության հետ միասին:

Այդ տարի եկեղեցին ունեցել է երկհարկանի տուն՝ եկեղեցու պարսպին կից, որտեղ տեղակայված է եղել ուսումնարանը, նաև 9 սենյակ՝ նախատեսված ուխտավորների համար[5]:

[1] ՀԱԱ, ֆ. 332, ց. 1, գ. 1011, թ. 2:

[2] ՀԱԱ, ֆ. 332, ց. 1, գ. 1011, թ. 20:

[3] «Նոր Դար», 1888 , 18 հոկտեմբերի, Հմր 171:

[4] «Նոր Դար», 1888 , 22 հոկտեմբերի, Հմր 175:

[5] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3882, թ. 172:

1889 թ. մարտին Մողնու եկեղեցին կարողացել է պաշտոնից հրաժարվող երեցփոխի փոխարեն նոր երեցփոխ ունենալ: Ընտրվել է պ. Միքայել Տեր-Շմավոնյանը[1]: Հետագայում հոգևոր կոնսիստորիան չի հաստատել նրա ընտրվելը՝ պատճառաբանելով, որ ընտրողների թիվը շատ փոքր է եղել՝ 24 հոգի: Ուստի նշանակվել է նոր ընտրություն, և մարտի 26-ին նոր երեցփոխ է ընտրվել Բագրատ Ալիբեգյանը, իսկ եկեղեցուց Մարիամյան-Հովնանյան ուսումնարանի հոգաբարձուներ են ընտրվել բժ. Միքայել Շահպարոնյանը, Ա. Հովհաննիսյանը, իշխան Բեհբուդյանը և Ն. Տեր-Ղևոնդյանը[2]:

Ապրիլի 16-ին Վանքի եկեղեցում տեղի է ունեցել հանգուցյալ Հովսեփ Էֆենդյանի հոգեհանգստի արարողությունը: Եկեղեցուց ներկա են եղել Մուշեղ քհյ. Տեր-Ղևոնդյանը և Հովհաննես քհյ. Տեր-Գրիգորյանը, որոնք ստացել են մեկական ռուբլի՝ հանգուցյալի կտակի համաձայն[3]:

1889 թ. հոկտեմբերի 12-ին Մողնու եկեղեցում տեղի է ունեցել Միքայել ավ. քհյ. Սիմոնյանի հոգեհանգիստն ու թաղումը: Իսկ, հոկտեմբերի 21-ին նշվել է, որ եկեղեցու երեցփոխը առաջարկել է Թիֆլիսի թեմական առաջնորդին վերացնել եկեղեցում գանձանակ շրջեցնելու սովորությունը և դրա փոխարեն ռոճիկներ նշանակել եկեղեցու եկամուտներից: Առաջնորդը ընդունել է երեցփոխանի այդ առաջարկությունը և հայտարարել, որ սրանից հետո եկեղեցում այլևս գանձանակ չեն շրջեցնելու[4]:

Նոյեմբերի 11-ի եկեղեցում հիշատակվել են հետևյալ քահանաները. Սիմեոն քհյ. Չմշկյանը (տեղափոխվել էր Ալեքսանդրապոլից), Հովհաննես քհյ. Տեր-Գրիգորյանը և Սահակ քհյ. Սահակյանը[5]:

1890 թ. հունիսին Բագրատ Ալիբեգյանի փոխարեն եկեղեցու երեցփոխ է ընտրվել բժ. Շահպարոնյանը, որը վեց ամիս հետո հրաժարական է ներկայացրել՝ առանց դեռևս ընդունելու այդ պաշտոնը:

Նույն թվականի օգոստոսի 26-ին Թիֆլիսում տեղի է ունեցել հարուստ վաճառական Նիկողայոս Գևորգյան Ցարալյանի թաղումը: Նրա հոգեհանգստյան արարողությունը կատարվել է Մողնու եկեղեցում, որտեղ քարոզով ելույթ է ունեցել թեմի առաջնորդ Մամբրե եպս. Սանասարյանը (առաջնորդել է 1889-1892 թթ.) և հայտնել, որ հանգուցյալի կինը, ի հիշատակ ամուսնու Մողնու եկեղեցու քահանաներին նվիրել է 1000 ռ.[1]:

[1] «Նոր Դար», 1889 , 28 մարտի, Հմր 46:
[2] «Նոր Դար», 1889 , 15 ապրիլի, Հմր 55:
[3] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3475, թ. 39:
[4] «Մշակ», 1889 , 21 հոկտեմբերի, Հմր 120:
[5] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 133, թ. 326:



Դեկտեմբերին «Նոր Դար» թերթի խմբագրականում նշվել է, որ արդեն հինգերորդ անգամ է, որ եկեղեցում չի հաջողվում անցկացնել երեցփոխի ընտրություն, կամ ընտրությունը չի կայանում հավաքված ծխականների քիչ լինելու պատճառով[2]: Այդ առթիվ Մողնու եկեղեցու մի ծխական գրել է. «...Մողնու եկեղեցու ինտելիգէնտ հոչակուած ժողովուրդը թողել է եկեղեցին անխնամ և լքեալ դրութեան մէջ: Եկեղեցու ներքին և արտաքին բարեկարգութիւններին նպաստող երկու զօրեղ գործիչներ են հարկաւոր՝ երէցփոխ և աւագ քահանայ: Արդ՝ երկուսիցն էլ զուրկ է մեր Մողնու եկեղեցին: Կար ժամանակ, որ այդ եկեղեցին օրինակելի էր Թիֆլիսի բոլոր եկեղեցիների մէջ իրեն ներքին կարգաւորութեամբ և մանաւանդ կանոնաւոր և գեղեցիկ երգեցողութեամբ, իսկ այժմ, ընդհակառակը, դա անցեալի ողորմելի հակապատկերն է ներկայացնում մեզ. փոխանակ այն գեղեցիկ երգեցողութեան, որ լինում էր այդտեղ Տէր-Ղազար և Տէր-Զաքար աւագ քահանաների ժամանակ, այժմ միայն մի դպիր կգտնես Մողնու եկեղեցում, միայնակ կանգնած, որ անփառունակ ձայնով մի նսեմ և անշուք դպրութիւն է կատարում թէ՛ հասարակ և թէ՛ տօն օրերին...»[3]:

1890 թ. ընթացքում եկեղեցում գրանցվել է 84 ծնունդ (42 արական և 42 իգական), 22 ամուսնություն, մահացել են 46 ծխական[4]:

1891 թ. հունվարին կոնսիստորիայի հրամանով եկեղեցու երեցփոխ է նշանակվել ծխատեր Մուշեղ քհյ. Տեր-Ղևոնդյանը:

Ապրիլին Ներսիսյան հոգևոր դպրանոցի հոգաբարձության համար Մողնու եկեղեցում պատգամավորներ են ընտրվել Աբգար Հովհաննիսյանը, Գաբրիել Սունդուկյանը և իշխան Կոստանդին Բեհբուդյանը[5]:

1892 թ. «Արձագանք» թերթում նշվել է, որ հանգուցյալ Ներսես Պատրիարքի ընտրության ժամանակ Թիֆլիսի թեմի կաթողիկոսական պատգամավորի ընտրության մասնակցեցին Մողնու Ս. Գևորգ եկեղեցու հետևյալ պատգամավորները՝ Աբգար Հովհաննիսյան, բժիշկ Մելիք-Բեգլարյան, Գասպար Նահապետյան, Վարդան Կուսիկյան[6]:

[1] «Մշակ», 1890 , 28 օգոստոսի, Հմր 97, տես նաև՝ «Նոր Դար», 1890, 12 սեպտեմբերի, Հմր 136:
[2] «Նոր Դար», 1890 , 20 դեկտեմբերի, Հմր 203:
[3] «Նոր Դար», 1890 , 15 դեկտեմբերի, Հմր 200, տես նաև՝ Հմր 202:
[4] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3886, թ. 5-6:
[5] «Մշակ», 1891, 11 ապրիլի, Հմր 41:
[6] «Արձագանք», 1892 , 19 հունվարի, Հմր 8:

1892 թ. հունվարի 26-ին Մողնու եկեղեցում տեղի է ունեցել ծխական պատգամավորների ընտրություններ, որոնք մարտի 8-ին պետք է մասնակցեին Վիրահայոց թեմի աշխարհական պատգամավորի ընտրությանը[1]: Թերթի հետագա համարում նշվել են եկեղեցու ծխականների ընտրած անձանց անունները. Աբգար Հովհաննիսյան, Գաբրիել Սունդուկյան, բժ. Հովհաննես Գասպարյան[2]:

Մայիսին եկեղեցու միաբան արժ. Սահակ Սահակյանը տպագրության է պատրաստել «Նոր ուխտի պատմութեան կրօնի դասագիրք», նաև Ա. և Բ. տարվա կրոնի դասատետրեր՝ համաձայն Սուրբ Էջմիածնից հաստատված ծրագրի: Նշվել է, որ նրա աշխատասիրած դասագրքերն արդեն հայտնի էին իրենց մանկավարժական մեթոդով և մեծ ընդունելություն էին գտել ուսումնարաններում[3]:

Սեպտեմբերի 27-ին եկեղեցում կատարվել է Ներսիսյան դպրանոցի բարերարներից մեկի՝ Հարություն Օքրոյանի հոգեհանգիստը: Այդ օրը միաժամանակ նշվել է նաև եկեղեցու տոնը, որի ժամանակ եկեղեցու գավթում հավաքվել են շատ ուխտավորներ, որպիսին «տարիներ ի վեր տեսնված չէր»:

1892 թ. դեկտեմբերի 18-ին «Արձագանքում» գրվել է. «Մողնույ Ս. Գէորգ եկեղեցւոյ ժրաջան երեցփոխան մեծ պ. Ա. Վարդապետեանը հրաւիրում է կիրակի ծխականներին տարեկան հաշիւը տալու և եկեղեցու վերաբերեալ մի քանի կարևոր խնդիրների մասին խորհրդակցելու համար: Մենք առիթ ունեցանք ծանօթանալու այդ մանրամասն կազմուած հաշուի հետ: Սրանից երևում է, որ այդ եկեղեցին 5203 ռուբլի մայր գումար ունի և անշարժ կալուածք, խանութներ, որոնք տարեկան 440 ռուբլի եկամուտ են բերում: Մոմերի վաճառքից 1892 թ. զուտ արդիւնք եղած է 614 ռ. 22 կ.: Մեր այս հարուստ համարուած եկեղեցու ընդհանուր եկամուտը եղել է 2313 ռ. 45 կ.: Եկեղեցու գլխաւոր ծախսն այն ռոճիկներն են, որ տրւում են լուսարարին, սարկաւագին, դպիրներին, երգեցիկ խմբին, ժամկոչներին և այլն – 1093 ռ. 50 կ.: Ապա հետևում է գնած մոմերի ծախսը 347 ռ. 50 կ.: Մողնու եկեղեցու ընդհանուր ծախսը 1892 թ. եղել է 2277 ռ. 56 կ.»[4]:

Մողնու եկեղեցու ծխականների ժողովի մանրամասներին նույն թերթն անդրադարձել է նաև իր հետագա համարում. «Մողնու Ս. Գէորգ եկեղեցու նոր երէցփոխ պ. Վարդապետեանի ջանքերով եկեղեցու արտաքինը հետզհետէ բարեզարդւում է: Այժմ եկեղեցի յաճախողի աչքին են ընկնում մի քանի բարեփոխութիւններ. եկեղեցու յատակը ծածկուած է մաքուր գորգերով, ջահերն ու զարդերը փայլում են մաքրութիւնից, եկեղեցական սպասաւորների, ժամհարի և դպիրների համար նոր և մաքուր զգեստներ ու շաբիկներ են կարուած, չորս մեծ վառարանով տաքանում է եկեղեցին: Ս. Պատարագի ժամանակ նկատելի է դպիրների երգեցողութեան ներդաշնակութիւնը, որովհետև առանձին դպրաց խումբ է պահում եկեղեցին: Սակայն այս ամէնը դեռ ևս գործի սկիզբն է: Պարոն երէցփոխի հրաւիրանօք ծխականները պիտի ժողովուէին կիւրակէ, ամսոյս 20-ին, խորհելու եկեղեցու բարեզարդութեան մասին: Դժբախտաբար այդ հրաւէրին քիչ անձինք էին պատասխանել. այնուամենայնիւ կայացաւ մի փոքրիկ խորհրդակցութիւն, որի շնորհիւ ներկայ ծխականները ծանօթացան եկեղեցու կարիքների և այն անհետաձգելի ձեռնարկութիւնների հետ, որ ներկայացրեց պ. երէցփոխանը իր անցեալ տարուան հաշուի հետ: Անցեալ տարուան հաշիւը հաստատուելուց յետոյ պարոն երէցփոխանը մի համառօտ զեկուցումն կարդաց այն առաջարկութեանց մասին, որ ինքը մտադիր է անելու և որոնց իրագործման համար նա դիմել էր ծխականների ժողովին: Այդ առաջարկութիւնների կարգում կային շատ ժամանակակից և համակրելի առաջարկութիւններ, ինչպէս օրինակ՝ մշտական դպրաց խումբ պահելու, խմբապետ հրաւիրելու, քարոզիչ ունենալու, գանձանակը կանոնաւորելու և այլն: Ներկայ ծխականները մեծ համակրութեամբ վերաբերուեցան այդ առաջարկութիւններին, որոնց իրագործումը տարեկան 1500 ռ. աւելորդ ծախք է պահանջում: Մի քանի ծխականներ խնդիր յարուցին ծխական կազմակերպութեան մասին և առաջարկեցին պ. երէցփոխանին մի այլ կիւրակէ օր մի աւելի բազմամարդ ժողով գումարել և առաջարկել երկու գլխաւոր խնդիրներն ևս. առաջին՝ առաջիկայ տարուան նախահաշիւն ու պակասորդ դրամի հոգացման եղանակը, երկրորդ՝ ապագայի համար մի մասնաժողով կազմելու, որ ծխական կազմակերպութեան խնդիրը մշակէ:

Մեծարգո բժշկապետ պ. Միքայել Շահպարոնեանն իրաւամբ նկատեց, թէ ծխականներից շատերը երեք-չորս կլուբների անդամ են, ճշդիւ հատուցանում են իրենց անդամակցութեան տարեկան վճարը, մինչդեռ յօգուտ եկեղեցու ոչ մի տուրք չեն տալիս: Ժողովի նիստը գոցելուց առաջ հանդիսականները ջերմ շնորհակալութիւն յայտնեցին պ. Վարդապետեանին, որ այնքան նուիրուած է իր պաշտօնին»[1]:

[1] «Արձագանք», 1892 , 26 հունվարի, Հմր 11:
[2] «Արձագանք», 1892 , 29 հունվարի, Հմր 12:
[3] «Նոր Դար», 1892 , 12 մայիսի, Հմր 79:
[4] «Արձագանք», 1892 , 18 դեկտեմբերի, Հմր 147:



[1] «Արձագանք», 1892 , 23 դեկտեմբերի , Հմր 149:

1893 թ. հունվարի 9-ին Մողնու եկեղեցու երեցփոխը հրավիրել է ծխականներին իր հետ խորհրդակցելու եկեղեցու վերաբերյալ մի քանի կարևոր խնդիրների մասին: Հետաքրքիրն այն է, որ երեցփոխը այդ խնդիրների քննարկման համար եկեղեցի է հրավիրել նաև կանանց: Նշվել է, որ ամբողջ Կովկասում այդ առաջին դեպքն էր, երբ եկեղեցու երեցփոխ Ա. Վարդապետյանը դիմել է նման առաջադեմ քայլի[1]: Շուտով, այդ հարցի կապակցությամբ հայկական մամուլում տպագրվում են քննադատական հոդվածներ, որը տեղիք է տալիս բանակռվի: Փետրվարի սկզբին Մողնու եկեղեցու ծխականներից մեկը պաշտպանելով պ. Վարդապետյանին «Նոր Դար» թերթի հարձակումներից, «Արձագանքում» գրել է, որ «յարգելի երէցփոխանը ծխական կանանց հրաւիրել էր ոչ թէ թաղական խորհրդի անդամ լինելու կամ ընտրելու, այլ մասնակցելու եկեղեցու բարեզարդութեան մասին լինելիք խորհրդին և միջոցներ հայթհայթելու դրա համար», միաժամանակ ծխականն ավելացրել է. «Նոքա մի գլուխ կրկնում են՝ թէ կանայք իրաւունք չունին ծխական համայնքի գործերին մասնակցելու, բայց արդեօք իրաւունք ունի՞ն իրանց նուէրներով բարեզարդել եկեղեցին, որի մասին է իսկապէս վիճաբանութիւնը, հաստատապէս չեն ասում ոչինչ»[2]:

Մարտի 18-ին եկեղեցու ծխականներից մեկը գրել է. «...Մողնու եկեղեցին ունէր լաւ կազմակերպած երգեցիկների մի խումբ, որից խիստ գոհ էին բոլոր ժամաւորները: Սակայն չգիտենք ի՛նչ պատճառով պ. երեցփոխանն արձակել է յիշեալ խմբին և նրա տեղը եկեղեցին բերել մի քանի անյաջող և անմշակ ձայն ունեցող ու երգեցողութիւնից անտեղեակ երեխաներ, որոնց առաջնորդում է իրենց պէսին մէկը: Եւ այս նշանաւոր օրերում ժամաւորները, որոնք գնում են եկեղեցի հոգեկան մեծ մխիթարութիւն ստանալու համար, դժբախտութիւն ունին լսել աններդաշնակ երգեցողութիւն»[3]:

Ապրիլի 4-ին Վանքի եկեղեցում տեղի է ունեցել հանգուցյալ Հովսեփ Էֆենդյանի հոգեհանգստի արարողությունը: Մողնու եկեղեցուց ներկա է եղել Սիմեոն քհյ. Չմշկյանը[4]:

Տարեվերջին Թիֆլիսի եկեղեցիների վերատեսուչ բարեկարգիչ Հովհաննես քհյ. Մարտիրոսյանը ներկայացրել է եկեղեցու հոգևորականների ցուցակը.

1 «Նոր Դար», 1893 , 9 հունվարի, Հմր 3:
2 «Արձագանք», 1893 , 7 փետրվարի, Հմր 16:
3 «Նոր Դար», 1893 , 23 մարտի, Հմր 50:
4 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3475, թ. 45:



1. Սիմեոն քհյ. Հովհաննիսյան Չմշկյան – 59 տարեկան, մտել է հոգևորականության մեջ 1856 թ., նույն տարվա մայիսին ստացել է չորս աստիճանի դպրություն և սարկավագություն, ձեռնադրվել է քահանա 1858 թ. սեպտեմբեր ամսին: Զավակները՝ Վահան - 15 տ., Աշոտ - 11, Սաթենիկ - 29, Հայկանուշ - 22 (երկուսն էլ ամուսնացած են), Վարդուհի - 18, Շուշանիկ - 17:

2. Մուշեղ քհյ. Տեր-Ղևոնդյան – 54 տ., հոգևորականության մեջ մտել է 1887 թ. փետրվարի 1-ին, չորս աստիճան դպրություն և սարկավագություն ստացել է 1864 թ. ապրիլի 4-ին, ձեռնադրվել է քահանա 1870 թ. մայիսի 15-ին: Զավակները՝ Արշավիր - 25 տ., Գարեգին - 20, Վարդան - 18:

3. Հովհաննես քհյ. Տեր-Զաքարյան Տեր-Գրիգորյան – ունեցել է 110 տուն ժողովուրդ, 42 տ., մտել է հոգևորականության մեջ 1871 թ., չորս աստիճան դպրություն և սարկավագություն ստացել է 1876 թ. փետրվարի 26-ին, ձեռնադրվել է քահանա՝ նույն տարվա ապրիլի 27-ին: Զավակները՝ Կոստանտիանոս - 12 տ., Վարսենիկ - 15:

4. Արսեն քհյ. Ղազարոսյան Բագրատունի – ունեցել է 100 տուն ժողովուրդ, 48 տ., չորս աստիճան դպրություն ստացել է 1868 թ. մարտի 14-ին, ձեռնադրվել է սարկավագ 1874 թ. սեպտեմբերի 14-ին, իսկ քահանա՝ նույն ամսվա 22-ին: Զավակները՝ Գևորգ, Կարապետ, Մարիամ, Շուշանիկ, Սոֆիա:

5. Սահակ քհյ. Ավագյան Սահակյան – ունեցել է 80 տուն ժողովուրդ, 39 տ., մտել է հոգևորականության մեջ 1884 թ. հունիսի 12-ին, չորս աստիճան դպրություն է ստացել՝ նույն տարվա սեպտեմբերի 29-ին, ձեռնադրվել է սարկավագ 1885 թ. օգոստոսի 20-ին, իսկ քահանա՝ նույն ամսվա 22-ին: Զավակները՝ Լևոն - 4 տ. և Զարուհի[1]:

1894 թ. հունվարի 23-ին Մողնու եկեղեցում պետք է կատարվեր Մարիամյան-Հովնանյան դպրոցի հոգաբարձուներ ընտրող չորս պատգամավորների ընտրություն, որը սակայն, տեղի չի ունեցել: Եկեղեցում ս. պատարագից հետո Սիմեոն քհյ. Չմշկյանը ծանուցել է ծխականներին, որ իրեն և մյուս երկու միաբաններին չեն ուղարկվել հրավիրագրեր, որ ժողովրդին ընտրության կանչեն, ուստի և ընտրությունը չի կարող կատարվել, քանի որ ժողովրդի մեծ մասը ապօրինի կերպով զրկված է իր իրավունքից[2]:

1 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3893, մաս 2, թ. 113 – 114:
2 «Արձագանք», 1894 , 26 հունվարի, Հմր 10, տես նաև՝ «Մշակ», 1894, 25 հունվարի, Հմր 9:

Ընտրությունը կատարվել է հունվարի 30-ին: Եկեղեցում երբեք այդքան ժողովուրդ չի հավաքվել, որքան այս անգամ: Ընտրողների թիվը հասել է մոտ 200-ի: Նրանք բաժանված են եղել երկու կուսակցության: Մի կուսակցության թեկնածուներն են եղել պ.պ. Աբգար Հովհաննիսյանը, իշխ. Բեհբուդյանը, բանկիր Հ. Ծովիանյանը և բժ. Շահպարոնյանը, իսկ մյուս կուսակցության թեկնածուները՝ պ.պ. Ավետիք Արասխանյանը, բժիշկ Հ. Լորիս-Մելիքյանը, Հ. Թաղևոսյանը և Ստեփան Լիսիցյանը: Ձայների առավելությամբ (106 ձայնով ընդդեմ 73-ի) պատգամավոր են ընտրվել Ա. Արասխանյանը, Հ. Լորիս-Մելիքյանը, Հ. Թաղևոսյանը, Ս. Լիսիցյանը: Նշվել է, որ մյուս կուսակցության պատգամավորներ՝ Ա. Հովհաննիսյանը, իշխ. Բեհբուդյանը, Ծովիանյանը, Շահպարոնյանը սևացան՝ «ստանալով 70-73 ձայն»[1]:

Մարտի 10-ին Մողնու եկեղեցի և Գայանյան օրիորդաց դպրոց է այցելել թեմի առաջնորդ Գևորգ եպս. Սուրենյանը (առաջնորդել է 1894-1904 թթ.)[2]:

«Նոր Դարի» համարներից մեկում եկեղեցու ծխականներից մեկը գրել է. «Մեր բոլոր եկեղեցիները զուրկ են երգեցիկ խմբից, բացի Վանքի աւագ եկեղեցուց, որտեղ երգում է Ներսիսեան դպրանոցի երգեցիկ խումբը: Թիֆլիսի բազմաթիւ եկեղեցիներից մէկում խումբ պահելով, չի կարելի համարել ամբողջ ժողովրդին գոհութիւն տուած. հարկաւոր է, որ ամեն մի եկեղեցի ունենայ շատ թէ քիչ կանոնաւոր խումբ: Եկեղեցու ծախսերի մէջ երգեցիկ խմբի ծախսը պէտք է բռնի գլխաւոր տեղը, որովհետև լաւ խումբ պահելով, թէև ծախսը շատ կըլինի, բայց եկեղեցի յաճախող ժողովրդի թիւն էլ կաւելանայ, որից և եկեղեցին նիւթապէս էլ կապահովուի: Թողնենք, որ միւս եկեղեցիների մասին խօսեն իրենց ծխականները, մենք խօսենք Մողնոյ եկեղեցու մասին, որի ծխականները և ժամաւորները կազմում են մեծ մասամբ Թիֆլիսի հարուստ դասակարգը: Մտէք այդ եկեղեցին և դուք արտաքուստ ամեն բան կըգտնէք մաքուր ու կարգին. բայց թէ ինչ է կատարւում ներքուստ, դա Աստուած գիտէ: Այս եկեղեցին, որ ունի մօտաւորապէս 600 տուն ծուխ և բազմաթիւ ժամաւորներ, կիրակի օրերը պատարագին դատարկ է լինում: Եկեղեցին ունի մի երգեցիկ խումբ, որին «լաւ» ասել չի կարելի: Դիմեցէք երէցփոխին և հարցրէք՝ ինչու 25-30 հոգուց բաղկացած խումբ չէք պահում, նա ձեզ կըպատասխանէ, որ փող չկայ և այն 25 րուբլին էլ, որ տալիս է, հազիւ է հայթայթում: Մի հարց.- այն փողերը, որը պ. երէցփոխը 1892-93 թուականներին ժողովեց ծխականներից գործածելու համար, որտեղ էր աւելի հարկաւոր՝ եկեղեցու պատերին քսելու, թէ կանոնաւոր խումբ կազմելու. չէ որ փող ժողովելու գլխաւոր նպատակներից մէկն էլ երգեցիկ խումբ պահելն էր: Մինչև վերջին ընտրութիւններն էլի յոյս կար, որ Մողնու եկեղեցին կանոնաւոր երգեցիկ խումբ կունենար, բայց տեսէք, թէ դրութիւնն ինչպէս է փոխուել... Այսպէս թէ այնպէս մեզ երգեցիկ խումբ է հարկաւոր. պէտք է հոգալ այդ մասին, հարկաւոր է փող ժողովել և յանձնել երէցփոխին. պէտք է խոստովանուել, որ նա փող եղած ժամանակ լաւ գործել գիտէ, նա լաւ խումբ կըկազմէ»[1]:

Մարտի 24-ին երեկոյան ժամը 8-ին Վանքի, Մողնու, Բեթղեհեմի ծխականների կողմից ընտրված 12 պատգամավորները հրավիրվել են Մարիամյան-Հովնանյան դպրոց՝ թեմի առաջնորդ Գևորգ եպս. Սուրենյանի նախագահությամբ հիշյալ դպրոցի համար 4 հոգաբարձուներ ընտրելու: Դպրոցի հոգաբարձու Գևորգ Հաքիմյանը հրաժարվել է իր պաշտոնից՝ արդարացի համարելով, որ այդ պաշտոնը նորից ստանձնի դպրոցի հանգուցյալ հիմնադրի եղբայր Ալեքսանդր Անանյանը[2]:

Ապրիլի 21-ին թեմի առաջնորդարանում հրավիրվել է ժողով քաղաքի հասարակության հայտնի անձանց մասնակցությամբ: Թեմի առաջնորդ Գևորգ եպս. Սուրենյանը, բացելով ժողովը, հայտնել է, որ իր կարգադրությամբ քաղաքի հայկական եկեղեցիներում կազմակերպվել է հանգանակություն հօգուտ սովյալ հայերի: Այդ հանգանակությունը կազմակերպելու համար յուրաքանչյուր եկեղեցում առաջնորդի հանձնարարությամբ ընտրվել է մի մասնախումբ: Մողնու եկեղեցում հանձնաժողովի անդամներ են ընտրվել Ա. Հովհաննիսյանը, Մ. Շահպարոնյանը և Ա. Արասխանյանը[3]:

Մայիսի 22-ի գիշերը Թիֆլիսում կատարվել է մի սրբապիղծ գործողություն. այդ գիշեր գող է մտել Մողնու Սուրբ Գևորգ եկեղեցին, կոտրել է տուփերը, հափշտակել նրանց մեջ եղած դրամը, տարել է մի արծաթյա խաչ և Սուրբ Գևորգի պատկերի վրա կարված երկու փոքրիկ խաչեր: Գողը մնացած սպասքներին ձեռք չի տվել: Գողության մասին իմացվել է գիշերվա ժամը 12-ին: Կանչված թաղապետը, զննելով եկեղեցին, նկատել է, որ դռները կոտրած չեն: Միդսին

[1] «Մշակ», 1894, 1 փետրվարի, Հմր 12:
[2] «Նոր Դար», 1894, 12 մարտի, Հմր 12:



[1] «Նոր Դար», 1894, 17 մարտի Հմր 46:
[2] «Արձագանք», 1894, 23 մարտի, Հմր 34:
[3] «Արձագանք», 1894, 24 ապրիլի, Հմր 46:

հայտնել է, որ մոռացել է կողպել դուռը: Կալանավորվել են մղդսին և մյուս ծառաները. գործը հանձնվել է քննիչին[1]:

Հունիսի 10-ին «Արձագանքը» գրել է. «Ծխականների փարթամութեամբ յայտնի Մողնու Ս. Գէորգ եկեղեցին փառք Աստուծոյ, որ նորոգութեան կարիք չունի: Այս ձմեռ Մողնու եկեղեցին բարեզարդելու համար պ. երեցփոխը դռնէ դուռն ընկած նուէրներ էր հաւաքում: Զմոռանանք յիշելու, որ Վանքը 1000 տնի չափ ծուխ ունի եթէ ոչ աւելի, Մողնին դրա կիսի չափ, բայց հարուստ... Մողնու պէս բազմաթիւ ժամաւորներ ունեցող եկեղեցու տարեկան գանձանակն է ըստ նախընթաց տարուան հաշուի 117 ռ. 26 կ.»[2]:

Այդ առթիվ եկեղեցու միաբան Սահակ քհյ. Սահակյանը գրել է. «Արձագանք» լրագրի № 65-ի առաջնորդող յօդուածում ասուած է. «Միթէ պարզ չէ, որ եկեղեցին կամ կողոպտւում է իր պաշտօնեաներից և կամ աւելի յաճախ զրկւում է իր արդիւնքից շնորհիւ իր իսկ պաշտօնէից» և սրան ապացոյց առաջ է բերւում թէ Մողնոյ հինգ միաբաններ ինչ արդիւնք են մատուցել եկեղեցուն: Յօդուածի մէջ միաբանից անունները յիշուած չեն, այլ թուանշաններով է որոշած նոցա՝ կողքին դնելով իւրաքանչիւրի տուած արդիւնքը այսպէս՝ 1. ա. քահան. մի տ. մէջ 3-20, 2. բ. ------- 27-60, 3. գ. ---------1-60, 4. դ. ---------122-60, 5. ե. ---------163-40:

Մողնւոյ եկեղեցին հինգ միաբան ունի. 1. Սիմէօն քահ. Չմշկեանց, 2. Մուշեղ քահ. Տէր-Ղևոնդեանց, 3. Արսէն քահ. Բագրատունի, 4. Յովհաննէս քահ. Տէր-Գրիգորեանց, 5. Սահակ քահ. Սահակեանց: Ինձ՝ որպէս նոյն եկեղեցւոյ միաբանի, ամենևին պարզ չէ, թէ ով է նրա արդիւնքը կողոպտողը. այսքանը ճիշդ է, որ 163 ռ. 40 կոպէկ արդիւնք ես եմ տուել իմ տարուայ մէջ իմ հարիւրին մօտիկ տուն ծխովս: Այդ մասին ես ոչինչ չեմ ասի, այլ Մողնւոյ երեցփոխան պ. Ա. Վարդապետեանի վրայ, որ այնքան նախանձախնդիր է եկեղեցւոյ արդիւնց կանոնաւորման, սրբազան պարտք է մնում հրապարակով յայտնելու, թէ ես որպէս եկեղեցւոյ միաբան, ինչպէս եմ վերաբերուել դէպի եկեղեցւոյ արդիւնքը»[3]:

Հունիսի 14-ին Մողնու եկեղեցում հրավիրվել է ժողով՝ պատգամավորների ընտրության համար: Եկեղեցում հավաքված շուրջ 150 ծխականները ընտրել են բժշկապետ Հ. Գասպարյանին, բժ. Հ. Լո-

1 «Արձագանք», 1894, 25 մայիսի, Հմր 59, տես նաև՝ «Նոր Դար», 1894, 25 մայիսի, Հմր 87:

2 «Արձագանք», 1894, 10 հունիսի, Հմր 65:

3 «Արձագանք», 1894, 29 հունիսի, Հմր 73:



րիս-Մելիքյանին և Հակոբ Թադևոսյանին[1]:

Իսկ մի քանի օր անց՝ հունիսի 19-ին տեղի է ունեցել կանանց դասում կատարվող պատգամավորական ընտրություններ[2]: Ընտրությունը թեմի առաջնորդը համարել է անվավեր՝ հաշվի առնելով եկեղեցու ծխականների բողոքը, և նշանակել է նոր ընտրություն[3]: Ընտրության ժամանակ ձայների թիվը հաշվողն ու ստուգողը եղել է Ա. Արասխանյանը: Նշված է, որ եկեղեցում ներկա եղած ծխականների թիվը կազմել է մոտ 177 հոգի, որոնցից միայն 70-80-ն են մասնակցել քվեարկությանը: Հայտնի է, որ 14 տուն ծխական եղել են Բեհբությանններից, որոնցից ոչ ոք այդ ընտրություններին չի մասնակցել[4]: Սակայն հուլիսի 3-ին Մողնու եկեղեցում տեղի է ունեցել վերընտրություն: Եկեղեցու ընտրության բեկանման պատճառը անհայտ է: Այս անգամ նույնպես վերընտրվել են բժշկապետ Հ. Գասպարյանը, բժիշկ Հ. Լորիս-Մելիքյանը և Հակոբ Թադևոսյանը[5]:

Հոկտեմբերի 13-ին կատարվել է տիկին Վարվառե Բայանդուրյանի հուղարկավորությունը: Մողնու եկեղեցում թեմի առաջնորդ Գևորգ եպիսկոպոսը իր դամբանական քարոզի մեջ, ի շարս մի քանի իմաստալից մտքերի, գովել է հանգուցյալի դստեր՝ տիկին Սոֆիա Բաբայանի կարգադրությունը, որով տխուր հանդեսը համեստ քրիստոնեական հուղարկավորության կերպարանք է ստացել, առանց նորամույծ, մեր եկեղեցու ոգուն խորթ՝ շռայլ պսակների և տնաքանդ կարգերի: Սրբազանը հիշել է նաև, որ տիկին Բաբայանը իր մոր հիշատակը հավերժացնելու համար 100 ռ. է նվիրել իր նախագահության տակ գտնվող՝ Թիֆլիսի հայ կանանց բարեգործական ընկերությանը, իսկ 200 ռ. հանձնել է Վեհափառ Հայրիկի մասնավոր տնօրինությանը[6]:

Դեկտեմբերի սկզբին սինոդը հրամանագրել է Թիֆլիսի կոնսիստորիային՝ եկեղեցու միաբան Սիմեոն քհյ. Չմշկյանին ենթարկել վեցամսյա ապաշխարանքի Հաղբատի վանքում՝ իր «մի շարք ապօրինի գործերի» համար[7]:

1 «Մշակ», 1894, 21 հունիսի, Հմր 70:

2 «Մշակ», 1894, 21 հունիսի, Հմր 70:

3 «Արձագանք», 1894, 26 հունիսի, Հմր 72:

4 «Արձագանք», 1894, 22 հունիսի, Հմր 70:

5 «Մշակ», 1894, 5 հուլիսի, Հմր 76:

6 «Արձագանք», 1894, 16 հոկտեմբերի, Հմր 120:

7 «Արձագանք», 1894, 7 դեկտեմբերի, Հմր 142:

1895 թ. հունվարի 15-ին եկեղեցում մի քանի առօրյա խնդիրների մասին քարոզել է Խորեն եպս. Ստեփանեն: Պերճախոս ատենաբանը իր ազդու խոսքով և խելացի մտքերով մեծ տպավորություն է թողել հավատացյալների վրա:

Հունվարին թեմի առաջնորդ Գևորգ եպս. Սուրենյանը Վեհափառ Հայրապետի անվանակոչության օրը, արժ. Մուշեղ քհյ. Տեր-Ղևոնդյանին հանձնել է կամիլավկա կրելու կոնդակը[1]: Իսկ փետրվարի 5-ին եկեղեցում առաջնորդը քահանա է ձեռնադրել երկու հոգու, որոնք իրենց ուսումը ավարտել էին Ներսիսյան դպրոցում[2]:

Մարտ ամսին երեցփոխ Ավետիս Վարդապետյանը տպագրել է և ծխականների մեջ տարածել եկեղեցու 1892–1894 թթ. ելք ու մուտքի հաշիվը: Այդ առթիվ նշվել է, որ երեցփոխը ամեն ջանք գործադրել է Մողնու եկեղեցին բարեկարգելու համար[3]: Երեք տարվա ընթացքում ընդհանուր մուտքը եղել է 9318 ռ. 55 կ., իսկ ծախքը՝ 2926 ռ. 92 կ.: Ա. Վարդապետյանը թվարկել է իր պաշտոնավարության ընթացքում կատարված աշխատանքները և անդրադարձել եկեղեցու թերություններին, որոնք դեռ պետք է վերացվեն: Այդ կապակցությամբ նա խնդրել է ծխականների աջակցությունը[4]:

Մարտի 19-ին տեղի է ունեցել եկեղեցու նոր երեցփոխի ընտրություն: Նախկին երեցփոխ Ա. Վարդապետյանը հրաժարվել է քվեարկելուց, և ձայների առավելությամբ երեցփոխ է ընտրվել Բագրատ Ալիբեկյանը[5]:

Մայիսի 16-ին Թիֆլիսում տեղի է ունեցել հանգուցյալ Պողոս Մելիք-Ղարագյոզյանի թաղումը: Հանգուցյալի մարմինը բնակարանից փոխադրվել է Մողնու եկեղեցի, որտեղ պատարագից հետո կոնսիստորիայի նախանդամ Համազասպ վարդապետը քարոզ է խոսել՝ գովելով նրա արժանիքները: Թաղումը կատարվել է Խոջիվանքի գերեզմանատանը:

Հունիսի 4-ին Մողնու եկեղեցում մեծ երեցփոխի նախաձեռնությամբ նշվել է միաբան Մուշեղ Տեր-Ղևոնդյանի քահանայության 25-ամյակը: Նա այդ եկեղեցում գրեթե այդքան տարի էլ ծառայել է որպես սարկավագ: Հայր Մուշեղը հայտնի է եղել իբրև լավ մշակ, որովհետև թե՛ հոգևոր իշխանության և թե՛ ժողովրդի կողմից հանձ-

1 «Նոր Դար», 1895, 17 հունվարի, Հմր 9:

2 «Մշակ», 1895, 7 փետրվարի, Հմր 15:

3 «Մշակ», 1895, 14 մարտի, Հմր 30:

4 «Նոր Դար», 1895, 10 մարտի, Հմր 43:

5 «Մշակ», 1895, 21 մարտի, Հմր 33:



նարարությունները կատարել է ջանասիրությամբ: Նա մոտ 50 տարվա մեջ ծխականների մեջ միշտ ունեցել է սեր ու համակրություն՝ իր եռանդուն քարոզներով և իբրև երգիչ՝ իր զորեղ ձայնով: Նրա բացակայությունը եկեղեցուց միշտ զգալի է եղել: Ցավոք, նա զրկվել էր աչքի լույսից, և այդ տկարությունը, ըստ մի երևելի ակնաբույժի, անբուժելի չէ: Հայր Մուշեղին միայն պակասել է նյութական միջոց իր տկարությունը բուժելու համար:

Հանդեսից հետո՝ հունիսի 7-ին, Մուշեղ քհյ. Տեր-Ղևոնդյանը շնորհակալություն է հայտնել մամուլում. «Մեպուտ պարտականութիւն եմ համարում հրապարակով շնորհակալութիւն յայտնելու այն յարգելի անձանց, որոնք ներկայ եղան իմ քահանայական 25-ամեայ ծառայութեան տօնի համեստ հանդիսին և որոնք սրտագին կարեկցութեամբ ցոյց տուին իրենց ցաւակցութիւնը դէպի իմ ներկայ դժուարատար դրութիւնը: Շնորհակալ եմ շատ. որքան էլ սակաւաթիւ լինէին դրանք, այնուամենայնիւ հոգեկան մեծ մխիթարութիւն պատճառեցին ինձ իրենց ներկայութեամբ: Դրանք են՝ արժ. հայր Արսէն Բագրատունի, պ.պ. երեցփոխան Բագրատ Ալիբէգեան, Սարգիս Գաֆեան, Սոսօ Բաբանասեան և մեչանների աւագ Եսայի Աբրահամեան: Իսկ յանձնախմբի կազմութեան բոլոր պարծանքը պատկանում է մեծապատիւ բժշկապետ պ. Բագրատ Նաւասարդեանին, որին նմանապէս մատուցանում եմ խորին շնորհակալութիւնս: Այո, դրանց անունները անջնջելի կը մնայ միշտ իմ սրտի խորքերում և որքան թերևս ոյժ կունենամ մի քանի օրեր ապրելու՝ իմ մշտամրմունջ աղօթքի ժամանակ չեմ դադարիլ օրհնել դրանց անունները... Ես իմ խոնարհ և որդիական շնորհակալութեան ջերմ արգասիքը մատուցանում եմ յատս Նորին Բարձր. Սրբազնութեան Վիճակաւոր Առաջնորդ Բարձրապատիւ Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեանի, որի բարձր բարեհաճ թոյլտուութեամբ կազմակերպուեց նուաստիս պատուին վերաբերեալ այս խոնարհ տօնախմբութիւնը և որ իր շնորհաշուք ներկայութեամբ առանձին փայլ տուեց հանդիսին»[1]:

Հայտնի վիպասան Պերճ Պռոշյանը Տեր Մուշեղի մասին գրել է. «25 տարի յառաջ, մայիս ամսին, մի կիրակի, Թիֆլիսի Մողնու եկեղեցումը ասեղ ձգելու տեղ չկար. եկեղեցու բակումն ու փողոցումը:

Ի՞նչ էր այն:

- Տէրտէր էին ձեռնադրում:

- Զարմանք բան, առաջին անգամը չէր Թիֆլիսում ձեռնադրութիւն կատարւում. իւրաքանչիւր ժամաւոր իւր կեանքումը քանիցս

1 «Արձագանք», 1895, 11 հունիսի, Հմր 65:

ձեռնադրութիւն տեսած էր. հապա ի՞նչ իրարանցում էր որ տիրել էր:

- Այս այն իրարանցումն էր, որ այն օրը ձեռնադրում էին Մողնու «սարկաւագին»:

- Մողնու «սարկաւագ» կոչվողը ոչ այլ ոք էր, եթէ ոչ տասնհինգ տարի շարունակաբար իր քաղցր, բարձր և ներդաշնակ ձայնով ժողովրդի ջերմեռանդութիւնը դէպի եկեղեցին վառ պահող Յովհաննէս սարկաւագը:

Սարկաւագը ներկայ Տէր-Մուշեղն էր, որ, ինչպէս տեսանք, իր տիրացութեան օրից սիրելի էր եղած ժողովրդին:

Նոյն սերն ու համակրութիւնը հետզհետէ աւելացրեց դէպի ինքը Տէր-Մուշեղը, երբ իր սրտաթոթիռ ձայնին միացրեց և պարտաճանաչ քահանայի կոչումը:

Տէր-Մուշեղը ոչ միայն իր սրբազնագործական պաշտօնավարութեան մէջ աչքի ընկնող հոգևորականներից մէկն էր, նաև ժամանակի համեստ գործիչների թւումը չէր դադարում առանց ակնկալութեան աշխատելուց:

Բացվեցաւ Մարիամեան աղջկանց դպրոցը, տարիներով Տէր-Մուշեղն այնտեղի եռանդուն և անվարձ մշակներից մինն էր. նա այնտեղ ուսուցչութիւն էր անում: Նորից սկսեց շարունակուել դադար առած առաջին անդրանիկ աղջկանց Գայեանեան դպրոցը, որ բացուել էր տողերիս գրողի նախաձեռնութեամբ և տիկին Յովհաննիսեանի գործակցութեամբ. Տէր-Մուշեղն և այնտեղ ձրիապէս ուսուցանում էր: Յաջողութեամբ ընթանում էր Թիֆլիսի ներկայ Գայեանեան դպրոցը, նմանապէս հրաւիրուեց Տէր-Մուշեղն ուսուցչութեան, ուր պարապեց անվարձ, մի թէ, չգիտեմ, երկու տարի:

Ուսուցչական գործունէութեան հետ Տէր-Մուշեղը անընդատ պաշտօն է վարել և մեր այլևայլ հիմնարկութիւնների մէջ:

Օրին մէկը տեսնում էինք նրան կոնսիստորիայի ժրաջան անդամ, մի ժամանակ Ներսիսեան դպրանոցի հոգաբարձու, երբեմն որբոց և այրեաց խնամակալ անդամ, Թիֆլիսի եկեղեցիների գործակալ, ազդու և համոզիչ քարոզասաց և այլն և այլն:

Իւր ամեն գործառնութեանց մէջ Տէր-Մուշեղը ծառայել է առանց նշանաւոր վարձատրութեան և սրտեռանդն հաւատարմութեամբ:

Ասում ենք առանց նշանաւոր վարձատրութեան, որովհետև Տէր-Մուշեղը խոհեմութեամբ և համեստութեամբ արտաքին փայլերի ու փառքերի ետևից իւրովի չի ձգտել:

- Իսկ ի՞նչ է անում այսօր Տէր-Մուշեղը, հարցասիրական է բանասէր ընթերցողների համար. գուցե, նա զառամութեան հասակում՝ քաշուած ասպարիզից՝ համարում է օրերը անցավոր աշխարհիցս իր հրաժեշտը տալու:

- Ընդհակառակն, Տէր-Մուշեղը, թէև ալեզարդ, թէև 60 տարուան մոտ, բայց դեռ երիտասարդական կրակով խանդավառուած է: Մենք տեսնում ենք նրան այդ դերում, երբ նա եկեղեցու բեմից՝ երեսը ժողովրդին դարձրած՝ իր ցարդ պահպանած խրոխտ ձայնով ու քահանավայել պարկեշտութեամբ քարոզում է, աւանդում է ջերմեռանդ ժամաւորներին Աստուծոյ բանը՝ համեմած ազգային պարտականութեան սուրբ գաղափարով:

Միայն այսքանն է այսօր Տէր-Մուշեղի պիտանացիութիւնն և այլ ոչինչ. ուրիշ ասպարէզների համար նա անպէտք ցնցոտի է թշուառների մերկութիւնը մասամբ ծածկելու, ներուի մեզ այս համեստութիւնն անել:

Վերջին խօսքերս թող զարմանք չպատճառեն հեռաւոր ընթերցողներին. ասածս զուտ ճշմարտութիւն է, Տէր-Մուեղն այլևս պիտանացու չէ:

- Ինչու, ի՞նչ պատահեց:

- Շատ հասարակ բան. աւաղ, նա զրկուած է երկու աչքի լոյսից. նա կոյր է. նա օրերով տանը ծոյլ անգործի պէս ընկած է: Ընկած եմ ասում և ոչ նստած կամ քնած, որովհետև մի մարդ, որի կեանքը քառասուն տարի ժիր գործունէութիւն է եղել, և այսօր անողորմ բաղդի անագորոյն հարուածին է ենթարկուել, նրա քունը, չի գալ, նրա սիրտը չի հանգստանալ:

Եւ այդպէս իսկ է: Տէր-Մուշեղի քունը գիշերն էլ չի տանում, նա ողբում է իր եռանդալից և արդիւնավէտ անցեալը ու չի կարողանում մխիթարուել: Իսկ նրա միակ մխիթարիչը դարձեալ իր սիրած եկեղեցին է, որից չի կարողանում կտրուել:

Սրտամորմոք յենւում է Տէր-Մուշեղը մի մանուկի, մի ծառայի, մի իւրաւորի, մի օտարի ուսին և խարխափելով երեկոյ առաւօտ ժամ է յաճախում, երբեմնապէս էլ իրեն սիրող և յարգող, իրենից սիրուած ու յարգուած բարեկամներին ու ծխականներին է այցելում:

Ի՞նչ անի ողորմելին, կարող է չանել, սիրտ բեր, որ դիմանայ:

Ես հաւատացած եմ, որ Տէր-Մուշեղին տեսնող վերջին քարասրտի սիրտն ևս կըփափկի նրա ցաւալի վիճակին ի կարեկցութիւն:

Բայց միթէ ամենայն յոյս կտրուած է, միթէ Տէր-Մուշեղի համար խաւարած է իսպառ արեգակի կենսատու լոյսը:

- Եւ ոչ և այո: Չի խաւարած Տէր-Մուշեղի արևը, որովհետև հմուտ բժիշկներն իրենք յոյսերը չեն կտրում: Բժիշկների հետազո-

տութեամբ՝ Տէր-Մուշեղի աչքերը կըբացուեն, եթէ հնար լինի Եւրոպայի կամ Ռուսիայի ակնաբուժական հաստատութիւններին դիմել: Խաւարած է Տէր-Մուշեղի արևը, որովհետև իւր ամենաջերմ ցանկութեամբ հանդերձ նա չունի նիւթական միջոց անհրաժեշտ ծախքերը լցուցանել:

Ահա ներկայ մայիսին, ինչպէս վերն ասացինք, լրանում է Մողնու սուրբ Գէորգ եկեղեցու անձնադիր հովիւ Տէր-Մուշեղ Տէր-Ղևոնդեանի քահանայութեան քսանհինգ ամեակը, որի ծխականների մէջ՝ մեր լածով՝ մի միտք է յղացուել՝ իրենց անբաղդացած հոգևոր հօրն որդիաբար կարելոյն չափ նպաստելու՝ հնարաւորութիւն տալով տէրտէրին մի վերջին փորձ ևս անել աչքերն առողջացնելու համար:

Ուրախ ենք և սրտանց մասնակցում ենք. արժանի է մշակն վարձու իւրոյ»[1]:

1895 թ. հուլիսին իշխանուհի Սոֆիա Վասիլևնա Արղության-Երկայնաբազուկը, ցավոք սրտի հայտնելով իր հորեղբայր, գեներալ-մայոր իշխան Ալեքսանդր Հովհաննիսյան Արղության-Երկայնաբազուկի մահվան մասին, խնդրել է «շնորհ բերել հանգուցեալի ամբիծքին», որը, ինչպես նշվել է «Արձագանքում», կկատարվի հուլիսի 12-ին: Հուղարկավորությունը տեղի կունենա հուլիսի 13-ին դեպի Մողնու Սուրբ Գևորգ եկեղեցին և այնտեղից՝ Խոջիվանքի հանգստարան[2]:

Իսկ հուլիսի 30-ին եկեղեցում կատարվել է քաղաքային ճարտարապետ Կարլ Մելիք-Աղամյանի հոգեհանգիստը: Հուղարկավորությանը մասնակցել է մեծ բազմություն: Եկեղեցում արժ. Արսեն Բագրատունին քարոզ է խոսել՝ դրվատելով հանգուցյալին[3]:

1896 թ. փետրվարի 18-ին եկեղեցում ս. պատարագին առաջին անգամ հանդես է եկել քառաձայն երգեցիկ խումբը, որը կազմակերպել էր Մակար Եկմալյանը՝ երեցփոխ Բագրատ Ալիբեկյանի նախաձեռնությամբ: Վերջինս եկեղեցու երգեցիկ խումբ ունենալու մտադրությամբ մտահոգվել էր դեռևս շուրջ հինգ ամիս առաջ[4]:

1896 թ. փետրվարին եկեղեցին զուրկ է եղել ավագ քահանայից, որի կարևորության համար մի քանի անգամ միաբանությունն ու ծխականները դիմել են թեմական հոգևոր իշխանությանը[5]: Մարտ

[1] «Նոր Դար», 1895, 10 մայիսի, Հմր 80:

[2] «Արձագանք», 1895, 12 հուլիսի, Հմր 78:

[3] «Արձագանք», 1895, 2 օգոստոսի, Հմր 87:

[4] «Նոր Դար», 1896, 16 փետրվարի, Հմր 28:

[5] «Արձագանք», 1896, 23 փետրվարի, Հմր 22:



ամսին թեմի առաջնորդ Գևորգ եպիսկոպոսը Մողնու եկեղեցու ավագ քահանա է նշանակել Բեթղեհեմի եկեղեցու ծխատեր Տեր Գրիգոր Տեր-Բարսեղյանին: Մողնու եկեղեցու համար ավագ քահանա նշանակելու թույլտվությունը առաջնորդը ստացել էր Վեհափառ Հայրապետից՝ իրեն վերապահելով ընտրության իրավունքը[1]:

Մարտի 9-ին թեմի առաջնորդը սարկավագության վեց աստիճան է պարգևել Վարդան Տեր-Ղևոնդյանին, որը քահանա պետք է ձեռնադրվեր Մողնու եկեղեցու համար, իր հոր՝ Տեր Մուշեղ քահանայի փոխարեն: Վարդան Տեր-Ղևոնդյանը, սովորելով Թիֆլիսի 2-րդ գիմնազիոնում, 5-րդ դասարանից տեղափոխվել էր Գևորգյան ճեմարան և անցել նրա վեցդասյան դասընթացը՝ ստանալով պատշաճավոր վկայական[2]:

Ապրիլին նշվել է, որ եկեղեցում, բացի չորս միաբաններ՝ ժամօրհնող Սիմեոն քհյ. Չմշկյանից, Հովհաննես քհյ. Տեր-Գրիգորյանից, Մուշեղ քհյ. Տեր-Ղևոնդյանից և Սահակ քհյ. Սահակյանից, սպասավորել են նաև ավագ սարկավագ Հարություն Ճուղուրյանը, ժամկոչ Կարապետ Փափազյանը և դպիր Արտաշես Չոմարյանը[3]: Իսկ ծխականների թիվը հասել է մոտ 700-ի[4]:

Ապրիլի 7-ին եկեղեցում կատարվել է Իսահակ Մարտիրոսյան Ծովիանյանի հուղարկավորությունը: Նա Մողնու եկեղեցուն նվիրել էր 500 ռ.[5]:

Ապրիլի 14-ին եկեղեցում Սահակ քհյ. Սահակյանը կատարել է ս. պատարագ, որի ժամանակ ելույթ է ունեցել Եկմալյանի երգեցիկ խումբը: Ի դեպ, այդ տարվա հոկտեմբերին Կ. Պոլսից Թիֆլիս եկած Լևոն Չիլինգարյանը, որն ուներ երաժշտական կրթություն, դիմել է թեմի առաջնորդին՝ երաժշտական պաշտոն ստանալու համար: Վերջինս հանձնարարել է գործակալ Տեր Ղևոնդ քահանային որևէ եկեղեցում նրան նշանակելու համար: Գործակալը Լ. Չիլինգարյանին տարել է Մողնու եկեղեցի, որտեղ էլ եկեղեցու ավագերեցը պատվիրել է նրան միանալ երգեցիկ խմբին և երգել պատարագների ժամանակ: Սակայն Չիլինգարյանը, ունկնդրելով երգեցիկ խմբին, դժգոհել է երգերի ոչ ճիշտ կատարումից: Նա գրել է. «...ըն-

[1] «Նոր Դար», 1896, 21 մարտի, Հմր 51:

[2] «Նոր Դար», 1896, 12 մարտի, Հմր 45, նաև 14 մարտի, Հմր 47:

[3] «Արձագանք», 1896, 20 ապրիլի, Հմր 44:

[4] «Արձագանք», 1896, 7 ապրիլի, Հմր 39:

[5] «Արձագանք», 1896, 7 ապրիլի, Հմր 39, տես նաև «Նոր Դար», 1896, 9 ապրիլի, Հմր 61:

դունելով այդ հրաւէրն, հակառակ անձնական տկարութեանս, շաբաթ երեկոյ գնացի ու երգեցի «Լոյս զուարթ»-ն. քիչ մը վերջ նոյն երեկոյեան համբարձին «Սուրբ ես Տէրը» սկսաւ երգել պարոն մը, որը, ըստ ամենայն հաւանականութեան, անշուշտ երաժիշտ դասատուն ըլլալու էր և կամ կամաւոր դպիր մը. ...Կիւրակէ առաւօտ դարձեալ կերթամ եկեղեցի և կըհետևիմ եկեղեցական բոլոր երգեցողութեանց մինչև պատարագի վերջը. ի՞նչ եղանակ, շատ տարօրինակ գտայ... իբր նախանձախնդիր մասնագէտ իրաւունք ունիմ ես դիտել տալու, թէ տեղական եկեղեցական երգեցողութիւնն իւր այդ վիճակին մէջ հիմնական փոփոխութեան մը պէտք ունի»[1]:

Օգոստոսի 10-ին եկեղեցում կատարվել է իշխան Պողոս Փարսադանյան Երկայնաբազուկ-Արղությանի հոգեհանգիստը, իսկ թաղումը կատարվել է Սանահինում:

Սեպտեմբերի 13-ին թեմի առաջնորդ Գևորգ եպս. Սուրենյանի ուղեկցությամբ Թիֆլիս ժամանած գաղտնի խորհրդական Մասլովը և իշխան Ուխտովսկին այցելել են Մողնու եկեղեցին, որի գավթում է գտնվում Գայանյան օրիորդաց դպրոցի շինությունը, ապա ուղևորվել Մարիամյան-Հովնանյան դպրոցը, որի տեսուչ Փ. Վարդանյանը պ. Մասլովի խնդրանքով մանրամասն զեկուցել է ուսումնարանի գործունեության մասին[2]:

Հոկտեմբերի 13-ին նոր ձեռնադրված Տեր Հովհաննես Նավթիկյան նորընծա քահանան, ավարտելով իր քառասունքը, անդրանիկ սուրբ պատարագ է անցկացրել Մողնու եկեղեցում: Իսկ հաջորդ օրը՝ հոկտեմբերին 14-ի երեկոյան վախճանվել է Մուշեղ քհյ. Տեր-Ղևոնդյանը: Նախորդ տարի տոնվել էր նրա քահանայության 25-ամյակը, և Մողնու եկեղեցու ծխականները արժանիորեն էին գնահատել իրենց հովվին: Նա զանազան ժամանակներում եղել էր Ներսիսյան դպրանոցի հոգաբարձու, Թիֆլիսի եկեղեցիների բարեկարգիչ և կոնսիստորիայի անդամ: 1892 թ. կորցնելով աչքի լույսը՝ Տեր Մուշեղը բոլորովին հեռացել էր հասարակական գործունեությունից: Հանգուցյալը հայտնի էր հասարակությանը իբրև քարոզիչ և եկեղեցական երգեցողությանը քաջահմուտ անձնավորություն: Նրա երեք զավակներից կրտսերը՝ Վարդանը, որը սովորել էր Գևորգյան ճեմարանում, ձեռնադրվել էր սարկավագ նույն եկեղեցում[3]:

1 «Նոր Դար», 1896, 26 հոկտեմբերի, Հմր 189:
2 «Արձագանք», 1896, 18 սեպտեմբերի, Հմր 108:
3 «Արձագանք», 1896, 16 հոկտեմբերի, Հմր 120:



Տեր Մուշեղի մահվան առթիվ «Նոր Դարը» գրել է. «Հանգուցեալը Թիֆլիսի արժանաւոր և գործունեայ քահանաներից մէկն էր: Քահանայական ասպարիզում նա վարել է զանազան պաշտոններ, բայց նա առանձնապէս գրաւում էր ժողովրդին իւր ազդու քարոզներով և երգեցողութեամբ: Լաւ խօսելու ձիրք ունէր և հայերէն լեզուին էլ լաւ տիրում էր, յատկութիւններ, որոնք այնքան հազուագիւտ երևոյթներ են մեր քահանաներից մեծ մասի մէջ: Հանգուցեալը վերջին մի քանի տարին, թէպէտ մարմնով առողջ, բոլորովին կուրացել էր և յոյսը կտրել բժիշկների օգնութիւնից, ուստի և նա անկարող լինելով իւր քահանայական պաշտօնը կատարել, քաշուած կեանք էր վարում»[1]: Հանգուցյալի թաղումը կատարվել է հոկտեմբերի 18-ին: Իսկ նոյեմբերի 24-ին եկեղեցում կատարվել է հանգուցյալի մահվան քառասունքը:

Մուշեղ քահանայի մահից հետո, նրա ծխականները դիմել են թեմի առաջնորդին, որպեսզի Վարդան սարկավագին ձեռնադրեն քահանա և նշանակեն իր հոր տեղը[2]:

Նույն թվականի դեկտեմբերի 1-ին եկեղեցու ծխականները միաձայն երեցփոխ են ընտրել գեներալ-մայոր իշխան Արսեն Բեհբության: Ժողովի ժամանակ նախկին երեցփոխի երկամյա գործունեության հաշվետվությունը հետաձգվել է[3]: Բեհբությանը ընտրվել է հրաժարական տված Բագրատ Ալիբեկյանի փոխարեն:

1897 թ. հունվարին Ա. Երիցյանը գրել է, որ Մողնու եկեղեցու վերջին հիմնական վերանորոգությունը կատարվել է իր օրերում՝ ձեռամբ երեցփոխ Իսահակ Ծովիանյանի և աջակցությամբ Տեր Ղազար ավ. քահանայի ու բարեպաշտ ծխականների[4]:

Մարտի 23-ին թեմի առաջնորդ Գևորգ եպս. Սուրենյանի կարգադրությամբ եկեղեցու ծխականների ժողով է հրավիրվել՝ վերջ տալու հինգերորդ քահանա հրավիրելու հարցին: Վերջինս պետք է լիներ միևնույն ժամանակ հովիվը հանգուցյալ Տեր Մուշեղ քահանայի ծխականների: Ժողովը նախագահել է արժ. Ղևոնդ ավ. քհյ. Խարազյանը: Ներկա են եղել 112 ծխականներ: Ժողովի ընթացքում 94 ձայնով ընդդեմ 9-ի վճռվել է հրավիրել մի նոր քահանա: Քվեարկությամբ՝ 78 ձայնը ընդդեմ 1-ի, հանգուցյալ Տեր Մուշեղ քահանայի փոխարեն ընտրվել է նրա որդին՝ նույն եկեղեցու ավ. սարկավագ

1 «Նոր Դար», 1896, 17 հոկտեմբերի, Հմր 184:
2 «Նոր Դար», 1896, 25 հոկտեմբերի, Հմր 188:
3 «Արձագանք», 1896, 4 դեկտեմբերի, Հմր 141:
4 «Արձագանք», 1897, 29 հունվարի, Հմր 11:

Վարդան Տեր-Ղևոնդյանը: Այս մասին կազմել են արձանագրություններ, հոգևոր իշխանությանը ներկայացնելու համար: Ծխականները գոհ են մնացել ընտրությունից[1]:

Մարտի 28-ին նշվել է, որ Կրծանիս ուխտատեղի վանահայր, Թիֆլիսի Նորաշեն եկեղեցու ավագ քահանայի օգնական, ինչպես նաև Մողնու միաբան հանգուցյալ Տեր Մուշեղի ծուխը հովվող արժ. Սարգիս քհյ. Շիոյանին սինոդի վերջին կարգադրությամբ հրամայվել է անմիջապես գնալ Սղնախ քաղաքի մոտ գտնվող Անագա և Վաքիր գյուղերը հովվելու: Հիշյալ քահանան ձեռնադրված է եղել այդ գյուղերի համար[2]:

1897 թ. հունիսին եկեղեցու ժամցադրամի արկղը անօրինական բացելու կապակցությամբ հիշատակվել են Գրիգոր ավ. քհյ. Տեր-Բարսեղյանը, Սիմեոն քհյ. Չմշկյանը, Հովհաննես քհյ. Տեր-Գրիգորյանը և Սահակ քհյ. Սահակյանը[3]:

1897 թ. ապրիլի 26-ին երկարատև հիվանդությունից հետո վախճանվել է Թիֆլիսի հայտնի վաճառական Հովհաննես Խուդադյանը, որը մի փոքրիկ գումար էր հատկացրել Մողնու եկեղեցուն[4]: Հաջորդ տարի՝ 1898 թ. ապրիլի 26-ին եկեղեցում, ս. պատարագից հետո, հանգուցյալ Խուդադյանի համար հոգեհանգիստ է կատարվել նրա գերեզմանի վրա: Ինչպես հայտնի էր, հանգուցյալը մեծ կարողություն էր նվիրել է Կովկասի Հայոց Բարեգործական ընկերությանը[5]: Մեկ տարի հետո տեղի է ունեցել նաև հանգուցյալի մահարձանի բացումը, որը Բարեգործական ընկերությունը կառուցել էր տվել նրա գերեզմանի վրա՝ եկեղեցու բակի հետին մասում: Հոգեհանգստին ներկա են եղել Բարեգործական ընկ. խորհրդի անդամները և հասարակության փոքրիկ բազմություն[6]:

1898 թ. հոկտեմբերի 28-ին Մողնու եկեղեցու միաբան քահանաները հայտարարությամբ դիմել են թեմի վիճակային կոնսիստորիային. «Վերատեսուչն ժողովրդական դպրոցաց ի ժամ յանձման դպրոցական գոյից ըստ Բարձրագոյն հրամանի ի 26 մարտի տարւոյս ի թիւս այլ գոյից ընկալեալ է և զդպրոցական եռհարկեայ տունն, ուր զետեղեալ կար նախկին օրիորդաց Գայանեան դպրոցն, որպէս

1 «Նոր Դար», 1897, 26 մարտի, Հմր 51, տես նաև՝ «Մշակ», 1897, 25 մարտի, Հմր 35:
2 «Նոր Դար», 1897, 28 մարտի, Հմր 53:
3 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2428:
4 «Արձագանք», 1897, 27 ապրիլի, Հմր 47:
5 «Նոր Դար», 1898, 28 ապրիլի, Հմր 70:
6 «Մշակ», 1898, 28 ապրիլի, Հմր 69:



զուտ դպրոցական կալուած, սակայն ի փաստաթղթոց գտանելոյ ի կոնսիստորիայն և առ մեզ հասու եղաք, զի կալուածն այդ կառուցեալ է զուտ եկեղեցական դրամովք, ուստի և չէր պարտ յանձնել զայն վերատեսչի ժողովրդական դպրոցաց: Ըստ նախահաշուի կազմեալ ի 4 Մարտի 1874 ամի և ի 4 Յունիսի 1875 ամի, երիցփոխանն Մողնւոյ եկեղեցւոյ ըստ հրամանի կոնսիստորիայիդ ի 19 Սեպտեմբերի 1874 ամի թ. 1671, հիմնելոյ ի վերայ հրամանագրի Սինոդի Ս. Էջմիածնի յ7 Օգոստոսի նոյն ամի թ. 1748, ծախեալ է յեկեղեցական դրամոց ի պէտս Գայանեան օր. դպրոցի զ7906 ռ. 50 կոպ., 1728 ռ. 75 կոպ. և այլ և ի նոյն դրամոց ծախեալ է զ300 ր. վասն ֆլիգելի և արտաքնոցի, զոր կազմէ ընդ ամենայն 12.664 ռ. 17 կոպ.: Ծանուցանելով զայդմանէ վիճակային կոնսիստորիայիդ, խոնարհաբար խնդրիմք առնել զարժանին տնօրէնութիւն, վասն յետս պահանջելոյ ի վերատեսչէն ժողովրդական դպրոցաց զկալուածն Գայանեան օրիորդ. (նախկին) դպրոցի, որպէս զուտ եկեղեցական կալուած և յանձնել զայն ընդ եկեղեցական տեսչութեան:

Միաբանք Մողնւոյ եկեղեցւոյ՝ Գրիգոր աւագ քհյ. տէր Բարսեղեան, Սիմէոն քահանայ Չմշկեանց, Յովհաննէս քահանայ տէր Գրիգորեանց, Վարդան քհյ. տէր Ղևոնդեանց»[1]:

Նույն տարվա նոյեմբերի 18-ին կոնսիստորիան լսելով այս հայտարարությունը, հրամայել է. «Յանձն առնել փաստաբանի սորին պ. Սոկրատէսի Մելիք-Ադամեանց դատ բանալ ի պատշաճ դատարանի յաղագս յետս պահանջելոյ զտունն նախկին Գայիանեան դպրոցի և յանձնելոյ ի տեսչութեան երեցփոխանի Մողնւոյ Ս. Գէորգ եկեղեցւոյ Տփխիաց»:

Նոյեմբերի 1-ին Թիֆլիսի հայ հոգևորականների վարչության կողմից՝ իրենց գանձարանին նվիրաբերողների հիշատակին Մողնու եկեղեցում կատարվել է հոգեհանգիստ: Դրանով վարչության անդամներն ու քահանաները ամեն տարի իրենց երախտագիտությունն են հայտնել բարերարների հիշատակին[2]:

1899 թ. հունվարի 17-ին Վեհափառ կաթողիկոսը այցելել է Մողնու Սուրբ Գևորգ եկեղեցին, որտեղ, չնայելով իր տկարությանը, քարոզ է խոսել: Եկեղեցում հավաքվել է մեծ բազմություն[3]:

Փետրվարի 9-ին Գրիգոր ավ. քհյ. Տեր-Բարսեղյանը պատասխանելով քաղաքի Ա. մասի գործակալ Զաքարիա քհյ. Զարդեդյա-

1 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2445, թ. 1:
2 «Մշակ», 1898, 4 նոյեմբերի, Հմր 200:
3 «Նոր Դար», 1899, 19 հունվարի, Հմր 9:

նին, գրել է. «Ըստ գրութեան Ձերդ բարեկրօնութեան յ8-էն ամսոյս № 91. ունիմ յայտնել, թէ շինութիւն նախկին Գայանեան օրիորդաց դպրոցի, որ ի գաւթի եկեղեցւոյ մերոյ, գտանի ընդ սահմանօք. յարևելեան կողմն են կալուածք Արտեմայ Ֆաղէիչ Այվազեանց և Շաքարայ Ումիկեանց. յարևմտեան կողմն է ընդարձակ գաւիթ Մողնւոյ Սուրբ Գէորգ եկեղեցւոյ, ի հարաւային կողմն է նոյնպէս գաւիթ և շինութիւն յիշեալ եկեղեցւոյ. իսկ ի հիւսիսային կողմն խուլ փողոց և ճանապարհ, զորմէ յայտ առնիմ Ձեզ ի գիտութիւն»[1]:

Սեպտեմբերի 11-ին եկեղեցում կատարվել է իշխան Պյոտր Աբեսոլոմովիչ Բեհբուդովի հոգեհանգիստը, իսկ հուղարկավորությունը կայացել է Խոջիվանքի գերեզմանատանը:

Հոկտեմբերի 29-ին եկեղեցու երեցփոխան, գեներալ-մայոր, իշխան Արսեն Բեհբուդյանը հայտարարություն է ուղղել Վրաստանի Հայոց վիճակային կոնսիստորիային, որում գրել է. «Նորին Բարձր Սրբազնութիւն Վրաստանի և Իմէրէթի թեմակալ առաջնորդ Գէորգ արքեպիսկոպոս Սուրենեանցի երեցփոխանների հրահանգութեան համար որոշած կանոնների երրորդ և ութերորդ յօդուածների հիման վրայ, ներկայ թուականիս բերանացի կերպով յայտնուած է ամ. գործակալ բարեկրօն Ջ. քահ. Ջարթեղէանցին, որ Մողնւոյ բարեկրօն Յովհաննէս քահանայ Տէր-Գրիգորեանցը 1899 թուի օգոստոսի 22-ին վախճանուած հանգուցեալ տիկին Խօջամինաեանցի զառը դեռ չէ վերադարձրել եկեղեցուն՝ համաձայն այն կրկնվող հրամանների (1899 թ. 10 մարտի №943, 1899 թ. 25 յունուարի №254), որ Ատեանդ պատուիրում է երեցփոխաններին և քահանաներին: Ի պատասխանի իմ բերանացի յայտարարութեան մէկին հոկտեմբերի 1899 թ. № 764 և գործակալից հետևեալ պատասխանն եմ ստանում «թէ Տէր Յովհաննէս քահ. Տէր Գրիգորեանց եկեղեցւոյդ ոչ կամի յանձնել զպահանջեալդ ձեր ի նմանէ շուրջառուն (շուրջառացու զառը) ասելով թէ, սեփանակութիւն է այն ինքեան և թէ պայծառափայլութիւնդ կարէ դիմել վիճակային Ատենին զայսմանէ»: Այս խնդրի լուսաբանութեան համար, անհրաժեշտ եմ համարում ի գիտութիւն և ի տնօրէնութիւն Ատենիդ, հետևեալ փաստերը կրկնել. 1. 1896 թ. երբ ես երեցփոխանական պաշտօնի մտայ, ինձ յանձնուած իրեղէնաց մատենի մէջ նախկին գործակալ հայր Խարազեանցի ստորագրութեամբ երկու հատ շուրջառացու զառ՝ մեկը Լօռու-Մելիքեանցի, իսկ միւսը Տէրեանցի, մնում են տէր Յովհաննէսի մօտ, և գօրս չէ վերադարձրել եկեղեցուն: 2. Որ այլ գործի առթիւ այդ մասին կրկնել եմ

[1] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2445, թ. 17:



ա. մասի գործակալին ի պատասխանի նրա № 249 թղթի ի քսանն հոկտեմբերի 1898 թ. № 37 թէ յիշեալ Յովհաննէս քահանան զառերը դեռևս չէ վերադարձրել: 3. Ատենիդ շրջաբերական կանոնի հիման վրայ ներկայ 1899 թ. յունուարի 27-ին № 55 և գործակալը գրում է – Առնել Մողնւոյ աւագ քահանայ և կոնսիստորիայիդ անդամ արժ. Գրիգոր քահանայից հանգուցեալ բժիշկ Ալեքսանդր Վահրամեանցի զառը և գրել ի թիւս եկեղեցւոյ զարդուց, որպէս սեփականութիւն: Ուրեմն զառ կոչուածները ատեանը չէ ճանաչում քահանայից սեփականութիւն, այլ եկեղեցուն պատկանեալք: 4. Ոչ թէ միայն ներկայ վիճակային Ատեանը, այլև 1889 թ. 10 մարտի № 943 նոյն մտօք շրջաբերական հրաման ունի հրապարակուած (անշուշտ Յովհաննէս քահ. ևս ստորագրած կլինի) որով պատուիրած է երեցփոխաններին ստանալ ննջեցեալների վրայ ձգած զառ կոչուած կտորները և համարել այն եկեղեցւոյ սեփականութիւն: 5. Բարեկրօն Յովհաննէս քահանային այս հրամանը յայտնի է եղել սրանից առաջ ևս, որ նա Մողնւոյ երեցփոխ 1892 թ. մատենի Ժ. յօդուածը ի թիւս միաբանից ստիպուած ստորագրել է. «Զառ՝ երեսքող կոչուած կտորները ընդհանուրի հաւանութեամբ որոշուեց այսուհետև եկեղեցւոյ սեփականութիւն համարել (ոչ ոք իրաւունք չպիտի համարէ եկեղեցւոյ գոյքն որևէ պատճառով սեփականել) մանաւանդ որ այդ մասին 1889 թ. մարտի 10-ին №943 կոնսիստորիայի կարգադրութիւնը ևս նոյնն է հրամայում»: Այս տողերի տակ ստորագրուած է իր սեփական ձեռքով: 6. Նախկին հայր գործակալ Խարազեանցը ինձ գրած մի պաշտօնական թղթից (1898 թ. 14 յունուարի №1) երևում է, որ Տէր Յովհաննէս քահանան գիտէ նաև եկեղեցւոյ շուրջառները վաճառել յօգուտ իւր: Այդ թղթում հայր գործակալը գրում է. «Դեկտեմբեր ամսին անցեալ 1897 թ. գնալով Կուկիոյ Նորաշէն եկեղեցին տեսայ ձեր եկեղեցւոյ շուրջառներից մէկը, որը միշտ ծածկում էր տէր Յովհաննէս քահանայ Տէր Գրիգորեանցը, հարց ու փորձից երևաց, որ այն շուրջառը ծախել է Տէր Յովհաննէսը այն եկեղեցու Խաչատուր աւագ քահանայի վրայ 20 մանէթով...»[1]:

1900 թ. հունիսին մամուլում գրվել է, որ մոտ անցյալում եկեղեցուց, երեկոյան ժամերգության ժամանակ գողացվել է մի արծաթյա խաչ, որը տարել, թողել են Ջգրաշենի եկեղեցու բեմի վրա, իսկ այնտեղից վերցրել մի ավելի մեծ արծաթյա խաչ[2]:

[1] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 9727, թ. 12:

[2] «Նոր Դար», 1900, 3 հունիսի, Հմր 102:

Օգոստոսի 29-ին՝ Գրիգոր Ջանշյանի մահվան քառասունքի օրը, եկեղեցում տեղի է ունեցել հանգուցյալի հիշատակին նվիրված հոգեհանգիստ, որին ներկա է եղել մեծ բազմություն հայ և ռուսաց հասարակությունից, ինչպես նաև մամուլի ներկայացուցիչներ[1]: Իսկ 1901 թ. հունվարի 21-ին՝ նրա մահվան կիսամյակի առթիվ եկեղեցում կատարվել է հոգեհանգիստ, որին ներկա է եղել Վեհափառ կաթողիկոսը: Եկեղեցին լեցուն է եղել բազմությամբ[2]:

Այդ տարի եկեղեցու միաբան Սահակ քհյ. Սահակյանը մի քանի անգամ գրավոր և բանավոր դիմել էր նախ հայր գործակալին, այնուհետև կոնսիստորիային՝ այն մասին, որ 1898-1899 թթ. նա չի ստացել եկեղեցու գանձարանից քառասնից արդյունքը: Իր բոլոր հարցումներին Մողնու եկեղեցու ավագ քահանան և գանձապահը դրական պատասխան չեն տվել: Այդ առիթով եկեղեցու միաբանները պատասխանել են եկեղեցիների գործակալ բարեկրոն Զաքարիա քհյ. Զարդեղյանին հետևյալ բացատրությամբ.

«Առ գրութիւն Ձեր ի 18 սեպտ. սոյն ամի № 762 Տէր-Սահակին հասանելի քառասնից հասոյթքի մասին, կարող ենք յայտնել Ձեզ, որ 1899 և 1900 թ. հաշիւները վաղուց մաքրած են, իսկ նորա մասը պահուած է, բայց յանձնել չենք կարող ոչ Ձեզ և ոչ էլ իրեն, մինչև որ քառասնից մատենի միջից չի ջնջի իր ձեռքով պատշաճաւոր ստորագրութեամբ այն բոլոր անտեղի մակագրութիւնները, որը նա թոյլ է տուել իրեն գրելու վերոյիշեալ քառասնից մատենի մէջ: Ուստի երբ կը կամենաք գալ, յայտնէք մեզ և միևնոյն ժամանակ հրաւիրեցէք բողոքողին, և երբ նա կը կատարի մեր պահանջը, իր հասանելիքը իսկոյն կը յանձնենք իրեն նոյն իսկ Ձեր ներկայութեամբ:

Միաբանք Մողնույ՝ Գրիգոր աւագ քհնյ. Տէր Բարսեղեանց, Յովհաննէս քհյ. Տէր Գրիգորեանց, Վարդան քահանայ Տէր-Ղևոնդեանց: 11 հոկտեմբերի. 1900 ամի, Տփխիս»[3]:

1901 թ. եկեղեցին ունեցել է երկհարկանի տուն՝ եկեղեցու պարսպից ներս և 9 սենյակ՝ ուխտավորների համար: Եկեղեցու մայր գումարը արծաթով կազմել է 3794 ռ. 68 կ., մուտքը կազմել է 3345 ռ. 69 կ., իսկ ելքը՝ 3287 ռ. 65 կ.[4]:

Փետրվարի 4-ին, եկեղեցում կատարվել է հոգեհանգիստ Դարիա Զաքարյան Միրզոյանի հիշատակին՝ նրա մահվան տարելիցի

1 «Մշակ», 1900, 30 օգոստոսի, Հմր 161:

2 «Մշակ», 1901, 23 հունվարի, Հմր 15:

3 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3071:

4 ՀԱԱ, ֆ. 56, ց. 14, գ. 205, թ. 181:



առիթով: Հոգեհանգստին ներկա է եղել նաև Ամենայն Հայոց Կաթողիկոսը[1]:

Հուլիսի 23-ին եկեղեցու երեցփոխան գեներալ-մայոր իշխան Ա. Բեհբության, համաձայն վիճակային կոնսիստորիայի հուլիսի 20-ի հրամանի, ուղարկել է 1901 թ. եկեղեցու ելքի և մուտքի հաշվեմատյանը[2]: Նա դեկտեմբերի 21-ին դիմել է կոնսիստորիային հետևյալ հայտարարությամբ. «Ներկայ 1901 թ. Մողնույ Սուրբ Գէորգ եկեղեցւոյ ելից և մտից հաշուէմատեանը կորել է: Սոյն յայտարարութեամբ դիմելով Վիճակային Ատենին, խնդրում եմ 1. Նոր մատեան շնորհել ինձ, որոյ համար ուղարկում եմ երկու րուբլի և 2. ստորագրել տալ հայր գործակալին մատեանի ծախուց բաժնում՝ անցեալ մատեանների գինը – ընդամէնը տասն րուբլի»[3]:

Դեկտեմբերի 26-ին Վիճակային կոնսիստորիան հարցում է ուղարկել եկեղեցու երեցփոխին և պահանջել մանրամասն բացատրություն մատյանի կորստյան մասին: Պատասխանը ստացվել է 1902 թ. հունվարի 21-ին[4]. «Ի պատասխանի Կոնսիստորիայիդ 1901 թ. 26-ն դեկտ. № 5658 պատիւ ունիմ յայտնել – 1901 թ. նոյեմբեր ամսի 27-ին 1. եկեղեցւոյ ծախուց և մտից հաշուէմատեանը՝ ռոճիկներ բաժանելիս չգիտեմ եկեղեցումն եմ թողել, թէ ճանապարհին վայր ձգել. 2. կորած մատեանը ոչ թէ բնագիր է, այլ՝ <u>սևագիր</u>, որովհետև ա. լուսագին արդիւնքները լուսագնի մատենից է արտագրւում բ. մոմի արդիւնքը մատեան է մուծւում՝ այդ նպատակի համար սահմանուած բնագիր մատեանից, գ. խանութի արդիւնքը գրւում է մուտք համաձայն դաշնագրի, դ. ծախուց յոդուածները վերաբերում են կամ կոնսիստորիայի հրամաններին և կամ ժամակոչի արած մանր ծախսերին, որոնց համար նոյնպէս <u>մասնաւոր</u> գրքոյկ կայ:

Այսպէս թէ՛ մուտքը և թէ՛ ծախքը վերոյիշեալ մատեաններից արտագրւում է հաշուէմատեանի մէջ մուտք կամ ծախք. ե. իսկ ինչ վերաբերում է այն խնդրին, թէ կոնսիստորիայում ևս տպագրուած մատեան չկայ, ես կարծում եմ որ Ատեանը կարող է հասարակ գծած թղթից ևս մի չափաբերական մատեան կազմել, ժապաւինել և տալ ի գործածութեան»:

1902 թ. եկեղեցին ունեցել է երկհարկանի տուն՝ եկեղեցու պարսպին կից, և 9 սենյակ՝ ուխտավորների համար: Մայր գումարը կազ-

1 «Մշակ», 1901, 6 փետրվարի, Հմր 27:

2 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3112, թ. 6:

3 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2475, թ. 1:

4 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2475, թ. 4:

մել է 3852 ռ. 72 կոպ., անշարժ գույքից ստացված եկամուտները՝ 2840 ռ. 92 կ., ծախսը կազմել է 2364 ռ. 48 կոպ.[1]:

Նույն թվականի մարտին եկեղեցու երեցփոխ իշխան Ա. Բեհբությանը ներկայացրել է եկեղեցու ելքի և մուտքի համառոտ հաշիվը, որից երևում է՝ մուտքը եղել է 3.917 ռ. 19 կոպ., իսկ ծախքը՝ 3.287 ռ. 65 կոպ.: Այդպիսով զուտ արդյունքը կազմել է 629 ռ. 51 կոպ.: Ծախքի գումարների մեջ հաշված է նաև 150 ռ., որը իբրև առձեռն դրամ գտնվել է բանկում[2]:

1903 թ. հունվարի 29-ին Թիֆլիսի Ա. մասի գործակալ Գրիգորիս քհյ. Երզնկյանը կազմել է եկեղեցու 1902 թ. տարեգրությունը[3]. «Չափաբերական մատեաններում նկատւում են թերութիւններ - 1) Ծնելոց արձանագրութիւնները խառն են - յետ և յառաջ. 2) ջնջածներ կան բոլոր մատեաններում, բայց և ոչ մի տեղ ծանօթութիւն չկայ. Կարևոր է ծանօթութիւն տալ. 3) արձանագրութիւնները չեն վաւերացրած իւրաքանչիւր ամսւայ վերջ. 4) չեն գրուած խոստովանողների անուններն ու ազգանունները: Եկեղեցին ունի մայր մատեան իրեղենաց: Գնուած է բացակայութեանց մատեան, միայն հայր աւագ քահանայն չէ կարգադրել բացակայութիւններն արձանագրել. չկայ միայն նկատողութեանց մատեան: Քահանայից և կանանց դասում դրուած աթոռները վերցնել տուի: Եկեղեցական արխիւ ևս չի պահւում և չի էլ աշխատւում այդ պակասութեան պահանջը իրագործել: Միաբանութեան կազմում են հետևեալ անձինք. 1) Գրիգոր աւագ քահ. Տէր-Բարսեղեանցն՝ Ներսիսեան դպրանոցն աւարտած. 2) Սիմէօն աւ. ք. Չմշկեանց՝ ուսած Ներսիսեան դպրանոցումն. 3) Յովհաննէս քահ. Տէր-Գրիգորեանց – եղած գիմնազիօնի և Ներսիսեան դպրանոցի առաջին դասարաններում. 4) Վարդան քահ. Տէր-Ղևոնդեանց – դուրս եկած գիմնազիօնի 4-րդ դասարանից. մտած է Էջմիածնի Ճեմարանի 5-րդ դասարանը և այնտեղից էլ դուրս եկած: 5) Արսէն աւագ քահ. Բագրատունի – ուսած Էջմիածնի Ժառանգաւորաց դպրոցում. ազատ ունկնդիր եղած Պետերբուրգի համալսարանում. 6) Սահակ քահ. Սահակեանցն – աւարտած Ներսիսեան դպրանոցն և ուսումն շարունակած Գերմանիայում:

Տիրացուները սոքա են՝

1) Յակովբ սարկաւագ Պարոնեանց – եղած Ներսիսեան դպրանոցի առաջին դասարաններում – շտատը Մուխրանի վերայ.

[1] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3146, թ. 2:

[2] «Մշակ», 1902, 26 մարտի, Հմր 66:

[3] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 327, թ. 25 շրջ.:



2) Աւետիք Պապովեանց – Ներսիսեան դպրանոցի 4-րդ դասարանից դուրս եկած. սա և է լուսարար եկեղեցումն, շտատը Ծղնէթի վերայ.

3) Նիկողայոս Բաւէեանց – դուրս եկած Երևանի թեմական դպրանոցի 4-րդ դասարանից.

4) Գրիգոր Սագինեանց՝ դուրս եկած Էջմիածնի Ճեմարանի 1-ին դասարանից:

Եկեղեցին բաւական մաքուր է երևում: Մի տարօրինակ բան է՝ որ այստեղի աւագ քահանայն հաշւում է և Բեթղէհէմի աւագ քահանայ – ծուխը ունենալով վերջինույս եկեղեցու անուամբ: Այստեղ ևս կայ դեռ հերթապահութիւն: Քահանաներից առանց հերթապահութեան յաճախում են մշտապէս հ. հ. Տեր-Բարսեղեանցն և Չմշկեանց – թէև սոցանում ևս կան բացառութիւններ, միւսները շատ թոյլ են վերաբերւում դէպի ամենօրեայ ժամերգութիւնները. ամենից շատ բացակայում է հ. տէր Սահակ Սահակեանցն, յետոյ հայր Վարդան Տէր-Ղևոնդեանցը և ապա հ. տէր Յովհաննէս Տէր Գրիգորեանցն. թերևս հ. հ. Սահակեանցի և Տէր-Ղևոնդեանցի բացակայութեանց պատճառը դասերը լինեն, բայց այդ դեռ իրաւունք չի տալիս մեր գլխաւոր պարտականութիւնը երկրորդական տեղը դնելու: Եկեղեցին՝ տիրացուաց ժամկոչաց գանձանակը վերջացնելով՝ վճարում է նրանց ռոճիկ եկեղեցական հասույթներից. գովելի կարգադրութիւն: Եկեղեցին ունի շատ կալուածքներ - 1) 2 խանութ, մէկը վերնայարկով – ծածկած բազազխանում – ամսական 43 ռուբ. . այժմ փակուած հին լինելու պատճառով. 2) 3 սենեակ իրանց նկուղներով ժամկոչների համար: Հիւսիս արևելեան կողմն է և հին միջնակարգ Գայանեան Օրիորդաց դպրոցի պատուական շինութիւնը, ուր զետեղւում է այժմեան համանուն տարրական ուսումնարանը. այդ շինութիւնը գտնւում է ուսումնարանական դիրեկցիայի ձեռքը»:

Միևնույն ժամանակ նշվել է, որ եկեղեցին ունեցել է՝ 1. մի շինություն եկեղեցու գավթում, եռահարկ, հատկացրած Գայանյան օրիորդաց դպրոցին, գրավված արքունիքի կողմից, 2. մի երկհարկանի տուն եկեղեցու գավթում, բաղկացած 4 սենյակներից և մի ներքնահարկից, 3. երկու կրպակ Մեծ Բազազխանայում, Թիֆլիս քաղաքի 7-րդ մասում № 33[1]:

Նույն տարվա ապրիլի 9-ին կազմվել է Մողնու եկեղեցու Սահակ քհյ. Սահակյանի ծառայության ցուցակը[2], ըստ որի՝ Սահակ

[1] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3909, մաս 1, թ. 6:

[2] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 883, թ. 15:

Ավագյան Սահակյան – աշխարհական կոչման, ծնվել է 15 դեկտեմբերի 1853 թ.: Սկզբնական կրթությունը ստացել է Հին Նախիջևանի գավառական արքունական դպրոցում և այն ավարտել է 1870 թ.: 1879 թ. ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան Հոգևոր ուսումնարանը: Գերմանական համալսարաններում կատարելագործվելու նպատակով 1879-1883 թթ. ուսումնասիրել է աստվածաբանական և մանկավարժական գիտությունները: 1884 թ. ընդունվել է հոգևոր կոչման մեջ Մողնու Սուրբ Գևորգ եկեղեցու համար: 1884 թ. սեպտեմբերի 9-ին Թիֆլիսում ստացել է չորս աստիճան: 1885 թ. օգոստոսի 22-ին ընդունել է ավագ սարկավագություն: 1885 թ. օգոստոսի 28-ին ձեռնադրվել է քահանա Մողնու Սուրբ Գևորգ եկեղեցու համար: 1888-89 թթ. վարել է Թիֆլիսի Հայոց կոնսիստորիայի անդամի պաշտոնը: 1888-90 թթ. եղել է Մողնու եկեղեցու երիցփոխանի պաշտոնակատարը: 1894-95 թթ. եղել է Թիֆլիսում հիմնված քահանաների ընծայարանում որպես կրոնուսույց՝ ձրի: 1881-82 թթ. Սաքսոնիայի Լայպցիգ քաղաքի հայտնի մանկավարժ Թուիսկոն Ցիլլերի վարժարանում եղել է դասատու, որի համար ունի վկայական: 1877-79 թթ. Գայանյան օրիորդաց դպրոցում դասավանդել է հայոց լեզու, հայոց պատմություն և Հայաստանի աշխարհագրություն: 1883-84 թթ. եղել է Ներսիսյան դպրոցում որպես կրոնի ուսուցիչ: 1886-90 թթ. կրոնուսույց է եղել Գայանյան օրիորդաց դպրոցում, 1893-96 թթ. նույն դպրոցում՝ ավագ ուսուցիչ և կրոնի դասատու: 1894-1903 թթ. կրոն է դասավանդել Ներսիսյան դպրանոցի բարձր դասարաններում, իսկ 1900-03 թթ.՝ Թիֆլիսի Առևտրական դպրոցում: 1894 թ. սեպտեմբերի 25-ին Մկրտիչ Ա. կաթողիկոսից պարգևատրվել է խաչով, իսկ 1897 թ. հունիսի 20-ին՝ կամիլավկայով: 1895 թ. սեպտեմբերի 30-ին Գևորգ արք. Սուրենյանից պարգևատրվել է կապույտ խաչը փիլոնով: Ունի գրական աշխատություններ աշակերտների համար՝ «դասատետր կրօնի. 1, 2, 3 տարի», «Սրբազան պատմութիւն Հին և Նոր ուխտի» և «Գործք Առաքելոց»: Ուսուցիչների համար՝ «Դասագիրք կրօնի Հին և Նոր ուխտի, ուսուցումն քրիստոնեական կրօնի Գ. և Ե. հատոր: 1888 թ. «Արարատում» հրատարակվել է նրա «Անառակ որդին»: Ներսիսյան հոգևոր դպրոցի հոգաբարձությունից իր ավանդած կրոնի դասերի համար ստացել է շնորհակալական թուղթ: Ունի վեց զավակ՝ Զարուհի - 17 տ., Լևոն – 15 տ., Հռիփսիմե – 11 տ., Ռուբեն – 10 տ., Արամ – 7 տ. և Նազելի - 5 տ.:



Մայիսի 5-ին ներկայացվել են եկեղեցու հետևյալ քահանաները[1]. Գրիգոր ավ. քհյ. Տեր-Բարսեղյան, Սիմոն ավ. քհյ. Չմշկյան, Հովհաննես քհյ. Տեր-Գրիգորյան, Արսեն ավ. քհյ. Բագրատունի, Սահակ քհյ. Սահակյան, Վարդան քհյ. Տեր-Ղևոնդյան:

Մայիսի 20-ին Մարիամյան-Հովնանյան ուսումնարանում, թեմի առաջնորդ Գևորգ արք. Սուրենյանի նախագահությամբ, տեղի է ունեցել Վանքի, Մողնու և Բեթղեհեմի եկեղեցիների պատգամավորների ժողովը՝ այդ ուսումնարանի համար հոգաբարձուներ ընտրելու համար: Ձայների մեծամասնությամբ Մողնու եկեղեցուց ընտրվել են Ս. Անանյանը, իշխան Ա. Բեհբությանը, Ա. Երեցփոխյանը և բժ. Կուկուջանյանը[2]:

1903 թ. ցարական իշխանությունների կողմից Վրաստանում բռնագրավվել են եկեղեցապատկան շատ կալվածքներ: Այսպես, հոկտեմբերի 2-ին եկեղեցու երեցփոխ Ա. Բեհբությանը այդ առթիվ հայտարարություն է հղել քաղաքի Ա. մասի գործակալին. «Ի պատասխանի Ձեր գրութեան յ30 Սեպտեմբերի 1903 թ. № 656 հարկ իմ համարում պատասխանել - Տփխիսի Մողնույ Սուրբ Գէորգ եկեղեցին ունի 1. մի հատ կրպակ Բազազխանայ կոչուած քաղաքամասում և 2. 3797 ր. գումար (ա. մի հատ տոմս Տփխիսի փոխատու խնայողութեան № 13477 ի գումարի 147 րուբ. բ. նոյն № 72304 ի գումարի 3000 ր. գ. նոյն № 72305 ի գումարի 150 րուբ. և դ. արքունի տոմս № 3081 ի գումարի 500 րուբ) որոնցից առաջինի վերաբերութեամբ ոստիկանութիւնն արդէն արգելք է դրել առանց իմ գիտութեան. իսկ տոմսակներն փոստայով ուղարկել եմ Նորին Վեհափառութեան և ունիմ փոստից անդորրագիր ի 10 սեպտեմբերի 1903 ամի № 393: Երեցփոխան Ա. Բէհբութեանց»[3]:

1904 թ. սկզբին գիմնազիոնի հայ պատանիներից կազմակերպվել է քառաձայն երգեցիկ խումբ՝ Ներսեսյան դպրոցավարտ Լ. Մամիկոնյանի գլխավորությամբ: Նշվել է, որ խումբը ամեն կիրակի պատարագին մշտապես երգելու է Մողնու եկեղեցում[4]:

Հունվարի 25-ին եկեղեցում կայացել է նոր երեցփոխի ընտրություն:

Հունիսի 15-ին հիշատակվում են եկեղեցու հետևյալ քահանաները[5]. Գրիգոր ավ. քհյ. Տեր-Բարսեղյան՝ ունեցել է 109 տուն ժողո-

[1] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 335, թ. 115-116:
[2] «Մշակ», 1903, 23 մայիսի, Հմր 108:
[3] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2492, թ. 72:
[4] «Մշակ», 1904, 12 փետրվարի, Հմր 25:
[5] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 331, թ. 74, տես նաև՝ ֆ. 53, ց. 1, գ. 743, թ. 9:

վուրդ, Սիմեոն ավ. քհյ. Չմշկյան – 84 տուն, Հովհաննես քհյ. Տեր-Գրիգորյան – 100 տ., Սահակ քհյ. Սահակյան – 164 տ., Վարդան քհյ. Տեր-Ղևոնդյան – 160 տ., նշված է նաև Արսեն ավ. քհյ. Բագրատունին – 100 տ., որը միաժամանակ հանդիսացել է նաև Թիֆլիսի Կուսանաց անապատի քահանան:

1905 թ. մարտի 13-ին Մողնու եկեղեցում, պատարագից հետո կատարվել է Քրիստափոր Միքայելյանի հիշատակին նվիրված հոգեհանգիստ: Եկեղեցու ամբողջ բակը լցված է եղել հասարակության խուռն բազմությամբ, եղել են մտավորականներ, մամուլի, առևտրական, արհեստավոր և բանվոր դասակարգերի, ուսանող երիտասարդության ներկայացուցիչներ և այլն: Հոգեհանգստից հետո Տ. Հովհաննիսյանը և Ա. Սահակյանը ճառ են արտասանել, որոնց մեջ հանգուցյալին բնութագրել են իբրև մարդ, գաղափարական գործիչ, ընկեր և ցույց տվել, թե ինչպիսի քնքուշ, կարեկից, ներողամիտ, մարդասեր և ընկերասեր հատկություններով էր օժտված նա և որքան խոր և համոզված կերպով անձնատուր էր եղել գաղափարական գործունեության, որքան անփոխարինելի է նրա կորուստը հայ ժողովրդի համար: Ոգևորված ճառեր են ասել և մի ուսուցիչ ու մի քանի այլ անձինք[1]:

Սեպտեմբերի 4-ին Մողնու եկեղեցում կատարվել են հոգաբարձական ընտրություններ, որի ժամանակ 600-ից ավելի ծխականներից ներկա է եղել միայն 67 մարդ: Գայանյան դպրոցի հոգաբարձու են ընտրվել՝ բժ. Թադևոսյանը - 58 ձայնով, Հ. Առաքելյանը - 53 ձայնով, բժ. Լ. Քալանթարյանը - 52 ձայնով և Պ. Քալանթարյանը - 48 ձայնով. և անձնափոխանորդներ՝ Ռ. Հովհաննիսյանը - 37 ձայնով, Ն. Մատինյանը - 35 ձայնով[2]:

1906 թ. «Մշակը» գրել է. «Դեկտեմբերի 31-ին Մողնու եկեղեցում կայացաւ ծխականների ընդհանուր ժողով, նախագահութեամբ Հ. Առաքելեանի, ընտրելու համար 3 պատգամաւորներ, որոնք պէտք է մասնակցեն Թիֆլիսի միւս եկեղեցիների պատգամաւորների հետ այն 4 ներկայացուցիչների ընտրութեան, որոնք պէտք է մտնեն Կովկասի փոխարքայի խորհրդին կից կայանալի հայ-թուրքական խորհրդակցութեան կազմի մէջ»[3]: Ընտրվել են Դոլուխանյանը, Ն. Գեոկչայանը և Ե. Ծատուրյանը:

1 «Մշակ», 1905, 15 մարտի, Հմր 45:
2 «Արշալույս», 1905, 6 սեպտեմբերի, Հմր 6:
3 «Մշակ», 1906, 1 հունվարի, Հմր 1:



Հունվարի 29-ին եկեղեցում կատարվել է հանդիսավոր հոգեհանգիստ երգչուհի օրիորդ Պապայանի հիշատակին, որին ներկա են եղել մեծ բազմություն և զանազան հիմնարկություններից ներկայացուցիչներ:

Ապրիլի 23-ին տեղի է ունեցել եկեղեցու ծխականների ժողով՝ Ստեփան Լիսիցյանի նախագահությամբ: Քննարկվել են ծխական հոգաբարձության գործունեությունը, եկեղեցու և դպրոցի նախահաշիվը, ծխական տուրքի սահմանումը, Գայանյան դպրոցի շինության հարցը և այլն: Մայիսի 28-ին կայացել է եկեղեցու ծխականների ընդհանուր ժողովի շարունակությունը: Ներկա են եղել մոտ 20 ծխականներ: Ժողովը քննել և ավարտել է այն հարցերը, որոնք մտցրված էին նախորդ ժողովի օրակարգի մեջ: Հաստատվել են երեցփոխ Ավետիք Արասխանյանի ներկայացրած հաշիվները 1904 և 1905 թվականների համար. քննվել և հաստատվել է նաև 1906 թ. եկեղեցու, ինչպես նաև հոգաբարձության նախահաշիվը: Հոգաբարձությունը զեկուցել է Գայանյան օրիորդաց դպրոցին պատկանող 25.000 ռ. դրամագլխի ամբողջ պատմությունը, որից երևացել է, որ հոգևոր իշխանությունը ի դեմս թեմական առաջնորդի և հոգևոր բարձր վարչության, որոշել է գումարը չհանձնել հոգաբարձությանը, այլ պահել Թիֆլիսի կոնսիստորիայում և միայն գումարի տոկոսները հատկացնել դպրոցի սանուհիների ուսմանը: Ընդհանուր ժողովը միանգամայն ապօրինի գտնելով հոգևոր իշխանության այդ կարգադրությունը, հավանություն տալով հոգաբարձության բռնած ընթացքին, որոշեց բողոքել և բողոքը հանուն ծխական ժողովի ներկայացնել Վեհափառ կաթողիկոսին՝ հատուկ պատգամավորության ձեռքով: Քննվել է նաև Հովնանյան դպրոցի հոգաբարձության հարցը և որոշվել հանձնարարել ժողովի նախագահին, որպեսզի Մողնու, Վանքի և Բեթղեհեմի եկեղեցիների երեցփոխների հետ միասին մի մանրամասն բողոքագիր պատրաստելով ուղարկեն կաթողիկոսին և խնդրեն հրամայել կատարելու հոգաբարձության օրինավոր ընտրություն[1]:

Թեմի առաջնորդ Գարեգին արք. Սաթունյանը (առաջնորդել է 1904-1910 թթ.) հայտարարել է, որ 1906 թ. հունիսի 4-ի առավոտյան ժամը 10-ին նշանակված է Ներսիսյան դպրոցի 12 հոգաբարձուների և հոգաբարձական խորհրդի պաշտոնավարության ժամանակամիջոցի համար մի ստուգող հանձնաժողովի ընտրություն: Թեմական ընտրողները հրավիրվել են հունիսի 3-ի երեկոյան ժամը

1 «Մշակ», 1906, 30 մայիսի, Հմր 115:

8-ին առաջնորդարան՝ նախապատրաստական ժողովի: Այդ առթիվ Մողնու եկեղեցուց ընտրվել են Ստեփան Լիսիցյանը, բժ. Բագրատ Թաղևոսյանը, իսկ անձնափախանորդներ՝ Սիմեոն Ճխյանցը և Պետրոս Քալանթարյանը[1]:

Հուլիսի 30-ին եկեղեցում կատարվել է երկու ընտրություն. 1. Էջմիածնի կենտրոնական ժողովի համար Թիֆլիսի կողմից չորս պատգամավոր ընտրելու համար երեք պատվիրակների և 2. Մարիամյան - Հովնանյան դպրոցի հոգաբարձության ընտրության համար չորս պատվիրակների ընտրությունը: Այդ ընտրությունները մի առանձին կարևորություն էին ստացել շնորհիվ այն հանգամանքի, որ ներկա ընտրությունների ժամանակ առաջին անգամ հանդես էին եկել երկու կազմակերպված ուժեր – Դաշնակցությունը և Մողնու պրոգրեսիստ ծխականների մի խումբ, որը հրատարակել էր ծխականներին ուղղված հետևյալ կոչը. «Այսօր, 1906 թ. յուլիսի 30-ին, կատարվելու են երկու կարևոր ընտրութիւններ. 1) երեք պատուիրակների՝ Էջմիածնի կենտրօնական համագումարի համար չորս պատգամաւորներ ընտրելու և 2) չորս պատուիրակների Յովնանեան դպրոցի համար հոգաբարձութիւն ընտրելու:

Մողնու ծխականների մի խումբ, մղված ժողովրդական ազատութեան գաղափարով, որի դէմ հանդէս է եկել մի կուսակցութիւն, մղված պրօգրէսիվ ուղղութեան յաղթանակի գաղափարով, հրաւիրում է մեր ծխականներին շարունակել հաւատարիմ մնալ այն ոգուն, որով մեծամասնութիւնը առաջնորդվել է իր ընտրութիւնների մէջ վերջին մօտ երկու տասնեակ տարիներում: Նա իր քուէները տուել է անպայման առաջադէմ, լուսաւոր, ժողովրդական շահերի և իրաւունքների պաշտպան անձանց, որոնք արդարացրել են իրանց վրա դրված յոյսերը, և ոչ անյայտ անձանց, որոնք ոչ անցեալ ունեն և ոչ էլ պատկանում են որոշ հասարակական և քաղաքական սկզբունքներ դաւանող մի կուսակցութեան կամ ուղղութեան: Ծխականներ, արք և կանայք, ընտրենք ուրեմն այնպիսի անձանց, որոնք յայտնի են մեզ իրանց անցեալով և հասարակական ազգային ասպարէզում մեր ամենքիս առաջ կատարած անձնուէր գործունէութեամբ: Առաջարկում ենք ընտրել այդ պահանջներին համապատասխանող»:

Սուրբ Էջմիածնի կենտրոնական ժողովի համար եկեղեցուց ընտրվել են Համբարձում Առաքելյանը, Ավետիք Արասխանյանը և Հակոբ Մանանդյանը: Հովնանյան դպրոցի համար ընտրվել են վերո-

[1] «Մշակ», 1906, 30 մայիսի, Հմր 115:



հիշյալ երեք անձինք և տիկ. Սոֆիա Երկայնաբազուկ-Արղությանը[1]:

Նույն տարում ներկայացվել է եկեղեցու անշարժ կալվածքների ցուցակը[2].

1) Եկեղեցու գավթում մի երկհարկանի շինություն (այժմ խարխուլ) ուր տեղավորված էր Գայանյան օրիորդաց դպրոցը – ծառայում է դպրոցի համար և արդյունք չի բերում:

2) Եկեղեցու գավթում մի երկհարկանի շինություն ստորին սպասավորների (ժամկոչների, դռնապանի և ուխտավորների) համար – ծառայում է սպասավորների համար և մուտք չի բերում:

3) Մի խանութ Բազազխանայում – տրվում է վարձով, վերջին երկու տարիները տալիս է տարեկան 300 ռ., իսկ ավելի առաջ 300-ից մինչև 570 ռուբլի:

1907 թ. հունվարի 14-ին եկեղեցում տեղի է ունեցել այրի Մարիամ Լիսիցյանի հոգեհանգիստը[3]:

1907 թ. մարտի 25-ին Սիմեոն ավ. քհյ. Չմշկյանը Մողնու եկեղեցու բոլոր 21 տարին լրացած երկսեռ ծխականներին հրավիրել է հիշյալ եկեղեցի՝ նոր երեցփոխ ընտրելու համար: Այդ ժողովը համարվել է նախորդի շարունակությունը[4]:

1907 թ. ապրիլի 2-ին կոմսուհի Ուվարովան ուղեկից Երվանդ Լալայանի հետ այցելել է Մողնու եկեղեցին և տեղում նկատել է մի նշանավոր մագաղաթյա հին «Աւետարան»[5]:

Ապրիլի 8-ին եկեղեցում կայացել է եկեղեցական ծխական ժողով՝ նոր երեցփոխի ընտրության առթիվ: Գաղտնի քվեարկությամբ, ձայների ճնշող մեծամասնությամբ՝ 71 ընդեմ 16-ի, երեցփոխ և հոգաբարձու է ընտրվել Բաբաջան Տեր-Հակոբյանը: 16 ձայն հավաքել է Ա. Արասխանյանը[6]:

Նոյեմբերի 25-ին եկեղեցում կայացել է ծխականների ընդհանուր ժողով, որտեղ քննարկվել են հետևյալ հարցերը. 1. Հոգաբարձության 1906-1907 թթ. հաշիվը, 2. Գայանյան դպրոցի 1907-1908 թթ. նախահաշիվը, 3. Դպրոցի պահպանության խնդիրը և 4. Դպրոցի համար նոր շինություն կառուցելու խնդիրը:

Դեկտեմբերի 30-ին եկեղեցում կատարվել է Սաթենիկ Չմշկյանի հուղարկավորության հանդեսը: Պատարագից հետո եկեղեցու

[1] «Մշակ», 1906, 1 օգոստոսի, Հմր 164:
[2] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3185, թ. 27 շրջ.:
[3] «Մշակ», 1907, 13 հունվարի, Հմր 8:
[4] «Մշակ», 1907, 24 մարտի, Հմր 64:
[5] «Մշակ», 1907, 3 ապրիլի, Հմր 71:
[6] «Փայլակ», 1907, 11 ապրիլի, Հմր 3, տես նաև՝ 1907,13 ապրիլի, Հմր 5:

բակում հանդես է եկել Բաքվի Կուլտուրական միության պատգամավոր Գարեգին Երիցյանը, որը հակիրճ հայտնել է միության թախիծը երախտաշատ դերասանուհու մահվան առթիվ: Այնուհետև ելույթ են ունեցել պ. Վրույրը, դերասան Հարությունյանը, Մակար Չմշկյանը և ուրիշներ: Հանգուցյալի անունը արտասանվել է ամենուրեք համակրությամբ:

Այդ տարվա վերջին եկեղեցին ունեցել է ավելի քան 1500 ծուխ[1]: Իսկ եկեղեցու քահանաներ են նշվել Սիմեոն ավ. քհյ. Չմշկյանը, Հովհաննես քհյ. Տեր-Գրիգորյանը, Սահակ ավ. քհյ. Սահակյանը, Վարդան քհյ. Տեր-Ղևոնդյանը և սարկավագ Հակոբ Պարոնյանը[2]:

1908 թ. հունվարի 13-ին եկեղեցում կատարվել է Վահրամ Մութաֆյանի հուղարկավորության հանդեսը: Պատարագն անցկացրել է թեմի առաջնորդ Գարեգին արք. Սաթունյանը, որը դամբանական է խոսել և դրվատել հանգուցյալին իբրև մարդասեր և հասարակական գործերին սիրահոժար պատրաստակամություն ցույց տվող անձ: Պատարագին երգել է քառաձայն խումբը: Հանգուցյալի հիշատակը հարգելու համար հավաքվել է ժողովրդի մեծ բազմություն, իսկ իր հայրենի Ախալցխայից ստացվել է հետևյալ հեռագիրը. «Հոգևորականութիւնը իր հօտի հետ միասին ողբում է իր արժանաւորագոյն անդամի՝ Վահրամի կորուստը: Աղօթում է առ Աստուած հանգուցեալի յիշատակի համար և մխիթարանք առաքում վշտակիցներին՝ Միօն վարդապետ»[3]:

Մարտի 29-ին եկեղեցում կատարվել է Գրիգոր ավ. քհյ. Տեր-Բարսեղյանի հոգեհանգիստը: Թաղումը կատարվել է մարտի 30-ին: Իսկ մայիսի 4-ին, պատարագից հետո, ժամը 12-ին եկեղեցում հոգեհանգիստ է կատարվել նրա մահվան քառասունքի առիթով:

Նույն տարվա մայիսի 18-ին եկեղեցում կայացել է ծխականների տարվա երկրորդ և վերջնական ժողովը, որին մասնակցել են 51 ծխականներ: Ժողովը բացելով՝ Սիմեոն ավ. քհյ. Չմշկյանը հայտարարել է, որ համաձայն սինոդի հրամանի՝ պետք է ընտրել 3 պատվիրակ՝ կաթողիկոսական պատգամավորի ընտրության համար, և առաջարկել է ընտրել նախագահ և քարտուղար: Ժողովը միաձայն նախագահ է ընտրել Հ. Առաքելյանին և քարտուղար՝ Ռուբեն Մելիք-Ադամյանին: Նախագահն իր բացման խոսքում ասել է. «Այսօր մենք, ծխականներս, կոչված ենք ընտրելու 3 պատվիրակներ, որոնք յետոյ թեմի միւս եկեղեցիների պատուիրակների հետ պէտք է ընտրեն Թիֆլիսի ամբողջ թեմի հայ ազգաբնակչութեան կողմից մի պատգամաւոր՝ մասնակցելու համազգային ընտրողական ժողովին, որ պէտք է գումարվի հոկտեմբերի 30-ին Էջմիածնում, ամենայն հայոց կաթողիկոսի ընտրութեան համար»[1]: Ժողովը ճնշող մեծամասնությամբ պատվիրակներ է ընտրել Հ. Առաքելյանին, Պետրոս Քալանթարյանին և Ռուբեն Հովհաննիսյանին: Ժողովը քննարկել է նաև Գայանյան դպրոցի հետ կապված հարցեր:

1909 թ. մայիսի 31-ին տեղի է ունեցել Մողնու եկեղեցու ընդհանուր ժողովը՝ 70 ծխականների մասնակցությամբ: Ժողովում նախագահ է ընտրվել Հ. Առաքելյանը, իսկ քարտուղար՝ Ջ. Կաճկաճյանը: Քննարկվել են՝ 1) Քննիչ մասնաժողովի զեկուցումը՝ երեցփոխի հրաժարման պատճառով, 2) Հրաժարված Բ. Տեր-Հակոբյանի փոխարեն նոր երեցփոխի ընտրություն, 3) Հովնանյան դպրոցի հոգաբարձական ընտրության համար չորս պատվիրակների ընտրություն:

Քննիչ մասնաժողովի զեկուցումը, որը երկար վիճաբանությունների առիթ է դարձել, ժողովականներին ցույց է տվել, որ եկեղեցու քահանաները (բացառությամբ Սահակ ավ. քահանայի, որի մասին մասնաժողովը վկայել է, թե նրա դեմ ոչ մի գանգատ և տարաձայնություն չկա) իրենց կոչման բարձրության վրա չեն եղել, որ նրանք տարիներով իրենց մոտ են պահել եկեղեցու արդյունքները: Այս ամենը նկատի ունենալով, և այն, որ երեցփոխ Բ. Տեր-Հակոբյանը իր մեղադրանքներն արել է եկեղեցու շահերի պաշտպանությունից դրդված, ծխական ժողովը որոշեց. 1. Շնորհակալություն հայտնել երեցփոխին իր օգտակար գործունեության համար, 2. Հանձնարարել ծխական հոգաբարձությանը՝ մշակել հրահանգ, մասնակցությամբ նախկին երեցփոխներ՝ իշխան Ա. Բեհբուդյանի, Ա. Վարդապետյանի և Ա. Արասխանյանի, քահանաների և երեցփոխի փոխադարձ հարաբերությունների, պարտականությունների, իրավունքների մասին և առաջարկել ծխական ժողովի քննությանն ու հաստատմանը: Այնուհետև ժողովն անցել է քվեարկության: Հովնանյան դպրոցի չորս պատվիրակներ ընտրվել են Ս. Մելքումյանը, Ն. Կաճկաճյանը, Հ. Առաքելյանը և Ա. Վարդապետյանը[2]:

1909 թ. հիշատակվում են եկեղեցու քահանաներ՝ Սիմեոն ավ. քհյ. Չմշկյանը, Հովհաննես քհյ. Տեր-Գրիգորյանը, Սահակ ավ. քհյ.



Footnotes, p. 106:

1 «Մշակ», 1907, 8 դեկտեմբերի, Հմր 177:

2 Գր. ավ. քհյ. Մանդակունի, Կանոնադրութիւն Տփխիսի հայ քահանաների միաբանութեան, Տփխիս, 1907, էջ 8:

3 «Մշակ», 1908, 15 հունվարի, Հմր 10:

Footnotes, p. 107:

1 «Մշակ», 1908, 20 մայիսի, Հմր 109:

2 «Մշակ», 1909, 2 հունիսի, Հմր 115, տես նաև՝ «Գործ», 1909, 2 հունիսի, Հմր 114:

Սահակյանը և Վարդան քհյ. Տեր-Ղևոնդյանը, սարկավագ Հակոբ Պարոնյանը, ուրարակիրներ Ավետիք Պապովյանը և Մարտիրոս Մարգարյանը[1]:

1910 թ. մարտի 21-ին տեղի է ունեցել եկեղեցու ծխականների ընդհանուր ժողովը: Ծխական հոգաբարձության անդամ Ն. Տեր-Ղևոնդյանի հանդիմանական կոչը ազդել էր ծխականների վրա, որոնց թիվն այս անգամ բավական մեծ է եղել: Ընդհանուր ժողովը, Հ. Առաքելյանին ընտրելով նախագահ և Ս. Աբովյանին՝ քարտուղար, անցել է օրակարգի խնդիրների քննարկմանն ու լուծմանը: Սկզբնապես քննարկվել է Գայանյան դպրոցի ունեցած դեֆիցիտը, որը կազմել էր մոտ 10.000 ռ.: Այն ծածկելու համար հոգաբարձությունը ցանկացել է գումար ստանալ հանգուցյալ Միրզաջան Խաչատրյանցի կտակակատարներից, քանի որ նա թաղված է եկեղեցու գավթում, և կտակարարներ Թևան Խաչատրյանը և Ալեքսանդր Մելիք Ազարյանը ցանկություն էին հայտնել մահարձան կանգնեցնել հանգուցյալի շիրմին: Այդ առթիվ նրանք ցանկացել են մի գումար նվիրաբերել հօգուտ Գայանյան դպրոցի: Հոգաբարձությունը գումար ստանալը պատճառաբանել է նրանով, որ թեև հոգևոր բարձր իշխանությունը թույլատրել է Մ. Խաչատրյանին թաղել եկեղեցու գավթում, բայց մահարձան կանգնեցնելու թույլտվությունը պետք է ծխականները տան: Հոգաբարձությունը ժողովում զեկուցել է առաջնորդի և կտակարարների հետ իր բանակցությունների և գրագրությունների մասին: Երկար քննարկումներից հետո ժողովն ընտրել է մի օժանդակ մասնաժողով (Հ. Առաքելյան, Կ. Ցաղուրյան և Ե. Իսահակյան), որը պետք է հոգաբարձության հետ աշխատեր այդ խնդիրը լուծելու համար: Ի դեպ, հանգուցյալը Սուրբ Էջմիածնին էր կտակել իր ամբողջ կարողությունը[2]:

Ապրիլին նշված է, որ Թիֆլիսի նահանգապետը թույլատրել է՝ Մողնու եկեղեցու միաբան Վարդան քհյ. Տեր-Ղևոնդյանին ապրիլի 6-ին Արքունական թատրոնում կազմակերպել ներկայացում Գայանյան դպրոցի օգտին[3]:

Մայիսի 23-ին եկեղեցում տեղի է ունեցել ծխականների ընդհանուր ժողով՝ մոտ 70 ծխականի մասնակցությամբ և Հ. Առաքելյանի նախագահությամբ: Իբրև առաջին ժողով՝ ծխականների թիվն ան-

[1] Գրիգոր ավ. քհյ. Մանդակունի, Դիւան Տփխիսի հայոց եկեղեցիների, Տփխիս, 1910, էջ 15:

[2] «Մշակ», 1910, 26 մարտի, Հմր 66, տես նաև՝ 1910, 23 մարտի, Հմր 63:

[3] «Մշակ», 1910, 1 ապրիլի, Հմր 71:



բավարար է եղել Ներսիսյան դպրոցի պատվիրակների և եկեղեցու երեցփոխի ընտրության համար, ուստի ժողովը համարվել է իբրև շարունակություն նախորդ ծխական ընդհանուր ժողովի և զբաղվել ծխական հոգաբարձության և երեցփոխի հաշիվների քննությամբ: Կարդացվել է վերստուգող հանձնաժողովի զեկուցումը՝ հաշիվների ճիշտ և կանոնավոր լինելու մասին, որն էլ հաստատել է ծխական ժողովը[1]:

Մայիսի 30-ին նորից տեղի է ունեցել ծխականների ժողով, որին մասնակցել է 125 ծխական: Ժողովը բացել է Սիմեոն ավ. քահանան և առաջարկել ընտրել նախագահ և քարտուղար: Սակայն պարզվել է, որ ժողովին մասնակցում են 10-12 ոչ եկեղեցու ծխականներ (ներկայացել են իբրև Տեր Վարդան քահանայի ծուխ), և ծխականների մեծամասնությունը՝ մոտ 70 հոգի, հեռացել են, և ժողովը չի կայացել: Արտահայտելով բողոքողների կամքը՝ Հ. Առաքելյանը այն ձևակերպել էր այսպես. 1) Ժողովին մասնակցում են ոչ ծխականներ, 2) երբ պահանջվում է գաղտնի քվեարկություն, այդ արդարացի և օրինավոր պահանջը չի կատարվում, 3) ժողովն ստացել է բազարային կերպարանք[2]:

Հուլիսի 7-ին Վեհափառ Հայրապետը ժամանել է Մողնու եկեղեցի, որտեղից էլ այցելել է Գայանյան դպրոց: Դպրոցի տեսուչ Ս. Աբովյանը, ողջունելով Վեհափառի գալուստը, տեղեկագիր է ներկայացրել դպրոցի գործունեության մասին: Վեհափառը, մանրակրկիտ դիտելով շինությունը, հայտնել է իր գոհունակությունը և ասել, որ դպրոցը անցյալում էական ծառայություն է կատարել՝ հայ օրիորդներին կրթություն տալով և պատրաստելով նրանցից դաստիարակչուհիներ: Վեհափառը, օրհնելով դպրոցի գործիչներին, վստահություն է հայտնել, որ նրանց ջանքերը՝ բարձրացնելու կրթության աստիճանը, կպսակվեն հաջողությամբ: Եկեղեցու բակում հավաքվել էր խուռն բազմություն[3]:

1911 թ. հիշատակվել է եկեղեցու տիրացու Արմենակ Նաշալյանը: Նա ապրիլի 25-ին Աստրախանից նամակ է ուղղել Մողնու եկեղեցու հոգաբարձությանը և նկարագրելով իր նյութական ծանր վիճակը, խնդրել է վճարել իրեն հասանելիք գումարը: Նամակում տիրացուն գրել է. « Կրկնակի իմ խնդրագրաւ այս անգամ ես դիմելով ձեր մասնաւորի ուշադրութիւնն եմ հրաւիրում ըստ ձեր արդար հա-

[1] «Մշակ», 1910, 25 մայիսի, Հմր 111:

[2] «Մշակ», 1910, 1 հունիսի, Հմր 116:

[3] «Մշակ», 1910, 9 հուլիսի, Հմր 148:

յեցողութեանն խնդրում եմ պաղատագին Պատ. Հոգաբարձութիւնդ ուշի ուշով թող քննէ, թող նկատողութեան առնէ իմ արդար իրաւունքը, համեստ աշխատանքը, հալալ ճակտի քրտինքը եղող սոյն վեցամսեայ տիրացուական ռոճիկներս, որոււն միայն քսան ռուբլին միայն ստացել եմ. խնդրեմ, ասէք, քանի որ աշխատել եմ իբրև մշակ եկեղեցում. ինչի՞ համար իրաւունքով պէտք է չստանամ իմ ամբողջ վարձքը...» [1]: Նոյն խնդրանքով Արմենակ Նաշալյանը հունիսին մեկ այլ նամակով դիմել է Սիմեոն ավ. քհյ. Չմշկյանին [2]:

Հոկտեմբերի 16-ին Մողնու եկեղեցում տեղի ունեցած ընտրությամբ կաթողիկոսական պատգամավոր ընտրող պատվիրակներ են ընտրվել Մարկոս Դոլուխանյանը, Քրիստափոր Խաչատրյանը և Պետրոս Քալանթարյանը[3]:

1912 թ. հունվարի 27-ի համարում «Մշակը» հիշատակում է Մողնու եկեղեցու միաբան Վարդան քհյ. Տեր-Ղևոնդյանին, որը պատասխանատվության էր կանչել «Մշակի» խմբագիր Համբարձում Առաքելյանին, քանի որ վերջինս թերթի 1910 թ. հունիսի 3-ի համարում գրել էր, թե Տեր-Ղևոնդյան քահանան կեղծել էր Մողնու ծխականների ցուցակը՝ Ներսիսյան դպրոցի հոգաբարձության ընտրության համար պատվիրակներ ընտրելու ժամանակ, և թե նա յուրացրել է եկեղեցապատկան գումարները: Շրջանային դատարանը, քննելով քահանայի գանգատը, մեղավոր է ճանաչել Հ. Առաքելյանին՝ սուտ տեղեկություններ հաղորդելու համար, և որպես պատիժ՝ նրան ենթարկել 200 ռ. տուգանքի, որը պիտի փոխարինվեր երկամյա բանտարկությամբ, եթե Հ. Առաքելյանը չկարողանար վճարել այդ գումարը[4]:

Ի դեպ, Վարդան քհյ. Տեր-Ղևոնդյանը երկու նոր պիես է թարգմանել. Գորդինի «Տերրորի սարսափները» և «Սաֆո»[5]: Իսկ 1913 թ. նա հայոց թատրոնի համար թարգմանել է Զուդերմանի «Կյանքի տոնը – ծաղիկների շուրջը» և Ս. Բելայայի «Եվայի մեղքը» պիեսները: Նաև հայերենից ռուսերեն է թարգմանել Լ. Շանթի հանրահայտ «Հին Աստվածներ» պիեսը[6]:

1912 թ. հունիսի 20-ին «Հորիզոնը» գրել է, որ Թիֆլիսում է գտնվում Գարեգին վրդ. Հովսեփյանը, որը ամենայն եռանդով շա-

1 «Ընկեր», 1911, 15 մայիսի, Հմր 10:
2 «Ընկեր», 1911, 19 հունիսի, Հմր 15:
3 «Սուրհանդակ», 1911, 18 հոկտեմբերի, Հմր 416:
4 «Հորիզոն», 1912, 27 հունվարի, Հմր 18:
5 «Հորիզոն», 1912, 26 ապրիլի, Հմր 86:
6 «Հորիզոն», 1913, 19 մարտի, Հմր 61:



րունակում է մանրանկարչության գործի ուսումնասիրությունը: Այժմ նա ուսումնասիրում է Մողնու Սուրբ Գևորգ եկեղեցում գտնվող ձեռագիր ավետարաններից մեկը, որը տառերի տեսակետից որոշ ինքնուրույնություն է ներկայացնում: Հայր սուրբը բացի դրանից ուսումնասիրում է նաև նկարիչ Միրաքյանի մոտ լուսանկարչական արվեստը[1]:

1912 թ. ներկայացվել է եկեղեցու հոգևորականների հետևյալ ցուցակը[2].

1) Ավագերեց Սիմեոն Հակոբյան Չմշկյան – հոգևորականության դասի մեջ է մտել 1858 թ. սեպտեմբերի 15-ին, 78 տարեկան է.

2) Ավագերեց Սահակ Ավագյան Սահակյան – հանդիսանում է քաղաքի Առևտրական ուսումնարանի կրոնուսույց, հոգևորականության դասի մեջ է մտել 1885 թ. օգոստոսի 28-ին, 60 տարեկան է.

3) Հովհաննես քհյ. Տեր-Զաքարյան Տեր-Գրիգորյան – հոգևորականության դասի մեջ է մտել 1876 թ. փետրվարի 22-ին, 61 տարեկան է.

4) Վարդան Տեր-Մուշեղյան Տեր-Ղևոնդյան – նաև Թիֆլիսի 4-րդ արական գիմնազիայի և Երկաթգծի ուսումնարանի կրոնուսույցն է, հոգևորականության դասի մեջ է մտել 1898 թ. օգոստոսի 28-ին, 37 տարեկան է.

5) Սարկավագ Հակոբ Տեր-Գրիգորյան Պարոնյան – հոգևարականության դասի մեջ է մտել 1902 թ. մարտի 9-ին, 37 տարեկան է:

1913 թ. նոյեմբերի 10-ին Գայանյան դպրոցի դահլիճում կայացել է Մողնու եկեղեցու ծխականների ընդհանուր ժողովը, 32 ծխականների մասնակցությամբ: Ժողովը լինելով երկրորդը՝ համարվել է օրինական: Միաձայն նախագահ է ընտրվել Հ. Առաքելյանը, իսկ քարտուղար՝ Ս. Աբովյանը: Նախագահը հայտարարել է, որ քննարկվելու են հետևյալ հարցերը. 1. Քննության և հաստատություն 1912-1914 ուս տարվա հաշիվների, 2. Քննություն և հաստատություն 1913-1914 թթ. նախահաշվի, 3. Նոր երեցփոխի ընտրություն՝ հրաժարված Օրբելի Օրբելյանի տեղը:

Ծխական հոգաբարձության նախագահ Ն. Տեր-Ղևոնդյանը մանրամասն զեկուցել է Գայանյան դպրոցի տնտեսական և ուսումնական դրության մասին: Կարդացվել է դպրոցի հաշիվը, վերստուգող հանձնաժողովի զեկուցումը, որը գտել էր հաշիվները կանոնավոր և գովերգում էր հոգաբարձության եռանդուն գործունեությունը:

1 «Հորիզոն», 1912, 20 հունիսի, Հմր 130:
2 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 872, թ. 2:

Ժողովը հաստատել է հաշիվը: Այնուհետև կարդացվել է 1913-1914 թթ. նախահաշիվը, որից տեղեկացվել է, որ Գայանյան դպրոցի համար ծախսը լինելու է 17.600 ռ., իսկ մուտքը՝ 14.000 ռ.: Ժողովը հաստատել է նախահաշիվը և հանձնարարել հոգաբարձությանը գումարել հատուկ ծխական ժողով՝ 3600 ռ. դիֆիցիտի մասին խորհելու:

Վերջում ժողովը անցել է երեցփոխի ընտրությանը: Այդ պաշտոնի համար թեկնածուներ են առաջարկվել Եղիշե Իսահակյանը, Օրբելի Օրբելյանը, Մարկոս Դոլուխանյանը և Սարգիս Մելքումյանը: Վերջին երեքը հրաժարվել են, իսկ Մ. Դոլուխանյանը եղել է բացակա, ուստի ժողովը գաղտնի քվեարկությամբ միաձայն ընտրել է Եղիշե Իսահակյանին: Նախագահը, հայտնելով քվեարկության արդյունքը և շնորհավորելով հաջող ընտրությունը, ժողովը փակել է ժամը 2-ին[1]:

1914 թ. մարտի 28-ին եկեղեցու միաբան Սահակ ավ. քհյ. Սահակյանը խնդրագրով դիմել է թեմի առաջնորդ Մեսրոպ եպս. Տեր-Մովսիսյանին (առաջնորդել է 1913-1916 թթ.). «Երեսուն և հինգ տարի ուսուցչական պաշտօն եմ վարել զանազան դպրոցներում 1875 թ. սկսած – Հին-Նախիջևանում 1 տարի, Տփխիսի Գայանեան Օրիորդաց դպրոցում 5 տարի, Ներսեսեան Հոգևոր դպրանոցում 14 տարի և Տփխսի 1-ին Առևտրական դպրոցում 15 տարի, ուր և դասաւանդում եմցօրս: Վերջին երեք դպրոցների վարչութիւններից գրաւոր գոհունակութիւն եմ ստացել, որ իմ դասաւանդութիւնը արդիւնաւէտ է եղել: Զուգընթաց սրան վարել եմ նաև քահանայական պաշտօն Տփխսի Սուրբ Գէորգ եկեղեցում 29 տարի՝ սկսած 1885 թուականից: Ի նկատի առնելով 61 ամեայ հասակս, 35 ամեայ ուսուցչական և 29 ամեայ քահանայական վարած պաշտօններս, ի նկատի առնելով քայքայուած առողջութիւնս, որի հաստատութեան համար ներկայացնում եմ պ. բժ. Թադէոսեանի վկայականը ի 27 մարտի 1914 ամի № 13, ֆիզիկապէս այն աստիճան թուլացել եմ, որ անկարող եմ նոյն եռանդով շարունակել քահանայական և ուսուցչական պաշտօններս՝ առանց վտանգի ենթարկուելու: Իսկ երկու պաշտօններից մէկն ու մէկից հրաժարուել ևս այժմ անկարող եմ՝ ծանրաբեռնուած լինելով բազմանդամ ընտանիքով – յօթը զաւակ ունեմ, որոնցից երեքը բարձրագոյն դպրոցներում ուսանող են:

Ուստի դիմելով Ձերդ Բարձր Սրբազնութեան՝ խոնարհաբար խնդրում եմ միջնորդէք Նորին Վեհափառութեան, որ ինձ իրաւունք

[1] «Մշակ», 1913, 12 նոյեմբերի, Հմր 252:



շնորհէ *մի քանի տարով հովուելու իմ ծուխը՝ առանց մասնակցելու հերթական ժամերգութեան, որոյ համար հրաժարւում եմ զանձանակադրամից յօգուտ միաբանութեան:* Սրանով ես փոքր ինչ թեթևացած կզգամ ինձ մինչև որդւոցս վերադարձը՝ առանց ում և իցէ ծանրաբեռնելու: Եւ որպէսզի իմ պարտաւորական կապը ծխի հետ պահպանուի, խոստանում եմ տօն օրերին եկեղեցի յաճախել և մասնակցել ընդհանրական աղօթքին: Կարևոր եմ համարում յիշել Ձերդ Բարձր Սրբազնութիւն և այն հանգամանքը, որ ես Ներսիսեան դպրանոցի հոգաբարձութեան կողմից 1885 թ. օգոստոսի 14-ն № 33 օրագրութեան համաձայն առաջարկուած եմ ձեռնադրութեան իբրև ուսուցիչ քահանայ, որոյ պատճէնները ի 28-ն մարտի 1914 ամի №№ 1599 և 1600 ներկայացնում եմ խնդրիս հետ»[1]:

Ապրիլի 22-ին թեմի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսը ամենախոնարհ հայտարարությամբ դիմել է Գևորգ Ե կաթողիկոսին. «Քաղաքիս Մողնու եկեղեցւոյ Սահակ աւ. քհյ. Սահակեանը ներփակ խնդրագրով դիմելով ինձ, խնդրում է միջնորդել Ձերդ Վեհափառութեանը, որ նա արտօնուի եկեղեցական ամենօրեայ պաշտամունքներից ազատ լինելու, որովհետև տկար է, ծերացած և անկարող ուսուցչութեան և քահանայի կրկնակ ծանր պաշտօնը վարելու: Այսու դիմելով Վեհափառութեանդ, խնդրում եմ ամենախոնարհաբար հաճել կատարումն տալ նրա խնդրանաց հետևեալ հիմունքներով: Սահակ քահանան քաղաքիս կրօնուսոյցներից լաւագոյններիցն է. նա իրաւամբ հիւանդոտ է և ծերացած, մեծ դժուարութեամբ է դասերին և եկեղեցական պաշտաման հասնում և ամառները հանգստութեան անհրաժեշտ կարիք ունի: Կայ մի հանգամանք ևս. Մողնու եկեղեցու միաբանները լարուած յարաբերութիւն ունեն իրար և յատկապէս Սահակ քահանայի դէմ և հետևապէս իրար ընկերական զիջումներ չեն անում, իրար օգնում: Այս հանգամանքը անդրադառնում է ժողովրդեան վրայ և դժգոհութիւնների առիթ ծառայում: Եթէ պակասացնելու լինենք նորա դասերի թիւը՝ դա անկասկած կըլինի ի վնաս մատաղ սերնդի կրօնական դաստիարակութեան: Ահա այդ ամենն ի նկատի ունենալով է, որ վստահանում եմ իմ այս միջնորդութիւնը յարուցանել»[2]:

Գևորգ Ե կաթողիկոսը խնդրագրին պատասխանելով մայիսի 5-ին գրել է. «Վերադարձնելով Սահակ աւագ քահ. Սահակեանին եկեղեցական ամենօրեայ պաշտամունքից ազատելու գրութիւնը՝

[1] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 883, թ. 1:
[2] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 883, թ. 6:

պատուիրում ենք Վրաստանի Հայոց թեմի առաջնորդ Գերապատիւ Տ. Մեսրոպ եպիսկոպոսին՝ վարուել ըստ իւր հայեցողութեանն»:

Նոյեմբերի 21-ին Թիֆլիսի եկեղեցիների գործակալ Սարգիս ավ. քհյ. Շիոյանը հայտարարությամբ դիմել է եկեղեցու միաբան քահանաներին, որում հայտնել է իր և եկեղեցու ծխականների դժգոհությունը նոյեմբերի 21-ին եկեղեցում ս. Կույս Մարիամի տաճարին ընծայելու տոնը չկատարելու, եկեղեցին փակ լինելու կապակցությամբ: Նա նշել է, որ թեպետ եկեղեցում պատրաստված է եղել նշխար, բայց հերթակալ Վարդան քհյ. Տեր-Ղևոնդյանը չի բարեհաճել իր քահանայական պարտքը կատարել և պատարագ չի մատուցել: Այդ պատճառով Մողնու ժամավորները գնացել են Նորաշենի եկեղեցի և այնտեղ իրենց դժգոհությունն են հայտնել թե՛ միաբանության և թե՛ հոգևոր իշխանության դեմ[1]: Այս մասին հայր գործակալը գրավոր հայտարարություն է ներկայացրել նաև թեմի առաջնորդ գերապատիվ Մեսրոպ եպս. Տեր-Մովսիսյանին (առաջնորդել է 1913-1916 թթ.): Հայտարարության մեջ նշվել է, որ քանի որ եկեղեցու ավագ քահանա Տեր Սիմեոնը շատ ծեր է, իսկ Սահակ քահանան հրաժարվում է ժամերգություններին մասնակցել, եկեղեցին տուժում է դրանից, ուստի և անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել եկեղեցու ներքին կարգապահությունը վերականգնելու համար[2]:

1915 թ. հունվարի 17-ի՝ Թիֆլիսի հայկական եկեղեցիների միաբանությունների և հոգաբարձությունների հանձնաժողովի որոշման համաձայն, Գայանյան օրիորդաց դպրոցի հոգաբարձությունը և Մողնու Սուրբ Գևորգ եկեղեցու միաբանությունը ամսի 20-ին անցկացրել են խորհրդակցական նիստ և որոշել առաջիկա շաբաթվա ընթացքում ձեռնարկել եկեղեցու ծխականների մեջ հանգանակություն՝ հօգուտ հայ գաղթականների[3]:

Հունվարի 20-ին եկեղեցու միաբանները հանդես են եկել հետևյալ հայտարարությամբ. «Մենք ի ներքոյ ստորագրող Մողնույ Ս. Գէորգ եկեղեցւոյ միաբաններս՝ Սիմէօն աւագ քահանայ Չմշկեան, Յովհաննէս քահանայ Տէր-Գրիգորեանց և Վարդան քահանայ Տէր-Ղևոնդեանը տալիս ենք մեր համաձայնագիրը Հոգևոր իշխանութեանը առ այն, որ մենք պարտաւորւում ենք եկեղեցւոյ հերթակալութիւնը կատարել երեքովս, ազատ համարելով Սահակ աւագ քահանայ Սահակեանին հերթակալութիւն կատարելու: Վերջինս իւր յօժար կամքով հրաժարուելով հերթակալութիւնից՝ իւր կողմից հրաժարւում է ստանալու միաբանութեանս հասանելի գանձանակադրամից, տարեկան ժամնցադրամներից, վախմի հասոյթքից, տարեկան տոկոսներից և կրպակների իր հասանելի մասից, իրեն վերապահելով միայն իւր ծխոց հովւութիւնը և եկեղեցի յաճախելը իբրև աղօթող ժամաւոր բնաւ չխառնուելով եկեղեցւոյ ներքին կառավարութեան գործում»[1]:

Փետրվարի 22-ին Սահակ ավ. քհյ. Սահակյանը գրել է գործակալ հայր Շիոյանին. «Ի պատասխանի Ձեր գրութեան ի 10-ն ամսոյս 1915 ամի № 89, որով Մողնույ Սուրբ Գէորգ եկեղեցւոյ միաբանութիւնը յանձն է առնում իմ հերթակալութիւնը, պատիւ ունեմ պատասխանել - համաձայն եմ իբրև վարձատրութիւն թողնել հետևեալ արդիւնքները – 1. Գանձանակադրամ, 2. Վախմի արդիւնք, 3. Տարեկան ժամնցադրամներ և 4. Տարեկան տոկոսների արդիւնքները, իսկ կրպակներից ստացուած արդիւնքը վերապահում եմ ինձ՝ խոստանալով կրպակների բարերար հանգուցեալ Սողոմոն Պապէի համար կատարուելիք հոգեհանգստին ներկայ լինել և իմ հերթին պատարագել:

Ինչ վերաբերում է այն հարցին, որ ես «յաճախեմ եկեղեցի իբրև աղօթող ժամաւոր» և «բնաւ չխառնուեմ եկեղեցւոյ ներքին բարեկարգութեան գործում», դա Հոգևոր իշխանութեան իրաւունքն է: Իմ միաբանական իրաւունքն է և պարտաւորութիւնը յաճախել եկեղեցի, երբ կարող եմ, մասնակցել ծիսակատարութեանց, ժամերգութեան, կատարել իմ ծխոց օրհնակատարութիւնները և հոգալ եկեղեցւոյ ներքին բարեզարդութեան մասին: Խնդրում եմ այս պատասխանը շուտով ներկայացնել Նորին Բարձր Սրբազնութեան ի տնօրէնութիւն»[2]:

Փետրվարի 24-ին թեմի առաջնորդ Մեսրոպ եպս. Տեր-Մովսիսյանը կոնսիստորիային ներկայացրել է հետևյալ առաջարկությունը. «Ուղարկելով Կոնսիստորիա Մողնու եկեղեցու միաբան Սահակ աւ. քահանային վերաբերեալ գրագրութիւնը, որով նա, ցոյց տալով բժշկի վկայական, խնդրում է ժամանակաւորապէս իրեն ազատ կացուցանել եկեղեցում ամենօրեայ պաշտօն կատարելու պարտաւորութիւնից, առաջարկում եմ տնօրինել ըստ այսմ.

1. Տկարութեան պատճառով Սահակ աւագ-քահանային ազատել ժամանակաւորապէս, մինչև ապաքինումն, մշտական եկեղեցի

¹ ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 883, թ. 7:
² ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 883, թ. 8:
³ «Մշակ», 1915, 22 հունվարի, Հ^փ 14:

¹ ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 883, թ. 10:
² ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 883, թ. 9:

յաճախելուց և պատարագներ մատուցանելուց, սակայն պարտաւորեցնել նրան, որ նա՝ առողջութիւնը ներածին չափ՝ սովորական և թէ մանաւանդ տօն օրերին յաճախի եկեղեցի և մասնակցի ժամերգութեան իբրև միաբան եկեղեցու:

2. Առողջութիւնը վերականգնելուց յետոյ նա պարտաւոր է նորից սկսել իր քահանայական լրիւ պաշտամունքը:

3. Սեմէօն աւ. քահ. Չմշկեանը ծերութեան պատճառով այլևս անկարող է եկեղեցում աւագ երէցի բոլոր պարտաւորութիւնները լրիւ կատարելու, ուստի աւագ-երիցութիւնը յանձնում եմ նոյն եկեղեցու միաբան Յովհաննէս քահանային, թողնելով, որ Սիմէօն քահանան միայն ժամօրհնողի պաշտօն կատարի (յանձնարարութեամբ Յովհաննէս քահանայի):

4. Յովհաննէս քահանային պարտաւորեցնում եմ աչալուրջ հսկողութիւն ունենալու եկեղեցու ներքին բարեկարգութեանը և ժամասացութեան անթերի կատարմանը, որի համար նա պատասխանատու է հոգևոր իշխանութեան առաջ:

5. Սահակ աւ. քահանան պահպանում է իր ծխուց հովւութեան բոլոր ծիսակատարութիւնները, իսկ նրա հերթապահութիւնը և պատարագների մատուցումը յանձնում եմ Սիմէօն աւագ, Յովհաննէս և Վարդան քահանաներին, որոնք իբրև վարձատրութիւն պէտք է ստանան և հաւասար կերպով բաժանեն Սահակ աւ. քահանայի հետևեալ արդիւնքները. ա) գանձանակադրամ, բ) վախմի արդիւնք, գ) տարեկան ժամոցադրամներ և դ) տարեկան տոկոսների արդիւնքներ, իսկ Պապէի խանութի արդիւնքի բաշինը պէտք է ստանայ Սահակ աւ. քահանան և (այլ արդիւնքներ):

6. Սահակ աւ. քահանան պարտաւոր է մասնակցելու իբրև միաբան իր միաբանակիցների հետ եկեղեցական բոլոր այն խնդիրներին, որ բղխում են քահանայի կոչումից»[1]:

Փետրվարի 25-ին կոնսիստորիան լսել է թեմի առաջնորդ Մեսրոպ եպս. Տեր-Մովսիսյանի ամսի 24-ի № 160 առաջադրությունը և այս մասին հայտնելով Մողնու եկեղեցու միաբանությանը և Թիֆլիսի Ա մասի գործակալին՝ պատվիրել նրանց անշեղ կատարել թեմի գերապատիվ սրբազան առաջնորդի առաջադրության մեջ հիշատակված պարտավորությունները[2]:

[1] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 883, թ. 12-14:

[2] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 883, թ. 13:



1916 թ. հունվարի 17-ին եկեղեցում կատարվել է պատարագ և հոգեհանգիստ պրապորչիկ Լևոն Աղաբեկյան Գևորգյանցի հիշատակին:

Հունվարի 23-ին հողին է հանձնվել 56 տարեկանում մահացած՝ Մողնու եկեղեցու սարկավագ Տիգրան Պարոնյանի մարմինը, որը, մոտ 45 տարի ծառայելով Թիֆլիսի հայոց եկեղեցիներում նախ դպրի և ապա՝ մոտ 15 տարի, սարկավագության պաշտոններով, վեց փոքրահասակ որբեր իր այրու հետ թողել է դառն չքավորության մեջ: Այդ առթիվ «Մշակը» գրել է. «Ինչու պիտի 45 տարի ծառայող մի պաշտօնեայ դառն չքաւորութեան մէջ թողնէ իր բազմանդամ ընտանիքը: Սրա պատասխանն է, որ կը կամենայի երկու խօսքով տալ հայ հասարակութեանը: Հայ դպիրների, մասնաւորապէս Թիֆլիսի դպիրների դասակարգի մէջ չը կայ մի անձ, որ աւելի ողբալի դրութեան մէջ չը գտնվի, քան հանգուցեալ սարկաւագը... այս ծանր պայմաններում, այս առասպելական թանգութեան մէջ անգամ, եկեղեցիների երէցփոխաններն ու հոգաբարձութիւնները դպիրներին ռոճիկ են տալիս 10-15 րուբլի, մի քանի հոգու բացառութիւն կայ, որ տրվում է 20-25 րուբլի... բաւական է յիշել, որ երբ այս տարի Թիֆլիսի քահանաները, որ անհամեմատ ապահով են, քան իրանց դպիրները, ստացան ապահովութեան գանձարանից 200-ական րուբլի, իրանց դպիրներին «շնորհեցին» 2-2 րուբ.: Միջավայրի այս ծանր պայմաններն է, որ ստեղծել են տիրացուների նման մի անգոյն ու արհամարհված դասակարգ»[1]:

Մողնու ծխական հոգաբարձութիւնը իր եկեղեցու երկարամեայ սպասավորի ընտանիքին հատկացրել է միանվագ նպաստ 200 ռ. ամբողջ տարվա ռոճիկը, մի տարի ձրիապես օգտվելու բնակարանից և եկամուտների կեսը:

Մարտի 29-ին եկեղեցու միաբան Սահակ ավ. քհյ. Սահակյանը վիճակային կոնսիստորիային հայտնել է, որ երեցփոխի գիտությամբ ուղարկում է երկու հնամաշ շուրջառ (մեկը՝ սև, մյուսը՝ սպիտակ) և խնդրել է կարգադրել, որ դրանք ուղարկվեն որևէ գյուղական աղքատ եկեղեցի՝ գործածելու[2]:

Մայիսի 7-ին տեղի է ունեցել Մողնու Սուրբ Գևորգ եկեղեցու ավ. քահանա Տեր Սիմեոն Չմշկյանի հուղարկավորությունը: Թաղումը տեղի է ունեցել Խոջիվանքի գերեզմանատանը[3]:

[1] «Մշակ»,1916, 23 հունվարի, Հմր 15:

[2] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3270, թ. 9:

[3] «Հորիզոն», 1916, 7 մայիսի, Հմր 100:

Մայիսի 15-ին եկեղեցում տեղի է ունեցել ընտրություն՝ Մարիամյան-Հովնանյան օրիորդաց դպրոցի հոգաբարձուական խորհրդի նոր կազմ ընտրելու համար: Ձայների գերակշիռ մեծամասնությամբ ընտրվել են Հովհաննես Թումանյանը, Ստեփան Լիսիցյանը, բժ. Տիգրան Թաղնոսյանը և Նիկողայոս Տեր-Ղևոնդյանը: Իսկ մեկ այլ խմբի առաջարկած թեկնածուները՝ Հ. Առաքելյանը, Բ. Առաքելյանը, բժ. Շահպարոնյանը և Իսահակյանը, շատ քիչ ձայներ են ստացել և չեն ընտրվել[1]:

1916 թ. օգոստոսի 4-ին եկեղեցում կատարվել է Եղիսաբեթ Թաթոյան Ստեփանբեկյանի, իսկ օգոստոսի 7-ին՝ բժ. Արսեն Արիստակեսյան Խանդամիրյանի հոգեհանգիստը:

Տարեվերջին եկեղեցու միաբաններ Սահակ ավ. քհյ Սահակյանը և Վարդան քհյ. Տեր-Ղևոնդյանը ներկայացրել են եկեղեցու 1915-1916 թթ. հաշիվները[2]:

1920 թ. սեպտեմբերի 19-ին եկեղեցում պատարագից հետո կատարվել է հայագետ Կարապետ Կոստանյանի հիշատակին նվիրված հոգեհանգիստ, որին ներկա են եղել հանգուցյալի ազգականները, հայ կուլտուրական հասարակության և մամուլի ներկայացուցիչներ[3]:

1920-ական թթ.՝ խորհրդային առաջին տարիներին Մողնու եկեղեցու միաբանները սկսում են դժվարություններ կրել իշխանությունների դեպի եկեղեցին ու կրոնը ունեցած վերաբերմունքի պատճառով: 1925 թ. ապրիլի 5-ին եկեղեցում կայացել է հայ քահանաների ժողով, որի նպատակն էր որոշել, թե ինչով բացատրել Սուրբ Էջմիածնի լռությունը ժողովականների մի շարք հեռագրերի և խնդիրների հանդեպ[4]:

1927 թ. փետրվարի 9-ին Թիֆլիսի Թեմական խորհուրդը (անդամ՝ Արշակ ավ. քհյ. Մինասյան, քարտուղար՝ Ս. Հովհաննիսյան) շրջաբերականով դիմել է քաղաքի Մողնու Սուրբ Գևորգ եկեղեցու ավագ և միաբան քահանաներին, Ներսես Աշտարակեցու մահվան 70-ամյակի առթիվ Մայր եկեղեցում պատարագ և հոգեհանգիստ անցկացնելու կապակցությամբ ներկա լինելու համար[5]: Մասնակ-

[1] «Հորիզոն», 1916, 17 մայիսի, Հմր 108, տես նաև «Գաղափար», 1916, 18 մայիսի, Հմր 38:

[2] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, մաս 2, գ. 1197:

[3] «Մշակ», 1920, 21 սեպտեմբերի, Հմր 94:

[4] «Ազատ Եկեղեցի», 1925, Հմր 17-19, էջ 307:

[5] ՀԱԱ, ֆ. 148, ց. 1, գ. 19:



ցելու համար նշվել է Հովհաննես ավ. քհյ. Տեր-Գրիգորյանի անունը:

Նույն տարում Մողնու եկեղեցի է տեղափոխվել Կարապետ քհյ. Դավթյանը: Նա ծնվել է 1872 թ. դեկտեմբերի 29-ին Կարնո գավառի Տինարկում գյուղում: Սովորել է Կարինի ազգային «Աղաբաբեան» վարժարանում: Քահանա է ձեռնադրվել Սուրբ Էջմիածնում Արիստակես արք. Դավթյանի ձեռքով: Վիրահայոց թեմում պաշտոնավարել է սկսած 1922 թ., իսկ բուն Թիֆլիսում՝ 1927 թ.: 1933 թ. օգոստոսին նրա ծուխը Մողնու եկեղեցում բաղկացած է եղել 225 տնից[1]:

1930 թ. հոկտեմբերի 12-ին՝ Հայոց Հայրապետի անվանակոչության և Վարագա Սուրբ Խաչի տոնի օրը, եկեղեցում ելույթ է ունեցել Արտակ եպս. Սմբատյանը: Այդ ժամանակ եկեղեցին գտնվել է թեմական խորհրդի իրավասության տակ:

1931 թ. մայիսի 3-ին թեմի առաջնորդ Արտակ եպս. Սմբատյանցը (առաջնորդել է 1929-1933 թթ.) բողոքագիր է ուղղել Վրացական հանրապետության կենտրոնական գործադիր կոմիտեին՝ Թիֆլիսի մի շարք եկեղեցիների վիճակի մասին: Անդրադառնալով Մողնու եկեղեցուն՝ նա գրել է. «Թեմական խորհրդի ունեցած տեղեկութիւններից նկատւում է, որ Մողնու հայկական եկեղեցում, եկեղեցու տարածքում գտնւող 7-րդ աշխատանքային դպրոցի աշակերտների կողմից կատարւում են անթոյլատրելի արարքներ (ջարդւած են մօտ 100 ապակի և այլն), որի պատճառով թեմական խորհուրդը մի քանի անգամ միջնորդագիր է ներկայացրել Թիֆլիսի գործկոմ՝ 27 մարտի ս/թ, № 133, Թիֆլիսի քաղխորհրդի վարչական բաժին՝ 27 մարտի ս/թ № 134, ժողովրդական կոմիսարների խորհուրդ՝ 1930 թ. ապրիլի 11-ին, № 32 նման անկարգութիւնները դադարեցնելու համար միջոցներ ձեռք առնելու խնդրանքով: Սակայն մինչև այժմ այդ դիմումներին ևս ոչ մի պատասխան չի եղել»[2]:

1932 թ. մարտի 4-ին եկեղեցու ծխական խորհրդից՝ դեկտեմբեր և հունվար ամիսներին գնված 2 ½ գրվանքա մոմի համար, հօգուտ թեմական խորհրդի, ստացվել է 7 ռ. 50 կոպ.[3]: 1933 թ. հունվարի 16-ին եկեղեցու ծխական խորհրդից, գնված 2 գրվանքա մոմի համար և հօգուտ թեմական խորհրդի, ստացվել է 52 ռ.[4]:

[1] ՀԱԱ, ֆ. 148, ց. 1, գ. 28, թ. 16:

[2] Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության, գիրք Գ., Արտակ եպիսկոպոս Սմբատյանց (Տաուշեցի), կազմեց Ս. Բեհբուդյան, Երևան, 1997, էջ 517:

[3] ՀԱԱ, ֆ. 148, ց. 1, գ. 1, թ. 44:

[4] ՀԱԱ, ֆ. 148, ց. 1, գ. 1, թ. 96:

1933 թ. հունիսի 2-ին Թեմական խորհրդի անդամ տ. Ջանազան Մեհրաբյանը՝ վանքի ծխական խորհրդի անդամ Ալեքսան Ավագյանի հետ, ցուցակով ստուգել են Մողնու եկեղեցու իրեղենները և նկատել են հետևյալ պատկերը. իրեղենները (արծաթյա) և գորգերը բոլորը լրիվ են՝ բացի հետևյալ առարկաներից. 1) մի փոքրիկ ձեռքի արծաթի խաչ, որը Տեր Հովհաննեսը կորցրած է եղել մի քանի տարի առաջ Խոջիվանքում, 2) մի ուրար՝ արծաթի թելերով նախշած, 3) մի հայելի, որը նախկին երեցփոխը տված է եղել եկեղեցու ժամկոչ Բարսեղին, 4) չորս հասարակ բուրվառների փոխարեն երևացել են երկուսը, 5) տասը մետաղյա ափսեների փոխարեն երևացել են չորսը, 6) մի սանդուխը պակասել է: Դրա փոխարեն երևացել է 1) 6 հատ փոքրիկ կրծքի խաչեր, 2) մի հատ խաչվառի գլխի արծաթյա խաչ[1]:

Նույն օրը Վրաստանի Հայոց թեմական խորհրդի անդամ Ջանազան Մեհրաբյանը խորհրդին դիմել է հետևյալ հայտարարությամբ. «Սորա հետ ներկայացնում եմ խորհրդիդ տնօրէնութեան Մողնու Ս. Գէորգ եկեղեցուն պատկանեալ արծաթեղէն իրերի և գորգերի ցուցակի մանրամասն ստուգումը, որ կազմուած է իմ, Ալեքսանդր Ավագյանի և եկեղեցու միաբան՝ Հովհաննէս աւ. քհյ. Տէր-Գրիգորեանի (ծնվել է 1850 թ. նոյեմբերի 10-ին Թիֆլիսում) և Կարապետ քահ. Դաւթեանի ներկայութեամբ»[2]:

Ի դեպ, 1933 թ. Մողնու եկեղեցում ծուխ է ունեցել նաև Ներսես քհյ. Բոյախչյանը՝ ծնված 1870 թ. սեպտեմբերի 17-ին, որը 1926 թ. քահանայագործել է Ջրկինանց Սուրբ Կարապետ, Ջգրաշենի և Բեթղեհեմի եկեղեցիներում[3]:

Հունիսի 13-ին Թեմական խորհուրդը հայտարարությամբ դիմել է եկեղեցու ավագերեց արժ. Հովհաննես ավ. քհյ. Գրիգորյանին և Կարապետ քհյ. Դավթյանին. «Թեմական խորհուրդը ամսոյս 8-ի նիստին լսելով իր անդամ տիկին Ջ. Մեհրաբեանի զեկուցումը Ձեր եկեղեցու մի քանի արծաթեղէն իրերի պակասորդի մասին՝ որոշեց գրել միաբանութեանդ, կորած կամ անյայտացած իրերի ցուցակը կազմելուց յետոյ յանձնել այն քաղգործկոմին ի գիտութիւն, որպեսզի ապագայում որևէ պատասխանատուութիւնից զերծ մնաք»[4]:

Հուլիսի 23-ին եկեղեցու միաբանները հայտարարությամբ դիմել են Թեմական խորհրդին. «Ղզլարի Հայոց եկեղեցւոյ ծխատէր

1 ՀԱԱ, ֆ. 148, ց. 1, գ. 26, թ. 2 շրջ.:
2 ՀԱԱ, ֆ. 148, ց. 1, գ. 26, թ. 2:
3 ՀԱԱ, ֆ. 148, ց. 1, գ. 28, թ. 18:
4 ՀԱԱ, ֆ. 148, ց. 1, գ. 26, թ. 3:



հայր Թադէոս Սիրունեանը պաշտօնապէս հրաժարուելով իր տեղից և, ըստ իր ասութեան, փոխադրուելով Թիֆլիս՝ իր հիւանդութիւնը բուժելու համար, դիմեց միաբանութեանս՝ ընդունել իրան իբրև աղօթաւոր քահանայ: Միաբանութիւնս հայր Սիրունեանի սոյն ցանկութիւնը նպատակայարմար գտնելով եկեղեցւոյ շահերի և բարեզարդութեան տեսակէտից՝ ընդունեց նրան իր շարքում իբրև աղօթարար քահանայ: Յայտնելով վերոգրեալի մասին, միաբանութիւնս լիայոյս է, որ Թեմական բարձր Ատեանդ կբարեհաճի տալու իր համաձայնութիւնը սոյն խնդրի նկատմամբ»[1]:

Հուլիսի 28-ի նիստում Թեմական խորհուրդը որոշել է, որ իբրև աղոթարար քահանա՝ Սիրունյանին Մողնու Սուրբ Գևորգ եկեղեցու միաբանների շարքը ընդունելը իրենց իրավունքների մեջ չի մտնում[2]:

Սեպտեմբերի 14-ին եկեղեցու ավագերեց Հովհաննես ավ. քհյ. Տեր-Գրիգորյանը դիմել է Թեմական խորհրդին և, նկարագրելով իր ծանր վիճակը և ծերությունը, այն փաստը, որ ինքը 50 տարուց ավելի անբասիր ծառայել է եկեղեցուն, խնդրել է Թեմական խորհրդին իրեն թոշակ նշանակել, քանի որ եկեղեցին էլ մեծ եկամուտներ չունի: Նա գրել է, որ արդեն վաճառել է տնային բոլոր հարմար իրերը և գտնվում է ծանր վիճակի մեջ: Ավարտելով իր աղերսագին նամակը՝ Տեր Հովհաննեսը գրել է. «Միակ հոյսը իմ մերձաւոր Հոգ. իշխանութիւնն է ի դէմս Թեմական խորհրդի, որին դիմումս ուղղելու պատիւ ունիմ...»[3]:

Թեմական խորհուրդը սեպտեմբերի 14-ի որոշմամբ քահանային հատկացրել է ամսական 30 ռ. իբրև անհատական կենսաթոշակ՝ ցմահ ստանալու պայմանով[4]:

Նոյեմբերի 13-ին նույն քահանան նորից է դիմել Թեմական խորհրդին և հայտնել, որ իր կենսաթոշակը կտրել են, և խոնարհաբար խնդրել է այն վերականգնել[5]:

Դեկտեմբերի 25-ին Թիֆլիսի Հայոց թեմական խորհուրդը եկեղեցու Հովհաննես ավ. քհյ. Տեր-Գրիգորյանից ստացել է հետևյալ հայտարարությունը. «Սրանով յայտնում եմ թեմական խորհրդիդ, որ ուրբաթ օրը ամսոյս 22-ին ժամը մոտավորապես 12-ին կառավա-

1 ՀԱԱ, ֆ. 148, ց. 1, գ. 26, թ. 5:
2 ՀԱԱ, ֆ. 148, ց. 1, գ. 26, թ. 5 շրջ.:
3 ՀԱԱ, ֆ. 148, ց. 1, գ. 26, թ. 6:
4 ՀԱԱ, ֆ. 148, ց. 1, գ. 26, թ. 6 շրջ.:
5 ՀԱԱ, ֆ. 148, ց. 1, գ. 26, թ. 9:

րության կողմից 4-5 հոգի եկան և մեր Սուրբ Գէորգ եկեղեցին կնքեցին: Կնիքը դնելով երեք դռների վերայ և ասացին բանալիները տանել իրենց հանձնել: Բանալիները ինձ մոտ գտնվելով սորա համար ներկայացնում եմ թեմական խորհրդիդ ի գիտութիւն. եկեղեցին կնքողների հասցեն. Յովհաննէս ավագ քհյ. Տէր-Գրիգորյանց»[1]:

1934 թ. փետրվարի 5-ին Հովհաննես ավ. քհյ. Տեր-Գրիգորյանը «Ամենախոնարհ խնդրով» դիմել է Նորին Բարձր Սրբազնության հայրապետական լիազոր Գերապատիվ տ. Գեորգ արք. Չորեքչյանին. «Սրանից մի քանի ամիս առաջ դիմելով Վրաստանի Հայոց թեմական խորհրդին՝ յայտնել էի իմ դրամական նեղ վիճակի մասին և խնդրել էի, որ աչքի առաջ ունենալով իմ զառամեալ հասակը, բազմամեայ (58 տ.) քահանայական պաշտօնավարութիւնը և եկամուտիս աղբիւրների միանգամայն պակասումը, նշանակել Թեմական խորհրդին նպաստ ինձ համար, որով կարողանայի մէր ամենօրեայ ծախքերը ծածկել: Շնորհակալ եմ. Թեմական խորհուրդն ընդառաջ գնալով իմ դիմումին՝ հոկտեմբերի 1-ից (33 թ.) նշանակեց ինձ նպաստ 30 րուբլի ամիսը, որպիսի օժանդակութեան տևողութիւնը Ատինի կողմից շարունակուեց երեք ամիս, որն և կարճեալ յունվարի 1-ին ներկայ տարւոյն ինձ անյայտ պատճառով, որի հետևանօք իմ վիճակն աւելի վատթարացաւ: Ներկայիս իմ ամբողջ արդիւնքն կազմում է ընդամենը 50 ր. այն է 35 ր. Ջգրաշէնից և 15 ր. Խօջիվանքի հանգստարանից՝ հերթապահ քահանաների խմբակից:

Ներկայիս իմ եկեղեցու (Մողնու եկղ.) գրաւման և փակման հետևանքով ես միանգամայն զուրկ եմ ծխական և այլ արդիւնքից, իսկ ներկայ դժնդակ պայմաններում, ինչպէս յայտնի և պարզ է, ապրել անկարելի է երկու ծերունազարդ մարդի առանց կողմնակի օգնողներ ունենալու՝ այդ 50 րուբլի ամսականով: Այլևս ուրիշ տեղից օգնութեան յոյս չունենալով, ներկայ խոնարհ խնդրովս դիմելով Ձերդ Բարձր Սրբազնութեան՝ լիայոյս եմ, որ Դուք Ձեզ յատուկ կարեկցութեամբ, միջոցներ ձեռք կառնէք բազմամեայ աշխատաւոր ծերունուս համար որոշ կենսաթոշակ նշանակելու, չթողնելով, որ իմ ծերութեան հասակին մնամ դառն չքաւորութեան մէջ, կնքելով կեանքիս ձմեռը անմխիթար ու տրտում»[2]:

Ապրիլի 4-ին Վրաստանի Հայոց թեմական խորհրդի անդամ Ներսես ավ. քհյ. Քարիմյանը շրջաբերականով տեղեկացրել է քա-

[1] ՀԱԱ, ֆ. 148, ց. 1, գ. 24, թ. 2:
[2] ՀԱԱ, ֆ. 148, ց. 1, գ. 26, թ. 10:



ղաքի հայոց եկեղեցիների արժանապատիվ ավագ և միաբան քահանաներին, որ «Ամսոյս 3-ին ի Տէր հանգաւ Մողնու Ս. Գէորգ եկեղեցու բազմամեայ աւագ երէց տ. Հովհաննէս աւագ քահանայ Տէր-Գրիգորեանը. թաղումը նշանակուած է վաղը՝ Աւագ հինգշաբթի, ամսոյս 5-ին: Այս տխուր լուրը յայտնելով Արժանապատիւ հայրերին՝ Թեմական խորհուրդը առաջարկում է այսօր, երեկոյեան ժամը 4-ին գտնուել հանգուցեալի տանը Ամբիծքի, որից յետոյ դին դուրս կբերուի և կտարուի Ջգրաշէնի Ս. Աւետեաց եկեղեցին»[1]:

Հետագայում, ցավոք Մողնու Սուրբ Գևորգ եկեղեցու կամ նրա հոգևորականների մասին որևէ տեղեկություններ չկան: Հայտնի է միայն, որ խորհրդային տարիներին՝ հիշատակված ժամանակաշրջանից (1930-ական թթ.) հետո, եկեղեցին վերածվել էր Ազգագրական թանգարանի, ապա՝ պահեստի, իսկ 1990 թ., համարվելով վթարային և վերանորոգման ոչ ենթակա, վերջնականապես փակվել՝ մնալով պետության հաշվեկշռում:

Ի դեպ, որոշ վրաց հնագետներ (կամ հնարագետներ) փորձել են եկեղեցին ներկայացնել որպես վրացական: Մողնու Սուրբ Գևորգ եկեղեցին վերջին մի քանի տասնամյակներին հայտնվել էր Վրաստանի այն հինգ հայակական եկեղեցիների շարքում, որոնց պատկանելությունը վրացական կողմը «վիճահարույց» է համարում: Հակառակ սրան՝ Վիրահայոց թեմը բազմիցս դիմել է վրացական բազմաթիվ ատյանների՝ Մողնու եկեղեցին թեմին վերադարձնելու և կրոնի մասին օրենք ընդունելու համար, սակայն այդ կարգի բոլոր դիմումները մնացել են անարձագանք: Գուցե ո՛չ անարձագանք, քանի որ վրացական իշխանությունների անտարբեր վերաբերմունքը, վրաց եկեղեցու զավթողական մոտեցումը յուրահատուկ, նույնիսկ զուտ նպատակային, մտածված արձագանքն է հայկական մշակութային և հոգևոր արժեքների, այդ թվում և Մողնու Սուրբ Գևորգ եկեղեցու հանդեպ:

Թերևս, այս անտարբերության հետևանք էր և այն, որ անխնամ մնացած Մողնու Սուրբ Գևորգ եկեղեցին չդիմացավ Թբիլիսիում տեղացած հորդառատ անձրևներին և 2009 թ. նոյեմբերի 18-ի լույս 19-ի գիշերը՝ ժամը 4:15-ին, փլուզվեց[2]: Եկեղեցու գմբեթը լրիվ քանդվել և ընկել էր սրահի ներսը, կիսով չափ փլվել էին եկեղեցու

[1] ՀԱԱ, ֆ. 148, ց. 1, գ. 32, թ. 1:
[2] Եկեղեցու փլուզմանն անդրադարձել են մի շարք հայկական լրագրեր՝ «Ազգ», 2009, 1 դեկտեմբերի, 2010, 13 հուլիսի, 16 հուլիսի, «Երկիր», 2009, 27 նոյեմբերի, 8 դեկտեմբերի, 2009, «Իրավունք և հետաքննություն», 2010, 5-11 մայիսի, Հ[մր] 17, «Հայք», 2010, 16 փետրվարի, Հ[մր] 22 և այլն:

հյուսիսային և հարավային պատերը, արևելյան ճակատը ճաքել և դեպի դուրս էր կախվել: Կանգուն էր մնացել միայն կենտրոնական մուտքի արևելյան պատը: Ամբողջական էր մնացել միայն զանգակատունը:

Եկեղեցու փլուզման կապակցությամբ Վիրահայոց թեմը հանդես է եկել հայտարարությամբ: «Կարծում ենք՝ այս ամենի պատասխանատվությունը պետք է կրի Վրաստանի մշակույթի և հուշարձանների պահպանության նախարարությունը, որի բալանսում է գտնվում եկեղեցին: Այս ամենը այն տպավորությունն է թողնում, թե Վրաց պատրիարքարանը և իշխանությունները, չլուծելով եկեղեցիները թեմին վերադարձնելու հարցը և պատշաճ ուշադրություն չդարձնելով եկեղեցիների պահպանությանը, միտումնավոր ոչնչացնում են հայ մշակույթի կարևոր հուշարձանները»,- ասվում է հայտարարության մեջ:

Նոյեմբերի 24-ին Երևանի Հանրապետության հրապարակից դեպի Վրաստանի դեսպանատուն տեղի է ունեցել բողոքի երթ՝ ուղղված վրաց իշխանությունների և վրաց եկեղեցու դեմ: Եկեղեցիների երիտասարդական միությունների, տարբեր բուհերի, երիտասարդական կառույցների շուրջ 1000 անդամ, հոգևոր դասի ներկայացուցիչների մասնակցությամբ, բողոքել են Մողնու եկեղեցու փլուզման կապակցությամբ: Բողոքող երիտասարդները «Ո՛չ մշակութային եղեռնին», «Վերադարձրե՛ք մեզ մեր եկեղեցիները», «Մի՞թե դուք քրիստոնյա չեք», «Մի՛ աղավաղեք պատմությունը» և այլ կարգախոսներով, վանկարկումներով, թմբկահարների ուղեկցությամբ հասել են Վրաստանի դեսպանատուն: Հինգ հոգուց բաղկացած պատվիրակությունը հանդիպել է Հայաստանում Վրաստանի արտակարգ և լիազոր դեսպան Գրիգոր Տաբատաձեի հետ: Պատվիրակները ներկայացրել են իրենց պահանջները:

Դեսպանի հետ զրույցի ընթացքում Արարատյան Հայրապետական թեմի «Արարատ» երիտասարդական միության հոգևոր պատասխանատու Տ. Հակոբ քհյ. Խաչատրյանը հույս է հայտնել, որ բողոքի այս ալիքն անպատասխան չի մնա: Դեսպանը հավաստիացրել է, որ նամակը կներկայացվի պատշաճ մարմիններին և պատասխան նամակը կուղարկվի առաջնորդանիստ Սուրբ Սարգիս եկեղեցի:

ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանի հետ նոյեմբերի 26-ին տեղի ունեցած հանդիպման ժամանակ Հայաստանում Վրաստանի դեսպան Գրիգոր Տաբատաձեն հայտարարել է, թե Մողնու Սուրբ Գևորգ եկեղեցին, ընդունված որոշման համաձայն, մեկ տարվա ընթացքում կվերականգնվի:



Նոյեմբերի 28-29-ին Հայաստանից մասնագետները են եղել Թբիլիսիում և կատարել անհրաժեշտ ուսումնասիրություններ: Ձեռք է բերվել երկկողմ պայմանավորվածություն, որ եկեղեցու վերականգնման նախագծային և շինարարական աշխատանքներին կմասնակցեն նաև հայ մասնագետները:

Սակայն, ինչպես այդ օրերին նշում էին հայկական լրատվամիջոցները, արդեն իսկ կարելի էր ասել, որ եկեղեցին հնարավոր չէ վերականգնել[1]: Նախ՝ պահպանված չէ Սուրբ Գևորգի որևէ նախագծային պլան, որի հիման վրա հնարավոր կլիներ եկեղեցու վերականգնումը, ապա և՝ եկեղեցում քանդման աշխատանքները կատարվել են առանց որևէ մասնագետ-ճարտարապետի մասնակցության: Այնուամենայնիվ, եթե նույնիսկ որևէ հրաշքով վերականգնվի հայկական եկեղեցին, այն այլևս չի լինի նախկինը:

Մողնու եկեղեցու վերականգնման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փաթեթի պատրաստման համար Վրաստանի պետական բյուջեից հատկացվել է 50.000 վրացական լարի կամ 26.790 ԱՄՆ դոլար: Այդ մասին, ըստ Հայաստանի մշակույթի նախարարության, տեղեկացրել են Վրաստանի մշակույթի հուշարձանների պահպանության և սպորտի նախարարությունից: Գումարը հատկացվել է վրացական նախարարության մշակութային ժառանգության պահպանության ազգային գործակալությանը:

Մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը եկեղեցու փլուզման փաստի կապակցությամբ իր մտահոգությունն էր հայտնել Վրաստանի մշակույթի, հուշարձանների պահպանության և սպորտի նախարար Նիկոլոզ Ռուռուային, որը պատրաստակամություն էր հայտնել աջակցելու խնդրի լուծմանը: Ն. Ռուռուան հավաստել էր, որ եկեղեցին իրոք գտնվում էր անմխիթար վիճակում, և նախարարությունն արդեն քայլեր է ձեռնարկել վերականգնման աշխատանքների ուղղությամբ՝ աշխատանքների բոլոր փուլերին մասնակցելու համար նաև հայ վերականգնող ճարտարապետների հրավիրելով Վրաստան:

2009 թ. նոյեմբերի 20-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի է ունեցել Գերագույն Հոգևոր Խորհրդի ժողով, որի ընթացքում քննության է առնվել Վիրահայոց թեմի Մողնու Սուրբ

[1] «Ազգ», 2009, 1 դեկտեմբերի:

Գևորգ հայոց եկեղեցու փլուզման խնդիրը: Նշվել է, որ Սուրբ Գևորգ եկեղեցում պահպանվելիս են եղել Սուրբ Հակոբ Մծբնա Հայրապետի, Սուրբ Ղունկիանոսի և Սուրբ Թեոդորոսի մասունքները:

Մողնու Սուրբ Գևորգ եկեղեցին մեկն էր այն հինգ եկեղեցիներից, որոնք Վիրահայոց թեմին վերադարձնելու նպատակով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Վիրահայոց թեմի անունից բազմաթիվ անպատասխան դիմումներ էին հղվել Վրաստանի ղեկավարությանը, Վրաց պատրիարքարանին, միջազգային կազմակերպություններին: Մողնու Սուրբ Գևորգ եկեղեցին, ըստ Վիրահայոց թեմի մամլո դիվանի, Թիֆլիսի Նորաշեն, Շամքորեցոց Սուրբ Աստվածածին, Սուրբ Նշան, Երևանցոց Սուրբ Մինաս և Ախալցխայի Սուրբ Նշան եկեղեցիների հետ Վրաց պատրիարքարանի կողմից հռչակվել է վիճելի, որով և արդարացվում է դրանք Վիրահայոց թեմին չվերադարձնելու մտադրությունը: Հարկ է նշել, որ Մողնու Սուրբ Գևորգը երկրորդ փլուզված եկեղեցին է 1989 թ. ավերված Շամքորեցոց Սուրբ Աստվածածին եկեղեցուց հետո: Հետաքրքիր է, որ փլուզված երկու եկեղեցիներն էլ պատկանում են այն հայկական եկեղեցիների թվին, որոնք վերադարձնելու հայց էր ներկայացրել Վիրահայոց թեմը:

Սուրբ Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհուրդը ընդունել է ստորև ներկայացվող պաշտոնական հայտարարությունը.

«Գերագույն Հոգևոր Խորհուրդը ցավով է հաստատում Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսում 1356 թ. կառուցված Մողնեցոց Սուրբ Գևորգ հայոց եկեղեցու փլուզման փաստը: Գերագույն Հոգևոր Խորհուրդն ափսոսանքով է արձանագրում, որ անարդյունք մնացին Հայաստանի Հանրապետության իշխանությունների և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գործադրած տարիների ջանքերը Վրաստանի Հանրապետության իշխանությունների և Վրաց Ուղղափառ Եկեղեցու հետ բանակցությունների ճանապարհով կարգավորելու Վիրահայոց թեմի իրավաբանական անձի կարգավիճակի և հայոց եկեղեցիների վերադարձման հարցերը: Հիշյալ խնդիրների կարգավորման մեջ վրացական կողմի դրսևորած հանիրավի ձգտումների հետևանքներից է նաև Սուրբ Գևորգ եկեղեցու փլուզումը, որի ամբողջ պատասխանատվությունը կրում են Վրաստանի Հանրապետության իշխանությունները և Վրաց Ուղղափառ Եկեղեցին: Հայկական սրբավայրերի պահպանության ուղղությամբ վրաց պետության դրսևորած անտարբերությունը որևէ կերպ չի համապատասխանում բարիդրացիական հարաբերություններ հաստատելու, համամարդկային արժեքներին հավատարիմ լինելու, երկրում ազգային փոքրամասնությունների իրավունքները հարգելու և նրանց պատմամշակութային ժառանգությունը պահպանելու ուղղությամբ վրաց պետության կողմից մշտապես հնչեցվող հայտարարություններին և միջազգային հանրության առջև ստանձնած պարտավորություններին:



Գերագույն Հոգևոր Խորհուրդը կոչ է ուղղում Վրաստանի Հանրապետության իշխանություններին և Վրաց Ուղղափառ Եկեղեցուն անհապաղ քայլեր ձեռնարկել Վրաստանի Հայոց Թեմին իրավաբանական անձի կարգավիճակ տրամադրելու, Վրաստանի հայկական եկեղեցիները Վիրահայոց թեմին վերադարձնելու՝ վիրահայության ազգային-եկեղեցական կյանքի բնականոն կազմակերպման և հայկական սրբավայրերի ապահով պահպանության համար»[1]:

Ներկայացնելով Թբիլիսիի Մողնու Սուրբ Գևորգ եկեղեցու պատմական անցյալը՝ հարկ է նշել նաև, որ այս եկեղեցին սոսկ աղոթատեղի չէր, այն միաժամանակ ուսումնական կենտրոն էր: Համառոտ նաև այդ մասին:

## ՄՈՂՆՈՒ ԴՊՐՈՑԸ

Սուրբ Գևորգ եկեղեցու (Մողնու փողոց) արական միջնակարգ դպրոցը Թիֆլիսի հնագույն և նշանավոր ուսումնարաններից էր[2]: Ըստ երևույթին, հիմնադրվել է 1849 թ. և սկսել է գործել 1850-ից: Ստ. Մալխասյանը այն հիշատակում է 1862 թ. քաղաքի հայ ծխական դպրոցների թվում: 1871 թ. ունեցել է մեկ դասարան, 2 ուսուցիչ և 50 աշակերտ, 1873 թ.՝ 70 աշակերտ: 1875 թ. ունեցել է 2 ուսուցիչ և 70 աշակերտ[3]: 1877 թ. ունեցել է 13 ուսուցիչ, 80 աշակերտ: 1881 թ. ուսուցիչների ու աշակերտների քանակը նվազել է. դասավանդել է 4 ուսուցիչ, սովորել 72 աշակերտ: Դպրոցը գործել է մինչև 1884 թ., որից հետո չի հիշատակվում մինչև 1914 թ., երբ եղել են 23 ուսուցիչ և 372 աշակերտ:

---

1 «Էջմիածին», 2009/ ԺԱ., էջ 148-149:

2 **Ս. Խուդոյան,** Արևելահայ դպրոցները 1830-1920 թթ., Երևան, 1987, էջ 585-586:

3 ՀԱԱ, ֆ. 53, ց.1, գ. 3983, թ.11:

## ԳԱՅԱՆՅԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑ

1869 թ. սկզբներին Թիֆլիսում մի խումբ հոգևորականներ և աշխարհիկ անձինք մեծ մասամբ երիտասարդներ որոշում են հիմնել հայ օրիորդաց մի նոր ուսումնարան[1]: Այդ խումբը դիմում է Վրաստանի և Իմերեթի վիճակային առաջնորդ Մակար արքեպիսկոպոսին՝ նրա օրհնությունն ու պաշտպանությունը ստանալու համար: Առաջնորդը սիրով ընդունելով այդ առաջարկը, 1869 թ. մայիսի 26-ին շնորհում է հետևյալ օրհնագիրը.

«Ուսումնասիրացն մերոց ի Տփխիս Յարգոյ Նիկողայոսի Ալադաթեանց, Մարտիրոսի Սիմէօնեանց, Ստեփաննոսի Պալասանեանց, Զաքարիայ Գրիգորեանց, Յովհաննու Քաթանեանց, Միքայելի Սալամբէկեանց, Միքայելի Գոլոլեանց, Գէորգայ Եւանգուլեանց և Գրիգորի Տէր Յարութիւնեանց:

*Աստուածային օրհնութեամբ և հայրական սիրով ծանուցանեմք.*

Ի վաղուց հետէ ցանկացեալ փափաքէաք զերկոսին զայսոսիկ ամենակարևոր առարկայս տարրացուցանէ ի Հայ հասարակութեան քաղաքիս, նախ՝ զՀայախօսութիւնն առնել գերդաստանական լեզու յամենայն ընտանեկան և ընկերական զրուցատրութիւնս. և երկրորդ՝ զեկեղեցական գրաբար կարդացմունս՝ աղօթս և զընթերցուածս Սուրբ Գրոց հասկանալիս գործել ամենից անդամոց եկեղեցւոյ Հայոց. և յայս իսկ նպատակ՝ տուաք բանալ և գծխական դպրոցս կրկին սեռից ըստ ներելոյ միջոցաց ի թաղս թաղս և յաբուարձանս քաղաքիս. սակայն և ոչ այնորքիւք շատացեալ հասանել մերումս ցանկացեալ նպատակի, այժմ կամիմք շնորհիւ Ամենաբարձրելոյն բանալ զծխական ուսումնարան մի օրիորդաց յանուն սրբոյն Գայիանեայ ընդ հովանեաւ Մողնւոյ սուրբ Գէորգ եկեղեցւոյն Հայոց, ընդ գլխաւոր կառավարութեամբ արժանապատիւ Յարու-

[1] Դպրոցի մասին տես՝ ՀԱԱ, ֆ. 56, ց. 15, գ. 3, թ. 51, գ. 43, թ. 20, գ. 50, թ. 65-68, գ. 199, թ. 17-23, գ. 182, թ. 25, ֆ. 441, ց. 1, գ. 7, «Տասնամեակ սուրբ Գայիանեան հայ օրիորդաց միջնակարգ ուսումնարանի», Թիֆլիզ, 1879, «Թիֆլիսի Գայիանեան օրիորդաց դպրոցի տեղեկագիրը 1908/9 մինչև 1911/12 թիւը», Թիֆլիս, 1912, «Թիֆլիսի Գայիանեան օրիորդաց դպրոցի տեղեկագիրը 1912/13, 1913/14, 1914/15 ուս. տար.», Թիֆլիս, 1915, «Արարատ» ամսագիր, 1869, Գ., էջ 67-68, 1878, ԺԲ., էջ 452, 1917, էջ 620, «Մեղու Հայաստանի», Հմր 75, 1884, «Նոր Դպրոց», Հմր 33-34, 1911, Ս. Խուդոյան, Արևելահայ դպրոցները 1830-1920 թթ. Երևան, 1987, էջ 585-586, Մ. Սանթրոսյան, Արևելահայ դպրոցները 19-րդ դարի առաջին կեսին, էջ 249-250, Ս. Մալխասյան, Համառոտ պատմություն Ներսիսյան հոգևոր դպրոցի յոթանասունհինգամյա գոյության (1824-1899 թթ.), Թիֆլիս, 1900, էջ 116:



թիւն քահանայի Սուզանաճեանց, յաւէտ այնու դիտաւորութեամբ, զի ըստ ներելոյ միջոցաց բացցին և բաժանմունք նորին ի թաղի Վանաց մայր եկեղեցւոյ, ի Հավլաբարի և յայլ ուր ի քաղաքիս:

Եւ վասն զի հոգեկան պատրաստականութիւնք ձեր յայսպիսի աստուածահաճոյ ձեռնարկս ի վաղուց անտի յայտնի են մեզ, վասն որոյ այլ ևս հարցանելոյ զկամս ձեր յայս գործ. նշանակեմք ի ձէնջ զյարգոյ Նիկողայոսն Ալադաթեանց, զՍտեփաննոսն Պալասանեանց, զԳէորգն Եւանգուլեանց, զՅովհաննէսն Քաթանեանց և Զաքարիայն Գրիգորեանց խնամակալս յայնր ուսումնարանի, իսկ զամենեսին զձեզ՝ որք ձեռնհասք էաք երկնատուր պարգևօք օժանդակել ուսմնաց և դաստիարակութեանց վարժելոց ի նմին օրիորդաց առանց զանազանելոյ ի միմեանց՝ հրաւիրեմք ի պաշտօն ուսուցչութեան պատշաճական առարկայից աւանդելոց ի նմին, առ որ և պատուիրեմք գլխաւոր կառավարչի և խնամակալաց նորին ընտրել ի միջոյ ձերմէ զոմն տեսուչ ուսումնարանի՝ առաջարկելով մեզ ի հաստատութիւն:

Իսկ մեք յամենայնի վստահ եմք յԱստուած և ի հոգեկան բաեմասնութիւնք ձեր, զի դուք ամենեքին զուն գործեսջիք արդարացուցանել զբարի վարկումն մեր զձէնջ, և բարեպաշտօն ժողովրդականք մեր չունիցին խնայել զնիւթական միջոցս ի զարգացումն և ի յառաջադիմութիւն նորահաստատ ուսումնարանին այնորիկ ի փառս Աստուծոյ և ի սէր զաւակաց իւրեանց:

Մնամք վասն յառաջադիմութեան նորահաստատ ուսումնարանիդ և վասն ամենից բարեջան աշխատաւորաց ի նմին ամենաջերմեռանդ աղօթարար»[1]:

Այսպիսով, օրհնագրի հիման վրա ուսումնարանը բացվել է 1869 թ. հունիսի 17-ին՝ Սուրբ Գայանյանց կուսանաց տոնի օրը: Այդ առթիվ, «Մեղու Հայաստանին» գրել է. «Ժամը 9-ին առաւօտեան հրաւիրեալների մեծ մասը, այսինքն՝ մի քանի եկեղեցեաց աւագ քահանաները իրանց միաբանութեամբ և երեցփոխաններով, դպրոցի խնամակալները, ուսուցիչները, աշակերտուհիք իրանց ծնողների հետ, ժողովեցան դպրոցի համար վարձած պ. Յ. Քաթանեանցի տանը Վելեամինի փողոցում: Ժամը 10-ին Սրբազան Առաջնորդ Մակար Արք Եպիսկոպոսը, որ նոր էր պատճառը այս դպրոցի հիմնարկութեան, բարեհաճեցաւ ինքն անձամբ ներկայ գտանվելու կատարելու դպրոցի օրհնութեան հանդէսը: Օրհնութիւնը կատարելուց յետ, Նորին Բարձր Սրբազնութիւնը օրհնեց ջուրը, որով սրսկե-

[1] «Տասնամեակ սուրբ Գայանեան հայ օրիորդաց միջնակարգ ուսումնարանի», Թիֆլիզ, 1879, էջ 2-4:

ցան բոլոր ներկայ գտնուողները: Օրհնութիւնը վերջանալուց յետոյ Արժանապատիւ Տէր Յարութիւն քահանայն Սուգանաճեանց և պ. Զ. Գրիգորեանցը, դպրոցի տեսուչը, կարդացին ճառեր... Սրանից յետ Նորին Բարձր Սրբազնութիւնը արաւ համառօտ և ազդու ատենախօսութիւն, որի բովանդակութիւնն էին, թէ իրան դրդող պատճառները այս օրիորդական դպրոցը հաստատելու և թէ դպրոցների նշանակութիւնը ընդհանրապէս, որոնք Նորին Բարձր Սրբազնութիւնը կոչեց եկեղեցու բեմեր, որոնցից պէտք է քարոզուի կրթութիւն և ուսումն մատաղ օրիորդներին, որով սոցա մէջ ծաւալի բարեպաշտութիւն, ջերմեռանդութիւն, սէր դէպի Հայ կրօնը և եկեղեցին և ազգը: Յետոյ գեղեցիկ կերպով կապեց Սրբազան ատենաբանը վերոյիշեալ մտքերի հետ և սրբուհի Գայիանէի անունը, որն որ կրում է իր վերայ դպրոցը, ասելով թէ սուրբ Գայիանէի անունն է կրում դպրոցս. Գայիանէի, որն որ եօթանասուն կուսանաց կրթող մայրն էր և կրթեց նրանց աստուածապաշտութեան և ջերմեռանդութեան մէջ, այնպէս, որ նոքա մեր Փրկչին հարսնացուն եղան և եկեղեցու նահատակների շարքը մտան: Նոյնպէս և այս նորահաստատ ուսումնարանը, որ կրում է յիշեալ սրբուհոյ անունը, նորա հովանաւորութեամբ և բարեխօսութեամբ Աստուծոյ առաջին, պէտք է կրթէ իրան ապաւինուած Հայ օրիորդներին ջերմեռանդութեան, բարեպաշտութեան և աստուածապաշտութեան մէջ, լուսաւորելով նոցա մտքերը գիտութիւններով և արհեստներով, որ նոքա ժամանակով իբրև բարի մայրեր՝ հայ հասարակութեան երջանկութեան և բարօրութեան պատճառ դառնան, տալով իրանց և այլոց զաւակներին բարոյական կրթութիւն: Սրանից յետ Սրբազան առաջնորդը օրհնելով ամէնքին աւարտեց հանդէսը»[1]:

Ուսումնարանի բացման օրը ներկա են եղել միայն հինգ աշակերտուհիներ՝ Նատալիա Սկանդարյանը (հետագայում վարժուհի նույն ուսումնարանում), Սրբուհի Սկանդարյանը, Մարիամ Խախուտյանը, Սրբուհի Բայսողոյանը և Սրբուհի Շահրուդաղյանը: Աշակերտուհիներին ամսական նշանակվել էր 3 ռ. այն պայմանով, որ 10-ից մեկը ձրի սովորի: Իսկ համազգեստ է ընդունվել մեխակագույն շրջազգեստը, սև գոգնոցը և սպիտակ թիկնոցը:

Դպրոցի առաջին տեսուչը եղել է Զաքարիա Գրիգորյանը, առաջին ուսուցչուհին՝ օր. Մարիամ Շահպարոնյանը (հետո՝ տիկին Մելիքյան): Ձրիաբար դասավանդել են Գրիգոր Տեր-Հարությունյանը՝ հայոց լեզու, Գևորգ Բարխուդարյանը՝ ռուսաց լեզու, Ստեփաննոս

[1] «Մեղու Հայաստանի», 1869, 21 հունիսի, Հմր 23:



Պալասանյանը՝ հայերեն և ֆրանսերեն, Պետրոս Սիմոնյանը («Մեղու Հայաստանի» լրագրի խմբագիր)՝ ազգային և ընդհանուր պատմություն (աշխարհագրություն), Մարտիրոս Սիմոնյանը՝ թվաբանություն, Զաքարիա Գրիգորյանը՝ բնական գիտություն, Մարիամ Շահպարոնյանը՝ պար և ձեռագործ. և ուրիշներ: Դպրոցում անվարձահատույց դասավանդել է նաև հայ ականավոր հրապարակախոս, կանանց կրթության եռանդուն պաշտպան Գրիգոր Արծրունին:

1870 թ. հունիսի 7-ին ուսումնարանը տոնել է իր գոյության առաջին տարեդարձը: Այդ առթիվ նշվել է. «Բոլոր բարերարները հրաւիրուած էին ներկա գտնվելու: Տասն ժամն լրացած՝ տեղոյս առաջնորդ Մակար Բարձր Սրբազան Հայրս, Սրբազան Պետրոս Եպիսկոպոսի հետ եկան դպրոցը: Բոլոր խնամակալները և ուսուցիչները ընդառաջեցին երկու Բարձր Սրբազաններին, որոնք իրանց ներկայութեամբ կամեցան ցոյց տալ իրանց համակրութիւնն և պաշտպանութիւնն այսպիսի մի ազնիւ և մեծ գործին, ինչպիսին է մի օրիորդական դպրոց... Աշակերտուհիք միասին երգեցին «Միօնի որդիքը» և յետոյ դպրոցի գլխաւոր կառավարիչ արժանապատիւ Սուգանաճեանց Տէր-Յարութիւն Հայրը կարդաց ճառ, որոյ մէջ յայտնեց իր շնորհակալութիւն նախ Հոգևոր իշխանութեան նորա հովանաւորութեան համար, յետոյ թէ՛ բարերարներին, թէ՛ խնամակալներին, թէ՛ ուսուցչաց իրանց ջերմեռանդութեան համար առ այս փսեմ գործը և թէ՛ վերջապէս աշակերտուհիներին իրանց ջանասիրութեան համար»[1]:

Ուսումնարանը իր գոյության երկրորդ տարվա ընթացքում ընդարձակվել է: Հրավիրվել են նոր ուսուցիչներ՝ արժ. Մուշեղ քհյ. Տեր-Ղևոնդյանը, Ամիրան Մանդինյանը, Միքայել Սույյանը, Սենեքերիմ Արծրունին, Կարապետ Ֆոյաճյանը, Վարդան Եղիազարյանը և Պողոս Ղամբարյանը: Աշակերտուհիների թիվն ավելանալու և նոր դասարաններ բացվելու պատճառով երկրորդ տարվա ընթացքում հրավիրվել են երկու նոր վարժուհի՝ օրիորդներ իշխանուհի Մարիամ Թումանովը և Լուիզա Դաշկևիչը:

1871 թ. հունիսի 13-ին նշվել է ուսումնարանի երկրորդ տարեդարձը[2]:

Աստիճանաբար ուսումնարանում ստեղծվել է փոքրիկ գրադարան, որը 1872 թ. ունեցել է 100 կտոր հայերեն, 72 կտոր ռուսերեն և

[1] «Մեղու Հայաստանի», 1870, 13 հունիսի, Հմր 14:

[2] «Մեղու Հայաստանի», 1871, 19 հունիսի, Հմր 23:

8 կտոր օտար լեզուներով գրքեր: Գրադարանը ստացել է նաև մի շարք պարբերականներ:

1872-1873 ուս. տարում ուսումնարանում սովորել են 61 աշակերտուհիներ, որոնց տարվա ընթացքում միացել են ևս 47 աշակերտուհիներ: Իսկ իրենց կամքով ուսումնարանից հեռացել են 27 աշակերտուհիներ:

1874 թ. սեպտեմբերի 8-ին ուսումնարանը տոնել է իր հինգերորդ տարեդարձը: Առավոտյան ժամը 11-ին բոլոր աշակերտուհիները իրենց վարժուհիներով և ուսուցիչներով մտել են Մողնու եկեղեցի, որտեղ հավաքված է եղել ժողովրդի մեծ բազմություն: Թեմի առաջնորդ Մակար արքեպիսկոպոսի կարգադրությամբ այստեղ էին հավաքվել նաև քաղաքի բոլոր քահանաները՝ միաժամանակ կատարելու մաղթանք Նորին Կայսերական Բարձրություն Օլգա Ֆեոդորովնայի ծննդյան տոնի առթիվ, որը սովորաբար կատարվում էր Վանքի մայր եկեղեցում: Մաղթանքից հետո բոլոր ներկա գտնվողները ուսումնարանի դահլիճում մասնակցել են հանդիսավոր տոնակատարությանը[1]:

Մակար արքեպիսկոպոսը, տեսնելով վարչության ջանքերն ու արդյունավետ գործունեությունը, 1875 թ. օգոստոսի 31-ին ուսումնարանին օրհնագրով շնորհել է միջնակարգի կոչում: Նույն տարում եկեղեցու բակում կառուցվել է դպրոցի նոր շենք՝ 6 դասարանով, 23 ուսուցչով և 152 աշակերտով:

1875 թ. սեպտեմբերի 9-ին դպրոցում կայացել է ժողով, որի ժամանակ Հակոբ Տեր- Հովհաննիսյանի փոխարեն տեսուչ է ընտրվել բնական գիտությունների գիտակ Արշակ Նահապետյանը:

1875-1876 ուս. տարում մանկավարժական խորհրդի որոշմամբ դպրոցն ավարտել են առաջադեմ աշակերտուհիներ՝ Եվգենիա Նահապետյանը, Թագուհի Ադամյանը, Նատալիա Ղուբալյանը, Սրբուհի Տեր-Սարգսյանը, Մարիամ Շահիկյանը և Սառա Լազարյանը: Թեմի առաջնորդը նրանց նվիրել է մեկական «Ավետարան»:

1876 թ. մարտի 31-ին Թիֆլիսից հեռացել է ուսումնարանի հիմնադիր Մակար արքեպիսկոպոսը, իսկ նրա փոխարեն թեմի առաջնորդ է նշանակվել Գաբրիել արք. Այվազյանը: Ապրիլի 22-ին նոր առաջնորդը այցելել է դպրոց, որտեղ տեսուչ Արշակ Նահապետյանը նրան ներկայացրել է ուսումնարանի դրության մասին տեղեկագիր: Նշվել է, որ ուսումնարանում սովորում են 148 աշակերտուհիներ, դասավանդում են վարժուհիներ՝ Հեղինե Տեր-Գրիգորյանը,

[1] «Մեղու Հայաստանի», 1874, 14 սեպտեմբերի, Հմր 36:



Գայանե Քալանթարյանը, Մարիամ Բաբանասյանը և Մարիամ Սվեչնիկյանը:

1877-1878 ուս. տարվա ընթացքում ուսումնական ծրագրերին ավելացել է նաև մանկական խաղերի ուսուցումը: Այդ ծրագիրը իրագործվել է Սոֆիա Բաբայանի շնորհիվ, որը ձրիաբար հանձն էր առել առարկայի դասավանդումը: Ուսումնական տարվա ընթացքում դպրոցն ստացել է «Փորձ», «Արարատ», «Հայկական աշխարհ», «Մեղու Հայաստանի» և այլ պարբերականներ: Դպրոցի շնորհալի աշակերտուհիները ասեղնագործել էին Հայաստանի մանրանկար քարտեզը, որը մեծ հավանության էր առաջացել թեմի առաջնորդի կողմից:

1878 թ. սեպտեմբերի 10-ին նշվել է ուսումնարանի 9-րդ տարեդարձը: Մողնու Սուրբ Գևորգ եկեղեցում պատարագին ներկա լինելուց հետո ուսումնարանի աշակերտուհիները, վարժուհիները, ուսուցիչները և տոմսակներով հրավիրված հասարակության ներկայացուցիչները հավաքվել են ուսումնարանի նոր դահլիճում՝ տոնակատարությանը մասնակցելու համար: Հանդեսի սկզբում ելույթ է ունեցել հայր Սուզանաճյանը՝ ներկայացնելով ուսումնարանի համառոտ պատմությունը: Այնուհետև ուսումնարանի տեսուչ Աբիսողոմ Հովհաննիսյանը ներկայացրել է ուսումնական մասի հաշիվը, իսկ պ. Սուլյանը, որը ուսումնարանի գանձապահն էր, տնտեսական մասի հաշիվը: Հանդեսը ավարտվել է թեմի առաջնորդ Գաբրիել արք. Այվազյանի մի քանի ազդեցիկ խոսքերով: Այդ օրը հօգուտ ուսումնարանի տեղի է ունեցել վիճակախաղ: Օրվա հերոսները եղել են Ռոտինյանները, որոնք ընդարձակել էին ուսումնարանի շինությունը, և յուրաքանչյուրն իր ելույթում գովասանքի խոսքեր է ուղղել նրանց:

1878-1879 ուս. տարին դպրոցի համար նշանավոր է եղել հինգերորդ դասատան բացվելով:

1879 թ. մեծ հանդիսավորությամբ նշվել է դպրոցի առաջին տասնամյակը: Այդ տաս տարիներին այստեղ անվարձահատույց դասավանդել է 44 ուսուցիչ: Այդ թվում Հարություն քհյ. Սուզանաճյանը, Արիստակես քհյ. Բենքլյանը, Մուշեղ քհյ. Տեր- Ղևոնդյանը, Եզնիկ քհյ. Երզնկյանը, ինչպես նաև հայտնի մտավորականներ Ստեփաննոս Պալասանյանը, Պետրոս Սիմոնյանը, Միքայել Սալամբեկյանը, Գրիգոր Արծրունին, Սեդրակ Մանդինյանը և ուրիշներ:

1880 թ. հունիսին Գաբրիել Սունդուկյանը դպրոցին է հանձնել հավլաբարաբնակ հանգուցյալ Տեր-Աբրահամյանի կտակած 1.000 ռուբլին:

1881 թ. դպրոցն ունեցել է 34 ուսուցիչ և 280 աշակերտուհի:

1882 թ. հոկտեմբերի 4-ին վախճանվել է Ալեքսանդր Տեր-Ծմավոնյանը, որը, անժառանգ մնալով, մի հոչակավոր մատենադարան՝ հայերէն տպագիր և ձեռագիր գրքերի, իր ծխատեր արժանապատիվ Միշեղ քհյ. Տեր-Ղևոնդյանի հորդորմամբ, կտակել է Գայանյան ուսումնարանին: Այսպիսով ուսումնարանը ստացել է մի հարուստ մատենադարան, որին նախանձել կարող էին ազգային բոլոր դպրոցները[1]: Ի դեպ, այդ մատենադարանը հանգուցյալը ժառանգել էր իր հորեղբայր Նիկողայոս Տեր-Ծմավոնյանից:

1883 թ. նոյեմբերի 23-ին, «Մեղու Հայաստանին», անդրադառնալով Գայանյան դպրոցի ստեղծման պատմությանը, գրել է. «...Մողնու եկեղեցւոյ տան շինութիւնից առաջ դպրոցը գոյութիւն ունէր շատ տարիներ. նախ պ. Ց. Քաթանեանցի տանը, ապա Բէհրութեանցի տանը (այժմ Ցովնանեան-Մարիամեան դպրոցի շինուածք) և ի վերջոյ մի քանի տարի պ. Այվազեանցի տանը, վարձու, իսկ երբ Մողնու երեցփոխան մեծ. պ. Բ. Ց. Խօջայեանցը շինեց դպրոցի ներկայ շինութիւնը եկեղեցւոյ դրամներով, հրաւիրեց դպրոցի վարչութեան տեղափոխել այն եկեղեցու բակն, որոյ անուամբ նա բացուած էր...»[2]:

1884 թ. փետրվարի 16-ին Վարդանանց տոնի օրը Գայանյան օրիորդաց դպրոցում թեմի առաջնորդի և խուռն բազմության ներկայությամբ հանդիսավոր նշվել է տոնը: Այդ երեկո հայոց թատերական խումբը Վարդանանց հիշատակին նվիրված մի ներկայացում է տվել: Այդ առթիվ նշվել է. «Ասեղ ձգելու տեղ չկար թատրոնի դահլիճում. այդպէս բան դեռ տեսնուած չէր: Շատերը ոտքի վերայ էին կանգնած, շատերն էլ դուրսն էին մնացել»[3]:

1885 թ. ապրիլի 29-ին Վրաստանի Հայոց կոնսիստորիան դպրոցի վարչությունից պահանջել է ուսուցիչների և աշակերտների թվի մասին տեղեկություններ 1884 թ. վերաբերյալ՝ թեմակալ առաջնորդին ներկայացնելու համար: Այդ կարգադրությանն ի պատասխան, ուսումնարանի վարչությունը գրավոր հայտնել է, որ ուսումնարանում դասավանդել են 20 արական և 14 իգական սեռի ուսուցիչներ, աշակերտների թիվը կազմել է 267 հոգի[4]:

Դպրոցը 1885 թ. փակվել է, իսկ վերաբացվելուց հետո՝ 1886 թ., դարձել երկդասյան, որտեղ դասավանդվել են հետևյալ առարկաները՝ սրբազան պատմություն, հայոց լեզու, ռուսաց լեզու, թվաբանություն, հայոց պատմություն և Հայաստանի աշխարհագրություն, ընդհանուր պատմություն, ձեռագործ:

[1] «Արձագանք», 1882, Հմր 34, էջ 530:
[2] «Մեղու Հայաստանի», 1883, 23 նոյեմբերի, Հմր 110:
[3] «Նոր Դար», 1884, 18 փետրվարի, Հմր 28:
[4] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2941, թ. 31-32:



1889/90 ուս. տարում ավագ ուսուցչուհի Գայանե Քալանթարյանը ներկայացրել է ուսումնարանի ուսուցչական կազմը.

Սահակ քհյ. Ավագյան Սահակյանց – ավարտել է Ներսիսյան դպրոցը, այստեղ աշխատում է 1887 թ., դասավանդում է «զՍրբազան պատմութիւն հին և նոր կտակարանաց», ստանում է 390 ռ. տարեկան ռոճիկ,

Հովհաննես սրկվ. Պետրոսյան Նազարյանց – ավարտել է Ներսիսյան դպրոցը, աշխատում է 1886 թ., դասավանդում է «զաղօթս և զՍրբազան պատմութիւն հին կտակարանի», ինչպես նաև հայոց լեզու առաջին դասարանի Ա և Բ բաժանմունքներում, ստանում է 650 ռ. տարեկան ռոճիկ,

Նիկողայոս Ռոստոմյան Քարամյանց – ավարտել է Գերմանիայի համալսարանը, աշխատում է 1889 թ. սեպտեմբերից, դասավանդում է հայոց լեզու երկրորդ դասարանի Բ բաժանմունքում, ստանում է 210 ռ. տարեկան ռոճիկ,

Իսահակ Ղազարյան Հարությունյանց –ավարտել է Ներսիսյան դպրոցը, աշխատում է 1889 թ. սեպտեմբերից, դասավանդում է հայոց լեզու առաջին դասարանի Գ բաժանմունքում և երկրորդ դասարանի Ա բաժանմունքում, ստանում է 385 ռ. տարեկան ռոճիկ,

Մարիամ Հովհաննիսյան Ասլամազյան – ավարտել է Սանկտ Պետերբուրգի բարձրագույն օրիորդաց դասընթացը, աշխատում է 1886 թ., դասավանդում է ռուսաց լեզու երկրորդ դասարանի Ա և Բ բաժանմունքներում, ստանում է 420 ռ. տարեկան ռոճիկ,

Եղիսաբեթ Ասլանյան Մանուչարյան – ավարտել է Թիֆլիսի օրիորդաց գիմնազիան, այստեղ աշխատում է 1886 թ., դասավանդում է ռուսաց լեզու առաջին դասարանի Ա և Բ բաժանմունքներում, ինչպես նաև հանդիսանում է դաստիարակ-վարժուհի առաջին դասարանի Բ բաժանմունքում, ստանում է 300 ռ. տարեկան ռոճիկ,

Կատարինե Տեր Հարությունյան Սուզանաճյան – ավարտել է Գայանյան օրիորդաց ուսումնարանը, այստեղ աշխատում է 1886 թ., դասավանդում է հայոց լեզու, ձեռագործ և թվաբանություն առաջին դասարանի Ա բաժանմունքում, հանդիսանում է նաև դաստիարակ-վարժուհի նույն բաժանմունքի, ստանում է 300 ռ. տարեկան ռոճիկ,

Նատալիա Հովհաննիսյան Սկանդարյան – ավարտել է Գայանյան օրիորդաց ուսումնարանը, այստեղ աշխատում է 1886 թ.,

դասավանդում է հայոց լեզու և ձեռագործ առաջին դասարանի Ա բաժանմունքում, ինչպես նաև հանդիսանում է նույն բաժանմունքի դաստիարակ-վարժուհի, ստանում է 300 ռ. տարեկան ռոճիկ,

Սրբուհի Կարապետյան Ջոհրաբյան – ավարտել է Թիֆլիսի օրիորդաց գիմնազիան, այստեղ աշխատում է 1888 թ., դասավանդում է թվաբանություն առաջին դասարանի Ա և Բ բաժանմունքներում, երկրորդ դասարանի Բ բաժանմունքում, հանդիսանում է նաև դաստիարակ-վարժուհի առաջին դասարանի Բ բաժանմունքի, ստանում է 300 ռ. տարեկան ռոճիկ,

Շուշանիկ Հովհաննիսյան Տեր Հովսեփյան – ավարտել է Թիֆլիսի օրիորդաց գիմնազիան, այստեղ աշխատում է 1888 թ., դասավանդում է ռուսաց լեզու և թվաբանություն առաջին դասարանի Գ բաժանմունքում և երկրորդ դասարանի Ա բաժանմունքում, հանդիսանում է դաստիարակ-վարժուհի առաջին դասարանի Գ բաժանմունքում, ստանում է 300 ռ. տարեկան ռոճիկ,

Իշխանուհի Նունե Ալեքսանդրյան Մելիքյան – ավարտել է Թիֆլիսի Սուրբ Նունեի օրիորդաց ուսումնարանը, այստեղ աշխատում է 1887 թ., դասավանդում է ձեռագործ առաջին դասարանի Բ և Գ բաժանմունքներում, կար ու ձև երկրորդ դասարանի Ա և Բ բաժանմունքներում, հանդիսանում է դաստիարակ-վարժուհի երկրորդ դասարանի Բ բաժանմունքի, ստանում է 300 ռ. տարեկան ռոճիկ,

Պողոս Սահակյան Սահակյան – սովորել է Էջմիածնի ճեմարանի մինչև 5-րդ դասարանը, այստեղ աշխատում է 1886 թ., դասավանդում է հայոց և ռուսա գեղագրություն, նաև գծագրություն, ստանում է 550 ռ. տարեկան ռոճիկ,

Գալուստ Թադևոսյան Արույան – ավարտել է Ներսիսյան դպրոցը, այստեղ աշխատում է 1889 թ. սեպտեմբերից, դասավանդում է երգեցողություն բոլոր բաժանմունքներում, ստանում է 140 ռ. տարեկան ռոճիկ,

Լևոն Դավթյան Սարգսյան – ավարտել է Մոսկվայի համալսարանի բնագիտական բաժանմունքը, այստեղ աշխատում է 1889 թ. սեպտեմբերից, դասավանդում է բնական պատմություն երկրորդ դասարանի Ա և Բ բաժանմունքներում, ստանում է 210 ռ. տարեկան ռոճիկ,

Հարություն Իսահակյան Շամշինյան – ավարտել է Սանկտ Պետերբուրգի արքունական գեղարվեստի ճեմարանը, այստեղ աշխատում է 1889 թ., դասավանդում է նկարչություն երկրորդ դասարանի Ա և Բ բաժանմունքներում, ստանում է 144ռ. տարեկան ռոճիկ,



Նունե Ստեփանյան Բուդաղյան – ավարտել է Եանսկի մասնավոր ուսումնարանը, այստեղ աշխատում է 1886 թ., հանդիսանում է հսկող վարժուհի երկրորդ դասարանի Ա բաժանմունքի և գրադարանավարուհի, ստանում է 240 ռ. տարեկան ռոճիկ,

Գայանե Հարությունյան Քալանթարյան – ավարտել է Թիֆլիսի Սուրբ Նունեի օրիորդաց ուսումնարանը, այստեղ աշխատում է 1886 թ., հանդիսանում է ուսումնարանի ավագ ուսուցչուհի, ստանում է 800 ռ. տարեկան ռոճիկ[1]:

1890 թ. ապրիլին ուսումնարանի վարչության նախագահ Ղևոնդ ավ. քհյ. Խարազյանը թեմի առաջնորդին դիմել է հետևյալ հայտարարությամբ. «Ի հետևումն հրամանի Ձերդ Սրբազնութեան ի 17-ն փետրվարի սոյն ամի ընդ համարաւ 104, Վարչութիւնս յարգոյաբար ծանուցանէ, թէ մանկավարժական ժողովս ուսումնարանիս բարւոք համարէ բառնալ ի չորրորդ և ի հինգերորդ բաժանմանց զմի մի դաս ձեռագործի և բնագիտութեան և յաւելացուցանել զայնոսիկ՝ դասուց թուաբանութեան և ընդհանուր աշխարհագրութեան»[2]:

Սեպտեմբերի 19-ին նույն Ղևոնդ ավ. քհյ. Խարազյանը թեմի առաջնորդին ներկայացրել է ուսումնարանի այդ ուս. տարվա նախահաշիվը: Ըստ այդմ. «Աշակերտուհիների ուսման վարձ – 3.000 ռ., ուսումնարանին պատկանող մայր գումարի տոկոսներ – 1.400 ռ., բարերարների տարեկան տուրք – 175 ռ., պատահական արդյունքներ և անցյալ տարվա մնացորդ – 360 ռ., ուսուցիչների տարեկան թոշակ – 4.109 ռ., ուսումնարանի սպասավորների տարեկան ռոճիկ – 360 ռ.: Մանր ծախսեր՝ փայտի, ուսումնական պիտույքների, վերանորոգության և այլն – 466 ռ.: Ընդամենը 4.935 ռ. գումար»[3]:

1892 թ. ավագ ուսուցչուհի Գայանե Քալանթարյանը իր զեկուցագրում, թվարկելով տասնյակ անուններ, ավելացրել է, որ բոլորն էլ դպրոցի հիմնադրած օրից իրենց մեջ բաժանած ունեին առարկաները և ձրիաբար վարում էին իրենց պաշտոնը 17 տարի շարունակ, մինչև որ դպրոցը կարողացել է միջոց ունենալ՝ ռոճիկով վարձելու ուսուցիչներ: Ազգասիրության անուրանալի դրսևորում, երբ մարդիկ տասնյակ տարիներ պարապել են անվճար, որպեսզի կանգուն մնա հայ աղջիկների կրթության օջախներից մեկը:

[1] ՀԱԱ, ֆ. 637, ց.1, գ. 6, թ. 18 շրջ.-23, բնագիր, ձեռագիր:
[2] ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 741, թ. 4-6:
[3] ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 741, թ. 10:

1892 թ. Գայանյան դպրոցն արդեն ունեցել է 5 բաժանմունք և երկու զուգընթաց: Աշակերտուհիների թիվը հասել է 180-ի, որից կրթաթոշակառու՝ 114, ձրիավարժ՝ 66:

1894 թ. մարտի 10-ին թեմի առաջնորդը այցելել է Մողնու եկեղեցի և Գայանյան օրիորդաց դպրոց[1]:

Հունիսին հանգուցյալ Չիթախյանի դուստրերը իրենց հոր հիշատակի համար Գայանյան օրիորդաց դպրոցին նվիրել են 500 ռ.[2]:

1894 թ. սեպտեմբերի 18-ին Գայանյան օրիորդաց երկդասյան ծխական դպրոցը տոնել է իր 25-ամյակը: Այդ առթիվ նշվել է. «Դպրոցի հիմնադիրները գրեթէ ամբողջապէս մինչև այսօր էլ մնում են նորա խնամակալութեան անդամներ, ազնիւ կերպով ծառայելով մի քառորդ դար մեր մտաւոր կեանքի վերաշինութեանը: Դէպքի բերմամբ՝ սուրբ պատարագի խորհուրդը կատարեց դպրոցի խնամակալութեան անդամ արժանապատիւ Նահապետ վարդապետը, որը Թիֆլիզումն է գտնվում ժամանակաւորապէս՝ Հայրապետական հրամանով: Սուրբ պատարագին ներկայ էր վիճակիս գերապատիւ առաջնորդ Սրբազան Գէորգ եպիսկոպոս Սուրէնեանը, հետն ունենալով Քութայիսի նահանգի գործակալ Դաւիթ աւ. քհյ. Եարալեանցին, Թիֆլիզի եկեղեցեաց գործակալ Գիւտ քահանայ Աղանեանցին և բարեկրօն Գէորգ քահանայ Գալստեանին: Պատարագի ժամանակ երգում էր դպրոցի օրիորդական երգեցիկ խումբը՝ ղեկավարութեամբ իրանց ուսուցիչ պ. Կ. Աբուլեանի»[3]: Պատարագից հետո եկեղեցական դասը Գևորգ եպիսկոպոսի առաջնորդությամբ կատարել է հոգեհանգիստ դպրոցի բարերար Մակար կաթողիկոսի համար, այնուհետև եկեղեցու գավթում ամփոփված դպրոցի նախկին գլխավոր կառավարիչ Հարություն ավ. քհյ. Սուզանաճյանի գերեզմանի վրա և ապա դպրոցի բոլոր բարերարների հիշատակի համար: Հանդեսի վերջում դպրոցի գլխավոր կառավարիչ Ղևոնդ ավ. քհյ. Խսարազյանը հյուրերին հրավիրել է հյուրասիրության:

1903 թ. հունիսի 3-ին երդվյալ հավատարմատար փաստաբան Սոկրատես Մելիք-Աղամյանը հետևյալ գրությունն է հղել Թիֆլիսի կոնսիստորիային. «...Պատիւ ունիմ յայտնել, թէ օրինական հիմք չը կայ Դատաստանական կարգով յետ պահանջել Ուսումնական Վարչութիւնից Գայանեան օր. դպրոցի շինութիւնը, որովհետև այս շինութիւնը՝ ըստ հաստատեալ մակարդակի և հաւանութեան Բարձրագոյն Հոգևոր իշխանութեան՝ կառուցած լինելով յատկապէս օր. դպրոցի համար՝ միշտ եղել է դպրոցի նախկին վարչութեան տիրապետութեան ներքոյ: Ուստի և համաձայն Բարձրագոյն հրամանի, 26 մարտի 1898 ամի, յիշեալ շինութիւնը պիտի համարել դպրոցական և ոչ եկեղեցւոյ սեփականութիւն»[1]:

[1] «Նոր Դար», 1894, 12 մարտի, Հար 43:
[2] «Նոր Դար», 1894, 4 հունիսի, Հար 93:
[3] «Արձագանք», 1894, 21 սեպտեմբերի, Հար 109:



1905 թ. սեպտեմբերի 4-ին կայացել է Գայանյան դպրոցի ժողովը՝ դպրոցի հոգաբարձության կազմը ընտրելու նպատակով: Մասնակցել է 67 ծխական (արխիվային վավերագրում կան բոլոր ծխականների ազգանունները): Ժողովի նախագահն է եղել Հ. Առաքելյանը, քարտուղարը՝ Ն. Մատինյանը: Հաշվի առնելով դպրոցի փառավոր անցյալը և ցանկանալով մոտ ապագայում դպրոցը տեսնել բարգավաճ դրության մեջ, նախագահն առաջարկել է ընտրել չորս հոգաբարձու և երկու փոխանորդ, որն էլ միաձայն ընդունվել է ծխականների կողմից: Հոգաբարձուներ են ընտրվել բժ. Տիգրան Թաղնոսյանը՝ 58 ձայն, Համբարձում Առաքելյանը՝ 53 ձայն, բժ. Լևոն Քալանթարյանը՝ 52 ձայն և Պետրոս Քալանթարյանը՝ 48 ձայն: Անձնափոխանորդներ են ընտրվել Ռուբեն Հովհաննիսյանը՝ 37 ձայն և Նիկողայոս Մատինյանը՝ 35 ձայն: Սեպտեմբերի 9-ին թեմի առաջնորդ Գարեգին եպս. Սաթունյանը, հաստատելով այս անձանց հոգաբարձությունը, ցանկացել է, որ նրանք իրենց «ամբողջ ոյժը ներդնեն դպրոցի պայծառութեան համար»[2]:

Օրեր անց, սեպտեմբերի 16-ին կայացել է Մողնու նախկին Գայանյան օրիորդաց դպրոցի շինության հանձնումը: Հանձնողը եղել է Թիֆլիսի նահանգի ժողովրդական դպրոցների լիազոր Կ. Պրոկոֆևը, իսկ ընդունողը՝ Մողնու երեցփոխ Ա. Արասխանյանը: Շինության հետ հանձնվել են նրա մեջ եղած բոլոր իրեղենները: Նկատելի էր, որ երկհարկանի շինությունը շատ տեղերում խիստ ճաքճքված է եղել, որի պատճառով էր, նաև որ դպրոցը վերջին տարին տեղափոխվել էր Կուկիա, Թանդոյան եկեղեցու դպրոցական շինության մեջ: Այնտեղ էլ գտնվում էր Գայանյան դպրոցի գույքի մեծագույն մասը, որն էլ դեռևս մնում էր դիրեկցիայի մոտ: Նշվել է, որ պ. Արասխանյանը արդեն նոր դիմում է ուղղել դիրեկցիային՝ ստանալու թե՛ գույքի մնացած մասը և թե՛ Գայանյան դպրոցի դրամագլուխը, որ մոտ 25 հազար ռուբլի է կազմել դպրոցի գրավման ժամանակ:

Մողնու եկեղեցու նորընտիր հոգաբարձությունը իր առաջին իսկ նիստում վճռել է Գայանյան օրիորդաց դպրոցը վերաբացել առայժմ

[1] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2445, թ. 54:
[2] ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 126, թ. 2-5:

մի վարձովի շինության մեջ, առաջին տարին երեք բաժանմունքներով, մտադիր լինելով ամեն տարի ավելացնել դասարանների թիվը և հասցնել վեցերորդի, ինչպես որ եղել է մինչև 1885 թ.[1]:

Իսկ սեպտեմբերի 21-ին տպագրվել է Ա. Արասխանյանի հետևյալ հաղորդակցությունը Մողնու Գայանյան օրիորդաց դպրոցի գույքի վերաբերյալ. «Թիֆլիզի նահանգի ժողովրդական դպրոցների պ. դիրեկտորի կողմից Գայիանեան դպրոցի շինութիւնը և այլ գոյքերը յետ դարձնելու մասին դիմումն կատարուել էր եկեղեցու ապագ քահանայի և իմ անուան տրուած՝ թեմիս սրբազան առաջնորդի թղթի հիման վրայ: Դիմումի հետևանքը առ այժմ այն եղաւ, որ Գայիանեան դպրոցի շինութիւնը (որ խարխուլ է և անբնակ) և նրա միջի գոյքը յանձնուեց ինձ՝ որպէս Մողնու երէցփոխի, բայց միայն ի պահպանութիւն «մինչև որ դպրոցի գոյքերը վերջնօրէն կը յանձնուեն»: Նոր դիմումներ իմ կողմից դեռ ևս չեն կատարուած, ի նկատի ունենալով որ բոլոր եկեղեցական և դպրոցական գոյքերը ետ ստանալու գործի մասին սպասում է Վեհափառ Կաթողիկոսի լիազօրի գալուստը»[2]:

1907 թ. հունիսի 4-ին թեմի առաջնորդ Գարեգին եպս. Սաթունյանը առաջարկություն է հղել Մողնու եկեղեցու ծխական հոգաբարձությանը. «Ի 10-ն ամսոյս ի 11-րդ ժամու առաւօտեան նշանակեալէ ժողով յԱռաջնորդարանիս որպէս շարունակութիւն ժողովոյ կայացելոյ յ3-ն ամսոյս, վասն հոգալոյ զտնտեսական դրութեանց ուսումնարանաց մերոց որք ի քաղաքիս: Արդ այսու հրաւիրիմք զհոգաբարձութեանդ շնորհ բերել յԱռաջնորդարան ի նշանակեալ ժամու անշուշտ: Յուսամք, զի հոգաբարձութիւնդ ի նկատի առեալ զշահ դպրոցաց մերոց, գայ ի խորհրդակցութիւն ի բարւոքել զդրութիւն նոցին»[3]:

1907 թ. վերջին դպրոցը կանգնած էր փակման վտանգի առաջ: Այդ առթիվ «Մշակում» նշվել է. «Գայիանեան օրիորդաց դպրոցը, իր անցեալով փառաւոր այս դպրոցը, միջոցների պակասութեան և ծխականների անտարբերութեան պատճառով, փակվելու վտանգին է ենթարկված: Հաշիւը պարզ ցոյց է տալիս, որ դպրոցի եկամտի միակ մնայուն աղբիւրը՝ 20.464 ր. դրամագլուխն է, որի տոկոսիքը հազիւ կազմում է 800 րուբլի: Մի ուրիշ, բայց անհաստատ եկամտի աղբիւրը կազմում է աշակերտուհիներից ստացվող ուսման վճա-

1 «Արշալոյս», 1905, 18 սեպտեմբերի, Հմր 16:

2 «Արշալոյս», 1905, 23 սեպտեմբերի, Հմր 20:

3 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 174, թ. 11:



րը, որ 2.000-2.500 րուբլուց աւելի չէ: Ուրեմն դպրոցի փոքր ի շատէ հաստատուն եկամուտը՝ 3.000-3.500 րուբլուց աւելի չէ: Եւ սակայն դպրոցը ունի մօտ 9.000 ր. ծախք»[1]: Հոգաբարձությունը մտահոգվելով դպրոցի վիճակով, դեկտեմբերի 9-ին հրավիրել է ծխականների ընդհանուր ժողով: Ի դեպ, Մողնու եկեղեցու ծխերի թիվը այդ ժամանակ եղել է 1500-ից ավելի:

1907 թ. նշված է, որ Մողնու եկեղեցական ծխական օրիորդաց դպրոցը եռադասյան է, ունի չորս բաժանմունք (Դ. դասարանն ունի զուգընթաց): Դասավանդում են 4 ուսուցիչ և 5 վարժուհի: Սովորում է 168 աշակերտուհի: Հոգաբարձուները հինգն են[2]:

1908 թ. հունվարի 8-ին դպրոցի մասին ներկայացվել են հետևյալ տեղեկությունները.

Դպրոցը համարվում է միջնակարգ և ունի միայն առաջին հինգ դասարանները, ունի 11 ուսուցիչ, 191 աշակերտուհի: Դպրոցը կառավարվում է իր ունեցած դրամագլխի տոկոսով (դր. 20.464 ռ.), ուսումնական վճարներով, մասամբ ծխական տուրքով և նվերներով, այլ եկամուտ չունի: Ուսուցիչներն են՝ տիկ. Վերգինե Աթանասյան – ավարտել է Սիմֆերոպոլի օր. գիմնազիան, տ. Աղամալյան – ավարտել է Գայանյան օր. դպրոցը 1882 թ. և Թիֆլիսի I օր. գիմնազիան 1887 թ., տ. Ջոհրաբյան – ավարտել է Ռոստովի օր. գիմնազիան և Պետերբուրգի բարձրագույն կուրսերը, տ. Մանանդյան – ավարտել է Թիֆլիսի օր. I գիմնազիան, տ. Պաստերմաջյան – ավարտել է Թիֆլիսի օր. II գիմնազիան և Ժնևի բնական գիտությունների բարձրագույն ուսումնարանը, տ. Ոսկանյան – ունի Թիֆլիսի Հովնանյան դպրոցի վարժուհու վկայական, տրված 1884 թ. և ձեռագործի վկայական արհեստավորաց վարչությունից, տրված 1884 թ., Սարգիս Աբովյան – 1888 թ. ավարտել է Ներսիսյան դպրոցը, 1892 թ. Թիֆլիսի երկրաչափական դպրոցը և 1893-1897 թթ. սովորել է Լայպցիգի և Հալլի ինստիտուտներում՝ գյուղատնտեսություն, Սիմեոն Արղության – 1902 թ. ավարտել է Ներսիսյան դպրոցը և 1905 թ. Թիֆլիսի կայսերական գեղարվեստական դպրոցը, Սարգիս Ջուրաբյան – 1894 թ. ավարտել է Ներսիսյան դպրոցը, Ազատ Մանուկյան – 1903 թ. ավարտել է Պետերբուրգի երաժշտական կուրսեր, Լևոն Շանթ – ավարտել է Գևորգյան ճեմարանը և համալսարանը[3]:

1 «Մշակ», 1907, 8 դեկտեմբերի, Հմր 177:

2 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 174, թ. 115:

3 ՀԱԱ, ֆ. 56, ց. 17, գ. 69, թ. 58:

1908 թ. ապրիլին նշվել է. «Գայիանեան օրիորդաց դպրոցի վարչութիւնը որոշել է կազմակերպել մի մեծ ժողովրդական զբօսանք յօգուտ դպրոցի, ի նկատի ունենալով որ ստիպված է արձակել մօտ 60 աշակերտուհիներ, ուսման վճարը չտալու պատճառով: Գայիանեան դպրոցը, որ Թիֆլիսի ամենահին իգական դպրոցն է և պատկանում է մի եկեղեցու (Մողնի), որի ծխականները Սօլօլակի արիստօկրատիայից շատերն են, գտնվում է ամենաաննախանձելի ֆինանսական դրութեան մէջ, որովհետև եկամտի ոչ մի մնայուն աղբիւր չունի: Մի խումբ տիկնայք, օրիորդներ և պարոններ յանձն են առել հոգաբարձութեան հրաւէրով կազմակերպել այդ զբօսանքը, որը, յոյս ունենք, կարժանանայ հայ հասարակութեան և մանաւանդ Մողնու ծխականների աջակցութեանը»[1]:

1909 թ. մայիսի 10-ին տեղի է ունեցել Մողնու եկեղեցու ընդհանուր ժողովը, որը նախագահել է Հ. Առաքելյանը: Ժողովը զբաղվել է Գայանյան օրիորդաց դպրոցի հոգաբարձության առաջարկած մի կարևոր հարցի քննությամբ: Ինչպես հայտնի է, Գայանյան դպրոցի նախկին շինությունը, քայքայված լինելով, զետեղված է եղել մասնավոր վարձու տան մեջ, և դա չափազանց ազդել է դպրոցի բյուջեի վրա, որովհետև տարեկան 2.000 ռ. վարձագին է վճարվել: Այդ հանգամանքը բերել է այն եզրակացության, որ ավելի լավ է՝ վերաշինել և նորոգել դպրոցի շինությունը: Ճարտարապետ Օզերևը համարել է, որ հին շինության մի մասը կարելի է վերանորոգել, իսկ մյուս մասը, որ ավելի խարխուլ և քայքայված է, քանդել ու նորը շինել՝ ծախսելով մոտ 12.000 ռ.: Ընդհանուր ժողովը ընտրել է մի շինարարական մասնաժողով՝ բաղկացած 3 անդամից՝ ճարտարապետներ Սահակ Լիսիցյան, Հ. Կարապետյան և Ե. Իսահակյան, որոնք պետք է աջակցեին հոգաբարձությանը դպրոցի շինարարության գործում[2]:

1910 թ. մարտին Մողնու եկեղեցու հոգաբարձության անդամ Նիկողոս Տեր-Ղևոնդյանը, անդրադառնալով Գայանյան դպրոցին, գրել է. «Մեր միամեայ պաշտօնավարութեան ընթացքում շատ անգամ ենք առիթ ունեցել խօսել Գայիանեան դպրոցի կարիքների մասին, խօսել ենք մենք, խօսել են ուրիշները: Մեր նպատակն է եղել ապացուցանել, որ Մողնու ծխական համայնքը կարող կը լինի բարձր պահել այն պատուաւոր դրօշակը, որ 40 տարու չափ բարձր ի գլուխ ծածանվելուց յետոյ՝ վերջին արկածների շնորհիւ վայր է իջեցրել իր փառաւոր թևերը: Անկասկած մեր ակնկալութիւնները բացա-

[1] «Մշակ», 1908, 10 ապրիլի, Հմր 79:

[2] «Մշակ», 1909, 12 մայիսի, Հմր 98:



ռապէս դէպի Մողնու ծխականներն ուղղել՝ արդարացի չէ եղած, որովհետև Գայիանեան ուսումնարանը, որպէս միջնակարգ դպրոց, ամբողջ Թիֆլիսին, մինչև անգամ ամբողջ Կովկասին է պատկանում, ուրեմն նրա պահպանութեան հոգսը պիտի ծանրանայ բոլոր կովկասահայերի վրա, բայց այս հանգամանքը չէ կարող ազատել Մողնու ծխականներին այն պարտականութիւններից, որ դնում է նրանց վրա իրանց ուսումնարանը. դպրոցը գտնվում է այդ եկեղեցու գաւթում. նա կառուցված է այդ եկեղեցու հողի վրա. նա կառավարվում է նոյն եկեղեցու ծխական հոգաբարձութեան ձեռքով: Ուրեմն Մողնու ծխականները բացի ընդհանուրին յատուկ պարտականութիւններից դէպի այդ կրթարանը, ունեն և բացառիկ պարտականութիւններ, որոնցից խուսափել չեն կարող... Մարտի 7-ին հոգաբարձութիւնը ժողովի է կանչում ծխականներին, տարեկան հաշիւ տալու և հերթական կարևոր սկզբունքային խնդիրների մասին խորհրդակցելու, ոչ ոք ժողովի չէ գալիս: Մարտի 14-ին հոգաբարձութիւնը կրկնում է իր հրաւէրը, գալիս են միայն 7 հոգի... 1.000 ծխից 7 հոգի: Ինչ է այս. անտարբերութի՞ւն, թէ՞ անպարտաճանաչութիւն»[1]:

1912 թ. մայիսին կայացել է դպրոցի հոգաբարձության ընտրությունը, որի ժամանակ նախկին կազմից վերընտրվել են Ն. Տեր-Ղևոնդյանը, Տ. Թադևոսյանը և Ռ. Հովհաննիսյանը: Իսկ նոր անդամներ ընտրվել են՝ Խ. Խաչատրյանը, Ս. Միրադբեկյանը և Մ. Պետրոսյանը[2]: Հոգաբարձության կազմի մեջ մտել է նաև Մողնու եկեղեցու երեցփոխան Ե. Իսահակյանը: Հոգաբարձությունը ձեռնամուխ լինելով դպրոցի ապահովության գործին, մշակել է մի ծրագիր, որի մեջ մտնում էին՝ դիմել Պետերբուրգի եկեղեցական խորհրդին, Ներսիսյան դպրոցի հոգաբարձությանը, Ռուսաստանում ապրող անվանի հայ բարերարներին, Թիֆլիսի վարկային և այլ հաստատություններին՝ օգնության խնդրանքով:

Շուտով, 1912 թ. վերջին Պետերբուրգի հայոց եկեղեցական խորհուրդը վճռել է երեք տարի ժամանակով ամեն տարի 2.000 ռուբլի նպաստ հատկացնել Գայանյան օրիորդաց դպրոցի օգտին[3]:

Դպրոցին օգնության ձեռք է մեկնել նաև հայազգի մեծ բարերար Ալեքսանդր Մանթաշյանի որդին՝ Լևոնը, որը որոշում է իր միջոցներով, համաձայն գիտության և մանկավարժության նորագույն

[1] «Մշակ», 1910, 20 մարտի, Հմր 61:

[2] Թիֆլիսի Գայիանեան օրիորդաց դպրոցի տեղեկագիրը 1912/13, 1913/14, 1914/15 ուս. տար., Թիֆլիս, 1915, էջ 4:

[3] «Մշակ», 1913, 1 հունվարի, Հմր 1:

պահանջների, 500 աշակերտուհիներ տեղավորելու համար, կառուցել դպրոցի մի ընդարձակ շենք: Շինության տեղը որոշվում է Բեհբության փողոցում գտնվող պ. Կուզանյանի տունը իր ընդարձակ հողաբաժնով: Ըստ նախահաշվի, դպրոցը կառուցելու համար պահանջվում է 225 հազար ռուբլի: Այն բաղկացած էր լինելու երեք հարկից և ունենալու էր 15 դասարան ու դահլիճներ:

Ինչպես նշվել է, «Այդ խոշոր նուիրաբերութեամբ դպրոցս իր գոյութեան 47 ամեայ դժուարութիւններից յետոյ կանգնում է հաստատ և հիմնաւոր պատուանդանի վրա»[1]:

Հոգաբարձությունը երախտագիտական խորը զգացմունքով ներկայացել է Լ. Մանթաշյանին և հայտնել ջերմ շնորհակալություն: Միաժամանակ հոգաբարձությունը դիմել է Վեհափառ Հայրապետին, դրվատելով մեծ բարերարի կատարած վսեմ գործը, Նորին Վեհափառությանը խնդրել է տալ իր հայրական օրհնությունը բարեգործին և հաստատել նրան դպրոցի պատվավոր հոգաբարձուի և խնամակալի կոչման մեջ: Վեհափառը սիրով ընդունելով այս խնդրանքը, քաջալերել և հուսադրել է և ցանկացել եռանդ ու աշխատանք մայրենի լեզվի զարգացման ասպարեզում:

Հոգաբարձությունը օգնության համար շնորհակալություն է հայտնել Պետական դումայի անդամ Միքայել Պապաջանյանին, դպրոցի նախաճաշիկի հանձնաժողովի նախագահ Մարիամ Հաբությունյանին և այլոց:

Վիրահայոց թեմի առաջնորդի աջակցությամբ Վերայի հայոց գերեզմանատունը ևս օգնություն է ցուցաբերել դպրոցին՝ 744 ռուբլի:

Այդ տարի դպրոցն ունեցել է 6 հիմնական դասարան՝ իր 3 նախապատրաստականներով, որտեղ սովորել են մոտ 400 աշակերտուհիներ:

1913 թ. հունվարի 4-ին Գայանյան դպրոցում կայացել է ուսուցիչ Տիգրան Մարգարյանի դասախոսությունը. «Արդի մանկավարժութեան արդի ուղղութեան» մասին: նշվել է, որ «լսարանը լիքն էր ուսուցիչ ուսուցչուհիներով և կողմնակի անձերով, որոնք մեծ հաճութեամբ ամբողջ 2 ժամ լսում էին պ. դասախօսին: Պարզ, մատչելի կերպով կատարված դասախօսութիւնը միանգամայն նպաստաւոր տպաւորութիւն թողեց ունկնդիրների վրա, որոնք բուռն ծափահարութեամբ վարձատրեցին դասախօսին»[2]:

[1] Թիֆլիսի Գայիանեան օրիորդաց դպրոցի տեղեկագիրը 1912/13, 1913/14, 1914/15 ուս. տար., Թիֆլիս, 1915, էջ 6:

[2] «Մշակ», 1913, 6 հունվարի, Հմր 3:



Մարտի 16-ին դպրոցի 6-րդ դասարանի աշակերտուհիները կազմակերպել են մի ինքնուրույն գրական-երաժշտական երեկույթ[1]:

Մարտի 21-ին դպրոց է այցելել թեմի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսը և ներկա գտնվել մի քանի դասերի[2]:

Մարտին պ. Սաֆարյանը դպրոցի չքավոր աշակերտուհիների նախաճաշի համար Վարդան քհյ. Տեր-Ղևոնդյանի միջոցով նվիրել է 10 ռ.[3], իսկ ապրիլի սկզբին օր. Նունե Սերեբրակյանը նույն նպատակով նվիրել է ևս 10 ռ.[4]: Հայտնի է նաև, որ թիֆլիսեցի հայտնի միլիոնատեր Մարկոս Դոլուխանյանը առաջնորդի միջոցով նվիրել է դպրոցին 2.500 ռ. պետական ռենտայի արժեթղթեր՝ ի հիշատակ իր հանգուցյալ կնոջ[5]:

Ապրիլի 4-ին դպրոցում զեկուցումով ելույթ է ունեցել Կատարինե Լիսիցյանը: Թեման եղել է ընտանեկան դաստիարակությունը, որը մեծ հետաքրքրություն է առաջացրել ունկնդիրների մոտ[6]:

Նոյեմբերի 10-ին Մողնու եկեղեցու ծխական ժողովում ի թիվս այլ հարցերի քննվել է նաև Գայանյան դպրոցի խնդիրը:

1914 թ. դպրոցը ունեցել է 23 ուսուցիչ և 372 աշակերտուհի՝ լրիվ միջնակարգ ուսուցմամբ:

1914 թ. մարտի 2-ին տեղի է ունեցել Ա. Քիշմիշյանի թաղումը: Վաղ առավոտյան հանգուցյալի աճյունը դուրս է բերվել տնից և նախքան եկեղեցի տանելը դրվել Գայանյան դպրոցի առջև, որտեղ դպրոցի տեսուչ Սարգիս Արովյանը դրվատանքի խոսքեր է ուղղել հանգուցյալի հասցեին՝ որպես դպրոցի խնամակալի և հասարակական գործչի: Հանգուցյալի հուղարկավորությանը ներկա են եղել բարեգործական, կրթական, հասարակական հիմնարկությունների և խմբագրությունների ներկայացուցիչներ: Ներկա է եղել նաև թեմի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսը: Մողնու եկեղեցում դամբանական է խոսել Բենիկ վարդապետը: Թաղումը կատարվել է Խոջիվանքի գերեզմանատանը[7]:

Հունիսի 1-ին Գայանյան օրիորդաց դպրոցի աշակերտուհիները, դպրոցի տեսուչ Ս. Արովյանի ղեկավարությամբ էքսկուրսիա են

[1] «Հորիզոն», 1913, 20 մարտի, Հմր 62:

[2] «Հորիզոն», 1913, 22 մարտի, Հմր 64:

[3] «Հորիզոն», 1913, 28 մարտի, Հմր 69:

[4] «Հորիզոն», 1913, 7 ապրիլի, Հմր 77:

[5] «Հորիզոն», 1913, 28 ապրիլի, Հմր 91:

[6] «Հորիզոն», 1913, 5 ապրիլի, Հմր 75:

[7] «Մշակ», 1914, 4 մարտի, Հմր 47:

ուղևորվել Երևան, որտեղից էլ այցելել են Էջմիածին[1]:

1914-15 թթ. դպրոցը ստացել է Վարվառա Թամամշյանից՝ 1.000 ռ., Վ. Խարազյանի ժառանգներից՝ կտակի համաձայն՝ 500 ռ., Ղ. Մելիք-Ասիլյանի կտակի համաձայն՝ 400 ռ., Կոնստանտին Ալիխանյանից՝ 300 ռ., Հայկանուշ Մարտիրոսյանից՝ 40 ռ. և ուրիշներից:

1921 թ. անվանվել է երկսեռ սանների դպրոց:

Ամփոփելով Գայանյան օրիորդաց դպրոցի տարեգրությունը, ստորև համառոտ ներկայացվում է 1875-1920 թթ. դպրոցի աշակերտուհիների և ուսուցիչների թիվը:

1875 թ. – 97 աշակերտուհի և 3 ուսուցիչ[2], 1882 թ. – 267 աշ. և 31 ուս.[3], 1883 թ. – 270 աշ. և 31 ուս.[4], 1884 թ. – 267 աշ. և 34 ուս. [5], 1886-87 ուս. տարի – 125 աշ. և 16 ուս.[6], 1887 թ. – 135 աշ. և 16 ուս.[7], 1888 թ. – 136 աշ. և 17 ուս.[8], 1889 թ. – 138 աշ. և 18 ուս.[9], 1890-91 ուս. տարի – 155 աշ. և 14 ուս.[10], 1891-92 ուս. տարի - 157 աշ. և 14 ուս.[11], 1892-93 ուս. տարի – 181 աշ. և 12 ուս.[12], 1893-94 ուս. տարի – 183 աշ. և 14 ուս.[13], 1894-95 ուս. տարի – 181 աշ. և 13 ուս.[14], 1895-96 ուս. տարի – 199 աշ. և 12 ուս.[15], 1907 թ. – 191 աշ. և 11 ուս.[16], 1908 թ. – 191 աշ. և 11 ուս.[17], 1908-09 ուս. տարի – 168 աշ. և 10 ուս.[18], 1909 թ. – 168 աշ. և 9 ուս. [19], 1919-20 ուս. տարի – 26 ուս.[20]:

---

1 «Խոսք», 1914, 14 հունիսի, Հմր 24:
2 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3983, թ.11:
3 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 7279, թ.30:
4 ՀԱԱ, ֆ. 56, ց. 10, գ. 857, թ.71:
5 ՀԱԱ, ֆ. 56, ց. 10, գ. 883, թ.125:
6 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 4002, թ.185-195:
7 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 914, թ.59-60:
8 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 4004, թ.76-81:
9 ՀԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 106, թ.6:
10 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 4015, թ.160-162, ֆ. 56, ց. 3, գ. 225, թ. 1, նշված է նույն ուս. տարում 144 աշ. և 13 ուս.:
11 ՀԱԱ, ֆ. 637, ց. 1, գ. 93, թ.2, 8:
12 ՀԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 11, թ.1-2:
13 ՀԱԱ, ֆ. 637, ց. 1, գ. 298, թ.11, տես նաև գ. 286, թ. 5, 155 նշված է 175 աշակերտ:
14 ՀԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 86, թ.55-56:
15 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 98, թ.3:
16 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 314, թ.15:
17 ՀԱԱ, ֆ. 56, ց. 5, գ. 69, թ.58:
18 ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 557, թ.75:
19 ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1849, թ.67:
20 ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 63, թ.90:



## ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ԵՎ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆ

Ըստ Սուրբ Էջմիածնի սինոդի մի տեղեկագրի՝ Մողնու Սուրբ Գևորգի մանկապարտեզը և նախակրթարանը (տարրական ծխական դպրոց) հիմնադրել է տիկին Սոֆիա Բաբայանը 1880 թ.[1]: Նա հայտնի մանկավարժ և նախադպրոցական գործի կազմակերպիչ է եղել: Փակվել է 1885 թ.:

Ստորև համառոտ ներկայացվում է ըստ տարիների աշակերտների և ուսուցիչ-դաստիարակների թիվը:

1880 թ. – 28 աշ. և 2 ուս.[2], 1882 թ. – 48 աշ. և 3 ուս.[3], 1883 թ. – 7 ուս.[4], 1884 թ. – 60 աշ. և 4 ուս.[5]:

## ՄՈՂՆՈՒ ԵԿԵՂԵՑՈՒ ՇԱՐԺԱԿԱՆ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ

1837 թ. դեկտեմբերի 16-ին կազմվել է. «Ցուցակ շարժական և անշարժ կայից Մողնւոյ Սուրբ Գէորգայ եկեղեցւոյ հայոց Տփխիսայ»[6].

*«Շարժական կայք սոյն եկեղեցւոյ ոսկեայ կամ արծաթի անօթք».*

1. Խաչ մեծ արծաթի, որոյ երկայնութիւնն է երկու գազ գազանդարի, վեց մատնաչափ պակաս, նմանութիւնք պատկերաց բոլորն ոսկեզօծ. ի մի երեսին մէջն խաչելութիւն, յաջ կոյս թևին արեգակն և յարութեան պատկեր յահեակ կողմանն լուսին և պատկեր կուսի և երկու առաքելոց և միոյ անձին ամենասուրբ Երրորդութեան, որոյ են թէև նմանութիւնք հրեշտակաց ի վեր խաչելութեան պատկեր ամենասուրբ Երրորդութեան ի քառանկիւնս խաչելութեան կերպարանք վեցթևեան սրովբէից, ի ներքոյ խաչելութեան պատկեր կուսի: Եւ առաքելոց միոյ կանգուն գծագրեալ և ի ներքոյ նորա պատկերք

---

1 Ս. Խուդոյան, նույնը, էջ 586, ՀԱԱ, ֆ. 422, գ. 1585, թ. 51, գ. 2018, թ. 195, ֆ. 56, ց. 15, գ. 50, թ. 66:
2 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 7279, թ. 10:
3 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 7279, թ. 30:
4 ՀԱԱ, ֆ. 56, ց. 10, գ. 857, թ. 59:
5 ՀԱԱ, 56, ց. 10, գ. 883, թ. 125, տես նաև՝ ֆ. 53, ց. 1, գ. 3998, թ. 20:
6 ՀԱԱ, ֆ. 56, ց. 6, գ. 39, թ. 20-29:

ըմբռնման Քրիստոսի, և ի ներքոյ ծննդեան՝ մոգովք հանդերձ: Ի միւս երեսն մէջն պատկեր տիրամոր, ի վեր և ի վայր նորա նմանութեամբք վեցթև սրովբէից, յաջ և յահեակ երկթև հրեշտակք երկու երկու, ի քառաթևս խաչին նշանք չորից աւետարանչաց, ի քառանկիւնս վեցթևեան սրովբէք, որոց գլուխքն միայն են ոսկեզօծ յայս կոյս. յիշատակագիրն գրեալ ի վերա բոյնոյն այսպէս.

*«Յիշատակ է ս[ուր]բ խաչս գորեցի Փարսադանին և իւր ծնողացն՝ Նազարին և Մանիժաւին, եղբարցն՝ Եսայուն և Դաւթին, և որդոցն իւրոց, որ ընծայեցին ի դուռն Մողնույ Ս[ուր]բ Գէորգայ ի ՌՃԿԹ. (1720) թուին աւագ քահանայութեան տէր Շմաւոնի, ի յիշատակ նախնեաց իւրոց նորոգեցի եւ մերուոց նոցին ուստայ Եսաի որդի Բեժանս յիշատակ նոցա և հոգոյ իմոյ և կողակցոյն և որդւոյն ի ՌՄԻԳ. (1774) թուին».*

Ի ներքոյ բունոյն ի ծայր պատուանդանին խնձոր և ի ներքոյ սորա սաղաւարդ արծաթի երկոտասան պատկերօք առաքելոց. ի ներքոյ սաղաւարդին խնձոր մի և ապա պատուանդանն գչերաւ միացեալ ընդ խաչին: Խաչն մնաց անկշռելի, ըստ որում՝ արծաթն ընդ խաչափայտին մուծեալ էր սաստկապէս և վեցթև սրովբէքն յերկաթի. իսկ պատուանդանն պատի միջոյ եղեալ երկաթոյն. իւր ամենայն վերոյ գրեալ զարդիւնքն է: -263 [մսխալ]:

2. Խաչ արծաթի հաւասար, միոյ կանգնոյ երկայնութիւն, մինչ ցպատուանդանն, որ է երկաթի. լայնութիւն եւ կանգուն մի երեք մատնաչափ պակաս. խաչափայտ գոյր ի ներքին կողմն արծաթին անխզելի սևէռեալ. ոյր վասն և մնաց անկշռելի: Ի մի երեսն մէջն խաչելութիւն ձուլածու բևեռեալ ի վերայ որոյ միայն կշիռն էր: Ի քառաթևս խաչին պատկերք աւետարանչաց նշանօք իւրեանց. – 18:

Ի միւս երեսն քառաթևին երկթև հրեշտակք. մէջն պատկեր կուսի նկարեալ ի վերա թղթոյ, յերեսն արծաթապատ ապակեաւ ծածկեալ.

*«Յիշատակ Մանդինեանց»:*

3. Խաչ արծաթի ոսկեզօծ երկկուղի երկայնութիւն միոյ կանգնոյ, յորոյ մի երեսն մէջն խաչելութիւն մինաքար, ի գլուխ խաչին պատկեր Հօր Աստուծոյ և հոգոյն սրբոյ յուտս խաչին գագաթն Ադամայ, յաջ և յայեակ պատկեր սրբոյ կուսին և Յովաննու, խաչն և պատուանդանն ի միասին է. յորում և գործիք չարչարանաց Տեառն են գծագրեալք, ի միւս երեսն նմանութիւնք հրեշտակաց և ամպոց կշիռ արծաթին միայն է.- 169: Յիշատակ թէ որոյ է՝ նշանակեալ գոյ ի հին տումարին:



4. Խաչ արծաթի ոսկեզօծ երկկուղի ի մի երեսն արծաթի պատկերք ի նոյն նմանութեան, ի միւս երեսն չօքուրթմայ և միևնոյն պատուանդանն և խաչն ի միասին է. կշիռն արծաթին միայն- 55. յիշատակն՝ նոյնապէս:

5. Ճաճանչ արծաթի. ի մի երեսն խաչելութիւն, ի վերն փոքր տիպ արեգական և լուսնի և վեցթև սրովբէից նմանութիւն որպէս և յերեսին թևս և աստեղք ի նմին. յերեսն միւս ստուերք նոյն պատկերաց. պատուանդանն միացեալ գչերաւ ընդ խաչին. կշիռն է.- 28:

*«Յիշատակ Ղուկիասար Պապխեանցին»:*

6. 4 խաչք՝ ճաճանչաւորք, բոլորակք, ի բոլորակին մի յերեսն սուտականակուռ. մէջն փոքր խաչ չիֆթիշի յիւրաքանչիւրում և մի մի սուտակն ընդ մէջ խաչին. յերեսն միւս չիք ինչ բաց մի տառիցս. ս. տ. շ. ա. պատուանդանին մի ընդ խաչսն. կշիռն է.- 81:

7. Խաչ արծաթի, ոսկեզօծ երկկուղի. ի մի երեսն խաչելութիւն ձուլածու ի քառաթևս նորա պատկերք աւետարանչաց շուրջ չորովք են գլուխք հրեշտակաց. ի միւս երեսն մէջն պատկեր կուսի ի քառաթև, և նորա նոյնապէս պատուանդանն գչերաւ միացեալ խնձոր ձուլածու. ի ծայր պատուանդանին. վեցթևեան սրովբէից ի նմա. յիշատակ է միայն երևի, միւսն եղծեալ է. կշիռն է արծաթ կոյս.- 56:

8. Խաչ արծաթի ոսկեզօծ երկկուղի նոյնանման ամենևին բաց ի պատուանդանի խնձորոյն, որ թէպետ ձուլածու է, բայց թարց ինչ պատկերի և երկակի բևեռաւ միացեալ ընդ խաչին. յիշատակն նոյնպէս, որպէս առաջինքն. կշիռն է.- 60:

9. Խաչ արծաթի ճաճանչաւոր և բոլորակ, յորում շարեալ են սուտակունք գոյնզգոյն, ի տեղիս տեղիս թափեալք են մէջն ձուլածու պատկերք երկկուսի եւ նոյն նմանութեամբ միաձոյլ. մէջն տիրամոր Յ[իսու]ս ի գիրկն. շուրջանակի պատկերք աւետարանչաց. ի միւս կողմն բոլորակին վասն եղեալ սուտակունքն թափեալ են. պատուանդանն միացեալ ընդ խաչին գչերաւ. յիշատակն անյայտ. կշիռն է.-24:

10. Խաչ արծաթի ոսկեզօծ միաձոյլ. մէջն խաչելութիւն ձուլածու. մերձ խաչին երկու պատկերք և ի քառակուսի սուտակունք մի մի իւրաքանչիւր թևսն. ի միւս երեսն պատկեր տիրամոր յօտին. նոյնպէս ակունք աստի անտի. պատուանդանն միացեալ գչերաւ ընդ խաչին փոքր խնձորով իւրով. առանց ոսկէջրի է պատուանդանն. յիշատակագիրն է վրացէրէն գրեալ թէ Իփրումեանց Եագունդուն և այլն. նոր ընծայեալ. կշիռն է.-23:

11. Աւետարան մեծ. տեղն կարմիր մախմուռ արծաթապատ ոսկեզօծ. ի վերայ մագաղաթի գրեալ երկաթագիր, որոյ երկայնութիւն է կանգնոյ միոյ հաւասար ձեռին. իսկ լայնութիւն տասն և վեց մատնաչափ ընտիր և գեղեցիկ ոսկիանկար պատկերօք և ծաղկօք լի. տառքն ևս են ոսկեգիր ի վերայ կազմին մի երեսին մէջն պատկեր փրկչական յոտին վերայ. գունդ ունի ի ձեռն իւրում. ի վերայ գլխոյն ձուլածու ի ձև աղաւնոյ հոգի ս[ուր]բ. ի քառանկիւնս սորա պատկերք աւետարանչաց նստելոց յաթոռ նշանօք իւրեանց, և այլ վեց կերպարան երկթև հրեշտակաց ձուլածուք. շուրջանակի բոլորեալ արծաթ չոքուրթմայ ոսկեզօծ երեք մատնաչափ. ի միւս կողմն պատկեր կուսի յոտին վերայ շուրջ զգլխովն աստեղք երկոտասան. ի վեր աստեղացն հաւասար գլխոյն թագ արծաթի նոյնպէս. ի վեր թագին նմանութիւն հոգոյն սրբոյ. աստի անտի կայր և որդին Աստուծոյ բազմեալ. ի ներքոյ իւրաքանչիւր անձնաւորութեան երեք ձուլածու երկթև հրեշտակք. ենթ ոտից սրբոյ կուսին ձև լուսնի առանց ոսկեզրի. աստի անտի երկթև հրեշտակք մեծք ի վերայ ամպոց. շուրջանակի աւետարանիս նոյն չափով բոլորեալ արծաթ նոյնպէս: Բոլոր պատկերքն ի վերա կազմին են արծաթք և ոսկեզօծ երկփեղկիւք հանդերձ. յաւարտ աւետարանի գրուածոցն գրեալ էր վրացէրէն և հայէրէն այսպէ.

*«Ես մեղաւոր Թումանի որդի Բարսեղ եպիսկոպոս գրեցի. ՌՃԻԸ (1679) թուին. յիշատակ Ապովի և իւր մերձաւորաց ի գիւղէն Ջիթահանգի և այլն»:*

12. Աւետարան գրչայ, մեծ դեղն կապուտ մախմուռ. արծաթի ոսկեզօծ դեղն չօքուրթմայ պատկերք մուծեալ ի վերա. մէջն խաչելութիւն ի վերայ կոյս պատկեր աւետեաց. ի ներքին կողմն աստի անտի պատկերք երկու, յորոց միջի չորս հրեշտակք մի մի. ի միւս երեսն նոյնպէս չօքուրթմայ ոսկեզօծ պատկերք արծաթի, մինն փրկչական և միւսն. Աւետարանչաց ի ներքին կողմն գեղեցկանկար պատկերք ... գրեալ է.

244. Խաչատուր Մարտիրոսեան, կին սորա Մարիամ և դստերք Եղիսաբէթ և Սօփիօ, 1-3

245. Գրիգոր Խաչատուրեան, կին սորա Բարբարէ, ուստր Յօհաննէս, 2-1

246. Նալչագար Փարէմուզ, ուստր սորա Գէորգ, 2-0

247. Յովակիմ Յարութիւնեան Յարութիւնեանց, կին սորա Խանում, 1-1

248. Գօրջասպի Սուլխանեանց, կին սորա Մարիամ, ուստր Սուլխան, 2-1

249. Այրի Մայիայ Յարութիւնեան, ուստերք սորա Սիմէօն, Գաբօ, Միքայէլ, 3-1

250. Բղկալ Մէլքօյի այրի Սուսուտան, ուստր Թօմայ, դուստր Մարթայ, 1-2

251. Եկեղեցական Շավէրդի և Աւետիք Ճօպասանեանց, 2-0

252. Արքունի Յակոբ Բայինդուրեան, կին սորա Ովսաննայ, եղբարքն Գիգօլի և Յօհաննէս, 3-1

253. Արքունի Սոլոմոն Խօջայեան և կին սորա (անունը գրված չէ), 1-1

254. Արքունի Աւետիս Գրիգորեան, կին սորա Եփեմիայ, ուստր Գիգօլի, դստերք Սօփիօ և Աննայ, 2-3

255. Եկեղեցական Գուրգէն Աւթանդիլեան Ճօպասանեանց, ուստերք Դաւիթ, Սոլոմոն և Յօհաննէս, 4-0

256. Արքունի Սարգսեանցի այրի Թամար, ուստերք Յակոբ և Սարգիս, 2-1

257. Սիակ Գէորգեան Աղանջանեանց և կին սորա Տալիթայ, 1-1

258. Քաղաքացի Գէորգ Մկրտումեան Տէր Շմաւօնեանց, 1-0

259. Արքունի Բօյախչի Միրզի այրի Աննայ, ուստր սորա Գրիգօլ, 1-1,

260. Դաւիթ Տէր Յօհաննիսեան, կին սորա Նանօ, դստերք Սօփիօ և Մակայ, 1-3

261. Դալալ Բազօ Սարգսեան Տէր Մարտիրոսեան, կին սորա Մաթօ, ուստր Սարգիս, դուստր Մայիայ, 2-2

262. Ժամկոչ Առաքել Մարգարեան Տէր Աբրահամեանց, կին սորա Մագթաղին, ուստերք Աստուածատուր, Գէորգ, դուստր Մարիամ, 3-2

334. Արքունի Մկրտում Խաչատրեանի այրի Մայիայ, ուստր սորա Յօհաննէս, 1-1(հետագայում ավելացվել է Տեր Հակոբի ձեռքով – ծ. հ.)

### Ժողովուրդ Սարգիս քահանայի Տէր Յարութիւնեան Մամասախլեանց

263. Եկեղեցական Սաքօ Զուրաբյան Նաւտիկօեանց, կին սորա Ովսաննայ, ուստր Գէորգ, դստերք Եփրոսինէ, Անուշկայ, 2-3

264. Գլախայ Զուրաբեան Նաւտիկօեանց, կին սորա Եղիսաբէթ, ուստերքն Զուրաբ, Յօհաննէս, Արտէմ, դստերք Նատալիայ, Մայիայ, 4-3

265. Ենեչօ Զուրաբեան Նաւտիկօեանց, կին սորա Ովսաննայ, ուստերք Եագօր, Ստեփան և դստերք Քալի, Թագուհի, Նատալիայ, 3-4

266. Նօգի Գէորգեան Վարդանեանց, կին սորա Հոռոմսիմ, ուստերք Յօհաննէս, Արտէմ, Սարգիս, դստերքն Կէկէլ, Քալի, Փէփէլօ և Սօփիոյ, 4-5

267. Դանիէլ Սահակեան Մարգարեանց, կին սորա Նինօ, ուստերք Յակոբ, Մարգար, Յարութիւն, եղբարք սորա Ստեփան և Սիսակ, 6-1



268. Յարութիւն Յարութիւնեանց, կին սորա Բարբարէ, ուստր սորա Գէորգ, դստերք Սօփիօ, Նատալիայ, եղբայրն Դաւիթ, մայր իւր Եագունդի, 3-4

269. Նօնի Դաւթեան Դաւիթխանեանց, կին սորա Եղիսաբէթ, դստերք Քալի, Ովսաննայ, Թագուհի, Սօփիօ և եղբօր որդի իւր Դաւիթ, 2-5

270. Մկրտում Գրիգորեան Ջանինեանց, կին սորա Բարբարէ, 1-1

271. Գէորգ Գրիգորեան Ջանինեանց, կին սորա Եղիսաբէթ, դստերքն Թալալ և Նինօ, 1-3

272. Գիքօ Յօնանեան Ասլամազեանց, կին սորա Նանօ, ուստերքն Աւօ և Ստեփան, դստերքն Թալալ, Կատարինէ, Մայիայ, Սալոմէ, Անուշկի և Կէկէլ, 3-7

273. Կօնի Դանիէլեան Ասլամազեանց, մայրն Սարրայ և եղբայրն Սարգիս, 2-1

274. Արտէմ Յովսէփեան Մամասախլիսեանց, կին սորա Թալալ և եղբայրն Դաւիթ, 2-1

275. Աղալօ Աւետիքեան Մատինեանց, 1-0

276. Յարութիւն Սահակեան Վարդանեանց, 1-0

277. Եագօր Գիքօյեան Ջանինեանց, 1-0

278. Սօսի Պետրոսեան Թօթօլեանց, ուստր Յովսէփ, 2-0

279. Այրի Եղիսաբէթ Թօթօլեանց, ուստերք Գաբօ և Միխակ, դստերք Քալի և Մայիայ, 2-3

280. Պապայ Սահակեան Վարդանեանց, կին սորա Քալի, ուստերք Եագօր, Սիմօն, Սահակ, Արտէմ և դստերքն Քալի, Կատարինէ, Նատալիայ, Կէկէլ, 5-5

281. Գէվօ Սահակեան Վարդանեանց, կին սորա Քալի, ուստերք Սոլոմոն, Սարգիս և Միխակ, 4-1

282. Եկեղեցական Անտօն Զաքարեան Սոլովեանց, կին սորա Սօփիօ, ուստերք Շաքար, Եագօր, Միխակ, դուստր Քալի և եղբայրն Նօնի, 5-2

283. Սողոմոն Ստեփանեան Խարազեանց, կին սորա Մայիայ և ուստր Մաթուսաղայ, 2-1

284. Մատթէ Շաքարեան Խարազեանց, ուստերքն Յովսէփ, Միքայէլ և դուստր Սօփիօ, 3-1

285. Գասպար Մէլքօյեան Մամասախլիսեանց, կին սորա Ռուսուտան, ուստր Ղազօ, 2-1

286. Գէորգ Մկրտումեան Մամասախլիսեանց, կին սորա Մարթայ, ուստերք Մկրտում և Աւետիք, 3-1

287. Սողոմոն Մկրտումեան Մամասախլիսեանց, կին սորա Մայիայ, 1-1

288. Թաթոս Յոհաննիսեան Սագիարով, ուստր Շաքար, 2-0

289. Բաղդասար Բարսեղեան Նատիկօեանց, կին սորա Եփեմիայ, մայրն Խանում, քոյրն Եղիսաբէթ, 1-3

290. Բէժան Մարգարեան Բէգիջանեանց, կին սորա Նինօ, ուստերք Պէպան, Մէլքօ և Գիօրգի, 4-1

291. Թէմուրազ Նինօնիսեան Գարէծէլօյեանց, կին սորա Ովսաննայ, եղբայրն Կակալո, 2-1

292. Եսայի Գօրգեան Մատանեանց, կին սորա Մարիամ, դստերքն Քալի, Նատալիայ, Եփեմիայ, Մայիայ, Անանի և մայրն Շուշան, 1-7

293. Յովսէփ Մէլքօյեան Մատօնեանց, մայր սորա Մայիայ, 1-1

294. Հէրապետ Պապայեան Կարկուզեանց, կին սորա Բարբարէ, ուստերքն Պապայ, Յօհաննէս, դստերք Յօհաննէսի Անուշկայ և Կէկէլ, եղբայրն Յովսէփ, կին Յովսէփայ Եղիսաբէթ, 4-4

295. Եկեղեցական Դաւիթ Մկրտումեան Խարազեանց, կին սորա Աննայ, ուստր Թօմայ, դստերքն Քալի, Նատալիայ, Կատարինէ, 2-4

296. Աւետիք Պօղոսեան Ջանինեանց, կին սորա Խամփէրի, ուստերք Գիօրգի, Դաւիթ, Պաւլէ, դուստր Քալի, 4-2

297. Այրի Խանում Յօհաննիսեան Խարազեանց, ուստերք սորա Եագօր, Միխակ, դստերքն Քալի, Սօփիօ, 2-3

298. Աւետիք Դավթեան Մամասախլիսեանց, կին սորա Սօփիօ, մայրն Նինօ, եղբարք Մէլքօ, Գաբօ, Յօհաննէս, քոյրն Մարթայ, 4-3

299. Գօգի Սահակեան Մարգարեանց, կին սորա Քէթէվան, ուստերքն Մէլքօ, Գասպար, դստերքն Քալօ, Սօփիօ, 3-3

300. Նօնի Գարէծէլօյեանի ուստերք Յարութիւն, Աւետիք և Գիօրգի, 3-0

301. Գալօ Ստեփանեան Ղուկասեանց, կին սորա Մայիայ, ուստերք Խեչօ, Սոլոմոն, Ղազօ, դստերք Քալի, Սալովմէ, 4-3

302. Նօնի Ստեփանեան Նատիկօյեանց, կին սորա Խանում, ուստերք Սողոմոն, Յօհաննէս և Արտէմ, 4-1

303. Այխար Շլամովինեանի որդիք Գէորգ, Յօհաննէս և դստերք Աննայ, Մայիայ, 2-2



304. Ղազար Պապայեան Կիրակոսեանց, կին սորա Աննայ, դստերք Քալի, Սօփիօ, Կատարինէ, 1-4

305. Այրի Քալօ Յակոբեան Գարածէլօյեանց, 0-1

306. Այրի Ունիփէր Դաւթեան Շլամովինեանց, ուստր Յակոբ և դուստր Կէկէլ, 1-2

307. Եկեղեցական այրի Մարմար Գէորգեան Սալօյեանց, ուստերք սորա Ալլահվէրդի, Ղազօ, դստերք Եղիսաբէթ, Եփեմիայ, 2-3

308. Այրի Մայիայ Սարգսեան Մամասախլիսեանց, ուստր սորա Խաչատուր, 1-1

309. Ստեփան Մուրադեան Սայիտովեանց, կին սորա Ովսաննայ, ուստր Եագոր, դստերք Քալի և Մայիայ, 2-3

310. Առաքել Մէլքօյեան Մամասախլիսեանց, կին սորա Նաթէլ, 1-1

311. Արքունի Գէորգ Քամալեանց, կին սորա Շուշան, ուստր Սարգիս, դուստր Քալի, մայրն Աննայ, եղբօր որդին Մարգար, 3-3

312. Թովմայ Յարութիւնեան Յարութիւնեանց, կին սորա Բարբարէ, դստերք Քալի և Մայիայ, 1-3

313. Արքունի Գէորգ Յակոբյան Մէզարեանց, կին սորա Թինաթին, ուստր Գրիգոր, դստերք Մայիայ, Եփեմիայ, Նատալիայ և Մարթայ, եղբօր սորա որբունք Յակոբ, Գէորգ, դուստր Եղիսաբէթ, 4-6

314. Ղորղանեանցի ստրուկ Յակոբ Ջալալեան, կին սորա Նատալիայ, ուստր Յարութիւն, 2-1

315. Քաղաքացի Գաբօ Գիքօյեան Վարդանեանց, կին սորա Եղիսաբէթ Յականեանց, ուստր Գէորգ, եղբայրն Խէչօ և քոյրն Կատարինէ, 3-2

316. Եկեղեցական Գէորգ Մկրտումեան Քօրօյեանց, կին սորա Մայիայ, ուստերք Ղազօ, Միխակ, Արտէմ և դստերք Սօփիօ և Նատալիայ, 4-3

317. Եղբայր սորա Մէլքօ Մկրտումեան, կին սորա Սօփիօ և դստերք Կէկէլ և Մայիայ, 1-3

318. Միւս եղբայրն Մովսէս, կին սորա Ովսաննայ, ուստերք Նիկոլ, Սոլոմոն, դստերք Նատալիայ, Մայիայ, 3-3

319. Ժամկոչ Մարտիրոս Տէր Մարտիրոսեան Միրզայեանց, կին սորա Եղիսաբէթ, ուստերք Գրիգոր, Մարգար, Գիօրգի, Սարգիս, Աւետիք, կին Գէորգայ Քալի, 6-2

320. Քաղաքացի Նորալինի այրի Բարբարէ, դուստր սորա Թալալ, 0-2

321. Արքունի Ղազօ Մուրքանեանց, կին սորա Մայիայ, ուստր Սոլոմոն և դուստր Սօփիօ, 2-2

322. Սարգիս Մէլքօյեան Մելիքեանց, կին սորա Շուշան, դստերք Շուշան, Նատալիայ և Անուշկի, 1-4

323. Պօղոս Եսայեան Պապանեանցի այրի Լալօ, ուստերք սորա Եսայի, Յարութիւն և Աւետիս, 3-1

324. Ոսկերիչ Յօվանէ Խոսրովեան, կին սորա Մարիամ, դստերք Սօփիօ, Աննայ, եղբարք սորա Թաթօ, Բէժան, Գէորգ, Սոլոմոն, կին Թաթօյի Մայիայ, 5-4

325. Ստրուկ ազգականի Ալան Սարգսեան Ալիխանեանց, կին սորա Բարբարէ, ուստր Գիգօլի, քոյր Մագթաղ, 2-2

326. Եղբայր սորա Յարութիւն,կին սորա Եղիսաբէթ, 1-1

327. Արքունի այրի Մայիայ Յօհաննիսեան, ուստերք Նիկոլ, Յօհաննէս, Ստեփաննոս, 3-1

328. Յովսէփ Սարուխանեան, կին սորա Կատարինէ, ուստր Սարգիս, մայրն Եղսում, 2-2

329. Պօղոս Ջանանեան, կին սորա Հռիփսիմէ, ուստերք Յօհաննէս, Յարութիւն, դուստր Կատարինէ, 3-2

330. Ջուրաբ Անանեան, կին սորա Մարիամ, 1-1

331. Բաղման Աւետիք Կակալօյեանցի այրի Աննայ Խանում, ուստերք սորա Գաբրիէլ և Յովսէփ, 2-1

332. Սոլոմոն Կօնինեան Գօրանեանց, կին սորա Խամփերի, դուստր Հռիփսիմէ, քոյրն Աննայ և մայրն Քալօ, 1-4

333. Դաբաղ Գաբրիէլ, ուստր Սարգիս, 2-0:

# ՍՈՒՐԲ ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Սուրբ Նշան եկեղեցին իր ամբողջ պատմական տարեգրության մեջ հիշատակվել է որպես հայկական, պատկանել է Թիֆլիսում ձևավորված հայ համայնքին և Հայ Առաքելական եկեղեցուն: Եկեղեցին թե՛ իր ճարտարապետական հորինվածքով և թե՛ նրանում գործող հայ քահանաներով մշտապես եղել է հայկական ու հայաշունչ: Այն միաժամանակ հանդիսացել է հայ համայնքի յուրահատուկ հավաքատեղի և համարվել է Թիֆլիսի ամենանշանավոր եկեղեցիներից մեկը:

Սուրբ Նշան եկեղեցին գտնվում է Թիֆլիսի հին թաղամասերից մեկում՝ Կալոյի, հետագայում իր իսկ անունով անվանված՝ Սուրբ Նշան կոչված թաղի կենտրոնում, Սերեբրյան և Սուրբ Նշան (հետագայում՝ Հ. Հակոբյան, այժմ՝ Սուլտնիշանի) փողոցների միջակայքում: Ռուսական իշխանության հաստատումից հետո Սուրբ Նշանի շրջակայքը կրում էր նաև «Серебрянный ряд» անվանումը: Դեռևս 1840-ական թթ. Մ. Բրոսեն գրել է. «Գնալով Սերեբրիանի ոյադով, որը դուրս է բերում վրացական սեմինարի առջև, ձախ կողմում՝ դեպի կենտրոն, տեսնում ենք հայկական գեղեցիկ Սուրբ Նշան եկեղեցին, որը գտնվում է բնակելի տներով շրջապատված մի բակում»:

Եկեղեցու շրջակայքում գլխավորապես ապրել են հայեր, որոնց թվում շատ են եղել հասարակության մեջ նկատելի դիրք ու տիտղոս ունեցող հայազգի գերդաստանները: Եկեղեցու հյուսիսային կողմում՝ դեպի քաղաքի արտաքին պարիսպը եղել է Խոսրոյենց թաղը, որտեղ բնակվել են Խոսրոյենց տոհմից մի քանի տներ[1]:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը եկեղեցու շրջակայքում ունեցել է մի քանի կրպակ: Դեռևս Սիմեոն Երևանցի կաթողիկոսը գրել է, որ Սուրբ Նշանի փողոցում մի խանութ կա, որ Շահնազարենց է կոչվում, որը Կիկոսենց Նասխիթն է տվել Սուրբ Աթոռին, որի ներքին խանութը նույնպես նույն Կիկոսենց Հարությունինն է, և վերևի կող-

1 «Արձագանք», 1893, 20 հունվարի, Հմր 8:

մը Արովենց ոսկերիչ Ռուստամի տունն է, իսկ առջևում՝ փողոցը[1]:

Կալոյի թաղը (Կալոս ուբանի) ներկայիս Լեսելիձե փողոցով բաժանվել է երկու ենթաթաղամասի՝ վերին և ներքին: Վերին թաղում էլ հենց, որտեղ կենտրոնացած էին մեծ թվով պաշտամունքային կառույցներ, գտնվում էր Սուրբ Նշան եկեղեցին: Նրա մոտակայքում էին նաև հայկական Նորաշենի, Սահակաշենի, Մողնու, Ջգրաշենի և այլ եկեղեցիները:

Սուրբ Նշան եկեղեցին, ըստ հյուսիսային մուտքի բարավորին պահպանված շինարարական արձանագրության, կառուցվել է 1703-1720 թթ. ընթացքում, իսկ հետագայում՝ 1780 թ., կառուցվել է կաթողիկեն:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ:

ՇՆՈՐՀՕՔ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՅՆ ԵՂԵՒ ՀԻՄ/ՆԱՐԿՈՒՄՆ ԵՒ ՇԻՆՈՒՄՆ

ՍՈՒՐԲ ՆՇԱՆԻ / ԵԿԵՂԵՑՈՅՍ ԹՎԻՆ ՌՃԾԲ (1703). Ի ԹԱԳ/ԱՒՈՐՈՒԹԵԱՆ

ԼԷՎԱՆ ԽԱՆԻՆ ԵՒ ԻՒՐ ՈՐԴՈ/ՑՆ, Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ

ՆԱՀԱՊԵՏԻՆ: / ԵՍ ՄԷԼԻՔ ԿԻՕՐԿԻՍ, ՈՐԴԻ ՏԱՆՈՒՏԷՐ ԱՍԼԱՄԱՋԻ,

ՇԻՆԵՑԻ/ ԶՏԱՃԱՐՍ ԶԱՅՍ, ՈՐ ՅԱՆՈՒՆ ՍՈՒՐԲ ՆԻԿՈՂԱՅՈՍԻ, ՅԻՇԱՏԱԿ

Ի/ՆՁ ԵՒ ԾՆՕՂԱՑՍ ԵՒ ԵՂԲԱՐՑՍ ԻՄՈՑ ԵՒ ԿՈՂԱԿՑՈՅՍ

ԽԱՆՓԷՐ/ՎԱՆԻՆ ԵՒ ՈՐԴՈՑՍ՝ ՋՈՒՐԱՊԻՆ ԵՒ ՊԱՊԻՆ, ԴՍՏԵՐՑՍ ԵՒ

/ ԲԱԶՄԱՇԽԱՏ ՔԱՀԱՆԱՅԻՍ ԻՄՈՑ ՏԷՐ ՄՈՎՍԷՍԻՆ, ԵՒ ԵՍ ՄԷԼԻՔ

ԳԻՕՐԳԻՍ / ՎՃԱՐԵՑԻ ԸՋԿԻՆ ՍՄԱՅ ԱՄԵՆԱՅՆ ԱՄԻ ՌՃԿԹ.ին (1720):

ՄՆԱՑ ԿԱԹՈՂԻԿ/ԷՆ՝ ՅԻՇԱՏԱԿ ԱՆՋՆՋԵԼԻ ԱՒԱՐՏՈՂԱՑ[2]:

Արձանագրությունը առաջին անգամ ոչ ճիշտ, թերի վերծանել է Մ. Բրոսեն: Հետագայում այն հրատարակել է Սարգիս արք. Ջալալյանցը, իսկ ամբողջական տեքստը ամփոփել է Պ. Մուրադյանը:

Եկեղեցին կառուցող մելիք Գեորգին հիշատակվում է 1699-1711

[1] **Սիմեոն կաթողիկոս Երևանցի**, Ջամբռ, Երևան, 2003, էջ 287:

[2] **Պ. Մուրադյան**, Հին Թիֆլիսի հայոց եկեղեցիները, Ս. Էջմիածին, 2009, էջ 48-49:



թթ. միջև[1]: Նա 1709 թ. կալվածագրերից մեկում նշված է որպես վկա[2]: Մելիք Գեորգիի կինը Խամփերվանն էր, որդիները՝ Ջուրաբն ու Պապը:

Արձանագրությունից նկատելի է, որ հնում՝ մինչև 1703 թ., եկեղեցու «հիմնարկումն և շինումն»-ից առաջ, նույն տեղում եղել է խարխլված կամ ավերված պաշտամունքային մի կառույց, որը հիմնովին վերաշինել է քաղաքի մելիք և տանուտեր Ասլամազի որդի Գեորգին: Այդ է հավաստում նաև բազմաշխատ քահանա Տեր Մովսեսի ներկայությունը վիմագրում: Այդ մասին ենթադրել է նաև Պ. Մուրադյանը՝ նշելով որ «Տեր Մովսեսը նախորդ աղոթարանի կամ մատրան քահանան պիտի լիներ»:

Հետաքրքիր է, որ մելիք Գեորգու Ամիր պապն ու Ասլամազ հայրը արձանագրությունում հիշատակվում են որպես տանուտեր, իսկ ինքը կրում է «մելիքի» պաշտոնն ու տիտղոսը: Հայտնի է, որ Թիֆլիսի պատմական թաղամասերը ունեցել են իրենց տանուտերերը, իսկ 18-րդ դարի սկզբից, ինչպես արձանագրությունից է պարզվում, թաղապետը այլևս «մելիք» է կոչվում:

Եկեղեցու «Հիշատակարանում» նշված է, որ մելիք Գեորգիի Ամիր պապը և Ասլամազ հայրը «շինեցին Ս. Նշանիս Ս. Նիկողայոսի եկեղեցիս իր ժամատնով և շրջապատով»: Խոսքը 17-րդ դարի երկրորդ կեսին ապրած Ամիր Բեհբուդյանի մասին է: Իսկ նրա որդի Ասլամազը իր կնոջ՝ Շահրուբանի հետ հետագայում (մինչև 1703 թ.) վերանորոգել է եկեղեցին: Հավանաբար Սուրբ Նշանը վնասվել էր 1668 թ. հունվարի 4-ին տեղի ունեցած ուժգին երկրաշարժից:

Պահպանվել են նաև եկեղեցու այլ շինարարների անուններ՝ Խոջա Պարխուտար (Բարխուդար), կինը՝ Դարեջան, նրանց դուստր Էագունդի (Ցագունդ), որոնք զանգակատունն են կառուցել իրենց խցերով, իսկ Էագունդը 1719 թ. նորոգել է ծնողների կառուցածը: Եկեղեցու հարավային ավանդատան մեջ հայտնաբերվել է արձանագիր քար, որտեղ նույնպես նշված է զանգակատան վերաշինությունը Բարխուդարի դստեր կողմից: Հայտնի է նաև «ուստայ Բանահ Ցակոբը», որն իր Սարգիս անունով աշակերտին նվիրել է եկեղեցուն (հարկավ, իբրև ճորտ), որպեսզի «ծառայութիւն անի, տարին մէկ լիտր ձէթ, մի չարէք մոմ տայ» եկեղեցուն:

[1] **С. Карапетян,** Мэры Тифлиса, Ереван, 2003, ст. 31:

[2] Կալվածագրեր և տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր, պրակ 1, կազմեց Հ. Աբրահամյան, Երևան, 1941, էջ 131:

Սուրբ Նշան եկեղեցին իր ճարտարապետական հորինվածքով գմբեթավոր եռանավ բազիլիկ է: Այստեղ գլխավոր ու կողային նավերի լայնությունների հարաբերությունը համապատասխանում է 1:1,25, որը Հայաստանի միջնադարյան գմբեթավոր բազիլիկներին բնորոշ համաչափություն է: Արևելքից արևմուտք ձգված աղոթասրահը (11x20,5 մ) բաժանվում է երեք նավի՝ երկու զույգ ուղղանկյունավոր հատած անկյուններով մույթերով: Ավանդատներն ունեն կիսաշրջանաձև խորաններ, իսկ վերևում՝ թաքստոցներ: 12-նիստանի թմբուկով գմբեթը բարձրանում է տրանսեպտի և միջին նավի հատման վրա: Եկեղեցին ունի երեք մուտք՝ հյուսիսից, արևմուտքից և հարավից: Վերջինիս առջև կանգուն է երկհարկանի զանգակատունը[1]:

Եկեղեցու աղոթասրահի արևելյան մասում կիսաբոլորակ եզրագծով ավագ խորանն է՝ օծված Սուրբ Նիկողայոսի անվամբ, իսկ նրանից հյուսիս՝ Անդրեաս առաքյալի, հարավ՝ Սուրբ Գևորգի անուններով օծված խորաններով ավանդատները, որոնց մուտքերը բացվում են արևմուտքից՝ աղոթասրահի մեջ:

Սուրբ Նշան եկեղեցին կառուցված է հիմնականում աղյուսից, պատերը արտաքինից զարդարված են հարթ զարդանախշերով և ավարտվում են սլաքաձև կամարներով:

Միքայել Սուլյանն իր հուշերում գրել է, որ եկեղեցին ընդարձակ ու լայն է, հին եկեղեցու տպավորություն է թողնում, ասում են, որ սա Հաղբատի Սուրբ Նշան եկեղեցուն նմանություն ունի և նրա անունն է կրում[2]:

Հին Սուրբ Նշան եկեղեցու հիմնադրման ստույգ ժամանակը հայտնի չէ: Այն առաջին անգամ հիշատակվում է 1656 թ. գրիչ Աղամալ Ջուղայեցու ընդօրինակած ձեռագիր «Գանձարանի» հիշատակարանում, որը գրվել է Տփխիսի (Թիֆլիս) Մողնու Սուրբ Գևորգ եկեղեցում և պ. Ջուրաբի կողմից նվիրվել է Սուրբ Նշան եկեղեցու Տեր Օհան քահանային: Հիշատակարանում նշված է. «Արդ, ես՝ բազմամեղ Ջուրաբս ստացայ զսուրբ տառս և ետու յիշատակ ի դուռն Ս. Նշանին, ի ձեռն տէր Ոհան քահանային, յիշեցեք...»[3]: Այսպիսով, Սուրբ Նշան եկեղեցում հիշատակվող առաջին քահանան Տեր Օհանն է:

[1] **Մ. Հասրաթյան**, Թբիլիսիի հայկական եկեղեցիների ճարտարապետությունը, «Էջմիածին», 2009/Զ, էջ 73:
[2] ՀԱԱ, ֆ. 428, ց. 2, գ. 104, թ. 19:
[3] Հայերեն ձեռագրերի ԺԷ. դարի հիշատակարաններ, հ. Գ., կազմեց Վ. Հակոբյան, Երևան, 1984, էջ 721:



Ի դեպ, 19-րդ դարի վերջում Գ. Մատինյանը իր «Թիֆլիսի հին եկեղեցիների հիմնադրման վերաբերյալ» գրվածքում անդրադառնալով Սուրբ Նշան եկեղեցուն, համարել է, որ այն հիմնադրվել է 1656 թ.[1]:

1815 թ., ի պատասխան Ներսես Աշտարակեցու այն հարցմանը, թե երբ է կառուցվել Թիֆլիսի մեկ այլ՝ Ջգրաշենի եկեղեցին, նրա ավագ քահանա Տեր Սիմեոնը արքեպիսկոպոսին հասցեագրած հաշվետվությունում գրել է, որ եկեղեցու հիմնարկեքը կատարվել է Վախթանգ Շահնավազի (1658-1678 թթ.) թագավորության տարիներին և նշել, որ «ի ծերոց լսած» ավանդության համաձայն՝ Սուրբ Նշան եկեղեցին կառուցելիս նրա միաբանությունից բաժանվել են Տեր Բարսեղ և Տեր Դավիթ քահանաները և հետագայում ձեռնամուխ եղել Ջգրաշեն կոչված եկեղեցու կառուցմանը: Եվ քանի որ Ջգրաշենի եկեղեցու հիմնարկեքը կատարվել է 1659 թ.[2], ապա անշուշտ Սուրբ Նշան եկեղեցին մինչ այդ արդեն գործող էր, ուներ միաբանություն և ամենայն հավանականությամբ կառուցվել է 1655-1656 թթ.:

Ենթադրվում է, որ եկեղեցին վերանորոգվել է 1662 թ. քարհատ վարպետ Նավասարդ Առինջեցու կողմից: Այդ մասին տեղեկացվում է եկեղեցու Սուրբ Գևորգ անվամբ օծված հարավային խորանի (ավանդատան) մեջ պահպանված արձանագիր խաչքարի բեկորից: Այն Ս. Կարապետյանը կարդացել է.

«Ի թվին ՌՃԺԱ. (1662)// ... հարսըն, Գասպար. իրան աներ հայր Բէր/ոն, քարայհատ Նաւայսա/րթն, որ է Ցառիճցի, շինեցաւ ձեռամբ սոցա»[3]:

Սակայն, կարծում ենք, որ խոսքը նշանավոր ճարտարապետ Նավասարդ (Նաւայսարդ) Առինջեցու (Ցառինճեցի) մասին է, որը հայտնի էր Հաղբատավանքում կատարած վերանորոգչական աշխատանքներով: Ս. Սաղումյանը նշել է. «Ամենայն հավանականությամբ, նա նորոգել է նաև հայրենի գյուղի ամրոցի եկեղեցին, որի սեղանաքարի կոթունի վրա դրոշմել է իր անունը»[4]:

Արձանագրությունը հրատարակող Ս. Կարապետյանը գրել է,

[1] ՀԱԱ, ֆ. 332, ց. 1, գ. 679, թ. 1:
[2] Այդ թվականը ճշտել է հարգարժան գիտնական Պարույր Մուրադյանը, տես՝ նրա Հին Թիֆլիսի եկեղեցիները, էջ 95:
[3] **Ս. Կարապետյան**, Թբիլիսիի Սուրբ Նշան Սուրբ Նիկողայոսի եկեղեցի, Երևան, 2012, էջ 4:
[4] **Ս. Սաղումյան**, Փակագրությունը հայ վիմագրության մեջ.- «Լրաբեր հասարակական գիտությունների», 1980/9, էջ 82:

որ «Հին եկեղեցուն պատկանած շինարարական արձանագրությունը, ամենայն հավանականությամբ, պահպանության նպատակով նոր եկեղեցու հարավային ավանդատուն է փոխադրվել տեղում նոր եկեղեցին կառուցելուց հետո»[1]:

Հետագայում՝ 1673 թ., ի թիվս Թիֆլիսում գտնվող հայկական ութ եկեղեցիների, Սուրբ Նշանը հիշատակում է ֆրանսիացի հայտնի ճանապարհորդ Շարդենը[2]: Հետաքրքիր է, որ Սուրբ Նշանը հիշատակվում է Փաշա վանքից անմիջապես հետո, որը վկայում է նրա առաջնակարգ դերի մասին: Հետագայում, դատելով Տուրնեֆորի՝ հայկական եկեղեցիների թվարկության քանակից (7-1), առկա է նաև նրա ճանապարհորդական տարիներին (1700-1702 թթ.):

18-րդ դարի սկզբում հիշատակվում է Սուրբ Նշան եկեղեցու ավագերեց Հովսեփ քահանան: 1694 թ. Նահապետ կաթողիկոսը նրան միաժամանակ նշանակել էր Սուրբ Էջմիածնի գործակալ: 1706 թ. Ալեքսանդր կաթողիկոսը կոնդակով նրան ավագերեց հաստատելու և հնազանդ մնալու կոչ էր արել: Իսկ երկու տարի անց՝ 1708 թ., կաթողիկոսը հրահանգել է Սուրբ Նշան եկեղեցին հանձնել Հովսեփի որդի Տեր Աբրահամին: Տեր Հովսեփ քահանան, եկեղեցու ծուխը հանձնելով որդուն, 1710 թ. մարտի 12-ին մեկնել է Ղանդահար[3]:

Ստորև ներկայացնում ենք Սուրբ Նշան եկեղեցու ծխերը 1710 թ. դրությամբ.

1. Մէլիք Գիորկին և իր եղբայր [ ]ն, 2. Խօջայ Բարխուդարն, 3. Շատինին Գասբարն, 4. Բաղկալ Խուտինինք, 5. Անաշելինց Դաւիթն, 6. Ծնէփեկինց Արութիւնն, իր եղբայր Գիրկին, 7. Մանկօն և իր եղբօր որդի Մովսէսն և իր եղբաքն Մէլքօն և Բէրօն, 8. Խուտինի որդի Փարսատան, 9. Շարիպառնինց Սիմօն, 10. Ղամազինց Դաթօի որդի Բէժան, 11. Բաղկալ Կօկին և իր փեսայ Գիգօն, 12. Ասլանպէկինց Գասբարն և Աւետիսն, 13. Բռաւօ Ջալին, 14. Մոնթ Պօղոսն, Բարաթն, Փասօն և Գասբարն, 15. Ալըցի Դաւիթն և իր տղէրքն՝ Սօրօղանին, Գիրկին, 16. Ալըցի Գուրկենինց Ամիրն, 17. Գուրկենինք, 18. Ճոն Գողերցին և եղբայր Գիրկին, 19. Ցեզինց Ղազարի որդի Դաւիթն, 20. Մանէսինց Գիրկին, Ջալին, Արութիւն, Սափարն, Նազարն, 21. Ջատիկօինց Ջուրաբն և իր որդիքն՝ Խատօն և Մէլքօն, 22. Միւս Ջատիկօինց Արութիւն, 23. Օղինց Նազարն և եղբայր Առաքելն, 24. Կանաղօբ Արութիւն, 25. Ծնէփեկինց իր քվեր որդի Բաքէն, 26. Նալչաքար Մուքելի որդի Մէրաբն և իր եղբայրն, 26. Ջանդուխազ Մէլքօն և իր որդի Սահակն, 27. Խէչիկինց Ճարճատի որդի Բաքէն, 28. Սառաճ Շերմազանն, իր որդի Էսդատէն և իր գանաղօփնէրն և իր եղբարքն Գիրկին, Էադատէն, Շերմազանն և իր որդի Գիօն, 29. Ծաւկցի Դաւիթն, 30. Աւանինց քանարջի Գօգին, Արութիւնն, 31. Ջուրաբն և եղբայր Ջալին, 32. Խատինի որդի Գիորկին և եղբայր Ջուրաբն, 33. Դիվան Շալվէն, 34. Փալանդուզ Աւթանտիլն, 35. Խուրու Ցովսէփն և իր փեսայն, 36. Սարուխանինց Շիօն, 37. Դարփին Արութիւն, 38. Խարազ Գասբարն և իր եղբօր որդին, 39. Աբօփն և իր քոյրն և փեսայն Մէրաբն, 40. Աւանի որդի Խատօն և իր եղբայր Գօգիէն, 41. Բ. (2) եղբայրք՝ Մանկօն և Սիմօն, 42. Սարուխանանց Սիրէլին, 43. Դամբուրչի Ասլանի որդի Գիորկին, 44. Խնըպտու որդին, 45. Միլածինց Նասխիտէն և իր եղբայրն և իր փեսայ դարփին Արութիւն, 46. Մանկօի ճորտն Աւազն, 47. Մովսէսի ճորտ Մարգարէն, 48. Մէկօտրէ Ասլան, 49. Հուռմցի Արութիւն, 50. Ալցի Ասատուրն, 51. Դաւթի ճորտ Բիծինէն, 52. Կոստանդի որդի Գիորկին, 53. Ծինծղարեցի Շերմազան, 54. Ասլապեկինց Գասբարի ճորտ Շերմազան, 55. Լիսեցի թուր շինօղ Ջաքարէն, 56. Բ (2) որբ, որ մէկ Բաքօինց Էստատէն, մէկն դամբուրաչի Ասլանի որդի Գիորկին է մեծացնում, 57. Կախարդ Թամարօն և իր փեսայն, 58. Գանջցի Բալասան, 59. Ծաւկցի Շերմազան, 60. Որբիվէրի կնկտիքն՝ Էթէրն, խլի քոյր Մարեամն, Շոնեինց Թինաթին, Թանդինինց Լալին, Հերիքնազն, Թումայի քոյր Մարամն, 61. Մէկ տուն ժողովուրդ Քարափի թաղում:

18-րդ դարի երկրորդ կեսում Սուրբ Նշան եկեղեցու քահանաներից է եղել Տեր Մովսեսը, որը, ինչպես Սիմեոն Երևանցի կաթողիկոսն է գրել, Տափի թաղում ունեցել է այգի[1]: Հետաքրքիր է, որ նրա այգու մոտ գտնվել է Տեր Նիկողոսի այգին: Հավանաբար վերջինս Սուրբ Նշան եկեղեցու հյուսիսային բարավորի քիվատակին 1781 թ. արձանագրությունում հիշատակվող մահտեսի Տեր Նիկողայոսն է.

*ՅԻՇԱՏԱԿ Է ԴՈՒՌՍ ՄԱՀՏԵՍԻ ՏԷՐ ՆԻԿՈՂԱՅՈՍԻՆ, ՌՄԼ. (1781):*

Մահտեսի տեր Նիկողայոսը եղել է եկեղեցու քահանաներից և, ինչպես ենթադրվում է, ժամանակաշրջանի հայտնի դեմքերից էր: Նա հիշատակվում է դեռևս 1740 թ.: Լեոն նույնպես Տեր Նիկողայոսին համարել է Թիֆլիսի ամենահեղինակավոր քահանաներից մեկը[2]:

Ձախ էջի ծանոթագրություններ.

1 **Ս. Կարապետյան**, նույնը, էջ 4:
2 **Պ. Մուրադյան**, նույնը, էջ 312:
3 **Պ. Մուրադյան**, նույնը, էջ 192:

Աջ էջի ծանոթագրություններ.

1 **Սիմեոն կաթողիկոս Երևանցի**, նույնը, էջ 287:
2 **Լեո**, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1984, էջ 79:

Սուրբ Նշան եկեղեցու «Հիշատակարանում» նշված է, որ «Մահտեսի մեծ տէր Նիկողայոսը եկեղեցու դուռը փոխեց նոր տաշած քարով»:

1743 թ. եկեղեցու հյուսիսային մուտքի առջև՝ քառայուն զանգակատան նախասրահի ներքո, ամփոփվել է եկեղեցու բարեզարդության «բազում աշխատանօք» նպաստած եկեղեցու ավագ երեցը[1]:

1745 թ. Սուրբ Նշան եկեղեցին հիշատակվում է նաև խոջա Բեհբուդի թոռնորդի Մելիք աղայի և նրա եղբայր Ստեփաննոսի արտոնագրում, որով նրանք թույլատրել են պատարագիչ քահանաներին շաբաթ և կիրակի օրերին խոջայի բաղնիքում անվարձ լողանալ և բաղանիքի դրամարկղից 100 դիան ստանալ՝ պայմանով, որ եկեղեցիներում պատարագների ժամանակ բարեխոսեն իրենց ու իրենց ննջեցյալներին համար[2]:

Ալեքսանդր Երիցյանը, գրելով 19-րդ դարի առաջին քառորդում Թիֆլիսում գործող հայ քահանաների մասին, դրանց թվում նշել է նաև Սուրբ Նշան եկեղեցու հոգևորականներին: Նա առանձնապես շեշտել է Տեր Նիկողայոս քահանային, և նշել, որ նրա մասին Ներսես Աշտարակեցին գրել է. «սա կարի մարգարէութեամբ Լօքօ անուանեալ, որ ընդարձակաբերան նմանահանգոյն՝ մշտափոյթ է ի կլանել անխտիր զմեծ և զփոքր՝ միայն զի պարարտեսցէ զիւրն ախորժակ մոլի կրից և ունակութեանց»: Նշված են եկեղեցու «համեստ քահանայք»՝ ավ. լուսարար Տեր Հովհաննես Տեր-Խաչատրյանը, Տեր Հարություն Տեր-Վարդանյանը, Քամոյանցը, Տեր Հակոբը (Ժանգ մականունով), Ջիալյանը (Ջիալդեղա մականունով)[3]:

Միաժամանակ Ա. Երիցյանը, նկարագրելով քահանաների գործունեությունը, օրինակ է բերել Տեր Հակոբ քահանային. «Վրաստանի հայոց քահանաներն էլ իրանց կատարեալ տէր էին համարում թէ՛ իրանց պաշտօնի և թէ՛ իրանց ժողովների վերաբերութեամբ, և ոչ ոք կարող չէր հակաճառել նրա իրաւանց դէմ: Այս ինչ տէր Յակոբ քահանայն Ս. Նշան եկեղեցոյ իրաւունք ունէր դեռ իր կենդանութեան ժամանակ ձեռնադրել տալ իր տեղ իր որդուն կամ իր ազգականին, իսկ այդպիսի ժառանգ չունեցած միջոցին՝ որդեգրում էր ում որ կամենում էր և նրան նշանակում իր փոխարէն քահանայ»[4]:

[1] Ավագ երեցի անունը տապանագրությունում անընթեռնելի է:

[2] **Պ. Մուրադյան,** Հին Թիֆլիսի Հայոց եկեղեցիները, էջ 192:

[3] **Ա. Երիցեանց,** Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը և Կովկասի Հայք 19-րդ դարում, մասն Ա., Թիֆլիզ, 1894, էջ 82-83:

[4] **Ա. Երիցեանց,** նույնը, էջ 79:



1814 թ. մայիսի 21-ին կազմված վիճակագրական տեղեկություններում Սուրբ Նշան եկեղեցում նշված են՝ Տեր Նիկողոս քահանան, Տեր Հովհաննես քհյ. Տեր-Խաչատուրովը, Տեր Ստեփան քահանան և եկեղեցականներ՝ տիրացու Գրիգոր Վանեցին, Ղազար Տեր-Հովհաննեսովը, Դավիթ Տեր-Գրիգորովը, Հակոբ Տեր-Սողոմոնովը, Տեր Հովակիմ Տուրազովը, Տեր Սողոմոն Տեր-Հակոբովը (ձեռնադրվել է 1801 թ.), Տեր Աստվածատուր Պապանը (ձեռն. 1802 թ.), Տեր Գրիգոր Տեր-Հովսեփովը, Տեր Հովհաննես Երևանցին[1]: Ի դեպ, եկեղեցու ավագ քահանա Տեր Հովհաննես Կուկուջանյան Երևանցին հայտնի է եղել որպես հայոց եկեղեցական աղոթքների, ժամերգությունների և երգերի կատարյալ գիտակ, շարականների հմուտ ուսուցիչ[2]:

Նույն տարում, երբ Վիրահայոց թեմի առաջնորդ Ներսես արք. Աշտարակեցին պահանջ է ներկայացրել Թիֆլիսի հայկական եկեղեցիների ավագերեցներին և հոգաբարձուներին, թե ինչ գիտեն իրենց եկեղեցիների հիմնարկության կամ նորոգության մասին, ստացվել է նաև պատասխան գրություն Սուրբ Նշան եկեղեցուց: Այդ գրությունը եկեղեցու տարեգրությունն էր, մի հիշատակարան, որում տարբեր տարիներին ավելացվել էին եկեղեցու վերանորոգումների և նվիրատվությունների մասին գրառումներ: Հիշատակարանում եկեղեցու մասին գրված է.

«Արդ, յիշեցէք ի Քրիստոս և Աստուած ողորմի ասացէք տանուտէր Ամիրին և իր որդի տանուտէր Ասլամազին և իր առու արեան մերձաւորացն, որ շինեցին Սուրբ Նշանիս Սուրբ Նիկողայոսի եկեղեցիս իր ժամատանովս և շրջապատովս: Աստուած ողորմի: Ամէն:

Արդ, յիշեցէք ի Քրիստոս և Աստուած ողորմի ասացէք խօջայ Պարխուտարին և կողակցոյն՝ Դարէճանին, որ շինեաց զՍուրբ Նշանի եկեղեցոյն զանկակատունն իր խաչովս, զոր Տէր Աստուած երկնից արքայութիւնն պարգևեսցէ և գաբրիէլեան փողոյն արժանի արասցէ. ամէն:

Աստուած ողորմի Պարխուդարի դուստր Եազունդուն, որ իր հօր շինած զանկակատունն քակվել էր, կրկին նորոգեց իր խաչովս՝ իր հոգւոյն յաւիտենական յիշատակ. Աստուած ողորմի: ՌՃԿԸ. (1719) թուին, Յուլիսին:

[1] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3792, թ. 2:

[2] **Գ. Շերմազանեան,** Նիւթեր ազգային պատմութեան համար, Երևելի հայկազունք ի Պարսկաստան, Ռոստով (Դոնի վերայ), 1890, էջ 292:

Աստուած օրհնէ տանուտէր Գիօրգին և իր ծնողացն արքայութիւն պարգևէ, իր որդիքն անփորձ և անսասան պահեսցէ, որ եկեղեցւոյ պարիսպն յետ քաշեց՝ վասն իւրեանց հոգւոյ փրկութեան:

Աստուած ողորմի տանուտէր Ալամազին և կողակցույն Շահբուբանին և որդույն, որ վերստին նորոգեցին զեկեղեցին:

Աստուած ողորմի պարոն Փէրիխանին, որ եկեղեցւոյ խաչկալն շինեց:

Օրհնութիւնն աստուածային և այլն եկեսցէ պարոն Մէլիք Գիօրգուն, որ վերստին շինման և նորոգման եկեղեցւոյս Սուրբ Նշանի, որ զօրութեամբ արիացեալ կրկին ի հիմանէ շինեաց և մեծացոյց կամարաձև և գեղեցիկ յօրինուածովք անջինջ և յաւիտենական յիշատակ անձին իւրոյ և ծնօղացն, և եղբարցն, և կողակցույն Խամփէրվանին, և նորաբողբոջ ծաղկեալ որդուցն Ջուրապին և Պապին, և դստերացն, և ամենայն արեան մերձաւորացն: Աստուած ողորմի ասացէք. ամէն:

Որ եղև հիմնարկութիւն սուրբ եկեղեցւոյս ի ՌՃԾԲ. (1703) թուին, սորին աշխատութեան և ձեռնատու՝ մեր քահանայ տէր Մովսէսին: Յետ այսորիկ ՌՃՂ. (1741) թուին օրհնեցին զեկեղեցին և մատուցին զփրկագործ պատարագն, որ պարոն Գիօրգին ելից զփափագ սրտին իւրոյ և արժանաւորեցաւ ականատես լինել սրբոյ եկեղեցւոյս, որ և յայսմ ամի եղև վախճան Մէլիք Գիօրգուն, զոր Տէր Աստուած ողորմեսցի իւրն և զերկնային արքայութիւնն պարգևեսցէ և իւր որդուցն երկար կեանս շնորհեսցէ, որք զօրանան Աստուծով և զմնացեալ կաթուղիկէն շինեն և աւարտեն՝ որքան ի մարմնի կան խաղաղութեամբ և խնդութեամբ վայելեն զկեանս իւրեանց և յետ աստեացս ելնելոյ տեսլեան փառաց աստուածութեանն արժանիս արասցէ, և Աստուած ողորմեսցի ի միւս անգամ գալստեանն. ամէն:

Այլև յիշեցէ՛ք ի Քրիստոս և Աստուած ողորմի ասացէք Մէլիք Գիօրգին և կողակից Խամփերվանին և որդուցն՝ Ջուրապին և Պապին, որ մէկ ակուռխանայ շինեց եկեղեցւոյս յիշատակ երետ, Աստուած ողորմի:

Աստուած ողորմի ուստայ բանաի Յակոբին հոգին, որ մի Սարգիս աշակերտ ունէր եկեղեցի շինման ժամանակին, բաշխեց եկեղեցւոյն, որ ծառայութիւն անէ, տարին մէկ լիտր ձէթ, մի չարէք մոմ տայ, Աստուած լուսաւորէ նորա հոգին:

Աստուած ողորմի Խօջօյենց Առաքելին և իր կողակցույն, որ եկեղեցւոյս մէկ խցի տեղ առաւ և գերեզմանատուն: Աստուած ողորմի:



Աստուած ողորմի Ալահղուլունց Մուրադի որդի Մարտիրոսին և Փանոսին և ծնողացն և կողակցացն, իւր որդի Մուրադին, որ ժամատան մեծ դուռն շինեց իւրեան հոգւոյ յիշատակ:

Աստուած ողորմի Անդօյին, կողակից Դարէջանին և որդուցն Գիօրգուն և Յարութինին՝ իւրեանց հոգւոյ լուսագին եկեղեցւոյս մօտ մէկ դուքան տուին:

Աստուած ողորմի Գասպարի որդի Մովսէսին, Յօհանին և Յուէփին, որ իւրեանց քուեր որդի Մկրտումն անյիշատակ մեռաւ, մնաց տունն գրաւ, սրանք թափեցին, Մկրտումին յեկեղեցումն թաղեցին, տունն տուին եկեղեցւոյն, որ իւրեանցն էլ գերեզմանատուն լինի:

Տէր Աստուած ամենազօր ընդ երկայն աւուրս արասցէ բարեպաշտ և աստուածասէր թագաւորն մեր՝ օծեալն Թէմուրազ և որդի նորին Աստուածով զօրացեալ Հերակլ արքայն, որ առաջին թագաւորաց ողորմութեան գրեանքն տեսին, իւրեանք ևս նորոգեցին և շաղավաթլամայ գիր ետուն. այսպէս՝ Թէ մարդ որ մեռանի անյիշատակ, ոչ ուստր մնայ և ոչ դուստր, որպէս որ քաղաքացիք կամենան՝ այնպէս առնեն, որպէս որ մեք ձեռագրով հաստատեալ եմք, այսուհետև ոչ մեք և ոչ մերայինքն, և ոչ մեր առաջակայ իշխանքն հրաման չունին եղծելոյ: Կատարօղքն լիցին օրհնեալք՝ ասասցեն հրեշտակք և մարդիկք. ամէն, եղիցի, եղիցի:

Աստուած ողորմի դիւան Օթարին, իր կողակից Խամփերվանին, որ Էյնալ մէլիքի տղայ Ռոստոմիցն մէկ դուքան գնեց իր նաղդ փողովն, քաղաքիս եկեղեցեացն վախմ երետ՝ Վանքին, Սուրբ Նշանին, Ջկրաշէնին, Նորաշէնին, Մօղնին, Փեթղեհէմին, Քամոյենց եկեղեցւոյն. էն դուքանի քրեհէն ութ մոմապատ մէկ մէկ ստել ամենն մէկ անգամ տան ամէն եկեղեցւոյն, որ հանապազ Այսմաւուրքն կարդան, ասեն՝ Աստուած ողորմի:

Աստուած ողորմի մահտեսի մեծ Տէր Նիկողոսին. Սուրբ եկեղեցւոյս դուռն փոխեց նոր տաշած քարով շինել ետ՝ իւրեան հոգւոյ յիշատակ, Աստուած ողորմի ասէք:

Բարեսէրն Աստուած որ կամի զի ստեղծուածքն իւր միշտ ի բարիս յառաջասցեն և զնոյնն գործեսցեն անյապաղ ջերմեռանդ սիրով, ուստի և յատկապէս շարժեցաւ ի գութ սիրոյ առ Սուրբ Նշան անուն հիմնեցեալ յեկեղեցիս, որ իսկ ի յիշատակ ոմանց բարեպաշտից յիսուն ամաւ յառաջ շինեցեալ գոյր, որոց անուանքն գրեալ կան ի կոնդակոջ յիշատակարանի եկեղեցւոյս: Սակայն ոչ էին լրացուցեալ, այլ կիսակատար շինուածովք թողեալ կայր առանց գմբեթի, զորոյ զշինումն բազումք խոստացան, բայց ոչ կարացին՝ վասն զի

ոչ էր Աստուծով և մանաւանդ զի շատ ծանր մասրաֆ ունէր շինումն սորա: Յետոյ նա որ քննէ զծածուկն սրտից, ձգեաց ի սիրտ ումեմն բարեպաշտի և աստուածասիրի առն Մէհրապ-աղայ կոչեցելոյ, որդւոյ Ենովք-աղային, որ յիրաւի ըստ անուանն և գործով ևս աղայ երևեցաւ, զի այսպէս ծանր և բազմածախ գործոյն եղև ձեռնարկօղ, որ մեծաւ ջերմեռանդութեամբ, սիրով սկսեց զշինումն գմբեթին և հրաշալի կաթուղիկէին, յոյժ գեղեցիկ և վայելուչ ձևով, շքեղ և զարմանալի տեսլեամբ կանանչագոյն փայլուն և պայծառ չինուրիւ, հոյակապ և բարձրաբերձ գմբեթիւ, լայն և արձակ միջոցաւ, ծաղկեալ գաւազանիւք և օրինաւոր լուսանցիւք. համարի թէ զհարսն լուսոյ զարդարուն կանգնեաց ի վերայ երկրի: Եւ ճշմարիտ է այս, զի քաղաքիս այս Թիֆլիզոյ պայծառութիւն և գեղեցկութիւն եւ, որոյ զգլուխն ոսկիզօծ խաչիւ պսակեաց և ամրափակեաց, սոյնպէս ևս ի ներքոյ գմբեթին բոլորակի վերնատուն շինել ետ, և շուրջանակի վերնատանն երկոտասան առաքելոց և չորս աւետարանչաց պատկերիւք շրջափակեալ զարդարեաց. ըստ ամենայնի ոչ խնայեաց զբազմութիւն ծախիցն, այլ միայն անխնայաբար ծախելով գեղեցկութեան ջանայր: Նաև ըստ երկայնութեան բեմին քարիւք քանդակելովք պատեաց և եօթն պատկերիւք տնօրինականաց շարակարգեաց, վասն որոյ, ով հաւատացեալ ժողովուրդք, ամենքեանս ասացուք՝ Օրհնեալ լիցի յիշատակ մարդոյս այսմիկ, և զարդարիչն Աստուած զարդարեսցէ զհոգի սորին ծնողացն և համենայն իւր ննջեցելոցն և զանուանս նոցա գրեսցէ ի գիրն կենաց»[1]:

1796 թ. հունվարի 8-ին կազմվել է եկեղեցու ավագ քահանա Նիկողայոսի կտակը, որը տրվել է իշխան Մանուչար Թումանյանի դիվանին ի գործադրություն[2]:

1814 թ. հունիսի 27-ին, Ներսես Աշտարակեցին դիմել է Մինաս և Մարտիրոս արքեպիսկոպոսներին, նրանց ուղարկել նաև կաթողիկոսի հրահանգը և պահանջել, որ իրենց հետ ներգրավեն նաև երկու քահանա ու քննություն կատարեն եկեղեցու նախկին լուսարար Տեր Հովհաննես քահանայի կազմած՝ եկեղեցու ելքի և մուտքի հաշիվները[3]: Քննությունից հետո, հունիսի 31-ին, Ն. Աշտարակեցուն տեղեկացվել է, որ Տեր Հովհաննեսի դեմ դավադրություն է կազմակերպված եղել[4]: Միաժամանակ, նշվել է, որ նրան պետք է

[1] **Պ. Մուրադյան,** նույնը, էջ 149-152:

[2] ՄՄ, Ա. Երիցյանի արխիվ, թղթ. 158, վավ. 19:

[3] ՄՄ, Կ/Դ, թղթ. 31, վավ. 152:

[4] ՄՄ, Կ/Դ, թղթ. 31, վավ. 153:



թողնել իր նախկին պաշտոնում: Հետագայում, 1815 թ. մայիսի 17-ին, Եփրեմ կաթողիկոսը հրամայել է Ներսես արքեպիսկոպոսին, որ Տեր Հովհաննեսին հարկավոր է վերականգնել իր պաշտոնում և հանդիմանել, որ եթե լուրջ պատճառ ունի, թող ներկայացնի իրեն: 1816 թ. փետրվարի 28-ին կաթողիկոսին ինքնաարդարացման նամակ է ուղարկել նաև Տեր Հովհաննես քահանան: Նա մեկ ուրիշ նամակ էլ 1817 թ. մայիսի 24-ին, ուղարկել է Ներսես արքեպիսկոպոսին, նշելով, որ պաշտոնավարել է եկեղեցում անձնվիրաբար ու հերքել իր վրա բարդած մեղադրանքները: 1817 թ. հուլիսի 5-ին վիճարկող Տեր Նիկողայոսը, Ն. Աշտարակեցուն տեղեկացրել է. 1. Իր պաշտոնավարության ժամանակ արծաթեղեն չի հալվել, 2. Տեր Գրիգորի ժամանակ լուսարարության արդյունքը բազմաթիվ անգամ ավելի է եղել, քան Տեր Հովհաննեսի օրոք, 3. Տեր Հովհաննեսն առողջ ժամանակ ևս ծույլ էր, 4. Տեր Հովհաննես քահանայի դեմ բողոքողը ոչ թե ինքն է, այլ ծխականները[1]: Ի պատասխան Տեր Նիկողայոսի գրության, Տեր Հովհաննեսը Ն. Աշտարակեցուն հայտնել է, որ Աղա Մահմադ խանի ժամանակ եկեղեցու կարիքների համար ձուլվել է արծաթեղենի մի քանի կտոր[2]: Հուլիսի 14-ին, Մինաս եպիսկոպոսը, եկեղեցու Տեր Սիմեոն ավագ քահանան, Տեր Մովսեսը և այլոք, Տեր Հովհաննեսի գործի քննության արդյունքները կատարելով, պահանջել են, որ վերջինիս պետք է վերականգնել իր նախկին պաշտոնում, և հեռացնելու որևէ հիմք չկա[3]:

1817 թ. Ներսես Աշտարակեցին շրջաբերական է ուղղել Նուխու, Բաքվի և Ելիզավետապոլի հայությանը, որով հայտնել է, թե ուղարկում է Սուրբ Նշան եկեղեցու լուսարար Տեր Հովհաննես քհյ. Տեր-Խաչատրյանին՝ տեղում երեխաների ծաղիկ հիվանդությունը կտրելու և այդ մեթոդը տեղի քահանաներին սովորեցնելու համար[4]:

Ի դեպ, տեր Հովհաննես քահանան վեճի մեջ է եղել եկեղեցու Տեր Նիկողայոս քահանայի հետ, որի շուրջ առկա է մի քանի վավերագիր: Վեճը կայացել է նրանում, որ Տեր Հովհաննես քահանան, դեռևս 1813 թ. սեպտեմբերի 22-ին դիմել էր Ներսես արքեպիսկոպոսին, խնդրելով եկեղեցու խորանում եղած և իր հոր կողմից նվիրված Սուրբ Նշանը շնորհել իրեն[5]: Հետագայում, հենվելով բողոքնե-

[1] ՄՄ, Կ/Դ, թղթ. 31, վավ. 159:

[2] ՄՄ, Կ/Դ, թղթ. 31, վավ. 160:

[3] ՄՄ, Կ/Դ, թղթ. 31, վավ. 161:

[4] ՄՄ, Կ/Դ, թղթ. 31, վավ. 104, այդ առթիվ, տես նաև՝ թղթ. 32, վավ. 66:

[5] ՄՄ, Կ/Դ, թղթ.31, վավ. 162:

րի վրա, Ն. Աշտարակեցին Տեր Հովհաննեսին հեռացրել էր եկեղեցու լուսարարության պաշտոնից:

1818 թ. հունվարի 18-ին Ներսես արքեպիսկոպոսը հրամայել է Սուրբ Նշան եկեղեցու Տեր Սողոմոն քահանային գնալ Խաչի Թելեթ և «նստել անդէն ի յեկեղեցին, որ կառուցեալն է յանուն Սրբոյն Գէորգեայ և հասու լինել ամենայն ելից և մտից եկեղեցւոյն այնմիկ և ստանալ դրամ տեսակ եկեղեցական նուիրունս զարդիւնս յուխտաւորացն և այլոց՝ թէ՛ դրամ, թէ՛ մոմ, թէ՛ ձէթ, թէ՛ քունջ, թէ՛ մատաղ, թէ՛ զոհաբերաց ասացեալս, թէ՛ ղանայ և թէ՛ այլ ինչ նիւթէղէն և կամ արծաթէղէն և ոսկէղէն, զորս սովոր էն ի գիւղաց անտի ուխտաւորքն նուիրել ջերմեռանդութեամբ յանուն Սրբոյն Գէորգեայ...»[1]:

1819 թ. նոյեմբերի 29-ին հիշատակվել են եկեղեցու հետևյալ միաբանները՝ Տեր Նիկողայոս Իզմիրով, Տեր Հովհաննես Ջառափով, Տեր Աստվածատուր Պապով, Տեր Գրիգոր Իզմիրով, Տեր Հովակիմ Տեր-Նիկողոսով[2]: Վերջինս հանգուցյալ Եփրեմ կաթողիկոսի կոնդակով պարգևատրվել էր պարանոցի ոսկեզօծ խաչով[3]:

Տեր Նիկողայոս Իզմիրովը մահացել է 1832 թ.: Այդ տարվա ապրիլի 29-ին նրա կին Խանփերին նամակ է գրել Վեհափառ կաթողիկոսին, որ ամուսինը մահանալով ոչինչ չի թողել, և օգնություն է խնդրել: Նա նշել է, որ դիմել է Թիֆլիսի հոգևոր կառավարությանը և մնացել է անպատասխան[4]:

1819 թ. ներկայացվել է նաև եկեղեցու եկամուտների և ծախսերի ցուցակը[5]:

1820 թ. նոյեմբերի 8-ին Ն. Աշտարակեցին եկեղեցու երեցփոխ Ստեփան Խարազյանին հատկացրել է 6000 ռ. եկեղեցական զարդերի և այլ իրերի գնումների համար[6]:

1822 թ. հունվարի 30-ին Ն. Աշտարակեցին եկեղեցու Գրիգոր քհյ. Տեր-Հովսեփյանից պահանջել է լրիվ ներկայացնել երեք տարվա սրբադրամի գումարը[7]:

1827 թ. փետրվարի 9-ին Ն. Աշտարակեցին դիմել է եկեղեցու քահանաներին և հայտարարել, որ Հովհաննես քհյ. Ջառափյանը

[1] ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 745, թ. 10:
[2] ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 745, թ. 11:
[3] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2641, թ. 1:
[4] ՄՄ, Կ/Դ, թղթ. 73, վավ. 26:
[5] ՄՄ, Կ/Դ, թղթ. 34, վավ. 325:
[6] ՄՄ, Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 165, վավ. 469:
[7] ՄՄ, Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 165, վավ. 577:



դադարեցված է քահանայագործելուց ու նրա ծխերի հովվությունը հանձնված է Հովակիմ քհյ. Տեր-Նիկողոսյանին[1]:

1828 թ. նոյեմբերի 29-ին Սիմեոն արք. Բզնունյանցը նամակ է ուղղել եկեղեցու խաչակիր քահանա Տեր-Նիկողոսյանին և երեցփոխին և տեղեկացրել, որ Հովհաննես քհյ. Ջառափյանը չի հնազանդվել եկեղեցական ժողովին: Միաժամանակ նա խնդրել է, որ հիշյալ քահանային չթողնել եկեղեցական դասի մեջ, մինչև արժանի կերպով չքննվի նրա վարմունքը[2]:

1829 թ. Սուրբ Նշան եկեղեցու ծախսերը կազմել է 589 ռ.: Եկեղեցին ունեցել է 663 ռ. 63 կ. հին դրամ: Այդ ժամանակ եկեղեցում ծառայել են հինգ քահանաներ, իսկ երեցփոխանը եղել է պ. Ավետիս Փիրոյանը: Վերջինիս նախաձեռնությամբ 1830 թ. եկեղեցու ներսում կատարվել է նկարազարդում, իսկ 1837 թ.՝ շինության ընդհանուր բարեկարգում:

1832 թ. հիշատակվել է եկեղեցու Տեր Հովհաննես ավ. քհյ. Ջառափյանը[3]: Նա այդ տարվա փետրվարին, Վանքի, Բեթղեհեմի, Մողնու, Կաթողիկեի, Ավետյաց և Նորաշենի հայոց եկեղեցիների ավագ քահանաների հետ միասին հայտարարություն է ուղղել Թիֆլիսի Հայոց հոգևոր կառավարությանը՝ կապված որոշ քահանաների բողոքագրի հետ, որը առնչվել է ավագ քահանաների գործունեությանը: Հարկ է նշել, որ Հովհաննես ավ. քհյ. Ջառափյանը (Ջարափով) իր տանը պահել է եկեղեցու սուրբ մասունքներից: Այդ առթիվ նշվել է, որ «...այս եկեղեցու ավագերեց Օհաննես Ջարափովն իր տանը պահում է ինչպես կենարար փայտը, նույնպես և այլ սրբոց մասունքները, որ նրա նախնիները ժառանգաբար թողել են նրան, և որը շատերին բուժում է. սրանք պաշտելի են ինչպես հայերից, նույնպես և վրացիներից, իսկ հին ժամանակները թագավորական տնից ևս պաշտված են եղել: (Այս քահանան) երբեմն փոխադրում է այն իր տնից եկեղեցի, որպեսզի քրիստոնյաները պաշտեն և համբուրեն այն, ու կրկին իր տունը վերադարձնում»[4]:

Ի դեպ, Հովհաննես Ջառափյանի ծախսերով էր կառուցվել նաև Մետեխի բերդի մեծ մուտքի դիմացի եկեղեցին. «...փոքր ժամ գմբեթավոր, հանուն սուրբ Գեորգի, որ ծածկված է փայտով և շինված

[1] ՄՄ, Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 692:
[2] ՄՄ, Կ/Դ, թղթ. 59, վավ. 621:
[3] ՀԱԱ, ֆ. 332, ց. 1, գ. 1079, թ. 1:
[4] Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 3, Երևան, 1955, էջ 267:

է Սուրբ Նշանի ավագերեց տեր Օհաննէս Զարափովի ընտանիքի (ծախքով) 1775 թ.»[1]:

1833 թ. բարեփոխվել է եկեղեցու հարավային ճակատից բացված մուտքը, որի ճակատակալ քարին փորագրվել է հայերեն և վրացերեն արձանագրություն.

*ՇԻՆԵՑԱՒ ԴՈՒՌՍ Ս[ՈՒՐ]Բ ԵԿԵՂԵՑՒՈՅ ԱՐԴԵԱՄԲ ԲԱԶՄԱՇԽԱՏ ԱՒԱԳ Ք[Ա]Հ[Ա]Ն[Ա]Ց Տ[Է]Ր ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԱ/ ՌԱՓԵԱՆԻՆ Ի ՅԻՇԱՏ[Ա]Կ ԻՒՐ ԵՒ ԿԵՆԱԿՑՈՅՆ, ԴՍՏԵՐՆ՝ ՄԷԼԻՔ ԶՈՒՐԱԲԻ ԵՒ ՈՐԴՈՑՆ. 1833:*

1834 թ. հայ կերպարվեստի նշանավոր դեմքերից Հակոբ Հովնաթանյանի ծնողների (հայրը՝ Մկրտում Հովնաթանյան) կատարած ծառայությունների դիմաց քաջարվեստ նկարչին տրվել է Սուրբ Նշան եկեղեցուն պատկանող մի հողամաս՝ տուն կառուցելու համար[2]: Ենթադրվում է, որ եկեղեցու 1830 թ. նկարազարդումները կատարել է Հակոբ Հովնաթանյանը:

1835 թ. սեպտեմբերի 4-ին եկեղեցու ավագ քահանա Հովհաննես Զառափյանը գրություն է ուղղել սինոդին, որում գանգատվել է թեմի առաջնորդ Ստեփաննոս արք. Արղությանից (առաջնորդել է 1832-1836 թթ.), որ իրեն ծեր հասակում հանգիստ չի տալիս և խնդրել է կարևորություն չտալ նրա գրագրություններին, մինչև իր բացատրություն տալը[3]: Նման գանգատ էլ նա ուղարկել է Վրաստանի հայոց հոգևոր կառավարությանը:

1837 թ. մայիսի 28-ին Վրաստանի հայոց թեմի առաջնորդ Թադևոս արքեպիսկոպոսը երեցփոխ Ավետիս Փիրոյանին հորդորել է ձեռնամուխ լինել եկեղեցու բարեկարգման աշխատանքներին՝ ռուսաց Կայսեր Տփխիս այցելելու առթիվ. «…յառաջ քան զվեհափառ գալուստ թագաւոր կայսերն հարկաւոր է ածել ի վայելուչ ձևակերպ զամենայն եկեղեցական շինուածս, զկրպակս, զտունս, զպարիսպս և ծեփել և ներկել զնոսին յարմարաւոր իմն գունով, որոց աղագաւ ի 27 ամսոյս ընկալայ թղթագրութիւն… վասն որոյ սովաւ պատուիրեմ Ձերումդ գերյարգութեան, ի 29 ամսոյս ձեռնամուխ լինել ի նորոգութիւն և ի գեղազարդութիւն ամենայն եկեղեցական պատկանելեաց ըստ հետևեալս կերպիւ եկեղեցին ներքուստ ծեփել և ներկել մարմարանման դեղով կամ այլ յարմարաւոր գունով, իսկ արտաքուստ

[1] Նոյն տեղում, էջ 268:
[2] ՄՄ, Ա. Երիցյանի արխիվ, թղթ. 148, վավ. 164:
[3] ՄՄ, Կ/Դ, թղթ. 85, վավ. 185:



բռել (բաղաքաշ) և ներկել դեղին կամ սպիտակ գունով, զնորաշէն մատուռն եղեալ յառաջոյ աւագ դռան եկեղեցւոյն ծեփել և ներկել և որքան կարելին է վաղվաղակի բառնալ զտախտակակապն (խարաչօ), և զպարիսպ եկեղեցւոյն ներքուստ և արտաքուստ ծեփել և ներկել դեղին կամ սպիտակ գունով, և ամենայն մասամբք և շինուածովք զարդարել զեկեղեցին և զեկեղեցական պատկանելիսն ի գեղեցկութիւն քաղաքիս: Յայսմ մասին կարգեմք Ձեզ յօգնականութիւն և ի գործակցութիւն զտէր Յովհաննէս աւագ քահանայն Զառափեան և զտէր Անդրէասն Տէր-Ստեփանեան, որոց և պատուիրեցաւ արիութեամբ վարել յամենայնի յօգուտ եկեղեցւոյ»[1]:

1837 թ. Է. Իոսելիանին եկեղեցու մասին գրել է. «…հոյակապ է, գմբեթավոր, հանուն սուրբ Նիկողայոսի, չորս սյան վրա կառուցված: Սրա գմբեթը կանաչ աղյուսով է ծածկված, իսկ եկեղեցին ու թևերը՝ կղմինդրով: Սրա մեջ կա երեք խորան. միջինը մեծ, հանուն սուրբ Նիկողայոսի, հյուսիսայինը՝ հանուն Անդրեաս առաքյալի, և հարավայինը՝ սուրբ Գեորգի…»[2]:

Հայտնի է, որ Սուրբ Նշան եկեղեցին ունեցել է բազմաթիվ սուրբ մասունքներ, որոնց թվում «բազմամասն պատկեր սուրբ Նիկողայոսի, հոյժ սքանչելագործ», որի մեջ ամփոփված է Անդրեաս առաքյալի ճակատը[3]:

1838 թ. նշվել է, որ Սուրբ Նշան եկեղեցին «կառուցեալ բարձրագոյն պարսպաւ հանդերձ, ի շրջակայս իւր ունի դատարկ տեղի հազար հարիւր տասն և վեց գազ գազանդարի: Մերձ զանգակատան սենեակք երկու, մինն թափուր վասն քահանայից, և երկրորդին բնակի ժամկոչն ձրի»[4]: Եկեղեցու պարսպից դուրս գտնվող եկեղեցապատկան հողերի մասին նշվել է նաև 1842 թ. մայիսին[5]:

1839 թ. դեկտեմբերի 28-ին տիրացու Գևորգ Պողոսյան Տեր-Գալստյանը խնդրագիր է ներկայացրել Վրաստանի Հայոց վիճակային կոնսիստորիային, որտեղ նշել է, որ ինքը քահանայական տոհմից է, իսկ նրա հայրը եղել է չորս աստիճանավոր ու ծառայել է Թիֆլիսի Կոզմայի եկեղեցում: Խնդրել է իրեն նշանակել Սուրբ Նշան եկեղեցում ստորին եկեղեցական պաշտոնի: Կոնսիստորիան 1840 թ. մարտի 8-ին պատվիրել է Թիֆլիսի բարեկարգչին ստուգել

[1] ՄՄ, ֆ. 49, թղթ. 148, վավ. 179:
[2] Լ. Մելիքսեթ-Բեկ, նույնը, էջ 266:
[3] Լ. Մելիքսեթ-Բեկ, նույնը, էջ 267:
[4] ՀԱԱ, ֆ. 56, ց. 6, գ. 39, թ. 61:
[5] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2615, թ. 4:

նրա հոգևորական դասից լինելը: Գործակալը պարզել է վկաներից, որ նրա հայրը՝տիրացու Պողոսը ստորին աստիճանավոր էր ստացել դեռևս վրաց Գեորգի արքայի հրովարտակով: Հետագայում 1842 թ. նոյեմբերի 27-ին կոնսիստորիան դիմում է սինոդին խնդրելով «...թոյլ տալ ընդունել զԳէորգն Տէր-Գալստեան ի թիւս ստորին եկեղեցականաց սուրբ Նշան եկեղեցւոյ, յորում գոյ պակասութիւն այնպիսի աստիճանաւորի»[1]:

1840 թ. դեկտեմբերի 16-ին սինոդը քննարկել է Վրաստանի Հայոց կոնսիստորիայի խնդրագիրը Գևորգ Տեր-Գալստյանին Սուրբ Նշան եկեղեցու դպիրների շարքը ընդունելու մասին: Խնդրագրում նշվել է, որ նա հոգևորականի՝ տիրացու Պողոսի որդին է, և Սուրբ Նշան եկեղեցին ունի ստորին եկեղեցականի պահանջ: Շուտով, դեկտեմբերի 23-ին սինոդը որոշում է բավարարել խնդրագիրը[2]: Հետագայում նա աշխատել է Թիֆլիսի կոնսիստորիայում որպես գանձապահ և քահանայագործել է Վանքի մայր եկեղեցում: Մահացել է 1896 թ. նոյեմբերի 9-ին, և նրա մարմինը ամփոփել են Վանքի մայր եկեղեցու գավթում, իր սեփական տան դիմաց[3]:

1840 թ. հունվարի 17-ին կոնսիստորիան քննել է եկեղեցու միաբան Պետրոս քհյ. Տեր- Կարապետյանի բողոքը նույն եկեղեցու մեկ այլ միաբանի՝ Անդրեաս քհյ. Տեր-Ստեփանյանի դեմ[4]: Պետրոս քահանան հայտնել է կոնսիստորիային, որ 1839 թ. դեկտեմբերի 14-ին, երբ ինքը գնացել է եկեղեցի՝ երեկոյան ժամերգության, բարեկարգիչ Ղազար քահանայի և ժամկոչ Հովհաննեսի ներկայությամբ Անդրեաս քահանան իրեն մեղադրել է չափաբերական մատյանը չներկայացնելու մեջ: Հարցը նրանում էր, որ անհետացել էր եկեղեցու մետրիքական մատյանը: Թիֆլիսի եկեղեցիների բարեկարգիչ Ղազար ավ. քհյ Դավթյանը 1841 թ. հունվարի 16-ին հայտարարություն է ուղղել կոնսիստորիային, որտեղ նշել է, որ այդ մասին իրեն տեղեկացրել են եկեղեցու միաբանները: Կոնսիստորիան կարգադրել է բարեկարգչին նոր ժապավինյալ մատյան անձամբ տանել եկեղեցի, հանձնել ավագ քահանային և օրինավոր կարգով կատարել քննություն մատյանների կորստյան մասին և արդյունքը ներկայացնել Սուրբ Էջմիածնի սինոդին[5]:

1 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 1188, թ. 5:

2 ՀԱԱ, ֆ. 56, ց. 5, թղթ. 12, վավ. 836, թ. 1459 շրջ., բնագիր, ձեռագիր:

3 «Նոր Դար», 1896, 19 նոյեմբերի, Հ^դ 204:

4 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 678, Տես նաև ՀԱԱ, ֆ. 56, ց. 5, թղթ. 7, վավ. 83:

5 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 877, թ. 1:



1841 թ. եկեղեցին ունեցել է 228 ծուխ: Նշվել են եկեղեցու հետևյալ քահանաները և նրանց որդիները[1]. Եսայի ավ. քհյ. Ջիալյան՝ որդին Հովհաննես - ծն. 1807 թ., Գրիգոր քհյ. Իզմիրյանը՝ որդիները Դավիթ – ծն. 1812 թ., Հովհաննես – ծն. 1821 թ., Միքայել – ծն. 1830 թ., Գաբրիել – ծն. 1834 թ., Անդրեաս քհյ. Ամբարդումյանը (Համբարձումյան)՝ որդին Ստեփաննոս – ծն. 1833 թ., Պետրոս քհյ. Տեր-Կարապետյան, որդիները՝ Նիկողայոս – ծն. 1835 թ., Հովհաննես – ծն. 1838 թ., Հովհաննես քհյ. Տեր-Նիկողոսյան, որդին՝ Հովակիմ – ծն. 1833 թ., հանգուցյալ Հովհաննես ավ. քհյ. Ջառափյանը՝ որդիները Գևորգ – ծն. 1803 թ., Սահակ – ծն. 1816 թ., հանգուցյալ Սողոմոն քահանա, որդիները՝ Հովհաննես – ծն. 1810 թ., Անտոն – ծն. 1816 թ., Գևորգ – ծն. 1819 թ.:

Վրաստանի և Իմերեթի հայոց վիճակային կոնսիստորիայի գործերում պահպանվել են հոգևորականների ծառայության ցուցակները, որոնցից պարզվում է, որ բարձրագույն հրովարտակի հիման վրա բազմաթիվ քահանաներ պարգևատրվել են 1812 թ. Հայրենական պատերազմի հաղթանակի խաչերով: Այդ մի շարք քահանաների թվում, 1842 թ. պարգևատրվել է նաև Սուրբ Նշան եկեղեցու 64-ամյա ավագ քահանա Եսայի Մկրտումյան Ջիալյանը[2]:

Սուրբ Նշան եկեղեցին եկամուտներ է ունեցել նաև եկեղեցու սեփականությունը համարվող ճորտ բնակիչներից: 1843 թ. ճորտ բնակիչներից ստացված եկեղեցու եկամուտը կազմել է 210 ռ.:

1843 թ. հիշատակվում են եկեղեցու հետևյալ քահանաները. Հովհաննես քհյ. Տեր-Նիկողոսյան, Պետրոս քհյ. Տեր-Կարապետյան և Հովհաննես Տեր-Մխիթարյան[3]: Նույն թվականի հունիսին քաղաքի հայոց եկեղեցիների լուսարարների վրա դրվել է պարտավորություն՝ պահպանել ամեն տեսակ մաքրություն (պատկերների, մոմակալների, վարագույրների և այլ եկեղեցական անոթների), որի համար եկեղեցուց ստորագրել է Հովհաննես Տեր-Մխիթարյանը:

1849 թ. Հովհաննես քհյ. Տեր-Հովակիմյան Տեր-Նիկողոսյանը Սուրբ Նշան եկեղեցուց, որի համար ձեռնադրված է եղել, տեղափոխվել է Սանհոր գյուղ, որտեղ հովվել է երեք ամիս: Այնուհետև նրան տեղափոխել են Քարափի Սուրբ Գևորգ եկեղեցի, որտեղից

1 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 48:

2 1812 թ. Հայրենական պատերազմին հայերի մասնակցությանը վերաբերող փաստաթղթեր, «Էջմիածին», սեպտեմբեր-հոկտեմբեր, 1947, էջ 32:

3 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 66, մաս 1, թ. 50:

էլ Շամքորեցոց Սուրբ Աստվածածին եկեղեցին[1]: Սակայն 1850 թ. օգոստոսի 18-ին քահանան «յորդառատ արտասուօք պաղատախառն» խնդրագրով դիմել է Սուրբ Էջմիածնի սինոդին, որպեսզի իրեն նորից փոխադրեն Սուրբ Նշան եկեղեցին: Նա խնդրագրում գրել է, որ այդ եկեղեցում է երկար տարիներ ծառայել իր հայրը՝ հանգուցյալ Հովակիմ քհյ. Տեր-Նիկողոսյանը[2]: Խնդրագրին սինոդը պատասխանել է, որ իրավասու չեն ոչինչ կատարելու, քանի որ Հովակիմ քհյ. Տեր-Նիկողոսյանի քահանայագործության արգելումը հրամայված է անձամբ Վեհափառ կաթողիկոսի կողմից, և միայն վերջինս կարող է այդ հարցին լուծում տալ:

1850 թ. նոյեմբերի 29-ին Թիֆլիսի եկեղեցիների բարեկարգիչ Ղազար ավ. քհյ. Դավթյանի միջոցով Վրաստանի Հայոց կոնսիստորիան Սուրբ Նշան եկեղեցուց ստացել է 1849 թ. գոյացած 4 ռ. 10 կ. գանձանակադրամը հանուն Հաղբատի վանքի և 6 ռ. 40 կ. արծաթադրամ հանուն Սուրբ Էջմիածնի: Գումարը հանձնել է եկեղեցու ժամօրհնող Իսահակ քհյ. Ջիալյանը[3]:

1851 թ. նույն Ղազար ավ. քհյ. Դավթյանը ներկայացրել է եկեղեցու քահանաների համառոտ ցուցակը[4]. ժամօրհնող Իսահակ քհյ. Ջիալյան, Անդրեաս քհյ. Համբարձումյան, Պետրոս քհյ. Տեր-Կարապետյան, Գրիգոր քհյ. Իզմիրյան: Նշվել է նաև, որ եկեղեցուն են պատկանել 2 սենյակ և մի դահլիճ եկեղեցու գավթում[5]:

1854 թ. փետրվարի 25-ին եկեղեցիների բարեկարգիչը ներկայացրել է, որ 1853 թ. եկեղեցու ծխամատյանում գրանցվել են՝ 31 արական և 24 իգական սեռի ծնվածներ, 7 ամուսնություն և 13 արական և 5 իգական սեռի մահացածներ[6]:

1856 թ. սեպտեմբերի 20-ին Հարություն քհյ. Նախշքարյան Տեր-Հարությունյանը նշանակվել է Սուրբ Նշան եկեղեցու միաբան[7]: Նա մինչ այդ, 1847 թ. նոյեմբերի 23-ին Ներսես Աշտարակեցու հրամանագրով ձեռնադրվել էր Թելավի Զվելգալավանի Սուրբ Գևորգ եկեղեցու միաբան, ինչպես նաև գավառական Արքունի ուսումնարանում հայոց լեզվի և կրոնի ուսուցիչ:

[1] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 3034, թ. 18:

[2] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2641, թ. 1:

[3] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3467, թ. 42-43:

[4] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3821, մաս 2, թ. 197:

[5] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3821, մաս 1, թ. 82:

[6] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2743, թ. 140:

[7] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 3034, թ. 24:



Նույն տարում բարեկարգիչ Ղազար ավ. քահանան ներկայացրել է, որ եկեղեցին ունի գավթում՝ 3 տուն, մայր գումարը կազմել է 5.880 ռ. 57 ½ կոպ. արծաթով: Այդ գումարից 5.000 ռ. սեպտեմբերի 6-ին տրվել է Արքունի գանձարան[8]:

1857 թ. հուլիսի 3-ին եկեղեցու միաբաններ Պետրոս քհյ. Տեր-Կարապետյանը, Հովհաննես քհյ. Տեր-Հովակիմյանը և Հարություն քհյ. Նախշքարյան Տեր-Հարությունյանը խնդրագրով դիմել են Կայսր Ալեքսանդր Նիկոլաեվիչին: Նրանք խնդրագրում բողոքել են, միաբանակից Անդրեաս քհյ. Ամբարդումյանից և գրել որ ծխականներին լարում է իրենց դեմ, «կարկառէ զձեռն իւր շարունակ մեզ ի զրկանս՝ խառնելով ի փարախ հօտին իւրոյ զմեզապատկան ծուխս մեր և զարդիւնս յափշտակելով նոցին, որով և հատանէ խսպառ զօրական սնունդ գերդաստանաց մերոյ հեքաց»[9]: Կայսրից խնդրել են սինոդի միջնորդությունը այդ հարցը լուծելու և իրենց հասանելի արդյունքները Անդրեաս քահանայից ստանալու համար:

1858 թ. հիշատակվում են եկեղեցու հետևյալ հոգևորականները[10]. Անդրեաս քհյ. Ամբարդումյան, Պետրոս քհյ. Տեր-Կարապետյան, Հովհաննես քհյ. Տեր-Հովակիմյան և Հարություն քհյ. Նախշքարյան:

1858 թ. մայիսի 8-ին վախճանվել է Ավետիք Փիրոյանը: Նրա մարմինը ամփոփվել է եկեղեցու հյուսիսային որմին կից: Նա դեռևս 1820 թ. ընտրվել էր Սուրբ Նշան եկեղեցու երեցփոխ: Նրա մասին նշված է, որ «Էս պաշտօն մտնելու ժամանակն եկեղեցին ոչինչ գումար չունէր, բայց նա իւր հաւատարիմ ծառայութեամբն բազմացրեց գումարն եկեղեցւոյ, կանանց դասն նոր ի նորոյ հիմքից շինեց, եկեղեցին վերանորոգեց, և վերջապէս էս պաշտօնս կատարելով 28 տարի մեծ արդարութեամբ և հաւատարմութեամբ թողեց եկեղեցւոյ համար հինգ հազար մանէթ մայր գումար, և եկեղեցին զարդարելու համար իւր յիշատակ մինչև 600 մանէթ ընծայեց»[11]:

Ա. Փիրոյանի մահարձանին կից, եկեղեցու հյուսիսային որմի մեջ ագուցված մարմարե սալիկին փորագրված է 28 տող արձանագրություն.

Առ դու ընդ քև տապան գերութեան
Զմարմին անշունչ առն պատուական,
Աղայ Աւէտիքի ըստ հօր Մովսիսեան,

[8] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3828, թ. 167:

[9] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 3034, թ. 14-15:

[10] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3823, թ. 67:

[11] «Մեղու Հայաստանի», 1859, 13 հունիսի, Հմր 24:

Իսկ ըստ տոհմանուան կոչեալ Փիրոյեան.
Եկաց սա յերկրի գործովք բարութեան,
Ի մանկուց տհոց ցօր իւր ծերութեան,
Որբոց հայրն էր սա, նեղելոց պաշտպան,
Աղքատաց օգնել էր սորա միշտ ջան,
Քաղաքացի էր՝ յառ և տուրս արդար,
Իւրոց, օտարաց յաւէրժ բարերար.
Զամս եռեսուն զսոյն զայս տաճար
Զարդարեալ հասոյց ի փառաց կատար,
Էր սա անժառանգ, բայց բազմաժառանգ.
Մանկունք դպրոցի են սորա ժառանգ.
Զարդիւնս կրպակաց և իւրոց մեծ տան
Կտակեալ նոցա մշտնջենական,
Ծանօթք, անծանօթք ընթերցող բանիս,
Ուսարուք և դուք գործել զբարիս.
Մաղթեցէք զտէր ջերմեռանդ սրտիւ
Տալ հոգւոյ սորա զանճրեկն զտիւ,
Վախճանեալ յ8 մայիսի
1858 ամի, ի հասակի 64 ամաց,
Համեստ գործովք առն պատուական՝
Առ նմին ննջէ իւր կին Քեթևան.
Զամս քառասուն կացեալ միաբան՝
Ի սոյն իսկ ամի թաղի յայս տապան,
Վախճանեալ ի 10 սեպ.
1858 ամի, ի հասակի 55 ամաց[1]:

Ավետիք Փիրոյանի մահից հետո, ամեն տարի ապրիլի 7-ին՝ Ավետյաց տոնի օրը, եկեղեցում կատարվել է նրա հիշատակին նվիրված հոգեհանգիստ:

1858 թ. հունիսի 3-ից մինչև 1866 թ. հունվարի 12-ը եկեղեցու երեցփոխն է եղել Սողոմոն Շոլկով-Եզյանցը: 1866 թ. փետրվարի 28-ին եկեղեցու ծխականները խնդրագրով դիմել են Վրաստանի Հայոց կոնսիստորիային և առաջարկել երեցփոխի իննամյա հավատարիմ և արդյունավետ ծառայության համար, միջնորդել նրան կայսերական ոսկե մեդալով պարգևատրելու համար: Նշվել է նաև, որ Սողոմոն Եզյանցը 1850 թ. օգոստոսի 14-ին քաղաքում աղբյուրներ կառուցելու համար ստացել էր ոսկե մեդալ՝ Սուրբ Աննայի ժապավենով, և մեկ ուրիշ մեդալ՝ 1854-1855 թթ. ռուս-թուրքական պա-

[1] П. Мурадян, Армянская эпиграфика Грузии. Тбилиси, Ереван, 1988, стр. 72:



տերազմին մասնակցելու համար: Նրա պաշտոնավարման տարիներին եկեղեցական արդյունքը միջին չափով կազմել էր 300-400 ռ. և 775 ռ. արժողության ոսկեղեն և արծաթեղեն զարդերով, ինչպես նաև զգեստներով զարդարել էր եկեղեցին: Նրան պարգևատրելու համար միջնորդել են Վրաստանի Հայոց կոնսիստորիան և Սուրբ Էջմիածնի սինոդը, սակայն Կովկասի Փոխարքայի գրասենյակը 1868 թ. դեկտեմբերի 18-ին գրությամբ մերժել է Սողոմոն Եզյանցին պարգևատրելու խնդրանքը[1]:

1860 թ. նոյեմբերի 26-ին Վրաստանի Հայոց կոնսիստորիան հայտարարություն է հղել Սուրբ Էջմիածնի սինոդին. «Ի կոնսիստորիայիս լուեալ զհրաման Լուսաւորչեան Հայոց սինօդիդ սրբոյ Էջմիածնի ի 15-ն հոկտ. ընկալեալ յԱտենիս ի 22-ն նոյն ամսոյ ընդ № 1912, որով հրամայէ սմին ի ժամանել աստ նորընծայ Աբրահամ քահանայի Զառափեանց կարգել զնա ծխական քահանայ ի Ս[ուր]բ Նշան եկեղեցւոջ քաղաքիս: Եւ զտեղեկութիւնս ի գործոց, նախ՝ Հոգևոր Կառավարութիւն Հայոց Աղէքսանդրօպօլու գրութեամբ յ8-ն ամսոյս 1064, ծանուցեալ էր Ատենիս զքառասնօրեայ տքնութիւնէ յիշեալ նորընծային ի վանս Ղբչաղու, ընդ նմին և առաքեալ էր զնա ինքն յաղագս առնելոյ զտնօրէնութիւն վասն նորա ըստ հրամանի Լուսաւորչեան սինօդիդ Էջմիածնի: Կոնսիստօրիայս ի 18-ն ամսոյս եզրակացոյց, հրամանաւ ի նոյն թիւ № 2042, պատուէր իւր բարեկարգչին Թիֆլիզու թոյլատրել նմա մատուցանել զառաջին զփրկարար պատարագ ի Ս[ուր]բ Նշան եկեղեցւոջ: Եւ երկրորդ՝ Կարապետ քահանայն Նազարեան, որ ժամանակաւորապէս կարգեալն էր ի հովուութիւն ծխոց աքսորեալ Յովհաննէս քահանայի Յովակիմեան յեկեղեցւոջ Սրբոյ Նշանի՝ ըստ օրագրութեան Ատենիս ի 16 ամսոյս, հիմնեցելոյ ի վերա Կոնդակի Վեհափառ Կաթուղիկոսի ամենայն Հայոց՝ փոխադրեցաւ ի Վանաց Մայր եկեղեցին, ի վերա ծխոց հանգուցեալ Մարկոս քահանայի Սարգսեան, ուստի և ըստ զօրութեան նոյն օրագրութեան հրամանագրեցաւ բարեկարգչին Թիֆլիզու ի 21-ն ամսոյս № 2061, զի զծուխս յիշեալ աքսորեալ Յովհաննէս քահանայի յանձնեսցէ ի ժամանակաւոր հովուութեան միաբանակցի նորա Պետրոս քահանայի այնուզի զամենայն արդիւնս յառաջեկեալս, ի հովուութիւնէ ժողովրդոցն և ի ժամուցաց՝ լիովին հասուսցէ ի կոնսիստօրիայս ճիշտ ցուցակաւ՝ առ ի զմասն յայնց արդեանց տալ ի սնունդ գերդաստանի նորա և զմի մասն ի բաց առնուլ վասն ծախուցն՝ արարելոց ի վիճակային արդեանց յեր-

[1] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 5063:

կիցս ուղևորելն զքահանայն Տէր-Յովակիմեանց յաքսորս ի վանս Թարգմանչաց: *Կարգաւորեցին*.- Ի կատարումն հրամանի Լուսաւորչեան սինօդիդ Սրբոյ Էջմիածնի զնորընծայ Աբրահամ քահանայն Ջառափեանց կարգել ծխական քահանայ ի Ս[ուր]բ Նշան եկեղեցւոջ, տալով նմա ի հովուութիւն զժողովուրդս աքսորեալ Տէր Յովակիմեանց քահանայի, ըստ այսմ և հրամանագրել բարեկարգչին Թիֆլիզու ի կատարումն այսր տնօրէնութիւն Առենիս, և ընդ նմին պատուիրել նմա զի պարտաւորեսցէ զնորընծայ քահանայն Ջառափեանց յօրէ ընդունելոյն ի հովուութիւն զայն ծուխս՝ զբոլոր եկամուտ, արդիւնս յայնցանէ նաև զժամոցս՝ առանձին ցուցակաւ մատուսցէ Առենիս իւրաքանչիւր ամսեան, յորոց յերից մասանց մի մասն տացի ինքեան, մի մասն՝ ի սնունդ գերդաստանի Տէր-Յովակիմեանց քահանայի և մի մասն՝ ի հաշիւ ծախուց կոնսիստօրիայիս՝ ցլրումն վերոյգրեալ երկիցս արարեալ ծախուցն աքսորման նորա: Իսկ եթէ Պետրոս քահանայն յաւուրս յայսոսիկ ստացեալ ինչ իցէ արդիւնս ի հովուութիւնէ նոյն ծխոցն՝ պատուիրել նմա մատուցանել զայն Առենիս ի տնօրէնութիւն, և զայսմանէ ամենախոնարհաբար յայտ առնել լուսաւորչեան սինօդիդ Սրբոյ Էջմիածնի ի տեղեկութիւն ի կատարումն ներկայ հրամանի դորին»[1]: Հայտարարությունը ստորագրել են կոնսիստորիայի անդամներ Իսահակ ավ. քհյ. Սահառունին, Մովսես ավ. քհյ. Սայաթյանը, Հարություն քհյ. Սուզանաճյանը և ատենադպիր Ներսես Հակոբյանը: Սակայն 1861 թ. ապրիլի 19-ի կոնսիստորիայի հայտարարությունից տեղեկանում ենք, որ աքսորյալ Հովհաննես քհյ. Տեր-Հովակիմյանը, ապաշխարելով Թարգմանչաց եկեղեցում, վերադարձել է, և նրան, ըստ սինոդի հրամանի, հանձնվել է իր նախկին ծխերի հովվությունը: Կոնսիստորիան գրությամբ խնդրում է սինոդից տնօրինել նորընծա Աբրահամ քհյ. Ջառափյանի հարցը, որը մնացել էր առանց ծխերի:

1861 թ. փետրվարի 4-ին Սուրբ Նշան եկեղեցու ծխական աստիճանավորներն ու քաղաքացիները (ստորագրել են 28 ծխական) ամենախոնարհ խնդրով դիմել են Մատթևոս կաթողիկոսին. «Աւագ սարկաւագ Յարութիւնն Տէր-Ղուկասեանց պաշտօնեայն ս[ր]բ[ո]յ եկեղեցւոյս մերոյ իւրով գովանի վարուք և ջերմաջերմ ա[ստուա]ծապաշտութեամբ վաղուրեմն դարձոյց զնորբազննին ուշադրութիւնս մեր զիւրեաւ, որ իւրովն արժանաւորութեամբ գոգցես հարկադրեալ զմեզ ի խղճէ խնդրել ամենախոնարհաբար ի Վեհափառութիւնէ Ձերմէ՝ հրամայել փութանակի ընդ ձեռն որոյ արժանն է, ի ցանկու-

[1] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 3364, թ. 47, բնագիր, ձեռագիր:



թիւն սրտի մեր, ամբառնալ զնա յաստիճան քահանայութեան, որպիսւոյն կարօտի զգալի իմն միջոցաւ մերս եկեղեցի, իսկ բաց ի վերտողեալ արժանաւորութեանց վկայիմք այսու, թէ՝ նա աւագ սարկաւագ Տէր-Ղուկասեանց ունի կրթեալ զինքն անդուստ ի մանկութիւնէ ի մարդավայելն ընթացս քրիստոնէութեամբ համաձայն քահանայական կոչման, ըստ սմին և պատրաստեալ է զանձն իւր բաւականաչափ ուսմամբ և որ առաւել հարկաւորն է այնմեջ աստիճանի, սրբութեան ի ցանկութիւն վախճանական սրտի մեր աղաչեմք դարձեալ զՁերդ Սրբազնակատար Օծութիւն, բարեհաճել պսակել զբարոյական բաղձանս որդեակացս Ձերոյին ա[ստուա]ծընտիր քահանայութեամբ, որով և եմք և եղիցուք միշտ օրհնաբան խնկելի կենաց Ձերոց՝ պահել ամենազօրին Ա[ստուծո]յ զնոյն ի փառս ամենասուրբ Երրորդութեան և ի պատիւ լրութեան Ազգի Հայոց: Վեհափառ տէր, Ձերոյին Սրբազնակատար Օծութեան մնամք ամենախոնարհ ծառայք»[1]:

Այդ նամակը փետրվարի 25-ին Վեհափառ կաթողիկոսը հանձնել է սինոդի արժանավոր տնօրինությանը: 1864 թ. դեկտեմբերի 18-ին կոնսիստորիան հայտարարությամբ դիմել է Էջմիածնի սինոդին. «Առ յառաջադրութեան կառավարչական մասին սինօդիդ սրբոյ Էջմիածնի յանուն Տէր Ատենապետի սորին ի 28-ն նոյեմբերի անցեալոյ № 1855 և ի նորին Բարձր սրբազնութինէն տուեալն ի տնօրէնութիւն սորին՝ վիճակային կոնսիստօրիայս պատիւ ունի ամենախոնարհաբար յայտնել դմին, թէ սարկաւագ Յարութիւն Տէր-Ղուկասեանց արդէն ի 12-ն մարտի 1861 ամի ձեռնադրեալ է ի քահանայ ի ձեռն Սարգիս արքեպիսկոպոսի Ջալալեանց. և այժմ կարգեալ գտանի ի միաբանութեան Կաթուղիկէ եկեղեցւոյ քաղաքիս: Ատենապետ կոնսիստօրի Մակար արքեպիսկոպոս»[2]:

Նույն թվականին Վարվառե Ռոտինյանը ամուսնու՝ Գաբրիել Ամիրաղյանի հիշատակին, եկեղեցուն կից, որտեղ ամփոփված էր հանգուցյալը, կառուցել է տապանատուն, որի առիթով հարավային մուտքի կողքին ագուցված սալիկին արձանագրված է.

*«Կանգնեաց զայս մատուռ / Թիֆլիզոյ քաղաքաց/ուհի Վառվառէ յազգէ / Ռօտինեանց՝ ի յիշատակ ամուսնոյ իւրոյ Գաբրի/էլի Գէորգեան Ամիրա/ղեանց առ հանգուցե/լոյ, թուին 1861, նոյեմբ. 1»:*

1862 թ. նոյեմբերի 30-ին կոնսիստորիան սինոդին ուղղած հայտարարությամբ նշել է, որ սույն թվականի հոկտեմբերի 8-ից Աբրա-

[1] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 4089, թ. 1-2, բնագիր, ձեռագիր:

[2] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 4089, թ. 9, բնագիր, ձեռագիր:

համ քհյ. Ջառափյանը կարգվել է Հավլաբարի Սուրբ Մինաս եկեղեցու միաբան[1]: Ստորագրել են կոնսիստորիայի անդամներ Գևորգ վրդ. Մարտիրոսյանը, Սահակ ավ. քհյ. Սահառունին և Մկրտիչ քհյ. Տեր-Գրիգորյանը:

1868 թ. նորոգվել է եկեղեցու խաչկալը (300 ռ.), ներքին ծավալները սպիտակեցվել են (500 ռ.) և այլն: Ընդհանուր ծախսվել է 1020 ռ.: Ստորև ներկայացվում է այդ մասին վկայող վավերագիրը:

1868 թ. հունվարի 17-ին թեմի առաջնորդ Մակար արք. Թեղուտցին, կոնսիստորիայի անդամներ Իսահակ ավ. քհյ. Սահառունին, Մովսես ավ. քհյ. Սայաթյանը և Մկրտիչ ավ. քհյ. Տեր-Գրիգորյանը կոնսիստորիայի անունից հայտարարությամբ դիմել են Սուրբ Էջմիածնի սինոդին. «Ի կոնսիստորիս լուան զյայտարարութիւն բարեկարգչին յեկեղեցեաց Թիֆլիզոյ ի 26-ն նոյեմբերի անցելոյ № 69, յորում գրէ, թէ զհրաման վիճակային Ատենիդ ի 29-ն օգոստոսի ամսեան ներկայ տարւոյս № 1831, յայտնեցի երեցփոխանի, ժողովրդականաց և ժամաւորաց Ս[ուր]բ Նշան եկեղեցւոյ Թիֆլիզոյ, ուր ըստ տնօրէնութեան Ատենիդ վասն վերանորոգութեան յիշեալ եկեղեցւոյ, նոքա ընդ ամենի ցուցին զհամաձայնութիւն, առ որ կազմեցին զնախահաշիւ առնելի ծախուց կարևոր վերանորոգութեանց, որ առնէ ընդ ամէնն մէկ հազար քսան ռուբլի արծաթի, յանձնելով ինձ զյիշեալ սակարկեալ ընդ վարպետաց նախահաշիւն, խնդրեմ զիմ միջնորդութեամբ առ ի գրել ի յայսկոյս Կովկասու պրիկազն, վասն յանձնելոյ երեցփոխանի յիշեալ եկեղեցւոյն զյիշեալ քանակութեամբ դրամոցն՝ առ ի նորոգել նոքօք ի ներքուստ զս[ուր]բ Նշան եկեղեցին, զորպիսի նախահաշիւ իսկութեամբ ընդ այսմ առաջի առնիմ վիճակային Ատենիդ ի պարտուպատշաճ տնօրէնութիւն դորին: Յառաջի արարեալ նախահաշուի գրի այսպէս. «Ի հետեւումն հրամանի վիճակային կոնսիստօրիայի Հայոց Վրաստանի, ի 29 անցեալ օգոստոսի, № 1831, որ յայտնեցաւ մեզ ի ձեռն բարեկարգչին եկեղեցեաց քաղաքիս արժանապատիւ Յովհաննէս աւագ քահանայի Արարատեանց անցեալ սեպտեմբեր ամսոյ 24-ին մեք՝ ժողովրդականք և ժամաւորքս Ս[ուր]բ Նշան եկեղեցւոյ՝ սակարկելով ընդ հմուտ վարպետաց զննեցաք, զի սպիտակացուցանելն զեկեղեցին պահանջէ ծախք հինգ հարիւր ռուբլի (500ռ.), իսկ որքանութիւն ծախուց, որք բացատրին յետ 2-րդ, 4-րդ և 5-րդ յօդ.! նախահաշւոյն, արդէն յայտնի են, այսինքն՝ վաթսուն ռուբլի (60ռ.) վասն նորոգութեան խաչկալի, երեք հարիւր ռուբլի (300ռ.), վասն վարաղ կպցնե-

[1] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 3364, թ. 51:



լոյն խաչկալի վերա և վարպետաց վարձի, հարիւր ռուբլի (100 ռ.) վասն շինելոյ խալաչայ և վասն կարկատանաց գաջով՝ վաթսուն ռուբլի (60 ռ.): Ընդ ամէնն առնէ հազար քսան ռուբլի (1020 ռ). այսքան գումարն բաւական համարիմք վասն նորոգութեան և կարկատանաց եկեղեցւոյս: Եւ զտեղեկութիւնս ի գործոց, յորոց երևի, նախ՝ ի պրիկազին հասարակաց խնամատարութեան յայսկոյս Կովկասու գտանէին եկեղեցական դրամքն ի 1854 ամէ հետէ գումարաւ 5000 ռ. հանդերձ տոկոսիօք ըստ բիլէտին նորին տուեցելոյ յանուն Ս[ուր]բ Նշանի եկեղեցւոյն Թիֆլիզոյ ի 6-ն սեպտեմբերի 1854 ամի № 1118, ց13-ն յուլիսի 1860 ամի, բայց յայնժամ պրիկազն այն համաձայն գրութեան սորին՝ ընդ գրութեան իւրում ի 14-ն նոյն յուլիսի № 3065 առաքեալ էր յԱտենիս զտոկոսիս այնր գումարի հաշուեր ցայն վայր և զի բաց բարձեալս ի գլուխ դրամոց բոլորն զ2026 ռ. 88 կ., առնելով ի վերա բիլէթին զպատշաճեալ մակագրութիւն, և յայնմ ժամանակէ հետէ մնան ի նմին 4000 ռ. հանդերձ տոկոսիօքն: Եւ երկրորդ՝ ի մատուցեալ ընդ յայտարարութեան բարեկարգչին եկեղեցեաց Թիֆլիզոյ ի 29 յունիսի այսր 1867 ամի № 42 նախահաշուի ծախուց վերանորոգութեան Ս[ուր]բ Նշան եկեղեցւոյ Հայոց Թիֆլիզոյ կոնսիստորիայս գրեալ զինչ ինչ աւելորդ մասունս վերադարձուցմամբ նորին ի 29 օգոստոսի տարւոյս № 1831, ի ձեռն բարեկարգչին Թիֆլիզոյ առաջադրեցաւ ժողովրդականաց այնր եկեղեցւոյ ի տեղի այնոցիք մասանցն սպիտակացուցանել ի ներքուստ զբոլոր եկեղեցին, և զորքանութիւնէ ծախուց նորին և այլոց նորոգութեանց՝ յայտնել Ատենիս: ***Կարգադրեցին***. նախ՝ ըստ բանաւոր պատուիրանի Վեհափառ Կաթուղիկոսի ամենայն Հայոց Տեառն Գէորգայ արարելոյ ամին ի լինելն նորին սրբութեան ի Տփխիս թոյլատրել երեցփոխանին Ս[ուր]բ Նշան եկեղեցւոյ քաղաքիս վերանորոգել զկարևոր մասունս եկեղեցւոյն բացատրեալս ի նախահաշուի անդ եկեղեցական դրամօք, ծախելով ո՛չ աւելի, քան զմի հազար քսան ռուբլիս արծաթոյ, գործակցութեամբ քանի մի բանագէտ անձանց ի ժողովրդոցն և զարարեալ ծախս մի առ մի մուծանել ի պատշաճեալ մատենին ստորագրութեամբ գործակցացն: Երկրորդ՝ գրութեամբ խնդրել ի պրիկազէն յայսկոյս Կովկասու, զի ի վերոյգրեալ չորս հազար ռուբլի մայր գումարէն և ի տոկոսեաց նոցին հաշուելոց զայս վայր ի բաց հանեալ զմի հազար ռուբլիս արծաթոյ յանձնեսցէ երեցփոխանին Ս[ուր]բ Նշան եկեղեցւոյ Նադվօրնի սովետնիկ Սողոմոնի Վարձելեանց յետ ներկայացուցանելոյ նորա նմին զիսկական բիլէթն, որ ի 6-ն սեպտեմբերի 1854 ամի № 1118 և զհետևանացն ծանուցանել

ամին, թէ յայնցանէ որքան եկեղեցական դրամքն մնան և տոկոսիս նոցին յոր ժամանակաց հետէ պարտէ հաշուել յապագայ պարզութիւն հաշուոց: Երրորդ՝ հրամանագրել յիշեալ երեցփոխանին անձամբ առաջի առնել պրիկազին զգտանեցեալ առ ինքեան բիլէթն № 1118, և յետ ստանալոյ զայն մի հազար ռուբլիս արծաթոյ ի գործ դնել զայնս ի վերա եկեղեցւոյն՝ համաձայն վերոյգրեալ պատուիրանի սորին և զկատարմանէն յայտնել Ատենիս:Եւ չորրորդ՝ զվերոյգրելոցն ամենից ամենախոնարհաբար յայտնել սինօդիդ սրբոյ Էջմիածնի ի տեղեկութիւն»[1]:

1869 թ. ապրիլի 7-ին՝ Ավետյաց տոնի օրը, եկեղեցում հավաքվել են Ներսիսյան ազգային հոգևոր դպրոցի հոգաբարձուները, ուսուցիչները և որդեգիրները: Ներկա են եղել նաև թեմի առաջնորդ Մակար արք. Թեղուտցին և Թիֆլիսի բոլոր հայկական եկեղեցիների միաբանները: Սուրբ պատարագը ավարտելուց հետո արժանահիշատակ Ավետիք Փիրոյանի գերեզմանի վրա կատարվել է հոգեհանգստյան կարգ մեծ հանդեսով և փառահեղությամբ, որը մեծ տպավորություն է գործել ներկա բազմության վրա: Նշված է. «Յիշատակ արդարոց օրհնութեամբ եղիցի: Եւ յիրավի արդարանում են այս խօսքերը արժանայիշատակ Փիրոյեանցի նման մարդոց վերայ: Վերոյիշեալ հանդիսի օրը ով էր, որ մի անգամ չյիշէր հանգուցելոյ անունը և չօրհնէր նորա յիշատակը: Նա ճշտութեամբ հասկացել էր մարդուս նշանակութիւնը և այնպէս է վարուել, ինչպէս կվայելէր մարդուն, որ նոր ընկերական արարած լինելով ունի և պարտականութիւններ մանաւանդ դէպի այն հասարակութիւնը, որի մէջ ապրել է, և այս պարտքը երջանկայիշատակ Փիրոյեանցը կատարելապէս ճանաչել է և վճարել, կտակելով Ներսիսեան ազգային հոգևոր դպրոցին այնպրսի մի կայք, որ այսօր բերում է դպրոցին 5000 ռուբլի արծ. տարեկան արդիւնք»[2]:

1869 թ. ապրիլի 26-ին Վրաստանի Հայոց կոնսիստորիան լսել է եկեղեցու միաբան Հարություն քհյ. Նաղշքարյան Տեր-Հարությունյանի 1868 թ. նոյեմբերի 13-ի խնդիրը, որում նա խնդրել է իր զավակներ Եղիսաբեթին, Նատալիային և Արշակին տալ ծննդյան և մկրտության մետրիքական վկայական, իսկ մյուս որդուն՝ Ալեքսանդրին, արձակել հոգևորական կոչումից: Կոնսիստորիան կարգադրել է քահանայի զավակներին սահմանված կարգով տալ վկայականներ, իսկ Ալեքսանդրին հոգևոր կոչումից ազատելու նպատակով

[1] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 5061, բնագիր, ձեռագիր:

[2] «Մեղու Հայաստանի», 1869, Հվր 14:



դիմել Սուրբ Էջմիածնի սինոդին՝ այդ հարցը վճռելու համար: Նշվել է, որ Հարություն քահանան ունեցել է չորս որդի՝ Սարգիս, Տիգրան, Ալեքսանդր և Արշակ, որոնցից Տիգրանն արձակվել էր հոգևորականությունից, իսկ մյուս որդիները տակավին մնում էին հոգևորականության մեջ: Նշվել է նաև, որ Ալեքսանդրը ծնվել էր հոր քահանայության ժամանակ[1]:

1872 թ. սեպտեմբերին Ներսիսյան դպրոցի նոր հոգաբարձուներ ընտրելու համար Սուրբ Նշան եկեղեցու կողմից պատգամավորներ են ընտրվել «նադվորնի սովետնիկ» Ալեքսանդր Ղազարյան Թաջիրյանը, «կոլեժսկի սեկրետար» Հակոբ Գևորգյան Ավթանդիլյանը և Գրիգոր Հարությունյան Ղանդուրալյանը[2]:

1873 թ. ապրիլի 22-ին Ներսիսյան դպրոցի հոգաբարձությունը, պարտավորություն համարելով հարգել հանգուցյալ Ավետիք Մովսիսյան Փիրոյանի հիշատակը, կարգադրել էր հոգեհանգիստ կատարել նրա գերեզմանի վրա, Սուրբ Նշան եկեղեցում: Արժանահիշատակ Փիրոյանը, իր կենդանության ժամանակ, կտակով Ներսիսյան դպրոցին էր նվիրել մի նշանավոր կալվածք, որի արդյունքը դրված էր hօգուտ նույն դպրոցի[3]:

1875 թ. ապրիլի 3-ին «Մշակը» գրել է. «Ներսիսիան Հայոց Ազգային-Հոգևոր Դպրոցի Հոգաբարձութիւնը, պարտաւորութիւն համարելով յարգել յիշատակը հանգուցեալ Աւետիքայ Մովսիսեան Փիրոյեանց, կարգադրել է կատարել հոգեհանգիստ նրա գերեզմանի վրա Թիֆլիզոյ Սուրբ Նշան եկեղեցւոյ գաւթումը առաջիկայ ապրիլ ամսոյ 7-ին, Աւագ երկուշաբթի օրը, սրբոյ Աստուածածնայ Աւետեաց տօնին, պատարագից յետոյ: Այս մասին յայտնում է Թիֆլիզոյ Հայ հասարակութեանը: Արժանայիշատակ Փիրոյեանցը, կտակաւ նուիրել է Ներսիսեան դպրոցին մի հոյակապ շինուածք, որի արդիւնքը գործ է դրվում յօգուտ նոյն Դպրոցի»[4]:

Ապրիլի 10-ին եկեղեցում տեղի է ունեցել գողություն: Զգեստատնից, որի բանալին միշտ գտնվել է երեցփոխ Հակոբ Ավթանդիլյանի մոտ, գողացվել է մեծ ոսկեզօծ սկիհ, մի հատ ձողաբարձ փայտյա արծաթապատ խաչ, յոթ հատ մեծ ու փոքր արծաթյա խաչեր, երեք հատ փոքր արծաթյա սկիհ, հին արծաթյա բուրվառ և երեք հատ արծաթյա մոմակալներ: Կորուստն առաջինը նկատել է ժամկոչ Դա-

[1] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 5350, թ. 1:

[2] «Մեղու Հայաստանի», 1872, 23 սեպտեմբերի, Հվր 30:

[3] «Մշակ», 1873, 19 ապրիլի, Հվր 14:

[4] «Մշակ», 1875, 3 ապրիլի, Հվր 13:

վիթ Զարգարյանը, որը անմիջապես հայտնել է Նիկողայոս քհյ. Տեր-Կարապետյանին և երեցփոխին[1]:

1879 թ. սեպտեմբերի 22-ին մահացել է Եգոր Եգորի Ղարաջյանը: Հոգեհանգիստը կատարվել է Սուրբ Նշան եկեղեցում[2]: Հարկ է նշել, որ 1873 թ. Սուրբ Նշան եկեղեցու մոտ Եգոր Ղարաջյանի տանը երթևեկ հիվանդների համար գործել է հիվանդանոց[3]:

1880 թ. ապրիլի 7-ին՝ Ավետյաց տոնին, Ներսիսյան հայոց ազգային հոգևոր դպրոցի հոգաբարձությունը կարգադրել է Սուրբ Նշան եկեղեցու գավթում, պատարագից հետո, կատարել հոգեհանգիստ Ավետիք Փիրոյանի գերեզմանի վրա[4]:

Նոյեմբերին Ներսիսյան դպրոցի հոգաբարձուներ ընտրելու համար Սուրբ Նշան եկեղեցուց պատգամավորներ են ընտրվել աստիճանավորներ Ալեքսանդր Ղազարոսյան Թչյիրյանը, Գրիգոր Սողոմոնյան Աբխողոմյանը և Հակոբ Գևորգյան Ավթանդիլյանը[5]:

Դեկտեմբերի 19-ին եկեղեցու միաբան քահանաները և ծխականները խնդրագիր են ներկայացրել սինոդին, որում նշել են. «Ի պատճառս սաստիկ տկարութեան անձին և կարի ծերութեան ժամօրհնող քահանայի մերոյ եկեղեցւոյ Յարութիւնի Նաղշքարեանց և Եսայի քահանայի Մեհրաբեանց, որ չկարէ կատարել զիերթակալութիւն իւր, այն է՝ մատուցանել զս[ուր]բ պատարագ, մենք ըստ նախընթաց համաձայնութեան նորա, ընտրեցաք օգնական վերոյիշեալ երկուց քահանայից ըստ ամենայն մասանց քահանայական պաշտամանց զքահանայն Դուշեթու Տէր Աղէքսանդրն Տէր-Յովհաննիսեանց, որոյ վայելուչ քահանայութեան վարք և բարք ըստ հաւաստի աղբերաց տեղեկացեալ արժանի կացուցանեն զնա մերոյս ընտրութեան, ուստի ամենախոնարհաբար խնդրեմք ի Լուսաւորչական Սինօդէդ զիարկաւորեալ տնօրէնութիւն յաղագս տեղափոխելոյ զԱղէքսանդր քահանայն Տէր- Յովհաննիսեանց ի Դուշեթէ ի ս[ուր]բ Նշան եկեղեցին Տփխիսու»[6]: Նրանց խնդրանքը, սակայն, մերժվել է՝ համաձայն կաթողիկոսի կանոնական կոնդակի:

1881 թ. հունվարի 2-ին սինոդը քննարկել է մեղայական ապաշխարող Առաքել քհյ. Ազիզյանի խնդրագիրը՝ ուղղված 1880 թ. դեկտեմբերի 13-ին: Խնդրագրում քահանան աղաչում և աղերսում է ներել իրեն սխալների համար, և քանի որ ութ տարուց ավելի զրկված է եղել քահանայագործությունից, թույլատրել նորից վերականգնվել հոգևոր ծառայության մեջ: Սինոդը որոշել է կարգել նրան Սուրբ Նշան եկեղեցու միաբան ծերունի Հարություն քհյ. Տեր-Հարությունյանին օգնական և ավագ քահանային հանձնարարել է մշտական հսկողություն սահմանել նրա նկատմամբ[1]:

Մարտի 21-ին տեղի է ունեցել Սուրբ Նշան եկեղեցու քահանա Տեր Նիկողայոս Տեր-Կարապետյանի թաղումը: Հանգուցյալի դին Սուրբ Նշան եկեղեցի են տեղափոխել նրա սեփական տնից՝ Ոսկերիչների փողոցի № 14-ից, որը գտնվում է «Մեշչյանների վարչության դիմացը»[2]:

Ապրիլի 19-ին լուսահոգի հանգուցյալ Հովսեփ Էֆենդյանի հոգեհանգստի արարողությանը եկեղեցուց ներկա են եղել Հովհաննես քհյ. Տեր-Գրիգորյանը, Եսայի քհյ. Մեհրաբյանը, Առաքել քհյ. Ազիզյանը և Հակոբ քհյ. Ջառափյանը[3]: Հետագա տարիներին նույնպես եկեղեցու քահանաները մշտապես ներկա են եղել Հովսեփ Էֆենդյանի հոգեհանգստի արարողությանը:

Սեպտեմբերի 19-ին Սուրբ Նշան եկեղեցու երեցփոխ Հակոբ Ավթանդիլյանը հեռագրով հայտնել է Կաթողիկոսին և սինոդին, որ եկեղեցու ծխականները Թիֆլիսի Հայոց կոնսիստորիայի առաջադրած քահանայության թեկնածու Շերմազանյանին չեն ճանաչում և խնդրում են նրան իրենց եկեղեցու համար քահանա չձեռնադրել[4]:

1881 թ. եկեղեցու դպիր Պետրոս Կարապետյանին տրվել է ուսուցչի պաշտոն[5]:

1883 թ. եկեղեցուց հավաքված գանձանակադրամը ուղարկվել է Մայր Աթոռի գանձարան[6]: Այդ տարի Եզնիկ քհյ. Երզնկյանը նշանակվել է Սուրբ Նշան եկեղեցու դպիր[7]:

1883 թ. փետրվարի 21-ին Տփխիսի և Մցխեթի վիճակի եկեղեցիների բարեկարգիչ Կարապետ քհյ. Տեր-Սարգսյանը ներկայացրել է թեմի առաջնորդ Արիստակես եպիսկոպոսին Սուրբ Նշան եկեղեցու

[1] ՀԱԱ, ֆ. 56, ց. 5, թղթ. 99, վավ. 252, թ. 363, բնագիր, ձեռագիր:
[2] «Մշակ», 1879, 22 սեպտեմբերի, Հ[մր] 161:
[3] «Մշակ», 1873, 31 մայիսի, Հ[մր] 20:
[4] «Մշակ», 1880, 1 ապրիլի, Հ[մր] 54:
[5] «Մեղու Հայաստանի», 1880, 12 նոյեմբերի, Հ[մր] 87:
[6] ՀԱԱ, ֆ. 56, ց. 5, թղթ. 111, վավ. 65, թ. 92, բնագիր, ձեռագիր:



[1] ՀԱԱ, ֆ. 56, ց. 5, թղթ. 111, վավ. 6, թ. 6, բնագիր, ձեռագիր:
[2] «Մշակ», 1881, 20 մարտի, Հ[մր] 51:
[3] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3475, թ. 28 շրջ.:
[4] ՄՄ, Կ/Դ, թղթ. 202, վավ. 425:
[5] ՀԱԱ, ֆ. 56, ց. 5, թղթ. 112, վավ. 278, բնագիր, ձեռագիր:
[6] ՀԱԱ, ֆ. 56, ց. 5, թղթ. 119, վավ. 77, բնագիր, ձեռագիր:
[7] ՀԱԱ, ֆ. 56, ց. 5, թղթ. 117, վավ. 233, բնագիր, ձեռագիր:

հոգևորականության մասին հետևյալ տվյալները[1]. ժամօրհնող Հովհաննես քհյ. Տեր-Գրիգորյանց – ունի 87 տուն ժողովուրդ, Հարություն քհյ. Նախշքարյան Տեր-Հարությունյան – 64 տուն ժողովուրդ (ծերունի է և անդամալույծ), Առաքել քհյ. Ազիզյան – նրա օգնականը, Եսայի քհյ. Մեհրաբյան (ծերունի) – 85 տուն ժողովուրդ, Գրիգոր քհյ. Շերմազանյան – նրա օգնականը, Հակոբ քհյ. Ջառափյան – 59 տուն ժողովուրդ: Ստորին պաշտոնյաների անունները բաց են թողնված:

Եկեղեցու երեցփոխանն է եղել աստիճանավոր Հակոբ Եգորի Ավթանդիլյանը:

Մարտի 22-ին առաջնորդական համձնարարությունների համձնաժողովը վճռել է կազմել հաշվետես անդամներից կազմված մի մասնաժողով, որը պետք է քններ եկեղեցիների հաշիվները: Համձնաժողովի հաշվետես անդամը իրավունք էր ձեռք բերում մտնել և ստուգել իրեն համձնված եկեղեցու հաշվեմատյանները: Եկեղեցու երեցփոխանները պարտավոր էին ներկայացնելու այդ մատյանները, հակառակ դեպքում թեմի առաջնորդը կարող էր դիմել հատուկ միջոցների: Այսպես, Սուրբ Նշան եկեղեցուց հաշվետես էր նշանակվել Մուշեղ քհյ. Տեր-Ղևոնդյանը[2]:

Հունիսի 25-ին Սուրբ Նշան եկեղեցու միաբան Հովհաննես Տեր-Գրիգորյանը հայտնել է, որ նույն եկեղեցու երեցփոխ Հակոբ Ավթանդիլյանի հրաժարականի առիթով կոնսիստորիայի հրամանով առաջիկա կիրակի՝ հունիսի 26-ին, նշանակված է նոր երեցփոխանի ընտրություն, և խնդրել է ծխական և ժամավոր ժողովրդականներին ներկա լինելու ընտրությանը:

Արխիվային մի փաստաթղթում պահպանվել են տարբեր եկեղեցիներից մնացած ապառիկ գումարների չափերը 1879 թ. մինչև 1883 թ. վերջը ընկած ժամանակահատվածում. այսպես. Սուրբ Նշան եկեղեցին պարտք է մնացել ձայնագրության ուսուցիչ Տեր Եզնիկին ռոճիկ՝ 115 ռ. 28 կ., ձայնագրյալ շարականների համար՝ 120 ռ., 1883 թ. Հորդանանի կամուրջի կառուցման համար պարտք է մնացել 20 ռ., 1879 թ. եկեղեցական մատյանի գումարը՝ 8 ռ., 1883 թ. եկեղեցական մատյանի գումարը, որը կազմել է 10 ռ.: Այսպիսով, պարտքի ընդհանուր գումարն է եղել 273 ռ. 28 կ.[3]:

1884 թ. հունվարի 25-ին եկեղեցու միաբան Հովհաննես քհյ. Տեր-Գրիգորյանը հայտարարել է, որ հանուն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի՝ 1882-83 թթ. ժողովել է 35 ռ. գանձանակադրամ, որը և ուղարկվել է գանձարան[1]:

Հունվարի 29-ին թեմի առաջնորդ Արիստակես եպս. Սեդրակյանի կարգադրությամբ Թիֆլիսի հայոց եկեղեցիներում տեղի է ունեցել պատգամավորների ընտրություն: Յուրաքանչյուր եկեղեցի ընտրել է չորս պատգամավոր, որոնք մարտի 24-ին, գավառական քաղաքների պատգամավորների հետ, պետք է հավաքվեին առաջնորդարանում և ընտրեին մի ներկայացուցիչ, որը սրբազան առաջնորդի հետ պետք է մասնակցեր կաթողիկոսական ընտրությանը: Սուրբ Նշան եկեղեցուց պատգամավորներ են ընտրվել Հակոբ Տեր-Հովհաննիսյանը, Բարսեղ Ղանդուրալյանը, Գաբրիել Միրզոյանը և Նիկողայոս Տեր-Հարությունյանը[2]:

Մարտին Առաքել քհյ. Ազիզյանը գրել է. «Եկեղեցում ժամասացութեան անշքութիւնը շատ զգալի է ժողովրդականաց, որովհետև այնտեղ կիրակէ օրերը դպրութիւն են անում իրենք քահանաները, երգեցիկ խումբ չը լինելու պատճառաւ, մինչդեռ ուրիշ եկեղեցիները վայելում են այդ շնորհքը: Վստահանում ենք հրաւիրել սրա վրայ Ներսէսեան դպրոցի յարգելի հոգաբարձութեան ուշադրութիւնը և խնդրել յարգել ժողովրդեան բաղձանքը՝ ուղարկելով կիրակէ օրերը մի քանի երգեցիկ մանուկներ, որի համար մենք մեր ժողովրդի հետ շնորհակալ կը լինենք»[3]:

Ապրիլի 27-ին տեղի ունեցած Թեմական համձնաժողովի նիստի ժամանակ կարդացվել է համձնաժողովի անդամ Գևորգ քհյ. Գալստյանի հայտարարությունը, որում նա ներկայացրել է Սուրբ Նշան եկեղեցու երեցփոխանից ստացած 10 ռ.՝ եկեղեցիների բարեկարգության վերատեսուչների 1884 թ. ծախսերի համար[4]:

Հունիսի 22-ին եկեղեցու ծխականները կրկին հրավիրվել են եկեղեցի՝ պատարագից հետո երեցփոխան ընտրելու համար: Ընտրությունը, սակայն, չի կատարվել ծխականների քիչ լինելու պատճառով:

1884 թ. նշվել է, որ եկեղեցուն են պատկանել մեկ ուսումնարան և երեք սենյակ՝ նախատեսված ուխտավորների համար: Եկեղեցու մայր գումարը կազմել է 3.412 ռ. 43 կ.[5]:

[1] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2932, թ. 3:

[2] «Մշակ», 1883, 31 մարտի, Հմր 57:

[3] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2932, թ. 11:



[1] ՀԱԱ, ֆ. 56, ց. 5, թղթ. 120, վավ. 77, բնագիր, ձեռագիր:

[2] «Արձագանք», 1884, Հմր 5, տես նաև «Մեղու Հայաստանի», 1884, 18 մարտի, Հմր 21:

[3] «Նոր Դար», 1884, 21 մարտի, Հմր 49:

[4] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 4078, թ. 11:

[5] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2941, թ. 136:

1885 թ. փետրվարի 10-ին եկեղեցու թեմական պատգամավորներ են ընտրվել Հովհաննես Տեր-Կարապետյանը, Հակոբ Տեր-Հակոբյանը և Գևորգ Ենիկոլոպյանը:

Մարտի 9-ին եկեղեցում կատարվել է եկեղեցու ավագ քահանա Տեր Հովհաննես Տեր-Գրիգորյանի հոգեհանգիստը: Թաղումը կատարվել է հաջորդ օրը:

Նույն օրը Վանքի եկեղեցում տեղի ունեցող պատարագին և ապա թեմի առաջնորդի ընտրությանը մասնակցելու համար եկեղեցուց հրավիրվել են Հովհաննես Տեր-Կարապետյանը, Գևորգ Ենիկոլոպյանը և Հակոբ Տեր-Հակոբյանը[1]:

1885 թ. մարտի 6-ին եկեղեցու սարկավագ Դիոնեսիոս Ղամազյանը խնդրագիր է ուղղել սինոդին, որում մասնավորապես նշել է. «Առատագութ ատենակալք, գիտեմ քաջ յայտնի է սրբազան Սինոդիդ՝ զի ի մանկութէնէ մինչ ի 1879 ամ(ի)ն՝ ծառայեալ եմ յեկեղեցիս քաղաքիս տիրացուական պաշտօնիւ և ի նոյն ամաց ցարդ սարկաւագական պաշտօնիւ. և որովհետև բարեկրօն Յովհաննէս քահանայ Տէր-Գրիգորեանցն Սուրբ Նշան եկեղեցւոյ վախճանեցաւ, ուստի այսու խնդրագրովս համբուրելով զոտս գթառատ Ատենակալցդ, ամենախոնարհաբար աղաչեմ յիշելով՝ զբազմամեայ ծառայութիւնս իմ, և գթալով ի հասակ և ի բազմաթիւ գերդաստան իմ, հրամայել ձեռնադրել զիս քահանայ՝ ի վերայ Սուրբ Նշան եկեղեցւոյ՝ ծխոց հանգուցեալ Յովաննէս քահանայի Տէր-Գրիգորեանց, որով ամենայն աչալուրջ հսկողութեամբ կատարելով զսուրբ պաշտօն իմ՝ միշտ և յաւէտ գուն գործեցից զօգուտն Մայր Աթոռոյդ Սրբոյ Էջմիածնի»:

Դիոնեսիոս սարկավագին քահանա ձեռնադրելու խնդրանքով մարտի 22-ին սինոդին դիմել են նաև եկեղեցու ճանաչված մի քանի ծխականներ: Նրանք գրել են. «Սրբազան Ատենակալք, որովհետև Յովաննէս քահանայն մեր Տէր-Գրիգորեանցն վախճանեցաւ, և տեսանելով և քաջ ճանաչելով զքահանայապատշաճ ամենայն յարմարաւորութիւն Դիոնեսիոսի սարկաւագին Ղամազեանց, ուստի ամենայն խոնարհութեամբ խնդրեմք ի Բարձր Սրբազան Ատենակալցդ, հրամայել ձեռնադրել զվերոյիշեալ սարկաւագն քահանայ ի վերայ ծխականաց նոյն եկեղեցւոյն»: Խնդրագիրը ստորագրել են եկեղեցու երեցփոխան «կոլեժսկի սեկրետար» Հովհաննես Տեր-Կարապետյանը, ժամավոր Ալեքսանդր Ղազարյան Թայիրյանը, պատվավոր քաղաքացի Գաբրիել Գևորգյան Շաղինյանը, Ալեքսանդր Գևորգյան Ալիխանովը, Գևորգ Պողոսյան Ալիխանյանը, Հ. Ղարաղյանը,

[1] «Մեղու Հայաստանի», 1885, 7 մարտի, Հմր 18:



Նիկողայոս Լիլիփարյանը, Ստեփան Գուլյանը և ուրիշներ: 1887 թ. հունիսի 17-ին սինոդը քննարկել է Դիոնեսիոս սարկավագի խնդիրը և պահանջել է թեմական ատյանի միջնորդությունը[1]:

1886 թ. Ներսիսյան դպրոցի հոգաբարձուների ընտրությանը եկեղեցուց մասնակցել են Հակոբ Տեր-Հովհաննիսյանը, Ստեփան Իզմիրյանը և Հովհաննես Տեր-Կարապետյանը:

1886 թ. մարտի 13-ին Հակոբ քհյ. Ջառափյանը ներկայացրել է «Հաւելեալ զարդք Սուրբ Նշան եկեղեցւոյ յընթացս 1885 ամի»[2].

1. 13 հատ չթից ժամաշապիկներ գնվել է եկեղեցական արդյունքներով,

2. ևս երկու հատ չթից ժամաշապիկ գնվել է եկեղեցական արդյունքներով,

3. երկու հատ գրակալ շապիկ նույնպես եկեղեցական արդյունքներով,

4. մի սեղանի գոգնոց ընծայել է Ենիկոլոպյանցը,

5. մի սեղանի մախմուրյա խաչելոց ընծայել է նույնպես Ենիկոլոպյանցը:

Պակասեալ.

6. մի արծաթյա ծեսի խաչ գիտությամբ միաբան քահանայից տարել է Առաքել քհյ. Ազիզյանցը:

1888 թ. մայիսին հիշատակվել են եկեղեցու քահանաներ Հակոբ Ջառափյանը և Գարեգին Առաքելյանը[3]:

1888 թ. օգոստոսի 24-ին Թիֆլիսի նահանգական դատարանի քրեական բաժնում քննվել է Սուրբ Նշան եկեղեցու միաբան Տեր Առաքել Ազիզյանի գործը: Նրան մեղադրել են, որ նա էրզրումցի Համազասպ Էլիղերգիլյանի միջոցով կեղծ փաստաթղթեր է պատրաստել Հնդկաստանում վախճանված Հովհաննես Օրբելյանի կտակով թողած գումարը Միդսի և Հակոբ Օրբելյաններին դարձնելու համար և այդ կեղծ գրությունները 150 ռուբլով ծախել է Հակոբ Դ. Լազարյանին[4]:

Նոյեմբերի 9-ի առավոտյան Թիֆլիսի նահանգական դատարանում նորից քննվել է Առաքել քահանայի գործը: Իսկ նոյեմբերի 11-ին դատարանը կայացրել է իր վճիռը՝ Առաքել քահանային և թրքահպատակ էրզրումցի Համազասպ Էլիղերգիլյանին հանցավոր

[1] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 7650, թ. 7-9:

[2] ՀԱԱ, ֆ. 332, ց. 1, գ. 994, թ. 16:

[3] «Նոր Դար», 1888, 12 մայիսի, Հմր 73:

[4] «Նոր Դար», 1888, 13 օգոստոսի, Հմր 133:

ճանաչել կեղծ թղթեր պատրաստելու և վաճառելու համար: Որոշվել է Առաքել քահանային զրկել անձնական և քաղաքական իրավունքներից և աքսորել մշտական բնակության Տոմսկի նահանգ: Այնուհետև դատարանը որոշել է Առաքել քահանային «առայժմ, մինչև դատարանական որոշման վերջնական հաստատումը», 1.000 ռ. գրավականով ազատ արձակել[1]:

1888 թ. դրությամբ եկեղեցուն են պատկանել 1 ուսումնարան և 3 սենյակ՝ նախատեսված ուխտավորների համար[2]:

1889 թ. հունիսի 9-ին եկեղեցու 40 ծխականներ խնդրագրով դիմել են Վրաստանի և Իմերեթի թեմակալ առաջնորդին. «Մեր Սուրբ Նշան եկեղեցւոյ ժամաւորների պակասութիւնը այնքան աչքի է ընկնում և այնքան զգալի է մեզ համար, որ մենք ստիպուած պարտականութիւն ենք համարում Ձեր սրբազնութեան ուշադրութիւնը հրաւիրել այս ցաւալի երևոյթի վերայ: Սոյն երևոյթի պատճառները թէև շատ են, սակայն առ այժմ մենք մատնանիշ ենք անում հետևեալը. Եկեղեցւոյ տանիքը երկար տարիների ընթացքում մինչև ցայսօր չունենալով ջրի խողովակներ (ժոլոբներ), անձրևի ջուրը շարունակ մտել է եկեղեցւոյ հիմքը և զգալի խոնաւութիւն պատճառել պատերին՝ բաւականաչափ բարձրութեամբ: Սոյն իսկ պատճառով եկեղեցւոյ քարէ յատակը այնքան խոնաւութիւն և սառնութիւն է արտադրում, որ տարուայ բոլոր եղանակներին անհնարին է լինում խաղաղ և ջերմեռանդ սրտով ներկայ լինել ժամերգութեան: Այս սարսափելի խոնաւութիւնը և սառնութիւնը արմատախիլ անելու համար անհրաժեշտ է նախ՝ եկեղեցւոյ քարէ յատակը փոխարինել տախտակամածի, ինչպէս որ ներկայումս փոխած է ամբողջ կանանց դասը և մասամբ արանց դասը. երկրորդ՝ անշուշտ կարևոր է շինել եկեղեցւոյ տանիքին ժոլոբներ, և երրորդ՝ շինել վառարաններ: Սորա մասին յայտնելով Ձերդ սրբազնութեանը՝ ամենախոնարհաբար խնդրում ենք բարեհաճել յարգելու մեր խնդիրը և շուտափոյթ տնօրինել Ձեր բարի հայեցողութեան»[3]:

Հուլիսի 7-ին թեմի առաջնորդը, պատասխանելով ծխականների խնդրագրին, դիմել է եկեղեցու երեցփոխանին.

«Ժողովրդականք եկեղեցւոյդ խնդրագրով իւրեանց ծանուցանելով մեզ զսաստիկ խոնաւութիւնէ եկեղեցւոյն, զյառաջացեալն ի չլինելոյ ջրանց խողովակաց ի վրայ տանեաց՝ խնդրեն զտնօրէնութիւն մեր: Ուշադրութեան արժանի գտանելով զխնդիր նոցա և անձամբ հասու գոլով ստուգութեան նկարագրեալ դրութիւնն եկեղեցւոյ՝ առաջադրեմք անյապաղ շինել զխողովակս տանեաց եկեղեցւոյն, խնդրելով առ այն զթոյլտուութիւն ծախուց ի վիճակային Առենէ թեմիս»[1]:

Հոկտեմբերի 15-ին եկեղեցում պատարագից հետո կատարվել է Հայ կանանց ընկերության դպրոցի բարերարների հոգեհանգիստը: Այնուհետև դպրոցի դահլիճում տեղի է ունեցել ավարտող աշակերտների պարգևատրումը:

Հոկտեմբերի 29-ին եկեղեցում կատարվել է «կոլեժսկի սովետնիկ» Ալեքսանդր Ղազարյան Թայիրյանի հոգեհանգիստը, իսկ թաղումը կատարվել է հաջորդ օրը՝ Կոջորի հայոց եկեղեցու բակում:

Նոյեմբերի 11-ի դրությամբ եկեղեցում հիշատակվել են հետևյալ քահանաները. Հակոբ քհյ. Ջառաֆյան, Գրիգոր քհյ. Շերմազանյան, Գարեգին քհյ. Առաքելյան[2]:

1890 թ. ընթացքում եկեղեցում գրանցվել է 29 ծնունդ (15 արական և 14 իգական), 11 ամուսնություն, մահացել է 36 ծխական[3]:

1891 թ. մարտի 31-ին եկեղեցում պատարագ է մատուցվել և հոգեհանգիստ է կատարվել Հայուհյաց Բարեգործական ընկերության բարերարների հիշատակին[4]:

Ապրիլին կայացել է Ներսիսյան դպրանոցի հոգաբարձական պատգամավորների ընտրություն, որի ժամանակ եկեղեցուց ընտրվել են Հակոբ Տեր-Հովհաննիսյանը, Սոկրատ Մելիք-Ադամյանը և Գրիգոր Ենիկոլոպյանը[5]:

1892 թ. հունվարի 26-ին եկեղեցում կատարվել է պատգամավորների ընտրություն. ընտրվել են Բարսեղ Ղանդուրալյանը, Հովհաննես Տեր-Կարապետյանը և Գաբրիել Միրզոյանը:

1893 թ. դեկտեմբերի 15-ին Թիֆլիսի եկեղեցիների բարեկարգիչ Հովհաննես քհյ. Մարտիրոսյանցը ներկայացրել է եկեղեցու հոգևորականների ցուցակը[6].

1. Հակոբ քհյ. Տեր-Հակոբյան Ջառափյան – ունի 110 տուն ժողովուրդ, 42 տարեկան է, չորս աստիճանի դպրություն ստացել է

[1] «Նոր Դար», 1888, 12 նոյեմբերի, Հմր 190:
[2] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3882, թ. 172:
[3] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 133, մաս 2, թ. 295:



[1] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 133, մաս 2, թ. 297:
[2] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 133, մաս 2, թ. 326:
[3] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3886, թ. 5-6:
[4] «Մշակ», 1891, 2 ապրիլի, Հմր 37:
[5] «Մշակ», 1891, 11 ապրիլի, Հմր 41:
[6] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3893, մաս 2, թ. 116:

1869 թ., սարկավագություն՝ 14 սեպտեմբերի 1874 թ., ձեռնադրվել է քահանա՝ 7 մայիսի 1876 թ.: Զավակները՝ Զաքարիա – 19 տարեկան, Ռուբեն – 3, Օվսաննա – 13:

2. Գրիգոր քհյ. Հովհաննիսյան Շերմազանյան – ունի 100 տուն ժողովուրդ, 42 տարեկան է, մտել է հոգևորականության մեջ 1881 թ., չորս աստիճանի դպրություն և սարկավագություն ստացել է նույն տարվա հոկտեմբերի 22-ին, նույն օրն էլ ձեռնադրվել է քահանա: Զավակները՝ Սաթենիկ – 13 տարեկան, Տիգրան – 12, Ռուբեն – 9, Կարինե – 1½:

3. Գարեգին քհյ. Մարկոսյան Առաքելյան – ունի 110 տուն ժողովուրդ, 36 տարեկան է, հոգևորականության մեջ է մտել 1881 թ., չորս աստիճան դպրություն, սարկավագություն և քահանայություն ստացել է 27 հուլիսի 1887 թ.: Զավակները՝ Աշխեն – 5½ տարեկան, Մանիա – 4, Լևոն – 2, Անահիտ – 1½ տարեկան:

1894 թ. մարտին եկեղեցու երեցփոխանի խնդրանքով Ներսիսյան դպրոցի վարչությունը չքավոր աշակերտներից մի երգեցիկ խումբ է կազմել, որը ամեն շաբաթ և կիրակի օրերին եկեղեցում երգելով մխիթարել է ժողովրդին: Այդ առթիվ «Արձագանքը» գրել է. «Ահա մի օրինակ, որին կարող են և այլ երեցփոխանները հետևիլ. այսպիսով կարելի կը լինի հետզհետէ մեր եկեղեցիների համար կանոնաւոր խմբեր կազմել մեր ծխական դպրոցների աշակերտներից»[1]:

Ապրիլի 7-ին՝ Ավետյաց տոնի օրը, Սուրբ Նշան եկեղեցում կատարվել է Ավետիք Փիրոյանի հոգեհանգիստը: Հանդեսին ներկա են եղել դպրոցի հոգաբարձուները, ուսուցիչները և բոլոր աշակերտները: Հոգեհանգստյան հանդեսը կատարել է թեմակալ առաջնորդ գերապ. Գևորգ եպիսկոպոսը՝ հոգևորական դասի հետ միասին: Ներկա է եղել ժողովրդի խուռն բազմություն[2]:

Ապրիլի 21-ին թեմի առաջնորդարանում հրավիրվել է ժողով՝ քաղաքի հասարակության հայտնի անձանց մասնակցությամբ: Թեմի առաջնորդը, բացելով ժողովը հայտնել է, որ իր կարգադրությամբ քաղաքի հայկական եկեղեցիներում կազմակերպվել է հանգանակություն հօգուտ սովյալ հայերի: Այն կազմակերպելու համար յուրաքանչյուր եկեղեցում առաջնորդի հանձնարարությամբ ընտրվել է մի մասնախումբ: Սուրբ Նշան եկեղեցում հանձնաժողովի ան-

1 «Արձագանք», 1894, 20 մարտի, Հմր 33:
2 «Արձագանք», 1894, 8 ապրիլի, Հմր 41:



դամներ են ընտրվել Կ. Ենիկոլոպյանը, Գ. Աբիսողոմյանը և Գ. Միրզոյանը:

Մայիսի 15-ին Սուրբ Նշան եկեղեցում կատարվել է ուսուցիչ Մկրտիչ Տեր-Մարտիրոսյանի մահվան տարեդարձին նվիրված հոգեհանգիստը:

Հունիսի սկզբին նշվել է, որ. «Քաղաքի կենդրոնի եկեղեցիներից Ս. Նշանն արդէն իսկ մի պատկառելի հնութիւն է, և եթէ շուտով նորոգութիւն չը կատարուի, վտանգի կենթարկուի»: Այդ նպատակով հռչակավոր զորավար կոմս Լորիս-Մելիքյանի քույրը՝ այրի Նատալյա Ենիկոլոպյանը, եկեղեցու վերանորոգության համար նվիրել է 1.150 ռուբլի[1]: Առաջնորդը օրհնելով նրան, սիրով ընդունել է բարեպաշտ տիկնոջ առաջարկությունը և այդ գումարը հանձնել է եկեղեցու երեցփոխին[2]:

1894 թ. եկեղեցում տեղի ունեցած պատգամավորական ընտրությունից հետո «Արձագանքում» գրվել է. «Այս եկեղեցում խնդիրը շատ ծանր կերպարանք է առնում. այստեղ մաքառում են երկու անձինք, մէկ այժմեան հոգաբարձու և մէկ նախկին արձակուած ուսուցիչ, որ իբրև ազատամիտ ամեն տեսակ լուծումներ, սկսած ամուսնալուծութիւնից ընդունում է, բայց պաշտօնից արձակումն չէ ընդունում: Ծխականների մէջ վիճաբանութիւն է ծագում քուէարկութեան եղանակի մասին, մէկ մասը թերթիկներով է կամենում ընտրել, միւս մասը տուփերով: Այստեղ միակ գործն ըմբռնող մի նախագահ է գտնւում՝ որ պնդում է քուէատուփերով ընտրութիւն անելու վրայ: Ամենայն իրաւունքով նա հաստատում է, որ երբ մի անձն անգամ քուէտուփ պահանջէ, պէտք է տուփով ընտրել, որովհետև աշխարհիս երեսին այլ տեսակ ընտրութիւն չկայ: Լուսամիտների (~~) բանակը այնտեղ էլ պնդում է՝ թէ ինքը ՍԵՒՆ ՈՒ ՍՊԻՏԱԿԸ չէ ջոկում, ուստի կամենում է թերթիկներով ընտրել: Նախագահը ժողովը փակում է և եռամեայ պաշտոնազուրկ նախատակը այստեղ էլ զրկւում է ընտրուելուց: Բայց ոչինչ, այդ միայն ժամանակի խնդիր է»[3]:

Հունիսի 14-ին եկեղեցու մոտ 80 ծխականների ներկայությամբ տեղի է ունեցել ժողով պատգամավորների ընտրության համար: Սակայն ընտրություն տեղի չի ունեցել: Նշված է, որ «Ժողովականները առաջարկել են նախագահ-քահանային սկզբից որոշել, թէ արդեօք ընտրութիւնները թերթիկներով պէտք է լինեն, թէ տուփերով:

1 «Արձագանք», 1894, 10 հունիսի, Հմր 65:
2 «Նոր Դար», 1894, 8 հունիսի, Հմր 95:
3 «Արձագանք», 1894, 22 հունիսի, Հմր 70:

Այդ հարցի որոշումը, հրահանգի համաձայն, ժողովի իրաւունքն էր: Սակայն նախագահը թոյլ չի տուել, որ ժողովը պարզի այդ հարցը, ուստի և ժողովականները ցրվել են»[1]:

Հունիսի 29-ին «Արձագանքը» գրել է. «Կիրակէ օրը կատարուած ընտրութիւնների նախագահները բողոքել են անկարգութիւնների դէմ և անվաւեր են համարում այդ ընտրութիւնները: Անհամար բողոքներ են տուել և ժողովրդականները: Ս. Նշանում ընտրողները չեն ստորագրել ընտրական թերթին: Ինչով պիտի վերջանայ այս ամենը...»[2]:

Հունիսի 26-ին նշանակված է եղել հոգաբարձական ընտրություն Սուրբ Նշան եկեղեցում, որտեղ չէին կայացել ընտրությունները անկարգության պատճառով: Այս անգամ էլ եկեղեցում «այնպիսի դէպքեր պատահեցին», որ այն դարձյալ անվավեր է ճանաչվել[3]: Այդ առթիվ «Մշակը» գրել է. «Ցաւում ենք, որ ստիպված ենք նկատել, որ առաջիկայ ընտրութիւնների պատճառով արդէն սկսել են դիմել մեզ զանազան գանգատներով: Թիֆլիսի Ս. Նշան եկեղեցու երկու ծխական չեն մտցրած ցուցակի մէջ, չը նայած որ մէկը այդ եկեղեցու հանգուցեալ քահանայի որդին է, իսկ միւսը այնպիսի ծխական, որի տանը ծխատէր քահանան ծէսեր է կատարում: Ինչո՞ւ»[4]:

1895 թ. ապրիլին 8-ին, Սուրբ Նշան եկեղեցու գաւթում կատարվել է Ներսիսեան դպրոցի բարերար Ավետիք Փիրոյանի հոգեհանգիստը: Ընդարձակ եկեղեցին լեցուն է եղել բարեպաշտ հասարակութեամբ: Պատարագին ներկա է եղել թեմիս առաջնորդ սրբազան Սուրենյանը: Դպրություն է կատարել Ներսիսյան դպրոցի երգեցիկ խումբը, որը սովորականի պես հաճելի տպավորություն է թողել հավաքվածների վրա: «Արձագանքում» գրվել է, որ «մի ռուս քահանայ հետաքրքիր զմայլանքով կանգնած էր երգեցիկ խմբի ետևն ու բերկրութեամբ լսում էր հայոց քառաձայն երգեցողութիւնը»[5]: Պատարագից հետո Թիֆլիսի հայ հոգևորականության մեծ մասի ներկայությամբ թեմի առաջնորդ Գևորգ եպս. Սուրենյանը կատարել է Փիրոյանի հոգեհանգիստը:

1896 թ. նոյեմբերի 24-ին եկեղեցում կատարվել է իսկական պետական խորհրդական Հովհաննես Սողոմոնյան Աբիսողոմյանի

1 «Մշակ», 1894, 21 հունիսի, Հմր 70:

2 «Արձագանք», 1894, 29 հունիսի, Հմր 73:

3 «Արձագանք», 1894, 29 հունիսի, Հմր 73:

4 «Մշակ», 1894, Հմր 67:

5 «Արձագանք», 1895, Հմր 35:



հոգեհանգիստը և հուղարկավորությունը: Ս. Ծոցիկյանը, ներկա գտնվելով սգո արարողությանը, գրել է. «Բաղդս այնպէս առաջնորդեց, որ ճամբան մեռելական թափօրի մը հանդիպիմ: Մեռնողն էր «իսկական պետական խորհրդական» պ. Յովհաննէս Աբիսողոմեանը: Դագաղին կը հետևէր գլխիկոր երկսեռ բազմութիւն մը: Շատերուն համակրելի անձ մը ըլլալու էր սա: Անոնց դէմքերուն վրայ տխրութեան մը որոշ արտայայտութիւնը կար: Եկեղեցական դասը, Առաջնորդ սրբազանի նախագահութեամբ կը յառաջանար մեղամաղձոտ շեշտերով մահերգ մը ըսելով: Ես ալ կըհետևիմ թափօրին սգակիր քահանային քովէն: Կըհասնինք Ս. Նշան եկեղեցին: Պատշաճապէս լուսազարդարուած էր: Սուրէնեան Սրբազան պատարագիչ է: Պատարագի քառաձայն երգեցողութիւնն նորութիւն մ' էր ինծ համար, ինչ որ Թրքա-Հայաստանի մէջ դեռ մուտք գտած չէ, որուն ի լուր՝ իսկապէս հիացումէն աւելի բան մը զգացի ներսիցս, յափշտակուեցայ...Պատարագը կ'աւարտվի: Սրբազանը կարճ դամբանական քարոզ մը կըխօսի... Յետոյ, մանրամասնելով խօսքը հանգուցելոյն վրայ, թուելէ ետք անոր ունեցած լաւ յատկութիւնները, աւելցուց, թէ իր մեծ հարստութենէն՝ 2000 ռուբլիի կտակ մը թողած է նա՝ բարենպաստ գործերու համար: Ապա՝ հոգեհանգստեան պաշտօն: Ու դագաղը կըհանուի եկեղեցւոյն դրան առջև, ուրկէ քանի մը քայլ անդին, բակին մէջ փորուած էր հանգուցելոյն գերեզմանը, ուր, թաղման յուզիչ արարողութիւններն ալ կատարելէ ետք, Յ. Աբիսողոմեանցի մարմինը կըյանձնեն վերջապէս հողին: Մինչ նրա ծերունի եղբայրը, գերեզմանի վերև կանգնած, կուլար ուղխօրէն իր ննջած եղբօրը վրայ, որ ալ չարթննար...» [1]:

Հարկ է նշել, որ Սուրբ Նշան եկեղեցուն տարբեր ժամանակներում նվիրատվություններ են կատարվել: 1824 թ. վանեցի Գասպար Բարսեղյանի կազմած կտակի համաձայն, եկեղեցուն նվիրաբերվել է 10 ռ. արծաթե դրամ: 1897 թ. եկեղեցու միաբանությանը 1.000 ռ. գումար է նվիրաբերել նաև Հովհաննես Սողոմոնյան Աբիսողոմյանը: Պահպանվել են նրա կտակի հետ կապված գրագրություններ: Այսպես. 1897 թ. փետրվարի 15-ին կոնսիստորիայի անդամ Գ. Տեր-Գաբրիելյանը Թիֆլիսի հայոց եկեղեցիների գործակալ Ղևոնդ ավ. քհյ. Խարազյանին գրել է. «Ըստ հրամանի Նորին Կայսերական Մեծութեան ի կոնսիստորիայիս լուան զգրութիւն պրօկուրորի նահանգական դատարանի Տփխեաց յ30 յունվարի տարւոյս № 1077, ընդ որում առաքէ զպատճէն քաղուածոյ ի կտակէ հանգուցեալ իսկա-

1 «Արձագանք», 1896, 27 նոյեմբերի, Հմր 138:

կան պետական խորհրդական Յովհաննու Սողոմոնեան Աբիսողոմեանց, յորմէ տեսանի զի նա՝ հանգուցեալն, ի թիւ այլոց կտակեալ է ի սեփականութէնէ իւրմէ զհազար րուբլիս յօգուտ միաբանից Ս. Նշան եկեղեցւոյ հայոց Տփխեաց, և զկտակատար կարգեալ է զեղբայր իւր զԳրիգորն Սողոմոնեան Աբիսողոմեանց, որ բնակի ի 5-րդ քաղաքամասին Տփխեաց, ի Վելամինեան փողոցի, ի սեպհական տան. ուստի **Հրամայեցին**. պատուիրել Ձեզ հրաւիրել պ. Գրիգորն Սողոմոնեան Աբիսողոմեանց՝ կատարել զկտակ հանգուցելոյն, մատուցանելով միաբանից Ս. Նշան եկեղեցւոյ քաղաքիս զկտակեալ հազար րուբլին և զկատարածն յայտնել Ատենիս, զայսմանէ ծանուցանել և վերոյիշեալ միաբանութեան»[1]:

Հոկտեմբերի 13-ին կոնսիստորիայի անդամ Գ. Տեր-Գաբրիելյանը եկեղեցուն կտակված գումարի առիթով գրություն է ուղղել Թիֆլիսի գործակալ Ղևոնդ ավ. քհյ. Խարազյանին. «Պատուիրի Ձեզ փութալ ի կատարումն հրամանի սորին ի 15 փետրուարի տարւոյս թ. 484, որ յաղագս կատարման կտակի հանգուցեալ իսկական պետական խորհրդական Յոհաննէս Աբիսողոմեանց»[2]:

Հոկտեմբերի 22-ին եկեղեցու միաբաններ Հակոբ քհյ. Ջառափյանը, Գրիգոր քհյ. Շերմազանյանը և Գարեգին քհյ. Առաքելյանը հայտարարություն են հղել եկեղեցիների գործակալ Ղևոնդ ավ. քհյ. Խարազյանին. «Համաձայն գրութեան բարձրապատուիդ ի 17-ն ամսոյս № 709, պատիւ ունիմք յայտնել, թէ կտակեալ մի հազար րուբլի Յովհաննեսէ Աբիսողոմեան ստացեալ ունինք ի պ. Գրիգորէ Աբիսողոմեանից յունվար ամսոյս մերձայ տարւոյս»[3]:

1898 թ. հունվարի 26-ին Թիֆլիսի կոնսիստորիան հայտարարություն է ուղղել սինոդին. «Ի կոնսիստորիայիս լուան զխնդիր ստատսկի սովետնիկ Գրիգորի Սոլոմոնեան Աբիսալամովի ի 18 դեկտեմբերի անցելոյ, ի ռուս լեզու, որոյ թարգմանութիւնն է այսպէս. «Ցանկամ նուիրել Ս. Նշան եկեղեցւոյն Տփխեաց զմիայարկ կղմինդրեայ կրպակն ի նորոյ կառուցեալ ըստ հաստատեալ ի 28 մարտի անցելոյ պլանի հանդերձ 13 քառ. սաժէն: Գետնով գտանեցելով ի 5-րդ մասին Տփխեաց, ընդ սահմանաւ ի հիւսիսային կողմանէ կրպակն իշխ. Գրիգորի Բեկտաբէգովի, յարևելեան կողմանէ Բագրատիօնովեան փողոցն, ի հարաւին ի կողմանէ Էկզարշեսկի հրապարակ. և յարևմտեան կողմանէ խուլ փողոցն: Սոյն կրպակն

[1] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3520, թ. 4:
[2] Նոյնը, թ. 2:
[3] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3519, թ. 7:



նորոգեալ եմ ի տեղի հին կրպակի, զոր թողեալ են եղբարքս ի ժառանգութիւն ըստ բաժանման ակտի ի 17-ն մարտի 1869 ամի թ. 55: Գին նուիրելի կրպակի որոշին 5.000 րուբլի: Ուստի խոնարհաբար խնդրիմ ի կոնսիստորիայէդ ընդունել օրինական ճանապարհաւ զյիշեալ կրպակն յանուն Ս. Նշան եկեղեցւոյ և միաբանութեան, այնու պայմանաւ, զի կառավարութիւն յիշեալ կրպակի լիցի ի ձեռն երեցփոխանի նոյն եկեղեցւոյ. իսկ յարդեանց նորին՝ մի քառորդ մասն գործադրեսցի յօգուտ եկեղեցւոյ, երկու քառորդ մասն յօգուտ միաբանութեան և մէկ քառորդ մասն յօգուտ տիրացուաց և ծառայի յիշեալ եկեղեցւոյ, պարտաւորելով զբոլոր քահանայս այնր եկեղեցւոյ յամենայն կիւրակէս և յաւուրս յիշատակի մեռելոց, յետ Ս. պատարագի, կատարել զհոգեհանգիստ ի վերայ գերեզմանաց ննջեցելոց տան Աբիսոլոմով, որք թաղեալ կան ի գաւթի նոյն եկեղեցւոյ»: **Կարգաւորեցվին**. Առաքմամբ պատճէնից պլանի և բաժանման ակտի յիշեալ կրպակի ի Սինօդդ խոնարհաբար խնդրել զտնօրէնութիւն դորին ըստ 1011 յօդ. 11-րդ հատ. առաջին մասին, յաղագս խնդրելոյ զթոյլտուութիւն ի Բարձրագոյն քաղաքական իշխանութենէ առ ի ընդունիլ զկալուածն զայն ի սեփականութիւն Ս. Նշան եկեղեցւոյ քաղաքիս»[1]:

Հետագայում՝ 1898 թ. հունիսի 22-ին կոնսիստորիան նորից է դիմել սինոդին, խնդրելով՝ «փութացուցանել զտնօրէնութիւն առ յայտարարութիւն սորին ի 26-ն յունուարի տարւոյս»:

1899 թ. հունիսի 9-ին սինոդը որոշել է թույլտվություն խնդրել Կովկասի քաղաքային մասի կառավարչապետից՝ Գրիգոր Աբիսողոմյանի նվիրատվությունը իրագործելու համար: Եվ միայն, 1901 թ. փետրվարի 23-ին է սինոդը ստացել այդ թույլտվությունը:

1899 թ. օգոստոսի 27-ին տեղի է ունեցել Թիֆլիսի հայ հոգևորականության ապահովության գանձարանի վարչության նիստը, որի ժամանակ կարդացվել է կոնսիստորիայի նույն տարվա հուլիսի 19-ի № 2898 գրությունը՝ ուղղված վարչությանը, որով կարգադրվում է. 1) Գանձարանից նպաստ տալու համար – ծերունի և օգնական քահանաներին համարել տեր մեկ բաժնի, որից օգնականը պետք է ստանա իրեն սահմանված մասը, 2) հանգուցյալ քահանաների այրիները և որբերը ստանալու են 2/3 մասը՝ ըստ ընդհանուր սովորության: Նիստը որոշել է գանձարանից նպաստ հատկացնել եկեղեցու հան-

[1] ՀԱԱ, ֆ. 56, ց. 18, գ. 363, թ. 1:

գուցյալ Հակոբ քհյ. Ջառափյանի այրուն[1]:

1900 թ. մարտի 18-ին Ներսիսյան դպրոցի հոգաբարձական խորհուրդը հանդես է եկել հետևյալ հայտարարությամբ.

«Համաձայն կտակի հանգուցեալ Աւետիքայ Փիրոյեանց մարթէ կատարել յաւուր տօնի Աւետեաց զհոգեհանգիստ մասնակցութեամբ քահանայից հետևեալ եկեղեցեաց. - Վանաց, Աւետեաց, Ս. Նշանի, Մողնւոյ, Բեդղեհէմու, Նորաշէնու, Կաթուղիկէի, Ս. Սարգսի, Ծիրանաւորի և Կուսանաց անապատի: Ի նկատի առեալ զի տօնն Ս. Աւետեաց յայսմ ամի լինելոյ է յաւուր աւագ ուրբաթ, ուստի հոգաբարձութիւնս յետաձգեաց կատարումն հոգեհանգստի հանգուցեալ Փիրոյեանցի ի 11-ն ապրիլի տարւոյս յերրորդ աւուր Սուրբ Յարութեան տօնի և զայսմանէ ծանուցանելով կոնսիստորիայիդ, խոնարհաբար խնդրէ զկարգադրութիւն՝ յաղագս սկսանելոյ ժամերգութիւն ի Սուրբ Նշան եկեղեցւոջ ի նշանակեալ աւուրն, այն է՝ ի 13-ն ապրիլի, ի յարմար ժամու, և հրաւիրելով զհոգևորականսն վերոյիշեալ եկեղեցեաց ի կատարումն հոգեհանգստի և այնորիկ առաքել զցուցակ ներկայ եղեալ քահանայից, առ ի տալոյ նոցա ժամնգադրամս»[2]:

Հոկտեմբերի 7-ին եկեղեցում կատարվել է Ներսիսյան հոգևոր դպրոցի ուսուցիչ Հարություն Գևորգյան Ալխազյանի հոգեհանգիստը:

Նոյեմբերի 11-ին եկեղեցում Նորին Մեծություն Թագավոր Կայսրի առողջության համար թեմի առաջնորդ Գևորգ արք. Սուրենյանցը (առաջնորդել է 1894-1904 թթ.) հանդիսավոր պատարագ է մատուցել և մաղթանք կատարել քաղաքի հոգևորականության սպասավորությամբ, իսկ նոյեմբերի 14-ին եկեղեցում հանդիսավոր գոհաբանական մաղթանքներ են կատարվել Նորին Մեծություն Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆեոդորովնայի ծննդյան օրվա կապակցությամբ: Քաղաքն առավոտից զարդարված էր դրոշակներով, իսկ երեկոյան լուսավորված էր: Դեկտեմբերի 6-ին՝ Նորին Մեծություն Թագավոր Կայսր Նիկոլայ Ալեքսանդրովիչի անվանակոչության օրը, Ալեքսանդր Նևսկու զինվորական տաճարում և հայոց Սուրբ Նշան եկեղեցում հանդիսավոր գոհաբանական մաղթանքներ են կատարվել:

1901 թ. հունվարի 14-ին տեղի է ունեցել Շամախու թեմի առաջնորդ Եսայի արք. Աստվածատրյանի թաղումը: Նախորդ օրը երե-

[1] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3735, թ. 7:
[2] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3060, թ. 30:



կոյան հանգուցյալ սրբազանի մարմինը պատշաճավոր թափորով տեղափոխվել է Սուրբ Նշան եկեղեցին, ուր և թաղման օրը տեղի է ունեցել պատարագը և օծումը: Թաղմանը ներկա են եղել թեմի առաջնորդը, մի քանի քաղաքների հաջորդներ և խուռն բազմություն: Մարմինը հողին է հանձնվել Վանքի ավագ եկեղեցու բակում[1]:

Հունվարի 15-ին Վեհափառ Կաթողիկոսի անվանակոչության առթիվ, եկեղեցում թեմի առաջնորդ Գևորգ արք. Սուրենյանցի առաջնորդությամբ և Անանիա եպիսկոպոսի մասնակցությամբ, այստեղ գտնվող վարդապետները և Թիֆլիսի քահանաները մաղթանք են կատարել, այնուհետև ժամը 2-ին ներկայացել են Վեհափառին:

Փետրվարի 8-ին Վարդանանց տոնի առթիվ Սուրբ Նշան եկեղեցում հանդիսավոր պատարագ է մատուցվել, որին ներկա են եղել Վեհափառ Հայրապետը, թեմի առաջնորդը և կուսակրոն հոգևորականներ: Վեհափառը փետրվարի 6-ին նույն եկեղեցում ներկա է եղել նաև Սուրբ Ղևոնդյանց տոնի առթիվ մատուցված պատարագին: Փետրվարի 14-ին եկեղեցում կատարվել է Ներսես Ե Աշտարակեցու հոգեհանգիստը: Պատարագին ներկա են եղել Վեհափառ Կաթողիկոսը, թեմի առաջնորդը, Թիֆլիսի կուսակրոն հոգևորականությունը և քաղաքի հոգևորականներից մի քանիսը:

Նոյեմբերի 29-ին եկեղեցու միաբաններ Գրիգոր քհյ. Շերմազանյանը և Գարեգին քհյ. Առաքելյանը հայտարարություն են ուղղել Թիֆլիսի Հայոց վիճակային կոնսիստորիային, կապված տիկին Ենիկոլոպյանի՝ եկեղեցու միաբանությանը կատարած նվիրաբերության հետ. «Այսու ամենախոնարհաբար խնդրեմք յԱտենէդ շնորհել մեզ զկտրոնս (միոյ) տոմսից վասն անցեալ ժամանակի, նուիրեալ ի Նատալիայէ Էնակոլոփեանց յանուն միաբանից սուրբ Նշան եկեղեցւոյ»[2]:

1901 թ. եկեղեցին ունեցել է 1 տուն՝ եկեղեցու պարսպին կից և 3 սենյակ՝ նախատեսված ուխտավորների համար[3]:

1902 թ. հունվարի 27-ին եկեղեցում կատարվել է Թիֆլիսի տոհմական պատվավոր քաղաքացի Գաբրիել Եգորյան Շաղինյանի հոգեհանգիստը[4]:

Մարտի 20-ին Հովսեփ քհյ. Տեր-Պետրոսյանը գրել է. «Անցեալ կիրակի, մարտի 17-ին, պաշտօնով գտնվեցի Ս. Նշան եկեղեցում:

[1] «Նոր Դար», 1901, 16 հունվարի, Հմր 8:
[2] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3092, թ. 2:
[3] ՀԱԱ, ֆ. 56, ց. 14, գ. 205, թ. 181:
[4] «Մշակ», 1902, 26 հունվարի, Հմր 18:

Առաջին անգամ տեսայ մի համալսարանական երէցփոխ՝ ժողովրդին մոմ ծախելիս: Այդ երէցփոխն է պ. Գաբրիէլ Միրզոյեան: Դեռ մի քանի ամիս է, ինչ պարոնը ստանձնել է երէցփոխական պաշտօնը, և ստանձնել է սիրով, գրաված իր նախորդի, հանգուցեալ Գաբրիէլ Շաղինեանի օրինակելի և արդիւնաւոր պաշտօնավարութիւնից: Ուստի ինձ հաճելի է երկուսին միացնել և ստացած տպաւորութիւնս հաղորդել ընթերցող հասարակութեան, մանաւանդ մեր՝ օրվայ չարիք երէցփոխներին: Ս. Նշանը մի ժամանակ եղել է Թիֆլիսի ամենահարուստ եկեղեցիներից մէկը: Անցեալում նա ոչ միայն հոգացել է իր ընթացիկ ծախսերը, այլ և, ինչպէս երևում է, եկեղեցու հին հաշւեմատեաններից, կարողացել է հազարներ տալ միւս եկեղեցիներին: Սակայն աւերող ժամանակը Ս. Նշանն էլ չքաւոր եկեղեցիների շարքն է գցում. եկեղեցու հարուստ ծխականները ցրվում են, եկամուտները պակասում են, միջոցները չքանում են, այնպէս որ՝ Շաղինեանի երէցփոխութիւնից առաջ, նախավերջին տարին, 1891 թւին, եկեղեցու տարեկան գանձանակը լինում է 8 ր. 91 կոպ., իսկ միւս եկամուտները- կնունքից, պսակից, ննջեցեալից- կազմում են միայն՝ 3 ր. 20 կոպ.: ...հարկաւոր էր մի մարդ, մի համեստ մարդ, հազիւ գրագէտ, մի Գաբրիէլ Շաղինեան, որ իր բարեխղճութեամբ, գործնական պարտաճանաչութեամբ կարողանար Ս. Նշանն աւերող, նրան չքաւոր, անշուք, համարեա խարխուլ եկեղեցի դարձնող, ժամանակի աւերող հոսանքին վերջ դնելու նոր, փայլուն, բարեկարգող, բարեզարդող, վերանորոգող և հարստացնող շրջան, ժամանակ ստեղծել Ս. Նշանի համար և իր համեստ անձի օրինակով ցոյց տալ աշխարհին, հայոց եկեղեցիների տզրուկ երէցփոխներին, թէ ինչպէս կարելի է մինչև իսկ մի աղքատ ժողովրդի ժանգոտած կոպէկներով եկեղեցին պայծառեցնել, այլ և հարստացնել այն ժամանակ, երբ հնարաւոր չէր նկատվում եկեղեցու տարեկան եկամուտը բացի մոմավաճառութիւնից անցկացնել 12 ր. 11 կոպէկից: Տեսէք Գաբրիէլ Շաղինեանին, նա ամեն առաւօտ-երեկոյ եկեղեցի է գնում, մոմը ինքն է դնում և ծախում, կիսայրեալը անձամբ փոխում անվարի հետ. եկեղեցու գանձանակը ինքն է շրջեցնում, եկեղեցու ամեն տեսակ եկամուտները ինքն է ստանում ծխականներից և ժամաւորներից, բոլոր օրինակատարութիւններին ներկայ գտնվելով: Տեսնում են այս ժրաջան մեղուին մարդիկ, թերահաւատները նուէրներ էլ են տալիս, և նա կարողանում է անշուք, կիսակործան եկեղեցին ամբողջովին նորոգել, պայծառացնել, մայր եկեղեցու վայելչութիւն տալ նրան: Այո, Գաբրիէլ Շաղինեանը մի հատիկ երէցփոխ էր մեր աւերող ժամանակում, սակայն մեռաւ և թաղվեց աննկատելի կերպով - յունվարի 27-ին, թողնելով եկեղեցու համար մի պատկառելի գումար - 5-6.000 ր., տնտեսած իր օրով. առաջ էլ ունեցել է 2.000 ր. ընդամենը - 7-8.000 ր.: Նրա օրով, 1900 թ. տպագրած հաշւից երևում է, որ 1899 թ. գանձանակը արդէն հասնում է 98 ր. 47 կոպէկ, իսկ միւս եկամուտները – 8 ր. 20 կոպէկից բարձրանում են 438 ր. 23 կ.: Միթէ սա հրաշք չէ:

Գաբրիէլ Շաղինեանը, ամբողջովին նուիրված լինելով եկեղեցուն, կորցրել էր իր առողջութիւնը: Անցեալ աշնանը նա արդէն զգում էր իր մօտալուտ մահը. այդ նկատելի էր և ամենքին: Բայց մահը ամենևին չէր սարսափեցնում նրան. նրան տանջում էր միայն եկեղեցու՝ արիւն-քրտինքով տնտեսած դրամագլխի ապագայ վիճակը. «Ո՛ւմ ձեռքը պիտի անցնէ արդեօք», հարցնում էր ինձ ամեն պատահելիս: Մէկ անգամ խորհուրդ տուի երկար ժամանակով կայսերական բանկը դնել, որ չը կարողանան ծախսել: Կարծեմ այդպէս էլ արաւ, յետոյ հրաժարվեց պաշտօնից: Իսկ երբ ընտրվեց պ. Գաբրիէլ Միրզոյեանը, հանգուցեալը շատ ուրախացաւ. այնուհետև հանգիստ սպասում էր մահին. նա գոհ էր և համոզված, որ իր սկսած գործը շարունակող կայ: Սրա ջանքով եկեղեցին ունի արդէն եռաձայն ներդաշնակ փոքրիկ խումբ: Ես բոլորովին համոզվեցի, որ Ս. Նշանը բախտաւոր եկեղեցի է:

Պ. Միրզոյեանը մի առանձին սիրով և եռանդով ուսումնասիրում է մեր եկեղեցու ժամակարգութիւնը, արարողութիւնը, խորհուրդները, ծէսերը, գործող օրէնքները, որ կարողանայ նպաստել լուծելու այն հասունացած խնդիրը, որ կոչվում է եկեղեցական բարեկարգութիւն, որքան կախված կը լինի, ի հարկէ, մի գործունեայ երէցփոխից»[1]:

Ապրիլի 2-ին եկեղեցու երեցփոխ Գաբրիել Միրզոյանը խնդրագրով դիմել է վիճակային կոնսիստորիային. «Սուրբ Նշան եկեղեցու պատկանող մի հազար րուբլու տոմսի (№ 31985) լրացել է նոյն թւի մարտի 30-ին: Սրանով պատիւ ունիմ խնդրելու գրել Թիֆլիսի Առևտրական բանկին, որոշեալ գումարը յանձնեն ինձ, որովհետև ամենամոտիկ ապագայում անշուշտ պէտք է վերանորոգել թէ՛ եկեղեցու կաթողիկէն և թէ՛ միւս մասերը, որոնց մասին իր ժամանակին պատիւ կունենամ առանձնապէս զեկուցանել կոնսիստորիայիդ առանձին հրաման վերցնելու այդ վերանորոգութիւնները անելու

[1] «Մշակ», 1902, 27 մարտի, Հմր 67:

համար»[1]: Մեկ ամիս անց՝ մայիսի 2-ին կոնսիստորիայից երեցփոխին պատասխանել են, որ նա պետք է մատուցի կաթողիկեի և եկեղեցու մյուս մասերի նորոգության ծախսերի նախահաշիվը:

Ապրիլի 13-ին Սուրբ Նշան եկեղեցու երեցփոխը հայտնել է նույն եկեղեցու ծխականներին և ժամավորներին, որ թէ՛ առաջիկա տոներին և թէ՛ այնուհետև (բացի ամառային ամիսներից) շարունակ բոլոր պատարագներին երգելու է հատկապես հիշյալ եկեղեցու համար կազմակերպած երգեցիկ խումբը: Այդ խումբը կազմել էր սույն մեծ պասին հանգուցյալ Կարա-Մուրզան, իսկ նրա մահից հետո անմիջապես հրավիրվել էր պարապելու պ. Մամաջանյանը[2]:

1902 թ. մայիսի 8-ին երեցփոխ Գաբրիել Միրզոյանը դարձյալ հայտարարությամբ դիմել է վիճակային կոնսիստորիային՝ եկեղեցու որոշ մասերի վերանորոգման առթիվ. «Համաձայն Կոնսիստորիայի № 1855 գրութեանց, ի լրումն իմ յայտարարութեան պատիւ ունիմ ներկայացնելու առ այժմ այն վերաշինութիւնների նախահաշիւը, որ ամենամօտիկ ապագայում պէտք է անել:

1) Կաթուղիկէի վրայ բուսած խոտերից խոնաւութիւն է առաջացել, ու ներսից սուաղը սկսել է թափուել: Ճարտարապետ Ն. Գրիգորեանի ասելով Կաթուղիկէի դրսից ցինկով (անգլիյսկի ժէստով) ծածկելը կարժենայ մոտաւորապէս 300 ռ.

2) Եկեղեցու բէմը չափից դուրս խոնաւ է, և կարևոր է մօզայիկով ծածկել մօտ 5 սաժէն, որ թէ՛ Անդրիօլլէտոււ և թէ՛ Բագրամեանի նախահաշուով կարժեայ մօտ 100 ռ.

3) Բէմի սանդուխքը նոյնպէս խոնաւ և անյարմար է (4 աստիճան, բարձր). Կարևոր է՝ ինչպէս Թիֆլիսի եկեղեցիներից շատերում, շինել մարմարեայ և 5 աստիճան, պ. Թուշչեանի նախահաշուով 173 ռ.

4) Բէմի առաջին մասը չափազանց տգեղ է և փխրուն դեղին քարերից. նոյնպէս մարմարեայ քարով պէտք է շինել, նոյն Թուշչեանի նախահաշուով 255 ռ.

5) Քահանայական դուռը խոնաւ է, չը նայելով որ ամբողջապէս խալիչաներով է ծածկվում, դարձեալ դժուար է լինում տանել այդ խոնաւութիւնը: Պէտք է ծածկել երկու տակ բէտօնով - կրի և ապա ցէմէնտի, այնուհետև վերևից ծածկել մօզայիկով մօտ 14 սաժէն: Թէ Անդրիօլլէտոււ և թէ Բագրամեանի նախահաշուով 280 ռ.

6) Նոյնպէս չափազանց խոնաւ է եկեղեցու յատակը, քարերից

[1] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3092, թ. 6:

[2] «Նոր Դար», 1902, 13 ապրիլի, Հմր 58:



ջուր է գնում. պէտք է նոյնպէս 2 տակ բէտօն և մօզայիկ շինել մօտ 15 սաժէն - մօտ 300 ռ.:

Այս օրերս հրաւիրելու եմ ճարտարապետներին և միւս կարևոր վերանորոգութիւնների մասին պատիւ կունենամ զեկուցանելու իր ժամանակին»[1]:

Գաբրիել Միրզոյանը մայիսի 22-ին վիճակային կոնսիստորիային ներկայացրել է ծխականների համախոսականը՝ եկեղեցու վերաշինության վերաբերյալ. «Մենք ներքոյ ստորագրողներս, Թիֆլիսի Ս. Նշան եկեղեցւոյ ծխականներս, համաձայն մեր նիստի որոշման, որ կայացաւ ներկայ 1902 թ. մայիսի 19-ին, և համաձայն նոյն նիստի առանձին արձանագրութեան, սրանով տալիս ենք իրաւունք մեր եկեղեցւոյ երէցփոխ՝ Գաբրիէլ Ջոհրաբեան Միրզոյեանին՝ 1) վերաշինել եկեղեցւոյ հաշուով եկեղեցւոյ կաթուղիկէն, տանիքը, յատակը շինել մոզայիկով, սեղանը իր սանդուխքներով շինել մարմարիօնից, աւելորդ պատուհանները փակել, մեծացնել պատուհաններն և դռները, միով բանիւ եկեղեցւոյ այլև այլ մասերի վերանորոգումն անել ըստ իւր բարեհայեցողութեան: 2) Գնել եկեղեցւոյ համար կարևոր իրեր, ինչպէս են շուրջառներ, փորուարներ, գոգնոցներ և այլն, ինչ որ անհրաժեշտ կը համարի եկեղեցւոյ համար ձեռք բերելու» (26 ստորագրություն)[2]:

Հուլիսի 2-ին գործակալ Գրիգորիս քհյ. Երզնկյանը վիճակային կոնսիստորիային գրել է. «Բարեկրօն Գարեգին քահանայն Առաքելեանց և բարեջան երէցփոխանն Ս. Նշան եկեղեցւոյ պ. Գաբրիէլն Միրզոյեան այսօր առանձին գրութեամբ յայտնեցին ինձ, թէ՝ վերանորոգութիւնք եկեղեցւոյ ի ներքուստ, համաձայն թոյլտուութեան Հոգևոր Ատենիդ, ի 1-ն ամսոյս արդէն սկսեալ են. ուստի և դադարեալ են ժամասացութիւնն, որպիսի դրութիւն և՛ շարունակելոց է յընթացս մերոյ ամսոյ՝ մինչ ցաւարտ վերանորոգութեանց: Զայսմանէ այսու յայտարարութեամբս փութամ յայտնել Ատենիդ ի գիտութիւն»[3]:

Սեպտեմբերի 23-ին Գ. Միրզոյանը՝ մտահոգված եկեղեցու վիճակով, վիճակային կոնսիստորիային գրել է. «Սրանով պատիւ ունիմ յայտնելու Ատեանիդ, որ Ս. Նշան եկեղեցւոյ յատակի մի մասը փոխարինելով մօզայիկայով, հին տաշած քարերը աւելացած են, ուստի թոյլտուութիւն եմ խնդրում յիշեալ քարերը վաճառելու եկեղեց-

[1] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3092, թ. 11:

[2] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3092, թ. 14:

[3] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3092, թ. 23:

տոյ բազմաթիւ պակասութիւնները լրացնելու համար»[1]:

1902 թ. դեկտեմբերի 25-ին Թիֆլիսի Ա. մասի գործակատար Գրիգորիս քհյ. Երզնկյանը կազմել է Սուրբ Նշան եկեղեցու այդ տարվա տարեգրությունը. «Զափաբերական մատեանները գրւում են կանոնաւոր, միայն իւրաքանչիւր ամառւայ վերջ արձանագրութիւնները չեն վաւերացրած. հաշուեմատեանը հանգուցեալ երէցփոխան Գաբրիէլ Միրզօյեանցի գործերումն է. դեռ ժառանգներից չէ ստացուած բոլոր հաշուետուութիւնը. այդ կը լինի նոր երէցփոխան ընտրելուց յետոյ, որի մասին արդէն արած եմ կարգադրութիւն. բոլոր տուփերը, ձախակողմեան խորանը և պահարանը կնքած եմ. գործածելի իրեղէնները լուսարար Կոնստանդին Ապրիլեանցի պատասխանատուութեանն է յանձնուած: Այստեղ, որքան նկատել եմ, ոչ մի կարգապահութիւն չկայ – քահանայք շատ անփոյթ են և անհոգ դէպի ժամերգութիւնները – քանիցս անգամ Ջիգրաշէնից քահանայ է կանչուել ժամ ասելու. եկած ժամանակն էլ իրանք չեն հրահանգւում որոշած ժամերով միշտ սկսելով շատ ուշ, ինչպէս և այսօր՝ տարօրինակ և բացառիկ դրութիւն են ստեղծել իրանց անտարբերութեամբ այս քահանայք:

Միաբանութեան կազմում են հետևեալ անձինք. 1) Գրիգոր քահանայ Շերմազանեանցը, որ աւարտել է Ներսիսեան դպրանոցը, կրօնուսոյց է արական ուսումնարանում. 2) Գարեգին քահ. Առաքելեանցը, որ դուրս է եկել Ներս. դպ. 4-րդ դասարանից. Տիրացուքն են. 1) Կոստանդին Ապրիլեանցն, որ իւր աշխատասիրութեամբ եկեղեցւոյ մաքրութեան վերայ լաւ հոգում է. դուրս եկած է Ներսիսեան դպրանոցի 3-րդ դասարանից. 2) Սարգիս Միրունեանց, Տաճկահայաստանի Տարօն գաւառից՝ ուսած Ս. Կարապետի վանքում:

Եկեղեցումն կանանց դասում շարուած էին Վիեննայի աթոռներ՝ եկեղեցւոյ հաշւով գնուած, բոլորը դուրս տանել տուի: Ամառս նորոգուեցաւ եկեղեցւոյ սեղանը՝ մարմարիօնից շինուած: Եկեղեցւոյ կալուածն է ուսումնարանի շինութիւնը, որ անցած է դիրեկցիայի ձեռքը. արևելեան կողմն էլ գտնուում են 2 սենեակներ, որ առաջ 8 ռուբլի վարձ էին բերում, իսկ այժմ դատարկ են և ծառայում են իբրև երգեցիկ խմբի պատրաստութեան տեղ: Արևմտեան կողմն էլ կան 2 սենեակ լուսարարի և ժամկոչի համար»[2]:

Միաժամանակ նշվել է, որ 1902 թ. եկեղեցին ունեցել է 1 տուն՝ եկեղեցու պարսպին կից, և 3 սենյակ՝ նախատեսված ուխտավորների համար: Մայր գումարը կազմել է 8.018 ռ. 29 կ., անշարժ գույքից ստացված եկամուտները՝ 2.225 ռ. 66 կ., ծախսը կազմել է 3.870 ռ. 20 կ.[1]:

[1] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3092, թ. 24:
[2] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 327, թ. 23:



1903 թ. մարտի 5-ին Սուրբ Նշան եկեղեցու երեցփոխի պաշտոնը ստանձնել է Տիգրան Նիկողոսյան Վարդանյանը, քանի որ նախկին երեցփոխն արդեն մահացել էր: Նա հոկտեմբերի 6-ին հայտաբարությամբ դիմել է քաղաքի Ա. մասի եկեղեցիների գործակալին. «Ատենից հրամանի և ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կոնդակի 22 սեպտեմբերի տարւոյս № 1080. Ս. Նշան եկեղեցւոյ գոյքի և դրամների կառավարութեան յանձնելու վերաբերութեամբ պատիւ ունիմ տալու հետևեալ բացատրութիւնս: 4-ն և 5-ն Սեպտեմբերի գրած կոչնագրերով հրաւիրուեցայ կառավարութիւնից նշանակած յանձնաժողովի կողմից Սուրբ Նշան եկեղեցւոյ գաւիթը եկեղեցւոյ ելից և մտից մատեանը, անշարժ կալուածները և դրամները յանձնելու: Այդ առաջարկի դէմ ես այսպէս պատասխանեցի. «Ես պատրաստ եմ Կայսերական հրամանը ամենայն ճշտութեամբ կատարելու այն դէպքում միայն, երբ իմ սեպհականութեանը վերաբերուէր. բայց նախ՝ քանի որ ես ընտրուած եմ ժողովրդից և հաստատուած Հոգևոր իշխանութիւնից միայն նրա համար, որ եկեղեցական գոյքին պահապան լինեմ. քանի որ ես ինձ տէր չեմ համարում եկեղեցւոյ գոյքի, ուրեմն և իմ իրաւունքից բարձր եմ համարում Ձեր այդ առաջարկը կատարել: Երկրորդ՝ մեր եկեղեցւոյ պետը – Ազգիս Ծայրագոյն պատրիարք ամենայն Հայոց կաթուղիկոսը իւր առանձին սրբատառ կոնդակով պատուիրել է մեզ – երեցփոխաններին – ամենևին մասնակցութիւն չունենալ եկեղեցւոյ գոյքի յանձնման և ստացման գործողութեանց մէջ: Ուրեմն և երբ անմիջական տէրը ինձանից առել է այդ իրաւունքը և իւրեան վերապահել, ուստի խնդրում եմ ինձ ազատ կացուցանել որևէ մասնակցութիւնից»: Յանձնաժողովը չ՛կամենալով յարգել իմ այս պատասխանը, կրկին պահանջեց մատեանները, դրամը և առաջնորդել ցոյց տալու եկեղեցւոյ անշարժ կալուածքները: Իմ կրկնակի մերժումից յետոյ յանձնաժողովը ասածներս արձանագրեց առանց իմ ստորագրութեան: Յանձնաժողովը իւր հետ ունենալով պրիստաւը և ոստիկաններ, դիմեց եկեղեցական մի կրպակ և գրաւեց առանց իմ ներկայութեան և մասնակցութեան: Յանձնաժողովի գործունէութիւնը դորանով վերջացած էի համարում, երբ յանկարծ Սեպտեմբերի 15-ին մի կոչնագրով հրաւիրուեցի նահանգապետի դիւանատանը: Այնտեղ նախան-

[1] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3146, թ. 2 շրջ.:

գապետը, ոստիկանապետը, ոստիկանները և յանձնաժողովի բոլոր անդամները միասին ժողոված նորից պահանջել սկսան մատեան և դրամները: Իմ այն պատասխանը, թէ՝ «Վեհափառ Կաթուղիկոսի կոնդակի զօրութեամբ ես իրաւունք չունիմ Ձեզ եկեղեցւոյ գոյքը յանձնելու» և այլն համագեցաւ «Ձայն բարբառոյ յանապատի»: Սպառնալիք սպառնալիքի ետևից. *արատ, բանտարկութիւն, խիստ պատասխանատւութիւն*. և այլն այսպիսի սարսափ ու ահ ու դող ազդող խօսքեր միայն լսեցի: Այդ րոպէին ես զգալով ֆիզիքական ու հոգեկան տկարութիւնս, մտաբերեցի ընտանիքս, որի միակ նեցուկը ես եմ՝ ընկճուեցի, այլևս չըկարողացայ ընդիմանալ և յանձնեցի թէ՛ մատեանքը և թէ՛ արժէթղթերը ըստ այսմ.

1. Արքունի բանկի մի տոմս № 813 տասն ամեայ ժամանակաւ ի 13-ն Ապրիլի 1888 ամի ի գումարաւ մէկ հազար ռուբլի--- 1.000 ռ.

2. Եւ նոյն բանկի մի տոմս № 20507 տասն ամեայ ժամանակաւ ի 10-էն Նոյեմբերի 1894 ամի ի գումարաւ մէկ հազար ռուբլի--- 1.000 ռ.

3. Եւ նոյն բանկի մի տոմս № 179 ի 4-էն Նոյեմբերի 1897 ամի ի գումարաւ մէկ հազար ռուբլի--- 1.000 ռ.

4. մի տոմս Թիֆլիսի Առևտրական բանկի № 38241 ի 16-էն Մայիսի 1903 ամի մէկ ամեայ ժամանակաւ ի գում. երկու հազ. ռուբլի---2.000 ր.

5. մէկ տոմս խաղարկութեան. Ազն. կալ. բանկի սերիի 2632 № 10 արժողութեամբ ի գում. երկու հարիւր ութ ռուբլի և վաթսուն երեք կոպէկ---208 ր.63 կ.

Ընդամէնն - 5.208 ր. 63 կ»[1]:

1903 թ. նշված է, որ եկեղեցին ունեցել է 1 տուն՝ եկեղեցու պարսպին կից, 3 սենյակ և 1 կրպակ[2]: Եկեղեցու գավթում գործել է ուսումնարանը՝ 5 սենյակով և մի նկուղով (հանձնվել է կառավարությանը), միահարկ տուն 2 սենյակով, որտեղ բնակվել են եկեղեցու ստորին ծառայողները, մի սենյակ իր նկուղով, որտեղ բնակվել է եկեղեցու ժամկոչը, 1 կրպակ՝ կտակած Աբխազոմյանից (անցել է կառավարությանը)[3]:

1904 թ. ապրիլի 7-ին, Ներսիսյան դպրոցի նախաձեռնությամբ, Սուրբ Նշան եկեղեցում ըստ սովորականին պատարագ և հոգեհանգիստ է կատարվել դպրոցի բարերար հանգուցյալ Ավետիք Փի-

[1] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2492, թ. 81:

[2] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3909, մաս 1, թ. 115:

[3] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3909, մաս 2, թ. 258:



րոյանի մահվան տարեդարձի օրը: Հոգեհանգստին ներկա են եղել դպրոցի ուսուցիչները և աշակերտները:

Նույն տարում ներկայացվել են եկեղեցու հետևյալ քահանաները[1]. Գրիգոր քհյ. Շերմազանյան – ունեցել է 84 տուն ծխական, Գարեգին քհյ. Առաքելյան – ունեցել է 90 տուն ծխական:

1906 թ. հունվարի 30-ին Տիգրան Վարդանյանը հայտարարությամբ դիմել է վիճակավոր կոնսիստորիային և խնդրել, որպեսզի նշանակվի ծխական ժողով՝ նոր երեցփոխ ընտրելու համար: Նա նշել է, որ ինքն այլևս ժամանակ չունի վարելու հիշյալ պաշտոնը[2]: Ապրիլին կայացած ընտրությունում ծխականները երեցփոխ են ընտրել Գևորգ Տեր-Ջանյանին[3]:

Թեմի առաջնորդ Գարեգին արք. Սաթունյանը (առաջնորդել է 1904-1910 թթ.), հայտարարել է, որ 1906 թ. հունիսի 4-ի առավոտյան ժամը 10-ին նշանակվել է Ներսիսյան դպրոցի 12 հոգաբարձուների և հոգաբարձական խորհրդի պաշտոնավարության ժամանակամիջոցի համար մի ստուգող հանձնաժողովի ընտրություն: Թեմական ընտրողները հրավիրվել են հունիսի 3-ի երեկոյան ժամը 8-ին առաջնորդարան՝ նախապատրաստական ժողովի: Սուրբ Նշան եկեղեցուց ընտրվել են Սարգիս Ծատուրյանը և Գևորգ Տեր-Ջանյանը, իսկ անձնափոխանորդներ՝ Գևորգ Վարդանյանը և Անդրանիկ Պոյաճյանը[4]:

Հուլիսին եկեղեցում կատարվել է ապագա ազգային սահմանադրական ժողովի պատվիրակների ընտրություն: Սուրբ Նշան եկեղեցում, որն ունեցել է առնվազն 1000 երկսեռ ծխական, ընտրության սկզբում ներկա են եղել 17 հոգի, իսկ ընտրություններ կատարելիս՝ 8 հոգի, որոնք 6 ձայնով՝ ընդդեմ 2-ի, ընտրել են պատվիրակ Ե. Թակարբեգյանին՝ ժողովի նախագահին: Գեղեցիկ սեռի ոչ մի ներկայացուցիչ չի եղել[5]:

1906 թ. ներկայացվել է եկեղեցու անշարժ կալվածքների ցուցակը[6].

1. Մի հարկանի շինություն հինգ սենյակով և խոհանոցով ու նկուղով հանդերձ – շինությունը գտնվում է եկեղեցու գավթում և

[1] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 331, թ. 74, տե՛ս նաև գ. 743, թ. 9:

[2] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3092, թ. 41:

[3] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3092, թ. 78:

[4] «Մշակ», 1906, 30 մայիսի, Հ^{մր} 115:

[5] «Կայծ», 1906, 26 հուլիսի, Հ^{մր} 42:

[6] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3185, թ. 30 շրջ.:

հատկացրած է օրիորդական դպրոցին:

2. Մի հարկանի շինություն երկու սենյակով – գտնվում է եկեղեցու գավթում և հատկացված է եկեղեցու ստորին պաշտոնյաների բնակարանի համար:

3. Մի կրպակ Բագրատիոնի փողոցի վրա – տրված է վարձով ամսական 10 ռուբլով:

4. Երկհարկանի շինություն երկու սենյակով – շինությունը գտնվում է եկեղեցու գավթում և հատկացրած է ժամկոչին:

1908 թ. մայիսին եկեղեցուց կաթողիկոսական պատգամավորներ են ընտրվել Բ. Ղանդուրայյանը, Ե. Թավարբեգյանը և Խաչիկյանը[1]:

Սեպտեմբերի 12-ին Թիֆլիսի շրջանային դատարանի երկրորդ քրեական բաժնում քննվել է եկեղեցու երեցփոխ Գևորգ Տեր-Ջանյանի գործը, որը մեղադրվել է եկեղեցու եկամուտներից 5.000 ռ. վատնելու մեջ: Դատարանը նրան մեղավոր ճանաչելով, դատապարտել է մեկ տարի բանտարկության, զրկելով իրավունքներից և վճռել նրանից վերցնել 2.000 ռ. հօգուտ եկեղեցու[2]: Շուտով, եկեղեցու նոր երեցփոխ է ընտրվել Ստեփան Խաչիկյանը:

1908 թ. դեկտեմբերի 25-ին եկեղեցու տիրացուներ Սարգիս Սիրունյանը, Ղուկաս Ղուկասյանը և ժամկոչ Խաչատուր Հակոբյանը խնդրագրով դիմել են Սուրբ Էջմիածնի սինոդին ու ներկայացրել իրենց վատթար վիճակը. «Սրտամորմոք աղերսանօք խնդրում ենք ներել մեզ այն պատճառով, որ մենք անհանգիստ ենք անում Ս. Ատենիդ, և ո՜ւմ դիմել, եթէ ոչ ծայրահեղ դրութեան ժամանակ Գերադաս Ս. Սինհոդոսիդ, մեր թշուառ դրութիւնը արձանագրելով: Մենք ծառայում ենք Ս. Նշան եկեղեցումն, մէկն այժմ Ջրկինիանց Ս. Կարապետ եկեղեցին է անցել: Ս. Նշան եկեղեցւոյ նախկին երիսփոխան Գէորգ Տէր-Ջանիանցն, որին դատարանը, եկեղեցուց մի քանի հազար ռուբլիները կարճ ժամանակում բոլորովին վատնելու համար խիստ պատժի ենթարկեց, մեզ միշտ խաբում էր և ոչ մի կոպեկ ռոճիկ չէր տալիս: Այդ դրութիւնը անցաւ և ներկայ երիսփոխանին, որը չի կամենում մեզ մեր արեան քրտինք թափած կոպեկները եկեղեցւոյ հաշուից վճարելու, պատճառաբանելով, թէ՝ հին հաշիւների հետ գործ չունիմ և կամ – եկեղեցին միջոց չունի, մինչդեռ հեշտ կարող է միջոցը գտնել և փոխարինաբար եկեղեցիներից ստանալ, եթէ ցանկութիւն ունենայ և կամ դիմումն անէ, ծխական ժողովի լիազօրու-

1 «Հայրենիք», 1908, 25 մայիսի, Հմր 6:
2 «Գործ», 1908, 17 սեպտեմբերի, Հմր 5:



թեամբ, մեր այս տեղի ունևոր եկեղեցիներին, որոնցից մի քանիսը իրանց յօժարութիւնը յայտնած ին, եթէ լինի պատշաճաւոր դիմումն: Մեր դառն դրութիւնը յայտնած ենք քանիցս անգամ տեղւոյս սրբազան Առաջնորդին և Կոնսիստորիային, յայտնած ենք և Սրբազան Սինհոդոսիդ, բոլորից եղած են հրամաններ երեցփոխանին՝ մեզ լիովին բաւարարութիւն տալու, բայց և ոչ մէկը հրամանի վրայ ոչ մի ազդեցութիւն չի արել և մարդասիրական գթութիւնը չի շարժել մեր սրտաճմլիկ դրութեան մասին, չնայելով, որ մենք և մեր ընտանիքները, մինչև անգամ սոված, ծարաւ ենք մնացել և բոլորովին մերկ, խեղդուելով բաւականաչափ պարտքի տակ, որը չենք կարողանում ներկայ դժուարին հանգամանքներում վճարել և թէ մեր օրական ապրուստը հայթայթել: Վերջին անգամ ենք դիմում Ձեզ, ով Ս. Հայրեր, մեղք ենք մենք, թշուառ ենք մենք, թշուառ են և մեր ընտանիքները, խղճացէք մեզ բոլորիս վրայ և մի՛ թողուք սովամահ լինելու երիսփոխանի անմարդասիրութեան և անպարտաճանաչութեան պատճառով, որին աւելանում է և միաբան քահանայից անխիղճ սառնութիւնը, որ փողոց են ձգել իրանց թշուառ սպասաւորներին և չեն կամեցել ճնշումն գործ դնել երիսփոխանի վրայ մեր պարտքերը վճարելու, մինչև անգամ այն երրորդական մասից – խանութի հասոյթից, որը ըստ կտակի Արիստոմեանցի մեզ է հասնելու, նոյնպէս և եկեղեցական ուրիշ եկամուտներից մի չնչին մասն մեզ տալու: Երկու կողմն էլ իրար են գտել, երկուսն էլ իրար ձեռք մեկնել և միաբանութեամբ մեր ընտանեաց թշուառութիւն նիւթել:

Սրբազան Սինհոդոսիդ հայրական գթութիւնը և կտրուկ հրամանը վերջնականապէս մեզ հասանելիք ռոճիկները վճարելու համար, կարող են միայն մեզ Ձեր սոված ու ծարաւ որդիներին – մխիթարել և անել դրութիւնից հանել, որը հակառակ դէպքում կարող է այլ և այլ ձախորդ դրութիւնների ծագման պատճառ դառնալ, որպիսին այժմ իւր զսպուած չափաւոր աստիճանի վրայ է գտնւում: Մեր գոյութիւնը պահպանելու համար արդէն սպառուած ենք գտնում մեր մարդկային ամենավերջին ույժն և տոկունութիւնը: Մեզ փրկեցէ՛ք մահից, աղերսում ենք: Երկու ամբողջ տարի չարքաշ տանջանքներից յետոյ այլևս աւելի դիմանալը անկարող ենք, ահա Ձեզ՝ մեր որդիական դառը խոստովանութիւնը»[1]:

1909 թ. հունվարի 10-ին թեմի առաջնորդ Գարեգին արք. Սաթունյանը հայտարարություն է ուղղել սինոդին. «Ի հետևումն առաջադրութեան կառավարչական մասին Սինօդիդ ի 22 դեկտեմբերի

1 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 10686, թ. 2:

անցելոյ ամին № 3212, ի մասին ապառիկ ոռճկաց սպասաւորաց Ս. Նշան եկեղեցւոյն քաղաքիս պատիւ ունիմ յայտնել, եթէ բազմիցս ընդ ձեռն գործակալի պատուիրեցաք վերջաւորել զխնդիրն, սակայն առ ի չգոյէ նիւթական սուղ միջոցի դժուարանայ վճարել երիսփոխան եկեղեցւոյն: Ի վերջին նուագ ի 21 նոյեմբերի անցելոյ ամի № 1080 առաջադրութեամբ պատուիրեալ էր իմ գործակալին վերջաւորել զխնդիրն. երիսփոխան Ս. Նշան եկեղեցւոյն ի վերայ գրութեան գործակալին ի 24 նոյեմբերի № 727 առնէ այսպիսի մակագրութիւն. «Այս գրութիւնը ինձ համար ոչ նորութիւն է և ոչ էլ առաջին անգամն է, դա յայտնի է թէ՛ Ձեզ և թէ՛ Սրբազանին, որ գանձարանում չկայ և ոչ մի կոպէկ. նախկին երիսփոխան պ. Գէորգ Տէր-Զանեանի շնորհիւ, իսկ ինչ վերաբերվում է «տանջել և ձգձգել» խօսքերին – դա ինձ համար միանգամայն վիրաւորական է և անհասկանալի, խնդրեմ ստուգեցէ՛ք հաշիւները, ես ամեն անգամ պատրաստեմ: Ես ինչպէս խոստացայ Սրբազանին անձամբ առաջիկայ կիւրակէ 30-ին նոյեմբերի մասնաւոր ժողով կգումարեմ ծխականներից և կյայտնեմ եկեղեցու դրութիւնը, ինձ կմնայ տալ իմ վերջնական հրաժարականս, որովհետև այլ ևս ուրիշ ելք չկայ, քանի որ անդադար սոյն և նման հրամաններով թէ՛ ձանձրացած իմ և թէ՛ վիրաւորուած»: Եվ այսպիսի պատճառաբանութեամբ խնդիրն մնաց անորոշ. իսկ խնդիր վաւոնման դրամոց Ս. Նշան եկեղեցւոյն յանձնեալ է ի դատաստան քաղաքական իշխանութեան»[1]:

Հունվարի 12-ին Էջմիածնի սինոդը կարգադրություն է ուղարկել Վրաստանի կոնսիստորիային և պահանջել, որպեսզի շուտափույթ վճարվի Սուրբ Նշան եկեղեցու տիրացու Սարգիս Սիրունյանի և այլոց աշխատավարձերը և պահանջել այդ մասին ծանուցանել սինոդին[2]:

1909 թ. եկեղեցին, որպես անշարժ կալվածք, ունեցել է միհարկանի կրպակ Բագրատունովսկայա փողոցում և եկեղեցու թաղում երկհարկանի չորս սենյականոց շինություն՝ նկուղով, որը նախկինում ծխական դպրոցին էր ծառայել և տրվել է 55 ռ. ամսավարձով[3]:

1910 թ. նշվել են եկեղեցու քահանաներ՝ Գրիգոր Շերմազանյանը, Գարեգին Առաքելյանը, դպիրներ Ղուկաս Ղուկասյանը և Հովսեփ Սաղաթելյանը[4]:

[1] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 10686, թ. 7:

[2] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 10686, թ. 6:

[3] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3092, թ. 62:

[4] Գրիգոր ավագ քհյ. Մանդակունի, Դիւան Տփխիսի հայոց եկեղեցիների, Տփխիս,



Մայիսի 31-ին եկեղեցու ծխականները ընտրել են նոր երեցփոխ՝ Եղիշե Հովհաննիսյան Թավարքեզյանին:

1911 թ. փետրվարի 8-ին մահացել է եկեղեցու միաբան Գարեգին քհյ. Առաքելյանի կինը՝ Սոֆիա Առաքելյանը: Թաղումը կատարվել է Շամքորեցոց Սուրբ Աստվածածին եկեղեցուց դեպի Խոջիվանքի գերեզմանատուն:

Հոկտեմբերի 16-ին Սուրբ Նշան եկեղեցում կայացած ընտրությամբ կաթողիկոսական պատգամավոր ընտրող պատվիրակներ են ընտրվել Բարսեղ Ղանդուրայյանը, Եղիշե Թավարքեզյանը և Համազասպ Համբարձումյանը[1]:

1911 թ. դեկտեմբերին Թիֆլիսի հոգևորականների որբերի և այրիների հանձնաժողովի հոգաբարձությունը բացել է եկեղեցու որբապատկան տուփը և հետևյալ գրավոր հայտարարությունն է հղել եկեղեցու միաբաններին. «Հոգաբարձութիւնս Թիֆլիսի հայ եկեղեցիների 1911 թուի որբապատկան գանձանակատփերը բանալով, ի ցաւ սրտի նկատեց, որ Ձեր եկեղեցու գանձանակատուփը բոլորովին դատարկ է և առանց բանալու վերադարձնում է: Մեր կարգակիցների խեղճ և անօգնական որբ և այրիներին օգնութեան պահանջը շատ մեծ է: Եթէ մենք – քահանաներս անուշադիր վերաբերուենք, այն ժամանակ նոքա կը զրկուեն իրենց ստացած չնչին սննդադրամներից ևս: Ուրեմն խնդրում ենք խիստ ուշադրութիւն դարձնէք, որ անընդհատ շրջեցուեն Ս. պատարագին «Հաւատամք»-ի ժամանակ, որով հաւատացած կը լինենք, որ Ձեր եկեղեցուց ևս տարեկան մի քանի րուբլի անպատճառ կստացուեն յօգնութիւն խեղճ և անօգնական հոգևորականների որբ և այրիներին»[2]:

1912 թ. ներկայացվել է եկեղեցու հոգևորականների հետևյալ ցուցակը[3].

1. Գրիգոր քհյ. Հովհաննիսյան Շերմազանյան – հանդիսանում է քաղաքի Ռեալական ուսումնարանի կրոնուսույց և թեմի հոգևորականների որբ և այրիների օգնության կոմիտեի հոգաբարձության անդամ, հոգևորականության դասի մեջ է մտել 1881 թ. հոկտեմբերի 24-ին, 61 տարեկան է, 2. Գարեգին քհյ. Մարկոսյան Առաքելյան – հանդսանում է երդվյալ քահանա դատական ատյանում և Նահանգային դատարանում, հոգևորականության դասի մեջ է մտել 1887 թ.

1910, էջ 16:

[1] «Սուրհանդակ», 1911, 18 հոկտեմբերի, Հ^{իր} 416:

[2] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3535, թ. 6:

[3] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 872, թ. 3:

հուլիսի 27-ին, 55 տարեկան է:

1913 թ. մայիսի 19-ին տեղի է ունեցել Սուրբ Նշան եկեղեցու ծխականների ընդհանուր ժողովը, որը քննել է հետևյալ երկու հարցերը. 1. Երեցփոխի տարեկան հաշիվը և 2. Նոր երեցփոխի ընտրությունը: Ժողովին մասնակցել են 23 ծխականներ (նշվել են բոլորի ազգանունները): Ժողովը բացել է նույն եկեղեցու միաբան Գարեգին քհյ. Առաքելյանը, որից հետո նախագահ է ընտրվել Ս. Խաչիկյանը, իսկ քարտուղար՝ Հ. Համբարձումյանը: Գաղտնի քվեարկությամբ ձայների մեծամասնությամբ երեցփոխ է վերընտրվել նախկին երեցփոխ Եղիշե Թավարբեգյանը, որն էլ իր կողմից խորը շնորհակալություն է հայտնել կատարված ընտրության համար: Իսկ հաշվետեսներ են ընտրվել գեներալ Ջալալյանը, Վարդանյանը և Քացախյանը, որոնց հանձնարարվել է քննել եկեղեցու հաշիվները ու ներկայացնել զեկուցագիր: Ժողովը անդրադառնալով եկեղեցու շինության գործին, լիազորել է եկեղեցական հոգաբարձուներին միանալ կազմված հանձնաժողովին և ըստ իրենց հայեցողության կազմել շինության համար համապատասխան նախահաշիվը, իսկ անհրաժեշտության դեպքում այդ նպատակի համար հրավիրել այլ ձեռնահաս անձանց ու նախահաշիվը ներկայացնել ընդհանուր ժողովին ի տեսություն[1]:

1913 թ. հունիսի 5-ին Գարեգին քհյ. Առաքելյանը հայտարարությամբ դիմել է վիճակային կոնսիստորիային. «Համաձայն Ատենիդ կարգադրութեան և լրագրին տրուած յայտարարութեան, մայիսի 19-ին 1913 թ. սուրբ Նշան եկեղեցւոյ ծխականներից կայացաւ ժողով և վերընտրուեց նախկին երէցփոխ պ. Եղիշէ Թաւարբէգեանցը, իսկ սորա եկեղեցւոյ վերաբերեալ հաշիւները քննելու համար ընտրուեցան. գնդապետ պ. Ջալալեանց, Վարդանեան և Քացախեան: Սորա հետ ներկայացնելով Ատենիդ ծխականների կայացրած արձանագրութիւնը, խնդրում եմ Վիճակային Կոնսիստորիայիդ յիշեալ անձանց հաստատել նոյն պաշտօնների մէջ»[2]:

Հունիսի 10-ին կոնսիստորիան լսելով եկեղեցու միաբան Գարեգին քհյ. Առաքելյանի գրավոր զեկուցումը, որոշել է նախկին երեցփոխ Եղիշե Թավարբեգյանին հաստատել նույն պաշտոնում, իսկ գեներալ Ջալալյանին, Վարդանյանին և Քացախյանին հաստատել որպես եկեղեցու հաշվետեսներ:

1914 թ. մայիսի 25-ին եկեղեցում կայացած ընտրությամբ Ներ-

1 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3433, թ. 41-42:

2 ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3433, թ. 40:



սիսյան դպրոցի հոգաբարձուներ են ընտրվել Հ. Համբարձումյանը և Ս. Խանդալամյանը, իսկ անձնափոխանորդներ՝ Բ. Ամիրաղյանը և Ս. Խաչիկյանը[1]:

1916 թ. սեպտեմբերի 20-ին մահացել է եկեղեցու միաբան Գրիգոր քհյ. Ծերմազանյանը: Նրա դին ամսի 24-ին բնակարանից տեղափոխել են Սուրբ Նշան եկեղեցի, իսկ թաղումը կատարվել է հաջորդ օրը՝ Խոջիվանքի գերեզմանատանը[2]: Գրիգոր քահանայի զավակները՝ բժիշկ Տիգրանը, ճարտարապետ Ռուբենը, ատամնաբույժ Սաթենիկը և օրիորդ Կարինեն խորը կսկիծով ազգականներին և բարեկամներին հայտնել են իրենց հոր անդառնալի կորուստը:

1926 թ. Լենինականում (Գյումրի) տեղի ունեցած երկրաշարժի կապակցությամբ Սուրբ Նշան եկեղեցու միաբանությունում 1927 թ. փետրվարի 7-ին հավաքվել է 42 ռ. և տրվել Վրաստանի Հայոց թեմական խորհրդին՝ աղետյալներին օգնելու նպատակով[3]:

1927 թ. փետրվարի 9-ին Թիֆլիսի թեմական խորհուրդը (անդամ Արշակ ավ. քհյ. Մինասյան, քարտուղար Ս. Հովհաննիսյան) շրջաբերականով դիմել է քաղաքի Սուրբ Նշան եկեղեցու ավագ և միաբան քահանաներին, Ներսես Ե կաթողիկոսի մահվան 70-ամյակի առթիվ Մայր եկեղեցում պատարագ և հոգեհանգիստ անցկացնելու կապակցությամբ ներկա գտնվելու համար[4]: Այդ առթիվ կազմակերպված հանգանակությանը մասնակցել են եկեղեցու միաբաններ՝ Աբրահամ ավ. քհյ. Ղազազյանը, Ղևոնդ երեց Մեհրաբյանը և 25 ծխականներ:

Հայաստանի Ազգային արխիվում պահպանվել է 1929 թ. գործ՝ Թիֆլիսի Սուրբ Նշան եկեղեցու դրության, Վրաստանի և Հայաստանի Ներքին գործերի ժողկոմ Լ. Բերիայի և Ս. Մարգարյանի հետ՝ եկեղեցական հարցերի շուրջը բանակցելու մասին: Վերոհիշյալում ներկայացվել է Սուրբ Նշան եկեղեցու ծխական խորհրդի դիմումը՝ ուղղված Հայոց Գևորգ Ե կաթողիկոսին. «Վրաստանի Ս.Խ.Հ. պետքաղվարչութեան առաջարկով անցեալ 1928 թ. նոյեմբերի սկզբից եկեղեցուս միաբան բարեկրօն Տաճատ քահանայ Տէր-Վարդանեանը վտարուած է Վրաստանի սահմաններից: Որքան նրա բացը զգալի էր եկեղեցուս աղօթաւորների, ծխական Խորհրդիս և միա-

1 «Հորիզոն», 1914, 28 մայիսի, Հմր 113:

2 «Մշակ», 1916, 23 սեպտեմբերի, Հմր 211, տես նաև «Հորիզոն», 1916, 23 սեպտեմբերի, Հմր 212:

3 ՀԱԱ, ֆ. 148, ց. 1, գ. 14, թ. 5:

4 ՀԱԱ, ֆ. 148, ց. 1, գ. 19:

բանութեան համար, առավել ևս այդ զգալի եղավ և վիշտ պատճառեց ծնողեան տօներին: Որովհետև Տաճատ քահանան բացակա լինելով, ծնողեան տօներին չէր կարողացել այցելել և մխիթարել իր հոգևոր հօտին, նրանք պարբերաբար դիմում են Խորհրդիս այս կամ այն անդամին և յաճախ եկեղեցու աւագերէցին, հարցերով - ինչո՞ւ զրկւած են իրենց քահանայից, երբ կվերադառնայ նա, ծխական Խորհուրդը ձեռք առել է արդէօք օրինական միջոցներ նրան վերադարձնելու. և այլն: Մեր պատասխանը, որ սպասում ենք Ձերդ Վեհափառութեան լիազօր ներկայացուցիչ Գերապատիւ Գէորգ արքեպիսկոպոսի բանակցութեան վախճանին, չի բավարարել նրանց և համարեա առանց բացառութեան պահանջ են դրել՝ դիմելու Ձերդ Վեհափառութեան միջնորդութեան, վերադարձնելու մեր սիրեցեալ արժանաւոր քահանային, որին ներկայումս ժամանակաւոր բնակութիւն է վիճակւել Երևան քաղաքում:

Ս. Նշան եկեղեցու ծխական Խորհուրդս ի կատար ածելով եկեղեցու ծխականների ցանկութիւն-պահանջը և կատարելով իր բարոյական պարտքը, այսու դիմելով Ձերդ Ս. Օծութեան Ամենայն Հայոց Հայրապետիդ և եկեղեցու Պետիդ, ամենախոնարհաբար խնդրում է միջնորդել ում անկ է՝ փութացնելու յիշեալ քահանայի վերադարձը Տփխիս, որով ամենամեծ մխիթարութիւնը կպատճառէք մեզ և եկեղեցու ծխականներին առհասարակ»[1]:

Դիմումը ստորագրել են 1929 թ. փետրվարի 1-ին եկեղեցու ծխական Խորհրդի նախագահ Մկրտիչ Բագրատունին և անդամներ՝ Աբրահամ ավ. քհյ. Ղազարյանը, Գևորգ Սիգումյանը և Հայրապետ Տեր-Գրիգորյանը:

Սուրբ Նշան եկեղեցին կնքվել է 1928 թ., բայց 1930 թ. մարտին վերադարձվել է համայնքին[2]: Եկեղեցին վերջնականապես փակվել է 1931 թ. ապրիլին:

1931 թ. մայիսի 3-ին Վիրահայոց թեմի առաջնորդ Արտակ եպս. Սմբատյանցը (առաջնորդել է 1929-1933 թթ.) Վրաստանի հանրապետության կենտրոնական գործադիր կոմիտեին ուղղված բողոքագրում գրել է. «Թեմական խորհուրդը մի քանի անգամ դիմել է ուր հարկն է՝ Խոջիվանքի եկեղեցին վերադարձնելու և Սուրբ Նշան եկեղեցին բանալու միջնորդությամբ, բայց բազմակի միջնորդու-

[1] ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 660:

[2] Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Գ., կազմեց Ս. Բեհբուդյան, Երևան 1997, էջ 526:



թիւնների վերաբերեալ մինչև օրս ոչ մի կարգադրութիւն չի եղել»[1]:

Հայրենական պատերազմի տարիներին եկեղեցին ծառայել է որպես սննդամթերքի պահեստ, իսկ ավելի ուշ՝ վերածվել Ազգային գրադարանի գրապահոցի:

Վրաստանի անկախացումից հետո եկեղեցին հայտնվել է բարձիթողի վիճակում, կից կառուցվել են անօրինական բնակելի շինություններ: Հուշարձանը թեև պահպանվել է պետության կողմից, սակայն անուշադրության հետևանքով ենթարկվել է քայքայման և ավերման:

2002 թ. հոկտեմբերի 20-ի գիշերը եկեղեցու ներսում հրդեհ է բռնկվել, որի հետևանքով թափվել են եկեղեցու ներսի ծեփի շերտերը, որոնք մեծ մասամբ եղել են որմնանկարազարդ: Ի դեպ, այդ աշխատանքները հայ որմնանկարչության 18-19-րդ դդ. եզակի նմուշներ էին:

2007 թ. եկեղեցին ստացել է պատմական հուշարձանի կարգավիճակ և մուտքագրվել Թբիլիսիի պատմական հուշարձանների ցանկում:

Սուրբ Նշան եկեղեցին 2012 թ. հունվարի 3-ին և 7-ին, անհայտ հանգամանքներում, ենթարկվել է իրար հաջորդող երկու նոր հրդեհումների, որի պատճառով փլուզումներ են առաջացել:

2012 թ. հունիսի 11-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի է ունեցել Գերագույն հոգևոր խորհրդի ժողով, որի ընթացքում քննության է առնվել Սուրբ Նշան հայկական եկեղեցու փլուզման խնդիրը: Մայր Աթոռի տեղեկատվական համակարգի փոխանցմամբ՝ ժողովում Գերագույն հոգևոր խորհուրդն ընդունել է հետևյալ հայտարարությունը.

«Ցավով տեղեկացանք, որ հունվարի 9-ին փլուզվել է Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում գտնվող Սուրբ Նշան հայկական եկեղեցու հյուսիսարևելյան հատվածը: Մեծապես անհանգստացած սույն փաստով և նկատի ունենալով Շամխորեցոց Կարմիր Ավետարան և Մողնեցոց Ս. Գևորգ հայկական եկեղեցիների փլուզման նախադեպերը՝ Գերագույն հոգևոր խորհուրդը արտահայտում է իր խոր մտահոգությունը:

Դեռևս 2011 թ. հունիս ամսին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի Վրաստան կատարած հովվապետական այցի ընթացքում Վրաստանի հանրա-

[1] Նույնը, էջ 516:

պետության նախագահ Միխայիլ Սաակաշվիլու և Վրաստանի կաթողիկոս-պատրիարք Իլյա Բ-ի հետ տեղի ունեցած հանդիպումը հայկական կողմին հավաստիացում էր արվել, որ փլուզված և փլուզման վտանգի ենթակա հայկական եկեղեցիների նկատմամբ պատշաճ խնամք և հոգատարություն կդրսևորվի:

Հակառակ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Վիրահայոց թեմի կողմից հնչեցված ահազանգերի՝ վրացական կողմի անուշադրությունը և հապաղումը հրատապ խնդիրների լուծման մեջ, ցավոք, այսօր կանգնեցրել է մեզ տխուր այս իրավիճակի առջև:

Գերագույն հոգևոր խորհուրդը կոչ է ուղղում Վրաստանի իշխանություններին՝ անհապաղ քայլեր ձեռնարկել փրկելու կործանումից Սուրբ Նշան հայկական եկեղեցին, հետամուտ լինել Վրաստանի մշակութային ժառանգության մաս կազմող հայկական սրբավայրերի պահպանությանն ու խնամքին և ընդառաջ Վիրահայոց թեմի խնդրանքին՝ վիրահայությանը վերադարձնել պահանջված հայկական եկեղեցիները»:

2012 թ. հունվարի 11-13-ը Թբիլիսիում էր գտնվում Հայաստանի մշակույթի նախարարության պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության աշխատանքային խումբը՝ գործակալության պետ Սերժիկ Առաքելյանի գլխավորությամբ: Դեռևս հունվարի 13-ին Թբիլիսիի քաղաքապետարանը սկսել էր եկեղեցու ներսի աղբի ու մոխրի մաքրման աշխատանքները: Հայտնի է դառնում, որ վրաց մասնագետները դեռևս 2011 թ. կազմել են եկեղեցու վերականգնման նախահաշվային արժեքը, որը, ըստ նույն վրաց մասնագետների, կազմում է 1 մլն. 400 հզ. լարի, այսինքն՝ մոտ 900 հզ. դոլար: Հայկական կողմը վրացականի հետ, ըստ մշակույթի նախարարության, պայմանավորվածություններ է ձեռք բերել, նախ հուշարձանի անվտանգ պահպանության նպատակով ներսի կիսայրված զանգվածը հեռացնելու, հուշարձանի տարածք մուտք կանխարգելելու, փլված հարավարևելյան սյան վերականգնման աշխատանքները իրականացնելու առնչությամբ:

Ներկայումս Սուրբ Նշան եկեղեցին ամբողջապես փլուզման վտանգի մեջ է և կարոտ վերջնական վերանորոգման: Այն պետք է հանձնվի իր իսկական տիրոջը՝ Հայ Առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմին, որին և պատկանել է դարեր ի վեր:

Ամփոփելով Թբիլիսիի հայկական Սուրբ Նշան եկեղեցու համառոտ պատմական տարեգրությունը՝ եզրակացվում է.

1. Եկեղեցին հայկական աղբյուրներում առաջին անգամ հիշատակվում է 1656 թ., Սուրբ Նշան անվամբ, և մինչ օրս անփոփոխ կրում է նույն անվանումը.

2. Եկեղեցին 1673 թ. Սուրբ Նշան անվամբ հիշատակում է նաև ֆրանսիացի հայտնի ճանապարհորդ Շարդենը.

3. Եկեղեցին, կառուցված լինելով աղյուսից, բազմիցս ենթարկվել է վերանորոգումների, ընդ որում՝ նաև 1703 թ.՝ հիմնովին, և չի փոխել իր Սուրբ Նշան անվանումը.

4. Եկեղեցին իր ամբողջ պատմության ընթացքում պատկանել է Հայ Առաքելական եկեղեցուն և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին: 1703 թ. արձանագրության մեջ նշված է, որ կառուցվել է Նահապետ կաթողիկոսի հայրապետության ժամանակ:

5. Եկեղեցում միշտ քահանայագործել են հայ քահանաներ:

6. Եկեղեցու ծխերը կազմել են Թիֆլիսում բնակվող հայ ընտանիքներ:

7. Եկեղեցին կառուցվել է ուշ միջնադարյան հայ ճարտարապետության հորինվածքով և բնորոշ է ժամանակաշրջանի մի շարք հայկական հուշարձաններին.

8. Թիֆլիսում Սուրբ Նիկողայոս անվամբ եկեղեցի առաջին անգամ հայկական աղբյուրներում հիշատակվում է 1624 թ., որը նույնպես հանդիսացել է հայկական եկեղեցի, և որի տեղադրությունը անհայտ է: Այն հավանաբար կործանվել է 1668 թ. երկրաշարժից և այլևս չի վերանորոգվել.

9. Եկեղեցու Սուրբ Նիկողայոս անվանումը վերաբերում է միայն գլխավոր խորանին և ոչ ամբողջական եկեղեցուն, այլապես 1656 թ. հիշատակարանում կնշվեր նաև Սուրբ Նիկողայոս անվամբ.

10. 1837 թ. վրաց հետազոտող Իոսելիանիի այն կարծիքը, թե իբր՝ 1703 թ. հայերը եկեղեցին հիմնել են նրանից առաջ գոյություն ունեցած վրաց ուղղափառ եկեղեցու տեղում, որևէ պատմական հիմք չունի: Նրա «ավանդաբար ասում են» բառերը ինքնահնար են և զուրկ տրամաբանությունից: Այդ թյուր կարծիքի վրա էլ հիմնվել են հետագա վրաց որոշ ուսումնասիրողները.

11. Եկեղեցին վրացիներին պատկանելու որևէ պատմական փաստ գոյություն չունի:

## ՍՈՒՐԲ ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Ներսես Աշտարակեցու 1848 թ. հունիսի 2-ի կոնդակ-հրամանի համաձայն՝ Թիֆլիսի հայկական 6 եկեղեցիներին կից բացվել են ծխական դպրոցներ[1]: Դրանց թվում է եղել նաև Սուրբ Նշան եկեղեցու դպրոցը, որը, հավանաբար, բացվել է 1848-ի աշնանը կամ 1849 թ.: Համենայն դեպս, հաստատապես հայտնի է, որ 1850 թ. այն գործել է:

Ս. Մալխասյանը այս դպրոցը հիշատակել է 1862-ին Թիֆլիսում գործած հայ դպրոցների շարքում:

Սուրբ Նշան եկեղեցու ծխական դպրոցը 1873-ին և 1875-ին ևս գործել է՝ ունենալով ընդամենը 18 աշակերտ և 2 ուսուցիչ[2]:

1875 թ. ապրիլին դպրոցի հոգաբարձուներն են եղել Տեր Ղևոնդ Խարազյանը և Գ. Աքիմյանը: Հաջորդ տարվա սկզբին դպրոցը գործել է վարժապետ Հարություն Շահնազարյանի ղեկավարությամբ:

1893 թ. վերջում բժիշկ Վ. Արծրունու նախաձեռնությամբ եկեղեցիներին կից մի քանի դպրոցներում հիմնվել էին փոքրիկ դպրոցական դեղարաններ, որոնք բաղկացած են եղել ամենաանհրաժեշտ և անվնաս դեղերից: Դեղերը պահվել են փոքրիկ գեղեցիկ պահարաններում, որի բանալիները հանձնված են եղել ուսուցիչներից մեկին, ու դեղերը տրվել են աշակերտին՝ բժշկի խիստ հսկողության ներքո: Բժիշկ Արծրունին շաբաթը մեկ անգամ, որոշյալ օրերին, այցելել է այդ դպրոցները և խնամել հիվանդ երեխաներին: Այդպիսի դպրոցական մի դեղարան էլ հիմնվել էր Սուրբ Նշան եկեղեցու դպրոցում[3]:

## ՍՈՒՐԲ ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՕՐԻՈՐԴԱՑ ԵՐԿԴԱՍՅԱՆ ԴՊՐՈՑ

Ըստ «Մեղու Հայաստանի» լրագրի՝ 1868 թ. Թիֆլիսի հայոց Սուրբ Նշան եկեղեցուն կից գործել է տիկին Տեր-Գրիգորյանի բացած ծխական օրիորդաց դպրոցը, ունենալով 65 աշակերտուհի[4]: Այս

[1] Ս. Խուդոյան, Արևելահայ դպրոցները 1830-1920 թթ., Երևան, 1987, էջ 593:

[2] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3983, թ.20:

[3] «Մշակ», 1894, 1 հունվարի, Հմր 1:

[4] «Մեղու Հայաստանի», 1869, Հմր 14:



դպրոցը գործել է մինչև 1873 թ.[1]: 1883 թ. եկեղեցուն կից բացվել է Հայ կանանց միության օրիորդաց նոր դպրոց[2]: Այն բացվել է եկեղեցու ծխականների ցանկությամբ և Թիֆլիսի Հայ կանանց բարեգործական ընկերության կողմից. պահվել է այդ ընկերության միջոցներով: Ընդունվել են գերազանցապես չքավոր ընտանիքների աղջիկներ, որոնց համար ուսումը եղել է ձրի: Նրանց անվճար տրվել են նաև դասագրքեր ու ձեռագործի պարագաներ, ինչպես նաև սնունդ:

1883 թ. նոյեմբերի 19-ին նշվել է, որ եկեղեցու ծխական ուսումնարանում ուսանում են 20 աշակերտուհիներ՝ անվճար հիմունքներով: Այդ ուսումնարանին մեծ աջակցություն է ցուցաբերել Թիֆլիսի Հայուհյաց Բարեգործական ընկերությունը, որը գոյություն ուներ ընդամենը 2 տարի[3]:

Առաջին տարին դպրոցն ունեցել է երկու, իսկ հաջորդ՝ 1884-1885 ուս. տարում՝ 3 բաժանմունք:

1883 թ. դեկտեմբերի 11-ին, թեմի առաջնորդ գեր. Արիստակես սրբազանի և բազմամարդ հասարակության ներկայությամբ, կատարվել է Հայուհյաց Բարեգործական ընկերության հսկողությանը հանձնված Սուրբ Նշան եկեղեցու ծխական օրիորդաց ուսումնարանի բացման և օրհնության հանդեսը: Պատարագից հետո հոգևորականությունը և հասարակությունը հավաքվել են Սուրբ Նշան եկեղեցուց ոչ հեռու գտնվող օրիորդական դպրոցի շինության մեջ, ուր հոգևորականությունը օրհնել է ուսումնարանի շինությունը, որից հետո Հայուհյաց Բարեգործական ընկերության նախագահ տ. Երիցյանը դիմել է հասարակությանը հետևյալ խոսքերով. «Ձերդ սրբազնութիւն և մեծաշուք հանդիսականք. Հայուհեաց Բարեգործական ընկերութեան կանօնադրութեան Բարձրագոյն կառավարութիւնից հաստատման օրից, մենք ամենայն կերպով աշխատել ենք ընկերութեանս թէ՛ նիւթական և թէ՛ բարոյական վիճակը բարւոքելու: Այսօր մենք ուրախութեամբ ցոյց ենք տալի մեր նպատակի մասամբ իւիք իրագործումը: Այս ուրախութիւնը մենք պարտական ենք նորին սրբազնութեան, որովհետև երբ Ս. Նշան եկեղեցու անունով ծխական ուսումնարան բանալու խնդիր ծագեց, և սրբազանը տեղեակ լինելով արդէն մեր ընկերութեան մտադրութեանը՝ օգնել մի որ և իցէ ուսումնարանին իր նիւթական միջոցներով, բարեհաճե-

[1] «Մեղու Հայաստանի», 1873, Հմր 9:

[2] Ս. Խուդոյան, նույնը, էջ 561, 593-594:

[3] «Մշակ», 1883, 19 նոյեմբերի, Հմր 179:

ցաւ հրաւիրել մեզ և յանձնել այդ ուսումնարանը մեր հսկողութեանը, յայտնելով մեզ մի և նոյն ժամանակ, համաձայն Ս. Նշան եկեղեցու ծխականների ցանկութեան, յատուկ ուշադրութիւն դարձնել տնտեսագիտութեան և ձեռագործի վրա, որով կարելի լինի գոնէ մի քանի չքաւոր օրիորդներին միջոց տալ իրանց ապահովելու: Այո, այսօր յայտնում ենք մեր խորին շնորհակալութիւնը սրբազան հօրը, որ մեզ քաջալերելով խոստացաւ անընդհատ իր հովանաւորութիւնը, որը կը յուսանք մի գեղեցիկ գրաւական է գործիս յարատեւութեան և յաջողութեան: Խնդրում ենք նոյնպէս յարգոյ հասարակութիւնից, այսուհետև ևս չը զրկել ընկերութիւնս իր օգնութիւնից, որովհետև ձեզ յայտնի է, որ առանց այդ օգնութեան մեր նորաբողբոջ ընկերութեան գործունէութիւնը չէ կարող ընդլայնամալ և ընդարձակվել»: Տիկնոջ ճառից հետո խոսել են ուսուցիչ պ. Սիմոնյանցը և հայր Շերմազանյանը: Այնուհետև սրբազան առաջնորդն ասել է հետևյալը. «Կովկասի հայ տիկինները իրանց հասարակական գործունէութեամբ բաւական յետ էին մնացել իրանց տաճկահայ քոյրերից, բայց այժմ ես յոյս ունեմ, որ Հայուհեաց Բարեգործական ընկերութիւնը այնքան կը յառաջադիմէ, որ կը տարածէ իր գործունէութիւնը ոչ թէ միայն Թիֆլիսում, այլ և գաւառներում»: Նա ցավ է հայտնել, որ Սուրբ Նշան եկեղեցին ուսումնարանի համար մի հարմարավետ շենք չունի և խոստացել, որ հասարակության օգնությամբ կաշխատի մի տուն կառուցել ուսումնարանի համար: Վերջացնելով խոսքը՝ սրբազանը օրհնել է Հայուհյաց ընկերության անդամներին և հասարակությանը, որով և ավարտվել է հանդեսը[1]:

1885-ի հունվարին ուսումնարանը փակվել է և վերաբացվել՝ 1886-ին՝ Սուրբ Նշան եկեղեցու գավթում կառուցված նոր շենքում:

1885 թ. մարտի 31-ին Գայանյան ուսումնարանի դահլիճում թեմի առաջնորդ Արիստակես եպիսկոպոսի նախագահությամբ կայացել է Հայուհյաց Բարեգործական ընկերության ընդհանուր ժողովը, որին ներկա է եղել 33 անդամ: Ժողովում վարչության նախահաշիվը ներկայացնելուց հետո նրա անդամ Սրբուհի Երիցյանը ներկայացրել է վարչության միամյա գործունեության տեղեկագիրը, որում նշվել է այն մեծ ուշադրությունը, որ դարձվել է Սուրբ Նշան եկեղեցու օրիորդաց դպրոցի առաջադիմությանը: Դեռևս սեպտեմբեր ամսին վարչությունը ընդարձակել էր դպրոցը՝ ընդունելով ևս 10 աշակերտուհու, դրանով նրանց ընդհանուր թիվը հասցնելով 30-ի:

Թեև վարչությունը 1884 թվին ստացել էր ընդհանուր ժողովի

[1] «Մշակ», 1883, 13 դեկտեմբերի, Հ[Վ] 195:



համաձայնությունը՝ ընկերության գումարից 2.000 ռ. գործադրել Սուրբ Նշան եկեղեցու գավթում մի դպրոցական շինություն կառուցելու համար և սրբազան առաջնորդի հրամանով ստացել էր այդ գործի համար Սուրբ Նշան եկեղեցուց 2.000 ռ. և մասնավոր անձանցից՝ 160 ռ., սակայն դպրոցի շինարարությունը սկսվել է միայն 1885 թ. փետրվարին:

Վարչությունը շնորհակալություն է հայտնել բժշկապետ Դավիթ Օրբելուն, որը ձրիաբար շաբաթը մի անգամ այցելել է եկեղեցու դպրոց և իր խորհուրդներով նպաստել աշակերտուհիների առողջապահությանը, նաև արժ. Հովսեփ ավ. քհյ. Օրբելուն, որը Վարչությանը նվիրել է իր «Քրիստոնէական նախաշաւիղ» գրքի 50 օրինակ, Մարկոս Դոլուխանյանին և Նիկողայոս Մեղվինյանին, որոնք նվիրել են «Աղբիւր» ամսագրի տարեկան օրինակներից, ինչպես նաև Ներսիսյան Հոգևոր դպրանոցի հոգաբարձությանը և բոլոր այն անձանց, որոնք նպաստել են իրենց օժանդակություններով[1]:

1886 թ. հոկտեմբերի 19-ին Սուրբ Նշան եկեղեցում, հանդիսավոր պատարագից հետո, օրհնվել է եկեղեցու բակում «Թիֆլիսի Հայուհեաց Բարեգործական ընկերութեան» հաշվով կառուցած օրիորդական դպրոցի գեղեցիկ շենքը, որը չորս սենյակից է բաղկացած եղել: Սենյակներից երկուսը հատկացվել են դասարաններին, մեկը ծառայել է որպես դահլիճ, իսկ մյուսը՝ ուսուցչական սենյակ: Դասարաններում շարված աշակերտական նստարաններն ու սեղանները ընծայել է Գայանյան օրիորդական դպրոցը: Դասարանի պատերը զարդարված են եղել բավականին լավ պատկերներով: Օրհնության հանդեսի վերջանալուց հետո ընկերության անդամները հանդիսականների ներկայությամբ հավաքվել են ուսումնարանի դահլիճում, որտեղ ընկերության անդամներից մեկը ելույթ է ունեցել իրենց նպատակների և գործունեության մասին[2]:

Հայուհյաց Բարեգործական ընկերությունը դպրոցի շինության համար, չնայած իր սուղ միջոցներին, ծախսել էր ավելի քան 6000 ռ.:

Հաջորդ տարի ցանկացել են բացել զուգընթաց մի դասարան, քանի որ դպրոցի շինությունը եղել է շատ փոքր: Այդ նպատակով մարտի 15-ին կայացած ժողովում որոշվել է նորից 500 ռ. հատկացնել վարչությանը՝ եկեղեցու գավթում գտնվող մեկ ուրիշ սենյակ փոքր-ինչ կարգի բերելու համար՝ այնտեղ զուգընթաց դասարան

[1] «Մեղու Հայաստանի», 1885, 18 ապրիլի, Հ[Վ] 29:

[2] «Նոր Դար», 1886, 22 հոկտեմբերի, Հ[Վ] 178:

բացելու նպատակով[1]:

1887 թ. մարտի 15-ին Հայուհյաց Բարեգործական ընկերության ժողովում կարդացվել է վարչության կազմած նախահաշիվը 1887 թ. մարտի 1-ից մինչև 1888 թ. մարտի 1-ը: Նախահաշվով դպրոցի պահպանության համար նախատեսվել է 2.282 ռ., չքավոր անձանց և ընտանիքներին բաժանելու համար՝ 500 ռ.: Նշված է, որ դպրոցում երգեցողությունը ձրիաբար դասավանդել է Եզնիկ քհյ. Երզնկյանը, ռուսաց լեզուն՝ Վարվառե Միրիմանյանը և գծագրությունը՝ Նիկողայոս Գրիգորյանը[2]:

1887 թ. մարտի 22-ին օրիորդաց դպրոցում Արիստակես եպս. Սեդրակյանի հրավերով կազմակերպվել է կանանց ժողով, որը եղել է բազմամարդ:

1888 թ. սեպտեմբերին կայացել է օրիորդաց դպրոցի երկրորդ բաժնի բացումը, որին ներկա են եղել հոգաբարձուներ, Հայոց Բարեգործական ընկերության անդամներ, աշակերտուհիներ և ծնողներ: Այդ դպրոցը գտնվել է Սերգիևսկի փողոցում՝ Շահպարոնյանի տանը: Այդտեղ կարող էին ընդունվել այն աշակերտուհիները, որոնք ավարտել էին ուսումնարանի առաջին բաժանմունքը[3]:

1888 թ. հոկտեմբերի 10-ին դպրոց է այցելել Մակար Ա Թեղուտցի կաթողիկոսը: Վեհափառին դիմավորել են Հայուհեաց Բարեգործական ընկերության վարչության անդամները, փոխանդամները և դպրոցի ուսուցչուհիները: Թեմի առաջնորդ Արիստակես եպս. Սեդրակյանը, որը միաժամանակ ընկերության պատվավոր նախագահն էր, Վեհափառին ներկայացրել է ընկերության վարչության ատենապետուհուն՝ իշխանուհի Կատարինե Բեհբուդյանին, որն էլ ներկայացրել է վարչության անդամներին, փոխանդամներին, դպրոցի ավագ վարժուհուն և վարժուհիներին: Նորին Սուրբ Օծությունը մուտք է գործել դպրոցի դահլիճ, որտեղ շարված աշակերտուհիները երգել են «Բարէ» երգը: Երգեցողությունից հետո դպրոցի ավագ վարժուհի օրիորդ Վարվառե Ջոհրաբյանը Վեհափառին ներկայացրել է ավարտող աշակերտուհիներին, որոնք ընկերության առանձին հիմնած կար ու ձևի դպրոցում շարունակել են իրենց ուսումը[4]:

1 «Մշակ», 1887, 2 ապրիլի, Հմր 36:
2 «Մշակ», 1887, 31 մարտի, Հմր 35:
3 «Արձագանք», 1888, 27 սեպտեմբերի, Հմր 37:
4 «Արձագանք», 1888, 16 հոկտեմբերի, Հմր 40:



1889 թ. հոկտեմբերի 15-ին եկեղեցու Հայուհյաց Բարեգործական ընկերության վարչությունը կատարել է հանգուցյալ բարերարների հոգեհանգիստը և նույն եկեղեցու ուսումնարանն ավարտող աշակերտուհիների պարգևատրման հանդեսը: Հոգեհանգստին և հանդեսին ներկա է եղել թեմի առաջնորդը: Հանդեսը սկսվել է «Տէ՛ր, պահեա՛ զԿայսեր մեր» ռուսական հիմնով, որը երգել է աշակերտուհիների երգեցիկ խումբը: Այնուհետև ուսումնարանի տեսչուհին ներկայացրել է հաշվետվություն ուսումնարանի ուսումնական գործերի մասին, տեղեկություններ է տվել ուսուցիչների և աշակերտների թվակազմի մասին, որից հետո ավարտող աշակերտուհիներին հանձնել է ավարտման վկայական և Ավետարաններ[1]:

Պահպանվել է ուսումնարանի 1889/90 ուս. տարվա աշակերտուհիների առաջադիմության մասին զեկուցագիրը: Այնտեղ գրված է. «1889/90 թ. սեպտեմբերի 1-ից Տփխիսի Սուրբ Նշան եկեղեցւոյ Օրիորդական միդասեան դպրոցի *առաջի պատրաստականում* կար 23 հոգի՝ Առաքելեան Մարիամ, Աւետիքեան Սրբուհի, Բադալեան Նունէ, Բոյաղչեան Ովսաննա, Բէգիջանեան Եւա, Գրիգորեան Կատարինէ, Դիմուրեան Վառվառա, Դաւթեան Հեղինէ, Զաքարեան Նունէ, Իսկանդարեան Աննա, Խոջայեան Քալիա, Խոսրովեան Հռիփսիմէ, Ղարիբեան Նատալիա, Մայիլեան Եփեմիա, Մարգարեան Հռիփսիմէ, Շուբալեան Սրբուհի, Ոսկանեան Նունէ, Սիրովբեան Հռիփսիմէ, Սահակեան Հռիփսիմէ, Տէր-Թովմասեան Վառվառա, Տէր-Յովհաննիսեան Ֆլօրա, Տէր-Ալէքսանդրեան Գայիանէ և Քոլայեան Նունէ:Սոցանից տարուայ ընթացքում դուրս գնացին երկու հոգի՝ Խոսրովեան Հռիփսիմէ և Մարգարեան Հռիփսիմէ: *Երկրորդ բաժանմունքում* կար 16 հոգի՝ Անանեան Կատարինէ, Բաժբէուք-Մելիքեան Վառվառա, Բաղդասարեան Ովսաննա, Դադալեան Հռիփսիմէ, Դաւթեան Նունէ, Եդիգարեան Թագուհի, Երեմեան Նունէ, Ղազարեան Աննա, Ղորղանեան Մարիամ, Ղուկասեան Եղիսաբէթ, Մելքումեան Գայիանէ, Յարութիւնեան Արուսեակ, Յարութիւնեան Սրբուհի, Տէր-Ղազարեան Գայիանէ, Տէր-Մկրտչեան Եւա և Ֆրանգուլեան Սրբուհի: Սոցանից դուրս գնացին երկու հոգի՝ Բաղդասարեան Ովսաննա և Յարութիւնեան Սրբուհի: *Երրորդ բաժանմունքում* կար 14 հոգի՝ Աղոյեան Հռիփսիմէ, Անանեան Նատալիա, Աւշարեան Նունէ, Դիլանեան Շուշանիկ, Եդիգարեան Կատարինէ, Խոխոբեան Մարիամ, Մալումեան Նատալիա,

1 «Նոր Դար», 1889, 17 հոկտեմբերի, Հմր 172:

Մանուկեան Մարիամ, Շալումեան Եփեմիա, Չմշկեան Գայիանէ, Չալաբեան Ովսաննա, Պօղոսեան Շուշանիկ, Սարգսեան Նատալիա և Ֆիրջանեան Նունէ: Սոցանից դուրս գնացին երեք հոգի՝ Աղրոյեան Հռիփսիմէ, Չալաբեան Ովսաննա և Ֆիրջանեան Նունէ:

Տարուայ վերջում այս ուսումնարանում կար 46 հոգի: Հարցաքննութիւններից յետոյ _առաջին բաժանմունքից_ անցան երկրորդ բաժանմունքը առանց վերաքննութեան Բէգիջանեան Եւա, Բոյաղչեան Ովսաննա, Գրիգորեան Կատարինէ, Զաքարեան Նունէ, Խոջայեան Քալիա, Շուբալեան Նունէ, Սերովբեան Հռիփսիմէ, Տէր Ալէքսանդրեան Գայիանէ և Քուլայեան Նունէ, իսկ վերաքննութեամբ՝ Մայիլեան Եփեմիա ռուսաց լեզուից, Դիմուրեան Վառվառա ռուսաց լեզուից և թուաբանութիւնից: Անպայման մնում են դասարանը՝ Առաքելեան Մարիամ, Աւետիքեան Սրբուհի, Դաւթեան Հեղինէ, Իսկանդարեան Աննա, Ղարիբեան Նատալիա, Սահակեան Հռիփսիմէ, Տէր-Թովմասեան Վառվառա, Տէր-Յովհաննիսեան Ֆլօրա: Արձակվում է ուսումնարանից երրորդ տարին միևնոյն դասարանում մնալու համար Բաղալեան Նունէ: _Երկրորդ բաժանմունքից_ անցնում են երրորդ բաժանմունք՝ Բաժբէուք-Մելիքեան Վառվառա, Եղիգարեան Թագուհի, Երեմեան Նունէ, Ղորղանեան Մարիամ, Մելքումեան Գայիանէ, Յարութիւնեան Արուսեակ, Տէր-Մկրտչեան Եւա և Ֆրանգուլեան Սրբուհի: Վերաքննութեամբ՝ Անանեան Կատարինէ՝ ռուսաց լեզուից, Դաղալեան Հռիփսիմէ, Ղազարեան Աննա, Ղուկասեան Եղիսաբէթ և Տէր-Ղազարեան Գայանէ՝ ռուսաց լեզուից և թուաբանութիւնից: Մնում է դասարանը Դաւթեան Նունէ: _Երրորդ բաժանմունք_ աւարտում են և ստանում են վկայագիր տասը հոգի՝ Անանեան Նատալիա, Աւշարեան Նունէ, Դիլանեան Շուշանիկ, Եղիգարեան Կատարինէ, Խոխոբեան Մարիամ, Մալումեան Նատալիա, Շալումեան Եփեմիա, Չմշկեան Գայիանէ, Պօղոսեան Շուշանիկ և Սարգսեան Նատալիա: Մնում է Մանուկեան Մարիամ»[1]:

1891 թ. մարտի 31-ին եկեղեցու ուսումնարանի դահլիճում նշանակված է եղել Հայուհյաց Բարեգործական ընկերության անդամների ընդհանուր ժողով, որը սակայն չի կայացել անդամների մեծամասնության բացակայության պատճառով: Այդ համակրելի ընկերությունն իր կարճ ժամանակյա գոյության ընթացքում մեծ ծառայություններ է կատարել հայ իգական սեռի կրթության գործում[2]:

[1] ՀԱԱ, ֆ. 637, ց. 1, գ. 5, թ. 1-1 շրջ., բնագիր, ձեռագիր:

[2] «Տարազ», 1891, էջ 179:



1894 թ. մարտի 9-ին թեմի առաջնորդը այցելել է Սուրբ Նշան եկեղեցու ուսումնարան[1]:

Ապրիլի 23-ին Սուրբ Նշան եկեղեցու ծխական դպրոցի դահլիճում տեղի է ունեցել Հայուհիների Բարեգործական ընկերության ընդհանուր ժողովը, որին մասնակցել են մոտ 60 անդամուհիներ: Կանոնադրության համաձայն, ժողովը պետք է նախագահեր թեմական առաջնորդը, բայց նա չի կարողացել ներկա լինել, և նիստի նախագահ է ընտրվել տ. Բաբայանը: Նախորդ տարվա հաշիվը հաստատելուց հետո ժողովը քննել և հաստատել է ընթացիկ տարվա նախահաշիվը: Մուտք նախահաշվված է եղել 6.550 ռ., ծախս՝ 6.122 ռ., որից 3.688 ռ.՝ կար ու ձևի դպրոցի համար, 2.424 ռ.՝ Սուրբ Նշան եկեղեցու դպրոցի և այլ մանր ծախսերի համար: Ժամանակը ուշ լինելու պատճառով՝ ընտրությունները հետաձգվել են[2]:

1895 թ. հունվարի 5-ին օրիորդաց դպրոցում տեղի է ունեցել մանկական հանդես, որն սկսվել է «Տէ՜ր, պահեա՜ զԿայսրն» օրհներգով: Այնուհետև բեմ է բարձրացել մի աշակերտուհի և աչքերը հառած հայոց Հայրիկի խորհրդավոր լուսանկարին՝ հիանալի և ազդու կերպով արտասանել է ոտանավոր՝ ձոնված Հայրիկին, ու հանդիսականներից շատերի աչքերից արտասուքի կաթիլներ են ցոլացել: Տպավորությունը կրկնապատկվել է, երբ բեմի ետևից լսվել են «Հայրիկ, Հայրիկ» երգի ներդաշնակ ձայները: Ելույթ է ունեցել երգեցիկ խումբը, որն առանձնակի փայլ է տվել հանդեսին: Հանդեսի վերջում վարժուհիները սուրճով և քաղցրավենիքով հյուրասիրել են հանդիսականներին, իսկ աշակերտուհիներին բաժանել են քաղցրավենիք և ընծաներ: Այնուհետև սկսվել են պարերը. պարել են եվրոպական և ասիական պարեր: Հանդեսը վերջացել է ժամը 1-ին[3]:

Ապրիլի 7-ին դպրոցի դահլիճում տեղի է ունեցել Հայուհյաց Բարեգործական ընկերության տարեկան ընդհանուր ժողովը: Ընկերությունը 1894 թ. ընթացքում ունեցել է մուտք 21.658 ռ. 65 կ., որից 15.195 ռ. 56 կ. մնացորդ է եղել 1893 թ.: Ժողովում որոշվել է բացել դպրոցի 5-րդ բաժանմունքը[4]:

Մայիսի 14-ին Հայուհյաց Բարեգործական ընկերության վարչության նախաձեռնությամբ եկեղեցում կայացել է ընկերության երջանկահիշատակ բարերարների համար հոգեհանգիստ: Պա-

[1] «Նոր Դար», 1894, 11 մարտի, Հմր 42:

[2] «Մշակ», 1894, 26 ապրիլի, Հմր 46:

[3] «Նոր Դար», 1895, 14 հունվարի, Հմր 8:

[4] «Մշակ», 1895, 8 ապրիլի, Հմր 39:

տարագին ներկա են եղել ընկերության անդամուհիները, Սուրբ Նշանի օրիորդաց դպրոցի սանուհիները իրենց ուսուցիչներով և ուսուցչուհիներով: Պատարագին երգել է դպրոցի երգեցիկ խումբը Մ. Խաչատրյանի գլխավորությամբ: Հոգեհանգստից հետո տեղի է ունեցել դպրոցի 1894-1895 ուս. տարվա տարեկան հանդեսը: Ապա դպրոցի ավագ ուսուցչուհի օր. Նունե Փրիդոնյանը կարդացել է ուսումնական մասի մանրամասն հաշիվը: Նա հիշել է Հայոց Հայրիկի այցելությունը Սուրբ Նշանի դպրոց և նրա բարեմաղթանքները: Այնուհետև կրոնուսույց արժ. հայր Զարդեղյանը խոսել է ուսման նշանակության մասին և նշել, որ անհրաժեշտ է 5-րդ բաժանմունքը բացել, որի համար հարկավոր է նվիրատվություն կատարել և իր կողմից նա մի համեստ գումար է նվիրել: Այնուհետև հայոց լեզվի ուսուցիչ Ս. Սահակյանը դիմելով ավարտող սանուհիներին, հիշեցրել է նրանց պարտականությունները դեպի դպրոցն ու ընտանիքը, և հորդորել, որ զգույշ քայլերով ոտք դնեն կյանքի փշոտ ասպարեզի վրա: Վերջում վարչության ատենապետուհի տ. Ս. Բաբայանը վարչության կողմից խրախուսել է ուսուցիչների եռանդը և աշակերտուհիների աշխատանքը: Շրջանավարտները, որոնք թվով 12 էին, ստացել են իրենց վկայականները և մեկական փառակազմ Ավետարան իբրև նվեր: Հանդեսի վերջում վաճառվել են աշակերտուհիների ձեռագործները[1]:

1895 թ. հուլիսի 12-ին մահացել է դպրոցի ավագ ուսուցչուհի Նունե Փրիդոնյանը: Նա երկար ժամանակ ուսուցչուհու պաշտոն է վարել Թիֆլիսի հայոց օրիորդական դպրոցներում:

1895-1896 ուս. տարում դպրոցը ունեցել է 5 բաժանմունք, այսինքն՝ եղել է երկդասյան դպրոց, սակայն հենց նույն 1896-ին էլ երկրորդ անգամ փակվել է:

1905 թ. սեպտեմբերի 25-ին եկեղեցու ծխականները հոգևոր իշխանության կարգադրությամբ կայացրել են ժողով, Գրիգոր քհյ. Շերմազանյանի նախագահությամբ, որտեղ եկեղեցու գավթում գտնվող օրիորդաց դպրոցի համար ընտրվել են երկու հոգաբարձուներ՝ Բարսեղ Ղանդուրալյան և Սարգիս Ծատուրյան, երկու փոխհոգաբարձուներ՝ Կարապետ Գեոնջյան և Մալխաս Գասպարյան:

1907 թ. ապրիլի 26-ին մեծ շուքով նշվել է Հայուհյաց Բարեգործական ընկերության 25-ամյակը:

1907 թ. նշված է, որ Սուրբ Նշանի և Տափի թաղի Սուրբ Գևորգի

[1] «Նոր Դար», 1895, 18 մայիսի, Հմր 85:



եկեղեցական ծխական օրիորդաց դպրոցը միդասյան է, ունի չորս բաժանմունք: Դասավանդում են 3 ուսուցիչ և 4 վարժուհի: Սովորում են 145 աշակերտուհիներ: Հոգաբարձուներից երկուսը Տափի թաղից են, իսկ մյուսները՝ Սուրբ Նշանից[1]:

Հունիսի 4-ին թեմի առաջնորդը առաջադրություն է ուղղել Սուրբ Նշան եկեղեցու ծխական հոգաբարձությանը. «Ի 10-ն ամսոյս ի 11-րդ ժամու առաւօտեան նշանակեալ է ժողով յԱռաջնորդարանիս որպէս շարունակութիւն ժողովոյ կայացելոյ յ3-ն ամսոյս, վասն հոգալոյ զտնտեսական դրութեանց ուսումնարանաց մերոց որք ի քաղաքիս: Արդ, այսու հրաւիրեմք զհոգաբարձութեանդ շնորհ բերել յԱռաջնորդարան ի նշանակեալ ժամու անշուշտ: Յուսամք, զի հոգաբարձութիւնդ ի նկատի առեալ զշահ դպրոցաց մերոց, գայ ի խորհրդակցութիւն ի բարւոքել զդրութիւն նոցին»[2]:

1907 թ. նոյեմբերի սկզբին դպրոցի մանկավարժական խորհուրդը (Վարդանյան, Տեր-Հարությունյան, Խանազադյան, Սայաթնյան, Լազարյան, Ղարաջյան և Աթանասյան) ցավակցություն հայտնելով Խրիմյան Հայրիկի մահվան առթիվ, հեռագիր է ուղղել Սուրբ Էջմիածին՝ Խաչիկ Սամուելյանին. «Սուրբ Նշանի իգական դպրոցի մանկավարժական մարմինը, իր խորին ցաւակցութիւնը յայտնելով Հայրիկի մահվան առիթով, խնդրում է ձեզ մեր լիազօրը լինել թաղման հանդիսին»[3]:

1907-1908 ուս. տարում Սուրբ Նշան և Քամոյան օրիորդաց դպրոցները բացվել են իրար հետ միացված՝ կոչվելով «Ս. Նշան և Քամոյանց» դպրոց: Միացյալ իգական դպրոցն ունեցել է 145 աշակերտուհի և 7 դասատու: 1908-ին ուսման գործի լավ դրվածքի համար դպրոցը գովասանքի է արժանացել «Նոր դպրոց» ամսագրում: Հոգաբարձուների թվում եղել են նաև Ղ. Աղայանը և Հ. Տեր-Միքայելյանը:

1908 թ. հունվարի 8-ին ներկայացվել են հետևյալ տեղեկությունները Սուրբ Նշան և Քամոյանց Սուրբ Գևորգ եկեղեցիների ծխական դպրոցի մասին. Դպրոցը միդասյան է, օրիորդաց, ունի 7 ուսուցիչ, 145 աշակերտուհի: Դպրոցը կառավարվում է եկեղեցիների արդյունքներով և աշակերտուհիների թոշակներով: Ուսուցիչներն են՝ Գրիգոր Վարդանյան – ավարտել է Տրապիզոնի Ազգային լուսավորչական միջնակարգ դպրոցի 7-րդ դասարանը 1888 թ. (վկայա-

[1] ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 174, թ. 115:

[2] ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 174, թ. 11:

[3] «Մշակ», 1907, 4 նոյեմբերի, Հմր 149:

կանը այրվել է), Միքայել սարկավագ Տեր-Հարությունյան – սովորել է Էջմիածնի Ժառանգավորաց դպրոցում 1879 թ., Աշոտ Աթանասյան – ավարտել է Լայպցիգի համալսարանի բնագիտական բաժինը 1894 թ., օր. Վարվառե Սայաթնյան – ավարտել է Թիֆլիսի I գիմնազիայի 9-րդ դասարանը 1902 թ., վկայական 8851, տ. Շուշանիկ Խանազադյան – ավարտել է նույն գիմնազիան 1897 թ., վկայական № 336, օր. Վարվառե Լազարյան – ավարտել է Գայանյան դպրոցի 6-րդ դասարանը, վկայական № 54, ունի քաղաքային դպրոցների ցենզ № 550, օր. Եղիսաբեթ Ղարաջյան – ավարտել է Թիֆլիսի արհեստագիտական դպրոցի 5-րդ դասարանը երկու վկայականներով[1]:

1911 թ. եղել է 5-ամյա երկդասյան դպրոց:

Ամփոփելով Սուրբ Նշան եկեղեցու օրիորդաց դպրոցի տարեգրությունը, վերջում հարկ ենք համարում ներկայացնել տեղեկություններ ուսուցիչների և աշակերտների մասին, որոնք քաղված են արխիվային գործերից:

1883 թ. – 8 ուսուցիչ[2], 1884 թ. – 30 աշ. և 7 ուս. [3], 1886-87 ուս. տարի – 39 աշ. և 8 ուս.[4], 1887 թ. – 41 աշ. և 8 ուս.[5], 1888 թ. – 50 աշ. և 8 ուս.[6], 1889 թ. – 50 աշ. և 8 ուս.[7],1890-91 ուս. տարի – 78 աշ. և 7 ուս.[8], 1891-92 ուս. տարի – 59 աշ. և 7 ուս.[9], 1892-93 ուս. տարի – 86 աշ. և 7 ուս.[10], 1895-96 ուս. տարի – 123 աշ. և 10 ուս.[11], 1907 թ. – 145 աշ. և 7 ուս.[12], 1908-09 ուս. տարի – 140 աշ. և 8 ուս.[13]:

[1] ՀԱԱ, ֆ. 56, ց. 17, գ. 69, թ. 58:
[2] ՀԱԱ, ֆ. 56, ց. 10, գ. 357, թ.59:
[3] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3998, թ. 20:
[4] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 4002, թ. 11-14:
[5] ՀԱԱ, ֆ. 56, ց. 10, գ. 910, թ. 71:
[6] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 4004, թ. 47-48:
[7] ՀԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 106, թ. 7:
[8] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 4015, թ. 146-147:
[9] ՀԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 252, թ. 9-10:
[10] ՀԱԱ, ֆ. 56, ց. 3, գ. 11, թ. 4-5:
[11] ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 98, թ. 9:
[12] ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 314, թ.18:
[13] ՀԱԱ, ֆ. 35, ց. 1, գ. 557, թ. 94:



## ՍՈՒՐԲ ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՏԻՐԱՑՈՒԱԿԱՆ ԴՊՐՈՑ

1876 թ. հոգևորականությունը եկեղեցուն կից բացել է նոր դպրոց տիրացուների համար. «...հրամանաւ Նորին Բարձր. Սրբազնութեան Գաբրիէլ արքեպիսկոպոսի բացուել է մի առանձին ուսումնարան տիրացուաց համար Սուրբ Նշան եկեղեցւոյ բագումն: Ուսումնարանում ուսանում են մօտ քառասուն տիրացուք»[1]:

## ՍՈՒՐԲ ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՇԱՐԺԱԿԱՆ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ

*1838 թ. մարտի 8-ին կազմվել է «Ցուցակ անշարժ և շարժական կայից Սուրբ Նշան եկեղեցւոյ Հայոց Տփխիսայ»[2].*

Շարժական կայք նոյն եկեղեցւոյ ոսկեայ կամ արծաթի անօթք.

1. Խաչ արծաթի մեծ, որոյ երկայնութիւնն է հինգ մատնաչափ և երեք կանգնոյ հաւասար ձեռին, յորոց մի երեսն մէջն խաչելութիւն, ի քառաթևս նորա պատկերք աւետարանչաց՝ նշանօք իւրեանց. և այլ նմանութիւնք երկթև հրեշտակաց. պատկերքն են ոսկեզօծ, ի ներքոյ խաչին չօրուրթմայ գործիք չարչարանաց. ի միւս երեսն մէջն պատկեր տիրամօր ոսկեզօծ ի քառաթևսն վեցթև հրեշտակք մի մի. ի գլուխ կուսին թագ. յոտին ներքոյ գրեալ վրացերէն և հայերէն.

*«Յիշատակ յանուն Դավիթ Շանշինովին և իւր ծնողացն 1810 թուին»:*

Պատուանդանն միացեալ ընդ խաչին գչերաւ, յորոց վերայ երեք խնձորք են. երկուքն միաչափ, միոյն վերայ գրեալ հանգուցեալ կինակցոյն Բարբարէին և կենդանոյն Քալօյին, դստերն Սօփիին, միջին խնձորն է սաղաւարտաձև՝ յօրինեալ ի չափ գագաթան մարթոյ երկոտասան առաքելոց պատկերօք. բայց փրկչականն որ ի միջի է ոսկեզօծ. ընդ իւրում արծաթ խաչին պնդապէս մածեալ էր խաչին վասն և խնձորքն պատուանդանաւ էր, լի նիւթովք, մնաց անկշռելի:

2. Զոյգ խաչ, համանմանք միմեանց, երկկուղի, ոսկեզօծ, բաց ի պատուանդանէն. յորոյ ի մի երեսն խաչելութիւն ձուլածոյ ի քառաթևս պատկերք կուսից և պատեալք շուրջանակի խլխովք հրեշտակաց. ի քառանկիւնս ևս երկուստեք գլուխք հրեշտակաց մի մի,

[1] «Մեղու Հայաստանի», 1876, 16 հոկտեմբերի, Հմր 40:
[2] ՀԱԱ, ֆ. 56, ց. 6, գ. 39, թ. 56 շրջ.- 61:

ի միւս երեսն պատկեր տիրամօր թագակիր Յ[իսու]ս ի գիրկն, ի գլուխ խաչին միոյ ունի տեղի ինչ պակասեալ արծաթոյ խնձորոյ պատուանդանին թագաձև յօրինեալ երկոտասան փոքր պատկերօք առաքելոց. յորոց ներքոյ գրեալ է.

*«Յիշատակն յանուն մղդսի Մէսրովբին և կողակցոյն և որդւոյն Խաչատուրին և այլն:ՌՃԿԶ (1717) թուին»:*

Ի միոյսոյն վերա գրեալ նոյնաձև.

*«Յանուն Շաղինեանց Բաղդասարին, իւր կողակցոյն և այլն:Ի նոյն թուոջ»:*

Կշիռ երկուց խաչիցն - 245 մսխալ:

3. Զոյգ խաչք միմեանց համանմանք երկկուղի նոյնաձև յօրինեալ որպէս ի վերն. փոքր քան զայնս. յիշատակն անյայտ. միայն խաչելութիւն պակասեալ է և այդ փոքր ինչ արծաթ ի գլխոյն կոյսն. կշիռ – 117:

4. Զոյգ խաչք համանմանք վերնոյն. բայց պատուանդանին խնձորք սոցա ի ձև վեց թև սրովբէից յօրինեալ և պատուանդանն առանց ոսկեջրի. ի միոյն վերայ գրեալ յիշատակն հայէրէն.

*«Յանուն Բաղդասարին, Բէժանի դուստր Դէսրէբօյին, որդոյ Կակալօյին և այլն, ՌՃԾԱ (1702) թուին»:*

Եւ ի միւսոյն վերա գրեալ վրաց տառիւք ի հայ բարբառ.

*«Յանուն Փէրիխանին, Մարիամին և այլն»:*

Կշիռ – 95:

5. Խաչ զոյգ համանմանք միակուղի, մինն ոսկեզօծ և միւսն ոչ. երկուքն ևս բեկեալ. միոյն վերա գրեալ լոկ տէր Գրիգոր վրացէրէն. և ի միւսոյն վերա.

*«Յանուն Քահանայից Բաղդասարին և պրն Դաւթին և մօր Խոռիշանին եղբօրն Յարութիւնին և այլն»:*

Կշիռ նոցա – 75:

6. Խաչ արծաթի երկկուղի գեղեցկաշէն մանր գոյնզգոյն մինաքարիւք զարդարեալ, որպէս և ի քառանկիւնս նորա և ի տեղիս տեղիս մանր զմրուխտ եղութակունք շարեալ և քանի մի մարգարիտք. ի մի երեսն մէջն քանդագործ փայտեայ խաչ փոքր. և միւս երեսն պատկեր մկրտութեան ի նոյն նիւթոյ և ի քառաթևս աւետարանիչք երկուստէք. պատուանդանն ևս նոյնպէս զարդարեալ կիսախնձոր. յիշատակն անյայտ. կշիռն – 58.

7. Խաչ փոքր արծաթի ոսկեզօծ. մէջն յօրինեալ ի քանդակագործ փայտեայ նոյնպէս. պատուանդանն միացեալ ընդ խաչին գչերաւ. յիշատակն անյայտ. կշիռն է -30.



8. Խաչ արծաթի ոսկեզօծ մէջն բոլորակ. յորոյ մի երեսն խաչելութիւն փոքր ձուլածու շուրջանակի աւետարանչաց պատկերք. և ի միւս երեսն մէջն տիրամօր Յ[իսու]ս ի գիրկն. թևք խաչիս են ապակիք. յորոց երկուքն բեկեալ է. յանկիւնս ճաճանչք արծաթք. պատուանդանն միացեալ ընդ խաչին. ի ծայր որոյ են երկթև հրեշտակք, իսկ խնձորն թագաձև երկոտասան առաքելոց պատկերօք, որպէս ի վերն. յիշատակն անյայտ. ապակեաւ կշռեցաւ. կշիռն է -71.

9. 3 խաչք բեկեալք արծաթք միակուղի համանմանք միմեանց. բայց փոքր ինչ տարբերք միայն.

*«Յիշատակն Փոլադեանց Գաբրիէլին և ծնողացն, կողակցոյն Մարիամին»,*

երկրորդին.

*«Ղօրղանեանց Դօղօյին, որդի Գաբրիէլին»,*

իսկ երրորդն.

*«Մղդսի Աւետիքեանց Խատինին»,*

կշիռն է - 88:

10. Խաչ արծաթի միակուղի. ի մի երեսն մէջն խաչելութիւն և ի միւսոյն տիրամօր պատկերք. ի քառաթևս երկուստէք երկթև հրեշտակք մի մի չորս աստի և չորս անտի. պատուանդանն միով խնձորով միացեալ ընդ խաչին գչերաւ. յիշատակն թէպէտ գրեալ էր, բայց անվերծանելի մնաց. կշիռն – 39.

11. Խաչ պարանոցի արծաթի ոսկեզօծ. ի մի երեսն հինգ սուտ ակունք, և ի միւս երեսն գրեալ.

*«Ի թուին հայոց ՌՂԲ (1643) շինեցաւ ս[ուր]բ Նշանս բարեխոս Յոհան վարդապետին և ծնողաց նորին Մէլքօյին, և Մինասդին»:*

Կշիռն - 31.

12.Խաչ բոլորակ ոսկեզօծ մէջն աղամակերպ արծաթ. ի բոլորակին գրեալ.

*«Յիշատակ յանուն Բաղդինի դուստր Թուրազին և այլն, ՌՃԿԴ (1715) թուին»:*

Պատուանդանն միացեալ ընդ խաչին գչերաւ, որոյ խնձորն է ի ձև վեց թև սրովբէից. կշիռն է- 35,5:

13. Սկիհ կարի մեծ ոսկեզօծ, իւր մաղզմանաւ, ռուսխաշէն ի մաղզմանին խաչէ Միրզայ Գուրգենին և Միսայէլին և այլն. ՌՄԼԸ (1789) թուին. և ի ներքոյ չիֆթիշի առանց ոսկեջրի ագուցեալ ընդ աւազանն, յորոյ վերայ են չորս պատկերք մինաքարի, տիրունականք. պատուանդանն լայնանիստ, յորոյ վերայ ոսկի սևադայ չորս

պատկերք էն չարչարանաց Տեառն և չորս ևս երկթև հրեշտակք. կշիռն է- 367:

14. Սկիհ արծաթի ոսկեզօծ բաց յաւազանէն և մաղզմանէն, գե-ղեցկաշէն, բայց բեկեալ. յիշատակն անյայտ. կշիռն է -134:

15. Սկիհ արծաթի անմաղզման. ոսկեզօծ բաց յաւազանէն, եւս որոյ է ագոյց արծաթի չօքուրթմայ՝ նմանութեամբք երկթև հրեշտա-կաց. պատուանդանն ևս հնաշէն, գեղեցկաձև հօրինեալ և ի տեղիս տեղիս պատկերօք յեզր պատուանդանին գրեալ. *«Յանուն Էգնազ Բէժանին և իւր որդի Սրեփանին, Մարտիրոսին և իւր ծնողացն և այլն. ՌՃՀԹ (1730) թուին»:*

Կշիռն է -174:

16. Սկիհ արծաթի իւր մաղզմանաւ ոսկեզօծ բաց յաւազանէն ի նոյն ձև, որպէս ի վերն, բայց փոքր ինչ զանազան ի ներքոյ գրեալ.

*«Յիշատակ յանուն Մանգոյին և իւր կողակցոյն և իւր որդի Գէոր-գին հոգւոյ համայ և այլն.թուին ՌՃԿԷ (1718)»:*

Կշիռն է մաղզմանաւ -156:

17. Սկիհ սաղայ արծաթի, իւր մաղզմանաւ. բէկրէկեալ և անպի-տանացեալ. յիշատակն անյայտ. կշիռն է- 134:

18. Սկիհ արծաթի իւր մաղզմանաւ. մէջ աւազանին ոսկեզօծ պա-տուանդանն չօքուրթմայ. յեզր որոյ գրեալ վրացէրէն.

*«Յիշատակ յանուն Սոլաղեանց Բայինդուրի որդի Եսային և այլն»*

Կշիռն է -114:

19. Միտռնաշիշ արծաթի աղաւնաձև ի տեղիս տեղիս ոսկեզօծ. մագիլքն են պղնձի. ի ծայր պատուանդանին ոսկեզօծ երկգլուխ օձ.յիշատակն անյայտ. կշիռն է -144:

20. Միտռնաշիշ արծաթի գմբէթաձև փոքր խաչիւ, պատուան-դանն միացեալ գչերաւ, ի ներքոյ ագուցեալ ունի պղինձ ընդ չորու պատուանդանին, որով և կշռեցաւ եւթ որոյ էին արուրք երեք ոտն. յիշատակն գրեալ վրացէրէն.

*«Յանուն Շամիրի Բէգլարեանց»:*

Կշիռն է -43:

21. Զոյգ արծաթի բուրվառք համանմանք,կաթուղիկաձև և մէծք. առանց պօժոժեաց. յիշատակն անյայտ. կշիռն է- 296:

22. Գոտի կարովի ոսկեթելիւք դեղն կարմիր մախմուր. հնա-ցեալ. յորոյ մէջն էր արծաթ բոլորակ ոսկեզօծ ճաճանչաձև. ի միջի պատկեր փրկչական. շուրջ զորովք են սուտ ակունք շարեալ. յիշա-

տակն անյայտ. ոչ կշռեցաւ. ընդ իւրում յետ կոյս մածեալ երկաթն շատ էր քան զարծքքն.

23. Գոտի արծաթի երկփեղկ չօքուրթմայ, ոսկեզօծ. յիշատակն անյայտ. կշիռն է- 34:

24. Գոտի արծաթի չիֆթիշի.ոսկեզօծ երկփեղկ պիրուզիւք զար-դարեալ. յիշատակն անյայտ. կշիռն է -44:

25. Զոյգ քշոց ի ձև վեց թև սրովբէից շուրջանակի ճաճանչ, յորս են արծաթի պոժոժիւք, յիրաքանչիւրում վեց վեց ի ծայրսն խաչք գչերաւ հաստատեալ. պատուանդանն միացեալ է ընդ քշոցին, որոյ երկայնութիւն է թզաչափ.

*«Ընծայեալ ի Խարազեանց յերկուց եղբարց հանգուցեալ Յարու-թիւնէ և Աւետիսէ. 1828 ամի».*

կշիռն է- 669:

26. Աւետարան արծաթապատ ոսկեզօծ գեղեցկաշէն. յորոյ մի երեսն է ձուլածու խաչելութիւն, ի քառանկիւնս աւետարանիչք և երկթև հրեշտակք մի մի, ի միւս երեսն մէջն պատկեր փրկչական ձուլածու, միւս պատկերքն նոյնք են միափեղկ հաւասար գրոյն. յորս են չորս պատկերք աւետարանչացք և նմանութիւնք հրեշտակաց մի մի. ի վեր և ի վայր քամակն ևս արծաթապատ, որոյ մի եզր պակա-սեալ է արծաթն. յիշատակն գրեալ ի վերա.

*«Յանուն Օրբեանց Բէժոյին և եղբայր Նասրիդին, և իւր ընկեր գորեցի Նասրիդին»:*

Գրչեայ էր Աւետարանն:Կշիռն է արծաթոյն -182.

27. Աւետարան փոքր արծաթապատ ոսկեզօծ գրչեայ մագաղա-թի գրեալ ի ՌՂԸ (1639) թուին. ի մի երեսն պատկեր յարութեան և այլ սրբոց, ի միւս երեսն իջուցանելն ի խաչէն և այլ սրբոց պատկերք. փեղքն նոյնպէս և պատկերօք քամակն չիֆթիշի արծաթ.

28. Աւետարան ճաշու նոր և գեղեցկազարդ դեղն կարմիր մախ-մուր պատեալ. ի Պէտէրբուրգ 1786 ամի Տեառն. մի երեսն մինաքար պատկերք. մէջն յարութեան և այլ տեղիս աւետարանչաց շուրջանա-կի սիբիրաքարիւք զարդարեալ. և եզերքն արծաթ բոլորակ ոսկե-զօծ. ի միւս երեսն պատկերք արծաթի ոսկեզօծ. մէջն յարութիւն ճա-ճանչավոր և այլքն աւետարանչաց. եզերքն բոլոր են արծաթապատ. և երկփեղկ ի վերա. ընծայեալ յազնիւ Ղայթմազ Ղայթմազեանցէ. զորմէ գրեալ կայ ի միջի ի 1831 ամի օգոստոսի ԺԵ (15).

29. Պատկեր Աստուածածնի մէծ արծաթապատ չօքուրթմայ, հնոտի.գլխադիրն միայն ոսկեզօծ. յիշատակն անյայտ. կշիռն է- 100.

30. Պատկեր նոյնանման և արծաթովք.

*«Յիշատակն Մանգոյեանց Յոհանի և իւր կողակից Թամարին. ՌՄԽԵ (1796)»:*

Կշիռն է- 97.

31. Պատկեր Ա[ստուա]ծածնի նոյնպէս մեծ չօքուրթմայ արծաթապատ. գլխադիրն միայն ոսկեզօծ, յիշատակն անյայտ է. կշիռն է- 64.

32. Պատկեր կուսի ի կանգուն, գլխադիրն արծաթ ոսկեզօծ, ստտակունք ի նմա շուրջանակի բոլորեալ ճաճանչաւոր չօքուրթմայ արծաթ ի լայնութիւն երից մատանց, ուր ուրէք ոսկեզօծ և պակասեալ արծաթք և յանկիւնս պատկերիս երկթև հրեշտակք արծաթի մի մի. յիշատակն անյայտ.

33. Պատկեր փոքր Ա[ստուա]ծածնի ոսկիապատ, վեց մանր ակունք զմրուխտ և եաղութ ի գլխադիրսն. յիշատակն գրեալ.

*«Յանուն Մէհրաբի հայր Ենօքին և այլն. ՌՄԻԲ (1773) թուին»:*

Կշիռն է -28,5.

34. Պատկեր Ա[ստուա]ծածնի արծաթապատ ոսկեզօծ, գլխադիրքն ստտակամբք պատեալ. յիշատակն գրեալ է.

*«Յանուն Դաւիթ Մանամուվին ՌՄԺԲ (1763) ամի»:*

Կշիռն է- 31.

35. Պատկեր Ա[ստուա]ծածնի չօքուրթմայ արծաթապատ ոսկեզօծ, գլխադիրքն ևս նոյնպէս. յիշատակն անյայտ. կշիռն է -55.

36. Պատկեր Աւետեաց ոսկեզօծ. մէջն կուսյսն ս[ուր]բ և հրեշտակացն առաջի ծաղիկ ի ձեռն ի վեր Հօր Ա[ստուծո]յ և իջման Հոգւոյն սրբոյ աղաւամնակերպ եզերքն վեց աստի և վեց անտի պատկերք երկոտասան առաքելոց ի վեր, որոց երկու երկթև հրեշտակք մի մի. ի ներքոյ պատկերին գրեալ.

*«Յիշատակ յանուն Օքօյենց Ռուստամի որդի Հոքինին, Ասլամազին, Բէժանին և այլն, ՌՃՀԵ (1726) թուին»:*

Ի վեր դրանց պատկերիս, միոյն վերա պատկեր մկրտութեան արծաթապատ, ոսկեզօծ և միւսոյն՝ ծննդեան ի գլուխ իւրաքանչիւր դրան փոքր կաթուղիկէք արծաթ ոսկեզօծ խաչելութեանց:

37. Պատկեր փրկչական արծաթապատ ոսկեզօծ, գլխադիրն ևս նոյնպէս. եզերքն բոլորովին չօքուրթմայ արծաթապատ. յիշատակն անյայտ. կշիռն է- 50.

38. Պատկեր Ա[ստուա]ծածնի զոյգ, արծաթապատք, համանմանք երերաց. գլխադիրքն միայն ոսկեզօծ և վանք մի ստտակունք. ի վերա եզերքն բոլորովին արծաթապատ. ի ներքոյ իւրաքանչիւրոցն գրեալ յիշատակագիր.



*«Յանուն առն միոյ որէ ոսկերիչ, Մազլօյի որդի Եսայան, կողակից Բաղինին, որդւոցն Դէղէբօյին, Նիկողոսին»:*

Կշիռն է -120.

39. Պատկեր զոյգ համանմանք արծաթապատ. յիշատակն անյայտ. կշիռն է-29.

40. Պատկեր զոյգ Ա[ստուա]ծածնի համանմանք միմեանց և արծաթապատ. գլխադիրքն պակասեալ են. տեղիքն յայտ է.

41. Պատկեր փրկչական փոքր արծաթապատ. յիշատակն անյայտ. կշիռն է -20.

42. Պատկեր Ա[ստուա]ծածնի արծաթապատ. գլխադիրքն միայն ոսկեզօծ, ի ստորև յարծաթոյն վերա գրեալ վրացէրէն ի հայ բարբառ.

*«Յիշատակ Յանուն հանգուցեալ Յակովբին և այլն»:*

Կշիռն է- 25.

43. Պատկեր զոյգ փրկչական փուշ փսակ ի գլուխն արծաթապատ. գլուխք բևեռացն ևս արծաթք միաչափ են և համանմանք. յիշատակն անյայտ.

44. Պատկեր սրբոյ Նիկողայոսի սքանչելագործ հայրապետի. մասամբ իւրով հանդերձ, որ բովանդակ պատկերն է արծաթի և ի տեղիս տեղիս ոսկեզօծ եղեալ ի մէջ պահարանի. յորոց դրունսն են ի ներքուստ նկարեալ պատկերք սքանչելիաց. նորա յերեսն բոլորովին արծաթապատ ի գլուխ միոյն փրկչական պատկեր. և միոյն տիրամօր գլխադիրքն են ոսկեզօծ ճաճանչավոր. և ընդ մէջ պահարանին պատկեր Հօր Ա[ստուծո]յ ճաճանչազարդ գլխադրիւք և այլ նմանութիւնք հրեշտակաց. յիշատակն անյայտ է.

45. Պատկեր սրբոյ Մինասայ. ի ներքին կողմն արծաթապատ դրամբք և պատկերաւ Հօր Ա[ստուծո]յ պատկերն և սրբոյն միայնէ ոսկեզօծ. յիշատակն գրեալ.

*«Յանուն Յօքինեանց Ռուստամի որդի Հօքինին և այլն. ՌՃԿԴ (1715) թուին»:*

46. Պատկեր արծաթի ի մէջ պահարանի Յոհաննու Մկրտչին և Ստեփաննոսի Նախավկայի, որոց մասունքն ս[ուր]բ բազմեալ կան ի միջի. երեսն ապակեալ ծածկեալ. ի դրունս սորա ի ներքուստ արծաթի պատկերք Պէտրոսի և Պողոսի. յիշատակն գրեալ.

*«Յանուն Քեթէվանին ի վայելումն տէր Մկրտչին ՌՄԼԲ (1783)»:*

47. Պահարան արծաթապատ, ի տեղիս տեղիս ոսկեզօծ. մէջն խաչաձև տեղիք թողեալ ... յոր բազմեալ են փայտն կենաց ս[ուր]ք թևսն ի վեր կոյս ս[ուր]բ մասն Յակովբայ եղբօր Տեառն յափշ-

տակեալ տեղն երևի գրուածովք. ի միւս թևսն Յուհաննու Մկրտչին, Ղուկասու աւետարանչին, Լուսաւորչին, և Ոսկեբերանին. երեսքն ապաքեաւ ծածկեալ. ի գլուխ պահարանին արծաթի ոսկեզօծ կաթուղիկէ. կիսաչափ դրունք ի ներքուստ արծաթապատ հրեշտակակերպ. նոյնպէս իւրաքանչիւրքն կաթուղիկաւոր, բայց թարձ ոսկեջրի գրեալ յիշատակն ի վերա դրանց.

*«Յանուն Աւետիքի որդի Աիպարխանին և ծնողացն և եղբարցն և այլն. ՌՃՂԲ (1743) թուին»:*

48. Պահարան ամենայն իւիք համանման նմին, բայց մէջն եղեալ գազաթան սրբոյն Անդրէի առաքելոյն. երեսն ապակեաւ ծածկեալ. յիշատակն դրանց վերայ գրեալ.

«Յանուն Խաչատուրի որդի Պապին և իւր կողակից Թամարին և այլն. ՌՄՁԲ (1833) ».

49. Զոյգ պատկերք համանմանք միմեանց արծաթապատ, որոց երկայնութիւնն է երկու քիլ միաթև իւրաքանչիւրքն. յիշատակն գրեալ ի ծայր թևոյն.

*«Յանուն Մամյօեանց Եսայու որդի Ռուպոմին և կողակից Լալիթարաին և այլն. ՌՄԼԶ (1787)»:*

Կշիռն է 58,5.

50. Պատկեր սրբոյն Նիկողայոսի հայրապետին. մէջն ի վեր կոյս փրկչական և տիրամօր պատկերք. շուրջանակի զպատկերաւն սրբոյն, պատկերք նորին սքանչելագործութեանց. ընդ մէջուն արծաթազարդ և գրեալ ի վերա զճառսն իւրաքանչիւր պատկերին. ըստ չափու պատկերացն գլխադիրքն յօրինեալ արծաթ ոսկեզօծ ապաքի միացուսն, որոյ եզերքն ոսկեզօծ արծաթ չօքուրթմայ երկմատնաչափ լայնութեամբ.

*«Յիշատակ Դաւիթ Մանանեանցի».*

51. Պատկեր Ա[ստուա]ծածնի մեծ Յ[իսու]ս ի գիրկն. որոց գլխադիրքն միայն են արծաթք. քանի մի սուտակունք ի վերա. յիշատակն գրեալ.

*«Յանուն Աղամի դուստր Թամարին և այլն.».*

Յարծաթն յայրէ է ընծայեալ:

52.Զոյգ պատկեր արծաթի Ա[ստուա]ծածնի մածեալ ի վերա աննկարատախտակի. յիշատակն անյայտ:

53.Պատկեր Ա[ստուա]ծածնի արծաթապատ և եզերքն չօքուրթմայ.

*«Յիշատակ Գորգինեանց Թինաթինին».*

Կշիռն է – 42:



54. Պահարան փոքր երկայնութիւն միոյ քչոյ ի ներքուստ արծաթապատ. մէջն մասն նշխարաց սրբոյն Գէորգայ. գրեալ շուրջանակի և երեսն ապակեաւ ծածկեալ և կից նմին գրել.

*«Յիշատակ է ս[ուր]բ Գէորգին նշխարս Մինաս Սիմոնովիչին, իւր Մարգարիտ, անանի Աննայ, և որդւոցն իւրեանց. թուին ՌՄԾ = (1801)».*

Եւ պատկեր ևս ի նմին Հօր Ա[ստուծո]յ և երկթև հրեշտակաց. դրունքն արծաթապատ ներքուստ և արտաքուստ. միոյն վերա ի ներքուստ սրբոյն Գէորգայ և միւսին հրեշտակին. արտաքուստ սրբոյն Պէտրոսի և Պողոսի. կշիռն է – 55:

56. Պատկեր սրբոյ դոստառակի. արծաթապատ գլխադիրն ոսկեզօծ ճաճանչաձև յօրինեալ և հինգ մինաքար նշանք սպիտակ և կապուտ. ընծայեալ ի Բէժօյեանց Գալուստէ և այրւոյ նորա Բարբարէէ. կշիռն է- 226,5.

57. Խաչվառ արծաթ ոսկեզօծ՝ իւր խաչիւ հանդերձ, ընծայեալ ի Բէժօյենց Գալուստէ 1831 ամի. ի մի երեսն խաչելութիւն մէրձ առ նմին տիրամօր և Յօհաննու աւետարանչիւս. պատկերք և այլ նկարք չօքուրթմայ և ի քառաթևս պատկերք չորից Աւետարանչաց, ի միւս երեսն պատկեր Ա[ստուա]ծածնի նոյնպէս կանգուն առաջի նորա մանկահասակ ճաճանչ բոլորեալ զգլխովն ի քառանկիւնս երկթև հրեշտակք չորս մի մի և այլ չօքուրթմայ նշանք.եզերք խաչվառիս բոլորեալ սպիտակազար ստաւրայ. կշիռ խաչվառոյն արծաթի և փայտի սորա որ ի վերա արծաթ գլխոցն խաչիւն իւրով հանդերձ -252 մսխալ: Այս խաչվառի փայտի վերա բոլորեալ արծաթոյն և ներքոյ եղեալ թասաձև արծաթ պատուանդանին. կշիռն է- 35.

58. Զոյգ արծաթի մոմակալ յիշատակն գրեալ է վերա.

*«Յանուն Մէհրապի հայր Ենովքին».*

կշիռն է -13.

59.Արծաթի մոմակալ. յիշատակն անյայտ. կշիռն է – 28.

60. Զոյգ արծաթի մոմակալ համանման նմին, մէծ քան զայնս.

*«Յիշատակ Եսայի Իզմիրեանցի».*

կշիռն է -150.

61. Մոմակալ արծաթի զոյգ, գեղեցկաշէն. ընծայեալ Աւետիս Բաբանասեանցէ. կշիռն է -186.

62. Զոյգ արծաթի մոմակալ. պատուանդանին ծայրն օճաձև և ընծայեալ ի Յարութիւնի Խարազեանցէ. կշիռն է – 58.

63. Իբրուխ արծաթի. արդեամբ հասարակ ժողովրդեն. կշիռն իւր արծաթի խուփովն – 62,5.

64. Սաղաւարթ արծաթապատ. դեղն կարմիր մախմուր. ի ծայրն խաչ արծաթի սիբիրաքարիւք զարդարուն, ի ներքոյ պատուանդանին ճաճանչաձև արծաթ, յորոյ վերայ գրեալ է.

*«Յիշատակ է խաչս Աղամջեանեանց հանգուցեալ Գօգինի կին Մաթոյին».*

Քառակուսի գոտիք արծաթի ոսկեզօծ, յորոց ստորև են մի մի արծաթի թագք սուտակունք՝ շարեալ ընդ մէջ իւրաքանչիւր գոտեաց. տէրունական պատկերք սևադայ ոսկեզօծ շուրջանակի զարդարեալ կանանչ սիբիրաքարիւք. և միւս արծաթքն ճաճանչաձև սուտ մարգարտաշար յայլ տեղիս և հաւասար զգլխով արծաթ բոլորեալ ոսկեզօծ. նոյնպէս սուտականակուռ և երկու ևս թագ ի նմին արդեամբ հասարակ ժողովրդեան.

65. Սաղաւարդ կարովի ոսկեթելիւք. դեղն սեաւ. պլիզ չորս տէրունական պատկերօք խաչ արծաթի ի գլուխն. յիշատակն անյայտ.

66. Սաղաւարդ դեղն ալ մախմուր և կարովի զարդք ի վերա արծաթի խաչ ի գլուխն. յիշատակն անյայտ.

67. Վակաս արծաթի ոսկեզօծ չօքուրթմայ. դեղն սուսանի մախմուր մէջն եօթն պատկեր արծաթի. մինն փրկչական, երկրորդն տիրամօր. երրորդն Ցուհաննու Մկրտչի. և այլքն աւետարանչաց. ընդ մէջ պատկերացն գոտիք. արծաթեայք ի լայնութիւն միոյ մատին, յերկարութիւն ևս միոյ մատին, գոյնզգոյն սուտակամբք զարդարեալ. ի վեր և ի վայր կոյս վակասին, եզերքն հաւասար նմին նոյն չափ արծաթով և գոյնզգոյն սուտակամբք յօրինեալ. յոտին ներքոյ փրկչական ի սմին եղեալ պատկերին գրեալ վրացերէն.

*«Յիշատակ յանուն Շանշինեանցին».*

68. Վակաս հնոտի ոսկեթելիւք կարովի պատկերօք սրբոց գրեալ ի վերա.

«Ով մէղսաքաւիչ քահանայք, յիշացէք ստացող սորին և գործողն. թուին ՌՃԿԳ (1714)».

69. Շուրջառ ռուսաց սպիտակազառն դեղին զար դիպաք նոր ընտիր և գեղեցիկ. արծաթի չափռաստիցն վերայ գրեալ.

*«Յիշատակ յանուն Պարոն Սարգսեանին և ծնողաց նորին և այլն. յամի 1825 ի սեպ. 5».*

Կշիռն է – 32.

70. Շուրջառ ռուսաց զար փարչոյ ծաղկաւէտ. ընկալեալ յՕրբեյանց Աւթանդիլէ վասն հոգւոյ եղբօր իւրոյ. բայց արծաթի չափռաստքն այլոց ուրուք է, որոյ անունն գրեալ կայ ի վերա.

*«Յիշատակ է Խանդալամի որդի Դաւթին և այլն».*



Մածեալ ունի ընդ արծաթոյն. քամակն պղինձ փոքր չափռաստից.

Կշիռն է – 30.

71. Շուրջառ Հնդստանու դիպաք գեղեցիկ դեղին և սպիտակազար ծաղկաւէտ. պաստառն կանաչ ատլաս. եզերքն կարմրագոյն ատլաս. գնեալ արդեամբ եկեղեցւոյ. 183.

կշիռն է - 4,5.

72. Շուրջառ դիպաք դեղն կանաչ դեղնազար և ծաղկախայտ պայծառ և նոր. չափռաստքն արծաթք. կապուտ մինաքար. երեսն յորոյ վերա գրեալ է.

*«Յիշատակ յանուն Յոհաննէս Մոլթանովին և ծնողաց նորին. 1834 ամի».*

Կշիռն է -14,5.

73. Շուրջառ դեղն ծիրանի դեղնազար փարչայ ռուսաց. ընծայեալ ի Միրզայ Աբրահամ Էնակոլոփեանցէ. չափռաստից կշիռն է- 7.

74. Շուրջառ հնոտի զար շօբտան դեղն սպիտակ. յիշատակն անյայտ. չափռաստքն չիֆթիշի. ոսկեզօծ արծաթի. ի վրա մինն զմրուխտ. երկուքն եաղութ անպիտան. կշիռն է – 10.

75. 5 շուրջառք հին և նոր ռուսաց. դալբ զար փարչայ. որոց չափռաստից կշիռն է – 24.

76. Փորուրար դեղն կարմիր ատլաս կարովի ոսկեթելիւք և գոյնզգոյն երանգօք. մէջն ծառ յոստոցն վերա երկոտասան նահապետաց պատկեր. ի ծայրն տիրամօր Յիսուսիւ ի գիրկն ենթ ծառոյն նահապետին Յակովբի ննջման. ի վերա յանգուց երկու պատկերք սրբոց, յորոց ներքոյ գրեալ.

*«Յիշատակ յանուն հանգուցեալ Գոգիդ Փարսադանի որդի Զուրաբին և իւր կողակից Քեթէվանին և այլն. 1809 ամի ի 26 սեպ.».*

77. Փորուրար դեղն սեաւ մախմուր կարովի ոսկեթելիւք. մէջն խաչք. միւսքն ծաղիկք. ենթ խաչիցն գրեալ.

*«1823. յիշատակ է Ալադաթովի դուստր Ովսանին».*

78.4 զոյգ բազբանք. մինն կարովի ոսկեթելիւք գրեալ.

*«Յիշատակն յանուն Աղամջանի որդի հանգուցեալ Գիորգի դուստր Թամարին և կողակից հանգուցեալ Յոհաննէսին»*.իսկ այլքն հասարակ ճոթք.

79. 3 ուրարք սարկաւագի. ռուսաց զար փարչայ. դեղն ծիրանի. մինն նոր. միւսքն հին.

80. 9 հնոտի շապիկք դպրի. երեքն դանայուզ. միւսքն չիթ.

81. 2 վարագուրք մէծք հնոտի. մեծն հնդու ղալամքարի պատկերոյից և միւսն սեաւ կտաւի.

82. 2 վարագուրք փոքր սեղանոցն ղալամքարի ռուսաց.

83. 3 գոգնոցք. միոն դեղն սեաւ պլիզ կարովի ոսկեթելիւք նոր պատկեր ի նմա սրբոյն Նիկողայոսի և այլն ծաղիկք, միւսն ռուսաց ղալք զար ճոթ և այլն. մէջն ատլաս բամբ կարմիր եզերքն լօքդան հնոտի.

84.2 վարագուրք Ա[ստուա]ծածնի պարսից. հնոտի ղալամքարի.

85. 4 քողք սկիոյ հին և նոր, գոյնզգոյն թէլիւք կարովի, յորոց երեքն եզերքն ոսկեթել փունջիւք բոլորեալ.

86. Վարշամակ աւետարանի սպիտակ, եզերքն գոյնզգոյն թելիւք կարովի, սակաւազար.

87. 3 աւետարանք, միոն Ատենի՝ տպեալ ի Կոստանդինուպոլիս 1796 ամի. միւսն Ճաշու՝ տպեալ ի Պետերբուրգ 1786 ամի, և երրորդն գրչեայ.

88. Ջահ ժէշտի՝ 14 մոմակալիւք.

89. 6 կանթեղք, չորսն ժէշտեայ. և երկուքն ապակի.

90. Ատենի ժամագիրք՝ տպեալ ի ս[ուր]բ Էջմիածին. ՌՄԼԴ (1785) ամի.

91. 3 Այսմաւուրք, միոն տպեալ ի Կոնստանդինուպոլիս, ՌՃ (1651) թուին. յիշատակ Օքոեանց Բէժանին. խրայնովք հանդերձ. երկրորդ Ամիրաղեանց Ղութիսաւարին և միւսն գրչեայ.

92. Ճաշոց գիրք, յերկուս հատորս բաժանեալ. տպեալ ի Վենետիք. 1686 ամի Տեառն. յիշատակն անյայտ.

93. Տոնացոյց տպեալ ի Կոնստանդնուպոլիս.

94. Գանձարան գրչեայ և մի Մաշտոց.

95. 3 զոյգք աշտանակք մէծք, միոն արուրի և միւսքն ժէշտի.

96. 17 մոմակալք ժէշտի.

97. 4 ձայնքաղ շարականք հին և նոր.

98. 8 անարծաթ պատկերք, յորոց միոն փրկչական է. գէղեցկաշէն. զարդարեալ ժէշտիւ. քանդակագործ և փայտիւք եզերքն յօրինեալ.

99. 4 ափսէք գանձանակի.

100. Շաջ և կասկարայ երկաթի.

101. 2 զոյգ զանգակք, երկուքն ի մէջ եկեղեցւոյ. և երկուքն ի զանգակատան կախեալք.յիշատակն անյայտ է.

Անշարժ կայք սուրբ Նշան եկեղեցւոյ Հայոց Տփխիսայ



Եկեղեցին ս[ուր]բ Նշանի կառուցեալ բարձրագոյն պարսպաւ հանդերձ ի շրջակայս իւր ունի դատարկ տեղի հազար հարիւր տասն և վեց գազ գազանդարի: Մերձ զանգակատան սենեակք երկու, միոն թաքուր վասն քահանայից, և երկրորդին բնակի ժամկոչն ձրի:

Տուն ճորտ Գիքոյ Յունանովի այրի Լալոն, 1 արու, 2 էգք, ոչինչ հաստուցանէն եկեղեցւոյն:

Տուն ճորտ Պապի որդի Կարապէտն, Մային, Քէթէվան. և սա ևս ոչինչ հատուցանէ:

## ՍՈՒՐԲ ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ 1841 Թ. ԾԽԵՐԸ

Ստորև ներկայացվում է Սուրբ Նշան եկեղեցու 1841 թ. ծխականների ցուցակը[1].

1. Ազնիւ պրապօրչիկ Շէրգիլ Գաբրիէլեան Շէրգիլեանց, կին սորա Եփեմիայ, որդիկքն Ալէքսանդրէ և Գաբրիէլ 3-1

2. Ազնիւ պրապօրչիկ Գրիգոր Մէլիք Քալալեանց, կին սորա Բարբարէ, որդիկքն Աստուածատուր և Աբրահամ, 3-1

**Վերոյ գրեալքն տէրունիք են.**

3. Արքունի Յովհաննէս Զաքարօյեան Շաղինեանց, կին սորա Քէթէւան, որդիկքն Զաքարիայ, Միքայէլ և Պետրոս, դստերն Կէկէլ և Սօֆեայ, եղբայր Նիկողայոս, կին սորա Նատալիա, որդիկքն Ալէքսանդրէ և Յովսէփ 7-4

4. Արքունի Գաբրիէլ Յօհաննէսեան Շաղինյանց, կին սորա Նատալիա, որդիկքն Նիկողայոս և Գրիգոր, դստերքն Կատարինէ, Եփեմիայ և Կէկէլ, եղբայր Դաւիթ, կին սորա Քալի, դուստր Լիսինկայ, մայրն Նանօ, միւս եղբօր այրին Նինօ, սորա որդիկքն Եօվանէ, Վարազ, Հասան, դուստր Վարինկայ 7-8

5. Արքունի Սօլօման Յիսայեան Խանդալամեանց, կին սորա Նինօ, որդիկքն Եսայի և Զուրաբ, դստերքն Կատարինէ, Եփեմիայ և Սալօմէ, մայրն Աննայ 3-5

[1] ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 48, մաս 4, թ. 726:

6. Արքունի Յովսէփ Իզմիրեանի այրի Նէնօ, որդիկքն Մովսէս, Միքայէլ, Պետրոս և Վասիլ, դուստր Կէկէլ 4-2

7. Արքունի Աւէտիք Աւթանդիլյան Չխարեանց, կին սորա Կէկէլ, դուստրն Մարթայ, մայրն Թամար 1-3

8. Արքունի Ղազօյ Ղանդօյեան Շաղինեանց, կին սորա Բարբարէ, որդիկքն Գրիգոր և Նիկօլ, դուստրն Կէկէլ, մայրն Նանօյ, եղբայրն Զուրաբ 4-3

9. Արքունի Աբէլ Մկրտումեան Շաղինեանց, կին սորա Մայիայ, որդին Դարչի 2-1

10. Արքունի Յարութիւն Գրիգորեանի այրի Ումնիփէր, որդին Արտէմ 1-1

11. Արքունի Ստէփան Ղամազեան, կին սորա Մարթայ, որդիկքն Ղամազ, Գէորգ, Նիկօլայ, Շաշկայ և Յօվանէ 6-1

12. Արքունի Մարտիրոս Գրիգորեանի այրի Բարբարէ, դուստր Կատարինէ 0-2

13. Արքունի Դաւիթ Գրիգորեան, կին սորա Աննայ, որդին Սարգիս, դուստրն Սօֆիայ, մայրն Մարիամ 2-3

14. Արքունի Սօլօման Աւէտիքեան, կին սորա Մարիամ, որդին Աւէտիք, դուստրն Կատարինէ 2-2

15. Արքունի Ռօստոմ Ղուլինեան, կին սորա Նինօյ, որդիկքն Նիկօլ, Ալէքսանդրէ և Միխակ, դստերքն Կէկէլ, Սօփիայ և Սալօմէ, եղբայրն Սօլօման 5-4

Սորա միւս եղբայր Ղազար Ղուլինեան, կին Շուշան 1-1

16. Արքունի Յովսէփ Զառափեանի այրի Բարբարէ, որդիկքն Գրիգոր և Յակովբ, դուստրն Կէկէլ 3-2

17. Արքունի Յարութիւն Մէղուինեան, կին սորա Նէնօյ 1-1

18. Արքունի Ղարօյ Գրիգորեան Մէղուինեանց, կին սորա Կատարինէ, որդին Գրիգոր 2-1

19. Արքունի սորա եղբայր Խաչատուր Մէղուինեան, կին սորա Օվսաննայ 1-1

20. Արքունի Գրիգոր Խանդալամեանի այրի Շուշան 0-1

21. Արքունի Գրիգոր Յովսէփեան Շաղինեանց, այրի հարսն Սօֆիայ 1-1

22. Արքունի Ոսկան Սիմէօնեանց, կին սորա Թինաթին, որդիկքն Յարութիւն և Աբրահամ, դուստր օվսաննայ, 3-2

23. Արքունի Պետրոս Աւէտիքեանի այրի Օվսաննայ, դուստր Եփեմիայ, 0-2



24. Արքունի Յօհան Ստեփաննեան Մանդօյեանց, կին սորա Սօփիօյ, որդին Ստեփան, դստերք Անուշկայ, Նատալիա, Նինօյ և Եղիսաբէթ, 2-5

25. Արքունի Արզուման Յօհաննէսեանի այրի Մայիայ, որդին Աւէտիք, դստերքն Փէփէյօյ և Սալօմէ, 1-3

26. Արքունի Մէլքօյ Յարութիւնեան Զարջեանց, կին սորա Աննայ, որդին Յարութիւն, 2-1,

27. Եկեղեցական Միրզայ Եզեանց, կին սորա Մայիայ, 1-1

28. Եկեղեցական Սահակ Յարութիւնեանի այրի Տասիայ, որդին Սոլոման, 1-1

29. Արքունի Դաւիթ Պետրոսեան Ալիխանեանց, 1-0

30. Արքունի Մէյրան Միրմեանց, 1-0

31. Արքունի սորա եղբայր բրուտ Աղաջան, 1-0

32. Արքունի խանչալ շինօղ Նօնինի այրի Քալին, որդիկքն Գրիգոր և Սահակ, 2-1

33. Կնեազ Սամարաղտօյի Աւէտիք Ասլանեան Ճանշաղեանի այրի Աննայ, որդին Ասլան, դուստր Անանէ, 1-2

34. Արքունի Սօսի Դաւթեան Բէգինեանց, կին սորա Աննայ, դստերքն Մարթայ, Օվսաննայ և Մակայ, մայրն Մարիամ, 1-5

35. Արքունի Գաբօյ Պապեան Պապեանց, կին սորա Մարիամ, որդիկքն Աւէտիք և Շաքար, դստերքն Աննայ և Քէթէւան, 3-3

36. Արքունի սորա եղբայր Թաթօն Պապեանց, կին սորա Մայիայ, որդին Գէորգ, դստերքն Սալօմէ, Քալի և Բարբարէ, 2-4

37. Արքունի Դարչի Ղազարեան, 1-0

38. Եկեղեցական ՅօՎանէ Պետրոսեան Աւէտիքեանց, որդին Միքայէլ, 2-0

39. Արքունի Գիքօյ Օնանեանի այրի Լալօյ, որդին Յարութիւն, 1-1:

Յետ ժողովրդական ցուցակին տրեցելոյ ինձ ի Բէտլահէմ եկեղեցական նորոգ ստացեալքն իմ մինչ ցարդ են այսոքիկ ըստ վերին երկուց տանց ազնուականաց.

40. Արքունի Յակովբ Բէրօյեան Ազիզեանց, կին Մարիամ, որդիկքն Կարապետ, Յօհաննէս, Մկրտիչ և Առաքել, դուստր Եղիսաբէթ, 5-2

41. Արքունի Դաւիթ Յակոբեան Վարդանեանց, կին Անանէ, որդին Յովսէփ, 2-1

42. Արքունի Մարգար Մարկոսեան Մուրադեանց, կին Նազլու, որդին Գէորգ, եղբայրն Միրզայ, 3-1

43. Արքունի Գասպար Մկրտչեան Ստեփանեանց, կին Շուշան, սորա աներ մշակ Քօչար Ազարեանի այրի Մարգարիտ, որդիկքն սորա Բաղդասար, Յոհաննէս, Ալէքսանդրէ և Յարութիւն, դուստր Մայիայ, - սոքա ի միասին բնակին վասն սաստիկ չքաւորութեանցն, 5-3

44. Արքունի Յոհաննէս Տէր-Աբրահամեան Ալամազեանց, կին Թագուհի, որդիկքն Մարգար, Աւէտիք, Առաքել, Գէորգ, Յարութիւն և Յովսէփ, դուստր Բարբարէ, 7-2

45. Սորա եղբայր Մկրտիչն, կին սորա Հէրիքնազ, որդիկքն Մարտիրոս և Ասլան, դստերքն Մարգարիտ և Աննայ, միւս եղբայրն Կարապետ, կին սորա Մագդաղին, որդիկքն Աբրահամ, Դարչին, Սահակ և Թօմաս, 7-4

46. Արքունի Ռստակ Յարութիւնեան Մարտիրոսեանց, կին սորա Եղիսաբէդ, որդիկքն Ալէքսանդրէ, և Յարութիւն, 3-1

47. Արքունի Գօրըցի Ալէքսանդրէ Յոհաննէսեան Ամիրաղեանց, կին սորա Փաշայ, որդիկքն Ստեփան և Յովսէփ, 3-1

48. Արքունի Վարդան Գրիգորյան, կին սորա Հռիփսիմէ, որդին Նիկողոս, դուստր Եղիսաբէթ, 2-2

Ֆըղր Ֆօմիչ ռուս մեծատորի կողակից կնէյինայ Քէթէւան Ստէփանեան Մէլիքով, 0- 1

Վրացի կնեազ Մաղալօվի կողակից կնէյինայ Մայիայն Յովսէփեան Արարատեանց, 0-1

Մարտիրոս Յոհաննէսեանի այրի հարիւր ամեայ ծերունի Աննայն, 0-1

Օքօյեան Ռոստոդանի աղախին Անուշկայն Յարութիւնեան, 0-1

Սոքա չեն ի հաշիւ տանց, այլ ի պատճառս խոստովանարդի գոլոյն կայն ընդ հովուութեամբ իմով –

Յաւէտ բան զայս եթէ զտցի աւելի ինչ կամ պակաս եւ ըստ որում նորոգ մտեալ ի սոյն եկեղեցի, չունիմ երբէք ծանօթութիւն զորպիսութիւնէ ժողովրդեայ Սորին, բացի նշանակեալ նորոգ ստացելոցն իմոց, ըստ որոյ և ստորագրիմ Սուրբ Նշան եկեղեցւոյ աւագ քահանայ հայոց Եսայի Մկրտումեան Ջիպլեանց:

49. Ազնիւ Ալէքսի Միխայէլեան Արեշեանց, կին սորա Թագուհի, ուստերք սորա Ղալաբէգ, Ասլամազ, 3-1

50. Ազնիւ կօլլէժսկի ասսէսօր Յովսէփ Եագօրիչ Շանշեանի այրի Մայիայն, սորա ուստերք Շանշեան, Գրիգօլ, 2-1

51. Ազնիւ կօլլէժսկի սէկրէտար Եօվանէ Եագօրիչ Շանշեան, կին սորա Մայիայն, ուստր սորա Ալէքսանդր, դստերք սորա Նատալիա, Էլիսաւէտ, Նինօյ, 2-4



52. Ազնիւ Թալալ Ջալեան Եագուլեան, սորա որդէգիր Ստեփան Աւթանդիլեան, կին սորա Քէթէւան, ուստերք սորա Ջալ, Սօլօման, Յովսէփ, դստերք սորա Մայիայ, Էլիսաւէտ, 4-4

53. Ազնիւ Գէորգ Արեշեանի այրի Մալալն, ուստերք սորա Շաւէրդի, Դաւիթ, 2-1

54. Սորա եղբօր թոռունքն, Միխայէլ, Նիկօղայոս, 2-0

55. Ազնիւ Յոհաննէս Դաւթեան Քանանօվ, կին սորա Անանիա, ուստերք սորա Անտօն, Դաւիթ, դուստր սորա Էփէմիա, եղբայր սորա այրի Թամարն, մայր սորա Նանօն, 3-4

56. Քաղաքացի տիտուլյարնի սովէտնիկ Զուրաբ Աւթանդիլեան Մէլիքօվ, կին սորա Թալէքկօ, դուստր սորա Կատարինէ, 1-2

57. Քաղաքացի Յոհաննէս Դանիէլեան Իզմիրեանց, ուստերք սորա Դանիէլ, Գրիգօլ, Ստեփան, Յարութիւն, դստերք սորա Սալօմէ, Լալօյ, Կատարինէ, 5-3

58. Քաղաքացի դօղտուր Գրիգօլ Դաւրիշեան, կին սորա Աննայ, ուստր սորա Դաւիթ, Միքայէլ, եղբօր այրի Անուշկայ, ուստր սորա Դաւիթ, դուստր սորա Մայիայ, մայր սոցա Քալօյ, 4-4

59. Քաղաքացի Միքայէլ Գօգի Ղթիսաւրեան Ամիրաղեանց, կին սորա Սօֆիօ, ուստերք սորա Գրիգօլ, Սօլօման, Ալէքսանդրէ, դուստր սորա Էլիսաւէտ, եղբայր սորա Գաբրիէլ, կին սորա Բարբարէ, ուստր սորա Նիկողայոս, դուստր սորա Նինօյ, և եղբայր Գիօրգի, կին սորա Կատարինէ, ուստր սորա Յոհաննէս, դուստր սորա Նատալիա, մայր սոցա Քէթէւան, 8-7

60. Քաղաքացի Աւթանդիլ Հակոբեան Օքօյեանց, կին սորա Մարթայ, ուստերք սորա Միքայէլ, Յոհաննէս, Սօլօման, դուստր սորա Նինօ, 4-2

61. Քաղաքացի Եագօր Յակոբեան Օրօյեանց, կին սորա Սօֆիօ, ուստերք սորա Ալէքսանդրէ, Գրիգօլ, Միքայէլ, Յակովբ, Վասիլ, Վանօ, Ասլան, դուստր սորա Կատարինէ, 8-2

62. Քաղաքացի Զուրաբ Ստեփանեան Ամիրաղեանց, կին սորա Քալի, մայր սորա Մարթայ, 1-2

63. Քաղաքացի Եագօր Եագօրիչ Բուձգուլեանց, կին սորա Թաթլօյ, ուստերք սորա Միքայէլ, Պօղօս, Ալէքսանդրէ, 4-1

64. Քաղաքացի Մովսէս Յոհաննէսեան Լիլիփարեանց, կին սորա Էլիզաւէտ, դստերք սորա Սօֆիօ, Կատարինէ, Կէկէլ, Մարիամ, սորա եղբայր Աւէտիք, կին սորա Էփէմիա, դուստր սորա Նատալիա, մայր սոցա Ռոմփիէր, 2-8

65. Քաղաքացի Դաւիթ Սօլօմանեան Փսարեանց, կին սորա Քէթէւան, ուստր սորա Եազօր, դստերք սորա Մակայ, Եփրուսինէ, 2-3

66. Քացաքացի Սիակ Յովսէփեան Ղամազեանց, կին սորա Խօրիշան, ուստերք սորա Յովսէփ, Զուրաբ, դստերք սորա Սալօմէ, Կատարինէ, 3-3

67. Քաղաքացի Գօգի Աղամջանօվի որդէգիր Շէրմազանի այրի Բարբարէ, ուստերք սորա Սիակ, Գիօրգի, Միքայէլ, 3-1

68. Քաղաքացի Մկրտում Օվնաթանեան Նաղաշբաշօվ, կին սորա Մայիայ, ուստերք սորա Յակովբ, Յօհաննէս, Յովնաթան, 4-1

69. Քաղաքացի Յօհաննէս Սոլոմոնեան Փսարեանցի այրի Աննայն, ուստերք սորա Եազօր, Սօլօման, Յարութիւն, դուստր սորա Նատալիա, 3-2

70. Քաղաքացի Սիակ Ղթիսաւարեան Ամիրաղյանց, կին սորա Եազունդի, ուստերք սորա Աղալօյ, Յօհաննէս, դստերք սորա Էփէմիա, Նատալիա, Գայիանէ, Կէկէլ, 3-5

71. Քաղաքացի Յարութիւն Պապեան Ուլանցեան, կին սորա Մայիայ, ուստերք սորա Անտօն, Դաւիթ, Պօղոս, Ստեփան, Ալէքսանդր, դստերք սորա Բարբարէ, Թալալ, Նատալիա, 6-4

72. Քաղաքացի Սամուէլ Աղալօյեան Գիգինեանց, կին սորա Քալի, դուստր սորա Էփէմիայ, 1-2

73. Քաղաքացի Յարութիւն Գասպարեան Գիգինեանց, կին սորա Բարբարէ, ուստերք սորա Գարսօյ, Ստեփան, դուստր սորա Կատարինէ, 3-2

74. Քաղաքացի Պապայ Յարութիւնեան Զարչեանցի այրի Ռոսուտամն, ուստր սորա Սօլօման, դուստր սորա Կատարինէ, 1-2

75. Քաղաքացի Գէորգ Յարութիւնեան Զարչեանցի այրի Էլիսաւէտ, ուստերք սորա Գրիգոր, Յովսէփ, 2-1

76. Ստրուկ Էջմիածնի Սիմոն Աղամջանովի այրի Նինօ, ուստր սորա Գէորգ, 1-1

77. Քաղաքացի Մէլքօյ Սարգսեան Մարաղեանց, կին սորա Քալի, ուստերք սորա Միքայէլ, Յօհաննէս, 3-1

78. Քաղաքացի Յարութիւն Սարգսեան Մարաղեանց, կին սորա Օվսաննայ, ուստերք սորա Սարգիս, Լուկայ, դուստր սորա Էփէմիա, 3-2

79. Քաղաքացի Ստեփան Սարգսեան Մարաղեանց, կին սորա Թաթէլ, ուստերք սորա Գրիգոր, Իսակ, Գրիգոլ, դստերք սորա Սալօմէ, Կատարինէ, 4-3



80. Քաղաքացի Սիմօն Յովսէփեան Ղամազեանց, կին սորա Լալօյ, դուստր սորա Կէկէլ, 1-2

81. Քաղաքացի Յօհաննէս Յովսէփեան Ղամազեանց, կին սորա Օվսաննայ, ուստր սորա Յովսէփ, մայր սոցա Մայիայ, 2-2

82. Արքունի ստրուկ Աւէտիք Եաւրինեան, ուստերք սորա Սօլօման, Գէորգ, 3-0

83. Արքունի ստրուկ Պապայ Յարութիւնեան Ջանինեանցի այրի Մարիամն, ուստր սորա Ղազօյ, կին սորա Աննայ, եղբարք սորա Յօհաննէս, Յարութիւն, Եազօր, քիրց սոցա Օվսաննայ, 4-3

84. Քաղաքացի Գրիգոր Սարգսեան Մարաղեան, կին սորա Մայիա, ուստերք սորա Ղաղօյ, Եազօր, դուստր սորա Մարթայ, 3-2

85. Քաղաքացի Սօլօման Պօղոսեան Ալիխանեանց, կինը Մայիա, ուստերք սորա Յօհաննէս, Արտէմ, Պաւլէ, դուստր սորա Կատարինէ, 4-2

86. Ստրուկ Էջմիածնի Յօհաննէս Առաքելեան Բաշինջաղեանց, կին սորա Շուշան, ուստր սորա Միքայէլ, դուստր սորա Խամփէրի, 2-2

87. Ստրուկ Էջմիածնի Ստեփան Առաքելեան Բաշինջաղեանց, կին սորա Սալօմէ, ուստր սորա Յարութիւն, 2-1

88. Ստրուկ յունաց եկեղեցական Հակօյ Նազարեան Մալինեան, կին սորա Մայիա, դստերք սորա Բարբարէ, Նինօ, 1-3

89. Արքունի ստրուկ Փիլօյ Դարբսեանի ուստերք Սարգիս, Անտօն, սոցա քոյր Աննայն, 2-1

90. Արքունի ստրուկ Մանուէլ Ղուկասեան, կին սորա Աննայ, ուստր սորա Յարութիւն, 2-1

91. Կնեազ Մելիտոնի ստրուկ Նօնի Սափարեան Ղազարեանց, կին սորա Քալի, ուստերք սորա Յօհաննէս, Ղազար, դստերք սորա Մայիա, Մակայ, Էլիսաւէտ, 3-4

92. Քաղաքացի Յօհաննէս Գասպարեան Գիգինեանց, ուստր սորա Դաւիթ, դստերք սորա Կէկէլօ, Սօֆիօ, Մարթայ, 2-3

93. Քաղաքացի Խատի Գասպարեան Գիգինեանի այրի Լալօյ, 0-1

94. Քաղաքացի Յօհաննէս Պապեան Օքօյեանց, մայր սորա Խամփէրի, 1-1

95. Ստրուկ յունաց եկեղեցական Ստէփան Յակոբեանի այրի Քալի, ուստերք սորա Գէորգ, Միխակ, Յօհաննէս, դուստր սորա Սօֆիօ, 3-2

96. Արքունի Աւէտիքեանի այրի Բարբարէ, սորա ուստերք Իսակ, Անդրիաս, 2-1

Յաւէտ քան զայս չունիմ այլ ժողովուրդ. Տէր Գրիգոր Տէր Դաւթեան Իզմիրեանց

97. Ազնիւ Դաւիթ Ստեփաննեան Ղայիթմազեանց, կին սորա Թագուհի, ուստերք սորա Մանուչար, Ղայթմազ, Կօրխմազ, դստերք սորա էփէմիա, Մակայ, 4-3

98. Ազնիւ Նարիման Ստեփաննեան Ղայիթմազեանց, կին սորա Էլիսաւէտ, 1-1

99. Ազնիւ Գէորգ Կակալօյեան Աւթանդիլեանցի այրի Նէնօ, ուստերք սորա Յակովբ, Նիկօլ, Գէորգ, Վանօյ, դստերք սորա Կատարինէ, Կէկէլ, 4-3

Վերոյ գրեալքն Տէրունիք են.

100. Քաղաքացի Ղաղօյ Շաքարօյեան Բուդդանեանցի այրի Թալալ, ուստերք սորա Գէորգ, Շաքար, Յօհաննէս, դուստր սորա Կէկէլ, 3-2

101. Քաղաքացի Կարապետ Մամաջանեան, Բաղօզեանց, կին սորա Քալօյ, ուստր սորա Գէորգ, 2-1

102. Արքունի Նիկողոս Նօնինեան Դաւրիշեանց, կին սորա Մայիա, ուստերք սորա Յօվանէ, Ալէքսանդր, Գրիգօլ, դստերք սորա Կէկէլ, Անանիա, 4-3

103. Քաղաքացի Յովսէփ Աղալօյեան Օքօյեանցի այրի Նինօ, դուստր սորա Քէթէւան, 0-2

104. Արքունի Աւետիք Յօհաննէսեան Տոգուլեանց, կին սորա Նինօ, ուստր սորա Կարապետ, կին սորա Կատարինէ, ուստերք սորա Թօմայ, Միխակ, Յակովբ, դուստր սորա Սօփիօ, 5-3

105. Արքունի Մարտիրոս Յօհաննէսեան Տոգուլեանց, կին սորա Մայիա, ուստերք սորա Արտէմ, Պէպան, Յակովբ, դուստր սորա Նատալիա, 4-2

106. Արքունի Գէորգ Քիթէսեան Դիդարով, ուստերք սորա Նիկօլ, Ստեփան, 3-0

107. Արքունի Գասպար Քիթէսեան Դիդարովեանի այրին Բարբարէ, 0-1

108. Քաղաքացի Յօվաննէս Ստէփաննեան Վարձիգուլեանց, կին սորա Քալի, եղբայր սորա Սօսի, մայր սոցա Քալօյ, 2-2

109. Ստրուկ Սամարազդայի Օրբելեանցի Փարսադան Ասլանեան Եանկլաղեանց, կինը Խամփէրի, ուստերք սորա Պետրոս, Յօհաննէս, Եագօր, Միխակ, դուստր սորա Բարբարէ, 5-2



110. Ստրուկ Թագուհի Ղօրղանեանցի Գիքօյ Կարապետեանի այրի Թինաթին, ուստր սորա Գիօրգի, կին սորա Տասիա, 1-2

111. Արքունի Հօնի Յօհաննէսեանց Տոգուլեանց, կին սորա Սօփիօ, 1-1

112. Արքունի Յարութիւն Գիքօյեան Կարապետեանց, կին սորա Սօփիօ, ուստր սորա Եագօր, 2-1

113. Արքունի Ռօստօմ Դաւթեան Ալիղուլեանց, կին սորա Մարթայ, ուստերք սորա Դաւիթ, Ալէքսանդրէ, դուստր սորա Նատալիա, 3-2

114.Քաղաքացի Աղայ Նօնինեան Աւէտիքեանց, կին սորա Մայիա, ուստր սորա Կօնի, դուստր սորա Կէկէլ, 2-2

115. Արքունի Թաթօյ Ղազարեան Ղազարեանց, կին սորա Մայիա, ուստր սորա Գիօրգի, դուստր սորա Սօփիօ, 2-2

116. Արքունի Մովսէս Սարգսեանի այրի Բարբարէ, ուստր սորա Մկրտում, կին սորա Թագուհի, դուստր սորա Նատօյ, եղբարք Մկրտումի Սօլօման, Եագօր, Գէորգ, 4-3

117. Քաղաքացի Եագօր Մկրտումեան Շադինեանցի այրի Քալի, ուստր սորա Գաբրիէլ, 1-1

118. Ստրուկ Քայի Խօսրօվ Օրբէլեանի Գիգօլի Թամազեան Գօրօքլօվեանց, կին սորա Նանօյ, ուստերք սորա Եագօր, Միքայէլ, դստերք սորա Կէկէլ, Սոլօմէ, Նատալիա, 3-4

119. Քաղաքացի Գրիգօլ Յարութիւնեան Ղանդուրալեանց, կին սորա Սալօմէ, ուստր սորա Արտէմ, 2-1

120. Քաղաքացի Սիսօյ Բաղդասարեան Ղանդուրալեանց, մայր սորա Էլիսաւէտ, 1-1

121. Արքունի Զաքար Մաղաքիլեան Մաղաքիլեանց, կին սորա Աննայ, ուստերք սորա Աւէտիք, Ստեփան, դստերք սորա Սօփիօ, Սալօմէ, մայր սորա Գօզալ, 3-4

122. Ստրուկ Լուարսաբ Օրբէլեանի Գուրգէն Պապեանի այրի Էլիսաւէտ, եղբայր սորա Գալօյ Ասլամազեանի այրի Մայիա, ուստերք սորա Ստեփան, Գրիգօլ, դուստր սորա Կատարինէ, 2-3

123. Արքունի Գիքօյ Ափօյեանց, կին սորա Մաթօյ, ուստր սորա Գիօրգի, կին սորա Մարթայ, ուստերք սորա Արտէմ, Միխակ, եղբայր Գիօրգւոյ Կարապետ, Սօլօման, 6-2

124. Արքունի Աղալօյ Հէրապետեան Տէր - Վարդանեանց, կին սորա Օվսաննայ, ուստերք սորա Արտէմ, Գրիգօլ, դստրերք սորա Կէկէլ, Էլիսաւէտ, 3-3

125. Ստրուկ Սամարաղադոյի Օրբէլեանց Գիքոյ Յարութիւնեանց Մեծամլեանց, կին սորա Մայիա, ուստր սորա Ալէքսանդրէ, դուստր սորա Քալի, 2-2

126. Քաղաքացի Ալիխան Յովսէփեան Մեղուինեանց, որդի սորա Մէլքոյ, կին սորա Մայիա, ուստերք սորա Եագօր, Արտէմ, Գիգօլի, Նիկօլ, Միխակ, դուստր սորա Նինօ, եղբայր Մէլքօյի Ստէփան, կին սորա Թալալ, ուստր սորա Ալէքսանդրէ, դստերք սորա Լիզինկայ, Անուշկայ, 2-5

127. Ստրուկ Էջմիածնի Դաւիթ Յօհաննէսեան Երիցփոխեանց, կին սորա Նինօյ, ուստերք սորա Ստէփան, Միքայէլ, 3-1

128. Արքունի Ստէփան Աւագեան Միրիմանեանց, կին սորա Բարբարէ, ուստերք սորա Գալուստ, Յարութիւն, Գրիգօլ, դուստր սորա Մայիա, եղբայր Ստէփանի Օհան, կին սորա Օվսան, ուստր սորա Միքայէլ, 6-3

129. Ստրուկ Սամարաղօյի Օրբէլեանց Միքէլ Գիքօյեան Ամբարդանեանց, կին սորա Էփէմիայ, եղբայր սորա Գէվօյ, մայր սոցա Քէթէւան, 2-2

130. Արքունի Արզուման Նազարեան Նազարեանց, կին սորա Մարթայ, ուստր սորա Յովսէփ, դուստր սորա Նատալիա, 2-2

131. Քաղաքացի Սօլօման Գէորգեան Խարազեանց, կին սորա Կէկէլ, եղբայր սորա Յօհաննէս, կին սորա Սօփիօ, Թաթուխ Խարազեանի այրի Նէնէ, ուստր սորա Արտէմ, դուստր սորա Մակայ, 3-4

132. Քաղաքացի Սօլօման Զուրաբեան Զալեանց, կին սորա Կատարինէ, ուստերք սորա Զուրաբ, Յօհաննէս, Գրիգօլ, 4-1

133. Քաղաքացի Հօնի Մկրտումեան Շաղինեանց, կին սորա Սօփիօ, ուստր սորա Ղաղօյ, կին սորա Մայիա, եղբայր սորա Դաւիթ, 3-2

134. Քաղաքացի Ալէքսի Աբելեան Շաղինեանց, կին սորա Բարբարէ, ուստերք սորա Յովսէփ, Վասիլ, դստերք սորա Սօփիօ, Քէթէւան, 3-3

135. Քաղաքացի Ալէքսի Զուրաբեան Օքօյեանի այրի Թաթէլ, ուստր սորա Զուրաբ, դստերք սորա Բարբարէ, Սալօմէ, Կէկէլօյ, 1-4

136. Արքունի Զուրաբ Զուրաբեանի այրի Խախօն, ուստր սորա Դաւիթ, կին սորա Բարբարէ, ուստերք սորա Դաւիթ, Յօհաննէս, 3-2

137. Ստրուկ յունաց եկեղեցական Զոհրակ Էստատի այրի Շուշան, ուստր սորա Եօվանէ, կին սորա Թալալ, ուստերք սորա Թօմայ, Արտէմ, դստերք սորա Մայիա, Անանօյ, եղբայր Եօվանի Ստէփան, միւս եղբօր Յօհաննէսի այրի Քէթէւան, ուստր սորա Գէորգ, 5-5



138. Ստրուկ Շանշեանց Միքայէլ Աւէտիքեան Յարութիւնեանի այրի Մարիամ, ուստր սորա Յարութիւն, կին սորա Թալալ, ուստերք սորա Եագօր, Միքայէլ, 3-2

139. Արքունի Գօգի Ստեփանեան Պապուլեանցի այրի Շուշան, ուստր սորա Օքրօյ, կին սորա Աննայ, ուստր սորա Միքայէլ, եղբարք Օքրօյի Զաքար, Սօլօման, 4-2

140. Արքունի Խեչօյ Զուրաբեան Զուրաբեանց, կին սորա Բարբարէ, ուստր սորա Անտօն, դստերք սորա Սօփիօ, Կէկէլօյ, եղբայր Խեչօյի Յովսէփ, կին սորա Շուշան, 3-4

141. Քաղաքացի Ստէփան Աթօյեանցի այրի Հօռօմսիմ, ուստր սորա Թաթուխ, կին սորա Մայիա, դստերք սորա Կէկէլ, Նատալիա, Գայիանէ, միւս եղբարք Սօսի, Եփրէմ, քոյր սոցա Եղիսաբէտ, 3-6

142. Արքունի Մկրտում Յօհաննէսեան Աբրէլեանց, կին սորա Մայիա, դստերք սորա Թերմայ, Խանում, 1-3

143. Արքունի Գափօյ Դօլմազեանցի այրի Քէթէւան, ուստերք սորա Առաքել, Կակօյ, դուստր սորա Սօփիօ, 2-2

144. Արքունի Յօհաննէս Սիմէօնեանց, կին սորա Հօռօմսիմ, դստերք սորա Շուշան, Նատալիա, 1-3

Յաւէտ քան զայս, չունիմ այլ ժողովուրդ. տէր Անդրէաս Տէր Ստէփանեան

145. Ազնիւ Սօլօման Փարսադանեան Ղորղանեանց, կին սորա Մայիա, ուստերք սորա Նիկօլ, Վանկայ, Միխակ, Վասիլ, 5-1

146. Ազնիւ Ղազար Մինասեան Նուբարեանց, կին սորա Եագունդի, 1-1

147. Ազնիւ Մեսրոպ Մինասեան Նուբարեանց, կին սորա Հռիփսիմէ, ուստերք սորա Արտէմ, Եագօր, դստերք սորա Թագուհի, Սօփիօ, 3-3

Վերոյ գրեալքն Տէրունիք են.

148. Քաղաքացի Իվան Աբրամիչ Շաղինեանց, կին սորա Քալի, ուստերք սորա Միքայէլ, Յուցնայ, Յովսէփ, դստերք սորա Կատարինէ, Էլիսաբէտ, Նատալիա, 4-4

149. Քաղաքացի Գրիգօլ Աբրամիչ Շաղինեանց, կին սորա Սօփիօ, 1-1

150. Քաղաքացի Գէորգ Շաղինեանց, կին սորա Շուշան, ուստերք սորա Ալէքսանդրէ, Միխայէլ, Գէորգ, 4-1

151. Քաղաքացի Կարապետ Դաւիթեան Սառաջեանց, կին սորա Մարթայ, ուստերք սորա Դաւիթ, Յօվանէ, դստերք սորա Նատալիա, Կէկէլ, Կատարինէ, մայր սորա Սառայ, 3-5

152. Քաղաքացի Դաւիթ Իւանիչ Խարազեանց, կին սորա Նատալիա, եղբօր կին սորա այրի Բարբարէ, ուստր սորա Գիօրգի, 2-2

153. Քաղաքացի Ստէփան Յօհաննէսեան Իզեանց, կին սորա Խամախանում, ուստերք սորա Միխայէլ, Սօլօման, Գաբրիէլ, Եագօր, Մկրտում, Եօվանէ, Ալէքսանդրէ, դուստր սորա Էփէմեա, 8-2

154. Արքունի Ջալ Գէորգեան Ջալինեանց, կին սորա Մայիա, ուստերք սորա Ղառօյ, Եագօր, 3-1

155. Բաց է թողնված-(ծանոթ. հեղինակի)

156. Արքունի Բաբայ Վարդանեանց, կինը Ջանի, ուստր սորա Աւէտիք, 2-1

157. Արքունի Յօհաննէս Խաչատուրեանի այրի Շուշան, ուստր սորա Յօհաննէս, կին սորա Սօփիօ, ուստր սորա Նիկօլ, 2-2

158. Արքունի Մանուէլ Սիակեան Սամուէլեանց, կին սորա Մարիամ, ուստերք սորա Ղառօյ, Սօլօման, Ալէքսանդրէ, Յարութիւն, 5-1

159. Արքունի Սամուել Սիակեան Սամուէլեանց, կին սորա Մաշիա, 1-1

160. Արքունի Յարութիւն Յօհաննէսեանի այրի Մարիամ, ուստր սորա Ղազար, կին սորա Մայիա, ուստր սորա Յարութիւն, դուստր սորա Օվսաննայ, 2-3

161. Քաղաքացի Յարութիւն Խարազեանի այրի Թամարն, ուստր սորա Արտէմ 1-1

162. Արքունի Անտօն Եագուլեանի այրի Էլիսաբէտ, ուստր սորա Դաւիթ 1-1

163. Արքունի Յովսէփ Դիդարեանի այրի Էլիսաբէտ, ուստերք սորա Սօլօման, Միխակ, դուստր սորա Աննայ, 2-2

164. Քաղաքացի Աւէտիք Յովսէփեան Միրզէլեանց, կին սորա Մարթայ, ուստր սորա Յովսէփ, եղբայր սորա Մովսէս, քոյր սորա Աննայ, 3-1

165. Արքունի Քայիխօսրով Պապայեան Էլիարեանց, կին սորա Թագուհի, ուստերք սորա Եսաէ, Սօլօման, 3-1

166. Արքունի Մարտիրոս Դանիէլեան Մաղաքիլեանց, կին սորա Բարբարէ, ուստր սորա Գրիգօլ, դուստր սորա Սօփիօ, սորա եղբօր այրի Շուշան, ուստերք սորա Արտէմ, Մաղաքիլ, 3-4



167. Արքունի Նօնի Մամաջանեանց Բահազեանց, կին սորա Բարբարէ, ուստր սորա Գրիգօլ, դուստր սորա Սօփիօ, 2-2

168. Արքունի Բէժան Գօգինեան Վարձիգուլեանց, կին սորա Օվսաննայ, ուստր սորա Եագօր, դստերք սորա Կատարինէ, Սալօմէ, եղբայր Բէժանի Յարութիւն, կին սորա Սօփիօ, դուստր սորա Կէկէլ, միւս եղբայր սորա Գրիգօլ, մայր սոցա Շուշան, դուստր սորա Քալի, 4-7

169. Քաղաքացի Սիակ Սուքիազեան Ցեսայեանց, կին սորա Մարթայ, ուստր սորա Միխակ, դստերք սորա Բարբարէ, Նատալիա, Թամար, 2-4

170. Արքունի Մէլքօյ Դիդարեանի այրի Քալի, ուստերք սորա Սէրգէի, Գիօրգի, դուստր սորա Բարբարէ, 2-2

171. Արքունի Գիքօյ Ղազարեան Պետրոսեանց, կին սորա Նատալիա, դուստր սորա Բարբարէ, մայր սորա Թամար, 1-3

172. Արքունի Բաղդասար Դիդարեանի այրի Մարիամ, ուստր սորա Եօվանէ, դուստր սորա Սօփիօ, 1-2

173. Արքունի Գլախայ Օհանեան, կին սորա Քալի, 1-1

174. Արքունի Գէորգ Պապօյեան Ասլամազյանց, կին սորա Էլիսաւէտ, ուստր սորա Բէժան, դուստր սորա Կէկէլ, Մայիա, Նատալիա, Բարբարէ, 2-5

175. Արքունի Թարօյ Նաղարաչեանի այրի Մայիա, ուստերք սորա Ջուրաբ, Սօլօման, կին սորա Նատալիա, ուստերք սորա Արտէմ, Մէլքօյ, 4-2

176. Ստրուկ Արսէնի Բէհրութեանցի Սօսի Դանիէլեան, կին սորա Քալի, դուստր սորա Կէկէլ, 1-2

177. Ստրուկ Գէորգ աղայի Արծրունեանցի Յակովբ Դաւիթեան Դաղինեանց, կին սորա Խամփէրի, ուստերք սորա Եօվանէ, Դաւիթ, Սիմոն, Ջաքար, դստերք սորա Քէթէւան, Նինօյ, 5-3

178. Ստրուկ Դիմիտրի Օրբէլեանի Սօսի Ռէւազեան Շաբաթեանց, կին սորա Խամփէրի, ուստերք սորա Եօվանէ, Դաւիթ, Ղազար, դստերք սորա Քալի, եղբայր Սօսինի Դէդի, կին սորա Մայիա, դուստր սորա Նինօյ, 5-4

179. Ստրուկ Կնեազ Սամարաղդօյի Սարգիս Յարութիւնեան, կին սորա Թումիան, ուստերք սորա Յօհաննէս, Յարութիւն, Նիկօղոս, 4-1

180. Ստրուկ Ղափլանեանց Եակոբի Գէորգ Դաւիթեանց, կին սորա Բարբարէ, ուստերք սորա Դաւիթ, Սօլօման, Պէպան, 4-1

181. Ստրուկ եկեղեցական Անտօն Մարտիրոսեան Աղմուրեանց, կին սորա Խանում, դստերք սորա Անուշկի, Սօփիօ, 1-3

182. Ստրուկ Ղափլանեանց Լուարսաբի Գօգի Մամասախլինեանի այրի Սօփիօ, ուստերք սորա Սամուէլ, Եօվանէ, դստերք սորա Բարբարէ, Մարիամ, 2-3

183. Ստրուկ Նացվալեանց Ղաղօյի Մատի Գոգուլեանի այրի Թալալ, ուստր սորա Դաւիթ, 1-1

184. Ստրուկ Կօնի Ղորղանեանի Մատի Կարապետեան, կին սորա Էլիսաբէտ, ուստերք սորա Յարութիւն, Փարսադան, Եագօր, դստերք սորա Էփէմիա, Կէկէլ, Մայիա, 4-4

185. Ստրուկ Դիմիտրի Օրբելեանի Զաքար Սօղինեան Խասադարեանց, կին սորա Էփէմիա, ուստր սորա Գէորգ, մայր սորա Թամար, 2-2

186. Ստրուկ Բէհբութեանց Արսէնի, Գէորգ Անտօնեանի այրի Խօրիշան, ուստր սորա Գէորգ, կին սորա Քէթէւան, ուստերք սորա Արտէմ, Սարգիս, 3-2

187. Ստրուկ Օթար ամի Լախուարեանի, Թաթօյ Դուրիխանեանի այրի Մայիա, ուստերք սորա Եագօր, Միխակ, Աւէտիք, 3-1

188. Ստրուկ Ղափլանեանց Լուարսաբի Ղազար Փասեան, կին սորա Շուշան, ուստերք սորա Նօնի, Գիգօլի, Զաքար, դստերք սորա Մարթայ, Օվսաննայ, 4-3

189. Արքունի Գրիգօլ Ծէրէթելեանի այրի Մարթայ, ուստր սորա Սօսի, դուստր սորա Օվսաննայ, 1-2

190. Արքունի Զաքար Ղուբեանի այրի Թալալ, ուստերք սորա Մաթէ, Յակովբ, դստերք սորա Տասիա, Էլիսաբէտ, Խախօյ, եղբայրք Զաքարի Թամազ, Բէրօյ, 4-4

191. Քաղաքացի Ռափայէլ Սարգսեան Խանգուլեանց, կին սորա Կատարինէ, 1-1

192. Արքունի Գրիգոր Պալօվեանց կին սորա Մարիամ, ուստերք սորա Յակովբ, Գէորգ, 3-1

193.Արքունի Էիվազ Իզեանց կին սորա Մարիամ, ուստր սորա Պօղոս, 2-1

194. Քաղաքացի հանգուցեալ Տէր - Նիկողայոսի այրի Խամփէրի, դուստր սորա Էփէմիա, 0-2

195. Արքունի հանգուցեալ Մկրտումի դուստր Նինօ, 0-1

Յաւէտ քան զայս չունիմ այլ ժողովորդ. Տէր Պէտրոս Յօհանեան Տէր Կարապետեանց



196. Քաղաքացի Ասլան Թօմայեան Շաղինեանց, կին սորա Մաջիա, ուստերք սորա Ստեփան, Նիկօլ, դստերք սորա Թալէկօյ, Քէթէւան, Մաշինկայ, 3-4

197. Քաղաքացի Գրիգօլ Թօմայեան Շաղինեանց, կին սորա Բարբարէ, ուստր սորա Թօմայ, 2-1

198. Քաղաքացի Գաբրիէլ Աբէլիչ Շաղինեանց, կին սորա Քալի, ուստր սորա Արտէմ, 2-1

199. Քաղաքացի Պապայ Կարապետեան Վարձագուլեանց, կին սորա Կէկէլ, ուստերք սորա Գարասիմ, Իւանէ, Նիկօլ, Գրիգօլ, դուստր սորա Սալօմէ, եղբայր Պապայի Սօլօման, կին սորա Բարբարէ, ուստերք սորա Եագօր, Պապայ, Արտէմ, դուստր սորա Կատարինէ, մայր սոցա Մաթօյ, 9-5

200. Քաղաքացի Զալ Զուրաբեան Զալիով, կին սորա Էլիսաբէտ, 1-1

201. Քաղաքացի Յիսայի Զուրաբեան Օքօյեանց, կին սորա Էլիսաբէտ, ուստերք սորա Գիօրգի, Զուրաբ, դուստր սորա Մայիա, 3-2

202. Ստրուկ վրաց եկեղեցական Գէորգ Փարաջեան Պապով, ուստերք սորա Փարէմուզ, Սօլօման, Յիսայի, 4-0

203. Ստրուկ վրաց եկեղեցական Ղազար Գէորգեան Պապով, կին սորա Թալալ, ուստերք սորա Ղարաման, Ալէքսանդրէ, դստերք սորա Նատալիա, Կէկէլ, Անուշկայ,Կատարինէ, Սօփիօ, 3-6

204. Քաղաքացի Եօվանէ Մկրտումեան Մէղուինեանց, կին սորա Բարբարէ, ուստերք սորա Գրիգօլ, Միխայէլ, Նիկօլ, դստերք սորա Մարթայ, Աննայ, Սալօմէ, եղբայր Եօվանի Սօսի, կին սորա Էլիսաբէտ, ուստր սորա Միշայ, 6-5

205. Արքունի Սարգիս Պօղոսեան, կին սորա Սօփիօ, ուստերք սորա Միխակ, Գաբրիէլ, Վանկայ, եղբայր Սարգսի Դաւիթ, 5-1

206. Արքունի Յարութիւն Սառաջեանի այրի Նէնօն, ուստր սորա Յովսէփ, 1-1

Ստրուկ Կնեազ Կիկօլու Սաքօյ Նօնինեան, կին սորա Շուշան, ուստր սորա Գէորգ, դստերք սորա Նատալիա, Սալօմէ, Կէկէլ, 2-4

207. Քաղաքացի Յովսէփ Դամէուրաչեանց, կին սորա Սալօմէ, ուստերք սորա Եօվանէ, Զաքար, Եագօր, 4-1

208. Արքունի Ղազար Զանիովի այրի Սալօմէ, ուստերք սորա Պօղոս, Յօհաննէս, դուստր սորա Քալի, 2-2

209. Քաղաքացի Եագօր Ալիխանեանի այրի Բարբարէ, ուստր սորա Ալէքսանդրէ, 1-1

210. Արքունի Զաքար Ամիրխանովի այրի Խամբէրի, 0-1

211. Արքունի Գլախայ Քօչօրեանի այրի Մայիա, ուստր սորա Յակովբ, 1-1

212. Արքունի Պօղոս Ռօստօմեանի այրի Նինօյ, ուստերք սորա Ռօստօմ, Մովսէս, դստերք սորա Կէկէլ, Նէնէ, Աննայ, 2-4

213. Արքունի Անդրիաս Ղազարեան Դարբնեանի այրի Սառայն, ուստր սորա Գիօրգի, դուստր սորա Թագուհի, 1-2

214. Արքունի Ստէփան Ղէքարօվեանի այրի Մարիամ, 0-1

215.Ստրուկ վրաց եկեղեցական Եօվանէ Մարտիրոսեան Աղմուրեանց, կին սորա Բարբարէ, դստերք սորա Կատարինէ, Էփէմիա, 1-3

216.Արքունի Կարապետ Հայրապետեան Անգլեցեանի այրի Շուշան, դստերք սորա Սօփիօ, Նատալիա, 0-3

217. Արքունի Ափրիամ Օհանեանի այրի Սօփիօ, 0-1

218. Արքունի Վարդան Ստեփանեանց, կին սորա Շուշան, ուստերք սորա Ստէփան, Կարապետ, Դաւիթ, դստերք սորա Կատարինէ, Թագուհի, Օսաննայ, 4-4

219. Արքունի Բէրօյ Անտօնեան Ղարիբեանց, կին սորա Մաթօյ, ուստր սորա Թօմայ, դուստր սորա Մայիա, 2-2

220. Ստրուկ Ղօրղանեանցի Նինի Յակոբեան, կին սորա Բարբարէ, 1-1

221. Ստրուկ Աւթանդիլեանի Բնա Սարգիսն, կին սորա Խօրիշան, ուստերք սորա Միխայէլ, Սիմոն, դուստր սորա Նաթէլ, 3-2

222. Արքունի Յօհաննէս Դաւիթեանի այրի Թենաթինն, 0-1

223. Ստրուկ եկեղեցական Պապա Օնանեանի այրի Քէթէւանն, ուստր սորա Կարապետ, 1-1

224. Արքունի Սիակի այրի Եղիսաբէտն, 0-1

225. Արքունի Բաղդասար Բայինդորեան, կին սորա Էլիսաբէտ, դուստր սորա Մարթայ, եղբայր Բաղդասարի Սօսի, 2-2

226. Արքունի Նինի Բուծգուլեանց, կին սորա Թինաթին, դուստր սորա Կէկէլ, 1-2

227. Արքունի Էտիշէր Ալիղուլեան, 1-0

228. Արքունի Խարազ Յօհաննէսի այրի Նինօյ, դստերք սորա Բարբարէ, Փէփէլօյ, Սալօմէ, 0-4

229. Ստրուկ կնեազ Շամիրխանի Կարապետ Օհանեան Խիթարեանց, կին սորա Օսաննայ, ուստր սորա Գէորգ, դստերք սորա Կատարինէ, Սալօմէ, Բարբարէ, 2-4



230. Արքունի Յովսէփ Նօնինեան Դաւրիշեանց, կին սորա Նատալիա, եղբայր Յովսէփի Զուրաբ, 1-2

231. Ստրուկ կնեազ Օթար ամի Լախուարեանի Յովակիմ Յարութիւնեան Դուրիխանեանց, կին սորա Թագուհի, մայր սորա Նաթէլ, 1-2

Յաւէտ քան զայս չունիմ այլ ժողովուրդ. Տէր Յովհաննէս Տէր Յովակիմեան Տէր Նիկողայոսեանց

Սոյն ցուցակ գրեցաւ ի 1841 ամի և 1-ն յունիսի. ընդ ամէն տունքն են 231, յորոց 579 են արուք և 514 էգք

Հայաստանի Ազգային Արխիվում պահպանվել է նաև Սուրբ Նշան եկեղեցու 1861-1876 թթ. հայ ծխականների չափաբերական մատյանը[1]:

[1] ՀԱԱ, ֆ. 53, ց. 2, գ. 2462-2501:

## ԹԻՖԼԻՍԻ ՄՈՂՆՈՒ ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵՎ ՍՈՒՐԲ ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

(Ամփոփում)

Թիֆլիսի հայկական Մողնու Սուրբ Գևորգ եկեղեցին հիմնադրվել է 1356 թ. և գործել մինչև 1930-ական թվականները ու փակվել Ստալինյան հակակրոնական քաղաքականության շնորհիվ: Եկեղեցին Խորհրդային տարիներին մինչև 1989 թ. ծառայել է որպես Ժողովրդական արվեստի թանգարան: 1990-ական թվականներին Վրաստանում անկախության հռչակումից հետո, վրաց իշխանությունների և եկեղեցու պահպանությանն ու վերականգնմանը կոչված համապատասխան կազմակերպությունների կողմից մատնվել էր անուշադրության և եկեղեցին աստիճանաբար ստանալով վտանգավոր ճաքեր հայտնվել էր փլուզման եզրին: Եկեղեցու դրությամբ մտահոգված հայ հասարակությունն ու Վիրահայոց թեմը, բազմիցս հնչեցնելով ահազանգեր, մնացել են անպատասխան: Կիսաքանդ եկեղեցին, որի դեռ առաջին ճաքերը նկատվել էին 1980-ական թվականներին, վերջնականապես փլուզվել է 2009 թ. նոյեմբերի 19-ին:

Մողնու Սուրբ Գևորգ եկեղեցին համարվել է Թիֆլիսի ամենանշանավոր եկեղեցիներից մեկը, որը գտնվել է Սոլոլակի թաղամասում: Այն հին Թիֆլիսի նշանավոր քաղաքացիների ու տոհմական տների հաճախած եկեղեցին էր, որի տոնը նշվել է ամեն տարի սեպտեմբերի 18-ին:

Մողնու եկեղեցին պատկանում է գմբեթավոր բազիլիկների տիպին: Գմբեթը շինության ընդհանուր ծավալի մեջտեղում է, չորս խոշոր, գլանաձև մույթերի վրա: Ավագ խորանի երկու կողմերում փոքրիկ կիսաշրջանաձև ավանդատներն են:

Մողնի կոչվող երկու եկեղեցուց մեկն անվանել են «Կամակատար Սուրբ Աստվածածին», իսկ մյուսը՝ Սուրբ Գևորգ: Առաջինը կոչել են նաև մեծ, իսկ երկրորդը՝ փոքր եկեղեցի: Հավանաբար, հենց



առաջին անվանումն էլ հիմք է ծառայել Թիֆլիսի այդ թաղամասը Մողնի կոչելու:

Թիֆլիսի Մողնու Սուրբ Գևորգը Արագածոտնի հռչակավոր եկեղեցու անվանակիցն է: 17-րդ դարի պատմագիր Զաքարիա Քանաքեռցին, որը գործել է Հովհաննավանքում, վերապատմելով Առաքել Դավրիժեցուց լսածը, իր պատմությունում մի ամբողջ գլուխ է նվիրել Սուրբ Գևորգի մասունքների՝ Թիֆլիսում հայտնվելուն: Ի դեպ, ենթադրվում է, որ «Մուղնի» անունը փոխառվել է արաբերենից և նշանակել է «երգել, սաղմոսել»:

Ըստ Զաքարիա Քանաքեռցու՝ Արագածոտնի Մուղնին հիմնադրել է Հովհաննավանքի միաբանությունը: Հավանաբար, դա եղել է 13-րդ դ. կեսերին, և այստեղից էլ Սուրբ Գևորգի մասունքների մի մասը տարվել է Թիֆլիս՝ վրաց արքայազնի բուժման նպատակով: Այդ մասունքները պահպանելու համար հետագայում կառուցվել է Թիֆլիսի Մողնու Սուրբ Գևորգ եկեղեցին:

Թիֆլիսի Մողնու եկեղեցու հիմնարկության մասին պատմական ստույգ աղբյուրներ հայտնի չեն: Ներսես Աշտարակեցու այն հարցումին, թե երբ են հիմնադրվել եկեղեցիները, պատասխանող Մկրտում Մունթոյան, Բեժան Բաստամյան և Գրիգոր Բաշինջաղյան երախտավորները, առաջնորդին ներկայացրել են 1356 թ. հիշատակություն, որն էլ հիմք ընդունելով՝ թվագրել են 1356 թ.:

Մողնու եկեղեցին հիմնադրումից շատ չանցած՝ 1388 թ., երբ Լենկ Թեմուրը ասպատակում է Թիֆլիսը, վերածվում է ավերակների: Այն հավանաբար վնասվել է նաև 1440 թ.՝ Ջհանշահի արշավի ընթացքում, երբ, հայտնի է, որ Թիֆլիսում քանդվել են եկեղեցիներ:

Մողնու եկեղեցում գրվել ու ընդօրինակվել են բազմաթիվ ձեռագրեր, որոնք հայ մշակույթի պատմության մեջ չափազանց մեծ ու կարևոր նշանակություն ունեն: Ընդօրինակված ձեռագրերի հիշատակարանները Թիֆլիսի հայ համայնքի պատմության ու գործունեության նշանակալի աղբյուր են: Գրքում ներկայացվում են եկեղեցում գրված և ընդօրինակված մի շարք ձեռագրեր: Պահպանված առաջին ձեռագիր «Ավետարանը» գրվել է 1447 թ., Հովհաննես գրչի կողմից: Նա հինգ տարի անց՝ 1452 թ. մեկ այլ «Ավետարան» է գրչագրել, որի ընտիր օրինակը բերվել էր Կիլիկիայի Սիս քաղաքից: Նա 1452 թ. ընդօրինակել է Գրիգոր Տաթևացու «Քարոզգիրքը», իսկ 1455 թ. մեկ այլ ձեռագիր «Ավետարան»: Այդ ձեռագրերը նկարազարդել է Մանուել քահանան:

Մողնու եկեղեցում 15-րդ դարի երկրորդ կեսի հայտնի մշակութային գործիչներից է եղել Մկրտիչ քահանան, որը 1463, 1468, 1488 թթ. ընդօրինակել է ձեռագիր Ավետարաններ, իսկ 1476 թ.՝ ձեռագիր «Շարակնոց»:

Դարաշրջանի մյուս խոշոր եկեղեցական, մշակութային գործիչներից էր Ստեփաննոս եպս. Առինջեցին: Այդ շրջանում Մողնու եկեղեցում գործել են նաև Աբրահամ վարդապետը, Տեր Վարդանը, Տեր Հովհաննեսը, ավագերեց Տեր Եսային և Բարսեղը:

17-րդ դարի կեսերի Մողնու եկեղեցու հանրահայտ գործիչներից է եղել Աղամալ Ջուղայեցին: Նա 1656 թ. ընդօրինակել է ձեռագիր «Գանձարան», որը նվիրաբերվել է Թիֆլիսի նորակառույց Սուրբ Նշան եկեղեցուն: Այդ տարի Աղամալ Ջուղայեցին ընդօրինակել է նաև մեկ ուրիշ ձեռագիր «Աւետարան», իսկ 1661 թ. մեկ այլ ձեռագիր «Աւետարան» էլ գրչագրել է Փաշի վանքում (Վանքի եկեղեցի), որի մայր օրինակը վերցրված էր Մողնու եկեղեցուց: Այն ևս մեկ անգամ ապացուցում է, որ Մողնու եկեղեցին եղել է նշանավոր գրչության կենտրոն, որտեղ պահվել են ձեռագրերի բազմաթիվ լավագույն օրինակներ:

17-րդ դարի վերջում (1668 թ. հետո) Մողնու եկեղեցում ձեռագիր «Ժողովածու» է բազմացրել Տեր Շմավոն քահանան, ով հիշատակվում է նաև 1712 թ.: Իսկ 1711 թ. եկեղեցում հիշատակարան է գրել Աթանաս քահանան:

1745 թ. Մողնու եկեղեցում Գրիգոր քահանան բազմացրել է Ամիրդովլաթ Ամասիացու «Անգիտաց Անպէտ» ձեռագիրը, որի պատվիրատուն է եղել հաքիմ Մկրտումը: Վերջինս Մոնթոյենց Մկրտումն է, որը մի խանութ է նվիրել Մայր Աթոռին՝ ի հիշատակ Թիֆլիս քաղաքի:

1736 թ., երբ քաղաքին տիրել է Նադիր շահը, Մողնու եկեղեցին մյուս եկեղեցիների հետ միասին ավերվել է, և հարկ է եղել հիմքից շինել եթե ոչ Սուրբ Գևորգ խախտված եկեղեցին, գոնե «կամակատար Ս. Աստուածածինը»:

Մողնու եկեղեցին հիմնովին վերանորոգվել է 1751 թ., որի մասին տեղեկանում ենք արձանագրությունից: Շինությունը հովանավորել են թիֆլիսեցիներ՝ Մոնթոյենց Մամաջանի որդի Մկրտումը, Բաստամենց Ստեփանի որդի մահտեսի Մելքոն և Բաշինջաղենց Ղուլիջանի որդի Պողոսը: Վերանորոգությունը կատարվել է եկեղեցու Տեր Աբրահամի քահանայության ժամանակ: Ավարտելով Սուրբ Աստվածածին եկեղեցու շինությունը՝ Տեր Աբրահամը հոգ է տարել



վերականգնելու նաև Մողնու Սուրբ Գևորգ քայքայված եկեղեցին: Ի դեպ, եկեղեցու նորոգման իրողությանն արձագանքել է Սայաթ-Նովան իր երգերից մեկում:

Թիֆլիսի մյուս եկեղեցիների պես Մողնին ևս 1795 թ. սեպտեմբերին ենթարկվել է պարսից Աղա-Մահմադ խանի հրոսակների թալանին ու ավերածությանը:

1796 թ. վերջին ռուսական բանակի հետ Թիֆլիս է գալիս 20 տարի Ռուսաստանում առաջնորդական պաշտոն վարած Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը: Նա իջևանում է Մողնու թաղում՝ իր եղբոր որդի իշխան Սողոմոն Արղությանի տանը: Իսկ հաջորդ տարվա հունվարին եկեղեցու գավթում, Հովսեփ արքեպ. Արղությանի նախաձեռնությամբ, ծխականների ժողով է հրավիրվում, և եկեղեցու գործունեությունը վերականգնելու «համախոսական վճիռ» է կայացվում՝ հոգաբարձու, կառավար և երեցփոխան կարգելով ընդհանուր վստահություն վայելող պարոն Եսայի Փիթոյանին:

1814 թ., երբ Ներսես արք. Աշտարակեցին նշանակվել է Հայոց եկեղեցու Վրաստանի թեմի առաջնորդ և տեղափոխվել Թիֆլիս, Մողնու Սուրբ Գևորգ եկեղեցում ժամասացություն չի կատարվել, սակայն ուխտավորներն անպակաս են եղել, որոնք դրսից պատերն են համբուրել ու մոմեր վառել: Աստվածապաշտությունը կատարվել է միայն մեծ եկեղեցում:

Ներսեսի առաջնորդության ժամանակ Մողնու եկեղեցու առաջնորդն էր տեր Միքայել քահանան, իսկ 1831 թ.՝ տեր Աբրահամ Արամելիքյանը:

1819 թ. նոյեմբերի 29-ին հիշատակվել են եկեղեցու հետևյալ միաբանները՝ Տեր Միքայել ավ. քհյ. Տեր-Դավթյան, Տեր Սիմոն Տեր-Հովսեփյան, Շմավոն քհյ. Մելիքյան, Ստեփան Տեր-Մովսիսյան, Տեր Խաչատուր Դավթյան, Տեր Եսայի Դանղուլյան, Տեր Դավիթ Տեր-Դավթյան, Տեր Ավետիք Տեր-Հարությունյան:

Գրքում ներկայացվել է նաև Մողնու եկեղեցու 1841 թ. ծխերի անվանացանկը:

Մողնու մյուս՝ Փոքր եկեղեցին, որը քայքայված և կիսակործան վիճակում էր, և վտանգավոր էր դարձել անցորդների համար, Սինոդի որոշմամբ 1871 թ. հիմնահատակ քանդվել է:

Մողնու եկեղեցին վերանորոգվել է նաև 19-րդ դարի վերջում՝ երեցփոխ Իսահակ Ծովիանյանի և Տեր Ղազար ավագ քահանայի ու բարեպաշտ ծխականների աջակցությամբ:

1933 թ. դեկտեմբերի 25-ին, ինչպես Թեմական խորհրդին տեղեկացրել է եկեղեցու Հովհաննես ավ. քհյ. Տեր-Գրիգորյանը, դեկտեմբերի 22-ին կառավարության կողմից եկածները կնքել են Սուրբ Գևորգ եկեղեցին:

Խորհրդային տարիներին՝ Մողնու եկեղեցին վերածվել էր Ազգագրական թանգարանի, ապա՝ պահեստի, իսկ 1990 թ., համարվելով վթարային և վերանորոգման ոչ ենթակա, վերջնականապես փակվել՝ մնալով պետության հաշվեկշռում:

Մողնու Սուրբ Գևորգ եկեղեցին չդիմացավ Թբիլիսիում տեղացած հորդառատ անձրևներին և 2009 թ. նոյեմբերի 18-ի լույս 19-ի գիշերը՝ ժամը 4:15-ին, փլուզվեց: Եկեղեցու գմբեթը լրիվ քանդվել և ընկել էր սրահի ներսում, կիսով չափ փլվել էին եկեղեցու հյուսիսային և հարավային պատերը, արևելյան ճակատը ճաքել և դեպի դուրս էր կախվել: Կանգուն էր մնացել միայն կենտրոնական մուտքի արևելյան պատը, որտեղ ամբողջական էր մնացել նաև զանգակատունը: Նոյեմբերի 28-29-ին հայ մասնագետները եղան Թբիլիսիում և կատարեցին անհրաժեշտ ուսումնասիրություններ: Ձեռք է բերվել երկկողմ պայմանավորվածություն, որ եկեղեցու վերականգնման նախագծային և շինարարական աշխատանքներին կմասնակցեն հայ մասնագետները:

Գրքում անդրադարձ է կատարվել նաև Մողնու եկեղեցուն կից Գայանյան օրիորդաց դպրոցի պատմությանը, որը բացվել է 1869 թ. հունիսի 17-ին՝ Սուրբ Գայանյանց կուսանաց տոնի օրը:

Մողնու եկեղեցուն կից գործել են նաև մանկապարտեզ և նախակրթարան, որը 1880 թ. հիմնադրել է տիկին Սոֆիա Բաբայանը: Նա հայտնի մանկավարժ և նախադպրոցական գործի կազմակերպիչ է եղել:

Սուրբ Նշան եկեղեցին պատմական տարեգրության ամբողջ ընթացքում պատկանել է Թիֆլիսում ձևավորված հայ համայնքին և Հայ Առաքելական եկեղեցուն: Այն թե՛ իր ճարտարապետական հորինվածքով, թե՛ նրանում գործող հայ քահանաներով մշտապես եղել է հայկական ու հայաշունչ: Միաժամանակ եկեղեցին հայ համայնքի յուրահատուկ հավաքատեղի է եղել և համարվել է Թիֆլիսի ամենանշանավորներից մեկը:

Սուրբ Նշան եկեղեցին գտնվում է Թիֆլիսի հին թաղամասերից մեկում՝ Կալոյի, հետագայում իր իսկ անունով անվանված՝ Սուրբ Նշան կոչված թաղի կենտրոնում, Սերեբրյան և Սուրբ Նշան (հետագայում՝ Հ. Հակոբյան, այժմ՝ Սուլտնիշանի) փողոցների միջակայքում: Եկեղեցու շրջակայքում գլխավորապես ապրել են հայեր, որոնց թվում շատ են եղել հասարակության մեջ նկատելի դիրք ու տիտղոս ունեցող հայազգի գերդաստանները: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն այստեղ ունեցել է մի քանի կրպակ:



Սուրբ Նշան եկեղեցին, ըստ հյուսիսային մուտքի բարավորին պահպանված շինարարական արձանագրության, կառուցվել է 1703-1720 թթ. ընթացքում, իսկ հետագայում՝ 1780 թ., կառուցվել է կաթողիկեն:

Եկեղեցին կառուցել է մելիք Գեորգին, որը հիշատակվում է 1699-1711 թթ. միջև:

Արձանագրությունից նկատելի է, որ հնում՝ մինչև 1703 թ., եկեղեցու տեղում եղել է խարխլված կամ ավերված պաշտամունքային մի կառույց, որը հիմնովին վերաշինել է քաղաքի մելիք և տանուտեր Ասլամազի որդի Գեորգին: Այդ է հավաստում նաև բազմաշխատ քահանա Տեր Մովսեսի անվան ներկայությունը վիմագրում:

Պահպանվել են նաև եկեղեցու այլ շինարարների անուններ՝ Խոջա Պարխուտար (Բարխուդար), կինը՝ Դարեջան, նրանց դուստր Էագունդի (Յագունդ), որոնք զանգակատունն են կառուցել իրենց խցերով, իսկ Էագունդը 1719 թ. նորոգել է ծնողների կառուցածը: Եկեղեցու հարավային ավանդատան մեջ հայտնաբերվել է արձանագիր քար, որտեղ նույնպես նշված է զանգակատան վերաշինությունը Բարխուդարի դստեր կողմից:

Սուրբ Նշան եկեղեցին իր ճարտարապետական հորինվածքով գմբեթավոր եռանավ բազիլիկ է: Երեք մուտք կա՝ հյուսիսից, արևմուտքից և հարավից: Վերջինիս առջև կանգուն է երկհարկանի զանգակատունը: Եկեղեցու աղոթասրահի արևելյան մասում կիսաբոլորակ եզրագծով ավագ խորանն է՝ օծված Սուրբ Նիկողայոսի անվամբ, իսկ նրանից հյուսիս՝ Անդրեաս առաքյալի, հարավ՝ Սուրբ Գևորգի անուններով օծված խորաններով ավանդատները, որոնց մուտքերը բացվում են արևմուտքից՝ աղոթասրահի մեջ: Սուրբ Նշան եկեղեցին հիմնականում կառուցված է աղյուսից, պատերը արտաքինից զարդարված են հարթ զարդանախշերով և ավարտվում են սլաքաձև կամարներով:

Հին Սուրբ Նշան եկեղեցու հիմնադրման ստույգ ժամանակը հայտնի չէ: Այն առաջին անգամ հիշատակվում է 1656 թ. գրիչ Աղամալ Ջուղայեցու օրինակած ձեռագիր «Գանձարանի» հիշատակարանում, որը գրվել է Տփխիսում (Թիֆլիս), Մողնու Սուրբ Գևորգ եկեղեցում և պ. Ջուրաբի կողմից նվիրվել է Սուրբ Նշան եկեղեցու

Տեր Օհան քահանային: Այսպիսով, Սուրբ Նշան եկեղեցում հիշատակվող առաջին քահանան Տեր Օհանն է:

Հետագայում՝ 1673 թ., ի թիվս Թիֆլիսում գտնվող հայկական ութ եկեղեցիների, Սուրբ Նշանը հիշատակում է ֆրանսիացի հայտնի ճանապարհորդ Շարդենը: Հետաքրքիր է, որ եկեղեցին հիշատակվում է Փաշա վանքից անմիջապես հետո, որը վկայում է նրա առաջնակարգ դերի մասին:

18-րդ դարի սկզբում հիշատակվում է Սուրբ Նշան եկեղեցու ավագերեց Հովսեփ քահանան: 1694 թ. Նահապետ կաթողիկոսը նրան միաժամանակ նշանակել էր Սուրբ Էջմիածնի գործակալ: 1706 թ. Ալեքսանդր կաթողիկոսը կոնդակով նրան ավագերեց էր հաստատել: Իսկ երկու տարի անց՝ 1708 թ., կաթողիկոսը հրահանգել է Սուրբ Նշան եկեղեցին հանձնել Հովսեփի որդի Տեր Աբրահամին: Տեր Հովսեփ քահանան, եկեղեցու ծուխը հանձնելով որդուն, 1710 թ. մարտի 12-ին մեկնել է Ղանդահար: Գրքում ներկայացվել է եկեղեցու այդ տարվա ծխերը:

18-րդ դարի երկրորդ կեսում Սուրբ Նշան եկեղեցու քահանաներից է եղել Տեր Մովսեսը: Այդ շրջանի հայտնի քահանաներից էր նաև մահտեսի Տեր Նիկողայոսը, որը հիշատակվում է դեռևս 1740 թ.: Լեոն Տեր Նիկողայոսին համարել է Թիֆլիսի ամենահեղինակավոր քահանաներից մեկը:

1814 թ. մայիսին եկեղեցում նշված են՝ Տեր Նիկողոս քահանան, Տեր Հովհաննես քհյ. Տեր- Խաչատուրովը, Տեր Ստեփան քահանան և եկեղեցականներ՝ տիրացու Գրիգոր Վանեցին, Ղազար Տեր-Հովհաննեսովը, Դավիթ Տեր-Գրիգորովը, Հակոբ Տեր-Սողոմոնովը, Տեր Հովակիմ Տուրազովը, Տեր Սողոմոն Տեր-Հակոբովը, Տեր Աստվածատուր Պապանը, Տեր Գրիգոր Տեր-Հովսեփովը և Տեր Հովհաննես Երևանցին:

1830 թ. երեցփոխ Ավետիք Փիրոյանի նախաձեռնությամբ եկեղեցու ներսում կատարվել է նկարազարդում, իսկ 1837 թ.՝ շինության ընդհանուր բարեկարգում: 1833 թ. բարեփոխվել է եկեղեցու հարավային ճակատից բացված մուտքը, որի ճակատակալ քարին փորագրվել է հայերեն և վրացերեն արձանագրություն:

1834 թ. հայ կերպարվեստի նշանավոր դեմքերից Հակոբ Հովնաթանյանի ծնողների (հայրը՝ Մկրտում Հովնաթանյան) կատարած ծառայությունների դիմաց քաջարվեստ նկարչին տրվել է Սուրբ Նշան եկեղեցուն պատկանող մի հողամաս՝ տուն կառուցելու համար: Ենթադրվում է, որ եկեղեցու 1830 թ. նկարազարդումները կատարել է Հակոբ Հովնաթանյանը:



1841 թ. եկեղեցին ունեցել է 228 ծուխ: Նշվել են եկեղեցու հետևյալ քահանաները. Եսայի ավ. քհյ. Ջիալյան, Գրիգոր քհյ. Իզմիրյան, Անդրեաս քհյ. Ամբարդյան, Պետրոս քհյ. Տեր- Կարապետյան, Հովհաննես քհյ. Տեր-Նիկողոսյան, հանգուցյալ Հովհաննես ավ. քհյ. Ջառափյան, հանգուցյալ Սողոմոն քահանա: Գրքում ներկայացված են նաև այլ թվականների հոգևորականները:

1858 թ. մայիսի 8-ին վախճանվել է Ավետիք Փիրոյանը և թաղվել եկեղեցու հյուսիսային որմին կից: Նա դեռևս 1820 թ. ընտրվել էր Սուրբ Նշան եկեղեցու երեցփոխ: Ավետիք Փիրոյանի մահվանից հետո, գրեթե ամեն տարի ապրիլի 7-ին՝ Ավետյաց տոնի օրը, եկեղեցում կատարվել է նրա հիշատակին նվիրված հոգեհանգիստ:

1868 թ. նորոգվել է եկեղեցու խաչկալը, ներքին ծավալները սպիտակացվել են և այլն: Ընդհանուր ծախսվել է 1.020 ռ.:

Սուրբ Նշան եկեղեցին կնքվել է 1928 թ., բայց 1930 թ. մարտին վերադարձվել է համայնքին, իսկ 1931 թ. կրկին փակվել է:

Հայրենական պատերազմի տարիներին եկեղեցին ծառայել է որպես սննդամթերքի պահեստ, իսկ ավելի ուշ՝ վերածվել Ազգային գրադարանի գրապահոցի:

Վրաստանի անկախացումից հետո եկեղեցին հայտնվել է բարձիթողի վիճակում, կից կառուցվել են անօրինական բնակելի շինություններ: Հուշարձանը թեև պահպանվել է պետության կողմից, սակայն անուշադրության հետևանքով ենթարկվել է քայքայման և ավերման:

2002 թ. հոկտեմբերի 20-ի գիշերը եկեղեցու ներսում հրդեհ է բռնկվել, որի հետևանքով թափվել են եկեղեցու ներսի ծեփի շերտերը, որոնք մեծ մասամբ եղել են որմնանկարազարդ: Այդ աշխատանքները հայ որմնանկարչության 18-19 դդ. եզակի նմուշներ էին:

2007 թ. եկեղեցին ստացել է պատմական հուշարձանի կարգավիճակ և մուտքագրվել Թբիլիսիի պատմական հուշարձանների ցանկում:

Սուրբ Նշան եկեղեցին 2012 թ. հունվարի 3-ին և 7-ին, անհայտ հանգամանքներում, ենթարկվել է իրար հաջորդող երկու նոր հրդեհումների, որի պատճառով փլուզումներ են առաջացել:

Աշխատությունում ներկայացված է նաև եկեղեցուն կից գործած ծխական արական դպրոցը, որը բացվել էր Ներսես Աշտարակեցու 1848 թ. հունիսի 2-ի կոնդակի համաձայն: Իսկ 1868 թ. եկեղեցուն

կից գործել է նաև տիկին Տեր-Գրիգորյանի բացած ծխական օրիորդաց դպրոցը: Այն գործել է մինչև 1873 թ.: 1883 թ. եկեղեցուն կից բացվել է Հայ կանանց միության օրիորդաց նոր դպրոց:

Գրքում ներկայացվում է Սուրբ Նշան եկեղեցու 1841 թ. ծխականների ցուցակը և 1838 թ. եկեղեցու անշարժ և շարժական կայքը:



## MOUGHNI SURB GEVORG AND SURB NSHAN CHURCHES IN TIFLIS

(History and Historiography)[1]

**ARMEN ASATRYAN**

*Scientific worker of Scientific Research Center for Historical and Cultural Heritage, under the ministry of Culture, RA, Yerevan, asatryan.armen@inbox.ru*

### ABSTRACT

In the territory belonging to the current Republic of Georgia the Armenians have been living since ancient times. The first data refer to the early Middle Ages when Christianity was adopted and spread throughout the region.

Of 20,000 residents of Tiflis in XVIII century, there were 14,000 Armenians and 500 Catholic Armenians, 2,000 Georgians and others. In the early XIX century of 2,000 residential houses about 1,800 belonged to Armenians. According to the testimony of archives, in 1817 the Armenian community in Tbilisi had 25 Armenian churches. This number remained constant until the establishment of the Soviet era in Georgia.

In Tiflis the most famous Armenian churches rich in historical chronicles are Moughni Surb Gevorg (St.George) Church and Surb Nshan (St. Sign) Church.

Founded in 1356, Moughni Surb Gevorg Church constantly functioned up to the 1930s and closed due to the Stalinist anti-religious policies. In the Soviet times, until 1989 the church served as the Folk Art Museum. After declaring independence in 1990 in Georgia, the protection and restoration of the church by the Georgian authorities and relevant organizations was neglected, and, gradually acquiring dangerous cracks, it appeared on the verge of collapse. Being concerned about the church, the Diocese and the

1 Հեղինակը շնորհակալություն է հայտնում օտար լեզուների գիտակ Մարինե Մելիք-Ադամյանին ամփոփումները անգլերեն և ռուսերեն լեզուներով թարգմանելու համար:

Armenian community many a time voiced complaints, which, however, remained unanswered. The half-ruined church, whose first cracks were observed in the 1980s, finally collapsed in 2009, November 19.

Situated in Sololaki district, Moughni Church has been considered the most outstanding church in Tiflis. Noble families and prominent citizens of Tiflis attended the church, its feast day being celebrated every year on September18.

This church is a namesake of the famous church in Aragatsotn, Armenia. Quoting Arakel Davrizhetsi, a 17th-century historian Zacharias Kanakertsi of Hovhannavank devoted a whole chapter of his book to the history of Surb Gevorg's relics in Tiflis to appear. It is believed that the word 'Moughni' was borrowed from Arabic and used to mean 'to sing' or 'to sing Psalms'.

The book also touches upon the history of the church Gayanean Girls' School, which opened in 1869, on June 17, the feast day of St. Gayaneh convent. In addition, Moughni church kindergarten and elementary school were founded in 1880 by Sophia Babayan.

Historical chronicles mentioned that Surb Nshan church had always belonged to the thriving Armenian community in Tiflis and the Armenian Apostolic Church. By both its architectural style and by the priests serving there, it has always been Armenian. At the same time the church was a unique gathering place for the community and was considered one of the most notable ones in Tiflis.

The Church of Surb Nshan is situated in the centre of one of the oldest districts of Tiflis - Kalo, later renamed Surb Nshan District. The Church is located next to Voskerichneri (Jewelers'), or Serebrian Street, and Surb Nshan Street, subsequently renamed H. Hakobyan Street, which is currently called Sultnishan Street. This area was mainly populated by Armenians, among whom there were many noble families and occupying a prominent place in the society. The Holy See of Echmiadzin owned several stalls here.

According to the building boards preserved at the north entrance, Surb Nshan was built in 1703-1720, and in 1780 Katoghike was built. In 1830 on the proposal of warden Avetis Piroyan internal work on mural



painting were undertaken, and in 1837 the state of the Church was improved through massive renovation.

The Church of Surb Nshan was consecrated in 1928. In March 1930 it was returned to the community, and in 1931 it was closed again. During the Second World War it served as a grocery warehouse and later as a book repository for the National Library. After declaring independence of Georgia, it was totally neglected, and illegal buildings appeared next to it. Though under the state protection, the building collapsed because of the lack of the slightest care.

On the night of October 20, 2002, there was a fire in the church, resulting in fallen plaster interior walls with murals which were a unique example of Armenian painting of XVIII-XIX centuries. On January 3 and 7, 2012, under suspicious circumstances two more fires broke out, and a part of the building collapsed.

At Surb Nshan Church a boys' parochial school was opened on January 2, 1848, according to the Encyclical letter of Nerses Ashtaraketsi. In 1868 a girls' parochial school was opened at the expense of Mrs. Ter-Grigoryan, and it worked till 1873. Then in 1883 a new girls' school was started by the Union of Armenian women.

In 2011 the Catholicos of all Armenians Garegin II visited Georgia to attend the state of the Armenian diocese. Before him Georgia was visited by an Armenian Catholicos about 100 years ago. After such a long break, the visit of the head of the Armenian Apostolic Church was intended not only to strengthen connections between the churches, but also to satisfy the spiritual needs of the Armenian diocese.

This book is an integrated work on the history and historiography of the two famous churches in Tiflis. Unlike previous researchers, for the first time the author presents the history of these churches from their foundation till our days. On the basis of archival documents, the book provides the data on the activities of wardens and monks, their marital statuses and service lists. For the first time a list of the parishioners of these churches is published as of 1841.

At the time these churches had a rich collection of medieval manuscripts, numerous utensils, decorated with precious stones and received by the church as a gift from the wealthy parishioners. For the

first time the book provides a full list of the utensils and ornaments of the churches Moughni and Surb Nshan according to 1837 and 1838 data respectively. The work also reflected the data on the estates, the houses and stalls belonging to the churches. Also there are the activities of the parochial schools presented in detail.

The main goal of this work is to prove the fact that the Church of Moughni Surb Gevorg and Surb Nshan are native Armenian cultural monuments with Armenian priests conducting the service there. These churches have never belonged to the Georgian Church, but were continuously operated under the jurisdiction of the Armenian Apostolic Church. This book is aimed to emphasize their importance and the need for their restoration, as well as to justify the requirement of returning them to the Armenian Apostolic Church.

The restoration and opening of Moughni and Surb Nshan churches will contribute to the strengthening of centuries-old friendship between the Armenian and Georgian peoples.



## ЦЕРКВИ МОГНИЙСКИЙ СУРБ ГЕВОРГ И СУРБ НШАН В ТИФЛИСЕ

(история и историография)

АРМЕН АСАТРЯН
*Научный работник научно-исследовательского центра по историческому и культурному наследию при министерстве культуры РА, Ереван, asatryan.armen@inbox.ru*

### АННОТАЦИЯ

На территории современной Грузии армяне проживают с древнейших времен. Первое упоминание о них можно встретить с раннего средневековья, с начала распространения христианства.

Уже в XVIII веке из 20 000 жителей Тифлиса насчитывалось 14 000 армян, из которых 500 были армяне-католики, 2000 грузин и др. В начале XIX века из 2000 домов города, около 1800 жилых домов принадлежало армянам. По архивным свидетельствам, в 1817 г. армянская община в Тифлисе владела 25 армянскими церквями. Это число оставалось неизменным до установления Советской власти в Грузии.

Наиболее известные и богатые историческими сведениями церквями столицы Грузии были армянские церкви Могнийский Сурб Геворг (Святого Георгия) и Сурб Ншан (Святого Знамения).

Церковь Сурб Геворг была основана в 1356 г. и постоянно действовала до 1930-ых гг., когда ее закрыли в годы сталинских репрессий. В годы Советской власти вплоть до 1989 г. там располагался Музей народного искусства. В 1990-ых гг., после того, как Грузия стала независимой, власти Грузии и организации, ответственные за сохранение и восстановление церкви, оставили ее на произвол судьбы. Появились опасные трещины, в результате чего церковь постепенно пришла в упадок. Озабоченные состоянием церкви, армянская община и епархия постоянно обращались в соответствующие инстанции, однако эти обращения остались без ответа. Полуразрушенная церковь,

где трещины появились еще в 1980-ых, окончательно рухнула 19 ноября 2009 г.

Расположенная в административном районе Сололаки, церковь Могни считалась одной из самых знаменитых церквей Тифлиса. Ее посещали знаменитые горожане и потомственная знать города, и каждый год 18 сентября отмечался День церкви.

Церковь Могни назвали в честь знаменитой церкви в марзе Арагацотн, Армения. Историк Закария Канакерци, живший и творивший в XVII веке в монастыре Ованнаванк, пересказывая Аракела Даврижеци, в своей исторической рукописи посвятил целую главу рассказу о том, как мощи святого Геворга были доставлены в Тифлис. Предполагается, что название «Могни» было заимствовано из арабского и означало «петь псалмы».

Книга также повествует об истории возникновения церковной женской школы Гаянян, которая открылась в день святой Гаяне 17 июня 1869 г. При церкви действовали также детский сад и начальная школа, основанная Софией Бабян в 1880 г.

В течение всего периода исторических хроник церковь Сурб Ншан принадлежала армянской общине в Тифлисе и Армянской апостольской церкви. Как архитектурный облик, так и постоянно действующие в ней армянские священники свидетельствуют об армянских корнях церкви. Это также было своеобразным местом, где собиралась армянская община, и церковь считалась одной из самых знаменитых в Тифлисе.

Церковь Сурб Ншан находится в центре одного из старейших районов Тифлиса - Кало, впоследствии названном в честь церкви районом Сурб Ншан. Рядом с церковью расположена улица Воскеричнери (Ювелиров), или Серебрян, и улица Сурб Ншан, впоследствии улица А.Акопян, ныне Султнишан. В этом районе жили преимущественно армяне, в числе которых было много знати - титулированной и занимающей видное место в обществе. Святой Престол Эчмиадзина владел здесь несколькими ларьками.

Согласно сохранившейся у северного входа строительной надписи, церковь Сурб Ншан была построена в период 1703-1720 гг., а впоследствии, в 1780 г. была построена катогике. В 1830 г. по предложению ктитора (церковного старосты) Аветиса Пирояна были проведены внутренние работы по росписи, а в 1837 г. – общеремонтные работы по улучшению состояния церкви.



Церковь Сурб Ншан была освящена в 1928 г., в марте 1930 года была возвращена общине, а в 1931 г. она вновь закрылась. В годы Великой отечественной войны она служила продуктовым складом, а позднее – книгохранилищем Национальной библиотеки. После провозглашения независимости Грузии она была оставлена без должного внимания, а рядом с ней возникли незаконные постройки. Находящееся под охраной государства, здание разрушалось из-за отсутствия должного отношения.

Ночью 20 октября 2002 г. в церкви возник пожар, вследствие чего обвалилась штукатурка внутренних стен здания вместе со стенной росписью, являющейся уникальным образцом армянской росписи XVIII-XIX веков. При невыясненных обстоятельствах 3 и 7 января 2012 г. вспыхнули еще два пожара, и обвалилась часть здания.

При церкви Сурб Ншан действовала мужская церковно-приходская школа, которая открылась 2 января 1848 г., согласно энциклике Нерсеса Аштаракеци. А в 1868 г. на средства госпожи Тер-Григорян открылась женская церковно-приходская школа, действующая до 1873 года. Затем в 1883 г. при церкви начала действовать новая женская школа Союза армянских женщин.

В 2011 г. Католикос всех армян Гарегин Второй, озаботившись состоянием армянской епархии, посетил Грузию. До него армянский католикос посещал Грузию около 100 лет назад. После столь продолжительного перерыва визит главы Армянской апостольской церкви имел целью не только укрепление связей между церквями, но и удовлетворение духовных потребностей армянской епархии.

Настоящая книга является целостной работой, посвященной истории и историографии двух знаменитых церквей Тифлиса. В отличие от предыдущих исследователей, автор впервые представляет историю этих церквей со дня основания до наших дней. На основании архивных документов, приводятся данные по деятельности ктиторов и монахов, их семейному положению, также их служебные списки. Впервые публикуется список прихожан этих церквей по состоянию на 1841 год.

В свое время эти церкви имели богатую коллекцию средневековых манускриптов, многочисленные предметы утвари, украшенные драгоценными камнями, полученные церковью в дар от богатых прихожан. В книге впервые приводится полный список предметов утвари и украшений из церквей Могни и Сурб Ншан по состоянию на 1837 г. и 1838 г. соответственно. В работе также нашли свое отражение данные по имениям, домам и ларькам, принадлежащим церквям. Также подробно представлена деятельность церковно-приходских школ.

Главная цель данной работы – еще раз доказать, что и церковь Могнийского Сурб Геворга, и церковь Сурб Ншана являются исконно армянскими культурными памятниками с армянскими священниками, осуществляющими там службу. Эти церкви никогда не принадлежали Грузинской церкви а постоянно действовали под юрисдикцией Армянской апостольской церкви. Настоящая книга призвана подчеркнуть их значимость, необходимость их реставрации и справедливого удовлетворения требования возвращения их Армянской апостольской церкви

Восстановление и открытие церквей Могни и Сурб Ншан будет способствовать укреплению многовековой дружбы между армянским и грузинским народами.



## ՑԱՆԿ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ*

Աբամելիքեան(ց) մահտեսի Տէր Աբրահամ ավագ քահանա 23, 24, 27, 29, 30, 35, 36, 38, 41, 43, 44, 45, 153, 163, 292, 293
Աբամելիքյան 38
Աբիմելիքեանց Եթեր 157
Աբիմելիքեանց Սողոմոն 160
Աբիմէլիքեան Թինաթին 152
Աբիմէլիքեանց Յոհան 157
Աբիսուլոմյան 238, 241
Աբիսողոմյան Գրիգոր Սողոմոնի 216, 225, 228, 229
Աբիսողոմյան Հովհաննես Սողոմոնի 226, 227, 228
Աբովենց Ռուստամ 188
Աբովյան Սարգիս 108, 109, 111, 141, 145
Աբուլեան Կ. 138
Աբուլյան Գալուստ Թադևոսի 136
Աբրահամ (1455 թ.) 18
Աբրահամ Ա կաթողիկոս Աղբաթանեցի 5
Աբրահամ վարդապետ (1488 թ.) 21, 292
Աբրահամեան Եսայի 85
Ադամ 268
Ադամյան Թագուհի 132
Ազիզյան Առաքել քահանա 216, 217, 218, 219, 221, 222
Աթանաս քահանա (1711 թ.) 21, 292
Աթանասյան Աշոտ 259, 260
Աթանասյան Վերգինե 141
Ալադաթեանց Նիկողայոս 128, 129
Ալադաթով 271
Ալադաղյան Սիմեոն 62
Ալադարյան Սիմոն 69
Ալահղուլունց Մուրադ 197
Ալամդարյան Հարություն քահանա 40, 41
Ալեքսանդր Ա Ջուղայեցի կաթողիկոս 192, 296
Ալեքսանդր, որդի Աբրահամ քահանայի 44, 45
Ալեքսանդր, որդի Հովհաննես սարկավագի 45
Ալիբեգյան (Ալիբեկյան) Բագրատ 74, 84, 85, 88, 91
Ալիխանյան Գևորգ Պողոսի 220
Ալիխանյան Կոստանտին 146
Ալիխանով Ալեքսանդր Գևորգի 220
Ալխազյան Հարություն Գևորգի 230
Ախտարխան 268
Ահարոն 25
Աղամալ Ջուղայեցի 21, 190, 292, 295
Աղամալյան 141
Աղա-Մահմեդ (Մահմադ) խան 25, 32, 33, 199, 293
Աղամջան 271
Աղայան Էլինե, կողակից Դավիթ արքայորդու 46
Աղայան Ղ. 259
Աղանյանց Գիտ քահանա 9, 27, 36, 138
Աղմջանեանց Գոգին 270
Ամբարդումյան (Ամբարդյան, Համբարձումյան) Անդրեաս քահանա 205, 206, 207, 297
Ամբրոսիոս վարդապետ Ռուբինյան 63
Ամիր (1463 թ.) 19
Ամիր (Բեհբուդյան), հայր՝ Ասլամազի 189, 195
Ամիրաղեանց Ղութիսավար 272
